

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՓԱՌԱՆՁԵՄ ԳԱՌՆԻԿԻ ՄԵՅԹԻԽԱՆՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ

ՀԱՏԿԱՆՎԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի
գիտական աստիճանի հայցման համար

ԵՐԵՎԱՆ – 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԳԼՈՒԽ I	
ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	22
1.1. Սուրբ Գրքի հայերեն առաջին թարգմանությունը և Մաշտոցի դերը այդ գործում	24
1.2. Աստվածաշնչի կառուցվածքը (կանոնը) և գրքերի անվանումները	34
ԳԼՈՒԽ II	
ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ.....	38
2.1. Համաբարբառներ	38
2.2. Բառարաններ	44
ԳԼՈՒԽ III	
ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ (ՆԱԵՎ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԻ) ՈՒ ԴՐԱՆՑ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ	63
3.1. Հին Կտակարանն իբրև հատուկ անունների սկզբնաղբյուր	63
3.2. Աստվածաշունչը որպես հայերեն ազգանվանակերտ ձևերի սկզբնաղբյուր	81
3.3. Հատուկ անունների թարգմանական տարբերակները Աստվածաշունչ գրքերում	100
ԳԼՈՒԽ IV	
ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ.....	120
4.1. Տառադարձություն և ուղղագրություն	120
4.2. Տարընթերցումներ	133
4.3. Հատուկ անունների հոլովումը և հոգնակիի դրսևորումները	140
ԳԼՈՒԽ V	
ԱՍԾՈՒ, ԱՍՏՎԱԾԱՄՈՐ, ԿՈՒՌՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ	164
5.1. Էլոհիմ – Աստված, Սաբա(վ)ովթ – Չորությունների տեր բառերի ստուգաբանության շուրջ.....	164

5.2. Աստծուն և Աստվածամորը տրված անուններն ու անվանումները Սուրբ Գրքում.....	182
ՀԱՅՐ ԱՍՏՎԱԾ.....	182
ՈՐԴԻ ԱՍՏՎԱԾ.....	199
ՍՈՒՐԲ ՀՈԳԻ	208
ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ.....	211
5.3. Կուռք, դիք, չաստված և դրանց անունները	216
5.4. Հրեշտակներ, հրեշտակապետեր և դրանց անունները	233
ԳԼՈՒԽ VI	
ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԵՔՐԱՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ	238
(ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ).....	238
6.1. Նահապետներ և դրանց անունները	240
6.2. Մարգարեներ և դրանց անունները	253
6.3. Լեռնանուններ	267
ԳԼՈՒԽ VII	
ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՈՃԱՆՈՒՆՆԵՐ	279
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	291
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	296

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հատկանվանաբանությունը (ономатология, ономастика)¹ իբրև գիտակարգ, մտնում է բառագիտության մեջ՝ որպես նրա մի ենթաբաժին, ոմանք էլ այն դիտում են իբրև լեզվաբանության առանձին ճյուղ¹:

Հատկանվանաբանության² հիմնախնդիրները հետաքրքրում են աշխարհի շատ գիտնականների: Քննախույզ վերաբերմունքը հատուկ անունների հանդեպ՝ իբրև յուրահատուկ լեզվական միավորի, նոր չէ: Դեռևս անտիկ շրջանի փիլիսոփաներին հետաքրքրում էին հատուկ անունների ծագման հարցերը. ինչպե՞ս են դրանք առաջանում, ո՞րն է դրանց կապը իրականության հետ: Հատկապես այս վերջին հարցում տիրապետում էր այն վարկածը, որի համաձայն՝ անձնանունները իրենցում պարունակում են որոշակի տեքստային տեղեկություններ և օժտված են ներգործուն ուժով:

Հատուկ անունները՝ որպես այդպիսիք, առաջին անգամ տարբերակվել են ստոիկյան դպրոցի ներկայացուցիչների կողմից դեռևս մ.թ.ա. 211-205թթ.³:

Հատկապես 20-րդ դարի կեսերից մեծանում է հետաքրքրությունը անձնանվանագիտության (Антропонимия) և տեղանվանագիտության (Топонимия) նկատմամբ: Լեզվաբանական ամենատարբեր դպրոցների ներկայացուցիչներ՝ Եսպերսեն, Ռասել, Կուրիլովիչ, Կացնելսոն, Բարտ, Ֆլորենսկի, Բուլգակով, Լոսև և ուրիշներ, զբաղվում են հատուկ անուններով՝ դրանք համարելով հատուկ նշանակությամբ օժտված միավորներ, այսպես ասած, բանալի բառեր, որոնք կարող են բնութագրել պատմության կամ մշակույթի որևէ նեղ դաշտ: Ըստ Վ. Սոլովյովի՝ «...Մարդկության հոգևոր մշակույթի ողջ պատմությունը խարսխված է հատուկ

¹ Ономатология, ономастика տերմինը լեզվաբանական գրականության մեջ բառացի թարգմանվում է *անվանագիտություն* կամ *հարկանվ(ու)անաբանություն*: Տե՛ս Հ. Պետրոսյան, *Հայերենագիտական բառարան*, «Հայաստան» հրտ., Եր., 1987, էջ 47, 358:

² Այս գիտաճյուղը ուսումնասիրում է հատուկ անունները, դրանց ծագումը, պատմականորեն կրած փոփոխությունները, կառուցվածքը, գործառությունը, տարածվածությունը և հարակից այլ հարցեր: Սա գիտության այն յուրահատուկ բնագավառն է, որը հետազոտման առարկա է թե՛ լեզվաբանների, թե՛ պատմաբանների, թե՛ աշխարհագրագետների համար, որոնցից յուրաքանչյուրն իր տեսանկյունից է ուսումնասիրում հատուկ անունները՝ կարևորելով և դիտարկելով հարցը նաև ինչ-որ տեղ ընդհանուր հատկանվանաբանության շրջանակում: Լինելով լեզվական միավոր՝ հատուկ անունը միաժամանակ դառնում է ժողովուրդների առնչությունների, պատմության, մշակույթի, ավանդույթի կրող ու փոխանցող:

³ Տե՛ս Ю. Гурская, *Личное имя в когнитивном аспекте*, Минск, 1999.

անունների վրա»⁴:

Հրավիրվում են հատկանվանաբանության ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնավոր հարցերին նվիրված բազմատեսակ միջազգային գիտաժողովներ, հրատարակվում են դրանց վերաբերյալ անհրաժեշտ նյութեր: Հատկապես ռուս լեզվաբանները հրատարակում են բազմաբովանդակ տեսական գրականություն՝ գրքեր, հոդվածներ⁵, բայց, ինչպես իրավացիորեն նշում է ակդ. Ս. Վեսելովսկին՝ «Գիտական իմացության այդ հետաքրքիր և գրավիչ բնագավառին, որ միաժամանակ պատմական օժանդակ գիտակարգ է և լեզվաբանության բաղկացուցիչ մաս, հատկացվել է ակնհայտորեն ոչ բավարար ուշադրություն»⁶:

Հատկանվանաբանության տեսական հարցերին հայ լեզվաբանները շատ չեն անդրադարձել: Այս թեմային է նվիրված Հ. Բարսեղյանի «Հայրուկ անուն. տեսական, նկարագրական ակնարկ» (Եր. 1964) գրքուկը, որտեղ հեղինակը համառոտ քննել է հատուկ անվան հասկացությունը, անդրադարձել հատուկ անունների առաջացման ուղիներին, հասարակ և հատուկ անունների տարբերություններին, հատուկ անվան տեսակներին, դրանց տառադարձությանն ու ուղղագրությանը խիստ ընդհանուր մոտեցմամբ⁷:

Հայոց ազգանունների հանգամանալից քննությանն է նվիրված Տիգրան Ավետիսյանի «Հայկական ազգանուն» ուշագրավ աշխատությունը, որում ներկայացվում են հայոց ազգանունները տարաժամանակյա և համաժամանակյա կտրվածքներով: Պատմական քննության են ենթարկված հայոց անձնանունները, հայկական ազգանունների ձևավորման ընթացքը և հարակից այլ հարցեր⁸:

⁴ Տե՛ս **В. С. Соловьев**, *Философия искусства и литературная критика*, М., 1991, 750 с.:

⁵ Տե՛ս 1. *Ономастика*, Академия наук СССР, Институт языкознания, Ред. **В. А. Никонов**, **А. В. Суперанская**, «Наука», М., 1969, 261 с., 2. *Ономастика и норма*, Академия наук СССР, Институт русского языка, Ред. **Л. П. Калауцкая**, «Наука», М., 1976, 254 с., 3. *Ономастика Средней Азии*, Академия наук СССР, Институт этнографии им. Н. Н. Миклухо-Маклая, «Наука», М. 1978, 224 с., 4. *Ономастика и грамматика*, Академия наук СССР, Институт русского языка, Ред. **Л. П. Калауцкая**, «Наука», М., 1981, 266 с., 5. *Ономастика, типология, стратиграфия*, Академия наук СССР, Институт языкознания, Ред. **А. В. Суперанская**, «Наука», М., 1988, 263 с.:

⁶ Տե՛ս **С. Б. Веселовский**, *Ономастикон, Древнерусские имена, прозвища и фамилии*, Академия наук СССР, «Наука», М., 1974, с. 382, с. 3:

⁷ Մեր ուսումնասիրության շրջանակների մեջ չեն մտնում հատուկ անվան տեսական ըմբռնման հարցերն ընդհանրապես, ուստի մենք դրանց անդրադառնալու ենք ըստ անհրաժեշտության:

⁸ Տե՛ս **Տ. Ավետիսյան**, *Հայկական ազգանուն*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրտ., Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Եր., 1987:

Մեզանում հատուկ անունների ուսումնասիրման առումով շատ ավելի ներկայանալի են բառարանները: Դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին հրատարակվում է Հ. Մինաս վարդապետի «*Համառօտ նկարագիր վարուց երեւելի արանց*» հանրագիտարանային բառարանը (Վենետիկ, Ս. Ղազար, 1850): 1879թ. Ն. Ճիվանյանը Կ. Պոլսում հրատարակում է «*Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական և դիցաբանական յարուկ անուանց հաւելեալ հայկական հարուկ անունք*», որը կազմված է երկու մասից. առաջին մասում ներկայացվում են 12000 օտար անուններ, իսկ երկրորդ մասում՝ 4000 բառահոդված՝ նվիրված հայ կյանքին, դիցաբանությանը և տեղանուններին:

Հատկանվանաբանության ասպարեզում հայ բառարանագրության մեջ մեծ ներդրում ունի Հր. Աճառյանը, որի հինգհատորանոց «*Հայոց անձնանունների բառարանում*» կատարված է 5-16-րդ դարերում (հետագա դարերինը՝ ընտրողաբար) մեր մատենագրության մեջ գործածված անձնանունների ստուգաբանական և պատմական քննություն, ինչպես նաև տրվում են այդ անունը կրող անձերի համառոտ կենսագրությունները: Այս բառարանը լուրջ ներդրում էր հայ հատկանվանաբանության մեջ, և ինչպես նշում է ինքը՝ հեղինակը՝ «Այսպիսի ընդարձակ ծավալով ու մանրամասնությամբ և բծախնդիր ճշտությամբ աշխատություն ոչ մի լեզվի մեջ գոյություն չունի»⁹: Բառարանը կազմելիս Աճառյանը օգտագործել է 800-ից ավելի աշխատություն, 50-ից ավելի հայերեն և օտար լեզուներով ձեռագիր ցուցակներ: Աշխատության առաջաբանում խոսելով ձեռագիր ցուցակների՝ իր կողմից ոչ ամբողջական գործածելու մասին՝ նա հավելում է. «Հատկապես անունների կողմից ինչպիսի՛ անսպառ նյութ կա նրանց մեջ, որ առայժմ մեզ համար փակված գանձ է մնում»¹⁰:

Տիգրան Ավետիսյանը մասնավորապես ուսումնասիրում է հայոց ազգանունները՝ հրատարակելով խիստ ուշագրավ «*Հայոց ազգանունների բառարանը*»¹¹:

Հայկական տեղանունների մասին առաջին մեկնություններ կատարողը պատմահայր Մովսես Խորենացին է, որն իր «*Հայոց պատմության*» մեջ փորձել է

⁹ Տե՛ս Հր. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Ա, էջ IX:

¹⁰ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ. էջ XIV:

¹¹ Տե՛ս Տ. Ավետիսյան, *Հայոց ազգանունների բառարան*, Եր., 2002:

պարզել հայկական բազմաթիվ տեղանունների ծագումն ու աշխարհագրական դիրքը՝ դրանց մեկնաբանության հարցում ավելի շատ հիմնվելով բանավոր ավանդությունների ու զրույցների վրա: Այդ անուններից շատերի ծագումն էլ նա միանգամայն իրավացիորեն կապել է նախարարական տոհմերի ու տների անունների հետ, որ բնութագրիչ է *Աստվածաշնչի* տեղանվանակազմության համար:

Հայերեն տեղանվանական առաջին բառարանները ստեղծվել են 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին: Դրանցից պետք է հիշատակել Հ. Հյուբշմանի «*Հին հայոց տեղույ անունները*»-ը, որը թեև պատմաբանասիրական ուսումնասիրություն է, բայց բառարանի բնույթ ունի¹²:

Տեղանվանական արժեքավոր բառարան է Ս. Էփրիկյանի «*Պատկերազարդ բնաշխարհիկ բառարանը*» (Վիեննա, 1903-1905), որտեղ տեղանունների մասին տրվում են պատմաաշխարհագրական, ազգագրական, բանասիրական հարուստ տեղեկություններ:

Տեղանունների վերաբերյալ մեծածավալ վերջին գործը հեղինակային խմբի՝ Թ. Խ. Հակոբյանի, Ստ. Մելիք-Բախշյանի և Հ. Բարսեղյանի կազմած «*Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանն*» է (5 հատորով, Եր. 1986-2001), որտեղ ընդգրկված բոլոր տեղանունները տրված են ռուսերեն և միջազգային տառադարձություններով, անվան բոլոր տարբերակներով, երբեմն նաև ստուգաբանական դիտարկումներով:

Այսպիսով, հատկանվանաբանության բնագավառում հայ լեզվաբանության, մասնավորապես բառարանագրության մեջ որոշակի աշխատանք է կատարված¹³:

Վերջին տասնամյակներում (անցյալ դարի 90-ական թթ.) մեծ հետաքրքրություն են հանդես բերում **Աստվածաշնչի հատուկ անունների նկատմամբ** արտասահմանում (ներառյալ Ռուսաստանում)¹⁴, մինչդեռ հայ լեզվաբանության մեջ *Աստվածաշնչի* հատուկ անունների մասին զուտ բանասիրական տեսական հետազոտություններ

¹² Հ. Հյուբշման, *Հին հայոց տեղույ անունները*, թրգմ.՝ Հ. Պիլեզիհիկեանի, Վիեննա, 1907:

¹³ Աստվածաշնչյան հատուկ անուններին նվիրված բառարանները ներկայացված են առանձին գլխում:

¹⁴ Ռուսները վերջին ժամանակներում հրատարակել են *Симфония к синодальному изданию Библии* (Свет на Востоке, Корнсталь, Институт перевода Библии, Стокгольм, 1995г.), *Библейско-биографический словарь* (Сост. Ф. И. Яцкевич, П. Я. Благовещенский, М., 2000), *Энциклопедия Библейская* (2-е издание, М., 2004) և բազմաթիվ այլ գրքեր, որոնցում բավական առատ նյութ վերաբերում է *Աստվածաշնչի* հատուկ անուններին:

գրեթե չկան¹⁵:

Հակոբ Անասյանի «Հայկական մատենագրություն» աշխատության Բ հատորի (Եր., 1976) «Աստվածաշունչ մատյան» հոդվածում նշվում է, որ *Աստվածաշունչի* հայերեն թարգմանության հատուկ անունները տառադարձական, ուղղագրական, քերականական ուսումնասիրության նյութ չեն դարձել:

Մովսես Խորենացին «Հայոց պատմության» առաջին գրքում փորձում է ցույց տալ հայոց մեծերի ծննդաբանությունը, և դա կատարում է՝ հենվելով *Աստվածաշունչի* տվյալների վրա, ու այդ ծննդաբանությունը սկսում է Նոյի որդի Հաբեթից: Եվ ինչպես ճիշտ նկատում է Գ. Զահուկյանը, Խորենացին լայնորեն օգտվում է *Հին Կտակարանում* տարածված մեթոդից՝ անձնանունների ստուգաբանությունից, ու փորձում է անձնանունների միջոցով ստուգաբանել տեղանուններն ու ցեղանունները, կապ ստեղծել դրանց միջև¹⁶:

Հ. Հյուբշմանը «Հայերենի քերականություն» գրքի առաջին՝ ստուգաբանության մասում հայերեն բառերը ծագումնաբանորեն բաժանում է փոխառյալների և բնիկ հայերեն բառերի. առաջինները (դրանց թվում՝ 217 հատուկ անուն) քննում է ըստ փոխատու լեզուների և տալիս հայերենի տառադարձությունը¹⁷:

Ավետարանների հատուկ անունների տառադարձման և հոլովման ուսումնասիրման ուղղությամբ որոշակի աշխատանք կատարվել է ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Մակլերի կողմից՝ *Ավետարանների հայերեն տեքստը՝ ըստ Մատթեոսի և Մարկոսի*¹⁸ ուսումնասիրության մեջ: Մակլերը համեմատել է հայերեն 10 ձեռագրի և 2 տպագրի ոչ ամբողջական տվյալները հունական քննական բնագրի հետ, փորձել է ցույց տալ, որ հայերեն թարգմանությունը կատարվել է ոչ թե ասորերենից, այլ հունարենից, որից և տառադարձվել է հատուկ անունների մեծ մասը:

Մ. Մինասյանը մանրակրկիտ ուսումնասիրել և կազմել է մի ուշագրավ աշխատանք՝ *Ավետարանների եւ Գործքի յարուկ անունների ուղղագրութիւնը եւ*

¹⁵ Վերջին տասնամյակում որոշակի աշխուժություն նկատվում է հոգևոր գրականության շրջանակներում. տպագրվում են *Աստվածաշունչի* հատկանվանագիտությանը առնչվող հանրագիտարաններ, փոքր բառարաններ և ուսումնասիրություններ:

¹⁶ Տե՛ս Գ. Զահուկյան, *Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները*, Պատմա-բանասիրական հանդես, 1981, № 3 (94), էջ 48-63:

¹⁷ Հյուբշման Հ., *Հայերենի քերականություն*, Առաջին մաս, *Հայերենի ստուգաբանությունը*, Եր., 2003:

¹⁸ Տե՛ս Ֆ. Մակլեր, *Le texte armenien de l' Evangile d' apres Matthieu et Marc*, Փարիզ, 1919:

հողովումը»¹⁹:

Մինչև այսօր հայագետներին հուզող խնդիրը հիմնականում *Աստվածաշնչի* հայերեն թարգմանության բնօրինակի հարցն է, որն ըստ ամենայնի դեռևս ուսումնասիրված չէ. դրա պատճառն անշուշտ հայերեն *Սուրբ Գրքի* գիտահամեմատական տեքստի բացակայությունն է և հայերեն թարգմանության՝ օտար բնօրինակի (կամ բնօրինակների) անհայտությունը: Այս առումով զգալի գործ է կատարում Երևանի Մատենադարանը, որն արդեն հրատարակել է *Ծննդոց, Ելից, Ղեկապոց, Մակաբայեցոց, Երկոտասան մարգարեից* քննական գրքերը, որոնցում որոշակիորեն ներկայացված են մեզ համար այնքան կարևոր հատուկ անունների տարընթերցումները՝ ըստ լավագույն ձեռագրերի ընձեռած նյութի²⁰:

Աստվածաշնչյան հատուկ անունների քննությունը մեր աշխատանքի հիմնական նպատակն է, որի համար ուսումնասիրել ենք երեք հայերեն թարգմանություններ. նախ՝ *Աստվածաշնչի գրաբար* այն օրինակը, որը 1997թ. հրատարակվել է Երևանում 1895թ.՝ Կոստանդնուպոլսում տպագրված և 1929թ. Վիեննայում վերահրատարակված գրքի հիման վրա՝ **«Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց»**: Հրատարակության առթիվ գրված ներածականում ասվում է. «Սա հռչակաւոր **«Թարգմանութեանց թագուիի»** Սահակմեսրոպյան Ոսկեդէնիկ Սուրբ Գիրքն է»: Պայմանականորեն այս օրինակը անվանել ենք **Ա-1**: Այս օրինակը համեմատել ենք **«Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց... Յաշխատասիրութենէ տէառն Յոհաննու Զօհրապեան վարդապետի...»** հրատարակության հետ²¹, քանի որ այսօր էլ գրաբար լավագույն օրինակ է համարվում Հ. Զոհրապյանի հրատարակած *Աստվածաշունչը*՝ իր բովանդակության ամբողջությամբ, լավագույն գրչագրերի գիտաքննական ներկայացմամբ²²:

¹⁹ Տե՛ս **Մ. Մինասեան**, *Աւերարանների եւ Գործքի յարուկ անունների ուղղագրութիւնը եւ հողովումը*, Ժնեւ, 1988:

²⁰ *Գիրք Ծննդոց*, քնն. բն. աշխ.՝ **Ա. Զեյթունյանի**, Եր., 1985, *Գիրք Ելից*, քնն. բն. աշխ.՝ **Ա. Զեյթունյանի**, Եր., ՀՀ ԳԱ հրտ., 1992, *Գիրք Մակաբայեցոց*, քնն. բն. աշխ.՝ **Հ. Ամալյանի**, Մտղ., Եր., 1996, *Գիրք Երկոտասան մարգարեից*, քնն. բն. աշխ.՝ **Հ. Ամալյանի**, Մտղ., Եր., 2000:

²¹ *Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց... Յաշխատասիրութենէ տէառն Յոհաննու Զօհրապեան վարդապետի*, Ի Վենետիկ, 1805 (ՁԱ):

²² Միանգամայն համամիտ ենք Հ. Ամալյանի հետևյալ դիտարկմանը. «Սակայն Հ. Զոհրապյանի հրատարակությունը... այնուամենայնիվ, թերություններ ունի և, մանավանդ ժամանակակից գիտության տեսակետից, դեռևս հեռու է իսկական գիտահամեմատական բնագրին ներկայացվող պահանջների լրիվ բավարարումից...»: Մանրամասն տե՛ս *Գիրք Մակաբայեցոց*, էջ 27-28:

Ա-2 օրինակը արևմտահայերեն հրատարակություն է՝ «Աստուածաշունչ գիրք Հին եւ Նոր կտակարանաց երբայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած» (1890թ., Կոստանդնուպոլիս):

Ա-3-ը Աստուածաշունչի 1994թ. արևելահայերեն նոր թարգմանության վերահրատարակությունն է՝ «Աստուածաշունչ մատեն Հին եւ Նոր կտակարանների, արևելահայերէն նոր թարգմանութիւն» (Ս. Էջմիածին-Երևան, 1999թ.), որի թարգմանութեան հիմքը Արսեն Բագրատունու Աստուածաշունչն է՝ հրատարակված 1860թ.:

Քանի որ Մխիթար Սեբաստացու հրատարակած Աստուածաշունչը (1733թ.) Ոսկան Երևանցու հրատարակած տպագիր առաջին Աստուածաշունչի (1666թ.) տարբերակն է՝ որոշ խմբագրական ու սրբագրական շտկումներով, ուստի հարկ եղած դեպքերում անդրադարձել ենք նաև դրան՝ այն նշելով ՄՍԱ համառոտագրությամբ:

Մեր հիմնական խնդիրն է այս գրքերի զուգահեռ համեմատությամբ քննել աստվածաշնչյան հատուկ անունները, դրանց բոլոր տարընթերցումները, թարգմանական տարբերակները, փորձել վերականգնել հատուկ անվան առավել ճիշտ ձևը:

Անունների համակողմանի ուսումնասիրության, տարընթերցումների մեջ ճիշտ տարբերակի որոնման խնդիրը ուղղակիորեն պարտադրում են նաև համեմատություն Յոթանասնից թարգմանության հետ: Այնպես որ մեր ձեռքի տակ եղած հրատարակություններից կարևորագույնը հունարեն հռչակավոր Սեպտուագինտան է (Septuaginta)²³:

Համեմատությունը ասորական հնագույն թարգմանություններից Պեշիթայի հետ շատ դեպքերում հավաստում է մեր թարգմանիչների կողմից այդ բնագիրը ևս իբրև թարգմանական աղբյուր օգտագործելու փաստը²⁴:

Անհրաժեշտության դեպքում դիմել ենք Աստուածաշունչի ռուսերեն, լատիներեն, գերմաներեն, եզակի դեպքերում՝ անգլերեն թարգմանություններին, որոնց համեմատությունը հայերենի հետ հաճախ հետաքրքիր դիտարկումներ կատարելու հնարա-

²³ 1. Η ΠΑΛΑΙΑ ΔΙΑΘΗΚΗ ΚΑΤΑ ΤΟΥΣ Ο΄, Septuaginta, Id est Vetus Testamentum graece iuxta LXX interpretes edidit Alfred Rahlfs, Duo volumina in uno, Deutsche Bibelgesellschaft, Stuttgart 1979. 2. Septuagint version of Old Testament with an English translation, London (Յոթանասնից):

²⁴ Biblia Sacra Juxta versionem Simplicem Quae dicitur PSCHITTA Beryti Typis typographie catholicae, Mosul, 1959 (Պեշիթա):

վորություն է տվել²⁵:

Աստվածաշունչը պարունակում է 5000-ից ավելի հատուկ անուն²⁶: Միանգամայն պարզ է, որ հատուկ անունների նման հսկայական քանակի մանրակրկիտ ուսումնասիրումը կարիք ունի որոշակի դասակարգման²⁷:

Մինչև բուն հատուկ անունների ուսումնասիրությանն անցնելը առանձնակի անդրադառնալու ենք երկու առանցքային հարցի. նախ աստվածաշնչյան հատուկ անունները ի՞նչ չափով են ներկայացված համաբարբառներում և բառարաններում: Այնուհետև կարևորելու ենք Աստվածաշնչի հայերեն թարգմանությունների խնդիրը. ե՞րբ և ինչպե՞ս է կատարվել ու ի՞նչ ճանապարհ է անցել, ո՞ր թարգմանությունների՝ հունարեն, ասորերեն, ազդեցությունն է կրում հայերեն թարգմանությունը, ո՞րն է Մեսրոպ Մաշտոցի դերը *Սուրբ Գրքի* թարգմանության գործում:

Հին Կրակարանը նախանշում է անվանադրության սկիզբն ու ընթացքը. ինչպե՞ս և ինչո՞ւ անվանակոչվեցին մարդիկ և տեղանունները՝ ըստ սուրբգրային տեքստերի. սա մեր ուսումնասիրության ելակետային հարցերից մեկն է:

Իսկ այդ անունների ուսումնասիրման հիմքը դառնում է հենց *Աստվածաշունչը*, որը հազեցած է բառարանային-բացատրական մեկնություններով, ինչպես՝

Աբրահամ անվան նշանակությունն է *բազմության հայր*, որի հիմնավորումը տրված է *Ծննդոց* գրքի ԺԷ գլխի 4-5-րդ հատվածում. «...եւ եղիցես **հայր բազմութեան ազգաց**. եւ ոչ կոչեսցի այսուհետև անուն քո **Աբրամ**, այլ եղիցի անուն քո **Աբրահամ**» (Ա-1):

Գաղ բառացի նշանակում է *բախտ*. նույն գրքի Լ գլխում կարդում ենք հիմնավորումը՝ «եւ ասէ Լիա. Առ իս **բաղղ** իմ. եւ անուանեաց զանուն նորա **Գաղ**» (Ա-1):

²⁵ Դրանք են՝

1. Biblia Sacra Luxta Vulgatam versionem, Stuttgart, 1994,

2. The King James II version of the Bible, printed in the USA, 1982,

3. *Новая Женевская учебная Библия* (Синодальный перевод), 1998 (НЖБ), *Библейский словарь*, Нюстрем Эрик, перевод со шведского, под редакцией И. С. Свенсона, Санкт-Петербург, 1995, *Библейско-биографический словарь...*, Сост. Ф. И. Яцкевич, П. Я. Благовещенский, Москва, 2000, *Энциклопедия Библейская* (2-е издание), Москва, 2004, *Симфония к синодальному изданию Библии*, Свет на Востоке, Корнсталь, Институт перевода Библии, Стокгольм, 1995.

4. Die Bibel nach der Übersetzung Martin Luthers, Stuttgart, 1985. *Die Bibel in heutigem Deutsch, Gute Nachricht Bibel des Alten und Neuen Testaments*, Deutsche Bibelgesellschaft, 1992:

²⁶ *Բառգիրք հայկազեան լեզուի, Մխիթար Աբրա*, հ 1-2, Վենետիկ, 1749-1769 (ԲՀԼ, ԲՅԱ):

²⁷ *Աստվածաշնչի հայրուկ անունների բառարանները* գլխում մենք հանգամանալից անդրադարձել ենք Մխիթար Աբրաստացու այս բառարանին:

Հատուկ անունների բացատրությունները, ինչպես երևում է օրինակներից, ոչ այլ ինչ են, եթե ոչ պարզ թարգմանություններ երբայերենից ասորերենի ու հունարենի միջոցով, իսկ ժամանակի գրիչներն ու բառարանագիրները, չբավականանալով *Ասորվածաշնչում* տրված այս մեկնություններով, իրենք ևս մեկնաբանել, բացատրել են, և այս ձևով միևնույն անվան բացատրությանը հավելվել են ուրիշ իմաստներ, և ավելի ուշ կազմված կամ հրատարակված գրքերում, մասնավորապես բառարաններում, անունների ստուգաբանությունները շատացել են: Իսկ եթե դրան էլ ավելացնենք նաև այն, որ *Ասորվածաշնչի* տարբեր հրատարակություններում՝ գրաբար, արևմտահայերեն, արևելահայերեն, հատուկ անունները տարբեր կերպ են ներկայացված՝ մեկ թարգմանաբար, մեկ տարրնթերցումներով ու տարբեր հոմանիշային մեկնություններով, ուրեմն պարզ կդառնա, որ *Սուրբ Գրքի* հատուկ անունները կարիք ունեն լուրջ և համակողմանի ուսումնասիրման ժամանակակից տեսանկյունից՝ օգտագործելով եղած հայերեն և այլալեզու գրականության, *Ասորվածաշնչի* գրաբար, աշխարհաբար թարգմանությունների ընձեռած հնարավորությունները:

Մեր աշխատանքում անդրադառնում ենք հատուկ անունների ծագումնա-ստուգաբանական բացատրություններին և զուգադրահամեմատական քննությամբ կարևորում ենք առավել ճիշտ մեկնությունները²⁸:

Ասորվածաշնչի գրաբար և արևելահայերեն թարգմանությունները աչքի են ընկնում նաև նրանով, որ խիստ նկատելի է հատուկ անունները, հատկապես տեղանունները ամեն կերպ թարգմանելու միտումը: Այսպես՝ **Բեթել** անունը երբայերեն բնագրում գործածվում է ինքնին, քանզի յուրաքանչյուր երբայեցու համար բառի իմաստը՝ **Ասործու փուն**, հասկանալի է և ընկալելի: Մինչդեռ հույն թարգմանիչները ոչ թե անունն են վերցրել, այլ այդ անվան իմաստը (**Οἶκος Θεοῦ**), և հայ թարգմանիչներն էլ միջնորդ լեզվից՝ հունարենից, փոխառել են անվան բառացի իմաստը (Ծն. ԻԸ 19), որպեսզի ընթերցողի համար անունը պայմանական չլինի, այլ ընկալվի տվյալ անվան նշանակությունը:

Մեր աշխատանքում փորձում ենք զուգադրական քննությամբ հնարավորինս

²⁸ Ստուգաբանական համեմատությունները խարսխվում են **Մխիթար Սեբաստացու, Հր. Աճառյանի, Երբեմն նաև «Բառգիրք Հայոց»-ի, Գ. Զահուկյանի** աշխատությունների վրա, որոնք ներկայացված են թե՛ համապատասխան տեղերում, թե՛ գրականության ցանկում:

պարզել, թե հատուկ անունները եբրայերեն բնագրից թարգմանաբար ներկայացնելը հա՞յ, հո՞ւյն, թե՞ ասորի թարգմանիչների նախաձեռնությունն է:

Ըստ ընդունված կարծիքի՝ *Հին Կտակարանի* հայերեն վերջնական թարգմանությունը կատարվել է հունարենից (առավելապես) կամ ասորերենից, իսկ վերջիններս էլ՝ եբրայերենից, ամեն դեպքում, մենք ունենք *Հին Կտակարանի* միջնորդավորված թարգմանություն: Մեր աշխատանքում համեմատական քննությամբ փորձում ենք ցույց տալ, թե հունարենում ինչպես է ներկայացվում անունը և ինչպես է այն անցնում հայերենին, ինչ վերաբերմունք են ունեցել մեր առաջին թարգմանիչները հատուկ անունների նկատմամբ: Այսպես՝ օտար բնագրերում հատուկ անունը սովորաբար տրվում է չթարգմանված, մինչդեռ հայերենում (Ա-1, Ա-3) թարգմանվում է: Մենք համապատասխան գլխում կանդրադառնանք այդ բոլոր անուններին: Բերենք ընդամենը մեկ օրինակ: *Հեսուի* գրքի ԻԱ 29-ում Ա-1 գրաբար բնագիրը եբրայական *Ենգանիմ* քաղաքի անունը տալիս է թարգմանաբար՝ **Աղբիրն Նամակաց** (տղտ.՝ եբր.՝ **Ենգանիմ**), արևելահայերեն օրինակում՝ **Նամակաց աղբյուր** ձևով, Ա-2 արևմտահայերեն բնագիրը պահում է **Ենգանիմ**, ասոր.՝ **Էն Գադ**, ԽՋԵ -ն՝ ЕН-Ганним, գերմաներեն բնագիրը դարձյալ՝ **En-Gannim**: Անվան **Ենգանիմ** ձևը տալիս է ԲՅԱ-ն՝ **Աղբիր պարտիզաց** նշանակությամբ: Այս անունը դառնում է նաև քաղաքի անուն *Դադավորաց* և *Հեսուի* գրքերում. «Եւ անուն Դաբիրայ էր յառաջագոյն քաղաք **Նամակաց**»²⁹ (Հս. ԺԵ 15-16, 49): Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս դեպքում հավելվել է հայերեն տարբերակը հայ թարգմանիչների կողմից, մինչդեռ կատարվել է բնագրային անվան թարգմանություն. «... жителяй Давира (имя Давиры прежде было **Курю-аф-Сефер**)» (ԽՋԵ): **Курю-аф** նշանակում է քաղաք, իսկ **Նամակացը** հուշում է, որ քաղաքը ունեցել է ուսումնական նշանակություն³⁰: Հունարենում տրվում է՝ **καὶ Πηγὴν γραμμάτων**, որը, ինչպես և ասորերենում, նշանակում է **Աղբյուր գրոց**:

Բայց բազմաթիվ այլ դեպքերում էլ հայ թարգմանիչները հետևել են հունարենին. եթե նրանք թարգմանել են տվյալ անունը, թարգմանաբար տրվել է նաև մեր թարգմանիչների կողմից:

²⁹ Պեշիթայում խոսվում է ոչ թե քաղաքի, այլ գյուղի մասին, որի անունն է **Գրքի** (*Աըվոռ*), իսկ **Նամակի** համարժեքը ասորերենում *Քթավան* է:

³⁰ Տե՛ս *Энциклопедия Библейская*, էջ 353:

Բերենք մի օրինակ Նոր Կտակարանից: Մարկոսի Ավետարանի ԺԵ 34-ում խաչված Հիսուսը բացականչում է. «**Էլի՛, Էլի,** լա՛մա սաբաքթանի», որ թարգմանում է **Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ**» (Ա-3): Նույնը տրված է Մատթեոսի Ավետարանում՝ ԻԷ 46³¹: Ընթերցողը այս հատվածը կընկալի ինչպես տրված է, այն է՝ **Էլի**-ն թարգմանված է **Աստուած իմ**, մինչդեռ տեքստի շարունակությունը մեզ հուշում է, որ խոսքն այս դեպքում ոչ թե Աստծու, այլ **Եղիայի** մասին է, այն **Եղիայի**, որն Աստծու սիրելին էր և կենդանի համբարձվեց երկինք. «*Եւ նրանցից ոմանք, որ նրա շուրջն էին կանգնել, երբ լսեցին այդ, ասացին. «Եղիային է կանչում»*» (35): Թարգմանական այս շփոթը գալիս է հույն թարգմանիչներից, որոնք արամերեն³² կամ եբրայերեն արտասանված (Մարկոսի մեջբերումը արամերեն է, որը հունարեն տեքստում³³ տրվում է՝ **Ελωι ελωι λεμα σαβαχθανι**, Մատթեոսինը՝ եբրայերեն, հունարենում՝ **Ηλι ηλι λεμα σαβαχθανι**)³⁴ Հիսուսի այս խոսքում **Էլի**-ն չպետք է թարգմանեին, քանի որ **Աստուած իմ**-ը հենց **Եղիա** անվան բառացի նշանակությունն է և ոչ թե ուղղակի Աստծու, ուստի հայերեն թարգմանվելով՝ յուրատեսակ շփոթության հիմք է դարձել: Գրաբար *Աստվածաշունչ*ը (Ա-1) տողատակում նշում է, որ բազմաթիվ ձեռագրերում **Էլի**-ի փոխարեն տրվում է **Էլիի**, ինչը տեսնում ենք արևմտահայերեն (Ա-2) տեքստում՝ **Էլիի**:

Իսկ ինչո՞ւ էր Եղիային կանչում, քանի որ կարծում էին, որ Եղիան կենդանի տարվել է երկինք, ըստ ոմանց՝ նա հրեշտակների նման ուղարկվել է հանձնարարություններ կատարելու՝ «*աստվածապաշտ ուրբերին հաճախ վրանգից ազատելու*»³⁵:

Ինչպես նկատում ենք, Նոր Կտակարանի հունարեն-ռուսերեն թարգմանության մեջ (Մրկ. ԺԵ 34) տրված է **Էլիի**. «**Ελωι ελωι λεμα σαβαχθανι: ὁ εστιν μεθερμηνευόμενον Ο**

³¹ Աստվածաբանական միտքը Հիսուսի արտասանած այս խոսքերը կապում է Սղ. ԻԱ/ԻԲ 1-ի հետ, որը օրվա այդ ժամին աստվածաշնչյան ընթերցում էր. այն հիշեցնում է ամբողջ սաղմոսը՝ արդարի տառապանքը: Տե՛ս **Կրեյգ Ս. Քիներ**, *Աստվածաշնչի հենքի մեկնություն*, Նոր Կտակարան, Հայ ավետարանչական ընկերություն, Եր., 2004, էջ 140: Սակայն անպայման պետք է նկատի ունենալ, որ սաղմոսում շփոթությունն առավել ակնառու է, քանի որ եբրայերեն կամ արամեերեն տարբերակը այդտեղ չի տրվում ընդհանրապես:

³² Տարբեր աղբյուրներ գործածում են գրության թե՛ արամեերեն, թե՛ արամերեն ձևերը:

³³ Տե՛ս *Новый Завет на греческом и русском языках*, Ред. **А.А. Алексеев**, Сост. **Л. И. Захарова**, М., 2002, էջ 106, 170:

³⁴ Հայերեն տեքստերում՝ Ա-1, Ա-2 Ա-3, ՁԱ, ՄՄԱ, որևէ բառի տարբերություն չի նկատվում:

³⁵ Տե՛ս **Կրեյգ Ս. Քիներ**, նշվ. աշխ., էջ 141:

θεός μου, ó θεός μου ...»: Ռուսերեն թարգմանությունը նույնությամբ վերարտադրել է հունարեն տեքստը. «**Ελου', Ελου', лама**³⁶ *сава'χфани? Что в переводе значит: **Боже Мой, Боже Мой, зачем оставил Ты Меня***». Կրեյգ Ս. Քիները նշում է, որ «**Էլի**-ն կարող է **Եղիայի** փոխարեն հասկացված լինի ավելի շուտ, քան **Էլի**-ի փոխարեն»³⁷: Վուլգատան՝ *Աստվածաշնչի* լատիներեն հնագույն թարգմանությունը, դարձյալ տալիս է նույն նախադասությունը՝ *Heli Heli lema* (Մրկ. ԺԵ 34՝ *lama*) *sabactani hoc est Deus meus Deus meus ut quid dereliquisti me'* կրկնելով հունարեն բնագիրը, որից պարզ ընկալվում է *Heliam*>**Եղիա** անվան առկայությունը և անվան բառացի թարգմանությունը՝ *Deus meus*:

Ինչպես նկատում ենք բերված օրինակից, բոլոր թարգմանությունները, այսպես ասած, վստահել են հույն թարգմանիչներին. **Եղիա** անվան բառացի թարգմանությունը՝ *Աստված իմ*, գալիս է հենց հունարեն բնագրից:

Վարդան Հացունին իր «*Ուղղագրություն եւ առոգանություն հայերէնի*» ուսումնասիրության «*Փոխագրութեան դրութիւնը*» գլխում, որը նվիրված է հիմնականում դասական գրաբարի տառադարձությանը, գրում է. «...նախնեաց իմաստուն գործերէն մի եղաւ՝ ոչ ձայնը, այլ իմաստը թարգմանել յատուկ անուանց, որոնք առանձին նշանակութեամբ մը տրուած էին անձանց, տեղեաց կամ իրաց. Վէմ (Պետրոս), Երեք քաղաք (Տրիպոլիս)... եւ այլն»³⁸:

Աստվածաշնչի տարբեր թարգմանություններում առկա են անունների և այդ անունները կրող անձերի հետ կապված բազմաթիվ հակասություններ: Բերենք մեկ օրինակ:

Երկու կանայք գրաբար (Ա-1) և արևմտահայերեն (Ա-2) գրքերում անվանվում են **Թամնա**՝ 1. **Թամնա** - Եսավի որդի Եղիփազի հարճ (Ծն. ԼՁ 12), 2. **Թամնա**՝ Սեիրի որդի Ղոտանի քույր (Ծն. ԼՁ 22), ռուսերենում՝ **Фамна** երկու անձերին էլ անվանելիս, գերմաներենում՝ **Timna**. ՄՍԱ-ում արդեն գործածված են և՛ **Թամար** (ԼՁ 12), և՛ **Թամնա** (ԼՁ 22) տարբերակները, նույնը և արևելահայերենում(Ա-3) անունը դարձել է մե՛կ **Թամար**, մե՛կ **Թամնա**: Անվան այս տարբերակումները ինչի՞ հետևանք են.

³⁶ НЖБ-ում՝ *ламма*, էջ 1345:

³⁷ Տե՛ս Կրեյգ Ս. Քիներ. նշվ. աշխ, էջ 202:

³⁸ Տե՛ս Վարդան Հացունի, *Ուղղագրություն եւ առոգանություն հայերէնի*՝ աշխատության, «*Փոխագրութեան դրութիւնը*» գլուխը, Վենետիկ, Ս. Ղազար, 1933, էջ 298:

սովորական փոխազդեցական հնչյունափոխությամբ, թարգմանական վրիպման, թե՛ անունների պատահական համընկնման: ԲՅԱ-ն առանձնացնում է այս անունները՝ **Թամար** տարբերակը ստուգաբանելով մի քանի իմաստներով՝ *արմաւենի, արմաւ, փոփոխութիւն, դառնութիւն*. այս անունը հանդիպում է *Աստվածաշնչի Ծննդոց, Թագավորաց, Մնացորդաց* գրքերում, իսկ **Թամնա** անունը՝ *խափանեալ, արգելեալ, կատարեալ, լրացեալ դրոշումն* իմաստներով. անունը գործածված է ոչ միայն նշված, այլև *Դատավորաց* և *Հեսուի* գրքերում: Տվյալ դեպքում էական չհամարելով, թե այս իմաստներից որն է անունների ճիշտ մեկնությունը՝ համոզվում ենք, որ սրանք առանձին անուններ են, մինչդեռ արևելահայերենը տալիս է **Թամնա, Թամար**, որն անշուշտ ճիշտ չէ, և բնագրի աղճատում է նշանակում (եբր.՝ תמנא): Հակված ենք կարծելու, որ այս դեպքում գործ ունենք գրիչների կողմից արտագրման վրիպակի հետ, քանզի *Յոթանասնից*-ը երկու անձի դեպքում էլ տալիս է անվան նույն տարբերակը՝ **Թամնա – Թամնա**:

Ոչ միայն *Աստվածաշնչի* տարբեր թարգմանություններում, այլև տվյալ թարգմանության միևնույն գրքում առկա են անձերի և նրանց անունների հետ կապված բազմաթիվ հակասություններ, ինչպես՝ *Ծննդոց* գրքի Դ գլխի 18-րդ հատվածում կարդում ենք. «...*եւ ծնաւ Մայիէլ Մաթուսաղա, եւ Մաթուսաղա ծնաւ Ղամէք*», մինչդեռ նույն գրքի Ե գլխի 21, 23-ում՝ «*եւ եկեաց Ենովք ամս հարերս վաթսուն և հինգ, եւ ծնաւ զՄաթուսաղա...եւ եկեաց Մաթուսաղա ամս հարերս ութսուն և եւթն, եւ ծնաւ Ղամէք*»: Ինչպես նկատում ենք, նույն Մաթուսաղան մի դեպքում Մայիելի որդին է, մեկ այլ դեպքում՝ Ենովքի:

Աստվածաշնչի գրքերի քննական բնագրերը կազմվում են բազմաթիվ ձեռագրերի համեմատության հիմքի վրա, իսկ այդ համեմատությունը ի ցույց է դնում հարյուրավոր տարընթերցումներ, մասնավորապես հատուկ անուններում դրանք այնքան շատ են, որ կարևորվում է այդ տարընթերցումների մեջ գտնել հնարավոր ճիշտ տարբերակը: Բերենք մեկ օրինակ. *Աստվածաշնչի Մակաբայեցիների գրքում* տրվում են **Փենէէս** անվան՝ տարբեր ձեռագրերում հանդիպող տարընթերցումները՝ **Փենեես, Փենէէգ, Փենեհեգ, Փենէէս, Փենէես, Փենեհէգ, Փենէէս, Փենեհէս**,

Փենեհես³⁹: Ա-1 և Ա-3 գրքերը տալիս են **Փենէէս**, իսկ Ա-2-ը՝ **Փենէհես** և **Փենէհէս**: Հունարենը բոլոր գործածություններում տալիս է անվան մեկ տարբերակ՝ **Փινεες**:

Պետք է անպայմանորեն նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ այս անվամբ *Աստվածաշնչում* հանդես եկող տարբեր անձինք են եղել՝ տարբեր ժամանակներում ապրած, տարբեր հեղինակների կողմից տարբեր գրքերում ներկայացված՝

Փենեէս¹ (արմիյ.՝ *Փենէհես*) (հուն.՝ **Փινεες**, ռուս.՝ **Финеес**, ասոր.՝ **ܦܝܢܝܫܘܐ** **Փինիսրս**) – Եղիազարի որդի, Ահարոնի թոռ՝ Ել. 2 25 (*զՓենէէս*), Թվ. ԻԵ 7՝ «...*Եւ տեսեալ Փենեէսի որդւոյ Եղիազարու*», 11, Հս. ԻԲ 13, 30, 31, ԻԴ 33, Դտ. Ի 28 և այլն:

Փենեէս² (արմիյ.՝ *Փենէհէս*) – Հեղիի որդի՝ Ա Թգ. Ա 3, Բ 34. «...*ի վերայ երկոցուն որդւոցն քոց Ոփնեայ եւ Փենեէսի*», Ա Թգ. ԺԴ 3. «*Եւ Աքիա որդի Աքիտովբեայ եղբօր Քարիելի, որդւոյ Փենեէսի, որդւոյ Ղեւեայ քահանայի Աստուծոյ...*»:

Փենեէս³ – Ա Եգր. Ը 32. «*Փենեէսի որդիներից՝ Գերսոնը...*»:

Տարընթերցումները բնորոշ են ոչ միայն հայերենին, այլև հենց **Յոթանասնիցին**: Ըստ *Աստվածաշնչի* հայերեն թարգմանության՝ ունենք **Անանիա** և **Անանիաս**, հունարենում՝ **Ανανι** (Ա Մնց. Գ 24), **Άννίας** (Ա Եգր. Ե 16), **Ανανιας** (Դն.Ա 7) **καὶ Ανανια** (Ա Մնց. Գ 19), իսկ ասորերենում բոլոր դեպքերում՝ **ܦܝܢܝܫܘܐ**, այսինքն՝ ասորերենը տարընթերցում չի տալիս:

Ահա **մեր աշխատանքի կարևոր խնդիրներից մեկն է դառնում այդ հակասությունների ու տարընթերցումների քննությունը**, որը կարող է արդյունք տալ միմիայն համեմատության դեպքում, դրանցից յուրաքանչյուրին կանդրադառնանք համապատասխան տեղում: Բերենք ևս մեկ օրինակ. **Հուդա** (հուն.՝ **Ιουδας**, ասոր.՝ **Իհուդա** **ܝܚܘܕܐ**) (անվան նշանակությունն է՝ *գովութիւն* կամ *խոստովանութիւն* (ԲՅԱ, 168), ըստ Ռ. Բեքհաուսի՝ *գովք*⁴⁰, ըստ ԵՏ-ի՝ *хвала или прославленный* (190): Անվան իմաստը գալիս է աստվածաշնչյան բնագրից. «*Եւ յղացաւ դարձեալ, ծնաւ որդի, եւ ասէ. Զայս միւս անգամ զոհացայց զՏեառնէ, եւ կոչեաց զանուն նորա Յուդա*» (Ա-1՝ Ծն. ԻԹ 35): Ա-2 և Ա-3 գրքերը ևս կրկնում են Ա-1-ին. «*Այս անգամ պիտի զոհանամ Տէրոջմէն,*

³⁹ Տե՛ս Գիրք Մակարայեցոց, քնն. բն. աշխ.՝ **Հ. Ամայանի**, ՀՀ ԳԱ հրտ., էջ 107:

⁴⁰ Տե՛ս Ռոբերտ Բեքհաուս, *Աստվածաշնչի անձինք*, Ուղեցույց, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, 1999, էջ 9:

անոր համար անոր անունը (**գոհություն**) Յուդա դրաւ ու դադարեցաւ ծնանելէն»: Այսինքն՝ ըստ հայերեն տեքստերի՝ *Աստվածաշնչի Յուդա* անունը մեկնաբանվում է **գոհություն**, որն անշուշտ, տարբերվում է վերը բերված **գովք, խոստովանություն** իմաստներից և տրամաբանորեն առավել ճիշտն է:

Սուրբ Գրքի հատուկ անունները, հատկապես անձնանունները նույնությամբ չեն փոխանցվում ուրիշ լեզուներ, այլ ենթարկվում են որոշակի փոփոխությունների: Օտար լեզվական ազդեցությամբ ու տառադարձական կանոններով պայմանավորված՝ լեզվում ստեղծվում են միևնույն անվան ուղղագրական տարբերակներ: Ահա թե ինչու **աստվածաշնչյան անունների տառադարձության և ուղղագրության, նաև քերականական որոշ առանձնահատկությունների (հատուկ անունների հոլովում, հոգնակիի դրսևորումներ) քննությունը դառնում է մեր ուսումնասիրության կարևոր հարցերից մեկը:**

Առանձնակի կարևորություն ենք տալիս աստվածաշնչյան անունների ոճական քննությանը, ուստի համեմատելու մյուս եզրը հայ բանաստեղծությունն է, հատկապես հայ հին և միջնադարյան հոգևոր բանաստեղծությունը, որոնց հեղինակները, լինելով հայ եկեղեցու կարկառուն դեմքեր՝ կաթողիկոս, եպիսկոպոս, վարդապետ ու քահանա, սարկավազ ու դպիր, անուրանալի վաստակ ունեն *Աստվածաշնչի* ցանկացած նյութի մեկնության մեջ ընդհանրապես և մասնավորապես՝ հատուկ անունների: Ահա թե ինչու մանրամասն առանձնացված և քննված են հատկապես այն անունները, որոնք գործածվել են հայ մատենագրության, հատկապես քնարերգության մեջ:

Մեր հաջորդ կարևորագույն խնդիրներից է աստվածաշնչյան անունների բազմաթիվ ներլեզվական տարբերակներից գտնել այն ճիշտ ձևը, որը համապատասխանում է արդի հայերենի լեզվական և մասնավորապես անվանաբանական նորմին՝ դրանով իսկ ներկայացնելով *Աստվածաշնչի* անվանաբանական նորմի տեղն ու դերը ընդհանուր լեզվում:

Քանի որ մեր հիմնական նպատակը աստվածաշնչյան անունների քննությունն է՝ լեզվական, ծագումնաբանական, ստուգաբանական, պատմաաշխարհագրական առումներով, ուստի նախ և առաջ կարևորել ենք բոլոր անունները ըստ

հատկանվանաբանական եզրաբանության դասդասելը⁴¹:

Աշխատանքում հատուկ անունները ներկայացվում են հետևյալ դասակարգմամբ.

Ա) ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆ

Հատուկ անունները ներառում են երեք խումբ՝

I. Աստվածների, կուռքերի, հրեշտակների ու հրեշտակապետերի անուններ

II. Անձնանուններ

Նշված խմբերի բոլոր անունները քննում ենք՝

ըստ ծագման (փոխատու լեզուն և տառադարձությունը),

ըստ իմաստի (աստվածաշնչյան անունների բառային իմաստը և այդ իմաստի մեկնաբանումը հենց *Սուրբ Գրքում*),

լեզվական (անունների ուղղագրաքերականական առանձնահատկությունների դրսևորումները),

պատմական (այդ անունները կրող անձինք՝ թագավորներ, նահապետներ, մարգարեներ, քահանայապետեր, առաքյալներ, հրեշտակներ ու հրեշտակապետեր և այլք):

III. Տեղանուններ

Որպես տեղանուններ են ներկայացվել՝

1. Երկրանունների ու բնականունների այն մասը, որոնք հիշատակվում են *Աստվածաշնչում*, ինչպես՝ **Արաբիա, Բաբելոն, Գալիլեա, Իսրայել, Պաղեստին, Եգիպտոս, Բեթղեհեմ, Երուսաղեմ, Կանա, Մովսր, Նազարեթ, Քանան, Թեման** ևն:

2. Ջրանունները (գետ, ծով, լիճ, հեղեղատ, աղբյուր), ինչպես՝ **Եփրատ, Կեդրոն, Հորդանան, Բեթհեզդա, Կարմիր ծով, Տիգրիս, Սուրբել** ևն:

3. Լեռնանունները (լեռ, բլուր, հովիտ), ինչպես՝ **Ահերմոն Արարատ, Բեթել, Գաղատա, Գարիզին, Ձիթենյաց լեռ, Հորդանան, Մովսր, Նաբավ** ևն:

4. Այն անունները, որոնք սկզբնապես (*Աստվածաշնչում*) եղել են տեղանուն, բայց ժամանակակից լեզվում չեն ընկալվում որպես հատուկ անուն, ինչպես՝ **Գեհեն, Եդեմ**:

⁴¹ Աշխարհաբարի քերականության հիմնադիր **Արսեն Այտընյանը** «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատության մեջ հատուկ անունները բաժանում է երկու խմբի՝ *գոյական հատուկ անուն*, որոնց տակ ներառում է անձերին և վայրերին տրվող անունները, այսինքն՝ անձնանուններ և տեղանուններ, և *ածական հատուկ անուններ*, որոնց տակ ներառում է մականունները: Տե՛ս նշվ. աշխ., Եր., 1987, էջ 29:

Բ) ՀԱՏՈՒԿ ԱՆՎԱՆՈՒՄ

Հատուկ անվանումները ներառում են չորս խումբ՝

I. Վերնագրեր՝

Աստվածաշունչ, Սուրբ գիրք և նրա մեջ մտնող գրքերը, այսպես՝ **Ծնունդք, Երկրորդ օրինաց, Գիրք Յոբայ/Յովբ, Դափաւորք, Երգ երգոց, Ավետարան, Գործք առաքելոց** և այլն:

II. Մականուններ՝ մի քանի իմաստային խմբերով.

1. այն վերադիր անվանումները, որ կցվում են որևէ անձնանվան՝ դառնալով նրա համար, այսպես ասած, երկրորդ անուն, ինչպես՝ **Աստվածածին, Տիրամայր** (Մարիամ), **Աստվածորդի, Միածին** (Հիսուս), **Երանելի** (Հոբ) և այլն:

2. Այն անունները, որոնք *Աստվածաշնչում* եղել են սուկ մականուններ կամ հասարակ անուններ, սակայն, ունենալով առանձնահատուկ իմաստ, հետագայում դարձել են անձնանուններ, ինչպես՝ **Ավետիք, Կարապետ, Երանուհի, Մկրտիչ, Սերովբե, Քերովբե, Հարություն, Համբարձում, Օվսաննա** և այլն:

3. Մականունների մի տեսակ են տեղանուններից առաջացած վերադիր անունները, որոնք այսօր էլ ընկալվում են որպես հատուկ, ինչպես՝ **Նազովրեցի** (Հիսուս), **Արիմաթացի** (Հովսեփ), **Իսկարիովթացի** (Հուդա), **Մագթաղենացի** (Մարիամ) ևն:

4. Մականունների այն տեսակը, որը տվյալ երկրի բնակիչ լինելն է ակնարկում կամ տվյալ երկրի ժողովրդին, ինչպես՝ **գերգեսացի, եգիպտացի, եբրայեցի, եթուսացի** ևն. ժամանակակից ըմբռնմամբ դրանք հատուկ անուն չեն:

III. Ազգանուններ, ինչպես՝ **Ահարոնյան, Գաբրիելյան, Դավթյան, Շմավոնյան, Սողոմոնյան**, որոնք *Սուրբ Գրքում* արտահայտում են մեծ մասամբ մականվան, երբեմն նաև ազգանվան նշանակություն:

IV. Ոճանուններ

Ոճանուններն այն հասարակ անուններն են, որոնք *Սուրբ Գրքում* ստացել են առանձնահատուկ իմաստ և ներկայացվել որպես հատուկ՝ կամ մեկ բառով, կամ որպես բաղադրյալ հատուկ անուն: Այդ անունները սուրբգրային և բանաստեղծական տեքստից դուրս հատուկ անուն չեն կարող ընկալվել, ինչպես՝ **Արքա, Գառ, Սուրբ**,

Անկեզ մորենի, Ավերյաց լեռ, Կենաց ծառ, Սրբություն սրբոց և այլն:

Անշուշտ պետք է նկատի ունենալ, որ *Սուրբ Գրքի* անունները տարանջատվում են երկու խմբի՝

1. բուն աստվածաշնչային,
2. **Աստվածաշնչում գործածված:**

Առաջին խմբում ներառվում են այն բոլոր հատուկ անունները, որոնք առաջին անգամ գործածված են *Աստվածաշնչի* զանազան գրքերում. դրանք այն անձնանուններն են, որ կրել են *Սուրբ Գրքի* հերոսները՝ նահապետներ, թագավորներ, առաքյալներ, մարգարեներ և այլն, աստվածների և կուռքերի անունները, այն բոլոր տեղանունները, որտեղ կատարվել են *Աստվածաշնչում* նկարագրվող մեծ և փոքր իրադարձությունները, այսինքն՝ այս կարգի անունները համարվում են **բուն աստվածաշնչյան:**

Երկրորդ խմբում ներառվում են այն անունները՝ անձնանուն թե տեղանուն, որոնք եղել են պատմության մեջ՝ անկախ *Սուրբ Գրքի* եբրայական բնագրից: Ասենք՝ **Ալեքսանդր Մակեդոնացին, Դարեհ** անվանակիր թագավորները, **Հերովդեսները**, զանազան պետությունների ու քաղաքների անունները՝ **Ալեքսանդրիա, Եգիպտոս, Հունաստան, Հռոմ, Պարսք** և այլն, կհամարվեն **Աստվածաշնչում գործածված**, քանի որ այդ անունները հայտնի էին և շրջանառվում էին տարբեր ժողովուրդների մեջ դեռ մինչև *Աստվածաշունչը*: Եվ քանի որ գրավոր հայերենի սկիզբը *Աստվածաշունչն* է, ուստի այս երկրորդ խմբում ներառված անուններն էլ առաջին անգամ գրավոր հայերեն ավանդվել են հենց *Սուրբ Գրքով*:

Անունների համակողմանի քննությունը կատարված է մի շարք մեթոդների կիրառմամբ՝ պատմական, պատմահամեմատական, զուգադրական: Քանի որ մեր նպատակը այդ անունների ներկայացումն է լեզվի պատմական զարգացման մեջ, ուստի իբրև համեմատության եզրեր վերցվել են թե՛ գրաբար, թե՛ արևմտահայերեն, թե՛ արևելահայերեն թարգմանված *Աստվածաշնչի* լավագույն համարվող գրքերը: Անունների զանազան տարբերակների զուգադրական քննությունը հունարենի, ռուսերենի, որոշ դեպքերում նաև գերմաներենի հետ անշուշտ նպաստում է գտնելու ճիշտ ու նախնական տարբերակը, կատարելու անհրաժեշտ եզրահանգումներ:

ԳԼՈՒԽ I
ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ
ԵՎ

ՆՐԱ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հրեա ժողովրդի հնագույն գրական ստեղծագործությունը հանդիսացող *Աստվածաշունչը* հունարեն կոչվել է **Քիբլիա** և հայերեն թարգմանվել է **Գիրք**⁴²: Հայ մատենագրության մեջ Կորյունը գրերի գյուտից հետո առաջին անգամ **Քիբլիայի** համապատասխան գործածում է **Գիրք** անունը. «*Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակացն Սողոմոնի*»⁴³: Ինքնաբերաբար, այլ գրքերից տարբերելու և նրա կարևորությունը շեշտելու համար հետագայում սկսում են կոչել **Սուրբ Գիրք**:

Աստվածաշունչ անունը հունարեն **theopneustos** բառի համարժեքն է և բխում է *Հին Կտակարանի* հունարեն թարգմանությունից⁴⁴: Այս բառը կիրառված է *Նոր Կտակարանի Բ Տիմոթեոսի* գրքում. «*Ամենայն Գիրք աստուածաշունչք եւ օգտակարք ի վարդապետութիւն են եւ ի յանդիմանութիւն եւ յուղղութիւն եւ ի խրատ արդարութեան*» (Գ 16):

Քրիստոսից երեք դար առաջ Պտղոմեոս Ֆիլադելֆոս (Եղբայրասեր) թագավորի (Ալեքսանդրիայի մեծ գրադարանի հիմնադիր) հանձնարարությամբ 72 թարգմանիչներ հրավիրվում են Ալեքսանդրիա և, բաժանվելով վեց խմբի, թարգմանում են *Հին Կտակարանը*. ահա թե ինչու թարգմանությունը հայերեն կոչվում է **Յոթանասնից**⁴⁵, իսկ հունարեն՝ **Սեպտուագինտա (Septuaginta)**: Երբ ավարտից հետո (74 օր)՝ ՔԱ 284-247թթ-ի ժամանակաշրջանում համեմատվում են բոլոր թարգմանությունները, բացառապես ոչ մի բառի տարբերություն չեն տեսնում, ուստի կարծվում է, թե այդ

⁴² Թարգմանված լեզուների ցանկում *Աստվածաշունչի* հայերեն թարգմանությունը յոթերորդն է: Տե՛ս *Աստվածաշունչը և հայ մշակույթը*, Ներսես ավ. քին. Ներսեսյան, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, 2001:

⁴³ Տե՛ս **Կորյուն**, *Վարք Մաշտոցի*, Եր., 1962, էջ 102:

⁴⁴ Սակայն պետք է նկատի ունենալ, որ միայն հայերեն թարգմանությունն ունի *Աստվածաշունչ* անվանումը:

⁴⁵ Սովորաբար տրվում է լատինատառ թվանշաններով՝ LXX -70 թարգմանիչների մասնակցության համար:

ամենը կատարվել է **Աստծու շնչով**⁴⁶: Նախապես *աստվածաշունչ*-ը մակդիր էր *Հին Կրակարանի*, որ հետո վերագրվեց նաև *Նոր Կրակարանին* ու դրանց մեջ մտնող բոլոր գրքերին, ուստի հետագայում թարգմանիչներն ու արտագրող գրիչները վերնագրում են «**Գիրք Աստվածաշունչի Հին և Նոր կրակարանաց**» կամ ուղղակի **Աստվածաշունչ**: «Կատարելության հասցնող «ճշմարտության խօսքը» *Աստվածաշունչ* կտակարաններն են՝ պահուած եւ փոխանցուած սերնդէ սերունդ նախ բերանացի աւանդութեամբ եւ ապա գրաւոր, վերջ ի վերջոյ ամփոփուելու համար Գիրքին մէջ, որ է Սուրբ, որովհետեւ անոր հեղինակներուն գրիչը շարժած է Աստուծոյ շնչով» (ՅԱՄՀԶ, էջ 6):

Եբրայերեն գրված *Հին Կրակարանը* սկզբնապես թարգմանվել է հունարեն և ասորերեն, *Նոր Կրակարանը* գրվել է հունարեն և հարյուրամյակներ շարունակ փոխանցվել արտագրված օրինակներով: Արտագրությունից արտագրություն, թարգմանությունից թարգմանություն աղավաղվել է *Աստվածաշնչի* բնագիրը, և այնքան շատ են եղել աղավաղումներն ու խախտումները հենց հունարենում, որ արդեն 3-րդ դարում ազգությամբ հույն Որոգինեսը⁴⁷ ձեռնարկում է տաժանելի մի աշխատանք՝ կազմելով *Սուրբ Գրքի* վեց օրինակներից համեմատական մի բնագիր. պատմության մեջ այն հայտնի է **Hexapla**, հայերեն **վեցսյուն** կամ **վեցիցյան** անվանմամբ: Դավանաբան լեզվագետը ձեռնարկում է եբրայերեն և հունարեն բնագրերի համեմատություն. նրա կազմած օրինակում յուրաքանչյուր էջ բաժանված էր վեց սյունակի, որոնցում ներկայացված էին 1) եբրայական բնագիրը եբրայերեն տառերով, 2) եբրայերեն բնագիրը հունարեն տառերով, 3) *Ազուիլասի* (Ակիւլասի)⁴⁸ թարգմանությունը, 4) *Սյումախոսի* (Սիմաքոս) թարգմանությունը, 5) *Յոթանասնից* թարգմանությունը, 6) *Թեոդոսիոսի* թարգմանությունը⁴⁹:

Որոգինեսի հիմնական նպատակն է եղել վերականգնել *Յոթանասնից*-ը՝

⁴⁶ Այս պատմությունը մեզ է հասել բազմաթիվ աղբյուրներով, որոնցից հնագույններն են Արիստոբոլոսը և Արիստեսը, որոնք երկուսն էլ ժամանակակից են եղել այս դեպքերին: Սակայն ժամանակակից ուսումնասիրությունները հերքում են նրանց՝ LXX -ի թարգմանությանը ականատես լինելու փաստը:

⁴⁷ Որոգինեսի կյանքի և գործունեության մասին մանրամասն տե՛ս *Ընդհանրական եկեղեցու հայրեր, Դ, Որոգինես, Աղոթքի մասին*, առաջաբանը **Եզնիկ արք. Պետրոսյանի**, Ս. Էջմիածին, 2007:

⁴⁸ Տարբեր աղբյուրներում տարբեր կերպ է գրվում:

⁴⁹ Տե՛ս Ներսես ավ. քին. Ներսեսեան, *Աստվածաշունչը* և հայ մշակույթը, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, 2001, էջ 18-19:

ստեղծելով մի խմբագրված տարբերակ, ուր կգատորոշվեին երբայերեն բնագրի մեջ արված հավելումները, նաև կրճատումները: Տրամաբանական է, որ նման աշխատությունը կներկայացներ գիտական լուրջ արժեք, և բնական է, որ 4-դ դարում Եվսեբիոս Կեսարացին Որոգինեսի *Վեցիջյանի* մանրակրկիտ համեմատությամբ կազմում է *Աստվածաշնչի* ևս մի ընտիր օրինակ (բանասիրության մեջ դա անվանվում է *Կեսարյան*):

1.1. Սուրբ Գրքի հայերեն առաջին թարգմանությունը և Մաշտոցի դերը այդ գործում

Սուրբ Գրքի հայերեն առաջին թարգմանությունը նոր դարագլուխ է բացում մեր գրական մշակույթի պատմության մեջ, և այդ դարագլուխը համարվում է ***ոսկեդարյան***: Հայ իրականության մեջ այլևս ոչ մի ժամանակ նման բնութագրում չի ստացել, և դա լիովին հասկանալի է: Զուտ լեզվական տեսանկյունից մեկնաբանելով *ոսկեդարյանի* իմաստը՝ պետք է նկատի ունենալ, որ ոչ մի դարաշրջան չունեցավ գրաբարի այն դասական վիճակը, որ հատուկ էր 5-րդ դարի հայերենին՝ թարգմանական ու մատենագիտական նման առատությամբ⁵⁰:

Հայ գրավոր մատենագրության սկիզբը դրեց *Աստվածաշնչի* հայերեն թարգմանությունը, որն իրագործվեց Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և նրանց թարգմանիչ աշակերտների քրտնաջան ու նվիրական աշխատանքով⁵¹:

Մեսրոպ Մաշտոցը հայ սրբերի շարքը դասվող ամենակարկառուն անձն է⁵²: Նրա հիշատակը տոնվում է երկու անգամ. մեկը՝ Սահակ Պարթևի հետ միասին, մյուսը՝

⁵⁰ Հ. Հյուբշմանը *Հայերենի քերականություն* աշխատության մեջ նշում է, որ «...դեռևս մեր թվարկության մոտավորապես 450 թվին հունարենից և ասորերենից թարգմանված գրքերի թիվը կազմել է ավելի քան 600 (Euseb, Ghron, Venedig, 1818, I, էջ XI)», և նաև հավելում. «Եթե նույնիսկ այդ թվաքանակը 450 թվականի համար չափազանցված է, բայց և այնպես հաստատված է, որ 5-րդ դարի վերջերին Հայաստանում կար հարուստ գրականություն, որը գործում էր այն ոգով, որով այն հիմնել էին Սահակն ու Մեսրոպը»: Տե՛ս նշվ. աշխ., էջ VIII:

⁵¹ Մենք այստեղ նպատակ չունենք անդրադառնալու գրերի ստեղծման պատմությանը, և քննության առանցքը Մաշտոցի ունեցած դերն է *Աստվածաշնչի* թարգմանության գործում:

⁵² Հայագիտության մեջ անհաշվելի են այն աշխատությունները, որոնք նվիրված են Մեսրոպ Մաշտոցին և հայ գրերի գյուտին:

Թարգմանչաց վարդապետների հետ հոկտեմբեր ամսվա երկրորդ շաբաթ օրը⁵³:

5-րդ դարի հայ մատենագրության առաջին ստեղծագործությունն էլ Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործը ներկայացնող Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն է⁵⁴:

Կորյունի երկը մեզ է հասել երկու խմբագրմամբ, որոնք իրարից զգալիորեն տարբերվում են: Հր. Աճառյանի կարծիքով՝ տեղեկությունների հակասություններն այնքան շատ են, որ եթե դրանցից մեկը Կորյունն է, ապա մյուսն անպատճառ հետին դարերի ձևափոխություն է: Բանասիրության մեջ դրանք հայտնի են «ընդարձակ» և «համառոտ կամ փոքր» անուններով⁵⁵: Մեր հետագա շարադրանքում կանդրադառնանք երկուսին էլ:

Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը ներկայացված են նաև 5-րդ դարի պատմիչներ Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու կողմից:

Հայագիտության մեջ սովորաբար նշվում է, որ գրերի գյուտից հետո Մաշտոցի և Սահակի առաջին գործը լինում է *Աստվածաշնչի* հայերեն թարգմանությունը: Իսկ ի՞նչ էր արված մինչ այդ, թարգմանության համար գոնե որոշ հող նախապատրաստված էր, թե՛ նոր պիտի դրվեր թարգմանության սկիզբը:

⁵³ Հայոց գրերի միջոցով մեծ երախտավորը հայ ժողովրդին հարատևություն պարգևեց: Լեոն գրում է. «Մեր հազարամեայ անցեալի այն երկար ճանապարհին, որի վրա փռած են մեր անհուն տառապանքները, ոչ բանակներ ունէինք մեր պահպանութեան համար, ոչ ոյժ, ոչ հնարատրութիւն, ոչ էլ դրսի օգնութիւն, այլ մի հատիկ բան միայն – Մեսրոպեան գիրը»: «Նոյն իսկ եթէ Տիգրանները ասելի սովորական երևոյթներ լինէին մեր պատմութեան մէջ, դարձեալ նրանց յաղթութիւնները չէին կարող համեմատել այս համեստ վարդապետի գործի հետ... Տիգրանների յաղթութիւններից մեզ ոչինչ ժառանգութիւն չմնաց, մինչդեռ ամբողջ 15 դար է, ինչ հայր ունի հաստատ ու անկողոպտելի մնացած մի ժառանգութիւն, և դա Մեսրոպի այդ աննման յաղթութիւնից է մնացել»: Տե՛ս **Լէօ, Ս. Մեսրոպ, Թիֆլիս, 1904, էջ 180-181**:

⁵⁴ Երկը գրված է իր ուսուցչին պաշտող աշակերտի անկեղծ ներշնչանքով, որն անշուշտ բնութագրական է վարքագրության համար: Այդ ներշնչանքը, ցավոք, հաճախ այնքան մեծ է, որ խանգարում է Կորյունին դուրս գալ իր ուսուցչով հիացած աշակերտի դերից և որպես պատմաբան ու ականատես ներկայացնել Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը. առավել չափով հուզումնալից զեղումներ ու դատողություններ են, քան փաստեր: Իր ժամանակի մեջ, ինչ խոսք, Կորյունն արդարացվում է (հիշենք, որ հետո եկող պատմիչները նրան մեծարել են *սքանչելի* տիտղոսով), մինչդեռ ժամանակի հեռավորությունից քննադատվում՝ փաստերի ներկայացմամբ խիստ սակավախոս լինելու պատճառով: Կորյունը Մաշտոցին համեմատում է աստվածաշնչյան Մովսեսի հետ. «Մեծն Մովսեսն էլ այնպես ուրախ չէր Սինա լեռնից իջնելու ժամանակ. չենք ասում, թե ավելի ուրախ էր, այլ նույնիսկ շատ պակաս ուրախ էր: Որովհետև աստվածատես մարդն աստվածադիր հրամանն աստծուց առած և իր բազուկների վրա բռնած իջնում էր լեռնից, բայց նա տխուր էր չարագործ ժողովրդի պատճառով, որ... ծուլածո կուռքին էին երկրպագում... Իսկ այս երանելին, որի մասին են հորինվում իմ այս ճառերը, չեղավ այնպես, ինչպես այնտեղ կատարվեց. այլ նա ինքն իր հոգևոր մխիթարությամբ լցված՝ գիտեր ընդունողների հոժարությունը, և ընդունողների ուրախության հուսով լցված լինելուց ճանապարհների կայաններն ավետաբեր էին նրա համար»: Տե՛ս **Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխ.՝ Մ. Աբեղյանի, «Հայպետհրատ» հրտ., Եր., 1962, էջ 103-104**:

⁵⁵ Տե՛ս **Հր. Աճառյան, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 8**:

Սուրբ Գրքի հայերեն բանավոր թարգմանությունը, ըստ մեր իսկ պատմիչների, արդեն սկսվել էր դեռ մինչև գրերի գյուտը: Նկատենք, որ 301 թ. Հայաստանն ընդունում է քրիստոնեությունն իբրև պետական կրոն, և Գրիգոր Լուսավորիչը համարվում է *Սուրբ Գրքի* առաջին, այսպես ասած, բանավոր թարգմանիչը:

Աշտիշատի ժողովից հետո (353-356) Հայաստանում դպրոցներ բացվեցին՝ հունարեն և ասորերեն լեզուներ ուսուցանելու, և դրա հիմնական նպատակը, անշուշտ, *Սուրբ Գիրքը* ժողովրդի մեջ հայերեն թարգմանաբար քարոզելն էր:

Կորյունն իր պատմության մեջ հավաստում է, որ Մաշտոցը թողնում է աշխարհական կյանքը և դառնում հոգևորական: Ենթադրելի է, որ Մաշտոցը մեկ օրում չէր կայացրել իր այդ որոշումը. անպայմանորեն դա երկար մտածումների, կրոնական գրքերի թողած հիմնավոր ազդեցության արդյունք էր: Այսինքն՝ պետք է կարծել, որ Մեսրոպ Մաշտոցն իր գիտակցական կյանքի դեռևս նախաշեմին արդեն կարդում էր *Սուրբ Գիրքը*, քաջատեղյակ էր նրա թե՛ կառուցվածքին, թե՛ բովանդակությանը: «Եվ այնտեղ հենց (արքունի դիվանում) ջանալով ուշադրությամբ հետևում էր աստվածային գրքերի ընթերցանությանը, որով և շուտով լուսավորվեց ու թափանցեց, խորամուխ եղավ աստվածային հրամանների հանգամանքների մեջ, և ամեն պատրաստությամբ զարդարելով իրեն՝ իշխանների ծառայությունն էր կատարում»⁵⁶: Հոգևորական դառնալով՝ նա, ըստ Կորյունի, շատ արագ իր շուրջն է հավաքում բազում հավատացյալների, որոնց հետ ծավալում է քարոզչական մեծ գործունեություն: Հիշենք, թե ինչ ոգևորությամբ է նկարագրում Մաշտոցի քարոզչական գործունեությունը Կորյունը Գողթն գավառում. «Իսկ երանելին իսկույն **իր ավետարանական արվեստը բանեցնելով՝** իշխանի հավատարիմ օգնությամբ սկսեց քարոզել գավառում. ամենքին իրենց հայրենական ավանդություններից ու սատանայական դիվապաշտ ծառայությունից գերեց, **շուռ տվավ Քրիստոսի հնազանդությանը**»⁵⁷: Ինչ խոսք, ընդգծված բառերն ակնարկում են միմիայն այն, որ Մաշտոցը ոչ միայն քաջատեղյակ էր *Սուրբ Գրքին*, այլև ամբողջ էությամբ քրիստոնյա էր: Իսկ լեզվական տեսանկյունից դա նշանակում է, որ Մաշտոցն *Աստվածաշունչն արդեն բանավոր* հայերենի էր վերածել:

⁵⁶ Կորյուն, նշվ. երկը, էջ 96:

⁵⁷ Տե՛ս նշվ. երկը, էջ 97-98:

Խորենացին գրում է, որ Մեսրոպը եկեղեցում (կարևորենք՝ դեռ մինչև գրերի գյուտը) նախ կարդում էր գրքերը ասորերեն լեզվով, ապա թարգմանում էր հայերեն, ուստի նրան ամեն տեղ հասկանում էին և գնահատում, մինչդեռ նրա բացակայությամբ կարդացվածը չէր թարգմանվում, և ոչ ոք ոչինչ չէր հասկանում: «Երբ երանելի Մեսրոպն ուսուցանում էր, ոչ փոքր նեղություն էր կրում, որովհետև ինքն էր թե՛ կարդացողը և թե՛ թարգմանողը, և եթե մի ուրիշն էր կարդում, երբ ինքն այնտեղ չէր լինում, ժողովրդին անհասկանալի էր մնում թարգմանիչ չլինելու պատճառով: Ուստի նա միտք դրեց մի հնարք գտնել, հայոց լեզվի համար տառեր ստեղծել, և աշխատանքի անձնատուր լինելով՝ զանազան փորձերով չարչարվում էր»⁵⁸: Հավանաբար Խորենացու այս վերջին միտքն է հիմք տվել այն կարծիքին, թե հայերն այն բացառիկ ժողովուրդն են, որ ստեղծեցին այբուբեն *Աստվածաշունչ*ը հայերեն ունենալու համար: «Իր տեսակի մեջ եզակի փաստ է՝ ստեղծել ավարտուն այբուբեն՝ բացառապես ամբողջ մի ժողովրդի քրիստոնեական *Աստվածաշունչ* պարգևելու նպատակով»⁵⁹: Իսկ հինգերորդ դարի մեր բոլոր պատմագիրները, նաև վարքագիր Կորյունը, հայերեն տառերի ստեղծումը մեզ ներկայացնում են իբրև երկնային հրաշք՝ տրված աստվածային ներշնչանքով⁶⁰:

Գողթան գավառում հեթանոսներին դարձի բերելիս էլ Մաշտոցը համոզվում է, որ պարտադրանքով չի կարելի ժողովրդին քրիստոնյա դարձնել. մարդիկ Աստծու խոսքը պետք է նախ հասկանան, հետո ընդունեն: Մարդկանց պետք է ուսուցանել: Իսկ դրա համար նախևառաջ սեփական գիր էր հարկավոր⁶¹:

Այնքան սպասված հայոց գիրն ստեղծվեց, և Կորյունի իսկ վկայությամբ՝ Սահակը և Մեսրոպը աշակերտների հետ անմիջապես սկսում են թարգմանել Ս.

⁵⁸ **Մովսես Խորենացի**, *Հայոց պատմություն*, ԽԷ, էջ 285:

⁵⁹ Տե՛ս **Ա. Կայայան**, *Նոր Կտակարանի ընդհանուր ներածություն*, Ավետարանական հեռանկարներ, «Հավատք և կյանք», 1996, էջ 68:

⁶⁰ Հարկ ենք համարում մեջբերել Խորենացուն. «Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է այժմոքի թաթ՝ քարի վրա գրելիս, այնպես որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ծյունի վրա: Եվ ոչ միայն երևաց, այլև բոլոր (գրերի) հանգամանքները նրա մտքում հավաքվեցին, ինչպես մի ամանում: Եվ աղոթքից վեր կենալով՝ ստեղծեց մեր նշանագիրները»: Տե՛ս **Մովսես Խորենացի**, նշվ. երկը, ԾԳ, էջ 292:

⁶¹ Լեոն գրում է. «Այնտեղ, ուր դարերի ընթացքում ժողովուրդը բերանացի գրականություն էր պահպանում բամբիռների ձայնակցությամբ, նույն այդ հողի վրա, նույն այդ ձայների մեջ պարզվեց, անհրաժեշտություն դարձավ տառեր գտնելու, գրով գրականություն ստեղծելու միտքը»: Տե՛ս **Լեօ**, նշվ. աշխ., էջ 158-159:

Գիրքը. «Այն ժամանակ անպայման սքանչելի դարձավ մեր երանելի ու ցանկալի Հայաստան աշխարհը, ուր երկու հավասարակիցների ձեռքով հանկարծ, **մի անգամից** եկան հասան, հայաբարբառ, հայերենախոս դարձան **օրենուսույց Մովսեսը՝ մարգարեական դասի հետ, և առաջադեմ Պողոսը՝ բոլոր առաքելական գնդով, Քրիստոսի աշխարհակեցույց Ավետարանի հետ միասին**»⁶²: Բայց մինչև այս խոսքերը գրելը նույն ինքը՝ Կորյունը գրում է, որ Մաշտոցը նշանագրերը ստեղծելուց և Հռոփանոսի մոտ գեղագրելուց անմիջապես հետո հենց Սամոսատում «...ձեռնարկեց թարգմանություն անելու երկու մարդու, իր աշակերտների հետ, որոնց առաջինի անունը Հովհան էր, Եկեղյաց գավառից, և երկրորդինը՝ Հովսեփ, Պաղանական տնից: **Եվ սկսեց թարգմանել (Սուրբ) գիրքը՝ նախ Սողոմոնի Առակներից...** (ընդգծումը մերն է-ՓՄ)»⁶³: Որ Մաշտոցի երկու աշակերտներն էլ հմուտ՝ ավագ դասի թարգմանիչներ են եղել, հավաստում և ընդունում են բոլորը: Ուրեմն ինչո՞ւ հնարավոր չէր, որ երեք նշանավոր թարգմանիչներ Սամոսատում եղած ժամանակ կարող էին թարգմանել ոչ միայն Սողոմոնի առակները, այլև ողջ *Հին Կտակարանը* (հիշենք՝ Մաշտոցը դեռ մինչև գրերի գյուտը բանավոր թարգմանում էր *Սուրբ Գիրքը*): Խորենացին Մաշտոցի դեռևս դրսում ծավալած գործունեության մասին գրում է. «Եվ իսկույն ձեռնարկեցին թարգմանության, խորհրդաբար **սկսելով (Սողոմոնի) Առակներից, ամբողջ քսաներկու հայտնի գրքերը և Նոր կտակարանը փոխադրում է հայերեն լեզվի** (ընդգծումը մերն է-ՓՄ), նույնպես և նրա աշակերտները, Հոհան Եկեղեցացին և Հովսեփ Պաղնացին...»⁶⁴:

Այս նույն միտքը կարդում ենք Փոքր Կորյունի համառոտ խմբագրության մեջ, միայն **Նորի** փոխարեն սա նշում է **Հինը**. «Եւ իսկոյն ի թարգմանութիւնս ձեռնարկեալ խորհրդաբար սկսանելով յԱռակաց իմաստնոյն Սողոմոնի, բովանդակելով զքսան և երկուս յայտնիսն, զհին կտակարանսն յեղով ի հայ բան»⁶⁵: Ընդ որում, Փոքր Կորյունը նույն հատվածում նաև հավաստում է, որ «Եւ աշակերտք նորա Յովհան և Յովսեփ ի նոյնս նպաստ լինէին: Եւ զարուեստ գրչութեանն ուսուցանէր մանկագոյն

⁶² Կորյուն, *Վարք Մաշտոցի*, էջ 106:

⁶³ Կորյուն, նշվ. երկը, էջ 102:

⁶⁴ Մովսես Խորենացի, նշվ. երկը, ԾԳ, էջ 292:

⁶⁵ Կորյուն, *Վարք Մեսրոպ Մաշտոցի*, աշխ.՝ Ա.Մաթևոսյանի, Եր., 1994, էջ 118:

աշակերտացն»⁶⁶:

Այս կարծիքները մերժում են Ստ. Մալխասյանցը և Հր. Աճառյանը: Առաջինը նշում է, որ հնարավոր չէր հենց Ասորիքում թարգմանել երկու գիրքն էլ՝ թե՛ *Հինը*, թե՛ *Նորը*, այս տողերը համարում է լուսանցագրություն, որ հետո մտել է բնագրի մեջ: Հերքելով Խորենացու այս խոսքերի հավաստիությունը՝ Մալխասյանցը հենվում է Խորենացու մյուս խոսքերի վրա (Գ, ԾԴ), ուր նշվում է, թե *Ս. Գիրքը* թարգմանեց Սահակը ասորերենից հունարենը չլինելու պատճառով, և այնուհետև (Գ, ԿԱ) Սահակը և Մեսրոպը հունարենից թարգմանեցին մի անգամ թարգմանածը: Սակայն Խորենացու խոսքերը կասկածի տակ առնող Ստ. Մալխասյանցը Փավստոս Բուզանդի պատմության առաջաբանում Խորենացու մասին գրում է հետևյալը. «Խորենացին իսկական մտածող հեղինակ է. նրա ամեն մի խոսքը չափված է, կշռված, ո՛չ ավելորդ խոսք, ո՛չ չափազանցություն: Նա հիշում է, ինչ որ ասել է մի անձի կամ դիպվածի մասին և ոչ մի անգամ չի ընկնում հակասության մեջ»⁶⁷: Ուրեմն որքանո՞վ է ընդունելի Մալխասյանցի այս հակասական մոտեցումը⁶⁸:

Իսկ Հր. Աճառյանն էլ նշում է, որ եթե հավաստի համարենք Խորենացու և Փոքր Կորյունի խոսքերը, ապա ուրեմն պիտի ընդունենք, թե *Ս. Գիրքը* հայերեն է թարգմանվել երեք անգամ. առաջինը՝ Մեսրոպի ձեռքով Սամոսատում, երկրորդը՝ Սահակի ձեռքով Մեսրոպի՝ Աղվանք քարոզության գնացած ժամանակ և երրորդը՝ թարգմանիչների վերադարձին՝ Եզնիկի ընկերակցությամբ⁶⁹:

Սուրբ Գրքի թարգմանությանն է անդրադարձել նաև Ղազար Փարպեցին, ըստ որի՝ թարգմանությունը կատարվել է հունարեն բնագրից, և եղել է ընդամենը մեկ թարգմանություն, և որ դրա հեղինակը բացառապես Սահակ Պարթևն է: Իր պատմության Ժ գլխում Փարպեցին գրում է. «Սակայն տարակուսանքի մեջ էին *Սուրբ գիրքը* չունենալու պատճառով, քանի որ հայերեն լեզվով դեռևս չկային եկեղեցու սուրբ կտակարանները: Եւ երանելի Մաշտոցն ու նրա հետ եղած պատվական քահանաները չէին կարող համարձակվել ձեռնարկելու մի այսպիսի խիստ կարևոր գործի, ինչպես

⁶⁶ Կորյուն, նույն տեղը:

⁶⁷ Փավստոս Բուզանդ, *Պարմություն Հայոց*, «Հայաստան», Եր., 1968, էջ 54:

⁶⁸ Մալխասյանցի տեսակետը մերժում է նաև Շահե Աճեմյանը: Տե՛ս **Շահե արք. Աճեմյան**, *Հայերէն Աստուածաշունչը (հայագիտական ուսումնասիրություններ)*, Եր., 2006, էջ 35:

⁶⁹ Տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 311:

հունարենից հայերեն լեզվով թարգմանելը, որովհետև դեռ լրիվ տեղյակ չէին հունարենի ուսման գիտական հրահանգին»⁷⁰: Մենք այս տեսակետը չենք քննարկի, քանզի դրա լավագույն պատասխանը տվել է հենց ինքը՝ Աճառյանը. «Փարպեցի մեսրոպյան գրերի գյուտն էլ ուզում է Սահակին ընծայել..., որի բուն նպատակն է անհամեմատ բարձրացնել Սահակի արժանիքը, մինչև իսկ ի վնաս Մեսրոպի»⁷¹: Միայն ցանկանում ենք մեջբերել նույն՝ Ժ գլխում, Ղազար Փարպեցու գրածը. «Եվ ասորերեն լեզուն չհասկանալուց եկեղեցական պաշտոնյաների աշխատանքն ու ժողովրդի ջանքերն ապարդյուն էին դառնում: Եվ երանելի այր Մաշտոցն այս մասին երկար խորհում էր ու լալիս էր իր ներսում. չէ՞ որ կային հայերեն լեզվի նշանագրեր, **որոնցով հնարավոր էր սեփական ձայնով և ոչ թե մուրացած լեզվով, եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ ամբողջ բազմության սրտերը** (ընդգծումը մերն է-ՓՄ)»⁷²: Արդյոք այս խոսքերը ուղղակիորեն ցույց չեն տալիս, որ *Սուրբ Գրքի* թարգմանությամբ նախանձախնդիր էր նախ և առաջ Մեսրոպը:

Էմ. Պիվագյանը Կորյունի երկի աշխատասիրության մեջ գրում է. «Մինչ այդ՝ հայերեն լեզվով մի բառ անգամ չկար մատյանների մեջ գրված, նույնիսկ օտար լեզուների տառերով, հիմա Մաշտոցը բերում էր հաջողությամբ հորինած հայերեն նշանագրեր և հայերեն թարգմանված ու գրված **Աստվածաշնչի մի գիրքը (գուցե և մի քանի գրքեր)** (ընդգծումը մերն է-ՓՄ)»⁷³:

Մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ կարևորում ենք յուրաքանչյուր պատմիչի կամ մասնագետի խոսքը, նույնիսկ Փոքր Կորյունի, ի դեպ, վերջինիս լեզուն շատ ուսումնասիրողներ (այդ թվում՝ Ղևոնդ Ալիշանը) ավելի բարձր են դասում, քան ընդարձակ Կորյունին:

Նշված բոլոր փաստերը մեզ բերում են այն համոզման, որ Մաշտոցն իր աշակերտների հետ հատկապես Սամոսատում եղած ժամանակ (իսկ դա գրեթե մեկ տարի է) թե՛ *Հին*, թե՛ *Նոր կտակարանների* բավական թարգմանություններ է կատարում և նոր միայն վերադառնում Հայաստան: Պայմանականորեն սա համարենք առաջին՝ **Մեսրոպյան կամ Սամոսատյան թարգմանություն**: Վերադառնալով՝ նա դեռ

⁷⁰ **Ղազար Փարպեցի**, *Հայոց պատմություն*, Դր. Ա, Ժ, էջ 37, Եր., 1982:

⁷¹ **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 244:

⁷² **Ղազար Փարպեցի**, նշվ. երկը, Դր. Ա, Ժ, էջ 31:

⁷³ **Կորյուն**, *Վարք Մաշտոցի*, աշխ.՝ **Էմ. Պիվագյանի**, Եր., 1981, էջ 37:

Սահակին պետք է ներկայացնեն հայերեն տառերը, իսկ դրա համար ժամանակ էր պետք, հակառակ դեպքում պիտի մտածենք, որ Սահակն անկախ Մաշտոցից արդեն ոչ միայն գիտեր հայերեն գրել, այլև այնքան վարժ էր, որ կարող էր միաժամանակ թարգմանել *Աստվածաշունչը*: Ո՞ւմ համար էր դա հեշտ կատարել՝ Մեսրոպի՞ համար, որը բերանացի գիտեր ողջ *Սուրբ Գիրքը* և տասնամյակից ավելի բանավոր թարգմանում էր և քարոզում, որը Դանիելյան նշանագրերով երկու տարի (կամ երկու ամիս) պարապել էր, իսկ նա այդ նշանագրերը անպայման փորձարկել էր *Սուրբ Գիրքը* թարգմանելիս, և, որ վերջապես ինքն էր ստեղծել հայերենի հնչյունական համակարգը ճիշտ ներկայացնող գրային համակարգը, թե՛ Սահակի, որը պետք է մի կողմ թողնել իր կաթողիկոսական ծանր ու պատասխանատու գործը, հոգևոր առաջնորդի իր պարտականությունները, մի կողմից՝ սովորել հայերեն գրել, մյուս կողմից՝ թարգմանել *Սուրբ Գիրքը*: Իհարկե, մենք հակված ենք հետևյալին. Մաշտոցը հայրենիք է վերադառնում հայ գրերով և *Սուրբ Գրքից* կատարած որոշակի թարգմանություններով (հիմնականում *Հին Կտակարանից*, մասամբ՝ *Նոր*): Ստեղծվում է թարգմանիչների մի խումբ՝ անպայմանորեն Հովհանի և Հովսեփի մասնակցությամբ, որոնք Սահակ Պարթևի հովանու ներքո արագորեն սկսում են ամբողջացնել, լրացնել, խմբագրել Մեսրոպի՝ իրենց հանձնած թարգմանությունները՝ ստեղծելով մի բնագիր, որ պատմության մեջ մտել է **փութանակի թարգմանություն** անվամբ: Պայմանականորեն սա համարենք **երկրորդ՝ Սահակ-մեսրոպյան** թարգմանություն:

Բայց դրանով *Աստվածաշնչի* թարգմանությունը չի ավարտվում, այն շարունակաբար լրացվում է, համեմատվում թե՛ հունարեն, թե՛ ասորերեն տարբեր բնագրերի հետ: Այդ գործընթացը նոր որակ է ձեռք բերում Եփեսոսի կրոնական ժողովից հետո, երբ Հայաստան է բերվում *Սուրբ Գրքի* կանոնական, ընդունելի թարգմանություն, որը, հավանաբար, եղել է վերը հիշատակած Որոզինեսի կամ Կեսարյան *Աստվածաշնչի* մի օրինակ⁷⁴: Սա արդեն *Սուրբ Գրքի երրորդ*

⁷⁴ Ընդունված է այն կարծիքը, որ *Աստվածաշնչի Թագավորությունների գրքի, Ծննդոց, Բ Օրինաց, Երեմիայի* գրքերի հիմքը Որոզինյան խմբագրությունն է, տասներկու մարգարեների գրքերի և սաղմոսների թարգմանության հիմքը՝ Ղունկիանոսինը, *Մակարայեցիների* գրքի հիմքը Հեքսափլան և Ղունկիանոսի գիրքը, *Եզեկիելի* գրքինը՝ Որոզինեսն ու Ղունկիանոսը: «Հայկական ձեռագրերում Հեքսափլայի նշանների առկայությունը խոսում է այն մասին, որ հայերեն Հին Կտակարանը շարք տեղերում հեղուկ է Որոզինեսի բնագրին»: Տե՛ս **Ներսես ավ. քին. Ներսեսյան**, *Աստվածաշունչը և հայ մշակույթը*, 2001, էջ 18-19:

թարգմանությունն է:

Սուրբ Գրքի թարգմանությունը որևէ կոնկրետ թվականի հետ կապելը ճիշտ չէ. **Աստվածաշնչի** թարգմանությունը անպայմանորեն դիտարկում ենք իբրև մի գործընթաց, որն սկսվել է դեռ մինչև գրերի գյուտը:

Տեղին է ուղղակի մեջբերել Վարազ Առաքելյանի հետևյալ դիտարկումը. «Աստվածաշնչի թարգմանությունը V դարի սկզբում միանգամից չէր կարող գլուխ բերվել, առնվազն 10-ից 15 տարի էր հարկավոր, որպեսզի մեր դեռևս **մեծ փորձ չունեցող թարգմանիչները** (ընդգծումը մերն է – ՓՄ) այն ժամանակվա դժվարին պայմաններում կարողանային այդ հսկա գրքի հայացումը գլուխ բերել»⁷⁵:

Այսպիսով՝ գրերի գյուտին գրեթե զուգահեռ Մեսրոպ Մաշտոցի և նրա երկու աշակերտների կողմից սկիզբ է դրվում **Սուրբ Գրքի գրավոր** թարգմանությանը՝ այն սկսելով *Առակաց* գրքից, ներառելով *Հին Կտակարանի* քսաներկու գրքերը, մասամբ *Նոր Կտակարանի* որոշ գրքեր: Մաշտոցը, հայրենիք վերադառնալով, Սահակին և իրենց առաջին աշակերտներին ներկայացնում է հայոց այբուբենը ու նրանց վստահում *Սուրբ Գրքի* անշուշտ ոչ ամբողջական թարգմանության հետագա լրացումը:

Այդ գործընթացը որոշակիանում է 409-410թթ., և այդ շրջանից է հայ բանասիրության մեջ մտնում **փութանակի** կատարված թարգմանություն անվանումը՝ «*զյառաջագոյն զյանկարծագիւր զփութանակի զթարգմանութիւն*»⁷⁶: Սա մեր մատենագրության մեջ հայտնի է որպես *Ս. Գրքի* առաջին թարգմանություն, իսկ ըստ մեզ՝ սա արդեն երկրորդ թարգմանությունն է:

Ա. Զեյթունյանը գրում է. «Հայերեն բնագիրը ամենասերտ հարաբերության մեջ է *Աստվածաշնչի* հունարեն **Յոթանասնից** բնագրի **Որոգինյան** խմբագրության հետ, մի հանգամանք, որ հաստատվում է նաև մեր կատարած համեմատություններով»⁷⁷:

Մ. Մինասյանը իր «*Աւերարանների եւ Գործքի յարուկ անունների ուղղագրութիւնը եւ հոլովումը*» ուսումնասիրության մեջ գրում է. «Սակայն **ճիշտ չէր լինի** բնագրային կամ իմաստային բոլոր հարցերում հայերեն թարգմանութիւնը **ենթարկել եւ յարմարեցնել յունարէն Եօթանասնից բնագրին**. (ընդգծումները մերն են – ՓՄ) սրա ձեռագրերը բազմաթիւ են ու բազմազան, եւ վերջնականապէս յայտնի չէ հայերէն

⁷⁵ Տե՛ս Վ. Առաքելյան, *Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը*, Եր., 1984, էջ 6:

⁷⁶ Տե՛ս Կորյուն, *Վարք Մաշտոցի*, աշխ.՝ Ա. Մաթևոսյանի, Եր., «Հայաստան», 1994, էջ 100:

⁷⁷ Ը. արք. Աճէմեան, *Հայերէն Աստուածաշունչը*, Եր., 2006, էջ 96:

թարգմանութեան հիմք յունարէն ձեռագիր բնագիրը: Յամենայն դէպս նկատելի են շեղումներ, որոնք երբեմն անբացատրելի են» (էջ 4): Հեղինակը նույն աշխատության 12 էջում հավելում է. «...**անօգուտ է ամեն անգամ դիմել անունների եբրայական հնագոյն ձեւերին** (ընդգծումը մերն է – ՓՄ), քանի որ դրանք աղավաղվել են յունարէն բնագրում. բացի այդ, հայ թարգմանիչները գործ չեն ունեցել եբրայեցերէն բնագրի հետ նոյնիսկ Հին Կտակարանի թարգմանութեան ժամանակ»:

Հետաքրքիր է այս հարցում նաև Շահե Աճեմյանի կարծիքը. «Թարգմանիչները բժախնդիր թարգմանութեամբ պահած են սկզբնագիրին հարազատութիւնը, իսկ հայ ընդօրինակող գրիչները անաղարտութեամբ վերարտադրած են բնագիրը»⁷⁸, իսկ բնագիր ասելով նա նկատի ունի հունարէն տեքստը:

Եղիշե Դուրյանը «Մեր թարգմանիչներուն կարծեցյալ եբրայագիտությունը» հոդվածում՝ անդրադառնում է Արշակ Տեր-Միքայելյանի այն տեսակետին, ըստ որի՝ հայերը Հին Կտակարանը թարգմանել են ոչ թե հունարենից, այլ եբրայերենից՝ անշուշտ նկատի առնելով նաև հունական ու ասորական բնագրերը, և դրա համար բերում է որոշակի փաստեր⁷⁹: Չխորանալով այդ բանավեճի մեջ՝ պետք է նկատի ունենալ, որ այսուամենայնիվ եբրայերենի ազդեցությունը կա հայերեն թարգմանության վրա (շատ հատուկ անուններ հայերեն Հին Կտակարանում տարբեր են Յոթանասնից-ից), և եթե ընդունենք, որ մեր թարգմանիչները Եփեսոսի ժողովից հետո Հայաստան են բերել Սուրբ Գրքի Որոգինյան տարբերակը, ապա այս տարակարծությունները կվերանան, քանզի այդ պարագայում մեր թարգմանիչները հնարավորություն են ստանում իրենց կատարած «փոխանակի» թարգմանությունը այդ օրինակով թե՛ լրացնելու, թե՛ խմբագրելու:

Այսպիսով՝ Սուրբ Գրքի գրաբար թարգմանությունը իր մեջ ներառում է երեք տարբեր վիճակներ՝

- ա) **Սամոսատյան** կամ **Մեսրոպյան**,
- բ) **Փութանակի** կամ **Սահակ-Մեսրոպյան**,
- գ) **Սահակ-Մեսրոպյան**:

Յավոք, մենք չունենք **Մեսրոպյան** այն թարգմանությունը, որը կատարվել է

⁷⁸ Ը. արք. Աճեմյան, նշվ. աշխ, էջ 97:

⁷⁹ Տե՛ս Ե. Դուրեան, Ուսումնասիրությունք եւ քննադատությունք, Մեր թարգմանիչներուն կարծեցյալ եբրայագիտութիւնը, ամբողջ. երկեր, Երուսաղէմ, 1935, էջ 211- 225:

դրսում՝ Սամոսատում, որը շատ հարցերի պատասխան կտար: Այդ տարբերակն է դարձել հիմք հետագա թարգմանությունների համար, և այսօր արդեն հնարավոր չէ մեզ հասած անգամ լավագույն համարվող ձեռագրերի մեջ տարանջատել նախնականը հետագա մշակումներից: Անշուշտ, **Մեսրոպյան** կամ նախնական թարգմանության մեջ դարձյալ կլինեին բազմաթիվ տարընթերցումներ ու հակասություններ, որոնք արդեն պայմանավորված կլինեին եբրայերեն, ասորերեն կամ հունարեն բնագրերով և ոչ թե մեր թարգմանիչների կամ ձեռագիր ընդօրինակողների աշխատանքով: Ասել է թե՛ այս երեք բաժանումները լայն առումով արտահայտում են *Սուրբ Գրքի* հայերեն թարգմանության անցած ուղին, իսկ նեղ առումով այս երեքը մեկտեղված դարերի հեռավորությունից մեզ ներկայանում են իբրև հայերեն Աստվածաշնչի մեկ ամբողջական՝ **Սահակ-Մեսրոպյան ոսկեղենիկ թարգմանություն**, որն էլ հետագայում մեր գրիչների համար դարձել է ընդօրինակման նմուշ: Լավագույն ձեռագիր օրինակներն էլ հիմք են դարձել Աստվածաշնչի՝ Ոսկան Երևանցու, Մխիթար Սեբաստացու, Արսեն Բագրատունու, Հ. Զոհրապյանի տպագիր *Աստվածաշունչ* գրքերի ստեղծման համար:

1.2. Աստվածաշնչի կառուցվածքը (կանոնը) և գրքերի անվանումները

Եկեղեցու վավերացրած կանոնական գրքերը հետագայում կոչվել են նաև նախականոն. այդպիսիք են *Հին Կտակարանի* թվով 39 և *Նոր Կտակարանի* բոլոր 27 գրքերը: Նշենք, որ *Հին Կտակարանի* 39 գրքերը համապատասխանում են եբրայական կանոնին, որում ընդգրկված գրքերը հրեաները միավորել են առանձին գրքերի մեջ՝ կամենալով համապատասխանեցնել իրենց այբուբենի 22 տառերի թվին:

Հայոց կանոնը սկզբում կրել է ասորականի (թարգմանվել է անմիջապես եբրայերենից և ընդգրկել է հինկտակարանյան 39 գրքերը) ու հունական *Յոթանասնից*-ի ազդեցությունը, սակայն դարերի ընթացքում փոփոխվել է:

Հայ եկեղեցում առաջին պաշտոնական կանոնը սահմանվել է Պարտավի եկեղեցական ժողովում 768 թվականին Սիոն Ա Բավրնեցի հայրապետի նախաձեռնությամբ: Սակայն մեզ այդ որոշման մի պատահիկն է միայն հասել, իսկ դա մեզ թույլ չի տալիս ճշգրիտ պատկերացում կազմել միջնադարյան հայոց կանոնի մասին:

Ներկայիս հայոց կանոնը բաղկացած է 75 գրքից (*Հին Կտակարան*՝ 39-ը՝ նախականոն, 9-ը՝ երկրորդականոն և *Նոր Կտակարան*՝ 27): Նախականոն գրքերի (հինկտակարանյան 39 և նորկտակարանյան 27) հարցում համաձայնելով Քույր եկեղեցիների հետ՝ հայոց կանոնը տարբերվում է երկրորդականոն գրքերի խնդրում. հայոց երկրորդականոն 9 գրքերին (Ա եզրաս, Հուդիթ, Տոբիթ, Մակաբայեցիների Ա, Բ, Գ, Իմաստություն Սողոմոնի, Սիրաք, Բարուք, ինչպես նաև Դանիելի մարգարեությունը և Եսթերի գրքի որոշ հավելումներ) հունականը հավելում է մեկ գիրք ևս, որը պարականոն է հայ եկեղեցու համար:

*Հին Կտակարան*ում ներառված գրքերը տարբեր հրատարակություններում տարբեր հերթականությամբ են ներկայացվում⁸⁰:

Պետք է նկատի ունենալ, որ *Աստվածաշնչի* մեջ մտնող գրքերի խորագրերը ունեն որոշակի զանազանություններ գրաբար, արևելահայերեն, արևմտահայերեն տարբերակներում, ինչպես տրված է ստորև:

Հրեական հրատարակություններում⁸¹ *Հին Կտակարանի* գրքերը խմբավորված են երեք վերնագրերի տակ՝ **Օրենք (Թորա)**, **Մարգարեներ (Նեբիիմ)**, **Գրքեր (Քեթուբիմ)**:

Օրենք -ի տակ ներկայացվում է **Հնգամատյանը**:

Բողոքական հրատարակությունները⁸² դրանք ներկայացնում են հետևյալ կարգով՝

1. Հնգամատյան՝

Ծնունդք, Ելք, Ղեկավան, Թիւք, Երկրորդումն Օրինաց (Ա-1)

Գիրք Ծննդոց, Ելից, Ղեկացուց, Թուոց, Երկրորդ Օրինաց (Ա-2)

Գիրք Ծննդոց, Ելք, Ղեկավան, Թուեր, Երկրորդ Օրենք (Ա-3)

2. Պատմական գրքեր՝

Յեսու Նաւեայ, Դաւաւորք, Հռութ, Թագավորութեանց Ա, Բ, Գ, Դ,

Մնացորդաց Ա, Բ, Եզր, Նէեմի, Եսթեր (Ա-1)

Գիրք Յեսուայ, Դաւաւորաց, Հռութայ, Ա, Բ, Գ, Դ Թագավորութեանց,

⁸⁰ Տե՛ս **Գր. Դարբինյան**, *Ներածություն Հին Կտակարանի*, Եր., 2000:

⁸¹ Ըստ հրեական *Աստվածաշնչի՝ Հին Կտակարան*ում նշվում է 22 գիրք, քանի որ մի շարք գրքեր միացվել ու համարակալվել են միասին:

⁸² Տե՛ս **Ահ. Կայայան**, *Հին Կտակարանի ներածություն*, Եր., 2000, էջ 12-13:

Ա, Բ Մնացորդաց, Եզրասայ, Նէեմեայ, Եսթերայ (Ա-2)

Գիրք Յեսու, Դատարարներ, Հռութ, Թագաւորութիւններ Ա, Բ, Գ, Դ,

Ա, Բ Մնացորդաց, Ա Եզրաս, Բ Եզրաս, Նէեմի, Եսթեր (Ա-3)

3. Բանաստեղծական գրքեր՝

Յովբ, Գիրք Սաղմոսաց, Առակք Սողոմոնի, Ժողովոյ, Երգ երգոց (Ա-1)

Գիրք Յոբայ, Սաղմոսաց, Առակաց, Ժողովոյ, Երգ երգոց (Ա-2)

Գիրք Յոբ, Սաղմոս, Առակներ, Ժողովոյ, Երգ երգոց (Ա-3)

4. Մարգարեական գրքեր՝

Եսայի, Երեմիա, Ողբք Երեմեայ, Եզեկիէ, Դանիէ, Ովսէէ, Յովէլ, Ամովս, Արդիու, Յովնան, Միքէ, Նաւում, Ամբակում, Սոփոնիա, Անգէոս, Զաքարիա, Մաղաքիա (Ա-1)

Մարգարէութիւն Եսայեայ, Երեմիայ, Ողբք Երեմիեայ, Եզեկիելի, Դանիելի, Ովսեայ, Յովելեայ, Ամովսայ, Արդիու, Յովնանու, Միքիայ, Նաւումայ, Ամբակումայ, Սոփոնիայ, Անգեայ, Զաքարիայ, Մաղաքիայ (Ա-2)

Եսայի, Երեմիա, Ողբք Երեմեայ, Եզեկիէ, Դանիէ, Օսէէ, Յովէլ, Ամոս, Արդիու, Յովնան, Միքէ, Նաւում, Ամբակում, Սոփոնիա, Անգէ, Զաքարիա, Մաղաքիա (Ա-3)

Հռոմեական-կաթոլիկ հրատարակություններում հերթականությունը հիմնականում նույնն է՝ մասնակի փոփոխություններով. **Տո(վ)բիթի** և **Հուդիթի** գրքերը զետեղված են **Նեեմիի** գրքից, **Ա** և **Բ Մակաբայեցիները՝ Եսթերի** գրքից, **Սողոմոնի իմաստությունը** և **Սիրաքի** գիրքը՝ **Երգ երգոցից**, իսկ **Բարուքինը՝ Երեմիայի** ողբերից հետո:

Հունական հրատարակություններում գրքերը զետեղված են խիստ տարբեր հերթականությամբ, միայն **Հնգամատյանի** տեղն է անփոփոխ:

Գրաբար Աստվածաշունչը (Ա-1)⁸³ Հին Կտակարանի գրքերը ներկայացնում է հետևյալ կարգով՝

1. Հնգամատյան՝ Ծնունդը⁸⁴, Ելք, Ղեկավարան, Թիւք, Երկրորդումն օրինաց
2. Հեսու, Դատավորներ, Հռութ, Ա, Բ, Գ, Դ Թագավորություններ, Ա և Բ Մնացորդաց

⁸³ Աստվածաշունչ մատենան Հին եւ Նոր կտակարանաց. ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց հմմտ. եբրայական եւ յունական բնագրաց, Վիեննա, 1929, Հայաստանի աստվածաշնչական ընկերութիւն, 1997 (Ա-1):

⁸⁴ 5-րդ դարում տրվում էր թ'ե Ծնունդք, թե' Արարածք, 7-րդ դարում ըստ Անանիա Շիրակացու՝ Ծնունդք, 14-րդ դարում ըստ Գրիգոր Տաթևացու՝ Արարածք: Տե' ս Շ. արք. Աճէմեան, նշվ. աշխ., էջ 177-181:

ցորդաց, Եզրաս, Նենմի, Եսթեր:

3. Հոր, Սաղմոսներ, Առակներ, Ժողովող, Երգ երգոց:

4. Եսայի, Երեմիա, Երեմիայի ողբերը, Եզեկիել, Դանիել, Ովսեե, Հովել, Ամուս, Աբդիու, Հովնան, Միքիա, Նավում, Ամբակում, Սոփոնիա, Անգեսա, Զաքարիա, Մաղաքիա:

Ինչպես տեսնում ենք, մինչև այստեղ հերթականությունը նույնն է բողոքական հրատարակությունների հետ, որին հաջորդում են **Եզրասի, Հուդիթի, Տովբիթի, Ա, Բ, Գ Մակաբայեցիների, Սողոմոնի իմաստություն, Սիրաքի և Բարուքի** գրքերը:

Արևելահայերեն *Աստվածաշունչը* (Ա-3)⁸⁵ **Եսթերի և Հուդիթի, Տովբիթի, Ա և Բ Մակաբայեցիների** գրքերը զետեղել է **Նենմիի գրքից** հետո, **Սողոմոնի իմաստությունը և Սիրաքի** գիրքը՝ **Երգ երգոցից**, իսկ **Բարուքինը՝ Երեմիայի** մարգարեական գրքերից հետո (Ողբից առաջ), այսինքն՝ այս դեպքում հայերեն *Աստվածաշունչը* հետևել է հոմմեական-կաթոլիկ հրատարակություններին:

Արևմտահայերեն (Ա-2)⁸⁶ *Աստվածաշունչը* նույնանում է բողոքական հրատարակությունների հետ:

Նոր Կտակարանը բաղկացած է 27 գրքից՝ չորս բաժնից: Այդ բաժիններն են՝

Ավետարաններ՝

Մատթեոսի,

Մարկոսի,

Դուկասի,

Հովհաննեսի:

Գործք Առաքելոց, որի հեղինակն է Դուկաս ավետարանիչը:

Նամակներ, որտեղ ընդգրկված են առաքելական 21 թղթեր:

Հայտնություն:

⁸⁵ *Աստվածաշունչ գիրք Հին եւ Նոր կտակարանաց*. Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած, Կոստանդնուպոլիս, 1890 (Ա-2):

⁸⁶ *Աստվածաշունչ մատենան Հին եւ Նոր կտակարանների*. արեւելահայերէն նոր թարգմանութիւն, վերահրատարակութիւն, Ս. Էջմիածին, 1999 (Ա-3):

ԳԼՈՒԽ II
ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ
ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ

2.1. Համաբարբառներ

Քրիստոնյա բոլոր ժողովուրդները կազմել կամ փորձել են կազմել *Աստվածաշնչի* համաբարբառ-բառարաններ⁸⁷: Նախ կազմվել է չորս *Ավետարանների*, ապա *Նոր Կտակարանի*, այնուհետև միայն՝ ընդհանուր *Սուրբ Գրքի* համաբարբառը:

Համաշխարհային բառարանագրության մեջ *Աստվածաշնչի* առաջին համաբարբառը՝ կազմված բառարանային սկզբունքով, 500 վանականների աջակցությամբ հեղինակել է Կառո Հուգոնը (1206-1263թթ.) 13-րդ դարում: Հուգոնի իրականացրած *Աստվածաշնչի* գլխաբաժանումները 13-րդ դարից կիրառվում են նաև *Սուրբ Գրքի* հայերեն ձեռագրերում: Հետագայում կազմված օտարալեզու համաբարբառների մեջ լավագույնն է համարվում Ադեքսանդր Քրուդենայի անգլերեն լեզվով հրատարակած համաբարբառը, որը խիստ կարևորվում է Թ. Աստվածատրյանի կազմած *Համաբարբառի* ներածականում⁸⁸:

Մեր ուսումնասիրության մեջ բազմիցս ներկայացնում ենք նաև ռուսերեն համաբարբառի տվյալները՝ Симфония к синодальному изданию Библии⁸⁹, որը թարգմանություն է՝ Վալդեմար Յորնի ընդհանուր խմբագրությամբ:

Հայերեն առաջին համաբարբառներին հանդիպում ենք 17-րդ դարի ձեռագրերում:

⁸⁷ Բառարանների մի տեսակ են համարվում համաբարբառները, որոնք կոչվում են նաև հեղինակային բառարաններ: Ըստ Գ. Թոսունյանի՝ «Այդ տերմինը պատճենումն է ասորերեն *da-mēhallētē* բառաձևից, որն էլ իր հերթին ծագում է *hlt* արմատից, որ նշանակում է «խառնել, խառնվել, միախառնում, համախառնում»: Հայերենում *համաբարբառ* բառը նախապես գործածվել է ածականաբար՝ «*համաձայն, միաձայն, ներդաշնակ*»..., ավելի ուշ վերածվում է գոյականի՝ գործածվելով «*համաձայնություն, համընկնում, ներդաշնակություն, համադրություն, առադրություն*» իմաստներով: Այս բառարաններում ներկայացվում են որևէ գրքում գործածված բոլոր բառերը այբբենական դասավորությամբ, յուրաքանչյուր բառ՝ իր համապատասխան բնագրային գործածություններով՝ ըստ էջերի: Համաբարբառների մասին մանրամասն տե՛ս Գ. Թոսունյան, *Գրաբարի բառարանագրությունը*, ՀՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Եր., 2006, էջ 11:

⁸⁸ Տե՛ս *Համաբարբառ Հին և Նոր Կտակարանաց*, աշխ.՝ Թադէոս վարդապետի Աստուածատրեան, Յերուսաղէմ, 1895, էջ Դ:

⁸⁹ *Симфония к синодальному изданию Библии*, издание первое, пробное, Свет на Востоке, Корнталь, Институт перевода Библии, Стокгольм, 1995:

Աստվածաշնչի տպագիր հայերեն առաջին համաբարբառը կազմել և հրատարակել է 1666թ. Ոսկան Երևանցին Ամստերդամում՝ «*Աստվածաշունչ հնոց եւ նորոց կտակարանաց ներ պարունակող շարակարգութեամբ նախնեացն մերոց եւ ճշմարտասիրաց թարգմանչաց*»: Հիմնական համաբարբառը զետեղված է գրքի 774-829 էջերում և կոչվում է «*Ցանգ մարտնական ...*», որը թարգմանված է լատինական համաբարբառից՝ հատվածների և տների թվերը համաձայնեցնելով հայկականի հետ, պահպանելով համաբարբառին հատուկ բոլոր սկզբունքները: Աշխատության 765-773 էջերը զբաղեցնում է այբբենական կարգով դասավորված «*Եբրայեցոց, քաղդեացոց եւ յունաց անուանց թարգմանութիւն*» բառարանը, որը պարունակում է 800 գլխաբառ՝ անձնանուններ, տեղանուններ, նաև հասարակ անուններ: Հավելենք նաև, որ այս անվանացանկը նույնությամբ ներառված է Երեմիա Մեղրեցու բառարանի մեջ:

1753թ. տպագրվում է Բաղդասար Դպիրի կազմած *Նոր Կտակարանի* համաբարբառը:

1860թ. Վենետիկում Արսեն Բագրատունու կողմից հրատարակված *Աստվածաշնչի* հիման վրա Երուսաղեմի միաբանության անդամ **Թադևոս վարդապետ Աստվածատրյանը** (1831-1906թթ.) ձեռնարկում է ամբողջական համաբարբառ կազմելու գործը և 7 տարվա քրտնաջան աշխատանքով (1860-1867թթ.) գլուխ բերում մի հսկայական բառարան՝ «**Համաբարբառ հին և նոր կտակարանաց**» աշխատությունը, որը հրատարակվում է 1895թ. Երուսաղեմում: Համաբարբառի ներածության մեջ՝ «*Տեսութիւն ի վերայ Համաբարբառի Սուրբ Գրոց*», աստվածաբանության ուսուցիչ, քահանա Թորոս Տեր-Իսահակյան Ջուղայեցին գրում է համաբարբառի նշանակության և դերի մասին: Նա նշում է, որ Աստվածատրյանը իր գործը կազմել է՝ օգտվելով Հուգոնի և Ջոյունիայի համաբարբառների սկզբունքից, բայց չի կրկնել նրանց:

Թ. Աստվածատրյանը իր բառարանը կազմել է՝ խիստ հետևելով որոշակի սկզբունքների, որոնց անդրադարձել է Գ. Թոսունյանը իր «*Գրաբարի բառարանագրությունը*» աշխատության մեջ, ուստի մենք հարկ չենք համարում կրկնել դրանք, այլ առավել կարևորել ենք այն հարցերը, որոնք առնչվում են հատուկ անուններին:

Անշուշտ, բառարանը մնայուն արժեք է բոլոր ժամանակների համար: Սակայն

հատկապես հայերեն *Սուրբ Գրքի* տարբերակներում թարգմանված հատուկ անուններին անդրադառնալիս նկատում ենք մի կարևոր բացթողում:

Հատուկ անունները գրեթե ամբողջությամբ ներկայացված են համաբարբառում, բայց ոչ առանձին բաժնով, այլ ընդհանուր բառացանկում⁹⁰:

Կան հատուկ անվան վկայությունների բացթողումներ, կամ, ինչպես ճիշտ նկատում է Գ. Թոսունյանը, բերված համառոտումները այնքան էլ ճիշտ չեն կատարվել⁹¹: Բերենք մեկ օրինակ՝ *Աստվածաշնչի Համաբարբառի* (ԹԱՀԱ) տվյալներով **Հիսուս Քրիստոս** անվան գործածությունները 672-ն են, բայց իրականում դրանք *Նոր Կտակարանում* ավելի շատ են: Այսպես՝ համաբարբառում ներկայացված 101 անվան փոխարեն իրականում միայն *Մատթեոսի Ավետարանում Հիսուս Քրիստոս* անունը գործածված է 170 անգամ, *Մարկոսի Ավետարանում* ներկայացված 32-ի փոխարեն 93 անգամ, *Ղուկասի Ավետարանում*՝ 38-ի փոխարեն 94 անգամ և այլն:

Արդեն նշել ենք, որ Թ. Աստվածատրյանի *Համաբարբառի* հիմքը 1860թ. Վենետիկում Արսեն Բագրատունու կողմից հրատարակված *Աստվածաշունչն* է: Բոլոր գլխաբառերն այստեղ ներկայացված են մեծատառով, և նման դեպքում հաճախ չի տարանջատվում հատուկ անունը հասարակից. մինչդեռ հենց *Աստվածաշունչում* դա էական նշանակություն ունի. ասենք, **անդորրություն** բառը *Աստվածաշունչում* գործածված է մեկ անգամ, այն էլ՝ հատուկ անվան արժեքով՝ **Անդորրություն**. «Չուեաց անտի եւ փորեաց այլ ջրհոր, եւ ոչ մարտնչէին վասն այնր, եւ կոչեաց զանուն նորա **Անդորրություն**, ասէ. Չի այժմ ընդարձակեաց մեզ Տէր, եւ աճեցոյց զմեզ յերկրի»⁹² (Ա-1՝ Ծն. ԻԶ 22): Մինչդեռ այս հատուկ անունը համաբարբառում տրվում է հասարակ անվան արժեքով:

Ի դեպ նկատենք, որ Աստվածաշնչի հայերեն տարբեր թարգմանություններ տարբեր կերպ են թարգմանել ու ներկայացրել եբրայական տեղանունը՝ **Ռաբովթ** (ըստ ասորերենի՝ **Ռաարովթ** ܪܐܘܘܒܝܬ). Ա-2-ում թեև տրվում է եբրայական տարբերակը, բայց

⁹⁰ Համաժամանակյա տեսանկյունից սա արդեն թերություն է. ավելի ճիշտ կլիներ դրանք ներկայացնել առանձին բաժնով, ինչպես վարվել է հետագայում Վահան Սահակյանը իր համաբարբառը կազմելիս: Վերջինիս մասին կխոսվի ստորև, էջ 42:

⁹¹ Տե՛ս Գ. Թոսունյան, նշվ. աշխ., էջ 141-143:

⁹² Այդ անվան մասին մանրամասն տե՛ս *Հայրուկ անունների թարգմանական տարբերակները Աստվածաշունչ գրքերում* գլուխը:

լուսանցքում այն, կարծում ենք, միանգամայն ճիշտ թարգմանվում է **ընդարձակություն**։ Ա-3 արևելահայերեն տեքստը տալիս է գրաբարյան տարբերակը, և երկու դեպքում էլ՝ **Անդորրություն**, բառը տրված է մեծատառով⁹³։

Թ. Աստվածատրյանի ՀՄԲ-ն չի առանձնացնում որպես հատուկ անուն բաղադրյալ հատուկ անունները, ինչպես՝ **Աղի ձոր**, **Աղպից ձոր**, և նման հատուկ անունները տրվում են **ձոր** գլխաբառի տակ՝ իբրև հասարակ անուն **ձոր** բառի գործածությունների հետ՝ **Ձոր աղի**, **Ձոր աղպից**։

Նման օրինակները շատ են, և այս բոլոր բառերը ընթերցողը համաբարբառում գտնում է ընդամենը իբրև հասարակ անուն՝ համապատասխան նշանակությամբ, որն էլ ցույց է տալիս, որ այս դեպքում կատարվել է սոսկ բառի մեխանիկական արձանագրում։ Չէ՞ որ այս դեպքում խաթարվում է հենց բնագիրը, քանի որ թարգմանված այդ բառը պայմանական անվանում է՝ հատուկ անուն, և հայերեն **Աստվածաշունչ** գրքերն էլ իրավացիորեն այդ անունները ներկայացնում են մեծատառ գրությամբ։

Իր ժամանակի համար թերևս արդարացված, բայց դարձյալ արդի տեսանկյունից թերություն կարելի է համարել համանուն անձերի, համանուն հատկանունների ներկայացումը⁹⁴ միևնույն գլխաբառի տակ։ **Իսրայել** անունը սկզբնապես եղել է անձնանուն, որով կոչվել է **Հին Կտակարանի** հայտնի դեմքերից մեկը՝ Հակոբը (Ծն. ԼԲ 24-30)։ Հետագայում նրա անվամբ էլ կոչվեց երկիրը՝ **Իսրայել**։ Նման անունները պետք է տարբերակվեին մի դեպքում՝ որպես անձնանուն, մյուս դեպքում՝ տեղանուն։ Սա, անշուշտ, լուրջ բացթողում է համաբարբառի համար։

Թեև անվանի հայագետ Անտուան Մեյեն իր դժգոհությունն է հայտնել այդ համաբարբառի առիթով՝ «1895թ. Երուսաղեմում հրատարակուած Աստուածաշնչի Համաբարբառը բաւական արատաւոր է եւ թերի»⁹⁵, այսուհանդերձ, մենք կարծում ենք, որ այդ համաբարբառի գիտական և գործնական արժեքը դեռ պահպանվում է, և այն լայնորեն գործածվում է տարբեր մասնագետների կողմից։ Իզուր չէ, որ մեկ այլ

⁹³ Ասենք, որ, նույն կերպ է վարվել **Աստվածաշնչի** ընդամենը վերջերս հրատարակված **Համաբարբառը**՝ տալով այդ բառը որպես հասարակ անուն։ Տե՛ս **Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի**, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Ս. Էջմիածին, 2012։

⁹⁴ Համանուն հատկանունները՝ միևնույն հատուկ անվան թե՛ անձնանուն, թե՛ տեղանուն կիրառությունները, ներկայացված են աշխատանքի տարբեր գլուխներում։

⁹⁵ Տե՛ս **Գ. Թոսունյան**, նշվ. աշխ, էջ 145։

համաբարբառի հեղինակ Վ. Սահակյանը գրում է. «Աստուածատուրեանի գրաբար համաբարբառը հիմ եւ առաջնորդ եղաւ մեր աշխատասիրութեան»⁹⁶:

1963թ. Բեյրութում *Աստուածաշնչի* մի համաբարբառ է հրատարակում **Վահան Սահակյանը՝ «Համաբարբառ Աստուածաշունչ մատեանի Հին եւ Նոր Կտակարանաց արդի աշխարհաբարով»**, որտեղ հատուկ անուններն ընդհանրապես առանձնացված են և ներկայացված բառարանի վերջում⁹⁷: Սակայն ինքը՝ հեղինակը, իր բացատրականում նշում է, որ բոլոր հատուկ անունները չեն ընդգրկվել. «Անձերու կամ քաղաքներու անուանացանկերէն ոմանց մէջէն զանց առած ենք այն անունները, որոնք յիշատակութենէ ուրիշ շահեկանութիւն մը չեն ներկայացներ: Նոյնը ըրած են կարգ մը ուրիշ լեզուներով համաբարբառներ»⁹⁸: Թույլ տանք մեզ, սակայն, չհամաձայնելու հեղինակի հետ, քանի որ համեմատությունը ցույց տվեց, որ բավականաչափ անուններ իրոք տրված չեն բառարանում, և դրանք բնավ ոչ պատահական անուններ են՝ **Արդեէլ, Աբիգա, Աբիմեէլ, Ադդա, Ամարփաղայ, Ասուրիմ, Ափեր, Բարադ, Գաամ, Գեփար, Դեկլա, Զեմրան, Թարգադ, Թովբէլ, Թիրա, Ռեէմա, Սովիվե, Տարբէկ, Տորոս** և այլն: Անշուշտ երկրորդական անուն չէ **Ադդա**-ն, որը *Հին Կտակարանում* հանդես է գալիս որպես համանուն անձերի անուն. Ծն. Դ 19, 20, 23-ում **Ադդա**-ն Ղամեքի կինն է, իսկ Ծն. ԼՁ 2-ում **Ադդա**-ն Եսավի կնոջ անունն է, ուստի այդ անվան ներկայացումը բառարանում երևի թե պարտադիր էր, մինչդեռ այն ներկայացված չէ: *Աստուածաշնչի* յուրաքանչյուր հատուկ անուն կարևոր է, և անվան *շահեկանության* մասին խոսք չպետք է լինի: Ասենք, **Սարբէկ** անունը ընդհանրապես չկա Վ. Սահակյանի համաբարբառում: Բայց մի՞թե պակաս կարևոր է այս անունը: Գրիգոր Տաթևացիի գրում է. «*Խոյն Իսահակայ կախեցաւ զճառոյն Սարբէկայ, որ է երկճղի, որ արիւնակ էր ճշմարիտ խաչին Քրիստոսի*» (Գրիգոր Տաթևացի, Ոսկեփորիկ, 398), այսինքն՝ ծառի երկու ճյուղերը դիտողին հիշեցնում են խաչի թևեր, և ըստ այդմ էլ **Սարբէկն** ընկալվում է իբրև խաչի առաջին խորհրդանիշ:

Առանձնացված չեն համանուն անձերն ու տեղանունները. **Սարա**-ն

⁹⁶ Տե՛ս Վ. Սահակյան, *Համաբարբառ Աստուածաշունչ մատեանի Հին եւ Նոր Կտակարանաց արդի աշխարհաբարով*, Պէյրութ, տպարան Ատլաս, 1963, Պէյրութ, 1963, էջ Դ:

⁹⁷ Մեզ թվում է, որ այս ձևով հատուկ անունների առանձնացումը ճիշտ է և տրամաբանական. ընթերցողը իրեն հետաքրքրող անունը չի փնտրի ողջ համաբարբառում, այնպես որ այս հարցում Վ. Սահակյանի կազմած համաբարբառը մեկ քայլ առաջ է:

⁹⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 1113:

Աստվածաշնչում հանդիպում է 16 անգամ: Ըստ *Աստվածաշնչի*՝ այս անունը կրել են մի քանի անձ. **1. Ռեզմայի եղբայրը, 2. Ռեզմայի որդին**, որի սերունդը բնակվեց Պարսից ծոցի շրջանում, և **տարածքը** ևս սրա անունից կոչվեց **Սաբա**. «*Եւ որդիք Քուշայ Սաբա եւ Եփլա եւ Սաբաթա եւ Ռեզմա եւ Սաբակաթա. Եւ որդիք Ռեզմայ՝ Սաբա եւ Յուդադան*» (Ծն. Ժ 7-8), **3. Հոկտանայի որդին՝ Սեմի ազգից, 4. Հեկսանայի որդին՝ Աբրահամի թոռը (Քուշի որդու՝ Քամի թոռը)**: Սուրբ Գրքում հիշվում է **Սաբա քաղաք** համանուն կղզու վրա՝ Քուշի որդու անունից (Ծն. ԺԵ 8, ԵՍ. ԽԳ 3, Սղմ. ՀԲ 10), որը եղել է վաճառաշահ քաղաք: Մյուս **Սաբա** քաղաքը (**Շաբա**), նշվում է Արաբիայի հարավային մասում՝ Կարմիր ծովի ափին: Սա արդեն Հոկտանայի որդու անունից է՝ Սեմի ազգից (Ծն. Ժ 1, 10, 13, 28, Բ Մնց. Թ 1, 3, 9, 12): Այս երկրի՝ Սաբայի թագուհին էր, որ այցելեց Սողոմոն թագավորին (Գ Թգ. Ժ 6-9)՝ իր հետ բերելով ոսկի և թանկարժեք նվերներ: Սաբայի թագուհին եկել էր փորձելու Սողոմոնի իմաստությունը, և վերջինիցս ստացած տպավորությունները գերազանցում են թագուհու բոլոր սպասելիքները: Սաբան ներկայիս Եմենն է:

Վահան Սահակյանի կազմած *Համաբարբառում* Քուշի որդիներից՝ **Սաբա, Եփլա, Սաբաթա, Ռեզմա, Սաբակաթա**, դուրս է մնացել **Սաբակաթա**-ն, իսկ **Սաբա**-ի ներքո բերվում են թե՛ տեղանուն, թե՛ անձնանուն կիրառությունները (հիշեցնենք, որ այս նույն ձևով էր տրվում նաև Թ. Աստվածատրյանի *Համաբարբառում*), այն էլ՝ խիստ թերի: Այս նույն ձևով տրվում է **Ռագուէլ**-ը, նշվում է, որ կան այս անվամբ 4 անձեր, բերվում է ոչ առաջինը, իսկ առաջինը **Դադանի որդի Ռագուէլն** է (Ծն. ԻԵ 3), երկրորդը՝ **Եսավի որդին**՝ ծնված Բասեմաթից (Ծն. ԼԶ 4), երրորդը՝ **Ռագուէլ/Հոագուէլ**, Մովսեսի աները (Ել. Բ 18): **Դադանի** որդիներից տրվում է միայն **Լափուսիմը (Լափուսիմ ձևով)**, իսկ **Ասուրիմն ու Լովովմիմը** դուրս են մնացել:

2.2. Բառարաններ

Աստվածաշնչի հատուկ անունների ուսումնասիրման համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում բառարանները: Մեր քննությունը վերաբերում է *Սուրբ Գրքի* հատուկ անուններին, ուստի կարևորել ենք այն բառարանների ուսումնասիրությունը, որոնք վկայել են այդ անունները⁹⁹:

Աստվածաշնչյան հատուկ անունների ուսումնասիրման հիմք են դարձել **«Բառք եբրայեցոց»**, **«Մեկնութիւն անուանց եբրայեցոց»** ձեռագիր բառարանները, Երեմիա Մեղրեցուն վերագրվող **«Բառգիրք Հայոց»** բառարանը, Ոսկան Երևանցու հրատարակած առաջին տպագիր *Աստվածաշնչի Ոսկանյան անվանացանկը*, որը նույնությամբ կրկնվում է Մխիթար Սեբաստացու հրատարակած *Աստվածաշնչի հավելվածում*, **«Բառգիրք յայրուկ անուանց Աստուածաշունչ գրոց Հին և Նոր կրակարանաց»** բառարանը, ինչպես նաև 2001 թ. մեր հրատարակած **«Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան»**-ը¹⁰⁰:

«Բառք եբրայեցոց»-ը հայատառ առաջին եբրայերեն-հայերեն բառարանն է: Սովորաբար այն համարում են երկլեզվյան թարգմանական, քանի որ եբրայական անունները թարգմանված են հայերեն, սակայն, ըստ էության այդ բառարանը եբրայական հատուկ անունների բացատրական բառարան է՝ թարգմանված հայերեն:

Բառարանի ստեղծման ժամանակի և հեղինակի մասին մեր ձեռագիր հուշարձանները տեղեկություններ չեն տալիս, մանավանդ որ այն ոչ թե եբրայերենից, այլ հունարենից է թարգմանված՝ *«թարգմանեալ և մեկնեալ յեբրայեցոցն ի յոյն և ի յունէն ի հայ»*: Հր. Աճառյանը նշում է, որ այդ ձեռագրի մայր օրինակը Ժ-ԺԱ դարերից է¹⁰¹: Այս փոքրիկ բառարանը ընդգրկում է 900-1000 անուն: Արտագրությունների ժամանակ բառարանը ենթարկվել է փոփոխությունների:

Մեր ձեռքի տակ եղած այս փոքրիկ բառարանի երկու ձեռագրերի համեմա-

⁹⁹ Այս բառարանների ուսումնասիրման գործում զգալի ներդրում ունի **Հ. Ամայանը**, որը իր *«Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ»* եռհատորյակում որոշակիորեն ներկայացրել է և տվել այդ բառարանների տեսական քննությունը և կատարել հետևություններ ու եզրահանգումներ: Տե՛ս նշվ. հեղ. նշվ. աշխ. (5-15-րդ դարեր) Եր., 1966, (16-17-րդ դարեր), Եր., 1971:

¹⁰⁰ Ավելի ուշ հրատարակվեցին **Ֆ. Գրիգորյանի** *Աստվածաշնչի հանրագիտարան* գրքի երեք հատորները, Եր., 2013-2014:

¹⁰¹ Տե՛ս **Հր. Աճառյան**, *Աղվանից գիրը*, Տեղեկագիր, Եր, 1941, № 3-4 (8-9), էջ 5:

տությունը¹⁰² շատ հետաքրքիր փաստեր երևան հանեց. առաջինը՝ Մատենադարանի №4149 ձեռագիրը, 1304-1305թթ. Երզնկայի գրիչ Կարապետ երեցի ձեռագրի ընդօրինակությունն էր, որը կազմված է այբբենական կարգի սոսկ առաջին տառերի հերթականությամբ, ինչպես՝ **Ադամ, Աբել, Ադին, Արփաքսաթ, Ասուր, Աբրամ** և այլն:

Մինչդեռ երկրորդ ձեռագիրը (Մատենադարան, №7039), որ մեր ձեռքի տակ ունեինք, ԺԷ դարի Մելքիսեթ գրչի կազմած օրինակն էր, որտեղ արդեն բառացանկը վերադասավորված է հնարավորինս այբբենական կարգով՝ հաշվի առնելով ոչ միայն առաջին տառերի հերթականությունը: Բայց, այնուամենայնիվ, այս ձեռագիրը ևս չի պահպանում մերօրյա ընկալմամբ տառերի այբբենական կարգը:

Վերնագրում նշվում է, որ բառարանում ընդգրկված են այն հատուկ անունները, որոնք հանդիպում են «յԱրէնս և ի Մարգարէս և ի Նոր կտակարանս», սակայն ընդգրկված անունները թույլ են տալիս կարծելու, որ անունները վերցված են Հին Կտակարանի բոլոր գրքերից: Հատուկ անունների զգալի մասը վերցված է Ա, Բ Մնացորդաց գրքերից, որտեղ ներկայացված է Ադամի հետնորդների ողջ տոհմագրությունը:

Բառարանի գրեթե բոլոր բառերի վրա առկա է հունարենի կնիքը: Հայտնի է, որ հայերենն ու եբրայերենը ունեն մի շարք հնչյունական նույնություններ, որոնք հատուկ չեն հունարենին, բայց դրանք բառարանում հանդես չեն գալիս՝ լեզվական անմիջական կապի բացակայության պատճառով: Այսպես՝ եբրայերենն ու հայերենը ունեն **g, 2, η**¹⁰³, **h** տառերը, որոնք չկան հունարենում, բայց քանի որ հունարենը այդ **g** և **2** տառերը դարձնում է **u, η**-ն՝ **l** (**Դալիլա-Դաղիլայ, Ելիովն-Եղիոն, Էլիա-Էղիա, Թովլա-Թովղա, Նաբաղ-Նաբալ**¹⁰⁴) իսկ **h**-ն բաց է թողնում, ապա այդ ազդեցությունը նկատելի է նաև բառարանում, ինչպես՝ **Սաղեն, Երուսաղեն, Կաղես, Նեսար, Ովսաննա** և այլն:

Բառարանում հայերեն **ը, ժ, խ, ծ, ձ, ճ, շ, ջ, վ, ր, ց** սկզբնատառերով բառեր չկան:

¹⁰² Երևանի Մատենադարանի հնագույն գրչագրեր են № 4149, № 5596, № 2371, № 3937, Ձմմառի № 204, Փարիզի № 302 և բազում այլ ձեռագրեր, որոնք պարունակում են *Բառք Եբրայեցուցը*:

¹⁰³ Հին եբրայերենը չունի **η**, այլ՝ **խ**:

¹⁰⁴ Ինչպես տեսնում ենք, առաջին ձեռագիրը եբրայերենի **η** -ի դիմաց դնում է **l**, մինչդեռ երկրորդ ձեռագիրը

պահում է **η**-ն: Սա, իհարկե, բացարձակ չէ, և երբեմն հակառակն է նկատվում. երկրորդ ձեռագիրն է դնում **l η**-ի փոխարեն:

Արտագրությունների ընթացքում բառարան են ներմուծվել կամ հանվել անուններ, այնպես որ ձեռագրերում գլխաբառերի քանակը տարբեր է, այսպես՝ առաջին ձեռագրում չկան **Աբիսակ, Աբրա, Ազար, Ամբակում, Այենդովր, Արաբովթ, Բալայէնոն, Բաղայամ, Բամա, Բայասա, Բեթաբերայ, Բեթսան, Դեբովրա, Թաբովր, Ողիբամա, Սեմեք, Սենեբերիմ**, իսկ երկրորդ ձեռագրից դուրս են մնացել **Ենակ, Ենակիմ, Ենգադդա, Ենովք, Ենովս, Յոթոր, Յոպպէ, Յովաբէթ, Յովաթամ** և այլ անուններ:

Սա հաստատում է այն, որ երկրորդ ձեռագրի համար բնավ նախագաղափար օրինակ կամ ուղղակի բնօրինակ հիմք չէր կարող լինել № 4149 ձեռագիրը:

Երկու ձեռագրերի հեղինակները անպայմանորեն տարբեր բարբառների կրող են, և դա երևում է անունների հնչյունական պատկերից. առաջին ձեռագրում փոխանակ **Եսայի-Եսայիա** տրվում են **Էսայի-Էսայիա** ձևերը, **Բեդբաքե-Բեթբազե, Գոթոնիէլ-Գոդոնիել, Գաբայաթ-Գաբայադ, Եփուր-Եփուր, Մակդադինէ-Մագդադինէ, Նեբրովթ-Նեփրովթ** և այլն:

Շատ անուններ էլ աղճատվել են, անունների պատկերը փոխվել է (ինչ խոսք, նման դեպքերում մեզ համար չափանիշ ենք ընդունել *Աստվածաշնչի* բնագիրը և համաբարբառը), այսպես՝ **Ադովնիա-Ադինա, Ադրազար-Ադրայազար, Անամայել-Անամէլ, Անայէլ-Աննայէլլ, Բեթաբրա-Բեթաբերայ, Թամնա - Թարմնայ, Յեբուս-Յերբուս** զույգերում առաջին ձևերն են (առաջին ձեռագիր) ճիշտ ներկայացնում *Սուրբ Գրքի* անունները, **Գարրեզին-Գարիզին, Թէրակա-Թերայ, Կորբան-Կորբան, Կայինան-Կայնան** զույգերում երկրորդ ձևերն են (երկրորդ ձեռագիր) ճիշտ ներկայացնում աստվածանշյան բնագիրը: Հանդիպում են անուններ էլ, որոնք աղավաղվել են երկու ձեռագրերում էլ, այսպես՝ աստվածաշնչյան **Աբիրան** անունը առաջին ձեռագրում դարձել է **Աբիրամ**, երկրորդ ձեռագիրը լրիվ աղավաղել է անվան պատկերը՝ **Աքարիմ, Սամարիա**-ն գլխաբառ է դարձել **Ջսամարիա** ձևով, երկու գրիչներն էլ փոխանակ **Սաբեկ**-ի տալիս են հոլովված **Սաբեկա/յ/** ձևը:

Բառը սխալ է ընկալվել, գրեթե անճանաչելի է դարձել տարբեր պատճառներով. պատահական վրիպումների՝ **Գոմոր**-ը ներկայացվում է **Գոմար, Մակուա**-ն սխալմամբ դարձել է **Մասուա, Մնասով**-ը՝ **Նասով, Պոթուր-Պոթոր, Սոկքովթ-Սոկրովթ**,

ձեռագրերում հստակորեն չտարբերվող որոշ տառերի՝ *ա-ու, ա-փ, գ-դ, գ-դ, յ-ց, ս-ո* շփոթման՝ *Իեսփր-Իէսաոր* (ԲՀ-ն՝ *Իէսփր*), հնչյունների դրափոխության՝ *Փաղեկ-Փակեղ, Սաղմոնա-Սաղմոնա*, ամփոփման՝ *Փաղարիմ-Փաղրիմ*, հնչյունի անկման՝ *Եղովմ-Եղոմ, Եփրաթայ-Եփաթայ, Փանդունկ-Փանդուկ, Սովմնա/ս/-Սոմնաս, Քեղկիա-Քեղկա*, հնչյունի հավելման՝ *Մովաբ-Մովաբի, Մովսես-Մովսեսի, Յարեդ-Յարէդի* և մի քանի այլ պատճառներով:

Առաջին ձեռագիրը միշտ գրում է *աւ օ*-ի փոխարեն, ինչպես՝ *Աւգաստոս, Աւնան, Աստրիգի, Աւրա, Աւրի, Զաւրաբաբէլ, Կաւիեղ/լ/էթ, Ղաւղանք, Մաւղաքի, Պաւղոս*, սակայն տալիս է *Սողոս*, երկրորդ ձեռագիրը զամանալիորեն դնում է *Սաւղոս*:

Առաջին գրիչը թե՛ բառավերջում, թե՛ բառամիջում խուսափում է *յ*-ի գրությունից, մինչդեռ երկրորդ ձեռագիրը պարտադիր նախընտրում է *յ*-ի առկայությունը, ինչպես՝ *Ազարիա-Ազարիայ, Գաբաա-Գաբայա, Բաաղամ-Բայաղամ, Բաաղիմ-Բայաղիմ, Բաաղ-Բայաղ, Բաասա-Բայասա, Իէքաղիա-Իէքաղիայ, Կանդակա-Կանդակայ, Կղեմա-Կղեմայ, Մարթա-Մարթայ, Նասսովն-(Նասսոն) – փափանումն* (ԲՀ-ում՝ *Նայասոն*), *Ողա-Ողիայ, Ուռնա-Ուռնայ*: Սակայն գրիչները երբեմն շեղվում են իրենց իսկ սկզբունքից, ինչպես՝ *Զաքարիայ, Եղէիլայ, Զեղբ(փ)այ*:

Ամբողջ հարցն այն է, որ հակասություններն առկա են հենց նույն ձեռագրում. դրանք հետևյալն են՝

ա) կրկնվում են անունները, ինչպես՝ *Յովաբ* – երկուսում էլ՝ *եղբայր, Բաթուէլ – կոյս, Բաթուէլ – դուստր աստուծոյ (կամ կոյս), Յովնան* – *աղավնի կամ շնորհք, Յովնան – շնորհք*: Այս դեպքում վրիպումները հեշտ ընկալելի են, քանզի կրկնվում են նաև անունների բացատրությունները ամբողջովին կամ մասնակիորեն:

բ) Կրկնվում են անունները, սակայն իմաստների բացատրությունները տարբերվում են, ինչպես՝ *Բեզեկ – անգոսնումն սրտի, Բեզեկ – արեգակ, Յովակիմ – արարեալ, Յովակիմ – սկիզբն անկեալ դնի*¹⁰⁵, *Ովրա* – *ոչ է, Ովրա* – *տեսիլ յաւիտենից, Սաղաթիէլ – խաղաղութիւն աստուծոյ, Սաղաթիէլ – հայցումն աստուծոյ, Սաղեմ – շնորհ*

¹⁰⁵ ԲՀ-ն ևս առանձնացնում է երկու գլխաբառ՝ *Յովակիմ-սկիզբն*, կամ *անկեալ դնի*, կամ *տեսոն գորութիւն* և *Յովակիմ-տեսոն պատրաստութիւն*: Մեզ թվում է, որ նախնական «*սկիզբն անկեալ դնի*» արտահայտությունը ոչ թե *Յովակիմ* անվան բացատրությունն է, այլ սոսկ անվան գրելու ընդունված կարգը:

խաղաղութան, **Սաղեմ** – հատուցումն:

զ) Կա համաբարբառի կազմության պարզ նախադեպ, ինչպես՝ **Յեսու** – առնել հարթութիւն, **Յեսու** – որդի Նաւեայ:

Հատուկ անուններին տրվում են հակիրճ բացատրություններ՝ ստուգաբանություններ, օրինակ՝ **Ասիր** – խրատ, **Ասկաղոն** – կշռեալ, **Արիա** – առիծ, **Արիէլ** – ձայն աստուծոյ, **Երիքով** – լուսին, **Երուսաղէմ** – տաճար խաղաղութան, **Իսարիմ** – ողորմութիւն, **Իսաքար** – վարձ և այլն: Արդէն այս բառարանում բազմաթիվ անուններ ունեն մի քանի բացատրություններ, որոնք կամ իրար մոտ, հոմանիշ իմաստներ են, կամ իրար հետ բոլորովին չառնչվող բացատրություններ, ինչպես՝ **Արիմաթեմ** – բարձրութիւն կամ լերինք, **Բեթանի** – տուն փառաց, զինազանդութիւն կամ վկայութիւն, **Իսահակ** – ծաղր կամ խնդութիւն, **Իսմայէլ** – լուր աստուծոյ կամ հայեաց և տես զաստուած և այլն:

Եբրայերենն ունի մի առանձնահատկություն, որ հոլովի փոփոխությունը կարող է փոխել բառի իմաստը կամ տվյալ հոլովաձևը միևնույն անվան մի նշանակություն ունի, մեկ այլ հոլովաձևը՝ ուրիշ, կամ ածանցի արժեք ունեցող թեկուզ մեկ տառի հավելումը տալիս է նոր իմաստ, ինչպես՝ **Ամովն** – որդի ազգի, **Ամովս** – հաստութիւն կամ ժողովուրդ իմ, կամ աւգնութիւն, **Ասրիէս** – քահանա, **Ասրիս** – քահանայք, **Սեղեկ** – արդարութիւն, **Սեղեկիա** – արդարութիւն տեսան:

Անունները հիմնականում ճիշտ են ստուգաբանված. դա հաստատում է համեմատությունը հետագա նմանատիպ բառարանների հետ:

Մեծ չափերի են հասնում անունների իմաստների աղավաղումները:

Ստուգաբանվող եբրայերեն անուններից բացի բառարանում բերվում են հունական ծագում ունեցող մի շարք անուններ՝ **Պեդրոս, Պողոս, Մարկոս, Բարդուղիմեոս, Սրեփանոս, Թեոփիլէ:**

Ըստ նշանակության՝ ընդգրկված անունները կարելի է դասդասել անձնանունների՝ **Ադամ, Աբրամ, Դավիթ, Սեմ** և այլն, տեղանունների՝ **Բաբելոն, Եդեմ, Գաբալոն, Սիդոն, Սինա, Կարմեղոս** և այլն, մականունների, որոնց մեջ մտնում ենք ժողովուրդների, ցեղերի, աղանդների և մի քանի այլ անվանումներ՝ **ամուրիացիք, փարիսեցիք, ալելուիա:**

Բառարանում քիչ չեն հանդիպում անուններ, որոնք *Աստվածաշնչում* չկան. դրանք հավանաբար եբրայական կրոնական գրքերից եկող բառեր են, իսկ մի մասն էլ՝ *Սուրբ Գրքի* անունների հետագա աղավաղումներ, աղճատումներ:

«**Մեկնութիւն անուանց յեբրայեցոց լեզուէ ի հայ բարբառ»** (ՄԱԵ) բառարանը թվակիր չէ և գրված է տասնյոթերորդ դարում: Մատենադարանում բառարանը ընդգրկված է յոթ ձեռագիր գրքերում՝ N° 2261, N° 4283, N° 5184, N° 7012, N° 7035, N° 7039, N° 9449:

Ուսումնասիրման համար մենք ձեռքի տակ ունեինք երկու ձեռագիր՝ N° 2261, N° 7035 և *Ոսկանյան* անվանացանկը¹⁰⁶: Վերջինիս անվանումն է «*Եբրայեցոց, Քաղղեացոց և Յունաց անուանց թարգմանութիւնք*»: Զարմանալիորեն տարբեր են նաև վերը նշված երկու բառարանների վերնագրերը՝ «*Եբրայեցոց, քաղղեացոց և յունաց անուանցն մեկնութիւն*» (N° 7035) սա, ըստ թվագրման, ամենահինն է՝ N° 1690, և «*Մեկնութիւն անուանց յեբրայեցոց լեզուէ ի հայ բարբառ*»՝ N° 2261: Հակասությունը ավելի էր խորանում նրանով, որ ըստ «Յուցակ ձեռագրացի»¹⁰⁷ N° 2261 ձեռագիրը պարունակում է «*Բառք Եբրայեցոցը*», իսկ N° 7035 ձեռագիրը՝ «*Մեկնութիւն անուանց եբրայեցոց ի հայ լեզո*»-ն: Առաջին իսկ համեմատությունը ցույց տվեց, որ այդ բառարանները, անկախ տարբեր վերնագրերից, նույն բառարաններն են, թեև ունեն նաև ձեռագիր բառարաններին հատուկ տարբերություններ: Դրանք երկուսն էլ պարունակում են մի որոշակի ընդհանուր բառացանկ և տարբեր են այնքանով, որ գրվել են տարբեր գրիչների ձեռքով, ուստի տվյալ ձեռագրի հեղինակը հաճախ կամայական մոտեցում է ցուցաբերել և ավելացրել է անուններ, հանել որոշ բառեր: Այսպես՝ N° 2261 (N° 490) ձեռագիրը, որն ավելի ուշ է կազմվել, ավելի կանոնավոր այբբենական ցանկ ունի, տալիս է **Աբդոն, Աբեստա, Ահովր, Ապողոս, Անտիոք, Բալլայ, Բեթարարայ** և այլ անուններ, որ չկան N° 7035 (N° 485) ձեռագրում, մինչդեռ չի տալիս վերջինիս պարունակած **Աբիդ, Արտաշես, Բաղասամ** և այլ անուններ: Կան անունների գրության տարբերություններ՝ **Արփաքսաթ – Արբազսաթ**, հին ձեռագիրը

¹⁰⁶ Նկատի ունենք **Ոսկան Երևանցու** հրատարակած *Աստվածաշնչի* (1666) վերջում տրվող անվանացանկը:

¹⁰⁷ *Յուցակ ձեռագրաց*, Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին **Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան**, Եր., 1965, էջ 758:

տալիս է **Ճերանհմոս**, նորը՝ **Ջերոնհմոս**: Որքան էլ N° 2261 ձեռագիրը ընթեռնելի է ներկայացնում անունները, այսուհանդերձ զգացվում է, որ հին ձեռագրի գրիչը ավելի գրագետ է եղել, իր գործին քաջահմուտ, այսպես՝ այստեղ **Ագաբ-ը դարձել է Ագահ**, **Հայաստանը՝ Հայեաստա: Աբրամ** և **Աբրաամ** ձևերը, որոնք նշանակությամբ տարբեր անուններ են, ներկայացվել են նույն ձևով՝ **Աբրամ**, **Արտաշես** և **Արտաքսերքսես** գլխաբառերից մնացել է միայն երկրորդ՝ **Արտաշես** ձևը և այլն: Ուստի երկու ձեռագրերն էլ մենք ընդունում ենք իբրև միասնական քննական բնագիր, որը բառարանագրության մեջ հայտնի է «**Մեկնութիւն անուանց յեբրայեցոց լեզուէ ի հայ բարբառ**» վերնագրով:

Ըստ ամենահին ձեռագրի (N° 7035)՝ այն ընդօրինակված է 1690 թվականին: Անպայմանորեն սրա հեղինակը ծանոթ է եղել և ձեռքի տակ ունեցել է ԲԵ-ն: Եվ չնայած այն բանին, որ ԲԵ-ն պարունակում է շուրջ հազար բառ, իսկ սա՝ ընդամենը հինգ հարյուր, այսուամենայնիվ, այստեղ ներկայացվում են անուններ, որոնք չկան ԲԵ-ում, այսպես՝ **Աբբարիմ** – անցք կամ անցանոդք, **Աբդիմէլէք** – ծառայ արքայի, **Աբդոն** – ծառայ, **Աբինադաբ** – հայր կամաւոր, **Ագաբ** – մարախ, **Ագան** – նեղութիւն, **Ամամ** – մայր երկիրը նոցա, **Աման** – խոռվեցուցանօղ, **Ամանա** – հաւատ կամ ճշմարտութիւն, **Աթաղիա** – ժամանակ տեառն, **Ազդէովդ** – ձոր կամ ցամաք, **Ահովր** – գովասանօղ, **Աղէքսանդէր** – քաջ օգնական, **Աղէքսանդրիա** – եբր. խոշոր, **Ամէսիա** – ժողովրդեան պարգև, **Անտիոքա** – կառք, **Արարապ** – անէծ սասանման, դողութեան, **Արտաշես** – իշխան և գլուխ, **Արտաքսէրքսէս** – ճառագայթ կամ անէծս, **Աքայեաբ** – եղբայր տեառն, **Աքայիա** – վիշտ կամ նեղութիւն, **Բալլա** – նաժիշտ Ռաքելա, **Բալլա** – քաղաք ընկլուզօղ կամ աւերօղ, **Բէ/դ/թաւան** – տուն ունայնութեան, **Բեթ/դ/ագոն** – տուն ցորենոյ և այլն: Ինչպես նկատում ենք, այս փոքրիկ ցանկը ներկայացնում է միայն Ա և Բ տառերի ոչ ամբողջական պատկերը: Ասենք նաև, որ բացի այս տարբերությունից, որոշակի տարբերություն կա նաև անունների բացատրություններում, այսպես՝ ըստ ԲԵ-ի՝ **Աբդիու** – ծառայ խոստովանելի, ըստ ՄԱԵ-ի՝ **Աբդու/Աբդիու** – ծառայ տեառն, **Ադին** – փափկութիւն, ըստ ՄԱԵ-ի՝ **ուրախութիւն**, **Ամասի/Ամասիայ** – յազգէ հաւատարիմ, **Ամասիայ** – քաջ կամ զօրեղ, **Ամովս** – հաստութիւն կամ ժողովուրդ իմ, կամ աւգնութիւն, **Ամովս** – զօրեղ կամ քաջ կամ հայրն Եսայեայ, **Ամովս/մարգարէ/** –

ծանրացեալ, **Ամուրհացիք** – չեղեալ կամ ձաղեալ, **Ամուրհացիք** – դառն կամ ապստամբք, **Արփաքսաթ** – մարգարետութիւն տեսանելի, **Արփաքսադ** – բժշկօղ, **Բահադ** – պատրիշ, **Բահադ** – կուռք կամ տիրօղք և այլն:

«**Բառգիրք հայոց**»-ով¹⁰⁸ (ԲՀ) ավարտվում է հայ բառարանագրության միջնադարյան շրջանը¹⁰⁹: Որպես հին և հազվագյուտ բառերով հարուստ գրավոր հուշարձան՝ այն միշտ էլ հետաքրքրել է հայագետներին՝ Մխիթար Սեբաստացուն, Ղևոնդ Ալիշանին, Նորայր Բյուզանդացուն, Հր. Աճառյանին, Գ. Ղափանցյանին, Ա. Ղազիկյանին, Հ. Ամալյանին և ուրիշների¹¹⁰:

Հ. Ամալյանը «...պարզաբանել է անստույգ և չվկայված շուրջ 100 բառի ծագումը... Շատ օգտակար են նաև Հ. Ամալյանի՝ բառարանին կցած ավելի քան 2500 ծանոթագրությունները»¹¹¹:

Մեր համեմատությամբ՝ ըստ ԲԵ-ի՝ **Երեմիա** – համբարձումն կամ զբաղումն (համարձակութիւն) նշանակության կողքին ԲՀ-ն տալիս է համարձակութիւն կամ զբաղումն կամ բարձրութիւն տեսոն կամ զբաղասեր կամ ողջախոհասեր բազմաթիվ նշանակությունները, **Քեբրոն** – լծակցութիւն կանանց կամ ընդերք-ի կողքին ԲՀ-ն բերում է ընկեր, ընկերութիւն կամ բարեբանութիւն իմաստները, որոնք խիստ կասկածելի են: **Աբիսակ** – հաւր իմոյ աւետիք՝ ըստ ԲԵ-ի, ըստ ԲՀ-ի՝ հայր տղայութեան կամ հոր անգիտութիւն, **Բարէլ** – խոռվութիւն կամ խառնակութիւն, իսկ ԲՀ-ն՝ մասնաւոր կամ խառնակութիւն, **Եմաթ** – պարսպաւոր կամ բարկացումն/, պարսաւոր, ԲՀ-ն՝ անտիրք կամ սպասաւոր կամ բարկացումն: **Թեկողա** – համբերութիւն, ԲՀ-ն՝ **Թեկուղայ**՝ հոր բերութիւն, **Եփրոն**՝ հողմն, ԲՀ-ն՝ կամ անձրև, հող կամ մոխիր, **Իէտարաթա** – մեծամիտ, ԲՀ-ն՝ **Իէծարաթայ** – մեծամիտ, **Մազարովթ** – փակումն, ԲՀ-ն՝ նաև գիսաւոր կամ վարսաւոր աստղ է, որ ընդ ժամանակս ժամանակս երևի:

¹⁰⁸ Տե՛ս *Բառգիրք հայոց*, քնն. բն աշխ.՝ Հ. Ամալյանի, Եր., 1975:

¹⁰⁹ Այդ բառարանի զանազան խմբագրություններ էին առկա տասնյոթերորդ դարում: Այդ ընդարձակ օրինակներից մեկը խմբագրվում է Երեմիա Մեղրեցու կողմից և տպագրվում 1698 թվականին: 1728թ. Կոստանդնուպոլսում վերահրատարակվում է, բայց ավելի ծավալուն, որը, սակայն, վրիպակներով ու սխալներով շատ ավելի առատ է լինում:

¹¹⁰ Բառարանը նաև աղբյուր է դարձել **Գ. Զահուկյանի** «Ստուգաբանական բառարանի» համար:

¹¹¹ Քանի որ ԲՀ-ն մեզ է հասել բազում սխալներով և աղավաղումներով, ապա պետք է առանձնակի նշենք այն շնորհակալ աշխատանքը, որ կատարել է Հ. Ամալյանը՝ խմբագրելով և 1975թ. այն վերահրատարակելով: Խմբագրությունների շնորհիվ գլխաբառերի քանակը աճել է՝ 8130-ից հասնելով 8832-ի: Տե՛ս **Գ. Թոսունյան**, նշվ. աշխ., էջ 30:

Բառարանում ներկայացված են բազմաթիվ աստվածաշնչյան անուններ, աշխարհագրական տեղանուններ, տրված են դրանց բացատրություններն ու հոմանիշները:

ԲՀ-ի բառերի ստուգաբանությանն ու բացատրությանն է անդրադարձել Գ. Զահուկյանը իր երկու հոդվածներում՝ «Ստուգաբանական դիտողություններ միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ բառերի մասին»¹¹²:

Ոսկանյան անվանացանկի՝ 750 անվան դիմաց **ՄԱԵ**-ն ունի մոտ 500 անուն: Ըստ Հ. Ամայանի հաշվարկների՝ երկու բառարանների համար ընդհանուր 350 գլխաբառերի մեկնությունները էականորեն տարբերվում են միմյանցից: Ոսկանյան անվանացանկը ավելի մանրամասն է բացատրում անունների ստուգաբանությունները և հաճախ համաբարբառ բառարանի նման նշում տվյալ անվան աստվածաշնչյան գործածությունները: Այս անվանացանկը որոշակի փոփոխություններով, հավելումներով և առավել ամբողջական գտնում ենք 1733թ. Մխիթար Սեբաստացու կողմից հրատարակված *Աստվածաշնչում*:

«Բառարան յայտուկ անուանց Աստուածաշունչ գրոց Հին եւ Նոր կրակարանաց» (ԲՅԱ)¹¹³: Սեբաստացու երկերից մեզ համար առանձնակի կարևորություն են ներկայացնում նրա հայագիտական աշխատությունները, հատկապես բառարանները¹¹⁴: Նա կազմել է առաջին հայերեն ընդարձակ բացատրական, ստուգաբանական բառարանը, որի առաջին հատորը լույս է տեսել 1749թ., երկրորդը՝ քսան տարի հետո՝ 1769թ.: Սա առավել հայտնի է **«Հին հայկազեան բառարան»** անվամբ:

Բառարանի երկրորդ հատորը կազմված է տարբեր մասերից, որոնցից մեկը մեր կողմից առանձնակի կարևորվում է. բառարանի կազմում երկրորդ մասը վերնագրված է ա) **«Բառարան յայտուկ անուանց Աստուածաշունչ գրոց Հին եւ Նոր**

¹¹² Տե՛ս Գ. Զահուկյան, *Ստուգաբանական դիտողություններ միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ բառերի մասին*, Լրաբեր հասարակական գիտությունների, 1976, № 12, 1979, № 3:

¹¹³ Տասնութերորդ դարի սկզբներին (1717թ.) հիմնադրված Մխիթարյան միաբանությունը իր գործունեությամբ նոր էջ է բացում հայոց լեզվի, պատմության, գրականության ուսումնասիրման ասպարեզում: Միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացին գրել ու թարգմանել է կրոնական գործեր, ինչպես՝ «Մեկնութիւն Աւետարանին Մատթեոսի», «Մեկնութիւն Ժողովողի», «Մեկնութիւն հին և նոր կրակարանի» և այլ գործեր (16 աշխատություն): Տե՛ս Գ. Գասպարյան, *Հայ բառարանագրության պատմություն*, Եր., 1968, էջ 73:

¹¹⁴ **Մխիթար Սեբաստացի**, *Բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 1, 1749, հ. 2, 1769:

կրակարանաց...» (ԲՅԱ), որի հեղինակը համարվում է Զաքարիա Ալեքսանյանը¹¹⁵, բ) «Բառարան յարուկ անուանց, որք գրանին յայլ եւ այլ գիրս արտաքոյ Աստուածաշունչ գրոց». կազմողն է Իգնատիոս Խաչատրյանը:

Մեր աշխատանքի համար իբրև սկզբնաղբյուր բառարան է վերցվում միայն Ա մասը՝ **ԲՅԱ** համառոտագրմամբ:

Բառարանը ներառում է աստվածաշնչյան գրեթե բոլոր հատուկ անունները՝ շուրջ 5095:

Հատուկ անունների այս բառարանը կազմված է այբբենական կարգով: Գլխաբառից հետո տրված են քերականական նշումներ, բառի բացատրությունը՝ ստուգաբանությունը, որ լեզվից է ծագում և ապա գործածությունը՝ ըստ *Աստվածաշնչի*:

Ըստ ԲՅԱ-ի՝ մեկ իմաստով ստուգաբանված, մենիմաստ անունները չափազանց քիչ են՝ **Աբրիա** – *Տիրոջ ծառա*, **Ազայել** – *աստվածատես*, **Բեսելիել** – *Աստու հովանու տակ*, **Իսաքար** – *վարձք*, **Հեփիթայե** – *բացող*, **Հովսեփ** – *աճում*, **Հուդիթ** – *գովող* ևն: Անունների նշանակությունները, որպես կանոն, ներկայացված են մեկից ավելի, երբեմն՝ հոմանիշ իմաստներով: Այսպես՝ **Աբել** – *սուգ կամ կոծ*, **Եփրայ** – *պտղաբեր կամ բեղմնավոր*, **Ազակ** – *տանիք կամ առաստաղ*, **Աբայիա** – *ցավ կամ տրտմություն*: Այս անունների իմաստները, ինչպես տեսնում ենք, հոմանիշ նշանակություններ են: Բավական շատ դեպքերում դրանք ներկայացնում են միմյանց հակասող կամ կապ չունեցող նշանակություններ: Հեղինակը (կամ հեղինակները) դրանցից յուրաքանչյուրը ենթադրելի է համարում, այսպես՝ **Ադամ** – *հողեղեն, մարդ, երկրային*, նաև *շիկակարմիր կամ արյունային*, **Գոմոր** – *երկջուր կամ ապստամբ ժողովուրդ*, **Գողիաթ** – *աքորյալ կամ շեղակույտ*, **Դադան** – *ստինք, սեր, հորեղբայր, դատող, արարողություն, օրենք*, **Կափառնայում** – *ազարակ ապաշխարության կամ գյուղ մխիթարության*, նաև՝ *գեղեցիկ քաղաք*, **Սաբա** անունը արտահայտում է՝ *«արբեալ կամ շրջապատող կամ գերութիւն, կամ դարձումն և կամ ասորերէն՝ ծէր»* նշանակությունները:

¹¹⁵ Մենք հակված չենք կարծելու, թե ԲՅԱ-ի հեղինակը հաստատապես Զաքարիա Ալեքսանյանն է: Մխիթար Սեբաստացու կողմից հրատարակված *Աստվածաշունչը* (1733), ինչպես գիտենք, ուներ արդեն հատուկ անունների հավելված բառարան, որտեղ նույն սկզբունքներով, ինչպես ԲՅԱ-ում, ներկայացված են աստվածաշնչյան անունները, ուստի մենք կարծում ենք, որ ԲՅԱ-ի կազմման մեջ որոշակի դերը դարձյալ Սեբաստացունն է, որը չկարողացավ իր կենդանության ժամանակ հրատարակել այն: Ահա թե ինչու մենք մեր աշխատանքում հղում կատարելիս հաճախ նշում ենք նաև Աբբահոր անունը:

Պատմական տեսակետից հետաքրքրություն ներկայացնող այս բառարանը ժամանակակից տեսանկյունից լուրջ քննություն չի բռնում, քանզի այդ ստուգաբանությունների մի մասը ճիշտ չէ. ընթերցողը խճճվում է անունների ստուգաբանությունների լաբիրինթոսում: Բառարանում հատուկ անունների նշանակությունները բազմաթիվ են, միմյանց երբեմն խիստ հակասող:

Սակայն, ինչպես նշում է Էդ. Աղայանը, «...մեզ համար կարևորը այդ մի քանի բառերի ստուգաբանության ճշտությունը չէ, այլ հիմնական սկզբունքը, որով նա միանգամայն ճիշտ կերպով որոշում է լեզուների փոխազդեցության, իրարից բառեր փոխ առնելու երևույթը»¹¹⁶:

Հատուկ անունների ցանկը ընդարձակված է գլխաբառերի ոչ ճիշտ ներկայացման հաշվին. սեռական, հայցական հոլովածները հաճախ դարձել են առանձին գլխաբառ ուղղական հոլովածի առկայության պարագայում: Այսպես՝ **Աբդար** անունը տրվում է **Աբդարեայ, Աբդիա-ն՝ Աբդիմեայ, Աբեններ-ը՝Աբեներեայ, Աբեներ, Աբդա-ն՝ Աբդովայ, Աբեդ-ը՝ Աբեդդայ** և այլն: Հաճախ ինքը՝ հեղինակը նշում է այդ մասին. «Աբեներեայ, սորա անուանականն է Աբեներ, զնշանակութիւն տե՛ս ի ստորև»:

Աստվածաշնչում գործածված **Չարայեան**-ը բառարանում բերվում է որպես գլխաբառ և հղվում է **Չարայ** գլխաբառին, մինչդեռ *Սուրբ Գրքում* նույն ձևով գործածված որոշ ազգանուններ ընդհանրապես չկան բառացանկում, ինչպես՝ **Ահարոնեան, Կիսեան, Նավեան** և այլն¹¹⁷:

Միևնույն անվան տարընթերցումները տրվում են առանձին, ինչպես՝ թե՛ **Աբեսաղոմ** և թե՛ **Աբէսաղոմ, Աբիսաղոմ, թե՛ Աբեսսա** և թե՛ **Աբէսսա**:

Երբեմն ներկայացվում են անունների խիստ կասկածելի ձևեր, ինչպես՝ **Աբար** անձնանունը, ըստ ԲՅԱ-ի, վկայվում է *Ա Մնացորդաց* գրքի Ը 17-ում իբրև *Եղիաղի որդու* անուն: Թ. Աստվածատրյանի կազմած *Համաբարբառում* դարձյալ վկայված է **Աբար**-ը նույն գրքում, սակայն այս դեպքում արդեն ոչ թե *Եղիաղի*, այլ *Բարիագ/դ/այի որդի*: Մեր ուսումնասիրած Ա-1 գրքում **Աբար**-ը ներկայացվում է **Քարեր** (ռուս.՝ **Хевея**,

¹¹⁶ Էդ. Աղայան, *Հայ լեզվաբանության պատմություն*, հ. 1-ին, Եր., 1958, էջ 128:

¹¹⁷ Այս մասին մանրամասն տե՛ս *Աստվածաշունչը որպես հայերեն ազգանվանակերպ ձևերի սկզբնաղբյուր* գլխում:

գերմ.**Heber**) դարձյալ իբրև Եղիաղի որդի: Ինչպես տեսնում ենք, ռուսերեն և գերմաներեն թարգմանությունները ևս հաստատում են **Քարեր** տարբերակը, մինչդեռ արևելահայերենը՝ Ա-3-ը, հաստատում է ԲՅԱ-ի տարբերակը՝ **Աբար**:

Այսքան մանրամասնությամբ հանդերձ, թվում է, չպետք է լինեին բացթողումներ, մինչդեռ կան բազմաթիվ հատուկ անուններ, որոնք վկայված չեն սույն բառարանում՝ **Ազդում, Արդևէլ, Արդար, Աբեր, Բիրիմ, Ելիառան/Եղիառան, Նեսթա, Սագարիմ** և այլն:

Այսուհանդերձ, բառարանը անգնահատելի դեր ունի աստվածաշնչյան հատուկ անունների ուսումնասիրման առումով, քանզի ցայժմ մնում է միակ ամբողջական ստուգաբանական, հանրագիտական բառարանը:

Աստվածաշնչի համաբարբառ բառարաններից է «**Բառարան սուրբ գրոց հանդերձ պատկերօք, աշխարհացուցօք և տախտակօք**»-ը (ԲՍԳ), որն ունեցել է երկու հրատարակություն՝ 1879թ. և 1881թ.: 1992 թվականին այս բառարանը վերահրատարակվում է երրորդ անգամ: Կա կարծիք, ըստ որի՝ բառարանը կազմել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ **Նիկողայոս Ավգերյանը**¹¹⁸:

«*Բառարան Սուրբ Գրոցը*» երկայուն 635 էջանոց աշխատություն է, որը կազմված է բուն բառարանից (588 էջ), «*Ժամանակագրական ցանկ Սուրբ Գրոց*» (589-632 էջեր), «*Աղիսակ մարգարէից*» (633), և «*Ժամանակագրական աղիսակ նահապետաց*» (634 էջ) հատվածներից:

Այս աշխատությունը բացատրական-մեկնաբանական, երբեմն նաև ստուգաբանական է, ուր հիմնականում ներկայացվում են հատուկ անունները՝ թե՛ անձնանուն, թե՛ տեղանուն: Այսպես՝ **Աբիուդ** իբրև գլխաբառ բերվող անվանը նախ հաջորդում է ստուգաբանությունը՝ **Նա (Եհովա) է հայր**: Այնուհետև ըստ *Աստվածաշնչի*՝ բերվում են տվյալ անձի մասին տեղեկություններ բավականին մանրամասնորեն, ասել է թե՛ հիմնականում այն ունի տեղեկատվական արժեք:

Բառարանը զերծ չէ հակասություններից: Այսպես՝ **Սարա** անունը ըստ *Աստվածաշնչի*՝ կրել են մի քանի անձեր՝ 1. Ռեգմայի եղբայրը (կամ որդին), որի

¹¹⁸ Մենք որոշակի նմանություններ ենք նկատում ռուսերեն թարգմանված Библейский словарь-ի հետ. Библейский словарь, **Нюстрем Эрик**, перевод со шведского под редакцией И. С. Свенсона, Санкт-Петербург, 1995, որը կազմվել և առաջին անգամ հրատարակվել է 1868 թվականին Ստոկհոլմում:

սերունդը բնակվեց Պարսից ծոցի շրջանում, և տարածքը սրա անունից ևս կոչվեց **Սաբա**: Ըստ «*Քառարան Սուրբ Գրոց*»-ի՝ այս **Սաբան** մեկ ներկայանում է որպես Ռեգմայի որդի՝ էջ 473. «**Սաբա 1.** Որդի Ռեգմայի, Ծն. Ժ 7», մի այլ դեպքում՝ Քուշի որդի և եղբայր Ռեգմայի՝ էջ 579. «Քուշ 1. Երեց որդի Քամայ և հայր Նեբրովթայ, Սաբայ, Եիլայ, Սաբաթայ, Ռեգմայ...»(Ծն. Ժ 6-8)-ՓՄ) :

Մենք, թերևս, համամիտ ենք Գ. Թոսունյանի այն կարծիքին, որ ԲՍԳ -ի և ԲՅԱ-ի համեմատությունը որոշակիորեն ցուցադրում է թե՛ նմանություններ, թե՛ տարբերություններ: «*Քառարան Սուրբ Գրոց*»-ը գրեթե նույնությամբ կրկնում է ԲՅԱ-ի՝ հատուկ անուններին տրված ստուգաբանություններից միայն մեկը, սակայն ԲՍԳ-ն ունի մի որոշակի առավելություն ԲՅԱ-ի հանդեպ. դա այն է, որ համանուն հատկանունները առանձնացված են:

Փ. Մեյրիխանյան, Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան (ըստ V-XX դարերի հայ բանաստեղծության)¹¹⁹: Ժամանակագրական առումով այս բառարանը վերջիններից է, և մենք աշխատել ենք ի մի բերել, մեկտեղել անունների վերաբերյալ առկա տարբեր կարծիքները, լրացնել հատկանվանաբանության այն բաժինը, որը բառարանագրությունն է:

Սույն բառարանը կազմելիս մենք օգտվել ենք թե՛ վերը հիշատակված, թե՛ նմանատիպ այլ (հայ և այլալեզու) բառարաններից, համեմատել միևնույն անվանը վերաբերող ամենատարբեր տեսակետներ և ներկայացրել դրանք մեր բառարանում: Բայց մեր բառարանը որևէ արժեք չէր ունենա, եթե մենք բավարարվեինք սոսկ եղած (որքան էլ հարուստ) նյութի վերաշարադրմամբ: Ուստի մենք առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով՝

ա) ընթերցողին, ուսումնասիրողին ամբողջական պատկերացում տալ չափաժողում գործածված աստվածաշնչային հատուկ անվան մասին: Ու թեև մեր բառարանը ներկայացնում է միայն հայ չափաժողում գործածված հատուկ անունները, բայց այդ նյութը այնքան հսկայական է ու ընդգրկուն, որ կարող է օգտակար լինել նույնիսկ այլալեզու ընթերցողի համար:

բ) Հր. Աճառյանը իր առջև խնդիր է դրել ներկայացնել այն անձնանունները,

¹¹⁹ **Փ. Մեյրիխանյան, Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան** (ըստ V-XX դարերի հայ բանաստեղծության), Երևանի համալսարանի հրտ., Եր., 2001, 532 էջ:

որոնցից որևէ մեկը մինչև 16-րդ դարը կրել է թեկուզ մեկ հայ անձ: Մենք այս ցանկին ավելացրել ենք այն անունները, որոնք գործածված են բանաստեղծական լեզվում, բայց ներկայացված չեն (սկզբունքորեն չէին էլ կարող) ՀԱԲ-ում: Դրանք բառացանկում առանձնացված են հատուկ նշանով (*), ինչպես՝ **Ամինադար, Անգեաս, Ասիդ, Բաղասմ, Բաղակ, Կայիափա** և այլն:

Բացի դրանից, մենք բառարանում ընդգրկել ենք բոլոր այն տեղանունները, որոնք կիրառված են հայ բանաստեղծության մեջ, և որոնք ունեցել ենք մեր քարտարանում:

Բառարանի ստեղծման համար հիմք են ծառայել *Աստվածաշնչում* տեղ գտած բոլոր այն անունները, որոնք գոնե մեկ անգամ գործածվել են հայ բանաստեղծության մեջ: Բառարանի մեջ են ընդգրկվել նաև այն անունները, որոնցով կոչվել են հայ սրբերը:

Յուրաքանչյուր գլխաբառ ներկայացված է հինգ բաժիններով.

1. **Լեզվական-ստուգաբանական:** Այս բաժնում յուրաքանչյուր անուն ներկայացվում է գլխատառերով: Գլխատառերով են տրվում նաև փակագծերում բերված տվյալ անվան տարբերակները կամ տարրնթերցումները: Անվան տարբերակները ներկայացված են առանձին գլխաբառերով, բայց անպայմանորեն հղված են նորմավորված ձևին: Անունների ստուգաբանությունը տրված է հիմնականում ըստ «*Բառարան յայտուկ անուանց Աստուածաշունչ գրոց Հին և Նոր կտակարանաց*»-ի (ԲՅԱ):

Հր. Աճառյանը «*Հայոց անձնանունների բառարանում*» ԲՅԱ-ի համեմատությամբ այդ իմաստներից հավանական է համարել և տվել է մեկը՝ անպայման նշելով աղբյուրը: Եթե տվել է այլ նշանակություններ, ապա անպայմանորեն նշել է նաև դրանց աղբյուրը: Այսպես՝ **Եսթեր** – *աստղ* (ըստ հրեա մեկնիչների, որոնք բառը բացատրել են պարսկական արմատով), **Ջաբարիա** – *տիրոջ հիշատակ*, **Բաղասար** – *Բելի իշխան* նշանակության կողքին բերում է նաև մեկ այլ նշանակություն՝ «*պահեա զկեանս արքայի*»՝ ըստ Gesenius-ի¹²⁰: Ուստի բնական է, որ մեր բառարանում անունների նշանակությունները տրված են նաև ըստ Հր. Աճառյանի անձնանունների բառարանի:

¹²⁰ Gesenius – Hebräisches und aramäisches Handwörterbuch, Leipzig, 1921, տե՛ս **Հր. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Ա, էջ XV:

Բառարանում տեղ գտած այն անձնանունների համար, որոնք բացակայում են Հր. Աճառյանի անձնանունների բառարանում, ստուգաբանությունները տրվում են՝ ըստ ԲՅԱ-ի, ըստ «*Բառարան Սուրբ գրոց*»-ի (ԲՍԳ), երբեմն նաև՝ ըստ օտար աղբյուրների (ԱԱ)¹²¹: Եթե տվյալ անունը ունի մեկ իմաստ, և այդ իմաստը նույնությամբ է նշվում թե՛ ԲՅԱ-ում, թե՛ Աճառյանի բառարանում, մենք այն տալիս ենք առանց հղման:

Անունների մասին ընթերցողին ավելի տեսանելի նյութ մատուցելու համար մենք հիմնականում բերում ենք աստվածաշնչյան բնագիրը, որտեղից պարզ է դառնում և հիմնավորվում է անվան իմաստը. այսպես՝ **Բենիամին** անունը ունի երկու իմաստ՝ *հս աջ որդի* և *վշտի որդի*. Երկու իմաստն էլ բխում են աստվածաշնչյան բնագրից:

Հաճախ անունների բառացի նշանակությանը բանաստեղծները կամա-ակամա անդրադառնում են՝ դրանով հաստատելով աստվածաշնչյան բնագրին իրենց քաջատեղյակ լինելը: Նման դեպքերում մենք բանաստեղծական բնագիրը տալիս ենք ստուգաբանության բաժնում. **Ադամ** անունը նշանակում է *հող, կավ, գետիկ* ևն. Գրիգոր Նարեկացին «*Մարյան ողբերգության*» պոեմում գրում է. «*Դու՛ ստեղծիչ, եւ ես՛ կաւ*» (ՄՈ, Բան Բ-Բ, 251):

Հայ սրբերի անունների քննության ժամանակ որոշակի ներկայացրել ենք Մ. Ավգերյանի դիտարկումները՝ ըստ նրա «*Լիակատար վարք եւ վկայաբանութիւն*» գրքի¹²²:

2. **Պատմաաշխարհագրական:** Այս բաժնում մենք ներկայացրել ենք տվյալ անձի կամ տեղանվան մասին հանրագիտարանային տվյալներ: Հիմնականում հարազատ ենք մնացել *Աստվածաշնչին*: Այն յուրաքանչյուր ընթերցողի տալիս է պատմաաշխարհագրական բնույթի բավականին ընդարձակ գիտելիքներ: Չմոռանանք, որ մինչև 19-20-րդ դարերի հնագիտական հայտնագործությունները, Հին Արևելքի մասին մեր պատկերացումները խարսխվում էին հիմնականում *Աստվածաշնչի* վրա: Ասորեստանի, Բաբելոնի, Հին Եգիպտոսի, Ասորիքի ու Պաղեստինի պատմությունը հայ ընթերցողին ներկայացվում էր *Աստվածաշնչով*: Ոչ պակաս կարևոր են այն փաստերը, որոնք վերաբերում են հայ ժողովրդին, Արարատյան երկրին,

¹²¹ Տե՛ս *Աստվածաշնչի անձինք*, ուղեցույց, **Ռոբերտ Բեքիանու**, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, 1999:

¹²² **Աւգերեան Մ.**, *Լիակատար վարք եւ վկայաբանութիւն...*, 12 հատորով, Վէնետիկ, 1812:

Թորգոմի տանը, Ասքանազյան ազգին¹²³: Կարևորել ենք հատկապես այն դեպքերը, որոնք բանաստեղծների կողմից էլ են ուշադրության արժանացել, որպեսզի ընթերցողի համար պարզ լինի տվյալ ածանվան կամ տեղանվան գործածությունը տվյալ տեքստում:

Հայ բանաստեղծության մեջ հանդիպում ենք միևնույն անունը կրող տարբեր անձերի: Առաջին հայացքից այնքան էլ հեշտ չէ բանաստեղծական տեքստում ճանաչել աստվածաշնչյան տվյալ անձին, մինչդեռ կրոնական գործիչ՝ կաթողիկոս, եպիսկոպոս, հոգևոր հայր, ներկայացող բանաստեղծների համար *Աստվածաշնչի* յուրաքանչյուր անձ և տեղանուն քաջ հայտնի են, յուրացված: Ահա թե ինչու նրանք անբռնազբոս գործածում են այդ անունները, մինչդեռ մերօրյա ընթերցողը հաճախ խճճվում է այդ անունների մեջ: Ուստի մենք տվյալ անունը ներկայացրել ենք մի գլխաբառի տակ՝ որպես համանուն հատուկ անուն կամ հատկանուն և համարակալմամբ առանձնացրել անձերին՝ իրենց բնութագրող գեղարվեստական բնագրերով:

Կարևորել ենք այն, որ ընթերցողին ուսանելի կլինի իմանալ, թե ժամանակակից լեզվում գործածվող, մեզ քաջածանոթ անունները *Աստվածաշնչում* ի՞նչ տարբերակներով՝ տարընթերցումներով են հանդես եկել, ի՞նչ այլ անվանումներ են ունեցել, և թե հայ բանաստեղծները անվան աստվածաշնչյան տարբերակը ի՞նչ ձևերով են գործածել: Իսկ դրանք խիստ տարբեր են՝ կապված տվյալ բանաստեղծի՝ Ե՛րբ և ո՛ր տարածքում ծնված լինելու հանգամանքի հետ: Այսպես՝ ***Երուսաղեմ*** անունը բանաստեղծություններում գործածվում է ոչ միայն նշված ձևով, այլև ***Սաղեմ***, ***Սաղիմ***, ***Սալիմ***, ***Քաբելոն*** անունը՝ ***Քաբել***, ***Քաբելովն***, ***Քաբիլոն***, ***Քաբիլովն***, ***Քաբիղոն***, ***Պապիլոն*** տարբերակներով:

Եվս մի կարևոր իրողություն, որ շատ բնութագրական է *Աստվածաշնչի* համար. միևնույն անունով հայտնի են և՛ անձ, և՛ երկիր: Այս դեպքում սովորաբար անձնանուններից առաջանում են տեղանունները. ***Հուդա***՝ Հակոբի որդու անունից՝ ***Հուդայի երկիր***, ***Իսրայել***՝ Հակոբ նահապետի անունից՝ ***Իսրայելի երկիր*** և այլն: Հայ բանաստեղծության մեջ գտնում ենք միևնույն անվան՝ և՛ տեղանուն, և՛ անձնանուն բազմաթիվ կիրառություններ, որոնք ներկայացված են առանձին գլխաբառերով՝

¹²³ Այդ մասին մանրամասն տե՛ս Վ. Ինգլիզյան, *Հայաստանը Սուրբ գրքի մէջ*, Վիեննա, 1947:

համարակալմամբ:

3. Ոճական-իմաստային: Այս բաժինը մենք խիստ կարևորում ենք հենց մեր բառարանի ստեղծման տեսանկյունից: Հայ բանաստեղծության մեջ սփռված են հազարավոր անուններ: Ի՞նչ իմաստներ են դրանք արտահայտում: Բնական է, որ նախ և առաջ ուղղակի իմաստով գործածված են ` մատնանշելով աստվածաշնչյան անձր կամ տեղանունը: *Աղամ, Եվա, Աբել, Կայեն, Հուդա, Մարիամ, Հիսուս* անձնանունները, *Ավետյաց երկիր, Երուսաղեմ, Եդեմ, Սիոն* տեղանունները և այլ բազմաթիվ անուններ բանաստեղծություններում ամենից առաջ գործածվել են ուղղակի նշանակությամբ: Բայց անգամ ուղղակի նշանակությամբ կիրառվելիս նրանք խիստ ոճական արտահայտություն ունեն. դարձել են կոչականներ, ոճական հոգնակիներ: Սակայն կարևորն այն է, որ անունների մեծ մասը ձեռք է բերել փոխաբերական իմաստ` դարձել փոխանուն, շրջասություն, դարձել համեմատության հիմք: Ահա թե ինչու այս բաժնում յուրաքանչյուր անվան գործածության իմաստները առանձնացվել են:

4. Բնագիր գրականությունը: Իստիվ պահպանելով ժամանակագրությունը` այս բաժնում բերված են հայ բանաստեղծության մեջ գործածված տվյալ անվան բնագրային օրինակները: Եթե տվյալ անունը հայ բանաստեղծության մեջ ունի եզակի գործածություն, ապա այն անպայման ներկայացվում է և, բնական է, ոչ համարակալմամբ: Եթե տվյալ անունը ունի բազմակի գործածություն, օրինակը կամ օրինակները բերվում են ընտրողաբար: Բերվում են այն օրինակները, որոնք ունեն ընդգծված ոճական արժեք: Այսպես` *Աղամ* անունը հայ բանաստեղծներից ամենից շատ գործածում է Առաքել Սյունեցին: Միայն «*Աղամգիրք*» պոեմում այս անունը հանդիպում է 120 անգամ: Բնական է, որ բոլոր օրինակները մեջբերել հնարավոր չէ և նպատակահարմար էլ չէ: Ուստի նշելով գործածության որոշ էջեր` տալիս ենք մի քանի նմուշ: Նույն անունը նա գործածել է նաև «*Քերթվածներում*», ուստի բերել ենք նաև օրինակ այդտեղից: Իսկ եթե տվյալ անունը գործածել են տարբեր բանաստեղծներ, ապա մենք նշում ենք բոլոր հեղինակներին, աղբյուրը, էջը, իսկ բնագրային օրինակը շատ քիչ դեպքերում չենք տալիս, եթե տվյալ համատեքստում այդ անունը առանձնապես ոճական արժեք չի դրսևորել:

Եթե օրինակները տվյալ հեղինակի երկում մեկը կամ մի քանիսն են, մենք այն

տալիս ենք՝ բոլոր էջերը նշելով: Իսկ եթե օրինակները բազմակի են, ապա նշվում են ոչ բոլոր էջերը: Եվ սա միանգամայն տրամաբանական է. կարևորն այն է, որ տվյալ անունը գործածել է տվյալ հեղինակը և գործածել է անվան ա՛յդ տարբերակով: Եթե տվյալ հեղինակի երկում հանդիպում է միևնույն անվան երկու տարբերակ, մենք երկուսն էլ վկայում ենք:

Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի անվանացանկը ներկայացրել ենք՝ նկատի ունենալով մի քանի հրատարակություններ՝

Գրիգոր Նարեկացի, *Մատենան ողբերգութեան*, Պուլենոս Այրէս, 1948 (սրահիման վրա էլ կազմվել է Նարեկացու համաբարբառը):

Գրիգոր Նարեկացի, *Մատենան Ողբերգութեան*, աշխ.՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Եր., 1985:

Գրիգոր Նարեկացի, *Մատյան Ողբերգության*, աշխ. և թրգմ.՝ Մ. Խերանյանի, Եր., 1960:

Գրիգոր Նարեկացի, *Մատյան Ողբերգության*, աշխ. և թրգմ.՝ Վազգեն Գևորգյանի, Եր., 1979:

Սրա պատճառն այն է, որ տարբեր հրատարակություններում երբեմն անունները չեն համընկնում՝ նայած այն բանին, թե ո՛ր ձեռագրերն են հիմք հանդիսացել տվյալ հրատարակության համար:

Հաճախ որևիցե անվան գործածության բնագիրը ներկայացնելիս այն բերում ենք ընդարձակ, ուր առկա են այլ անուններ ևս. դա արվում է ոչ պատահականորեն: Այդ ձևով նախ՝ ավելի ընկալելի է դառնում տեքստի բովանդակությունը, ապա պարզ նկատվում է անունների ոճական կիրառությունը:

5. Դարձվածային, բառակազմական: Սա վերջին բաժինն է, որտեղ ներկայացրել ենք տվյալ անվամբ կազմված դարձվածները: Այս դեպքում, ինչ խոսք, պարտադիր չենք համարել դրանց գործածությունը բանաստեղծության մեջ: Նույն ձևով՝ բաղադրությունները: Մենք տալիս ենք տվյալ անվամբ բաղադրված բոլոր բառերը՝ հաշվի չառնելով նրանց հնացած լինելը: Խնդիրն այն է, որ հնացած նշանակությամբ բառի իմացությունը կարող է նրա հետագա գործածության հիմք հանդիսանալ: Հատուկ անուններով կազմված բաղադրյալ բառերը մենք ներկայացնում

ենք ինչպես բանաստեղծների կազմած և մեր կողմից քարտագրված (այդ դեպքում նրանք պարտադիր բնագրային օրինակներով են), այնպես էլ՝ ըստ բառարաններում ամփոփված նյութի (Մխիթար Սեբաստացի, Ստ. Մալխասյանց, Էդ. Աղայան և ուրիշներ):

Մեր այս ուսումնասիրության մեջ գեղարվեստական գրեթե բոլոր բնագրային օրինակները տրվում են ըստ այս բառարանի:

ԳԼՈՒԽ III

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ (ՆԱԵՎ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԻ) ՈՒ ԴՐԱՆՅ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

3.1. Հին Կտակարանն իբրև հայրուկ անունների սկզբնաղբյուր

Ծննդոց գիրքը հավաստում է, որ անունները դրվեցին նախապես Աստծու կամքով. «Եւ կոչեաց Աստուած զլոյսն **Տի** (հուն.՝ τὸ Φῶς, ասոր.՝ ܠܘܘܐ **Խմամա**, որ է՝ *ցերեկ*), եւ զխաւարն կոչեաց **Գիշեր** (հուն.՝ καὶ τὸ Σκότος, ասոր.՝ ܠܐܠܠܝܝܘܐ, որ է՝ *գիշեր*)...» (Ծն. Ա 5): Հետո նա անվանեց **երկինքն** (հուն.՝ Οὐρανόν, ասոր.՝ ܫܡܝܝܘܬ, *Շմայա*,) ու **երկիրը** (հուն.՝ Γῆς, ասոր.՝ ܐܪܥܐ *Առա*), ջրային տարածքը **Տով** (հուն.՝ Θάλασσα, ասոր.՝ ܚܘܘܠܐ *Յամմե*) կոչեց: Ուրեմն՝ անվանադրության իրավունքը, ըստ սուրբգրային վկայության, Աստծու շնորհն էր:

Աստվածաշնչում առաջին անվանված մարդը Ադամն է (հուն.՝ Ἀδάμ, ասոր.՝ ܐܕܡ), որի անվան նշանակությունը խիստ յուրահատուկ է և, կարծում ենք, ոչ պատահական:

Ադամ անունը մերօրյա ընկալմամբ և գրեթե բոլոր բառարաններում *մարդ* - ն է նախ և առաջ, և ապա տրվում են այլ մեկնություններ՝ *երկրավոր, հողեղեն, շեկ, շիկակարմիր* (ոուսերենում միայն՝ *красная земля*, ЭБ, 21), *արյունային*. բուն սուրբգրային տեքստում, ըստ *Հին Կտակարանի*, անվան նշանակությունը կամ *գեղնի հողն* է, կամ *հողի փոշին*: *Ծննդոցում* նախապես տրվում է *Ադամ* անվան բառացի նշանակությունը. «Եւ սրբեղծ Տէր Աստուած զմարդն **հող յերկրէ**. եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղել մարդն հոգի կենդանի (Ա-1՝ Ծն. Բ 7) (հուն.՝ χοῦν ἀπὸ τῆς γῆς, ասոր.՝ ܚܘܘܢ ܐܦܘܕ ܬܝܘܫܐ *ափրա մըն ադամթա*¹²⁴), ապա միայն տրվում է **Ադամ** անունը (Ծն. Բ 16):

Կարևոր ենք այն հանգամանքը, որ *Ադամ* անունը *հող* կամ *կավ* նշանակությամբ համընկնում է աստվածաշնչյան անձի էությանը, նրա ստեղծման աստվածաշնչյան մեկնությանը¹²⁵: *Աստվածաշնչի* յուրաքանչյուր բառի խորհրդին քաջատեղյակ Գրիգոր

¹²⁴ *Ադամթա*-ն եբրայական փոխառություն է, որի իմաստն է *կարմիր հող, կավ*:

¹²⁵ **Ղևոնդ վրդ. Հովհաննիսյանը** իր *Հարցեր հոգևորականին* աշխատության մեջ փորձում է հիմնավորել, թե ինչու առաջին մարդը ստեղծվեց հողից. «Խոնարհութեան համար, քանի որ հողը խոնարհութիւն է նշանակում: Եթէ մարդը, իր մէջ դիտարկելով աստուծոյ պատկերը, կարող է մեծամտանալ, ապա տեսնելով Հողը, որ մշտապէս իր ոտքերի տակ է, կը խոնարհեցնէր իրեն»: Տե՛ս նշվ. աշխ., Եր., 2013, էջ 34:

Նարեկացին «Մարտան ողբերգության» պոեմում հավաստում է. «Դու՛ ստեղծիչ, եւ ես՛ կաւ» (ԳՆՄՈ, Բան Բ, 251): Հր. Աճառյանը ևս ՀԱԲ-ում նշում է, որ ըստ հների (Հյսմ., Գ. Տաթևացի)՝ «բուն նշանակությունն է «հող». հմմտ.«Ադամն կաւ ասի և Եայն օձ»¹²⁶: ԲՍԳ-ն արձանագրում է *հողեղեն* նշանակությունը (էջ 12): Այսինքն՝ նախկինում անվան իմաստը ընկալվել է *հող*, որ միանգամայն համընկնում է սուրբգրային տեքստի մեկնությանը: Եվ դրա համար պետք չէ միայն բավարարվել Բ 7-ով: Ծննդոցի Գ 19-ում Աստված է՛լ առավել հաստատում է. «...զի *հող էիր եւ ի հող դարձցիս*» (Ա-1): Բազմաթիվ անգամներ այդ նույն նշանակությունը հավաստվում է Հոբի գրքում. «...եւ ամենայն մարմին ի *հող դարձցի ուստի եւ ստեղծաւ* (Ա-1)» (ԼԴ 15): Մարդ արարածը Սուրբ Գրքում ավելի ուշ անվանվում է *հողեղեն*. «Առաջին մարդն՝ յերկրէ *հողեղեն* (Ա-1)», «Առջի մարդը երկրէն է՛ *հողեղեն* (Ա-2)» (Ա Կր. ԺԵ 47), «Որպէս *հողեղենն, նոյնպէս եւ հողեղենքս*» (48):

Աստվածաշնչում Մարդ բառն առաջին անգամ հանդիպում է Ծննդոց գրքի դեռ Ա 26-ում. «Արասցուք **մարդ** ըստ պատկերի մերում» (հուն.՝ *ἄνθρωπον*, ասոր.՝ *ܐܢܫܐ* Նաշա, գերմ.՝ *Mensch*), այն կրկնվում է հենց նույն Ծն. Բ 7-ում արդեն, այնպես որ *Ադամ* անվան բուն նշանակությունն, կարծում ենք, *հողն* է, *հողեղենը*, և հետո միայն կսկսվի ընկալվել նաև *մարդ*: Վերջինս ավելի շուտ հոմանիշն է *Ադամ* անվան (չմոռանանք, որ Ադամն առաջին մարդն է), և ավելի ուշ շրջանում է *մարդ*-ը դարձել համարժեք *Ադամ* անվանը և սկսել ընկալվել իբրև *Ադամ* անվան նշանակություն:

Ադամ (հուն.՝ *Ἀδάμ*) անվամբ հենց Ծննդոցում Ժ 19-ում, տրվում է նաև սողունացիների արքայանիստ քաղաքը՝ **Ադամա** (Ա-1,Ա-3), **Ադմա** (Ա-2) տարընթերցումներով (հուն.՝ *Ἀδάμα*, ասոր.՝ *ܐܕܡܐ* Ադամա, ռուս.՝ *Адам* (НЖБ), **Адам** (ЭБ) գերմ.՝ *Adma*), որի իմաստը ևս *հողն* է (ԲՍԳ): Հետոի գրքում՝ Գ 16, տրվում է մեկ այլ քաղաք՝ **Ադամիպէս** (Ա-1,Ա-3), **Ադամ** (Ա-2): Եթե անվան նշանակությունը նույնանում է *Ադամ* անձնանվան իմաստին, ապա ենթադրելի է անձնանունից տեղանուն անցումը, որ Սուրբ Գրքի անվանաբանական համատեքստում հաստատվում է բազմաթիվ այլ օրինակներով: Բայց այդ մասին մանրամասն կխոսենք քիչ ավելի ուշ:

Ընդհանրապես Հին Կրակարանում որոշակիորեն գործում է մի սկզբունք՝

¹²⁶ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան (ՀԱԲ), հ. Ա, Եր., 1942, էջ 48:

անունները մեծ մասամբ իմաստային առումով բացատրվում, մեկնաբանվում են, տրվում են դրանց բառացի նշանակությունները: Անունը դառնում է ոչ միայն անձերը միմյանցից տարբերակելու միջոց, այլև այդ անվամբ ասես դրսևորվում է տվյալ անձի էությունը, բնավորության որևէ կողմ, թեկուզ արտաքին որևէ հատկանիշ:

Պետք է անպայմանորեն նկատի ունենալ, որ որոշակի կապ կա անվանակոչողի և անուն ստացողի միջև, որը պայմանավորված է անուն դնողի մտադրությամբ, ցանկությամբ, կանխակալությամբ:

Այսպես՝ Եվային Աստված **Կին** (եբր.՝ **חַוָּה**) կոչեց, քանի որ, ըստ *Հին Կտակարանի*, տղամարդու կողից ստեղծվեց. «Այս այժմ ոսկր յոսկերաց իմոց եւ մարմին ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի Կին, զի յառնէ իւրմէ առաւ» (Ծն. Բ 23-24): Բայց դա բնավ չդարձավ նրա պայմանական անունը կամ, այսպես ասած, հատուկ անունը. Մինչդեռ Ադամը նրան կոչեց **Եվա** (որ է՝ **կյանք**) (Գ 20)՝ թե՛ իր իշխանությունը հաստատելով նրա վրա, թե՛ ցույց տալով նրա առաքելությունը: Թարգմանիչները, հետևելով հունարենին, գրաբար թարգմանության մեջ տվել են **Եվա** անվան բառացի նշանակությունը ևս՝ «*Եւ կոչեաց Ադամ զանուն կնոջ իւրոյ Կեանս* (հուն.՝ **Ζωή**, ասոր.՝ **ܟܘܝܗܘܐ** *Խավա*), զի նա է մայր ամենայն կենդանեաց»: Սրա օրինակին է հետևում արևելահայ տարբերակը, մինչդեռ արևմտահայերենում հարազատորեն պահպանված է **Եվա** տարբերակը (եբր.՝ **Heva**, ասոր.՝ **ܟܘܝܗܘܐ**). Ի դեպ նույն ձևով՝ **Եվա**, անունը առկա է նաև լատիներեն, գերմաներեն և ռուսերեն տեքստերում: Նշենք, որ *Պեշիթայում* միշտ տրվում է **Խավա**, որ է **կյանք**:

Եվ ապա Ադամն ու Եվան ունեցան երկու որդի, որոնց անունների իմաստը մարդկային ճակատագրերի հակադիր կողմեր են՝ **Կայեն** - *սրացված*, որով դրսևորվում է մոր ակնկալիքը, սակայն Կայենը առաջին մարդասպանը պիտի դառնա, և մյուսը՝ **Աբել**՝ *սուգ* կամ *ունայնություն*՝ մարդկային կյանքի հուսահատ վիճակ ու վիշտ, դառնություն, դատարկություն, մարդ, ով թեև Աստծու շնորհին է արժանանում, բայց դա էլ դարձնում է նրան զոհ: Բաց է մնում հարցը, թե ինչու *Ծննդոց* գրքում առաջին իսկ ընտանիքում անունների այսպիսի ընտրություն կատարվեց, և այդ անունների մեկնությունը անվերջ մտորումների տեղիք է տալու: Աստծու ընտրյալ ժողովրդի նահապետների նախահայրը (հիշատակվում է Հիսուսի սերնդաբանության մեջ),

դառնում է Ադամի և Եվայի երրորդ որդին՝ **Սեթը**, որի անունը բառացի նշանակում է *դրված, եղեալ* (ոուսերենում մի փոքր այլ է՝ *основание, утверждение*, ЭБ, 600):

Հունական տառադարձությամբ **Սեթ/Սէթ** (հուն.՝ Σηθ, ասոր.՝ ܫܬ) անունը նշանակում է «*եղեալ կամ եղ*» (ԲՅԱ, 207), ըստ Հր. Աճառյանի՝ ծագում է եբրայերեն *ժառանգ փալ* արմատից (ՀԱԲ, հ. Դ, 486): «*Անուանեաց զանուն Սէթ ասէ. Զի յարոյց ինձ Աստուած զաւակ այլ փոխանակ Հաբելի, զոր սպանն Կային*» (Ա-1՝ Ծն. Դ 25): Ըստ Հայսմավուրքի՝ նշանակում է *մխիթարություն, մխիթար*, որն էլ ակնարկվում է Գրիգոր Տղայի բանաստեղծության մեջ. «*Ետուր զՍէթ փոխան նմին, Որ Մխիթարն էր Ադամին, Եւ օրինակ մեծ խորհրդին, Որ լինելոց էր յապառնին...*» (Գրիգոր Տղա ԲՊ, 318): Հետաքրքիր է *Բառգիրք հայոց*-ի բերած *չարի մոռացում* նշանակությունը (էջ 286): Ասել է թե՛ այս իմաստներից յուրաքանչյուրը իր տրամաբանությունն ունի՝ ըստ *Ծննդոց* գրքի բովանդակության:

Հազարամյակների հեռավորությունից *Ծննդոցի* բազմաթիվ անուններ մեզ են ներկայանում մեկնություններով, որոնք պատճառաբանված են, հիմնավորված, որոնք ոչ միայն ներկայացնում են անվան իմաստը, այլև տրամաբանորեն փաստարկում ու հաստատում տվյալ անվան բառացի նշանակությունը: Այսպես՝ ըստ *Հին Կտակարանի*՝ ունենք **Աբրամ** (հուն.՝ Αβράμ, ասոր.՝ ܐܒܪܐܡ) (*հայր բարձր*) և **Աբրահամ/Աբրահամ** (հուն.՝ Αβραάμ, ասոր.՝ ܐܒܪܐܗܡ) (*բազմության հայր*). «*Եւ իմ ահաւադիկ ուխտ ընդ քեզ. եւ եղիցես հայր բազմութեան ազգաց. եւ ոչ կոչեսցի այսուհետեւ անուն քո Աբրամ, այլ եղիցի անուն քո Աբրահամ. զի հայր ազգաց բազմաց եղի զքեզ*» (Ծն. Ժէ 4-5): Այսինքն՝ հայերեն տեքստը տառադարձել է ըստ ասորերենի՝ *Աբրահամ*:

Հին Կտակարանի ոչ պակաս կարևոր հերոսներից մեկը կոչվեց **Եսալ** (*թավամազ*) (հուն.՝ Ησαύ, ասոր.՝ ܐܨܘܐ Էսո) կատարյալ հասուն տղամարդու պես մազոտ մարմնով ծնված լինելու պատճառով. «*Եւ եկն որդին անդրանիկ շառագոյն ամենեւին՝ իբրեւ զմորթ թաւ (δασύς) , եւ անուանեաց զանուն նորա Եսաւ*» (Ծն. ԻԵ 24-25):

Ուրեմն՝ **Հին Կտակարանը** (մասնավորապես *Ծննդոց* գիրքը) ներկայացնում է մարդկության պատմության մի այնպիսի ժամանակաշրջան, երբ մարդիկ առանձնանում, տարբերակվում, անհատականացվում էին այնպիսի անուններով,

որոնք ուղղակի տրամաբանական կապ էին ապահովում տվյալ անձի ներկայի և ապագայի միջև. տրվում էին անվանումներ համապատասխան տվյալ պահին, ժամանակին ու իրադրությանը, հերոսի էությանը, արտաքինին, այսինքն՝ տվյալ անձը կամ տեղվայրը կրում էր իրեն հատուկ, բնորոշ անվանումը, և որն աստիճանաբար պետք է դառնար պայմանական (ժամանակի ընթացքում՝ այլ անձերի անվանելիս, նախնական իմաստը մղվում է հետին պլան). այս առումով **Հին Կտակարանը** դառնում է հատուկ անունների առաջացման հիմք կամ սկիզբ:

Հիշենք թեկուզ Հակոբի սերնդաբանությունը: Հենց **Հակոբ** անվան իմաստները բխում են *Աստվածաշնչից՝ գարշապար* կամ *խաբող*. որոնք էլ իրենց հիմնավորումն են ստանում *Աստվածաշնչի* բնագրում. «*Եւ ապա ել եղբայր նորա եւ ձեռն նորա ունէր զգարշապարէ (τῆς πτέρνης) Եսաւայ. եւ կոչեաց զանուն նորա Յակոբ»* (հուն.՝ **Ἰακώβ**, ասոր.՝ **ܝܥܩܘܒ ܝܥܩܘܒ**) (Ա-1՝ Ծն. ԻԵ 25): Հետագայում սրան ավելանում է երկրորդ իմաստը, երբ Հակոբը խաբեությամբ եղբորից խլում է անդրանիկության իրավունքը. «*Յիրաւի կոչեցեալ անուն նորա Յակոբ, զի այս երկիցս խաբեաց զիս»* (Ծն. ԻԷ 36)¹²⁷: Հակոբի երկու կանայք անվանում են իրենց զավակներին գործողությունների զարգացմանը համարժեք՝ ըստ իրենց տրամադրության՝ **Դան** (դարաստան), **Նեփթաղիմ** (մարտիկ), **Գադ** (երջանիկ, բախտ), **Ասեր** (մեծություն), **Իսաքար** (վարձ) և այլն (Ծն. Լ)¹²⁸:

Այսինքն՝ **Հին Կտակարանը**, լինելով հատուկ անունների մի նախնական սկզբնաղբյուր, ներկայացնում է այդ անունները՝ հստակ չտարրորոշելով դրանք հասարակ անուններից, հաճախ հատուկ անվան փոխարեն տալով եբրայերենում գործածվող այդ անվան բառացի իմաստը, որն էլ մեզ՝ հետագա ընթերցողներին, պատկերացում է տալիս անունների, մասնավորապես հատուկ անունների առաջացման մասին:

Ի դեպ, այս իրողությանը հանդիպում ենք ոչ միայն *Ծննդոց* գրքում: Մարգարեններից շատերի անունները բացատրվում են հենց իրենց գործունեությամբ. այսպես՝ **Դանիել** – *Աստծո դարաստան*, **Նավում** – *մխիթարություն*, **Մաղաքիա** – *Տիրոջ հրեշտակ*, *պատգամաբեր* և այլն:

¹²⁷ Եբրայերենում *խաբել* բառը նույնպես նշանակում է *մեկի հետևից գնալ, կրունկը բռնել*:

¹²⁸ Անունների մասին մանրամասն խոսվում է համապատասխան տեղերում:

Աստվածաշնչում հիշատակվող առաջին տեղանունը **Եղեմն** է (հուն․՝ *Εδε΄ μ*, ասոր․՝ *ܐܕܝܢ*), որի ասորերեն տարբերակներն են **Ադեն, Ադին, Եդեն**, և որը հայերեն թարգմանություններում տրվում է ըստ հունարենի. Ա-1-ում՝ «Եւ տնկեաց Աստուած զդրախտին՝ **յԵղեմն**, ընդ արեւելս, եւ եդ անդ զմարդն զոր ստեղծ» (Ծն. Բ 8): Ըստ Ա-2՝ արևմտահայերեն տեքստի. «Եւ Տէր Աստուած արևելքին կողմը՝ **Եղեմի** մէջ, պարտէզ տնկեց, ու իր շինած մարդը հոն դրաւ», իսկ ըստ Ա-3-ի՝ «Աստուած դրախտ տնկեց **Եղեմում**՝ արեւելյան կողմը, եւ այնտեղ դրեց իր ստեղծած մարդը »:

Հայերեն գրաբար տեքստում *Ծննդոց* գրքի Բ 15-16-ում, մենք արդեն կարդում ենք Եղեմի թարգմանական տարբերակը՝ **փափկություն**. «Եւ առ Տէր Աստուած զմարդն զոր արար, եւ եդ զնա ի դրախտին **Փափկութեան** գործել զնա եւ պահել»: Ա-3 տարբերակը հետևում է գրաբարին, բայց *փափկութեան* փոխարեն նշված տեղերում դնում է **բերկրության** ձևը. «Տէր Աստուած իր ստեղծած մարդուն տեղափոխեց **բերկրության** դրախտում»: *Ծննդոց* Գ 23-24-ում, *Եղեմը* դարձյալ տրված է թարգմանաբար. այդպես է նաև հունարենում. *Յոթանասնից* գրքի *Էδεμ* -ը տրվում է ἐκ τοῦ παραδείσου *τῆς τρυφῆς* թարգմանությամբ՝ *դրախտ փափկության*, իսկ ասորերեն բնագիրը տալիս է *ܐܕܝܢ* *Ըդըն*: Բայց միայն տրված հատվածում: Մինչդեռ նախորդ հատվածում հունարենը պահում է *Եղեմ* անունը:

Ըստ ԲՅԱ-ի՝ **Եղեմը** եբրայերեն բառ է, որի նշանակություններն են *փափկություն* կամ *զվարճություն* և կամ ասորերեն՝ *ժամանակ* (70): Ըստ ՆԲՀԼ-ի՝ *Եղեմ* կամ *Ադին/Ադեն* բառերի իմաստներն են *փափկություն, գրգանք, զվարճություն, վայելք*¹²⁹, բայց ոչ՝ *բերկրություն*, վերջինիս իմաստները բոլորովին այլ են դարձյալ ըստ ՆԲՀԼ-ի՝ *բերկրանք, ցնծություն, ուրախություն, խնդություն*: Ակնհայտ հարց է առաջանում Ա-3-ում թարգմանության այս ձևի ընտրության վերաբերյալ: «Դրախտ փափկութեան» կապակցությունը Ստ. Մալխասյանցը բացատրում է որպես «դրախտ, որի մէջ իբր թէ Ադամն ու Եվան անաշխատ ու հանգիստ կեանք պիտի վայելէին»¹³⁰: Հակված ենք կարծելու, որ գրաբարից արևելահայերեն դարձնելիս թարգմանիչները պետք է նկատի ունենային հենց գրաբարից բխող իմաստները, մանավանդ որ գրքի առաջաբանում խոսվում է անձնանունների և տեղանունների դեպքում սուրբգրային ձևերին հարազատ

¹²⁹ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Եր., 1998:

¹³⁰ Տե՛ս Ստ.Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, էջ 494, Եր., 1944-45:

մնալու մասին:

Հետաքրքիր են նաև *Եդեմ* անվան շուրջ օտար աղբյուրների մեկնաբանությունները, որոնցում որոշակիորեն ընդգծվում են **արևելք** և ժամանակային կամ տարածական նշանակությունները. «Это слово может быть понято как **восток**. Однако буквальное его значение **оттуда, где раньше**, что истолковывается некоторыми экзегетами как «**до начала времен**»...»¹³¹, ЭБ-ն բերում է «**приятность, сладость**» (189) իմաստները:

Որ *Եդեմը* նախ և առաջ եղել է աշխարհագրական տեղանուն, հաստատվում է նաև ոուսերեն և գերմաներեն *Աստվածաշունչ* գրքերով¹³²: Ուստի, որպես այդպիսին, այն ենթակա չէ թարգմանության: Արդյոք պահպանվել է այդ սկզբունքը մեր թարգմանիչների կողմից: *Աստվածաշունչի* հայերեն թարգմանությունները հավաստում են (և ոչ միայն բնագրերը), որ **Եդեմը** աշխարհագրական տեղանուն է՝ արևելյան կողմում կամ արևելքում գտնվող, ուստի *արևելքը* չի կարող իբրև իմաստ ընկալվել *Եդեմի* համար: Դա է հաստատում նաև համեմատությունը ոուսերեն և գերմաներեն թարգմանությունների հետ. «И насадил Господь Бог рай в Едеме **на востоке**» (Быт. 2,8). „Dann legte Gott **im Osten**, in der Landschaft Eden, einen Garten an, (Gen. 2,8): Անշուշտ սխալ պետք է համարել Ա-3-ի թարգմանությունը, ըստ որի «*Աստված դրախտ տնկեց Եդեմում՝ արևելեան կողմը*»:

ԲՅԱ-ն նույնիսկ փորձում է ճշտել Եդեմի աշխարհագրական սահմանները. «Թէպէտ ոմանք ի հնումն յայլ եւ յայլ տեղիս եղին, սակայն ըստ որում ասեն եւ հաստատեն բազումք եւ մեծամեծ վարդապետք եւ ըստ որում երևի ի սուրբ գրոց, Եդեմ ասի այն գաւառն հայոց, որ այժմ Կորդուաց աշխարհ կոչի և ի Տաճկաց Քիւրտիստան ասի եւ սա ի մէջ սահմանացն Արարատայ եւ Ասորեստանեայց եւ Միջագետաց առ լերամբքն Կորդուաց» (76): Մատենագիրներից ոմանք նշում են բարձր և կենտրոնական մի տեղ, ուր շատ գետեր էին հոսում: Այդպիսի տեղ են կարծում Մասիսի տարածքը արևմուտքից, որի շրջանակով հոսում են 4 մեծ գետեր՝ Եփրատ, Տիգրիս, Երասխ և Փասիս՝ ըստ *Աստվածաշունչի*՝ Փիսոն:

¹³¹ *Новая Женевская учебная Библия* (НЖБ), (Синодальный перевод), Свет на Востоке, 1998, с. 13.

¹³² 1. *Библия*, книги священного писания Ветхого и Нового Завета, канонические, 1994. 2. *Gute Nachricht Bibel mit Einführungen und Bildern*, Sonderausgabe, für das Jahr mit der Bibel 1992.

Ըստ Էրիկ Նյուստրեմի՝ հնարավոր է եղեմը Հայաստանի տարածքում գտնվելու իրողությունը¹³³:

Ոչ պակաս հետաքրքիր է մեկ այլ՝ **Սաբեկ** անվան քննությունը, անուն, որը, բուն սուրբգրային տեքստում լինելով հասարակ անուն, իր խորհրդով հայ միջնադարյան հոգևոր բանաստեղծության (և ոչ միայն բանաստեղծության) մեջ ընկալվեց ու դարձավ հատուկ անուն: Ինչո՞ւ և ինչպե՞ս:

Աստվածաշնչի Սահակ-Մեսրոպյան բնագրի *Ծննդոց* ԻԲ գլխում կարդում ենք. «Համբարձ Աբրահամ զաչս իւր եւ երես, եւ ահա խոյ մի կախեալ կայր զճառոյն **սաբեկայ զեղջերաց**» (ԻԲ 13), իսկ տողատակի մեկնաբանությունը, որն անշուշտ հետագա միջամտություն է, տալիս է եբրայական բնագրի բառացի թարգմանությունը. «...կալեալ կայր **ի մացառս** յեղջերաց իւրոց»: Ա-2-ը այս նախադասությունը ներկայացնում է հետևյալ տեսքով. «Եւ Աբրահամ իր աչքերը վեր վերցուց ու նայեցաւ, և ահա իր երևը խիտ մացառներուն մէջը եղջիրներէն բռնուած խոյ մի կար»: Ա-3 -ը տալիս է հետևյալ ձևը. «Աբրահամը բարձրացրեց իր աչքերը եւ տեսաւ, որ մացառույր թփի մէջ եղջիրներից մի խոյ է կախուած»: Եբրայերենում առկա են **սվախ** և **սաբակա** անվանումները, որոնք համապատասխանաբար նշանակում են՝ **սվախ** – *մացառույր*, **սաբակա** – *ծառի տեսակ*: Տարբերակների հարցում վերջակետ դնելու համար ասենք, որ *Յոթանասնիցում* ևս **սաբեկն** առկա է. «καὶ ἰδοὺ κριὸς εἷς κατεχόμενος ἐν φυτῷ **σαβεκ** τῶν κεράτων , նույնը առկա է *Պեշիթայում* **ሥላሳ** **ሥላሳ**»:

Հակասությունը պարզ է. գրաբար տեքստում խոսվում է ոչ թե մացառի կամ մացառուտի, այլ շատ պարզ ներկայացված **սաբեկ** ծառի մասին, մինչդեռ հետագա թարգմանիչները այն խմբագրել են իբրև *մացառ* կամ *մացառույր*: Եթե վերջին ձևը ընդունենք իբրև ճշմարտություն, ապա ինչպե՞ս կարելի է բացատրել այն, որ հայ բանաստեղծության մեջ, հատկապես նրա հոգևոր հզոր այրերի՝ Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տղայի և մյուսների կողմից **Սաբեկա** ծառի՝ իբրև հատուկ անուն գործածելու, խորհրդանիշ ընդունելու և գովերգելու հանգամանքը:

Օրհնեա՛լ ես, աստուածազարդ փայտ սուրբ

¹³³ **Нюстром Эрик**, *Библейский словарь*, Санкт-Петербург, 1995, էջ 124:

կամ ճշմարտապէս տունկ,որ զի քէն կախեցելոյ

Սաբեկայ գառամբն ոչ միայն Իսահակ

ի մահուանէ փրկիր, այլ միանգամայն

համօրէն ծնունդք Ադամայ... (ԴԱՓՄ, 19):

Ջքեզ Նոյեան տապանըն գուշակեաց փըրկող

Ջճառոյն Սաբեկայ գառն Աստուծոյ կախեալ (ՆՇՏԳ,187):

Ջզնեալս պատուական արեամբ գառինդ անարատի

Ոչ ընդ Սաբեկայ կախեալ,

Այլ զոր ի վերայ խաչին խոցեալ առ ի գինս տալով ծառայիս.

Ազատեա՛ յինքնակապ կապանաց մեղանացս (ԳՏԲՊ, 340):

Թեև Սեբաստացին տալիս է այս բառի նշանակությունը՝ «*թողութիւն կամ ներողութիւն, ըստ ոմանց էլ՝ ուղղորդ կամ վերամբարձ, կամ բարունակ և կամ տարասկ*», բայց մեզ համար այս նշանակությունները այնքան էլ էական դեր չեն խաղում: Այս բացատրություններում չկա *մացառ* կամ *մացառուտ* կամ առավել ևս՝ *թուփ* նշանակությունը, ըստ որի՝ կիսմնավորվել վերը բերված օրինակներում **սաբեկ** անվան *մացառ* թարգմանությունը: Մխիթար Սեբաստացին առավել կարևոր մեկնաբանություն է տալիս. «Արդ է սա **յատուկ անուն ճառոյն**, զորմէ ետես Աբրահամ կախեալ զխոյն զեղջերացն»¹³⁴:

Թե՛ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ն, թե՛ Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարան»-ը հաստատում են *Սաբեկի՛* ծառ լինելու հանգամանքը: Ծառի նկարագրությունը տրվում է ՆԲՀԼ-ում՝ ըստ Վարդան Արևելցու. «Սաբեկ ոստ մի ճառոյ թարգմանի, կամ **երկճղի ծառ**, իսկ առ ՚ի միտս թողութիւն կոչի»¹³⁵, իսկ Ռ. Ղազարյանի բառարանում այն ներկայացվում է իբրև նոճազգիների ընտանիքին պատկանող ծառ՝ ցրդի¹³⁶:

Հր. Աճառյանը դնում է *սաբեկ* անունը եբրայական փոխառությունների ցանկում՝

¹³⁴ *Բառգիրք հայկազեան լեզուի*, Արարեալ Մխիթարայ մեծի աբբայէն Սեբաստացոյ, հ. 1, Վենետիկ, 1749, էջ 961:

¹³⁵ Տե՛ս ՆԲՀԼ, հ. 2, 683:

¹³⁶ Տե՛ս Ռ. Ղազարյան, *Գրաբարի բառարան*, հ. Բ, Եր., 2000, էջ 436:

բացատրելով իմաստը՝ *ծառի ճյուղեր*¹³⁷:

Սաբեկ ծառի երկճյուղ լինելը պարզորոշ երևում է Վասպուրականի մանրանկարչության մեջ¹³⁸:

Աստվածաբանական միտքն էլ *Սաբեկին* խիստ էական կրոնա- դավանաբանական մեկնաբանություն կամ, թերևս, խորհրդանշական արժեք է տվել: Գրիգոր Տաթևացին գրում է. «*Խոյն Իսահակայ կախեցաւ զծառոյն Սաբեկայ, որ է երկճղի, որ արինակ էր ճշմարիտ խաչին Քրիստոսի*»¹³⁹, այսինքն՝ ծառի երկու ճյուղերը դիտողին հիշեցնում են խաչի թևեր, և ըստ այդմ էլ *Սաբեկն* ընկալվում է իբրև խաչի առաջին խորհրդանիշ: Ահա թե ինչով է պայմանավորված բանաստեղծների այսօրինակ ուշադրությունը *Սաբեկ* անվանը: Գրիգոր Նարեկացու պոեմում կարդում ենք.

*Արմատացո՛ւ մեզ սովաւ փունկ երանութեան
զյուսոյդ ի քեզ մեծ պաշտպանութիւն, ստեղծիչ բոլորից,
փէ՛ր արարածոց, զայս **ծառ Սաբեկայ**, որ ունի կախեալ
ի դիտակ ոստոցն զաւանդ սուրբ նորոգ
այժմու փրկութեանս ծաղկեալ քեւ,
Քրիստո՛ս, ի պտուղ կենաց անմահականաց (ՄՈ, 617):*

Միանգամայն իրավացիորեն Նարեկացու մեկնիչները այս տողերը բացատրում են հետևյալ կերպ. «*Բանաստեղծը կոչնակի խորհուրդը զուգահեռում է Սաբեկ ծառի խորհրդի հետ: Այդ ծառի ճյուղից Աստված կախեց այն խոյը, որն Աբրահամը զոհաբերեց իր Իսահակ որդու փոխարեն, մինչդեռ կոչնակի խաչանշան փայտը պարզևում է հոգու փրկություն*»¹⁴⁰: Նման ընկալումն է անշուշտ պատճառը հայ բանաստեղծների կողմից **Սաբեկը** իբրև հատուկ անուն ընկալվելու, մինչդեռ, ինչպես նկատեցինք, *Աստվածաշնչի* հետագա թարգմանությունները թույլ են տվել լուրջ վրիպում՝ այս առումով անշուշտ աղավաղելով գրաբարյան տեքստը: Որովհետև եթե չկա ծառի գաղափարը, հարց է առաջանում, թե մացառից ինչպես էր կախված խոյը:

¹³⁷ Տե՛ս **Հր. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, էջ 58:

¹³⁸ Տե՛ս *Հայկական մանրանկարչություն*, Ծերուն, Աբրահամի զոհաբերությունը, (ալբոմ) կգմ. **Հր. Հակոբյան**, Եր., 2000:

¹³⁹ **Ս. Գրիգոր Տաթևացի**, *Ոսկեփորիկ*, Կ.Պոլիս, 1746, էջ 398:

¹⁴⁰ **Գրիգոր Նարեկացի**, *Մարեան Ողբերգութեան*, աշխ.՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Հայկական ՍՍՀ, ԳԱ հրտ., ծնթգ.՝ 22, էջ 1114:

Ըստ Ա-2 և Ա-3 գրքերի՝ խոյը կախվել էր աներևույթ մի բանից, իսկ դա հնարավոր չէր, քանի որ *կախվել* կամ *բռնվել* ձևերը, ուժեղ խնդրառության բայեր լինելով, պահանջում են իրենց լրացումը¹⁴¹:

Մեր հաջորդ նկատառումը վերաբերում է Ծննդոց գրքի **Կենաց ծառ** անվանմանը, որը հայ բանաստեղծության մեջ (և ոչ միայն բանաստեղծության) դարձել է ոճանուն¹⁴²: «*Եւ բուսոյց եւս Տէր Աստուած յերկրէ զամենայն ծառ գեղեցիկ ի տեսանել եւ քաղցր ի կերակուր, եւ զճառն կենաց* (հուն.՝ ξύλον τῆς ζωῆς) *ի մէջ դրախտին, եւ զճառն գիտելոյ զգիտութիւն բարւոյ եւ չարի»* (հուն.՝ καὶ τὸ ξύλον τοῦ εἰδέναι γνωστὸν καλοῦ καὶ πονηροῦ) (Ա-1՝ Ծն. Բ 9-10): Ա-2-ը՝ արևմտահայերենը, այս նախադասությունը թարգմանել է՝ պահելով գրաբարյան տեքստի իմաստը, ըստ որի՝ դրախտում բազմաթիվ այլ ծառերի թվում Աստված երկու ծառ տնկեց՝ առաջինը՝ **Կենաց ծառը**, և երկրորդը՝ **չարի և բարու իմացության ծառը**. «...*Եւ զճառն Կենաց ի մէջ դրախտին, եւ զճառն գիտելոյ զգիտութիւն բարւոյ եւ չարի»* (Ա-1), «*Եւ Տէր Աստուած գեպնէն՝ տեսնելու հաճելի և ուրելու աղէկ ամէն ծառը, ու պարտէզին մէջտեղը կենաց ծառը, և բարին ու չարը գիտնալուն ծառն ալ բուսցուց»* (Ա-2): Ա-3-ը՝ արևելահայերենը, զարմանալիորեն թույլ է տվել լուրջ անճշտություն, ըստ որի՝ նշված երկու ծառերը դարձել են մեկ, այն է՝ *կենաց ծառ*. «*Տէր Աստուած երկրից բուսցրեց նաեւ ամէն տեսակի գեղեցկատեսիլ ու համեղ մրգեր տուող ծառեր, իսկ կենաց ծառը՝ բարու եւ չարի գիտութեան ծառը, տնկեց դրախտի մէջտեղում*»:

Որ Եդեմում Աստված բազմատեսակ ծառերի թվում տնկում է երկու ծառ ևս՝ *Կյանքի ծառը և Չարի ու բարու իմացության ծառը*, առկա է նաև այլալեզու *Աստվածաշունչ* գրքերում՝ «...*и дерево жизни среди рая, и дерево познания добра и зла...*» (Быт. 2, 9):

Ծննդոց գրքի նույն՝ Բ գլխում Աստված պատվիրում է Ադամին ու Եվային չուտել չարի և բարու իմացության ծառից. «*Յամենայն ծառոց, որ է ի դրախտիդ՝ ուրելով կերիցես. Բայց ի ծառոյն գիտութեան բարւոյ եւ չարի՝ մի՛ ուրիցէք, զի յորում աւուր ուրիցէք ի նմանէ մահու մեռանիցիք»* (Ծն. Բ 16-17): Այս տողերը ճշտությամբ

¹⁴¹ Այս մասին մանրամասն տե՛ս Քյոսեյան Հ., *Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության*, Ս. Էջմիածին, 1995, էջ 6-7:

¹⁴² Ոճանունների մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության *Աստվածաշնչյան ոճանուններ* գլուխը:

վերարտադրել են թե՛ Ա-2, թե՛ Ա-3 գրքերը:

Բոլորիս քաջ հայտնի աստվածաշնչյան պատմությունը ավարտվում է դրախտից Ադամի ու Եվայի արտաքսմամբ, քանզի Աստծու մտավախությունը կար, թե՛ «Ահա Ադամ եղեւ իբրեւ զմի ի մէնջ՝ գիտել զբարի եւ զչար. եւ արդ գուցէ ձգիցէ զձեռն եւ առնուցու **ի ծառոյն կենաց**, ուտիցէ եւ կեցցէ յաւիտեան» (Ծն. Գ 22) և նույնիսկ այդ մտավախությունից «...հրամայեաց քերորէից եւ բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զճանապարհս **ծառոյն կենաց**» (Ծն. Գ 24): Այս մեջբերումները հարազատորեն պահպանել են թե՛ Ա-2-ը և թե՛ Ա-3-ը: Բայց այս դեպքում հարց է առաջանում. արդյոք ինչպե՞ս բացատրել Ա-3-ի թարգմանությունը՝ այս երկու ծառերը մերթ իբրև մեկ՝ *կենաց ծառ*, մերթ առանձին ծառեր ներկայացնելու հանգամանքը:

Հաճախ նաև գրականության մեջ այս երկու ծառերը ընկալվում են իբրև նույն ծառը, մինչդեռ յուրաքանչյուր ծառի խորհուրդը որոշակի է թե՛ *Աստվածաշնչում*, թե՛ գրականության՝ մասնավորապես հայ բանաստեղծության մեջ: Հայ միջնադարյան բանաստեղծ Ազարիա Զուղայեցին գործածում է **Բան ծառ** արտահայտությունը.

*Ապայ էառ զԵւայ կողէն Ադամայ,
Ուտել անմահ պտղոյն, որ ի դրախտին կայ
Բան ծառ մի պատուիրեաց թէ չուտել նմա,
Եւ յորժամ կերիցէ մահու տիրանայ:*

(ԱԶ)

Հետաքրքիր է այս առումով Առաքել Սյունեցու ընկալումը. ըստ որի՝ այս երկու ծառերի արժեքը խառնված է և, ըստ էության, խոսքը մեկ ծառի մասին է:

*Բայց ի ծառոյն չար գիտութեան
Ասաց չուտել, զի մահ կու տան...
Թէ չէր ծառն այն պատճառ բարեաց՝
Վասն է՞ր ետրեղծ ըզնա աստուած:
Այլ ոչ թէ մահ կայր ի պըտղին,
Կամ որ ուտեն զայն՝ մեռանին,
Այլ կայ խորհուրդ անճառ ի նմին,
Վասն այն չեթող մերձ կալ նորին:*

Չի տէր գիտէր զպըտուղըն զայն,
Չի որք ուրեն՝ աստուածանան,
Թէ դուք ուրէք՝ աչք ձեր բանան,
Իբրև զաստուած լինիք բնութեան:

(ԱՍԱ, 26-27)

Մինչդեռ *Աստվածաշունչը* որոշակի պատկերացում է տալիս երկու առանձին ծառերի խորհրդի մասին, ըստ որի՝ **բարու և չարի իմացության ծառը** մարդկային մտքի իմացության դուռն է բացում, այն գիտության ծառն է, **կյանքի ծառը** իր մեջ անմահության խորհուրդն է պարփակում, այն կատարյալ է, բայց անհասանելի: Չմոռանանք, որ *Աստվածաշունչը* փակվում է հենց *Կյանքի ծառի* խորհրդանիշով. «...*եւ եզերք գեպոյն աստի եւ անտի ծառ կենաց, որ բերէր պտուղս երկոտասան, ըստ միոյ միոյ ամսոյ տային զպտուղս իւրեանց.եւ տերեւ ծառոյն էր բժշկութիւն հեթանոսաց...: Երանելիք են, որ պահեն զպատուիրանս նորա, նոքա ունին իշխանութիւն ուրել ի փայտէն կենաց եւ մտանել ընդ դրունս քաղաքին* (Հյտն. ԻԲ 2, 14): Իսկ ամենավերջում՝ «*Եւ եթէ ոք պակասեցուցէ ի բանից մարգարէութեան գրոյս այսմիկ, պակասեցուցէ եւ հապցէ Աստուած զբաժին նորա ի ծառոյն կենաց եւ ի քաղաքէն սրբոյ, որ գրեալ է ի գիրս յայս»* (Հյտն. ԻԲ 19): Որոշ հրատարակություններում (արևմտահայերեն, ռուսերեն) *Կյանքի ծառը* այս տեղում փոխարինված է *Կյանքի գիրք* կապակցությամբ: Գրաբար տեքստի մեկնիչները ևս տողատակում նշում են, որ ոմանք գործածում են **ի դպրութենէն** ձևը:

Վերևում մենք խոսեցինք այն մասին, որ անձի անունը փոխանցվում է իր ժողովրդին, որոշակի տեղավայրերի, այլ անձերի: Բերենք մի քանի այդպիսի անուններ: Հակոբը որոշակի պահի ստացավ նոր անուն՝ *Իսրայել*, որ բառացի նշանակում է *մարտնչող*: Եվ *Իսրայել* անձի անունով կոչվեցին երկիրը, ժողովուրդը, դաշտը և այլն: Այս առումով ուշագրավ է Գ. Ջահուկյանի հետևյալ համեմատությունը. «*Հին Կտակարանից* եկող անունների քննությունը ցույց է տալիս հների մտածողության մի բնորոշ գիծը՝ անձնանունները այստեղ շատ դեպքերում անձնավորում են ժողովուրդների (հանդես են գալիս որպես էպոնիմներ), և զարմանալի չէ, եթե Խորենացին այս նույն եղանակով Հայկի և Արամի մեջ անձնավորում է հայ-

արմեններին»¹⁴³: Հին Կտակարանում սա համընդհանուր բնույթ է կրում՝ ստեղծելով համանուն հատկանուններ: Դրանք կարելի է բաժանել իմաստային մի քանի խմբերի. անձի անունը դառնում է՝

- ա) ժողովրդի անուն,
- բ) երկրանուն,
- գ) լեռնանուն,
- դ) ջրանուն

և այլ անուններ:

Անդրադառնանք այդպիսի մի քանի անունների:

Քանանի՝ Քամի որդու՝ Նոյի թոռան անունով կոչվեցին և՛ երկիրը, և՛ ժողովուրդը: «Եւ **Քանան** ծնաւ զՍիդոն զանդրանիկ իւր, եւ Քետացին, եւ զՅերուսացին, եւ զԱմովրհացին, եւ զԳերգեսացին, եւ զԽեւացին, եւ զԱրուակացին, եւ զԱմինացին, եւ զԱրադոնիացին, եւ զՍամարացին, եւ զԱմաթացին, եւ յետ այնորիկ սփռեցան ազգք Քանանացւոց» (Ծն. Ժ 15-18):

Թեև ըստ ԲՅԱ-ի տրվում է **Քանան** ձևի հետ նաև **Քանաան** (հուն.՝ *Χανααν*, ասոր.՝ *ܟܢܢܐ* *Քընաան*, ռուս.՝ *Ханаан*) սակայն, ինչպես տեսնում ենք, գրաբար տեքստում տրված անվան **Քանան** տարբերակը նույնանում է թե՛ Զոհրաայյան *Աստվածաշնչի*, թե՛ արևմտահայերեն և արևելահայերեն տեքստերի, անգամ հենց ՄՍԱ-ի նույն հատվածում առկա **քանան** փոքրատառով գրության հետ: Այնպես որ հայերեն թարգմանություններում **Քանաան** տարբերակը առկա չէ:

Հր. Աճառյանը այս անունը բխեցնում է տաճկական *Քենան* անունից (պրսկ. *միասին, վրան*)՝ քիչ հավանական համարելով եբրայական ծագումը (ՀԱԲ, հ. Ե, 215):

Քանան անձի անունից **Քանան երկիրը** տարբեր ժամանակներում տարբեր կերպ է անվանվում՝ ամենասկզբում **Քանան**. «Եւ եկին ի Գալիլովթ Յորդանանու, որ է Յերկրին Քանանու... » (Հս. ԻԲ 10), ուր հանգրվանեց Աբրահամը Խառանից հետո: **Ավետյաց երկիր** (Եբր. ԺԱ 9)՝ «Հաւարովք պանդիսրեցաւ յերկրին աւետեաց իբրեւ յօրարութեան, խորանօք բնակեաց Իսահակաւ եւ Յակովբաւ հանդերձ, ժառանգակցօք նոցին աւետեաց: Քանզի ակն ունէր հիմամբք հաստարելոյ քաղաքին, որոյ

¹⁴³ Տե՛ս Գ. Զահուկյան, *Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները*, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1981, թ. 3, էջ 49:

ճարտարապետ եւ արարիչ Աստուած է», **Եբրայեցիների երկիր** (Ծն. Խ 15)՝ «Ձի գողանալով գողացան զիս յերկրէն Եբրայեցոց», **Իսրայելի երկիր** (Եզկ. ԻԷ 17) «Որդիքն Իսրայելի...», **Հուդայի երկիր** (Բ Թգ. Ե 5)՝ «Եւթն ամ եւ վեց ամիս թագաւորեաց ի Քերրոն ի վերայ Յուդայ...», **Հրեաստան** (Ա Թգ. ԺԷ 1)՝ «Եւ ժողովեցին այլազգիզն զբանակս իւրեանց ի պատերազմ, եւ գումարեցան ի Սոկքով Հրէաստանի...», **Սուրբ երկիր** (Ջք. Բ 12)՝ «Եւ ժառանգեցդ Տէր զՅուդա զբաժին իւր յերկրին սրբութեան...»:

Սիդոն կամ **Սիդովն** անունը (հուն.՝ Σιδών, ասոր.՝ ܣܝܕܢ Սայդոն, ռուս.՝ Сидон) կապվում է Քանանի անդրանիկ որդու՝ **Սիդոնի** հետ. «Եւ Քանան ծնաւ զՍիդոն զանդրանիկ իւր» (Ծն. Ժ 16): Այս անվամբ հետո կոչվում է աշխարհի հնագույն ծովեզերյա քաղաքներից մեկը, որ կառուցում է Սիդոնը: Նաև երբեմն քաղաքի անունով է կոչվում **Միջերկրական ծովը**. «Եւ եղեւ սահմանք Քանանացոց՝ ի **Սիդոնէ** մինչեւ ի գալ ի Գերարա եւ ի Գաղա, մինչեւ ի գալ ի Սոդոմ եւ ի Գոմոր...» (Ծն. Ժ 19): «Ձաբուղոնը ծովի եզերքումը կլինի, եւ նա նաւերի եզերքումը կլինի, եւ նորա սահմանը մինչեւ **Սիդոն**» (Ծն. ԽԹ 13): Սա եղել է Քանանի հյուսիսային սահմանը: Հետուի գրքում քաղաքն անվանվում է **Մեծ Սիդոն**. «Եւ մատնեաց զնոսա Տէրըն ընդ ձեռամբ Իսրայելի, եւ կոտորեալ զնոսա,՝ արարին հալածական մինչեւ **ԳՄեծն Սիդոն**...» (ԺԱ 8, 19, 28): Այստեղ պաշտվել են Բահաղ և Աստարտ կուռքերը: Հեզաբել թագուհին, որ մոլի պաշտող էր կուռքերի, Սիդոնից էր: Հին Կտակարանի մարգարեները գուշակել էին քաղաքի անկումը: Հիսուսն այցելել է Սիդոն և հարևան Տյուրոս քաղաքները:

Սիդոնը գրավել են ասորեստանցիները, բաբելացիները, պարսիկները: XVI –XVII դարերում թուրքերի կողմից նվաճվելով՝ անվանվել է **Սայդա**, որն արդեն զբաղեցնում էր նախկին Սիդոնի մի մասը միայն:

Սյուրեմ-ը (**Սիւրէմ**) (հուն.՝ Συρέμ, ասոր.՝ ܣܘܪܝܡ Շիւեմ, ռուս.՝ Сирем) նախ եղել է **անձնանուն**. «Յեմովրայ հորէ Սիւրեմայ...» (Ծն. ԼԳ 19), ապա դարձել է **տեղանուն**՝ քաղաքի անուն, նաև քաղաքի բնակիչների անուն՝ **սյուրեմացի**:

Սյուրեմը քանանացի իշխան էր, որ հրապուրեց Շմավոնի և Ղևիի քրոջը՝ Դինային, և այդ պատճառով նենգաբար սպանվեցին ոչ միայն ինքը, այլև բազում սյուրեմացիներ: Համանուն քաղաքը Իսրայելի հնագույն քաղաքներից մեկն է եղել, որը գտնվել է Երուսաղեմից 55 կմ հեռավորության վրա՝ Գարիզ և Գեբաղ լեռների միջև,

որտեղ գտնվում է Հակոբի այն աղբյուրը, որի մոտ Հիսուսը խոսեց Սամարացի կնոջ հետ (Հվի. Դ 5, Գրծ. Ը 25, Թ 31): Հետագայում սա դարձավ սամարացիների մայրաքաղաքը: Հռոմեացիները Սյուրեմն անվանեցին **Նեապոլիս**:

Եբրայական **Կեդար** (հուն.՝ **Κηδάρ**, ասոր.՝ ܟܝܕܐ Կեդար, ռուս.՝ Кедавр) անունը (սևամորթ, նաև՝խավար կամ արարմություն, ԲՅԱ, 118) նախևառաջ Իսմայելի որդու անունն է. «Անդրանիկ Իսմայելի Նաբէովթ և Կեդար...» (Ծն. ԻԵ 13): Սրա ցեղը մեծ էր և հզոր, բայց ոչ բարեհամբավ: Սրա անունից էլ երկիրը կոչվում էր **Կեդարի երկիր**, իսկ բնակիչները՝ **կեդարացի**. «Պակասեցեն փառք որդւոցն Կեդարու» (Ես. ԻԱ 16), «Բանակք և բնակիչք Կեդարու» (ԻԲ 11), «Տեսեք և ի Կեդար առաքեցէք...» (Եր. Բ 10):

Եբրայական **Մադիամը (Մադիան- Ա-2)** (հուն.՝ **Μαδιάμ**, ասոր.՝ ܡܕܝܐ Մըդիամ, ռուս.՝ Мадриан) (դարաստրան կամ դարող, վիճող կամ կովող, ԲՅԱ, 135) Աբրահամի և Քետուրայի չորրորդ որդու անունն է, որից էլ՝ **Մադիամ քաղաք, երկիր և Մադիանացիք**:

Մադիամ քաղաքը սահմանակից էր Եթովպիային: Այստեղ փախավ Մովսեսը Փարավոնի ձեռքից և բնակվեց քրմերի մոտ: Մովսեսի կինը՝ Սեփորան ևս մադիանացի էր, որից Մովսեսը երկու արու զավակ ունեցավ (Ծն. ԻԵ 2, ԼՁ 35, Ել. Բ 15, Դ 19, ԺԸ 1, Թվ. ԻԲ 4, 7, ԻԵ 15, Հս. ԺԳ 21, Դտ. Զ 1, 2, 3, 6...): Ասենք, որ Աստվածաշնչի տարբեր գրքերում տրվում է անվան երկու տարբերակներն էլ՝ **Մադիամ** և **Մադիան**, մինչդեռ հունարեն տեքստում բոլոր դեպքերում տրվում է **Μαδιάμ** տարբերակը:

Արական եբրայական **Մամբրե (Մամբրէ)** (հուն.՝ **Μαμβρή**) անունը (ապստամբ կամ դառն, կամ փոփոխող, կամ փոխադրող, կամ ըստ ոմանց՝ յսրակություն – ԲՅԱ, 138, պարարտ – ԲՍԳ, 334, հսրակություն – ՀԱԲ, հ. Գ, 182) կրում է ամովիրացի մի իշխան, որն իր եղբայրների հետ օգնեց Աբրահամին ազատելու Ղովտին գերիչների ձեռքից (Ծն. ԺԴ 13, 24, ԺԸ 1, ԻԳ 17, 19): Սրա անվամբ կոչվեց նաև **Մամբրե** քաղաքը, որի արվարձանները շրջապատված էին կաղնու հսկայական անտառներով, որտեղ իրենց վրաններն էին խփում Աբրահամը և նրա որդիները (Ծն. ԺԴ 18, ԺԸ 4), հետո այդ քաղաքն անվանվեց **Քեբրոն**:

Ի դեպ, **մայրաքաղաք** բառի իմաստը և առաջին գործածությունը տրվում է

Աստվածաշնչում. Հեսուի գրքում **Քերրոն** (Արբոկ) քաղաքը հենց այդպես է մեծարվում.

«... **Ջմայր քաղաքացն** *Ենակայ, այն է՝ Քերրոն ի լերինս Յուդայ*»:

Այս անունը հայ բանաստեղծների համար արժեք է ստացել նրանով, որ Աստված երևացել է Աբրահամին՝ **Մամբրեի կաղնու** մոտ (Ծն. ԺԸ 1):

Արական եբրայական **Քաղեբ** (հուն.՝ *Χαλέβ*, ասոր.՝ *ܟܠܒ քալալ*, ռուս.՝ *Халев*) անվան (*սիրտ* կամ *շուն*, կամ *խան*- ԲՅԱ, 226, *շուն*-ԲՍԳ, 568, իսկ ԲԵ-ն-*կորիւն*, կամ *սիրտ*, կամ *ամենայն սիրտ*, էջ 329), ըստ օտար աղբյուրների *Халев*//*Калев* իմաստը բացատրում են *горячуй, храбрыи*¹⁴⁴: Մեզ մնում է անել հետևություն, որ անունը նշանակում է **քաջ** կամ **սրտոտ**, որովհետև վերը հիշատակված հայկական աղբյուրների մեջ այս իմաստը ընկալելի է):

Սա Հեփոնիայի որդու անունն է՝ Հուդայի ցեղից, որին և Հեսուին միայն տրվեց իրավունք մտնել Քանանի երկիր (Թվ. ԺԳ 8, ԺԴ 6-24, ԺԳ 6, Հս. ԺԵ 13-19, Բ Օր. Ա 36): Միայն այս երկուսն էին, որ Մովսեսի կողմից ևս 10 մարդու հետ գնալով Կադես հետախուզման՝ հետվերադարձին հավատացին Աստծուն և նույնը կոչ էին անում ժողովրդին¹⁴⁵: Ենակիմներին վտարելով՝ սա գրավեց *Դարիր* քաղաքը և այն որպես օժիտ տվեց աղջկան՝ Ասրային:

Քաղեբը համանուն հատկանուն է. այս անունով հայտնի են քաղաք՝ **Քաղեբ** (Ա Թգ. Լ 14), և մի քաղաք՝ **Քաղեբ-Եփրաթա** (*Χαλέβ εις Εφραθα, Халев-Еффрафа*) հիշատակվում է *Ա Մնացորդաց* Բ 24-ում և հիշատակվում է ընդամենը մեկ անգամ և բառացի նշանակում է *плодородие, изобилие*, և հատկանվագետները տարակածիր են այս անվանման հարցում¹⁴⁶:

Հին Կրակարանում հանդիպում են բազմաթիվ անուններ, որոնք անվանում են թե՛ կուռք, թե՛ անձ, թե՛ վայր:

¹⁴⁴ Տե՛ս ԵՅ, էջ 683:

¹⁴⁵ Հենց այդ անհավատությունն ու կասկածը եղան պատճառը, որ Աստված Մովսեսի ժողովրդին դատապարտեց 40 տարի անապատում դեգերելու: Եվ Քաղեբն ու Հեսուն եղան այն մարդիկ, որ մնացած ժողովրդին առաջնորդեցին Քանան:

¹⁴⁶ ԵՅ- ն այս անվան մեկնության մասին գրում է. «Это слово встречается только однажды<...> и значение оной не совсем ясно<...>.Сирийский перевод цитаты следующий: в стране Халева в Еффрафе. По еврейскому тексту Иеронима читается: Халев пришел к Еффрафу, под которым некоторые разумеют Вифлеем, другие под сим названием разумеют известную местность в земле Еффраима; некоторые думают, что под сим названием значится вторая жена Халева Еффрафа. Вообще же должно заметить, что мнения касательно означенного слова очень неопределёны». Տե՛ս ԵՅ, էջ 684:

Ըստ *Աստվածաշնչի՝ Բաաղը* կուռքի անուն լինելուց բացի նաև սովորական անձնանուն է՝ Ա Մնց. Ե 5. «Որդի նորա Բաաղ», Թ 36, 42. «Բաաղ ծնալ զՅովադու», որպես տեղանուն է գործածվում *Հեսուի* գրքում՝ ԺԵ 9, 10. «Հանէ սահմանն ի Բաաղ», Ա Մնց. Դ 33. «Մինչեւ ի Բաաղ», որը նույն Կարիաթարիմն է:

Աստվարովթը Բ. Օր. Ա 4-ում, Հս. Թ 10-ում հիշատակվում է իբրև քաղաք, Ծն. ԺԴ 5-ում հիշատակվում է քաղաք **Աստարոթ – Կաննայիմ** անվամբ:

Բեթփագուլր անվամբ *Հեսուի* գրքում նշվում է քաղաք (Հս. ԺԳ 20):

Աստվածաշնչում հայտնի են նաև այս անունը կրող երկու քաղաք, որոնք հաճախ շփոթվում են միմյանց հետ: Սրա անունով էլ Աբարիմի լեռների գոտիներից մեկը կոչվել է **Փեգուլր**:

Այդպիսի անուններից է նաև **Ադրամելթը**. *Աստվածաշնչում՝ Եսայու* գրքում հանդիպող **Ադրամելթը** բնավ չի կապվում համանուն կուռքի հետ. այն դառնում է համանուն հատկանուն՝ Ասորեստանի Սենեքերիմ թագավորի որդու. «Եւ մինչդեռ երկիր պագանէր ի տան իւրում **Նասրաքայ** կոոց իւրոց, **Ադրամելթ** եւ Սարասար որդիք նորա սպանին զնա սրով եւ ինքեանք զնացին փախստական ի Հայս. եւ թագաւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորա» (ԼԷ 38): Բառացիորեն այս նախադասությունը նույնությամբ կրկնվում է *Դ Թագավորության ԺԹ* գլխում. «Եւ եղեւ մինչդեռ երկիր պագանէր ի տան **Նեսրաքայ** աստուածոյ իւրում, **Ադրամելթ** եւ Սարասար որդիք նորա հարին զնա սրով եւ ինքեանք զերծան յերկիրն **Արարադայ**. եւ թագաւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորա» (37): Ինչպես տեսնում ենք Ա-1 բնագրի այս միևնույն բովանդակությունը պարունակող նախադասության մեջ կա երկու անվանական փոփոխություն՝ *Նասրաք-Նեսրաք* և *Հայք-Արարադ*: Այս նույն տարբերակները տրվում են Ա-2՝ արևելահայերեն թարգմանության մեջ: Ա-3 բնագիրը (արևմտահայերեն) երկու հատվածում էլ պահում է **Նեսրաք և Արարադ** անունները:

Ուսումնասիրելով հատուկ անունների առաջացման, զարգացման ու փոփոխման գործընթացը՝ պարզորոշ նկատում ենք, որ ժամանակակից տեսանկյունից անունները՝ թե՛ տեղանուն, թե՛ անձնանուն, սուրբգրային տեքստում նախ բնութագրվում, մեկնաբանվում ու հաստատվում են սկզբնական կամ առաջնային իմաստով, այն իմաստով, որը տվյալ բառի բառարանային իմաստն է, ինչպես՝ **Եղեմ** – *փափկություն*,

Իսրայել – մարտնչող: Պատմական զարգացման ընթացքում այդ իմաստը մթագնում է. առավել կարևորվում է այդ անվան տեղանվանական կամ անձնանվանական կամ այլ կերպ ասած՝ պատմաաշխարհագրական գործառույթը, ինչպես՝ **Իսրայել**-անձնանուն և **Իսրայել**-տեղանուն: Որոշ տեղանուններ էլ ժամանակի ընթացքում վերանում են տեղանվանական գործառույթից և վերաիմաստավորված նոր գործառույթով հանդես գալիս որպես հասարակ անուն, ինչպես՝ **Եդեմ-եդեմ**:

3.2. Աստվածաշունչը որպես հայերեն ազգանվանակերտ ձևերի սկզբնաղբյուր

Քրիստոնեության ընդունմամբ և *Աստվածաշունչի* թարգմանությամբ հայերենի անվանարանը համալրվեց եբրայական, ասորական, հունական բազմաթիվ անուններով՝ բացարձակ մեծամասնությամբ հունական տառադարձությամբ: Ոչ միայն նոր անձնանուններ մտան շրջանառության մեջ ու դարձան խիստ օգտագործելի ու սովորական, այլև այդ անձնանունները դարձան ազգանվանակերտ հիմքեր՝ ստեղծելով հարյուրավոր ազգանուններ, ինչպես՝ **Աբրահամյան, Աբգարյան, Դավթյան, Իսրայելյան, Սողոմոնյան, Ռուբենյան, Եփրեմյան, Դանիելյան, Ղազարյան, Հովասափյան, Սամսոնյան, Միքայելյան, Աբելյան, Շմավոնյան, Փիլիպոսյան** և այլն:

Հայոց ազգանունների¹⁴⁷ առաջացման և ձևավորման ընթացքը ցույց տվող մի ուրույն սկզբնաղբյուր է *Աստվածաշունչը*, որի տարբեր գրքերում արդեն իսկ հանդիպում են հայոց ազգանունների որոշակի կաղապարներ՝ **-յան(-յանց)/-եան** և **-ացի, -եցի, -ցի** վերջածանցներով:

Ի սկզբանե ազգանուններ չեն եղել, եղել են միայն անուններ, ուստի ժամանակի

¹⁴⁷ Ի դեպ նշենք, որ ազգանուն-մականուն հարաբերակցության մեջ մականունը շատ ավելի լայն ընդգրկում ունի, և ազգանվան որոշակի կաղապարներ ավելի շատ հարում են մականուններին, մանավանդ եթե հաշվի առնենք ազգանունների ձևավորումը պատմական զարգացման մեջ. Այն, ինչ ի սկզբանե եղել է մականուն, հետո դարձել է ազգանուն, ինչպես՝ *Ղազար Փարպեցի, Անանիա Շիրակացի, Դավիթ Էջմիածնեցի* և այլն: Կան նաև ազգանվանակերտ որոշակի հիմքեր, որոնք անձնանունից չեն բաղադրված, ինչպես՝ *Քաղցրիկյան, Դարբինյան, Փոքրիկյան* և այլն: Հր. Աճառյանը, տարբերակելով ազգանունը մականունից, գրում է. «Կոստանդնուպոլսում **մականունը հաճախ շփոթում են ազգանվան հետ** և փոխանակ ասելու ազգանուն, ասում են մականուն, թյուրքերեն *լաղաբ*, այսինքն՝ *փուրանուն*»: *Հայոց անձնանունների բառարան*, Ե հատոր, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 1962, էջ 360:

հետ անունների կրկնություններից ու շփոթություններից խուսափելու համար ստեղծվել են դրանց տարբերակման այլևայլ միջոցներ¹⁴⁸: Ամենանախնական տարբերակումը անհատին որևէ մականուն տալն էր, ինչպես՝ **Շմավոն/Սիմոն Նախանձահույզ, Հոր Երանելի, Սողոմոն Իմաստուն** և այլն:

Ամենանախնական տարբերակներից մյուսը, որը շատ տարածված կառույց է *Սուրբ Գրքում*, անվան հետ հայրանվան ներկայացումն էր, ինչպես՝ «**Որդիք Յուդայ Փարէս, Եսրոմ եւ Քարմի**» (Մնց. Դ 1), կամ **Սաբեէ որդի Բոքորեայ**, որոնց համապատասխան արևելահայերեն տարբերակներն են՝ **Հուդայի որդիներ Փարեսը, Եսրոմը և Քարմին, Բոքորի որդի Սաբեեն**: Այս ձևերը, որոնք ակնհայտ ցույց են տալիս սերում, ծագում, պատկանելություն, առավելապես կիրառված են *Հին Կտակարանի* գրքերում, հատկապես *Հնգամատյանում*: Հետագայում այս ձևերն էլ հիմք են դառնում անձերի տարբերակման մի նոր միջոցի առաջացման՝ **-եան**-ով կազմություններին: Բայց ոչ անմիջապես: Նախ աստիճանաբար այս կաղապարներում բաց է թողնվում **որդի**-ն, և անունը տրվում է արդեն ուղղակիորեն **Յակոբոս Չեբեդեայ**, փոխանակ **Յակոբոս որդի Չեբեդեայ, Յակոբոս Ալփեայ** փոխանակ **Յակոբոս որդի Ալփեայ**: Հաջորդ քայլում արդեն սրանք սկսում են տրվել ուղղակի՝ **Յակոբոս Ալփեան, Յուդա Յակովբեան**: Սաղմոսներում կարդում ենք. «...ամենայն **զաւակն Յակովբեան փառաւոր արասցեն զնա**» (ԻԱ 24) (արևելահայերեն թարգմանվում է **Հակոբի բոլոր զավակները**), «**Չաւակն Աբրահամեան՝ ծառայք նոցա, որդիք Յակոբայ՝ ընտրեալք նորա**» (Սղմ. ԾԳ):

Սրանց մի մասն արդեն իսկ *Աստվածաշնչում* գործածվում է սերման, ծագման նշանակությամբ, որ հայերեն սուրբգրային թարգմանություններից անցնելով շարականներ, եկեղեցական գրականություն, մատենագրություն՝ դարձավ հայերիս համար մերօրյա ազգանունների հիմք¹⁴⁹:

Հր. Աճառյանը **-յան/-եան** ածանցով ազգանունների վերաբերյալ հակասական կարծիք է հայտնում. առաջին դեպքում դրա առկայությունը ուղղակիորեն կապում է պարսկերենի հետ. «**Ճ-րդ դարում հայերը պարսիկներից վերցնում են հոգնակի ան,**

¹⁴⁸ Սրանց քննությանն է անդրադառնում Հր. Աճառյանը *Հայոց անձնանունների բառարանի* Ե հատորում, ինչպես նաև մանրամասն ներկայացված են Տ. Ավետիսյանի *Հայկական ազգանուն* գրքում:

¹⁴⁹ Ազգանունների մասին մանրամասն տե՛ս **Տիգրան Ավետիսյան**, *Հայկական ազգանուն*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Եր., 1987:

եան(յան) մասնիկը և դարձնում են նրանց նման ազգանուն...Սա պարսկական ազդեցության շրջանն է»¹⁵⁰: Իսկ իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի...» աշխատության *Բառաքնություն* բաժնի հավելվածում՝ *Դիպարկումներ առանձին ածանցների վերաբերյալ* վերնագրում **-յան** ածանցի մասին գրում է. «-յան(-եան) (գրբ. ի-ա հոլ.) կազմում է՝ 1. Ազգանուններ՝ *Ահարոնեան, Սիմոնեան Հուդա, Մամիկոնեան*. Ս. Գրքում գործածված է նաև իբր հայրանուն, օրինակ, Եզր. Գ 2. *Եվ յարեալ Հեսու Յովսեփեկեանց... և Ջորաբաբէլ որդի Սաղաթելի, քիչ հետո (8)՝ ...Ջորաբաբէլ Սաղաթելեանց և Հեսու Յովսեփեկեանց...»*: Աճառյանը տալիս է նաև այս ածանցի այլ իմաստային կիրառություններ ևս՝ երկրանունների՝ *Արարատյան գավառ*, պատկանելության կամ մեկի իմաստով՝ *ցավ Հակոբյան*, և այլն¹⁵¹:

Մ. Աբեղյանը ունի հստակ մոտեցում. «**Յան**-ը ցույց է տալիս ա) ազգանուններ՝ Հայկյան, Մամիկոնյան, Արարատյան, այս նշանակությամբ հաճախ «**յանց**»(**եանց**), որ ծագած է գրաբարի սեռականից՝ Թորոսեանք-Թորոսեանց, աշխարհաբարում կորցրել է սեռականի նշանակությունը և դարձել է ածական»¹⁵²:

Գ. Զահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանի» Հին հայերենի վերջաձանցների ծագումը բաժնի ցանկում տրվում են երկու համանուն **-եան** ածանցներ, որոնք տարբեր կերպ են մեկնաբանվում: Առաջինի մասին (*առաւաւրեան, աստուածեան, երեքեան, հայկեան, ներքողեան*) ասվում է, որ այս ածանցը համընկնում է սեռական-տրականի վերջավորության հետ, որ պարունակում է հնդեվրոպական *-ti- և *-n/n հիմքային տարրերը՝ *tiun կամ *tiHn-> **-եան** զարգացումը, թեև նշվում է, որ բացարձակորեն հավաստի օրինակներ չկան, ուստի պետք է ենթադրել, որ հետագայում վերջնավանկային *-i-ի անկմամբ **-եան-** ն ընկալվել է որպես ինքնուրույն ածանց և տարածվել սկզբնապես *-i- չպարունակող բառերի վրա¹⁵³: Իսկ երկրորդը (*գեղեան, գիւղեան, մոգեան, քաջեան, նախարարեան*) համարվում է փոխառություն իրանական -ān հոգնակերտի -yān տարբերակից, որ դասական պարսկերենում դրվում էր ā, ī, ō, ū ձայնավորներով վերջացող բառերից հետո: Եվ այս պարագայում

¹⁵⁰ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 359:

¹⁵¹ Տե՛ս Հր. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի...*, Իմաստաբանություն, *Բառաքնություն, Շարահյուսություն*, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2005, 187:

¹⁵² Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, *Հայոց լեզվի տեսություն*, Հայկական ՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Եր., 1974, էջ 213:

¹⁵³ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 803:

ամենակարևորը. հայերենում նրա դրվելը բաղաձայններից հետո կարող է բացատրվել նրանով, որ **այն ոչ թե ուղղակի փոխառություն է, այլ հայերեն –եան-ի իրանական հոգնակերտի հետ բաղարկվելու արդյունք**¹⁵⁴, որը և հիմք է տվել Աճառյանին **-եան**-ը համարել իրանական փոխառություն:

-եան/-յան -ով կազմությունները բացատրելի են երկու նշանակությամբ՝ 1) տվյալ անձին հատուկ, բնորոշ, 2) տվյալ անձին պատկանող, տվյալ անձից սերող, ծագող: Անկախ արտահայտած իմաստից՝ **-յան/-եան** ածանցներով բաղադրված բառերը ընկալելի են ածական խոսքիմասային արժեքով, իսկ հոգնակի ձևերը՝ միանշանակ գոյականի:

Աշխարհաբարի քերականության հիմնադիր Արսեն Այտընյանը *«Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի»* աշխատության մեջ հատուկ անունները բաժանում է երկու խմբի՝ *գոյական հատուկ անուն*, որոնց տակ ներառում է անձերին և վայրերին տրվող անունները, այսինքն՝ անձնանուններ և տեղանուններ, և *ածական հատուկ անուններ*, որոնց տակ ներառում է մականունները. *«Ածական յատուկ անունն ան է, որ որոշեալ անձի կամ տեղույ մը վերաբերեալը կը ցուցնէ. ինչպէս. Արքաշիսեան, Սոկրատեան, Սեբաստացի, Աթենական, Ողոմպիական, որոնք առանձին չեն կրնար մնալ եւ հարկաւ գոյականի մը կը վերաբերին...»*¹⁵⁵:

Ոչ պակաս կարևոր է ազգանվանակերտ հիմքերի ժամանակային շրջանաբաժանումը, որ կատարվել է Գ. Զահուկյանի կողմից, և ըստ որի՝ **հնագույն շրջանն է** սկզբից մինչև 5-րդ դարը, իսկ **հին շրջանը՝** 5-11-րդ դարերը:

Տիգրան Ավետիսյանը իր *Հայկական ազգանուն* գրքի երրորդ գլխում հանգամանալից քննում է անձնանուն ազգանվանակերտ հիմքերը՝ իրանական, հունական և հին հրեական-հունական, արաբական, թուրքական, ինչպես նաև բնիկ և փոխառյալ, տալիս նաև ազգանվանակերտ հիմքերի ժամանակային դասակարգումը¹⁵⁶:

Այժմ հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե **-յան/-եան**-ով ձևերը հունարեն կամ ասորերեն տեքստերում քերականական ինչ կառուցվածք ունեն, և որ լեզվից է հավանական այսկերպ ներկայացնելը, քանի որ հայ թարգմանիչները

¹⁵⁴ Տե՛ս **Հր. Աճառյան**. նշվ. աշխ., էջ 804:

¹⁵⁵ Տե՛ս **Արսեն Այտընյան**, նշվ. աշխ., Ե.1987, էջ 29:

¹⁵⁶ Տե՛ս **Տիգրան Ավետիսյան**, նշվ. աշխ., Եր., 1987, էջ 83-140:

եբրայական կառույցները հայերենում տվել են միջնորդավորված՝ կամ ասորերենից, կամ հունարենից ընդօրինակելով:

Աստվածաշնչում այս կազմությունների դրսևորումներին անդրադառնալիս պետք է նկատի ունենալ, որ ի սկզբանե **-եան**-ով ձևը առաջին սերունդն է ամրագրում, ինչպես՝ **Եղիազար Ահարոնյան** (Ելք), որ նշանակում է **Ահարոնի որդի Եղիազարը**, մինչդեռ մերօրյա ընկալմամբ տվյալ անձնանուն հիմքով **յան**-ով կազմությունը կարող է չնշանակել առաջին սերունդ, այլ արտահայտել՝ 1. ած. *տվյալ անձի սերունդն ընդհանրապես, նրա տոհմը*: 2. *Տվյալ անձին հատուկ՝ վերաբերող*: 3. *Ընդհանրապես ազգանուն*:

Աստվածաշնչի Աբրահամ անունից *Գործք առաքելոցում* հանդիպում է **Աբրահամեան** կազմությունը. «Արք, եղբարք, որդիք **Աբրահամեան տոհմին...**» (ԺԳ 26), որտեղ այն արտահայտում է **ընդհանրապես Աբրահամի տոհմը** իմաստը: Եվ բնական է, որ թե՛ արևելահայերեն, թե՛ արևմտահայերեն տեքստում այն թարգմանված է՝ *Եղբայրներ, Աբրահամի տոհմի որդիներ* ձևով:

Հայ բանաստեղծության մեջ հաճախական են **Աբրահամյան** կազմությամբ մակդրային գործածությունները. «Փրկարար տապանակ եւ **Աբրահամեան Աստուածընկալ տաղաւար...**» (Շար.), «Եւ առակ խորհրդոյ **աբրահամեան պատարագին**» (Գրիգոր Նարեկացի, ԳՆՄՈ), «Կենսատու տապան նոյեան եւ **աստուածընկալ խորան աբրահամեան...**» (Ներսես Շնորհալի, ՏԳ): Այս գործածություններում **Աբրահամյան**-ը **տաղավար, պատարագ** և **խորան** բառերի համար հստակ հատկանշային արժեք ունի (*ինչպիսի՞, ո՞ր*), որը ուղղակիորեն բխում է աստվածաշնչային տեքստերից, մինչդեռ «**Ջաւակն**¹⁵⁷ **Աբրահամեան՝ ծառայք նոցա, որդիք Յակոբայ՝ ընտրեալք նորա**» (Սղմ. ՃԴ(ՃԵ) 6, Ա-2-ում՝ *Աբրահամին սերունդը*, Ա-3-ում՝ *Աբրահամի սերունդներ*, հուն.՝ **σπέρμα Αβρααμ**), «**Ձի յազգէ աբրահամեան է շառաւիղն...**»: «Երանելի սուրբ Հռիփսիմեանք, **ՅԱբրահամեան զարմէն բղղխեալք...**» (Ն. Շնորհալի, ՏԳ) օրինակներում **Աբրահամյան**-ի գործածության դաշտը քիչ այլ է. այն արդեն հստակ սերում, ծագում, պատկանելություն է ակնարկում:

Վարդան Հացունին գրում է. «Ս. Գրոց յոյն բնագրին մէջ իբր մականուն կը

¹⁵⁷ Հավանաբար սխալագրություն է, և պետք է լիներ *զաւակք*:

գործածուի հոր կամ հաւուն անունը, երբեմն ուղղական ձեւով՝ թէ՛ բնագրին եւ թէ՛ հայերենի մէջ, շնորհիւ թարգմանչին խղճահարութեան... Մերթ բնագրին ուղղականը սեռականի վերածուած է թարգմանչէն... Բայց շատ անգամ ալ մեծագոյն համարձակութեամբ հայ մականուանց ձեւը տուին անոնց. **Անտիոքոս Աղեքսանդրեան, Աղեքսանդրոս Անտիոքեան, Մատաթի Շմաւոնեան, Յուդա Յակոբեան, Յուդա Սիմոնեան...**»: Մենք այնքան էլ համամիտ չենք վերջին մտքին, քանի որ, ինչպես տեսանք վերևում, **-յան/-եան**-ը գրաբարի **ի-ա** հոլովման արտահայտություն է:

Աստվածաշնչի Աղամ անունից ունենք շատ տարածված **Աղամյան** ձևը՝ հետևյալ նշանակություններով՝ 1. ած. Աղամին հատուկ, նրան պատկանող՝ վերաբերող: 2. ած. (հնց.) Աղամային: 3. գ. Աղամի սերունդը, նրա տոհմը: 4. Ընդհանրապես ազգանուն:

Բերենք մի քանի օրինակ տրված իմաստներով հայ միջնադարյան բանաստեղծություններից. «*Ըստ օրինակի աղամեան պարզոյն...*» (Գրիգոր. Նարեկացի, ՄՈ, 124, 237, 255): «*Ջաղամեան բնութիւն մեռեալըն կենագործէր...*» (Ներսես Շնորհալի, ՏԳ, 136): «*Շնորհիւ քո լցան Որդի՛ք աղամեան, Մեղա՛յ քեզ, մեղա՛յ, կոյս անապական....*» (Քուչակ Վանեցի, ՈԽՄԲ հ1, 57):. «*Եւ նահապետքն որ յԱղամեան, Եւ մարգարէքն Իսրայէլեան...Առ ի յօրինեալ գրեզ փութան*» (Ա. Խարբերդցի, ՈԽՄԲ հ. 2, 233): «*Տունս Աղամեան լայնածաւալ Լցեալ ընչիւք ծագ ընդ ծագ*» (Պ. Նախիջևանցի, ՈՍԲ, 291)¹⁵⁸:

Աստվածաշնչի Ահարոն անունից տարածվում է **Ահարոնյան** տարբերակը՝ 1. Ահարոն քահանայապետի սերունդը (Ել. Զ 25. «**Եղիազար Ահարոնեան**»): 2. ած. Ահարոնին պատկանող՝ հատուկ՝ վերաբերող: 3. Ընդհանրապես ազգանուն:

Ի դեպ, նշենք, որ **Ահարոնյան** տարբերակը հենց ազգանվան իմաստային առումով ողջ *Հին Կտակարանում* քիչ հանդիպող գործածություններից է: Գրաբար տեքստում առկա այս տարբերակը արևմտահայերեն տեքստում տրված է. «*Եւ Ահարոնի որդին Եղիազար Փուրիելի աղջկներէն իրեն կին առաւ*», նույնկերպ՝ արևելահայերենում՝ «**Ահարոնի որդի Եղիազարը**»: Հետաքրքիրն այն է, որ այս վերջին կառույցները նույնանում են հունարեն տեքստի կիառությանը. «*καὶ Ἐλεάζαρ ὁ τοῦ Ἀαρὼν*», որը հայերեն բառացի թարգմանվում է՝ **Ահարոնի Եղիազարը**: Իսկ սա նշանակում է, որ **-եան**-ը հինգերորդ դարասկզբի գրաբարին բնորոշ իրողություն է, և

¹⁵⁸ Օրինակները տրվում են ըստ Փ. Մեյթիխանյանի *Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարանի*:

այն չի կարող վեցերորդ դարում պարսկերենից փոխառվել՝ նույնանալով համանուն հոգնակերտի հետ: Ասորերենում՝ **Եղիազար որդի Ահարոնի** (ܐܘܝܬܐ ܝܘ ܝܘܠܐ ܝܠܝܗܐܩܐ ܥܝܠܝܐܩܐ ܦܐܪ (որդի) Ահրոն). չմոռանանք, որ ասորերենում ևս հունարենի նման անունները չեն հոլովվում:

Իսկ հայ միջնադարյան գրականության մեջ հանդիպում են հետևյալ մակդրային կիրառությունները. «Ո՛չ քահանայապետ ըստ **ահարոնեան** տկար **աւրինին...**»¹⁵⁹ (Գ. Նարեկացի): Շնորհալին գրում է. «**Ահարոնեան ուսուցիչք քահանայութեանցն Հոսեալ զաւրինակ յինքեանս եղելոյ...**», Ներսես Մոկացին ևս՝ մակդրային արժեքով. «**Երկու պատուական ակունքս, Որ երկու կուռն Ահարոնեան Նշանքն Իսրայէլի Մեղանչման և արդարութեան...**»:

Ասքանազր, ըստ Սուրբ Գրքի, Գամերի որդին է, Թորգոմի եղբայրը և Հաբեթի թոռը. «**Եւ Գամերի որդիքը՝ Ասքանաս, Րիփաթ եւ Թորգոմա** » (Ծն.. Ժ 3Ա Մնց. Ա 3), որի համաձայն էլ հայ ազգը այդպես էլ անվանվում է՝ մեկ **Ասքանազյան**, մեկ՝ **Թորգոմյան**, մեկ՝ **Հաբեթյան**: Մեր թարգմանիչները հայերին այսպես կոչել են՝ նկատի ունենալով *Աստվածաշնչի* հետևյալ տողերը (Եր. ԾԱ 27)՝ «**Նորա դէմ պատրաստեցէ՛ք ազգերին, հրաւիրեցէ՛ք նորա դէմ Արարաբի, Միննիի եւ Ասքանասի թագաւորութիւնները...**» (Այստեղ արդեն *Ասքանասը*՝ որպես երկրի անվանում - ՓՄ): Ուսումնասիրողները գտնում են, որ «*Ասքանազյան*» կամ «*Ասքենազյան*» անվանումը վերաբերում է սեպագիր արձանագրություններում հիշատակվող «*Աղջուազային*», որով կոչում էին սկյութներին, երբ նրանք, թափանցելով Անդրկովկաս և Հայաստան, հաստատել էին իրենց իշխանությունը: Ըստ Ս. Վեբերի՝ «*Ասքանազայ՝ հարաւային հայոց մեկ մասը կազմելուն ենթադրութիւնը կապացուցանէ Ազքեն հայկական յարուկ անուան գոյութեամբն ու հայացի ազ մասնիկով*»¹⁶⁰ :

Աստվածաշնչի գրքում առկա **Ասքանազեան**-ը ժամանակակից հայերենում ունի հետևյալ նշանակությունները՝ 1. *Աստվածաշնչի* Ասքանազին պատկանող, վերաբերող,

¹⁵⁹ Նարեկացին Ահարոնի քահանայական հին օրենքը համարում է տկար՝ արդարացնելու և զորավոր՝ հանցավորին քարկոծմամբ դատապարտելու համար: Այդ օրենքին Նարեկացին հակադրում է Քրիստոսի Նոր օրենքը, որը հոգու փրկություն է ընձեռում մեղավորին և հավիտենական կյանք, Գրիգոր Նարեկացի, ՄՈ, 297, ծնթգ. 1001):

¹⁶⁰ Տե՛ս Վեբեր Ս., *Արարաբը Սուրբ գրոց մէջ*, թրգ.՝ Հ. Բառնաբաս, Վ. Պիլեզիհիկեան, Վիեննա, 1901, էջ 21:

Ասքանագի տոհմից: 2. Հայ, հայազգի: 3. Ընդհանրապես ազգանուն: Առաջին իմաստը բխում է աստվածաշնչային տեքստից, որի բազում գործածություններ գտնում ենք միջնադարյան բանաստեղծների ստեղծագործություններում, ինչպես՝ «Սա ասր զորդոյն Արամենի, Ջծննդոցըն Թորգոմի, Եւ զցեղիցն Յաբեթի **զԱսքանագեանն Պարթևի**, Ճշմարտապես ազգաբանէ...» (Գրիգոր Տղա, ԲՊ, 207): «Եղեր պարծանք տանս Արամին, **Ասքանագեան Հայկայ զարմին** » (Առաքել Սյունեցի, Բ, 303) (Այստեղ՝ Նարեկացու մասին - ՓՄ): «Այլ զնոր աղէտս թըշուառութեան զարմիս Հայկայ տառապելեաց, **Ասքանագեան գընդիս լըքեալ և կործանեալ թագաւորաց**» (Սիմեոն Ապարանցի, ՀՄԲԲ, 530): «Նոյնպէս Նարդեանս ես՝ անպիտան, **Եփրեմ ուրբիս Ասքանագեան**» (Ե. Ղափանցի, ՈՒՄԲ, հ2, 57): «Հաւոյն մեծի համանըման, Ծընօղք ազգիս **Ասքանագեան**...» (Պ. Ղափանցի, Բ, 98): «**Ասքանագեան զարմն ի գրոց ներբողի...Քեզ լիցի խրատ, ո՛վ պերճ Ասքանագեան, Բարուք հետևել քաջաց մերազնեան**...» (Մ. Վարդապետ, 128):

Ժամանակակից հայերենում առկա **Գաբրիելյան** ազգանունը, որպես այդպիսին (Աստվածաշնչի *Գաբրիել* անունից՝ իբրև Գաբրիելին հատուկ, վերաբերող՝ պատկանող), սուրբգրային հենք չունի: Իսկ *Նոր Կտակարանում* առկա **Գաբրիելյան փող** դարձվածում՝ իբրև վերջին դատաստանի օրը հնչեցվող փող՝ ձայն՝ նշան, **Գաբրիելյանը** ունի ածականական արժեք, և ոչ միայն սուրբգրային տեքստում, այլև հայ միջնադարյան բանաստեղծության մեջ այն կիրառված է մակդրային արժեքով, ինչպես՝ «Ջձայնիկդ ընդէ՛ր ողորմիկ ածէս՝ **Գաբրիէլեան փողոյն նըման**...» (Գ. Նարեկացի, ՏԳ): «Դատաստանի օրն է հասել, **Գաբրիէլեան փողըն է գոչել**...» (Ֆրիկ, Բ): «Ընդ **Գաբրիէլեան ձայնին** Ի քեզ բնակեցաւ Հոգին, Անսերմըն յըղացոյց զՈրդին...» (Ա. Սյունեցի, Բ):

Աստվածաշնչի Դավիթ անունից ունենք **Դավթյան** ազգանունը՝ իբրև 1. Դավթին հատուկ՝ վերաբերող: 2. Դավթի կողմից ստեղծված: 3. Դավթի սերունդը:

Հայ միջնադարյան բանաստեղծության մեջ **Դավթյան**-ը հիմնականում մակդրային կիրառություն է, ինչպես՝ «**Ըզդաւթեան երգ ոչ էր նըւագել**...», «Ըսր **Դաւթեան սաղմոսին**...» (Գրիգոր Նարեկացի), «Այսաւր փողէ **Դաւթեան քընարն**» (Ներսես Շնորհալի), «Ոմըն գինի յիմարութեան, Որպէս սսէ **Սաղմոս Դաւթեան**...»

(Առաքել Սյունեցի), «*Ինձ առաջնորդ և ուսուցիչ զբանս Դաւթեան, Շարադրեցի ուրանաւոր ես զամենայն, Զհարիւր 'ւ յիսուն փոխ սաղմոսին զերգն ի լման*» (Հակոբ Թոխաթցի): «*Եւ արկ ի բերան նորա Օրհնութիւն ըստ երգոյն Դաւթեան*» (Ներսես Մոկացի):

Բայց ավելի ուշ շրջանից հանդիպում են գործածություններ նաև ազգանվան՝ իբրև տվյալ տոհմին պատկանողի, ինչպես՝ «*Դու գաւազան ծաղկեալ Դաւթեան յարմարոյն, Մայր Էմմանուէլի, ծնօղ բարձրելոյն*» (Խաչատուր Խասապեկ): «*Արմար անմահութեան, Շառավիղէ Դաւթեան, Ծնար զանմահ արքայն, Է՛, անապական կոյս*» (Ասապով): «*Սողոմոններ հիմա էլ կան, Որդի Դավթայան՝ հազարից մեկ*» (Զիվանի):

Իսրայելյան ազգանվան հիմքը *Աստվածաշնչի Իսրայել* անունն է, իբր Իսրայելին (անձին կամ երկրին) պատկանող, վերաբերող, Իսրայելի, ինչպես նաև Իսրայելի սերունդը: *Դատարարաց* գրքում կարդում ենք. «*Եւ քաղաքի անունը իրանց հօր Իսրայէլեան Դանի անունովը՝ Դան կոչեցին...*» (ԺԸ 29): Այս իմաստներով օրինակներ կան միջնադարյան բանաստեղծության մեջ. «*Իբրև Յովսէփ Իսրայէլեան, Իշխանս մեր Միրիճանեան, Նա սովելեոց փայր զցորեան, սա քան ըզնա ազգիս պարծան*» (Հովհաննես Կարնեցի): «*Ի փան սիրելոյ իսրայէլեան դասուն...*» (Գրիգոր Նարեկացի): «*Ջընջէր նոքաւք զխաւար հոգւոց Յիսրայէլեան ժողովրդոց...*» (Ներսես Շնորհալի): «*ա, մին ազգին Իսրայելեան...*» (Կարապետ Բաղիշեցի): «*Իբրև զարին Սամսոն փանն Իսրայելեան...*» (Մելքիսեդեկ եպիսկոպոս):

Բայց **Իսրայելյան**-ը կարող է նշանակել նաև հրեական, ինչպես՝ «*Որպէս Մովսէս իսրայէլեան բանակին...*» (Հովհաննես Երզնկացի): «*Եւ նահապետքն, որ յԱդամեան, Եւ մարգարէքն Իսրայելեան...Առ ի յօրինեալ զքեզ փութան*» (Արիստակես Խարբերդցի):

Եվ վերջապես մերօրյա անվանաբանական համակարգում սա ընդհանրապես տարածված ազգանուն է:

Կիսյան ձևը բավական հաճախական է գործածվում *Սուրբ Գրքում* (19)՝ արտահայտելով հետևյալ նշանակությունները՝ 1. ած. Կիսին պատկանող, Կիսի: 2. Կիսի սերունդը:

Ըստ *Աստվածաշնչի Կիսյան*-ը Սավուղի հոր՝ Կիսի անունից է՝ «*Ձոր նուիրեցին*

Սամուէլ փեսանողն եւ **Սաւուղ Կիսեանց** եւ **Աբեններ Ներեանց** եւ **Յովաբ որդի Շարուհեայ**» (Ա Մնց. ԻԶ 28, Ա-1), Կիսի **որդի Սաւուղը** (Ա-3): Ա-2 արևմտահայերեն տեքստը, որ սովորաբար գրաբար կաղապարը փոխում է, այս դեպքում փոխում է ընդամենը շարադասությունը. «Նաև Սամուէլ փեսանողին, ու **Կիսեան Սաւուղին, ու Ներեան Աբեններին ու Շարուհեան Յովաբին նուիրած բոլոր նուէրները...**»: Բացի դա, ինչպես տեսնում ենք, գրաբարյան կառույցը՝ **Յովաբ որդի Շարուհեայ**, այս դեպքում համարժեք է գրաբարյան մյուս ձևերին՝ **Շարուհեան Յովաբ**:

Հայ միջնադարյան գրականության մեջ ունենք **Կիսեան** ձևի միայն մեկ գործածություն՝ «Աքար Զամրեան և **Սաւուղ Կիսեան...** ոչ արդարացան» (Գրիգոր Նարեկացի):

Հաբեթյան/Յաբեթեան ձևի հիմքը *Աստվածաշնչի Հաբեթ* անունն է. այն արտահայտում է տարբեր իմաստներ.

1. ած. *Հաբեթին պատկանող՝ վերաբերող*: Հաբեթյան ազգեր: «Ողբա՛, Հայաստան, փուն Թորգոմական, **ցեղիցն Յաբեթեան...**» (Գրիգոր Կեսարացի):

2. Հաբեթի սերունդը՝ «*Ձողբալի յերկիրս Հայոց, Ո՛ր են նախկին հարքն ամենայն, Գեղաշուք և ջոկափառ Պայազատ որդիք Յաբեթեան*» (Ղազար Ճահկեցի):

3. Մասնավորապես՝ հայկական, քանի որ ըստ մարաբասյան ավանդության՝ Հայկը եղել է Հաբեթի սերունդը՝ «... *Յաղագս ազգիս մեր Յաբեթեան...*» (Եփրեմ Ղափանցի):

4. Ժամանակակից հայերենում՝ ընդհանրապես ազգանուն:

Հակոբյան/Յակոբեան-ը ունի Հակոբ հիմքը՝ *Ծննդոց* գրքի Հակոբ անունից՝ իբր Հակոբին պատկանող, Հակոբի: **Հակոբյան**-ը կարող է նշանակել *Աստվածաշնչի* Հակոբի սերունդը և, ի վերջո, ընդհանրապես ազգանուն:

Բուն աստվածաշնչային տեքստերում գործածված է *Սաղմոսաց* գրքում. «...*ամենայն զաւակն Յակովբեան փառաւոր արասցեն զնա*» (ԻԱ 24), իսկ հայ միջնադարյան բանաստեղծության մեջ բազմակի կիրառություններ ենք գտնում: Ներկայացնենք դրանցից մի քանիսը՝

Գրիգոր Նարեկացի, ՄՈ, 236. «*Ի նոյն փիպ նմանութեան հովանի եղել յակոբեան փոհմին՝ ի յելսըն Եգիպտոսի*»:

Ներսես Շնորհալի, ՏԳ, 187. «Սանդուղք **Յակորբան յերկրէ** յերկինս ելից ցուպըդ Մովսեսեան ծովահերձող մեղաց»:

Գրիգորիս Աղթամարցի, Բ, 147. «Րաբունոյն դու սուրբ դիպարան, Մեզ ծառ կենաց և նոյեան փապան, Տուն Աստուծոյ, **սանդուղք Յակորբան** եւ Մովսեսի գորեղ գաւազան»:

Առաքել Սյունեցի, Բ, 193. «Վեց **օրհնութիւնք Յակորբան**, ի վրայ որդոցն երկոտասան...»:

Հեսսեյան/Յեսսէեան-ը աստվածաշնչյան Հեսսե անունից է՝ իբրև Հեսսեին հատուկ, վերաբերող, Հեսսեի:

Ըստ *Աստվածաշնչի*՝ Հեսսեն Դավիթ թագավորի հայրն է՝ Ուլբեդայի որդին (Հոթ. Դ 17, Ա Թգ. ԺԶ 1, 3, 5, 8, ԺԷ 12, 13, 17, Բ Թգ. Է 25, Մտթ. Ա 5):

Հայ բանաստեղծության մեջ այս անունը հաճախ հիշատակվում է՝ ակնարկելով նրա ազգակցական կապը Հիսուսի հետ, ինչպես՝

«Րախճանայ դրախտն Եդեմայ նոր ծառ կենաց ցնկեալ ի նմա ի՛ յաբրահամեան **Յեսսէեան արմատ** դաւթիագարմ ...» (Ներսես Շնորհալի, ՏԳ):

«Սրբոյ հոգոյն ցեղ ՚Ի Աւետարան, Որ էս **Դաւիթ որդի Յեսսէեան**, Երգես Սաղմոս ժամս ամենայն ի գիշերի և ի փունջեան » (Խաչատուր Կաֆացի, ՈԻՄԲ):

Պետրոսյան/Պետրոսեան-ը ի սկզբանե *Աստվածաշնչի Պետրոս* անունից է՝ 1. ած. Պետրոսին հատուկ՝ վերաբերող՝ պատկանող: 2. Պետրոսի սերունդը: 3. Ընդհանրապես ազգանուն նշանակություններով:

Առաքելական դասի մեջ Պետրոսը կենտրոնական է թե՛ իր խոսքով, թե՛ գործով, թե՛ հեղինակությամբ: Պետրոս առաքյալի մեծության խորհուրդը թերևս այն է, որ նա հայտարարեց, որ Հիսուսն է Մեսիան: Ըստ *Մատթեոսի Ավետարանի*՝ Քրիստոսի՝ իր աշակերտներին ուղղած հարցին, թե ով է ինքը, Պետրոսը պատասխանում է. «*Դու ես Քրիստոսն, որդի Աստուծոյ կենդանոյ*» (Մտ. ԺԶ 16): Նրա այս պատասխանը դիտվում է որպես Սուրբ Երրորդության հավատի ամենասեղմ բանաձև, քանի որ Աստված ասելով՝ Պետրոսը հասկանում է Հորը, կենդանի ասելով՝ Սուրբ Հոգուն, որդի ասելով՝ Քրիստոսին: Այս խոստովանության համար Պետրոսն արժանացավ Հիսուսի երանությանը:

Ահա թե ինչու միջնադարյան մեր բանաստեղծները ջանք չեն խնայել Պետրոսին հիշատակելու, իսկ Գ. Նարեկացին ունի նաև **Պեպրոսեան**-ով կիրառություններ. «Փոյթ պարմեալ իմոյ պեպրոսեան երամին...», «Ի ձայն բիրակերպ՝ առդինարիպ լրումն, Աւերաքարոզ՝ փրկմականաց դասուց, **Պեպրոսեան երամ՝** հրաւիրողակ բարեաց»:

Պողոսյան/Պօղոսեան ձևը տասնյակից ավելի կիրառություններ ունի *Նոր Կտակարանում* (13)՝ արտահայտելով՝ 1. ած. Աստվածաշնչի Պողոս անունից, իբրև *Պողոսին հատուկ՝ վերաբերող, Պողոսի: 2. Պողոսի սերունդը* (Գրծ. ԺԳ 13, Ա Կրնթ. Ա 12, Գ 4): 3. *Պողոս առաքյալի կողմնակից* իմաստները:

Հայ բանաստեղծության մեջ այս անվան գործածությունը հասնում է մինչև XVIII դար՝ Պաղտասար Դպիր, իսկ **Պօղոսեան** տարբերակով վկայված է երկու կիրառություն.

Գրիգոր Նարեկացի, ՄՈ. «...իբրև եհաս պարուիրանն, Ըստ **Պօղոսեան բանին...**»:

Եփրեմ Ղափանցի, ՈԻՄԲ. «Նոյնպես ի նորս Իսրայէլեան Սուր առաքեալք ևս յայտնեցան, Որպէս Սիմոն կախարդ դիւթն այն, Չարիս գործէր միշտ դիւական, սապան եղև ի մէջ Հռոմայն, Դէմ Պեպրոսի և **Պօղոսեան**, Յետոյ անկաւ գլխին վերան, Սալակեցաւ գարշելին այն»:

Մերօրյա լեզվում սա շատ տարածված ազգանուն է:

Սիմոնյան/Սիմոնեան: *Աստվածաշնչի Սիմոն* անունից՝ 1. ած. Սիմոնին հատուկ՝ պատկանող, վերաբերող, Սիմոնի (Մրկ. Ա 29, 30, Գ 16, 18, Հվի. Զ 72, ԺԳ 2): 2. Ընդհանրապես ազգանուն, ինչպես՝ «Աքար Զարմեան եւ Սաւուղ Կիսեան եւ **Յուդա Սիմոնեան** Ասելով ըզտոյն՝ ոչ արդարացան» (Գրիգոր Նարեկացի, ՄՈ, 64) :

Իսկ Ներսես Շնորհալու ստորև տրվող օրինակներում երկու իմաստային դրսևորումներն էլ առկա են.

«Սիրով խընկաբեր կանայքն փային զաւերիս Դասուն **Սիմոնեան** խըմբին. Տէրըն մեր յարեալ»:
«Երիցս երանեալ արամբք հինգ կափարելովք, **զՊեպրոս Սիմոնեանըն՝** զվէմն , Զեբեդեայ զորդիսն...» (ՏԳ, 127, 148):

Սողոմոնյան/Սողոմոնեան: *Աստվածաշնչի Սողոմոն* անունից 1. ած. Սողոմոն թագավորին հատուկ՝ վերաբերող, Սողոմոնի, ինչպես Գրիգոր Նարեկացու մակդրային

կիրառությունը՝ «Հաստատված ընդհանուր խնդիրներն են **սողունների բանիս առակի...**», նույն նշանակությամբ՝ Ե. Կոստանդնուպոլսեցին. «Մարտան արեւելի, առն ընդհան, Մեծին Սիրաքայ **տիպ Սողուններն...**»: 2. **Սողունյան վճիռ** (դրձվ.) Իմաստուն որոշում: 3. Ընդհանրապես ազգանուն:

Ջամրյան/Ջարմեան: Աստվածաշնչի **Ջամրի** անունից՝ Հուդայի որդի Ջարայի որդու անունը Գ Թգ. ԺԶ 16, Ա Մնց. Բ 6, Թ 42): 1. ած. իբրև Ջամրիին պատկանող, Ջամրիի:

Գրիգոր Նարեկացի, ՄՈ, 64. «**Աքար Ջամրեան և Սաուդ Կիսեան...** ոչ արդարացան»:

Աքար Ջարայեան: (Հս. ԻԲ 20) Ո՛չ ապարէն Աքար Ջարայեան յանցեալ յանցանս ի նզովից անտի... (աշխ.՝ Ջարայի շառավիղ Աքարը):

Ջարայան/Ջարաեան: Ըստ Աստվածաշնչի՝ Ջարա անունից, իբրև Ջարային պատկանող, Ջարայի . «**Աքար Ջարաեան յանցեալ**» (Հս. ԻԲ 20):

Սկրտիչ Նաղաշ, ՀՄԲԲ, 336. «Նայեաց եւ տես զԱքար Ջարաեան...Նա տուն որդովք քարկոծեցան , ամենըն վասն ազահութեան»:

Թորգոմյան/Թորգոմեան-ը ունի և՛ ածականի և՛ գոյականի նշանակություններ. 1. Աստվածաշնչի Թորգոմ անունից՝ իբրև Թորգոմին պատկանող, Թորգոմի: 2. Թորգոմի ազգը: 3. Ընդհանրապես ազգանուն:

Հայ բանաստեղծության մեջ բազմակի են սրանով կիրառությունները. բերենք դրանցից մի քանիսը.

Առաքել Բաղիշեցի, ՀՄԲԲ, 368. «Այսօր Պապ թագաւորն եղև տիրասպան, և ազգին հրէական եղև նա նման, Մեծին տէր Ներսէսի ետ նա դեղ մահուան, խաւար էած Հայոց տանս **Թորգոմեան...**»:

Կարապետ Բաղիշեցի, ՈՒՄԲ, հ. 1, 19. «**Սեռք և ծնունդն Թորգոմեան...**»:

Գրիգոր Կեսարացի, ՈՒՄԲ, հ. 2, 18. «Ձուարթնոց արեւելի, Էրևեալ յերկրի, Ընդ վիճակ Հայկի, **Թորգոմեան տրոմի** »:

Եփրեմ Ղափանցի, ՈՒՄԲ, հ. 2, 568. «Սոյն այս կերպիւս օրինաց բան Միշտ պարսաւեն **յազգս Թորգոմեան...**»:

Աբխտղոմյան/Աբխտղոմեան ձևը Սուրբ Գրքում գործածված չէ, բայց այդ

անվամբ հայտնի է **Աբխսողոմեան քար** դարձվածքը: Ըստ *Աստվածաշնչի* (Բ Թգ. ԺԸ 18)՝ նշանակում է Աբխսողոմ թագավորի՝ իր անունով կանգնեցրած արձանը. «*Բայց Աբխսողոմ մինչդեռ կենդանի էր կանգնեաց իւր արձան... քանզի ասաց թէ չիք իւր որդի, որ յիշեցէ զանուն նորա. եւ կոչեաց զարձան յիւր անուն, եւ կոչեաց զնա ձեռն Աբխսողոմայ մինչեւ ցայսօր*» (Ա-1): Արևմտահայերենը (Ա-2) այս դեպքում թարգմանել է **Աբխսողոմին արձանը**՝ տողատակում նշելով, որ եբրայերենում **արձանի** փոխարեն տրված է **ձեռք**: Արևելահայերենում (Ա-3) տրված է **Աբեսաղոմի ձեռակերպ**: Ըստ հունարեն բնագրի՝ *Յոթանասնիցի*, տրված է *και Χειρ Αβεσσαλωμ*, որ բառացի թարգմանվում է **Աբեսաղոմի ձեռքը**:

Հետաքրքիրն այն է, որ հայ միջնադարյան բանաստեղծության մեջ ունենք մեկ գործածություն, որում արդեն ոչ թե *ձեռք*, *արձան* կամ *ձեռակերպ* է, այլ *քար*, իսկ **Աբխսողոմեան**-ն էլ ունի սուկ մակդրային արժեք՝ պատկանելության իմաստով.

«*Ձի լիցի սա մեզ արձան գերեզմանի, ոչ ըստ նմանութեան Աբխսողոմեան քարին, այլ կենդանի ...*» (Կիրակոս Գանձակեցի, Պ, 10):

Այսպիսով՝ արդեն *Հին Կտակարանի* գրքերում ունենք ազգանվան իմաստով հետևյալ օրինակները՝ **Եղիազար Ահարոնյան**, (Ել.), **Դան Իսրայելյան** (Դտ.), **Հեսու Նավյան**, **Աքար Ջարայան** (Հս.), **Սավուղ Կիսյան** (Ա Մնց.) և այլն, որոնց մի մասը արևելահայերենում և արևմտահայերենում տրվում են սեռականով լրացում-լրացյալ կապակցություններով. այդպես է նաև հունարենում, լատիներենում, ռուսերենում:

Աստվածաշնչի գրաբար տեքստում տարբեր գրքերի բովանդակության ցանկերում **-եան/-յան**-ով օրինակներ շատ կան, ինչպես՝ **Ահարոնեանք**, **Սափիրեանք**, **Դաւթեանք**, **Յովաբեանք**, **Բորորեանք** և այլն: Բայց այդ ձևերը, կարծում ենք, հենց բուն բովանդակության հետ ավելի ուշ շրջանում են ներառվել սուրբգրային տեքստ¹⁶¹:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության ոգուն ու տառին նվիրյալ հինգերորդ դարի մեր մատենագիրները արագ ընդօրինակեցին նաև **-յան**-ով կազմությունները ու

¹⁶¹ *Աստվածաշնչի* գրքերին առընթեր նախադրությունների ու գլխացանկերի մասին կան հակասական կարծիքներ. ըստ Նորայր Բյուզանդացու՝ դրանք *Սուրբ Գրքի* թարգմանության հետ թարգմանվել են հինգերորդ դարում, իսկ ըստ Մ. Տեր-Մովսիսյանի՝ «Դրանք երբեք թարգմանված չեն եղել, այլ հանդիսանում են 13-րդ դարում ապրած եպիսկոպոս Գևորգ Սկևռացու բնօրինակ ստեղծագործություն»: Տե՛ս *Գիրք Մակարայեցուց*, նշվ. աշխ., էջ 15:

ներկայացրին իրենց շարադրանքում: Դրա վառ ապացույցը **Մամիկոնյան** ազգանունն է, ինչպես.

«Եւ եղև ի վաղիւ անդր եր հրաման Ճապուհ արքայ, ածել զառաջեալ իր զՎասակ Մամիկոնեան զգօրավարն սպարապետն Հայոց մեծաց» (Փավստոս Բուզանդ):

«Եւ ասէր ցՆիխոր Մամիկոնեան Վահան...» (Ղազար Փարպեցի):

Մեր մատենագիրները *Սուրբ Գրքից* որդեգրեցին ազգանվան մի յուրահատուկ կաղապար ևս՝ **-ացի/-եցի/-ցի** ածանցներով ազգանունները, որոնք ի սկզբանե ավելի մականուն են եղել:

Ազգանունների երկրորդ կաղապարը **-ացի/-եցի** ածանցներով տեղանուն հիմքերով կազմություններն են, որոնք բացարձակ գերիշխում են *Աստվածաշնչում*, հատկապես *Թագավորությունների* գրքերում, ինչպես՝ **Ազան Բեթելացի, Եսերոն Բեթղահեմացի, Եղան Զարուղոնացի, Հռուֆ Մովսթացի, Դովեկ Եղովմայեցի, Եման Եզրայելացի**, ինչպես նաև *Նոր Կտակարանում*՝ **Հուդա Իսկարիովթացի, Հիսուս Նազովրեցի, Պիղատոս Պոնփացի, Սիմոն Կյուրենացի, Մարիամ Մագդաղենացի, Հուդա Գալիլեացի** և բազմաթիվ այլ օրինակներ:

Այս կաղապարը սուրբգրային գրականության պատճառով խիստ տարածվեց հատկապես 5-17-րդ դարերում՝ ընկալվելով մականուն-ազգանուն:

Այս ածանցների ծագման հարցում լեզվաբանները համակարծիք են: Հ. Հյուբշմանը նշում է որ **ացի**-ն հայկական է, բայց այն ոչ թե ածանց, այլ վերջավորություն է համարում.¹⁶² բերելով **նածրացի, նազովրեցի** օրինակները¹⁶²:

Մանուկ Աբեղյանը տալիս է այս ածանցներով կազմությունների իմաստային խմբերը՝ մի տեղի բնակիչ լինելը՝ *գավառացի, աշատարակցի, տեղացի, խորենացի, փարպեցի...*, կազմում է ազգի անուն՝ *գերմանացի, իտալացի...*, մի աղանդի կամ ուսմունքի հետևող լինելը՝ *թոնդրակեցի, փարիսեցի*: Բայց չի առանձնացնում այն կազմությունները, որոնք մականուն-ազգանուն նշանակությունն ունեն, ինչպես՝ *Փարպեցի, Խորենացի, Կարնեցի* և այլն¹⁶³:

¹⁶² Տե՛ս Հ. Հյուբշման, *Հայագիտական ուսումնասիրություններ*, Երևանի համալսարանի հրտ., Եր, 2004, էջ 286:

¹⁶³ Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 228:

Ջահուկյանը սրանք համարում է հնդեվրոպական ծագման՝ ենթադրելով *-աց*-ով, *-եաց*-ով հիմքային ձևերի սեռական-տրականի հետ բաղարկություն¹⁶⁴:

Ազգանունների կազմության և առաջացման մասին խոսելիս Հր. Աճառյանը երկրորդ տեղում է դնում անձի որտեղից լինելու հանգամանքը, ինչպես՝ **Գրիգոր Նարեկացի, Գևորգ Սկևռացի, Խաչատուր Տարսնացի** և այլն¹⁶⁵:

Տիգրան Ավետիսյանը գրում է. «Միևնույն միավորին տարբեր անվանումներ տալը բխում է նրա էությունից: Հանդես գալով իբրև տարբերակիչ՝ այդ բաղադրիչները բառակազմորեն ևս բազմազանություն են հանդես բերում: Տոհմին, հայրանվանը, տեղանվանը, տիտղոսին, կոչմանը դիմելիս հետապնդվում էր մեկ նպատակ՝ անձի անհատականացում: Ինքը՝ երկրորդ բաղադրիչ կրողը, այն չէր նույնացնում հայրանուն, առավել ևս ազգանուն ըմբռնման հետ: Ծայրահեղ դեպքում այդ բաղադրիչը կոչված էր ընդգծելու կրողի հանրային վարկը»¹⁶⁶:

Այս ձևերը ենթադրում են որոշակի կաղապարներ՝

որևէ տեղանուն + -ան + -ացի,

տեղանուն + -են + -ացի,

տեղանուն + -ացի,

տեղանուն + -եցի,

տեղանուն + -ցի:

Մարիամ Մագթաղենացի/Մագդաղենացի: Մագթաղենացի անվանումը բխեցվում է **Մագդաղա** տեղանունից, որն ըստ *Նոր Կտակարանի*՝ Մագդալա (Մագդաղիա) քաղաքն է (գավառ)՝ Գալիլեայի ծովափին գտնվող: Այստեղ երբեմն բնակվել է Մարիամ Մագթաղենացին (Մտթ. ԻԷ 61, Մրկ. ԺԵ 47, ԺԶ 1-10, Ղկ. ԸԵ 2-3, ԻԴ 1-12, Հվի. Ի 1, 2, 10-18): Ասորերեն տեքստում տրվում է **Մարիամ Մաղղայթա:**

Հովսեփ Արեմաթացի/Արիմաթացի: Սա Հովսեփին տրված մականուն է՝ Արեմաթեն քաղաքի անունից, քաղաք Եփրեմի լեռան վրա, ուր ծնվել և բնակվել է Սամվել դատավորը, նաև Հովսեփ Արիմաթացին:

¹⁶⁴ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 801:

¹⁶⁵ Տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 356:

¹⁶⁶ Տե՛ս **Տ. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 42:

Ասորերենում միշտ տրվում է **յուրփ մըն ռամթա**, որ նշանակում է *Հովսեփը Ռամթայից*:

Բանաստեղծները նրան հաճախ անվանում են *Արիմաթեան*: Հարուստ, պարկեշտ, բարեգործ և արդար անձնավորություն, որը Պիղատոսից խնդրում է Հիսուսի մարմինը, զմռսում և նոր միայն դնում գերեզման (Մտթ. ԻԷ 57, Ղկ. ԻԳ 51, Հվի. ԺԹ 38-42, Մրկ. ԺԵ 43-46): Սրա գերեզմանը ցույց է տրվում Երուսաղեմում՝ Փրկչական գերեզմանի մոտ:

Գրիգոր Տղա, ԲՊ, 365. «**Յովսէփայ Արեմաթոցոյ՝ պատրոզի զաստուածային քո մարմինդ...**»:

Իսաչատուր Կեչառեցի, Բ, 163. «Շուրջ շրջապատէր **Յովսէփ Արեմաթացին...**»:

Հետաքրքիրն այն է, որ Հովհաննես քահանայի բանաստեղծության մեջ **Արեմաթացին** գործածվել է **Արեմաթայան** տարբերակով. «*Իբր զՅովսէփ արա, Արիմաթեան, Խնդրել զմարմին տէրունական* » (ՈՒՄԲ, հ1, 45):

Սոմնացի/Սողոմացի, Սունամացի: Ըստ *Աստվածաշնչի՝ Սոմնա* կամ *Սովմնա* քաղաքի անունից՝ բաղադրված **-ցի** ածանցով. **Սոմնացի**-ն միշտ ակնարկում է կնոջ. «*Մի գեղեցիկ որոնեցին Իսրայելի ամբողջ տարածքում, գտան Սոմնացի Աբիսակին* (հուն.՝ τὴν αβισακ τὴν σωμανίτιν, ասոր.՝ ܐܒܝܨܐܟ ܨܘܡܢܐܝܬܝܢ (Ավիշաղ Շիլոմայ/թա . **թա** – իգականի ցուցիչ) *ու բերեցին արքայի մոտ* » (Գ Թգ. Ա 3): «*...եւ տացէ ինձ զԱբիսակ Սոմնացի կնութեան...*» (Գ Թգ. Բ 18): «*Մերժեց Սողոմոնը Աբիսակին Սոմնացուն կնութեան տալ Ադոնիային* (Դավթի որդուն՝ Սողոմոնի եղբորը – ՓՄ) *և սպանեց նույն օրը իր ավագ եղբորը*»: Ինչպես տեսնում ենք, ակնարկվում է **Աբիսակ** անունով սոմնացի գեղեցիկ աղջիկը:

Բացի այս գործածություններից, այս անվանը հանդիպում ենք և *Երգ երգոցում*. «*Դարձի՛ր, Սոմնացիդ, դարձի՛ր, դարձի՛ր, Եւ տեսցուք մեք ի քեզ...Զի՞նչ տեսանէք ի Սոմնացիդ, որ դիմեալ գայ իբրեւ զգունդս բանակաց* »(Երգ. Զ 12): Այս նույն հատվածում Ա-2-ը ներկայացնում է **Սողոմացի** տարբերակը. «*Դարձի՛ր՝ դարձի՛ր, ո՛վ Սողոմացիդ, դարձի՛ր՝ դարձի՛ր, որ քեզ տեսնենք: Ի՞նչ պիտի տեսնէք Սողոմացիին վրայ, իբրեւ երկու բանակներու գունդը*» (Երգ. Զ 13): Փաստորեն ներկայացվում են միևնույն անձի երկու անվանումներ՝ **Սոմնացի/դ/** և **Սողոմացի/դ/**: Մեր ձեռքի տակ

եղած երկու *Աստվածաշունչ* գրքերն էլ հրատարակվել են Կոստանդնուպոլսում. **Սողոմոնացի** տարբերակը՝ 1890թ. (Ա-2), և **Սոմնացի** տարբերակը՝ 1895թ. (Ա-1): 1890թ. հրատարակության մեջ **Աբիսակ Սոմնացին** ներկայացվում է **սունամացի**՝ Սունամ քաղաքի անունից (Տե՛ս ԲՍԳ, 514, Սունամ): Մեզ թվում է՝ անվան նախնական և ճիշտ ձևն է **Սողոմոնացի**-ն, որը **Սողոմոն** անվան այսպես ասած իգական ձևն է, և միանգամայն տրամաբանական է Սողոմոնի սիրելի կնոջը այդպես անվանելը: **Սոմնացի** ձևը պետք է բխեցվի ոչ թե **Սոմնա**, **Սովմնա** կամ **Սունամ** քաղաքների անուններից, այլ հենց **Սողոմոնացի** ձևից՝ որոշակի հնչյունափոխությամբ:

Սոմնացի անվան հունական տառադարձությունն է **Սուլամիթ**, իսկ ասորերեն տեքստը տալիս է անվան *Շիմոնայա* ~~Շիմոնայա~~ տարբերակը:

Փարիսեցի: Ըստ Աստվածաշնչի (Մտթ. Ե 20, Թ 11, 14, 34, ԺԲ 2...)՝ Հուդայի որդու՝ Փարեսի անունից. հրեական ցեղ, կրոնական դաս, որոնք խիստ տարբերվում էին իրենց վարդապետությամբ, օրինապահությամբ, տարազով: Սրանք շատ ավելի խստակյաց և օրինապահ էին, քան սովորական մարդիկ: Բայց Քրիստոսի քարոզչության ժամանակ իրենց առավել կեղծավորության և շողոքորթության համար հանդիմանվել են Հովհաննես Մկրտչի կողմից :

Փարիսեցի անվան մեկնության շուրջ հետաքրքիր փաստեր է բերում ԱԱՄ-ն. «Փարիսեցի բառը, թեև մեկնած (Մտթ. Գ 7), այլ արդի գիտնականներեն կարծողներ կան, թե այդ բառը **Փարսի**, այսինքն **Պարսիկ** բառէն ծագած է: Սորա կը փաստաբանեն, թե այն Հրեայներն, որք վերադարձան Պարսկաստանէն և վերստին հաստատուեցան Հրէաստանի մէջ, անուանեցան **Փարիսեցի**, վասն զի էին հետեւող Զրադաշտեան կրօնի, զոր Փարսիք կընդունէին, եւ ցայժմ իսկ կայ **Փարսի** ժողովուրդ մը ի Հնդկաստան, որ այդ կրօնին դաւանող է: Արդ՝ որովհետեւ Զրադաշտեան կրօնը, թէւ ընդ աղօտ, կընդունի Երրորդութեան խորհուրդը եւ կը վարդապետէ կուսէն Ծնունդը եւ մեռելոց յարութեամբ վերջին դատաստանը եւ այլն, ուրեմն Փարիսեցիք եւ Պարսք չէին իրարմէ այնքան հեռի դաւանակիցներ, եւ Սաղուկեցիք, որ կատէին Փարիսեցիները, զնոսա Փարսի, այսինքն Փարիսեցի անուանելով՝ նախատած կըլլային...» (ԱԱՄ, 187-188):

Մովաբացի-ն Հոթ. Դ 10-ում մականուն է. «Նա եւ զՀոութ **Մովաբացի** (ասոր.՝

Ռըօթ մուսուլայթա՝ մովարացի), զկին Մաալոնայ ստացայ ինձ կնութեան»:

Ազան-ի մականունն է **Բեթելացի** (Հս. Չ 26):

Եգիպտացի-ն դարձել է մականուն Յննդոց գրքում. «...**զԱզար Եգիպտացի** զաղախին իւր», (ասոր.՝ **Հազար մըսրայթա**):

Ասորի-ն նոյն ձևով որպես մականուն է գործածվում Ծն. ԻԲ 21, ԻԵ 20-ում. «... զդուստր **Բաթուէլի Ասորոյ**», 21, ԻԸ 2, ԼԱ 22-ում. «... առ **Լաբան Ասորի**» (ասոր.՝ **Լաբան արամայա**):

Եղիազար **Դամասկացի**-ն գործածված է Ծն. ԺԵ 2-ում (ասոր.՝ **Էլիազար դարմսուկայա**):

Սրանք այն մականուններն են, որոնք հետագա ժամանակներում ևս մնում և գիտակցվում են տվյալ անձի համար իբրև մականուն կամ ազգանուն:

3.3. Հատուկ անունների թարգմանական փարբերակները

Աստվածաշունչ գրքերում

Աստվածաշնչի, մասնավորապես *Հին Կտակարանի* գրաբար և արևելահայերեն թարգմանություններում (Ա-1, Ա-3) եբրայական բազմաթիվ անուններ տրվում են հայերեն թարգմանված: Արևմտահայերեն բնագրում (Ա-2) թարգմանություններ հազվադեպ են հանդիպում. տրվում են տվյալ անունների եբրայական ձևերը:

Հատկապես *Հնգամատյանում* մեզ հանդիպում են բազմաթիվ տեղանուններ, որոնք թարգմանված են: Թվարկենք դրանց մի մասը՝ **Արմավենիների քաղաք** (Երիքով), **Արեգ քաղաք** (Օն, Հելիոպոլիս), **Անդորրություն** (Ռոբովթ), **Գերեզման քաղաք** (Համոնա), **Քաջաց քաղաք** (Գեսեմ), **Աշտարակ հողի, Արեգ աղբյուր** (Բեթսամիուս), **Ագարակ/գյուղ արյան** (Ալեդղամայ), **Բանակս, Բևեկնի ձոր** (Էլ Փառան), **Բլուր Աստծու, Դաշտ մեծ, Դաշտք մայրյաց, Դառնություն** (Մեռա), **Դադաստանի աղբյուր, Դուռ Անկյան, Դուռ ձորի, Անտառ ազգաց** (Արիսոթ), **Թշնամություն** (Սիդնա), **Լալոնք/Անտառ լալոնից** (Բոքիմ), **Խորանք** (Սոկքովթ), **Խրամ** (Մելոն), **Խրամապից** (Բաաղփարահն), **Ծնոտ** (Լեքի), **Կոտորած ծնոտի, Ծով աղի, Ծով արաբացվոց, Ծով արևելից, Ծով առաջին, Ծով աղտից, Ծով ասփալտի/կուարի** կամ **նավթի, Ծով մեծ, Կաղնի բարձր, Կաղնի սգո, Հանգրվան** (Եպիրովթ), **Հեղեղապ արևմտից, Հովիտք** (Ելա), **Հովիտ աղտից** (Գաբելեմ), **Հովիտ թագավորաց** (Շավե), **Հսկաների հովիտ, Հովիտ Տիտանաց** (Ռափայնոց), **Ձիթենյաց լեռ, Ողկույզի ձոր** (Եսքոդ), **Վիճակաց ձոր** (Ռափայնոց), **Ձոր կոտորածի, Ձոր դադաստանի, Ճամբար այլազգաց, Երդման ջրհոր** (Բերսաբեե), **Վեմ մեծ, Տափարակ, Նամակաց աղբյուր** (Ենգանիմ), **Նամակաց քաղաք** (Կարիաթ Սեփեր), **Ջրբուխ աղբյուր, Ջառիթափ** (Եթլոն), **Լեռ** (Հովր), **Փորձություն** (Մասսա), **Բամբասանք** (Մերիպա) և այլն:

Հայերեն տեքստերում այս անունների տարբերակային ձևերը, համեմատելով եբրայերեն, հունարեն, ասորերեն, լատիներեն, ռուսերեն տեքստերում տրված ձևերի հետ, կարելի է պարզել՝ հատուկ անունը ներկայացնել հունարեն կամ ասորերեն տեքստերի՞ց են ընդօրինակել հայ թարգմանիչները, թե՞ դա եղել է մեր

թարգմանիչների նախաձեռնությունը, և ո՞րն է եղել նման մոտեցման պատճառը:

Մենք նախորդ գլխում արդեն խոսել ենք այն մասին, որ *Հին Կտակարանը* հագեցած է հատուկ անունների բառարանային-բացատրական մեկնություններով, ինչպես՝ **Դան** – Ծն. Լ 7. «*Եւ Ռաբէլն ասեց. Աստուած ինձ դատաստան արաւ եւ իմ ծայնն էլ լսեց, եւ ինձ որդի տուաւ, նորա համար նորա անունը Դան (դատաստան) դրաւ*» (Ա-3):

Եվ այս բացատրություն-մեկնությունը դառնում է հատուկ անունների ստեղծման կարևոր հիմքերից մեկը: Տրվում է անունը, որը բառային իմաստ է պարունակում, այդ իմաստը տրված, բացատրված է հենց եբրայերեն բնագրում: Թարգմանիչը հարազատ մնալով բնագրին՝ ներկայացնում է թարգմանության մեջ և՛ անունը, և՛ անվան մեկնությունը, այսինքն՝ չի աղավաղում բնագիրը: Ընդ որում, նա, եբրայերենին քաջատեղյակ լինելով, կարող է կա՛մ միայն անունը տալ՝ գիտակցելով, որ դա հատուկ անուն է՝ չկարևորելով անվան հիմք-մեկնությունը, կամ տալ թե՛ անունը, թե՛ այդ անվան մեկնությունը: Հարցը ավելի է բարդանում տեղանունների դեպքում, քանի որ այս պարագայում եբրայական ձևը իսպառ վերանում է, և տրվում է լավագույն դեպքում տեղանվան հայերեն թարգմանությունը, իսկ հաճախ էլ հատուկ անունն իսպառ վերացել է, այն տրվել է որպես հասարակ անուն: Կարծում ենք՝ նաև այս մոտեցումն է պատճառը եբրայական բնագրի աղավաղման: Այսինքն՝ ոչ միայն եբրայերեն, այլև թե՛ հունարեն, թե՛ ասորերեն տարբեր տեքստերում մե՛կ տրվել են միայն հատուկ անունները, մե՛կ և՛ անունը, և՛ մեկնությունը միաժամանակ, և կամ միայն մեկնությունը, այն էլ հավելումներով ու սրբագրումներով՝ կախված թարգմանչի լեզվական իմացությունից¹⁶⁷: Եթե սրան ավելացնենք նաև այն առանձնահատկությունը, որ հին եբրայերենը չունի մեծատառեր, և *Հին Կտակարանի* եբրայերեն բնագրի հատուկ անունները թարգմանչի համար շատ հաճախ ընկալելի չէին որպես այդպիսիք, ապա պարզ կարող է դառնալ հենց միայն հատուկ անուններում այսքան տարբերումներն ու աղավաղումները:

Այսպես՝ *Ծննդոցի* ԻԲ գլխում, երբ Աբրահամը որդուն զոհաբերելու պատրաստա-

¹⁶⁷ Շահե վարդապետ Անանյանը իր *Անձնավորված իմաստության գաղափարի առաջացումն ու զարգացումն ըստ Առակաց գրքի Ա-Թ-ի* գրքում նշում է, որ եբրայական բնագրի և *Յոթանասնիցի* տարբերություններն *Առակաց գրքի* պարագայում ոչ միայն լեզվական, քերականական են, այլ նաև կառուցվածքային, և բերում է մի օրինակ՝ ըստ որի «Առ. Լ 1-ում և ԼԱ 1, 4-ում առկա հատուկ անունները (ընդհանուր հաշվով յոթ՝ Ագուր, Լեմուել՝ 2 անգամ, Յաքե, Իթթիել՝ 2 անգամ, և Ուքքալ) Յոթանասնից թարգմանչի գրչի տակ անհետացել են»: Տե՛ս նշվ. աշխ., Ս. Էջմիածին, 2014, էջ 33:

կամության համար Աստու շնորհին է արժանանում, այդ վայրն անվանում է **Եհովայիրե**: Ա-2-ը այդ անունը տալիս է՝ հարազատ մնալով եբրայական ձևին. «Եւ Աբրահամ ան տեղի անունը **Եհովայիրե** կոչեց, որ մինչեւ այսօր կըսուի, **Տէրը լեռան մէջ պիտի երևնայ**» (Ծն. ԻԲ 14-15): Մինչդեռ Ա-1 և Ա-3 գրքերում տեղանունը բառացի թարգմանված է ներկայացվում. «Եւ կոչեաց Աբրահամ զանուն տեղոյն այնորիկ **Տէր երես**. զի ասիցեն ցայսօր», «Աբրահամն այդ վայրի անունը դրեց «**Տէրը տեսաւ**», եւ մինչեւ այսօր էլ ասում են՝ «Այդ լեռան վրայ **երեսաց Տէրը**»: Թարգմանված տարբերակը գալիս է և՛ հունարենից՝ **Κύριος εἶδεν**, և՛ ասորերենից, քանի որ *Պեշիթայում* տրվում է թարգմանաբար՝ **Տէրը կտեսնի** կամ **կերևա**: Լատիներենում դարձյալ տրված է թարգմանաբար՝ *Dominus videt, Dominus videbit*: Ի դեպ ասենք, որ գրաբար և արևելահայերեն գրքերը հետևողականորեն **Եհովա** անվամբ բաղադրված տեղանունները, որպես կանոն, տալիս են թարգմանաբար, ինչպես՝ **Եհովանիսի** – *Տերը իմ դրոշակն է*, **Եհովաշալոմ** – *Տերը խաղաղություն է*, **Եհովաշամա** – *Տերն այնտեղ է*, **Յովարիբ** – *ում պաշտպանում է Եհովան*, **Եղիովենան** – *Եհովայի պարգև, շնորհ և այլն*, կամ անուններն աղավաղվում են, որի հետևանքով նմանությունը բուն անվան հետ հաճախ կորչում է, այսպես՝ **Յովարիբ - Յարիբ, Եղիովենան - Ելիովե**:

Գ. Գասպարյանը «Հայ բառարանագրության պատմության» մեջ¹⁶⁸ գրում է. «Հրեաների մոտ անուններն իմաստավորված էին, նրանք երբ գործ էին ածում **Ակեղդամայ**, հասկանում էին **արյան գյուղ**, և կապում Քրիստոսի արյան գնով (Հուդայի ստացած 30 արծաթը) ձեռք բերած գերեզմանատեղին, **Սառա** – իշխանուհի և այլն, **Իսկ փոխառնող լեզուներում այդ բառերը զրկվում էին իմաստավորումից** (ընդգծումը մերն է - ՓՄ)» (էջ 26): Մենք այս հարցում համամիտ չենք հեղինակի վերջին մտքին և ուզում ենք ընդգծել հատկապես այն հանգամանքը, որ անունները թարգմանելու միտումը խոսում է հենց այն մասին, որ գրաբար բնագիրը շատ հին է, այսինքն՝ թարգմանական ավանդույթ չի եղել, եղել է սուկ *Սուրբ Գրքի* անաղարտ, պարզ վերարտադրում մեկ այլ լեզվով. որքան բնագրին հարազատ, այնքան ճիշտ: Ահա այդ պատճառով էլ հաճախ նկատվում է հատուկ անունները թարգմանելու միտում: Իսկ թարգմանաբար տրվել են հատկապես տեղանունները: Անձնանունները,

¹⁶⁸ Տե՛ս Գ. Գասպարյան, *Հայ բառարանագրության պատմություն*, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիա, Եր., 1968, էջ 5-563:

որպես կանոն չեն թարգմանվել. բացառություն է **Եվա** անձնանունը, ուստի նախ խոսենք այդ անվան մասին:

Թարգմանիչները գրաբար տեքստում (Ծն. Գ 20) տվել են ոչ թե **Եվա**, այլ այդ անվան բառացի նշանակությունը. «*Եւ կոչեաց Ադամ զանուն կնոջ իւրոյ Կեանս* (նույն ձևով՝ թարգմանաբար տրվում է հունարենում՝ **Ζωή**, որ է՝ *կյանք*¹⁶⁹), *զի նա է մայր ամենայն կենդանեաց*»: Այդ նույն ձևով է տրվում արևելահայ տարբերակում, մինչդեռ արևմտահայերենում պահպանված է եբրայական **Եվա** տարբերակը (ասոր.՝ ܐܘܘܗܘܘܐ, լատ.՝ Hava): Զարմանալին այն է, որ *Աստվածաշնչի* և ոչ մի լեզվով թարգմանություն (բացի հունարեն)՝ արամերեն, ասորերեն, լատիներեն, ռուսերեն և գերմաներեն, **Եվա** անունը չի տվել թարգմանաբար՝ ըստ իր **կյանք** բառացի նշանակության: Սա, ինչ խոսք ցույց է տալիս, որ հայ թարգմանիչները հետևել են *Յոթանասնից* բնագրին, սակայն դա չի նշանակում, որ բոլոր անունների դեպքում է այդպես¹⁷⁰:

Հին Կտակարանում առկա առաջին իսկ տեղանունը **Եդեմ** (հուն՝ **Εδέμ**) է¹⁷¹, որը գրաբար բնագրի *Ծննդոց* գրքի Բ գլխում արդեն տրվում է **Եդեմ** անվան բառացի՝ **փափկություն** իմաստով. «*Եւ առ Տէր Աստուած զմարդն զոր արար, եւ եդ զնա ի դրախտին Փափկութեան գործել զնա եւ պահել*» (Ծն. Բ 15-16): Նույն ձևով գործածված է *Ծննդոցի* Գ 23-24-ում. «*Եւ եհան արծակեաց զնա Տէր Աստուած ի դրախտէ անտի փափկութեան՝ գործել զերկիր ուստ առաւ*»: Ա-2-ը նշված գլուխներում պահում է եբրայական տարբերակը՝ **Եդեմ**: Ա-3 տարբերակը հետևում է գրաբարին, բայց **փափկություն** փոխարեն նշված տեղերում դնում է **բերկրության** ձևը. «*Տէր Աստուած իր ստեղծած մարդուն տեղաւորեց բերկրության դրախտում*»: Ասորերեն տեքստում՝ *Պեշիթա*, բոլոր դեպքերում տրվում է **Ադեմ (Ըդըն)**:

Փաստորեն՝ գրաբար թարգմանության մեջ (Ա-1) դրվել է մե՛կ **Եդեմ** (Ծն. Բ 8, 10), մե՛կ **Փափկություն** (Ծն. Բ 15-16, Գ 23-24), արևմտահայերեն տեքստը բոլոր դեպքերում

¹⁶⁹ Տե՛ս *Греческо-русский словарь Нового Завета*, перевод греческо-английского словаря Нового Завета Баркли М. Ньюмана, М., 1997, էջ 99:

¹⁷⁰ Մենք հակված ենք կարծելու, որ մինչ այժմ անհայտ է հայերեն առաջին թարգմանության նախահիմք օրինակը կամ օրինակները, և չենք կարող վստահաբար ասել, թե այդ թարգմանված տարբերակները ինչի հետևանք են՝ հայ թարգմանիչների սեփական նախաձեռնությա՞ն, հունարենից ընդօրինակմա՞ն, թե՞ բոլորովին այլ մի բնագրի կամ բնագրերի առկայության, որոնք առայժմ մեզ անհայտ են:

¹⁷¹ Այս անվան մասին խոսվում է նաև *Հին Կտակարանի իբրև հատուկ անունների սկզբնաղբյուր* գլխում:

պահել է **Եդեն** (Ա-2), արևելահայերեն թարգմանության մեջ (Ա-3)՝ կա՛մ **Եդեն**, կա՛մ **Քերկրություն**: Ի՞նչ տարբերակներով է տրվում այս անունը հունարեն բնագրում: *Յոթանասանից*-ի *Ծննդոց* Բ 8-ը տալիս է **Էδέμ**, Բ 15-ում միայն նշվում է *դրախտում-παράδεισον*, և միայն Գ 23-24-ում տրվում է ἐκ τοῦ **παραδείσου** τῆς **τροφῆς** կապակցությունը, որտեղ առկա **τροφή** բառը հունարեն-ռուսերեն բառարանը բացատրում է երկու նշանակությամբ. 1. роскошь, наслаждение, 2. распущенность ¹⁷²: *Վուլգատա*-ն անունը տալիս է դարձյալ թարգմանաբար՝ *paradiso voluptatis*, ընդ որում ոչ միայն Ծն. Բ 15-16-ում, այլև հենց Բ 8-ում, ապա նաև Գ 23-ում: Ավելացնենք նաև, որ նաև Եսայու, Եզեկիելի մարգարեություններում հայերեն տեքստերում առկա *Եդենի* փոխարեն լատիներենը տալիս է *փափկության պարտեզ*: *Ծննդոց*-ի Դ 16-ում առաջին անգամ տրվում է *Եդենի* լատիներեն՝ **Eden** տարբերակը:

Նշված փաստերը մեզ համար կարևորում են մի էական հանգամանք. *Եդենը Աստվածաշնչում* հիշատակվող առաջին տեղանունն է, և եբրայերեն բնագրում անվան իմաստը ընկալելու խնդիր չկար, իսկ հունարենում, ասորերենում, լատիներենում կամ հայերենում թարգմանչի կողմից տեղանունը թարգմանաբար է ներկայացվել: Իսկ որ թարգմանվել է, դա նշանակում է հնագույն տարբերակի առկայություն, երբ առաջին թարգմանիչները (հայ, հույն, լատին թե ասորի) չունեին թարգմանական փորձ և հմտություն, չկար ավանդույթ, որի հետևանքով էլ բազմաթիվ հատկանուններ մեխանիկորեն թարգմանվել են՝ տեղիք տալով տարակարծությունների:

Ելնելով *Աստվածաշնչի* տեքստից՝ կարելի է այլ հետևություն էլ անել: *Ծննդոց*-ի Բ 8-ում կարդում ենք. «*Եւ փնկեաց Աստուած զդրախտն՝ յԵդեն ընդ արեւելս, եւ եդ անդ զմարդն զոր ստեղծ»* (Ա-1): Նույն նախադասությունը Ա-2-ում՝ «*Եւ Տէր Աստուած արևելքին կողմը Եդենի մէջ պարտեզ փնկեց ու իր շինած մարդը հոն դրաւ*»: Այնուհետև Բ 15-ում դարձյալ նշվում է, որ «*...առաւ մարդը ու Եդենի պարտեզին մէջը դրաւ*»: Ա-2-ի այս ձևը՝ **Եդեն**, համապատասխանում է եբրայերենին, ուր դարձյալ տրվում է *Եդենի պարտեզ*: Այսինքն՝ *Եդենն* ու *պարտեզը* տարանջատվում են, Եդենի մեջ Աստծու կողմից ստեղծվում է պարտեզ, որն արդեն գրաբար թարգմանության մեջ, ճիշտ *Յոթանասանից*-ի, *Վուլգատայի* պես տրվում է **փափկության դրախտ**

¹⁷² Տե՛ս *Греческо-русский словарь Нового Завета*, էջ 213:

թարգմանված տարբերակով: Ըստ այդմ էլ տարբեր աղբյուրներ **Եդեմ** անվան իմաստը տարբեր կերպ են բացատրում: Ըստ ՆԲՀԼ-ի՝ *Եդեմ* կամ *Ադին//Ադեն* բառերի նշանակություններն են *փափկություն, գրգանք, զվարճություն, վայելք*¹⁷³:

Ասրվածաշնչի հայերեն թարգմանական երեք տեքստերում էլ՝ Ա-1, Ա-2, Ա-3, հատուկ անունները տրվում են տարբեր ձևերով: Ասենք ավելին. եբրայական բնագրում առկա տեղանունը հայերեն տեքստում դարձել է հասարակ անուն, և սովորական ընթերցողը չի կարող ենթադրել, որ տվյալ հատվածում եղել է բնագրային հատուկ անուն:

Վերցնենք **Չառիթափ** անունը, որը համարժեքն է եբրայական **Եթ/դ/ոն** տեղանվան: Այն գործածված է *Եզեկիելի* գրքի ԽԸ գլխի 1-ին հատվածում (հուն.՝ **τῆς Καταβάσεως՝ զառիթափ**, լատ.՝ *Aethlon*, ասոր.՝ **ܐܝܠܘܢ ܚܘܪܝܐܢܢ**, ռուս.՝ *Хетлон*):

Գրաբար տեքստը մեզ հրամցնում է *զառիթափ* տարբերակը փոքրատառով. «...ըստ կողման **զառիթափին**, որ զափանէ ընդ մուրս **Եմաթու**»՝ տողատակում նշելով եբրայական տեքստը. «*առ ճանապարհան Եթոնայ յԵմաթ*»: Արևելահայերեն տարբերակում ևս տրվում է **զառիթափ**, միայն արևմտահայերեն տարբերակում պահված է եբրայերեն տեղանունը. «*Հիսիսի ծայրէն՝ Եթոնի ճամբուն քովը դէպ ի Եմաթ*»: Ինչպես նկատում ենք, տեքստում չի տրվել բուն եբրայական անունը, մինչդեռ բնագրից հստակ ընկալվում է անվան տեղանուն լինելը: Մասնագիտական բառարանները նշում են, որ Եթոնը Պաղեստինի հյուսիսային քաղաքներից մեկն է¹⁷⁴: Բայց հակասությունն ավելի է խորանում ԲՅԱ-ի փաստարկով, ըստ որի՝ նույն այս անունը առկա է նաև Թվոց գրքի ԼԴ գլխի 7-8-րդ հատվածում այս անգամ արդեն **Լեռ** տարբերակով. «... ի մեծէ ծովէն չափեսջիք ձեզ **լեառն լեռնայն** (Ա-1, ՄՍԱ)՝ դարձյալ տողատակում բերելով ըստ եբրայականի՝ «...մինչեւ **ցլեառնն Հովր**»: Բառացի մեջբերենք. «*Չառիթափ... Այս բառ է հայերէն, որով նշանակի զառիվայրն: Բայց Եզեկ. 48. 1* իմանի զառիվայրն այն, որ էր ի սահմանի երկրին աւետեաց ընդ հիսիսակողմն, և ընդ արևմուտս կոյս: Եւ էր մի ի լեռանցն Լիբանանու, որպէս կարծեն ոմանք, և նոյն,*

¹⁷³ Տե՛ս *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 1-2, Եր., 1998:

¹⁷⁴ Տե՛ս *Энциклопедия Библейская*, էջ 694:

որ Թու. 34. 7 գրի՝ **լեռն լեռնային**. և կոչի այսպէս վասն կարի բարձրութեան»¹⁷⁵: Բայց այս անունները ինչո՞ւ պետք է նույն գլխաբառի տակ հայտնվեին, մնում է անհասկանալի, քանի որ *Թվոց* գրքում թեև հայ թարգմանիչները դրել են միայն **Լեռ**, բայց թե՛ տողատակից, թե՛ արևմտահայերեն բնագրից պարզ է դառնում, որ խոսքը **Հովր լեռան** մասին է (հուն.՝ τὸ ὄρος՝ փոքրատառ գրությամբ, ասոր.՝ ܟܘܪܐ ܠܗܘܪܐ, ռուս.՝ **Օր**): Մեծ է այս լեռան խորհուրդը *Սուրբ Գրքում*. Աստծու կամքով Ահարոնը բարձրացավ այդ լեռը և վախճանվեց հենց այդ լեռան վրա:

Մի այլ հետաքրքիր օրինակ հանդիպում է Հեսուի գրքում՝ **Ակնասովր / Ակնասոր** (ՄՍԱ). «Եւ Կաղէս եւ Եդրային, եւ **Ակնասովր... քաղաքք**» (ԺԹ 37), (Ա-2- ում՝ **Են-հասոր**): Ինչպես նկատում ենք, բառի կեսը հայերեն է, կեսը՝ եբրայերեն, եբրայերենում գրվում է **Են Ասոր**, որ թարգմանվում է **աղբյուր** կամ **ակն ասովրայ**: Սա եղել է Նեփթաղիմի ցեղի քաղաքի անուն. անվան համարժեքն է **Եդրային**-ը: Արևմտահայերեն տարբերակն է **Են-հասոր**, արևելահայերեն՝ **Ակնասոր**, հունարեն՝ και πηγῆ (աղբյուր) **Ասոր**, լատիներեն՝ Nasor, գերմաներեն՝ En-Hazor, ասորերեն՝ ܟܘܪܐ ܠܗܘܪܐ **Սոր**, ռուսերեն տեքստում՝ Ен-Гаѡор: Ինչպես տեսնում ենք, գրաբար տեքստը ուղղակի աղերսվում է հունարենին:

Ծննդոց գրքի ԻԶ գլխում թարգմանաբար տրվում են ջրհորների մի քանի անուններ՝ **Ջրկում, Թշնամություն, Անդորություն, Երդման**, որոնք դառնում են Իսահակի և փղշտացի հովիվների փոխհարաբերության անվանական դրսևորումներ: Բայց ի՞նչն է էական այս դեպքում. այն, որ աստվածաշնչյան այդ անունները մեր թարգմանություններում՝ գրաբար, արևելահայերեն և արևմտահայերեն, տարբեր կերպ են թարգմանված՝ **Էսեք** (ասոր.՝ **Ասկա**) – **Ջրկում, Կոիվ, Անիրավություն, Սիդնա**¹⁷⁶ – **Թշնամություն, Ռորովթ - Ընդարձակություն, Անդորություն, Բերսաբեե – Երդման ջրհոր**¹⁷⁷:

Ծննդոց գրքի ԻԶ 20-ում կարդում ենք. «Եւ մարտնչէին հովիվքն Գերարացոց

¹⁷⁵ Տե՛ս *Բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 2, 1769, *Բառարան յայտուկ անուանց Աստուածաշունչ գրոց Հին եւ Նոր կտակարանաց* (ԲՅԱ), էջ 95:

¹⁷⁶ НЖБ- ն *Սիդնա* անվան արմատը նույնացնում է *սափանա* բառի հետ և իմաստը բացատրում որպես՝ *ожесточенная вражда*, էջ 5:

¹⁷⁷ Գրաբար, արևելահայերեն և հունարեն տարբերակները տալիս են *Երդման ջրհոր*, իսկ արևմտահայերեն, ռուսերեն տարբերակները՝ **Բերսաբեե**:

ընդ հովիան հսահակայ, եւ ասէին, թէ իւրեանց իցէ ջրհորն. եւ կոչեաց զանուն ջրհորոյն **Ջրկումն**, քանզի **զրկէին** զնա»: Ա-2 արևմտահայերեն թարգմանության մեջ տրվում է եբրայական **Էսեթ/կ** տարբերակը, որը տողատակում բացատրվում է իբրև **կոհվ**: Արևելահայերեն տարբերակում այլ հիմնավորմամբ այլ անուն է տրվում. «Նրանք ջրհորը կոչեցին **Անիրաություն** (հուն.՝ *ἀδικία-անիրավություն*, գերմ.՝ Esek (Streit)), քանի որ նրա հանդէպ **անիրաություն էին գործել**»: ԻԶ 21-ում արդեն մեկ այլ ջրհոր հսահակն անվանում է *Թշնամություն*: Հունարենում տրվում է *էչթրիա*, որ է՝ *թշնամություն*⁷⁸, լատիներենում՝ Inimicitias, գերմաներենում՝ Sitna (Zank): Ծննդոց ԻԶ 22-ում տրվում է երրորդ ջրհորը. սա արդեն՝ **Անդորրություն** անվամբ եբրայական **Ռոբովթի** փոխարեն. «Չուեաց անտի եւ փորեաց այլ ջրհոր, եւ ոչ մարտնչէին վասն այնր, եւ կոչեաց զանուն նորա **Անդորրություն**, ասէ. Չի այժմ **ընդարձակեաց** մեզ

Տէր, եւ աճեցոյց զմեզ յերկրի»: Այս դեպքում հունարենը տալիս է *Էսթրախորիա* – **Ընդարձակություն**, լատիներենում՝ *Latitudo*, ասորերենում՝ ܠܝܬܘܬܐ *Ռախրոթ*, գերմաներենում՝ **Rehobot** (Weite) ռուսերենում՝ անվան եբրայական *ձևը* **Реховоф** (HЖБ):

Հայերեն տարբերակներից միայն Ա-2-ը չի թարգմանում և անունը թողնում է նույնը՝ **Ռոբովթ**. «եւ անոր անունը Ռոբովթ դրաւ՝ ըսելով. Քանզի հիմա Տէրը մեզ **ընդարձակեց...**»: Իսկ *Ռոբովթ*-ը թե՛ ըստ ԲՅԱ-ի (էջ193), թե՛ ըստ օտար աղբյուրների՝ նշանակում է «*ընդարձակությունը կամ հրապարակը*», այնպես որ Ա-1 և Ա-3 գրքերը, կարծում ենք, այս դեպքում ճիշտ չեն թարգմանել անվան իմաստը, մանավանդ այն դեպքում, երբ եբրայական բնագիրը ուղղակի հուշում և հիմնավորում է անվան բացատրությունը, իսկ հունարեն և ասորերեն տեքստերի հետ համեմատելիս հաստատվում է **Ընդարձակություն**-ը:

Մեկ այլ օրինակ բերենք, որը ցույց է տալիս գրաբար բնագրի կապը *Յոթանասնիցին՝ Ծնոյր* (հուն.՝ *σιαγών*, ասոր.՝ ܦܘܪܦܐ *Փարբա*, լատ.՝ *Maxilla* – **Աղբիրն ծնօրի**) **Ողղ սιαγόνος**, լատ.՝ *Fons maxilla*, **Ծնօրի կոտորած** (*τραυμα* – *վնասվածք* *տից սιαγόνος*, լատ.՝ *elevatio Maxillae*):

⁷⁸ *Энциклопедия Библейская* – ն (էջ 215) տալիս է այս գլխաբառը և ստուգաբանում իբրև *կոհվ (սոր)*, HЖБ-ն *Էսեթ*-ը տողատակում բացատրում է իբրև *тяжба* (դատավեճ), էջ 51): Հետաքրքիր է նաև այն, որ եբրայերենում անունը բացատրվում է որպես *գործ, զբաղմունք, աշխատանք*:

Դատարարների գրքի ԺԵ 19-20-ում, Սամսոնի քաջագործությունների նկարագրության մեջ խոսվում է մի քանի տեղանունների մասին, որոնք բոլորը կապվում են **Ծնոպ** անվանմանը (անունը կապվում է էշի ծնոտի հետ, որն իր ձեռքն է վերցնում Սամսոնը և կոտորում թշնամիներին). «*Եւ եբաց Տէր զծակ Ծնօպին, եւ ել ի նմանէ ջուր, եւ արբ. եւ դարձաւ ոգի իւր առ ինքն եւ զովացաւ. վասն այնորիկ կոչեաց զանուն նորա Աղբեր անուանեալ Ծնօպի* (տղտ.՝ եբր.՝ Այնգորէ (որ նշանակի **Աղբիւր կոչողին**) մինչեւ ցայսօր»։ Գրաբար տեքստի այս անվանումները նույնությամբ կրկնում է Ա-3-ը՝ «*եկավ նա Ծնոպ կոչված վայրը*» (ասոր.՝ *Լիսի*, ռուս.՝ *Лехе*, գերմ.՝ *Lehi* (14), «*Եւ երբ իր խոսքը վերջացրեց, ծնօպը ձեռքից զցեց և այդ վայրը անվանեց Ծնօպի կոչորած* (17), ասոր.՝ **Ծնօպի արյուն**, «*Եւ Տերը Ծնօպ կոչվող վայրում մի անցք բացեց, նրանից ջուր դուրս եկավ, նա խմեց, ոգի առավ և զովացավ. այդ պատճառով դրա անունը դրեց Ծնօպի աղբյուր*» (19)։

Ա-2 արևմտահայերեն տեքստում բերվում է **Լեբի**՝ «*Երբոր անիկայ մինչև Լեբի եկաւ* (14), «*եւ ան տեղին անունը Ռամաթ լեբի կոչեց*»՝ լուսանցքում տալով դրա թարգմանական տարբերակը՝ **Ծնօպի բլուր** (լատ.՝ *Ramathlehi*, ռուս.՝ *Рамат-Лехи*, գերմ.՝ *Ramat – Lehi*, 17)։ **Լեբի** անունը ԲՅԱ-ն տալիս է **ելբի** գլխաբառի տակ՝ նշելով, որ «...ըստ այլոց գրի Լեբի»՝ *ծնօպ* նշանակությամբ¹⁷⁹, ինչպես և տալիս է **Ծնօպ** անվանումը՝ հղելով **ելբի** տարբերակին։ Բայց թեև կա **Ռամաթ** քաղաքի անունը, որը ստուգաբանվում է **բարձր** կամ **գերամբարձ**, սակայն սա արդեն չի հղվում *Դատարարաց* գրքում առկա **Ռամաթ լեբի** ձևին։ Ի դեպ, ինչպես նկատեցինք, արևմտահայերեն տեքստը անունները գրեթե չի թարգմանում և այս առումով նույնանում է ռուսերեն և գերմաներեն բնագրերում առկա տարբերակների հետ. սա ոչ թե պատահականություն է, այլ ինչպես բազմաթիվ օրինակներն են փաստում, բնորոշ առանձնահատկություն է, որն էլ խոսում է այն մասին, որ Ա-2 բնագրի բնօրինակը բոլորովին այլ է եղել։ Հունարենում տրվում է *σισαχων ονοσ*, իսկ ասորերեն տեքստում տրվում է եբրայական **էն Կառնա**, և անմիջապես բացատրվում որպես **էշի ծնոպ**։

Նամակաց աղբյուր (հուն.՝ *Πηγὴν γραμμάτων*) **Նամակաց քաղաք** (հուն.՝ *Πόλις γραμμάτων*)։ Հետոի գրքի ԻԱ 29-ում Ա-1 գրաբար բնագիրը եբրայական *Ենգանիս*

¹⁷⁹ Տե՛ս *Բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 2, *Բառարան յարուկ անուանց...*, էջ 80։

քաղաքի անունը տալիս է թարգմանաբար՝ **Աղբիրն Նամակաց** (տղտ.՝ եբր.՝ **Ենգանիմ**), արևելահայերեն օրինակում՝ **Նամակաց աղբյուր** ձևով, Ա-2 արևմտահայերեն բնագիրը պահում է **Ենգանիմ**, ասոր.՝ ܐܢܓܢܝܡ ܥܢ ܓܢܝܡ **Էն Գադ**, լատ.՝ Engannim, НЖБ -ն՝ **Ен-Ганним**, գերմաներեն բնագիրը դարձյալ՝ **En-Gannim**: Անվան **Ենգանիմ** ձևը տալիս է ԲՅԱ-ն՝ **Աղբիր պարտիզաց** նշանակությամբ: Այս անունը դառնում է նաև քաղաքի անուն *Դատրավորաց* և *Հետուի* գրքերում. «*Եւ անուն Դարբիրայ էր յառաջագոյն քաղաք Նամակաց*»¹⁸⁰ (Հս. ԺԵ 15-16, 49): Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս դեպքում հավելվել է հայերեն տարբերակը հայ թարգմանիչների կողմից, մինչդեռ կատարվել է բնագրային անվան թարգմանություն. «... *жителей Давура (имя Давуры прежде было Куру-аф-Сефер*»: **Кору-аф** նշանակում է քաղաք, իսկ **Նամակացը** հուշում է, որ քաղաքը ունեցել է ուսումնական նշանակություն¹⁸¹: Հունարենում տրվում է *Πηγη γραμματων*, որը, ինչպես և ասորերենում, նշանակում է *Աղբյուր գրոց*: Ինչպես նկատելի է, **Նամակաց աղբյուր** թարգմանությունը պատճենում է հունարեն տեքստում առկա տարբերակը:

Փորձություն (հուն.՝ Πειρασμός, ասոր.՝ ܦܪܫܘܬܐ **Նասա**), **Բամբասանք** (հուն.՝ Λοιδορία ասոր.՝ ܠܘܝܕܘܪܝܐ **Մոիվա**, ռուս.՝ **Масса, Мерива**) հայացված տեղանունները ուղղակիորեն կապվում են հունարենի հետ¹⁸²:

Մասսա, Մերիպա անունները գրաբար *Աստվածաշնչի Ելից* գրքի ԺԷ 7-ում տրվում են թարգմանաբար. «*Եւ անուանեաց զանուն տեղւոյն այնորիկ Փորձութիւն եւ Բամբասանս* (տղտ.՝ եբր.՝ **Մասսա, Մերիպա**), *վասն բամբասանաց որդւոցն Իսրայելի եւ վասն փորձելոյ նոցա զՏէր եւ ասելոյ...*»: Արևմտահայերենը տալիս է եբրայերեն տարբերակը. «*Եւ ան տեղին անունը Մասսա ու Մերիպա դրաւ. ինչու որ Իսրայելի որդիքը հոն վիճեցան, և Տէրը փորձեցին...*»: Ա-3-ը **Բամբասանք**-ի փոխարեն գործածել է **Մեղադրանք**. «*Նա այդ վայրը կոչեց Փորձութիւն եւ Մեղադրանք, որովհետեւ Իսրայելացիները մեղադրել էին եւ Տիրոջը փորձել՝ ասելով. «Տէրը մեր մէջ է, թե՞ ոչ»:* **Փորձություն**-ը ճիշտ և հաջող թարգմանություն է, կարելի է ասել բառացի, իսկ ինչո՞ւ

¹⁸⁰ Պեշիթայում խոսվում է ոչ թե քաղաքի, այլ գյուղի մասին, որի անունն է **Գրբի** (Սըփոա), իսկ **Նամակ**-ը ասորերենում՝ **Քթավա**:

¹⁸¹ Տե՛ս *Энциклопедия Библейская*, էջ 353:

¹⁸² Ասենք, որ Վուլգատան ևս անունները տալիս է թարգմանաբար. «...et vocavit nomen Locillius Temptatio propter iurgium filiorum Israhel et quia temptaverunt Dominum...»:

Քամբասանք կամ **Մեղադրանք**: НЖБ -ն գրում է. «Поскольку народ **искушал** Господа в этом месте и **укорял** Его, Моисей дал название **Масса-искушение, Мерива-укор** (117). գրաբարում **քամբասել** նշանակում է *չարախոսել, բանասարկել, ամբաստանել, մեղադրել*¹⁸³, **Укорять** նշանակում է *կշտամբել, հանդիմանել, նախադատել, պարսավել*¹⁸⁴, բայց ոչ երբեք **քամբասել**, ու թեև հոմանիշային ինչ-որ կապ կա *պարսավել* և *մեղադրել* բառերի միջև, բայց այսուհանդերձ ընտրությունը այնքան էլ հաջող չի կատարված, և ո՛չ գրաբար և ո՛չ էլ արևելահայերեն *Աստվածաշունչ* գրքերը անունը ճիշտ չեն ներկայացրել: Սա այն դեպքում, եթե բառի իմաստը բացատրում ենք ռուսերենի միջնորդությամբ: Հունարենում՝ համապատասխան տեղում, գործածված **τήν λαιδορίαν**-ն արտահայտում է երեք իմաստ՝ 1. *հայիոյանք*, 2. *անվանարկում*, 3. *կշտամբանք, նախադրինք*: Ինչպես տեսնում ենք, այս բառի դեպքում ևս *մեղադրանք* կամ *քամբասանք* իմաստ չկա: Թերևս բնագրի բովանդակությանը առավել համարժեք թարգմանությունը պիտի լիներ **Նախադրինք** տարբերակը¹⁸⁵, որը նաև հաստատվում է ասորերեն տեքստում ܡܝܪܐ :

Դառնություն (հուն.՝ **Μετρηα**, ասոր.՝ ܡܝܪܐ, լատ.՝ **Mara**): *Ելից* գրքի գրաբար բնագրի ԺԵ 23-ում՝ «... եկին ի **Մեռա**, եւ ոչ կարէին ըմպել ջուր ի Մեռայն, քանզի դառն էր. վասն այնորիկ անուանեաց զանուն տեղւոյն այնորիկ **Դառնութիւն**» հատվածում առկա *Մեռա*-ն արևմտահայերենում, ռուսերենում չի թարգմանվում: Ինքը՝ Մխիթար Սեբաստացին, իր հրատարակած *Աստվածաշնչում* (1733թ.) տալիս է անվան թարգմանված տարբերակը՝ «վասն այնորիկ անուանեաց զանուն տեղւոյն այնորիկ **Դառնութիւն**», սակայն ԲՅԱ-ում բերում է **Դառն աղբիւրք** ձևը՝ այն հղելով *Մեռայ* անվանմանը՝ մեկնաբանելով անվան նշանակությունը որպես **դառն** կամ **դառնութիւն**: *Պեշիթան* տալիս է եբրայական ձևը՝ ܡܝܪܐ **Մուուաթ** և մեկնաբանում՝ *դառը*: Ինչպես տեսնում ենք, հայերենը չի կրկնում ո՛չ հունարենին, ո՛չ ասորերենին:

Թարգմանելու միտումը հաճախ հանգեցրել է հակասությունների. մի գրքում

¹⁸³ Ռ. Ղազարեան, *Գրաբարի հոմանիշների բառարան*, Եր., 2006, (ՌՂԳՀԲ), էջ143:

¹⁸⁴ Ար. Ղարիբյան, *Ռուս-հայերեն բառարան / Русско-армянский словарь*, (ԱՂՌՀԲ), Հայաստան հրտ., Եր., 1982, էջ 1282:

¹⁸⁵ Ասենք, որ բնագրային հակասությունները բնորոշ են ոչ միայն հայերեն թարգմանություններին, այլև ռուսերենին: Բերենք մեկ օրինակ. НЖБ-ն նույն հատուկ անունը՝ մի դեպքում անձ, մյուս դեպքում՝ տեղանուն ակնարկող, ներկայացնում է տարբեր կերպ՝ **Մասի** տեղանունը՝ **Меша** (Ծն. Ժ 30) ի *Մասեացի*, **Մասի** արական անձնանունը՝ **Масса** (Իսմայելի որդին, Ծն. ԻԵ 15):

բառը թարգմանվում է որպես հասարակ անուն, տեքստում չի ընկալվում որպես հատուկ, մի այլ դեպքում բառը մնացել է չթարգմանված՝ դառնալով հատուկ անուն:

Ա-1 տեքստի *Ելից* գրքի ԺԴ 2-ում տրվում է **Հանգրուան** (հունարենում սուկ *στρατοπεδεύσεις - ճամբարատեղի* իմաստով, լատ.՝ *Phiahiroth*¹⁸⁶), իսկ *Թվոց* գրքի ԼԳ 7-8 հատվածում հանդիպում է **Եպիրովթ** անունը (տղտ.՝ եբր.՝ *ի Մեռա*): Որ այս երկուսը նույն անունն են, հաստատում է Ա-2 տեքստը (*Ելիցում* և *Թվոցում*՝ **Փիաիրոթ**, հուն.՝ *Εἰρωθ*, ասոր.՝ *ܠܘܘܐ ܠܘܢܗܪܐ*, ռուս.՝ *Пу-Гавуроф*): Արևելահայերեն տեքստի *Ելից* գրքում հատուկ անվան ոչ մի ընկալում չկա. «...կայք հաստատեն Մագդոդի և ծովի միջև գտնուող **հանգրուանում**...», իսկ *Թվոցում*՝ **Եպիրովթ**: Կարծում ենք *Ելից* գրքում ուղղակի բաց է թողնվել եբրայերեն տեղանունը՝ *Եպիրովթ*, որը եղել է հրեաների ճամբարատեղին, հանգրվանը¹⁸⁷:

Հետաքրքիր իրողություններ են դրսևորվում **Արարովթ** անվան գործածություններում:

Արարիա-ն բացատրվում է եզակի իմաստով՝ *անապատ*... և բազում այլ եզակի նշանակություններով, մինչդեռ **Արարովթ**-ը (հուն.՝ *Αραβωθ*) **Արարիա**-ի հոգնակի ձևն է և նշանակում է **անապատներ** կամ **դաշտեր**, և ինչպես նշվում է ԲՅԱ-ում, *Արարովթ*-ը հատուկ անուն չէ. «*Սա ոչ է յապուկ անուն միոյ տեղոյ, այլ է հասարակ անուն դաշտային տեղոյ, եւ այսպիսի տեղիք բազումք էին, որք յիշին ի սբ. գիրս*»¹⁸⁸: *Աստվածաշնչի* թարգմանություններից արևմտահայերենն էլ՝ Ա-2, տարբեր գրքերում տալիս է այդ անվան՝ իբրև հասարակ անուն թարգմանությունը (լատիներենում տրվում է անվան իմաստը՝ *de campestribus Moab*), որը, կարծում ենք, ճիշտ մոտեցում է, մինչդեռ գրաբար և արևելահայերեն գրքերը պահում են **Արարովթը**՝ որպես տեղանուն, պահում են, որովհետև այդպես է տրվում նաև հունարեն տեքստում՝ *Յորթանասնիցում*՝ *ἀπὸ ἀραβωθ μωαβ*, և ասորերենում՝ *Պեշիթայում*: Բ Օր. ԼԴ 1-ում Ա-1-ը տալիս է. «*Եւ ել Մովսէս յԱրարովթ Մովաբայ ի լեառն Նաբաւ...*»՝ տողատակում նշելով, որ *Արարովթ*-ը եբրայերենում նշանակում է **ի դաշտացն**: Նույն ձևով արևելահայերեն տեքստը՝ Ա-3-ը, պահում է **Արարովթ** տարբերակը՝ «*Մովսեսը Մովաբի երկրի Արարովթ*

¹⁸⁶ *Վուլգատայի Թվոց* գրքում (ԼԳ 7) դարձյալ պահպանվում է *Phiahiroth*, այսինքն, ինչպես տեսնում ենք, անունը լատիներեն տեքստում այլ տարբերակ կամ տարրնթերցում չունի:

¹⁸⁷ Անվան աշխարհագրական մեկնությունը մանրամասն տե՛ս *Энциклопедия Библиейская*, էջ 507:

¹⁸⁸ Տե՛ս *Բառարան յապուկ անուանց...*, էջ 32:

վայրից բարձրացաւ Նաբաւ լեռը...», և միայն Ա-2-ը տալիս է թարգմանված ձևը, որն էլ ճիշտ համապատասխանում է եբրայական բնագրին. «Եւ Մովսէս Մովարի **դաշտերէն Նաբաւ լեռանը վրայ...ելաւ**»: Նույն ձևով է ներկայացվում *Երեմիայի* մարգարեության ԼԹ 5-ում, այսինքն՝ կարելի է ասել, որ սա օրինաչափություն է դառնում՝ Ա-1-ը և Ա-3-ը չեն թարգմանում, Ա-2-ը թարգմանում է բոլոր գործածություններում:

Բայց այս նույն մոտեցումը չի ցուցաբերվել մեկ ուրիշ անվան՝ **Փալիլովթի** դեպքում: Նախ ասենք, որ այս անունը չպետք է շփոթել *Աստվածաշնչի* տարբեր գրքերում (*Հեսու, Գ, Դ Թագավորություններ, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի/Հովհանի ավետարաններ*) բավական շատ հանդիպող **Փալիլեա** անվան հետ (*Հեսուի* գրքի Ի 7-ում՝ **Փալիլեա**՝ Ա-1, Ա-2, ՄՍԱ, **Փալիլիա**՝ Ա-3, հունարենում՝ Γαλιλαία, լատիներենում՝ **Galilea**, ռուսերենում՝ Галилея)¹⁸⁹:

Հեսուի գրքի, բայց արդեն ԺԸ 17-ում գործածված **Փալիլովթ** անվան իմաստն է *սահման*¹⁹⁰: Անպայմանորեն այս իմաստը ուզում ենք կարևորել (չմոռանանք, որ *Փալիլեան* Բենիամինի ցեղի և Հուդայի ցեղի սահմանն էր). «Հիսուսից կտրոււմ անցնում են Բեթսամիսի աղբիւրը, գնում են Եղոմինի զառիվերի դիմացը գտնուող **Փալիլթ**... Բեթարարայի թիկունքից անցնում են հիսուս եւ իջնում **Արարա**»: Այս հատվածում ունենք **Փալիլթ**, որն անշուշտ **Փալիլիայի** հոգնակի ձևն է և ստուգաբանվում է *սահմաններ*, ուստի, թվում է, ճիշտ կլիներ, եթե տրվեր թարգմանված տարբերակով, և նույնը՝ **Արարան**, որ ևս պետք է թարգմանվեր որպես *անապատ*: Որպես հիմնավորում բերենք *Հովելի* գրքի Գ 4 գործածությունը. Ա-1-ում՝ «... եւ ամենայն **Փալիլեա** այլազգեաց...», որը տողատակում բերվում է ըստ եբրայականի՝ **սահմանք** *Փղշտացուց*: Իսկ Ա-2-ը բուն տեքստում անունը հայացնում է. «... եւ *Փղշտացուց* բոլոր **սահմանները**»:

Բայց այստեղ արդեն (Հս. ԺԸ 18) ոչ միայն Ա-1-ը և Ա-3-ն են պահել եբրայական բառերն իբրև անվանումներ, այլև Ա-2-ը. «... զառ ի վերին դիմացը եղող *Փալիլովթ*

¹⁸⁹ **Փալիլեա** անվան իմաստը ռուսերեն տարբեր բառարաններ՝ *Симфония к синодальному изданию Библии* (СБ), Стокгольм, 1995, *Энциклопедия Библейская* (2-е издание), Москва 2004, ներկայացնում են՝ округ, кольцо, страна: **Փալիլովթ**-ը տալիս է միայն СБ-ն՝ անվան նշանակությունը բացատրելով область, страна, և նշում է, որ եզակի գործածված **Փալիլովթ**-ը *Հեսուի* գրքի ԺԵ 17-ում գործածված **Փաղգաղ/Փալգալ** անունը համարժեքն են:

¹⁹⁰ **Փալիլիան** ըստ ԲՅԱ-ի (60) ունի մի քանի իմաստներ՝ *սահման, փոփոխելի, հողվելի, դյուրաթավալ, անիվ*, բայց դրանցից էականը թերևս **սահմանն** է:

կելլէ» (լատիներենը ևս պահում է եբրայական ձևը՝ *Chasaloth*, ռուս.՝ *Гелилоф*): Սա միանշանակ կարծել է տալիս, որ մեր հին թարգմանիչները նույն բառը՝ եզակի և հոգնակի գործածություններով **Գալիլիա-սահման**, և **Գալիլո/վ /թ-սահմաններ**, պահել են հայերեն տարբեր թարգմանություններում որպես հաստուկ անուններ՝ դարձյալ համեմատությամբ *Յոթանասնոր*՝ *Γαλιλαθ*, և *Պեշիթայի* հետս՝ **Գլիլա**:

Թարգմանական տարբերակներից շատերը բաղադրյալ անվանումներ են՝ հաճախ բաղադրված նույն բառով, ինչպես՝ Ծն. ԺԲ 6-ում՝ Ա-1՝ **Կաղնի բարձր**, Ա-3՝ *Բարձր կաղնի*, Ա-2՝ *Մորէի կաղնի* (հուև.՝ *τὴν δρυὸν τὴν ὑψηλὴν ἠβωθὶ կաղνήν*՝ բարձրը, ասոր.՝ *ܩܘܘܢܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ* *Մամնեի կաղնի*, ռուս.՝ *дубравы Море*¹⁹¹), Ծն. ԼԵ 8-ում՝ Ա-1՝ **Կաղնի Սոք** (հուև.՝ *τὸ ὄνομα αὐτῆς βάλανος*), Ա-2՝ **Ալոնպախուր**, Ա-3՝ **Սոքյ կաղնի** (ասոր.՝ *ܩܘܘܢܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ* *Բըրըմթա դաուխաթա*, որ է՝ *լացի կաղնի*, ռուս.՝ *дуб плача*¹⁹²), Դտ. Դ 11-ում՝ Ա-1՝ **Կաղնի հանգուցելոց** Ա-2՝ **Սանանիմի կաղնի**, Ա-3՝ **Հանգուցյալների կաղնի** (հուև.՝ *δρῦν ἀναπαυομένων*, ասոր.՝ *ܩܘܘܢܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ* *Բըրըմթա դվախինին*, ռուս.՝ *дубравы Цаанниме*):

Հովիտ-ը դարձել է **Հովիտք**, Բ Թգ. ԺԸ 18-ում՝ Ա-1՝ **Հովիտ Թագաւորաց** (հուև.՝ *ἐν τῇ Κοιλιάδι τοῦ βασιλέως*), Ա-2՝ *թագավորի հովիտին մէջը*, Ա-3՝ *Թագաւորների հովիտում*¹⁹³ (ասոր.՝ *ܩܘܘܢܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ* *Թագավորների ձոր*), Ա Մնց. ԺԱ 15, ԺԴ 19-ում՝ Ա-1՝ **Հովիտ սկայից** (տղտ.՝ եբր.՝ *Ռափայնոց*, ասոր.՝ *ܩܘܘܢܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ* *դիփանների հանդում/դաշտում*), Ա-2՝ *Ռափայնոց հովիտ*, Ա-3՝ *Հսկաների հովիտ*, Բ Թգ. Ե 18-ում՝ **ի Հովիտս քիփանացն** (εις τὴν Κοιλιάδα τῶν τιτάνων), 22-ում՝ Ա-1՝ **ի Հովիտս քիփանացոց**, Ա-2՝ *Ռափայնոց հովիտ*, Ա-3՝ *Տիփանների հովիտ* (ասոր.՝ *ܩܘܘܢܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ* *թրգմ.՝ քիփանների (հերոսների) ձորում*), Բ Մնց. Ի 26-ում՝ Ա-1՝ **Հովիտ օրհնութեան** (հուև.՝ *Κοιλιάς εὐλογίας*), Ա-2՝ *Հովիտ Օրհնութեան*, Ա-3՝ *Օրհնութեան հովիտ* բաղադրյալ անվանումների լրացյալ: Ասորերենում տրվում է *ܩܘܘܢܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ ܘܫܘܠܐ* *Օրհնութեան դաշտ*:

Անտառ հասարակ անունը դարձել է բաղադրյալ անվանումների բաղադրիչ՝

¹⁹¹ Անվան այս տարբերակի համար НЖБ -ն տալիս է հետևյալ մեկնությունը. «Слово море имеет значение указывать. Предполагают, что речь идет о дубе, который идолопоклонники Ханаана считали оракулом», էջ 31:

¹⁹² Ինչպես նկատում ենք, այս դեպքում ռուսերենը ևս տալիս է թարգմանված տարբերակը:

¹⁹³ Ծանոց գրքի ԺԴ 17-ում՝ *Թագավորների դաշտ* (Ա-3):

Անփառ ազգաց, Անփառ Եփրեմի, Անփառ լալոնից (Լալոնք), Անփառք:

Արիսօթ եբրայական անունը տարբեր իմաստներ էր արտահայտում՝ *հողագործություն, լռություն, խլություն, խեցի* (ԲՅԱ, 35), իսկ ասորերենում բառացի նշանակությունն է *անփառ*: **Արիսօթ-ը** Նեփթաղիմի ցեղին պատկանող քաղաք է, Հորդանանին մոտ, որի պատճառով տարբեր ազգերի մարդիկ էին բնակություն հաստատել այդտեղ, և որի պատճառով էլ կոչվում էր **Արիսոթ ազգաց**, իսկ *Դափավորաց* գրքում՝ **Անփառ ազգաց** Ա-1 տեքստի *Դափավորաց* Դ 16-ում տրվում է **յանփառն ազգաց**¹⁹⁴ տողատակում տալով նույն *Արիսովթ* եբրայական ձևը: Ա-2-ում նույն հատվածներում տրվում է միայն **ազգաց Արիսօթին** տարբերակը, իսկ Ա-3-ը՝ **Ազգերի Արիսոթ և Ազգերի անփառը**, այսինքն՝ կատարվել է մեխանիկական թարգմանություն, ու դրանից էլ ընթերցողի համար ստեղծվում է մի անհասկանալի խառնաշփոթ: Հունարենում տրվում է թարգմանաբար՝ *Αρισωθ τῶν ἐθνῶν*, իսկ *Յոթանասնիցում*¹⁹⁴ *Δρυμος των εθνων – ազգերի կաղնանփառ*, ասորերենում միայն Դ 16-ում՝ *ܐܪܝܣܘܬ ܕܥܡܝܢ ܗܘܐ ܗܘܪܝܘܬ ܗܘܠܡܝܬ (ազգերի)*, լատիներենում՝ Aroseth, ռուսերենում տրվում է երկու դեպքում էլ եբրայական ձևը՝ *Хароуеф-Гоум* (HЖБ, 337):

Եփրեմ անունը *Սուրբ Գրքում* հիշատակվում է ոչ մեկ անգամ. այն և՛ անձնանուն է, և՛ դառնում է քաղաքի, տարածքի, երկրի անուն: *Բ Թագավորությունների* գրքում այն դառնում է անտառի անուն՝ Գագայի ցեղին պատկանող, որը Եփրեմի որդու և գաղաադացիների միջև մեծ կոտորածից հետո անվանվեց **Եփրեմի անփառ** (Բ Թգ. ԺԴ 6):

Լալետոյ, Լալոնք, Լալատեղ (հուն.՝ *τὸν Κλασθμῶνα* (1), ասոր.՝ *ܠܐܠܝܢܟܐ*): **Լալոնք-ը** անեզական բառ է, որ նշանակում է *լաց, ողբ*: *Դափավորաց* գրքի Բ 1-5-ում մեզ հանդիպում է **Անփառ լալոնից** հատուկ անունը, որը կապված է այն վայրի հետ, որտեղ Իսրայելի որդիները բարձրաձայն լաց եղան ու ողբացին, քանի որ Աստծու հրեշտակը նրանց մեղադրեց իրենց մեղքերի համար: Տեսնենք՝ անվան ինչ տարբերակներ ունենք հայերեն տեքստերում: Եբրայական **Բողիմ** անվան փոխարեն, որ բառացի նշանակում է **Լացողք**¹⁹⁴, ըստ Ա-1-ի՝ *ի Լալետղն* (1), *Լալոնք* (5), Ա-2-ում՝ երկու հատվածում էլ **Բողիմ**, հունարենում՝ *Κλασθμῶνες* (5 – բառացի՝ *լացի*) ասորերենում՝ *ܠܐܠܝܢܟܐ ܕܪܗܘܝܘܬ*,¹⁹⁴

¹⁹⁴ Տե՛ս *Բառարան Սուրբ Գրքոց հանդերձ պատկերօք, աշխարհացուցօք եւ փախտակօք*, Կոստանդնուպոլիս, (ԲՍԳ) 1881, էջ 101:

նուսերենում՝ **Boxum**, Ա-3՝ *Լացարեդ, Լալօնք: Բոքիմ* անվան մեջ *-իմ*-ը հոգնակերտ վերջավորություն է, այնպես որ ԲՍԳ-ն (101), ՅԵ-ն (86) և ԵՇ-ն (47-48)¹⁹⁵, կարծում ենք ճիշտ, տալիս են բառի նշանակությունը՝ *լացողներ՝ փառասուներ*:

Այս տարածքը մոտ էր *Հսկաների հովտին*, ուր տանձենիներ շատ կային: Այստեղ էլ Դավիթը կոտորեց այլազգիներին: Անունը հանդիպում է նաև *Թագավորությունների* գրքում: Բ Թգ. Ե 23-24 հատվածում ևս տրվում է այս անունը: Ըստ Ա-1-ի՝ *ի Լալօնսն, անփառին Լալոնից*, բայց տողատակում տալով ոչ թե տանձենի, այլ թթենի՝ ըստ եբրայականի: Ա-2-ը՝ երկու դեպքում էլ չի տվել հատուկ անուն, այլ միան՝ *թթենիներուն կողմէն*՝ լուսանցքում նշելով՝ կամ *փանձենիների*, Ա-3-ը՝ **Լացի անփառ**, հունարենում տրվում է *τοῦ ἄλσους τοῦ Κλαυθμῶνος* – *Լացի պուրակ*՝ նկատի ունի տանձենու, ասորերենում՝ *Թառփանձենիների*, ԻՋԵ-ն այս դեպքում ևս արևմտահայերեն տեքստի նման վերացրել է հատուկ անունը և տվել միայն՝ *тумовых дерев*: Ասենք, որ Ա Մնացորդաց գրքի ԺԴ 14-15-ում տրվում է միայն *փանձենիներ* ձևը. Ա-1, Ա-3-ում՝ *ի փանձիսն*, Ա-2-ում՝ *թթենիներ*:

Բավական շատ են գործածված **ձոր** բաղադրիչով հատուկ անունները, ինչպես՝ **Շավեի ձոր, Ջարեդի ձոր**, գրաբարյան ձևերում *ձոր*-ը սկզբնաբաղադրիչ գրվում է փոքրատառով, ինչպես՝ *ձոր Առնովնայ, ձոր Ենովնայ, ձոր Ելովնայ, ձոր Աքովրայ* և այլն, սակայն մեզ այս պարագայում հետաքրքրում են *ձոր*-ով բաղադրված այն հատուկ անունները, որոնք ինչ-որ չափով շեղվել են եբրայական ձևերից կամ ներկայացնում են դրանց թարգմանական տարբերակները: Դրանք են՝ **Բևեկնի ձոր, Ձոր դափասփանի, Ձոր ողկույզի. Ձոր աղի, Ձոր աղփից, Ձոր կոփորածի/Ձոր կոփորելոց, Ձոր մահուան շուքի** և այլն, ընդ որում մեծատառ թե փոքրատառ գրության ոչ մի սկզբունք չի գործում հայերեն թարգմանված տարբերակներում:

Բևեկնի ձոր՝ Էլփառան (եբր.՝ אֶרֶץ , հուն.՝ *Փարան*, ասոր.՝ ܐܪܘܣ ܦܪܢ , լատ.՝ *Pharan*, ռուս.՝ *Эл-Фаран*, գերմ.՝ *El-Paran*): Ծննդոց գրքի ԺԴ գլխի 6-րդ հատվածում տրվում է *Բևեկնի ձոր* հատուկ անունը, որը քաղաքի անուն է. «*Եւ գՔոռացիսն, որ ի լերինս Աէրայ մինչև ցրևեկնի ձորոյն*» (եբր.՝ ַרֶבֶקָה לְאֶרֶץ ֶפְרַת, Ա-1, հուն.՝ *τῆς τερεμίνθου τῆς Φαραν*), արևմտահայերենում պահվում է եբրայական ձևը. «...*մինչեւ անապատին քովը*

¹⁹⁵ Տե՛ս **Эрик Нюстрем**, *Библиейский словарь*, перевод со шведского под редакцией И. С. Свенсона, Санкт-Петербург, 1995:

եղող **Էլփառանը** զարկին», Ա-2), արևելահայերենում տրվում է դարձյալ թարգմանված տարբերակը. «*եւ հասան մինչեւ անապատում գտնուող Բեւեկնի ձորը*», Ա-3): Անշուշտ, երբայերենի **Եղփառան**-ում **դ**-ի գրությունը գրիչների արտագրության սխալ է, պետք է լիներ **Ելփառան**, մի ձև, որ հիմնավորվում է այլ լեզուների թարգմանություններով: Այս քաղաքում, ըստ Հին Կտակարանի, Դավիթը սպանեց Գողիաթին: Թեև ԲՅԱ-ն Փառան բառը տարբեր կերպ է մեկնում՝ *գեղեցկություն կամ գովություն, կամ պանծանք, նաև՝ անապատ* (էջ 220), սակայն հունարենում բառը բացատրվում է՝ *ձոր*. «**φάραγξ** – οвраг, ущелье»¹⁹⁶: Այսինքն՝ հայերեն թարգմանության մեջ *ձոր*-ով քաղաքը կառուցված հատուկ անունները աղերսվում են *Յոթանասնիցին*, որը տալիս է **φάραγξ**, և որն արդեն հայերեն տեքստերում՝ Ա-1, Ա-3, տրվել է թարգմանաբար: *Ծննդոց* գրքում հանդիպում է նաև *Փառան կաղես*, որը հետագայում բաժանվեց տարբեր քաղաքների՝ անվանվելով՝ *Փարան* և *Կաղես*: ԲՅԱ-ն *Փառան* անվան տակ տալիս է նաև սա՝ բացատրելով. «*Քաղաքս այս է նոյն, որ կոչի բևեկնի ձորոյն...եւ ասի՝ թէ էր արքայանիստ քաղաք երանելոյն Յորայ*» (էջ 220):

Անշուշտ *Բևեկնի ձոր*-ը մեր թարգմանիչների ընտրությունն է, քանի որ հունարենը և ասորերենը տալիս են չթարգմանված՝ **Φαραν**, **Փառան** տարբերակը. ռուսերեն տեքստում տրվում է **Эл-Фаран**:

Ռուսերեն բառարանները **Эл/а/-** ն բացատրում են որպես *կաղնի*՝ твердое дерево, дуб (ЭБ, 753, БС, 461): Նույն կերպ է բացատրում նաև ԲՄԳ-ն՝ **կաղնի** (էջ 208): Ուրեմն հայերեն տեքստերում ինչո՞ւ է այն դարձել **բևեկնի ձոր**: Արևմտահայերեն տեքստի **Էլփառան**-ը լուսանցքում տրված է **Փառանին բևեկնին** տարբերակով: Մենք վերևում տեսանք, որ նման շփոթություն էլի է հանդիպում՝ **դանձենի/թթենի**, այս դեպքում՝ **կաղնի/բևեկնի**:

Ողկուզի ձոր-ը՝ որպես հատուկ անուն, հանդիպում է *Թվոց* գրքում. «*եւ անուանեցին զանուն տեղոյն՝ Ձոր ողկուզոյ, վասն ողկուզին, զոր հատին անտի որդիքն Իսրայելի*» (Թվ. ԺԳ 25), նույնը նաև՝ ԼԲ 9-ում՝ «**ի Ձորն ողկուզի**», Ա-2-ում համապատասխանաբար կիրառված են **Եսրողի ձոր** (լուսանցքում՝ *ողկուզի*), իսկ Ա-3-ում՝ **Ողկուզի ձոր**: Հունարեն տեքստում տրվում է՝ **Φάραγξ βότρυος**, ասորերենում՝

¹⁹⁶ Греческо-русский словарь, перевод краткого греческо-английского словаря НОВОГО ЗАВЕТА, Баркли М. Ньюмана, Российское библейское общество, М. 1997, с.220.

ⲛⲉⲛⲉⲥⲟⲗ **Սղուլա**, լատիներենում՝ Neelescol, ռուսերենում պահված է երբայական տարբերակը՝ долиною (гроздь) Есхол (НЖБ):

Հովելի գրքում (Գ 14) հանդիպում է **Դափաստանի ձոր** տեղանունը: Գրաբար տեքստը տալիս է. «*Ձայնք հնչեցին ի Ձորն դափաստանի...*»՝ տողատակում տալով երբայական համարժեքը, որը գրեթե չի կարդացվում, բայց ենթադրելի է, որ պիտի լինի **Յովսափապ**, Ա-2-ում՝ **Վճող հովիտին մէջ**, Ա-3-ը ևս՝ **Դափաստանի ձոր**: *Դափաստան* և *վճիռ* տարբերակներից ո՛րն է ավելի ճշգրիտ տալիս երբայական համարժեքը: Այս տեղանունը ունի մեկանգամյա կիրառություն, բայց շատ կարևոր դեր է կատարում. նախ այն, որ Հովսափապ անունը ստուգաբանվում է որպես *Տերը դափավոր է*, որտեղից էլ գալիս է **Դափաստանի ձոր**-ը: Լատիներեն տեքստում տրվում է *valle concisionis*, ռուսերեն տեքստը համապատասխան տեղում դրել է «*к долине суда*» փոքրատառ գրությամբ՝ տողատակում բացատրելով. «*к долине суда. Долина Иосафатова: отождествляется с той долиной, где Господь совершил свой суд над народом*» (НЖБ, 1179): Բաց է մնում **Վճոյի ձոր** կամ **հովիտ** անվանումը, որն էլ աղերսվում է Պեշիթային՝ ܩܕܝܫܐ ܕܥܝܢܐ **վճիռներ**¹⁹⁷:

Ենթադրվում է, որ *Ծննդոց ԺԴ 17* և *Թագավորությունների* գրքերում (Դ Թգ. Ի 18) հիշատակվող *Թագավորների հովիտը* անվանումն է այս նույն տարածքի, որտեղ թաղվել է Հովսափատ թագավորը, և ոչ միայն նա: Հովելի գրքում տրված տողերից շատերը նաև ենթադրում են, որ *Դափաստանի ձորը* դառնալու է Տիրոջ ահեղ դատաստանի վայրը բոլոր մեղավոր մարդկանց նկատմամբ, և իզուր չէ, որ ԲՍԳ-ն այս անվանումը համարում է այլաբանական: *Յոթանասնիցում* այս հատվածը չի համընկնում հայերեն բնագրի հետ:

Ձոր կոտորելոց կամ **Ձոր կոտորածի** անվանումները գտնում ենք *Երեմիայի* գրքում. ըստ Ա-1-ի՝ «... եւ Ձոր որդւոցն Ենովմայ, այլ **Ձոր կոտորելոց**» (Եր. է 32), «այլ **Ձոր կոտորածի**» (ԺԹ 6), Ա-2-ում այդ նույն անվանումը տրվում է **Սպանութեան ձոր**, Ա-3-ում՝ **Սպանուածների ձոր**, **Կոտորածի ձոր**: Հունարենում տրվում է *Φάραγξ τῶν ἀνηρημένων*, որը համապատասխանում է *Սպանվածների ձոր փարբերակին*:

Ենովմի որդիների ձոր կամ **Ենովմացիների/Գլորման ձոր** անվանումը Տիրոջ կամքով փոխվում և դառնում է **Կոտորածի ձոր/ձոր կոտորելոց** կամ **Սպանության//**

¹⁹⁷ Հունարեն բնագիրը այս հատվածը չունի:

Սպանվածների ձոր:

Հունարենում, ասորերենում տրվում է **սպանությունների**, ռուսերեն տեքստը հատուկ անուն չի տալիս, այլ միայն՝ *долина уби́ства, убиения* (НЖБ):

Հովելի գրքում (Գ 19) գտնում ենք ևս մի տեղանուն՝ **Ձոր Վիճակաց**, որը գրաբար տեքստում միայն **զձորն վիճակաց** (տղտ.՝ եբր.՝ *Սալտիմ*), արևմտահայերեն տեքստում՝ **Սալտիմի ձորը**, արևելահայերեն տեքստում՝ **շրջակայքի ձոր** է: Ասորերենում՝ *Սալտիմ*, ռուսերենում տրվում է Ситтим (Шиттим): *Թվոց* և *Հեսուի* գրքերում տրվում է եբրայական **Սալտիմ** տարբերակը՝ հունարեն տառադարձությամբ¹⁹⁸:

Ի դեպ ասենք, որ *Ջաբարիայի* մարգարտության մեջ **Վիճակ** բառը դարձել է հատուկ անուն Տիրոջ երկու գավազաններից մեկի համար. «... երկու գավազան պիտի վերցնեն, մէկը պիտի կոչեն՝ **Գեղեցկություն** (κάλλος), իսկ երկրորդը՝ **Վիճակ** (σχοίνισμα) կապ, պարան...» (Ա-3, Զք. ԺԱ 7): Արևմտահայերեն տեքստում **Վիճակի** փոխարեն դրված է **Կապեր**: Համեմատությունը ռուսերեն տեքստի հետ հաստատում է *Կապեր* տարբերակը. «И возьму два жезла, и назову один- **благоволением**, другой – **узаму**...»: Ասորերեն տեքստում համապատասխանաբար տրվում են **Գեղեցկություն** կամ *Հաճույք* և *Պարան*:

Ծննդոց գրքում գործածված է **Ձոր աղի** (հուն.՝ *τὴν Φόραγγα τὴν ἀλυκίην*). Ա-1-ում՝ «գումարեցան ի **ձորէ աղի**, որ է ծով աղտից» (տղտ.՝ եբր. *Սիդդիմ*), Ա-2-ում միայն՝ «...հավաքվեցին ձորին մէջ, որ է Աղի ծովը», Ա-3-ում՝ «...հաւաքուեցին **Աղի ձորում**, որ Աղի ծովն է» (ԺԴ 3): Ինչպե՞ս հասկանալ այս խառնափնթորությունը: Ռուսերեն տեքստը բառացի ներկայացնում է. «... *соединились в долине Сиддим, где ныне море Соленое*»:

Բ *Մնացորդաց* գրքում տրվում է *Աղի հովիտ*. Ա-1-ում՝ ի **Հովիտս աղտիցն**, Ա-2-ում՝ **Աղի ձորը**, Ա-3-ում՝ **Աղի հովիտ**: Ինչպես նկատում ենք բազմաթիվ օրինակներից, *հովիտ* և *ձոր* բառերը իմաստով հոմանիշ են:

Բ *Մնացորդաց* և *Նեեմիի* գրքերում հանդիպում են **Անկյան Դուռ**, **Ձորի դուռ** հատուկ անունները, որոնք անշուշտ թարգմանական համարժեքներ են եբրայական

¹⁹⁸ Հովելի գիրքը հայերեն տարբերակներում ունի երեք գլուխ, հունարենում՝ չորս:

ծների և հայերեն տեքստերում հետևյալ կերպ են ներկայանում. Ա-1-ում՝ *առ Դրան ծորոյն եւ առ անկիւնսն* (Բ Մն. ԻՁ 9), *առ դրան Ձորոյն* (տղտ.՝ Սանաբաղաւր, Նմ. Բ 15), Ա-2-ում՝ համապատասխանաբար *Անկեան դրանը, Ձորին դրանը*, Ա-3-ում՝ *Ձորի դուռ, Անկեան դուռ*: Այս անվանումները համեմատ են հունարենին՝ *τὴν πύλην τῆς φάραγγος* (*ձորի դուռ*), *καὶ ἐπὶ τῶν γωνιῶν – անկյունների դուռը*): Ռուսերեն տեքստի *Մնացորդաց* գրքում հատուկ անունները բացարձակ չեն պահպանվել և չեն գիտակցվում. «*И построил Озия башни в Иерусалиме над воротами угольными и над воротами долины и на углу...*» (НЖБ, 636): Իսկ ահա *Նեեմիայի* գրքում տեղանունը արտահայտված է. «*проехав опять воротами Долины*»:

Մեզ թվում է, որ հատուկ անունների թարգմանական տարբերակների առկայությունը *Աստվածաշնչի* հայերեն տարբեր գրքերում՝ գրաբար, արևմտահայերեն, արևելահայերեն, ըստ էության, հիմնավորում է այն, որ հայերեն *Աստվածաշունչ* գիրքը հներից մեկն է, որտեղ հատուկ անունների թարգմանություններում տարբեր մոտեցումներ ենք նկատում: Գրաբար և արևելահայերեն տեքստերը ձգտել են թարգմանել հատուկ անունները, հատկապես տեղանունները: Երբեմն դա տեղին է, արդարացված, երբեմն եբրայական հատուկ անունը ներկայացվել է դարձյալ որպես հատուկ անուն, բայց կամ տեքստից բխող, ինչպես՝ *Ողկոյզի ձոր*, կամ բառացի նշանակությամբ թարգմանված, ինչպես՝ *Լալոնից անտառ*, երբեմն էլ՝ հատուկ անունն իսպառ վերացվել է՝ խաթարելով տեքստի բովանդակությունը: Արևմտահայերեն տեքստը չի թարգմանում (կամ գրեթե չի թարգմանում) հատուկ անունները, իսկ եթե թարգմանում էլ է, ուրեմն այն իրոք հասարակ անուն է, և կամ պետք է որ թարգմանվի:

Այս բոլորն իհարկե հաստատում են այն ճշմարտությունը, որ հայերեն թարգմանությունը բավական երկար ժամանակում և տարբեր թարգմանիչների կողմից է կատարված, և որ, ամենակարևորը, այն կատարվել է տարբեր բնագրերի համեմատությամբ:

ԳԼՈՒԽ IV

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

4.1. Տառադարձություն և ուղղագրություն¹⁹⁹

Եթե մի կողմ թողնենք լեզվական ազդեցությունների ու փոխանցումների հետևանքով տարբեր լեզուներում սուրբգրային հատուկ անուններում առաջացած ձևափոխությունները, ապա նույնիսկ մեր լեզվում էլ՝ նրա տարբեր փուլերում, այդ փոփոխությունները որոշակիորեն առկա են:

Աստվածաշնչյան հատուկ անունները, անցնելով մեր բառապաշար, ենթարկվել են արտասանական, քերականական, իսկ գրության մեջ նաև ուղղագրական օրինաչափ փոփոխությունների: Այս առումով Մ. Մինասյանը հետևյալ միտքն է հայտնում. «Ս. Գրքի հայերէն թարգմանութեան յատուկ անունների ուղղագրութիւնը եւ հոլովումը յայտնաբերելու եւ աղավաղման դէպքում դասականը վերականգնելու համար անհրաժեշտ է յայտնաբերել այս հարցերում մեր թարգմանիչների տառադարձական, ուղղագրական, հնչիւնափոխական եւ ձեւաբանական սկզբունքները եւ ապա մշակել այն միջոցները, որոնց շնորհիւ կարելի կը լինի դասական թարգմանութեան նախկին վիճակին հասնելու փորձեր կատարել»²⁰⁰:

5-8-րդ դարերի թվակիր որևէ ձեռագիր մեզ չի հասել: Բնական է, որ չի հասել նաև *Սուրբ Գրքի* որևէ ձեռագիր նմուշ: *Աստվածաշունչը* մեզ է ներկայանում միջնադարյան գրիչների արտագրած օրինակներով: Ամենահին թվակիր ձեռագիրը համարվում է Լազարյան ճեմարանի *Ավետարանը* (887թ.): Հին է համարվում նաև Մլքե թագուհու *Ավետարանը*, որը գտնվում է Վենետիկի Մխիթարյանների գրադարանում: Իսկ դա նշանակում է, որ այդ ձեռագրերով դժվար է որոշել 5-րդ դարի ուղղագրությունը (մասնավորապես հատուկ անունների): Անշուշտ, 5-րդ դարում գրաբարի գրության և արտասանության համապատասխանությունը ճշգրիտ գործել է

¹⁹⁹ Այս հարցերի մանրամասն տեսական քննությունը տրվում է ըստ **Էդ. Աղայանի** *Հայերենի հնչույթային համակարգի պատմությունից*, ՊԲՀ, 2, 1961, *Գրաբարի քերականություն*, հ.1, գիրք Ա, Եր., 1964 աշխատությունների:

²⁰⁰ Տե՛ս **Մ. Մինասեան**, նշվ. աշխ., էջ 7:

նաև հատուկ անուններում: Դրանք գրվել և արտասանվել են նույն այն կանոնների համապատասխան, ինչպես հասարակ անունները:

Ամեն մի հնչյուն գրվել է մեկ տառով, և ամենի տառ մեկ արտասանություն է ունեցել, ինչպես՝ **Ադամ, Բենիամին, Ռեբեկա, Բեթել, Դավիթ, Սաուղ** և այլն:

Աստվածաշնչի թարգմանության շրջանում մեր ուղղագրությունը եղել է հնչական, ասել է թե՛ ինչպես գրել են, այնպես էլ՝ կարդացել: Սա երևում է փոխառությունների տառադարձությունից.

1. հունարեն խուլերի դիմաց դրվում են հայերեն խուլերը (բառասկզբում), ինչպես՝ **Պեդրոս, Պեթափրես, Տորիթ, Կեփաս** և այլն,
2. ձայնեղների դիմաց դրվում են ձայնեղներ (թե՛ բառասկիզբ, թե՛ բառամեջ), ինչպես՝ **Աբդիու, Գաբավոն, Գեդեոն, Ղուկաս, Բաղա, Գեփար** և այլն,
3. շնչեղ խուլերի դիմաց՝ շնչեղ խուլեր (բառասկիզբ)՝ ինչպես՝ **Թովմա, Թորել, Փաղեկ, Քանան, Քամ** և այլն:

Ժամանակի ընթացքում *Սուրբ Գրքի* հարյուրավոր ձեռագիր արտագրություններում և զանազան տպագրություններում աղավաղվել ու այլափոխվել են աստվածաշնչյան անձնանուններն ու տեղանունները: Դա ակներև է դառնում *Հին Կտակարանի* տարբեր գրքերի քննական բնագրերի այլընթերցումների բաժնից (աշխատասիրությամբ Ա. Զեյթունյանի, Հ. Ամալյանի): Ցավոք, ոչ ոք չի կարող անվերապահորեն պնդել, թե որն է դասական թարգմանության սկզբնական վիճակը, ուստի քիչ թե շատ նախնական տարբերակին մոտենալու միակ միջոցը եղել և մնում է տարբեր բնագրերի համեմատական քննությունը: *Աստվածաշունչ* ընդօրինակողները, որոնք հավատարիմ էին հին մատյանները անաղարտությամբ վերարտադրելու սովորույթին, այնուամենայնիվ, հին ձեռագրերի տառացի պատճենողներ չէին: Տվյալ շրջանում արմատավորված ուղղագրական կանոնները, ինչպես նաև հնչյունական ու արտասանական միտումները այս կամ այն չափով ազդել են գրիչների աշխատանքի վրա և իրենց արտացոլումը գտել նրանց կողմից ընդօրինակված մատյանում: Կարևոր դեր է կատարում նաև այն, թե որ դարի և ինչպիսի նախօրինակ բնագրերից է օգտվել տվյալ գրիչը: Համեմատաբար ավելի հին գրչագրերը, որոնք հիմնականում հնագույն նախօրինակների հիման վրա են կազմված, քիչ բացառություններով գրում են **աւ**,

ինչպես՝ **Աւնան**: Որոշ ձեռագրեր անհետևողական են և գործածում են երկու գրություններն էլ՝ **o** և **աւ**: Այդ տառերի բացարձակ նույնացման հետևանքով ստեղծվում են **Շմաւոն** և **Շմօն**, **Աւնան-Օնան** ձևերը: Թե երբ է սկսվել **o** արտասանվող **աւ** տառակապակցության փոխարեն **o** գրելը, դժվար է ասել, բայց որ 10-րդ դարում **աւ** երկբարբառը արդեն **o** պարզ հնչույթ էր, դա հաստատված փաստ է²⁰¹:

Ընդունված կարծիք է, որ *Աստվածաշնչի* հատուկ անունները աներկբա կրում են հունարենի ազդեցությունը²⁰²: Եբրայերեն գրված *Հին Կտակարանը* թարգմանվել է նախ հունարեն²⁰³: Այնպես, ինչպես հայերեն *Աստվածաշունչը* մեզ ներկայանում է հարյուրավոր ձեռագիր օրինակներով, բնական է, որ նույն կերպ հունարեն ու ասորերեն բնագրերը ունեն այլևայլ բազմաթիվ արտագրված օրինակներ, որն էլ պատճառ է այսքան այլընթերցումների, մասնավորապես հատուկ անունների տարընթերցումների: Զուգադրահամեմատական քննությունը *Յոթանասնից*-ի հետ ի ցույց դրեց այդպիսի օրինակներ: Այսպես՝ եբրայերեն **-իմ**-ը հոգնակերտ ցուցիչ է, և հարյուրավոր անունների ստուգաբանությամբ դա հաստատվում է. այդ ցուցիչը պահպանվում է հայերեն, ռուսերեն, գերմաներեն և հենց հունարեն բազմաթիվ անձնանուններում և տեղանուններում: Սակայն հունարենում հաճախ հանդիպում են տվյալ անվան բոլոր կիրառություններում ոչ թե **-իմ**-ով, այլ **-ին**-ով անուններ: **Մամփիմ** (**Μαμφιμ**) – *Ծննդոց* ԽՁ 21-ում հանդես եկող արական այս անձնանունը մեկնաբանվում է *ի բերանոյ*, սակայն ասորերենում ունի հոգնակի նշանակություն՝ *ծածկոյթք*: Եվ ի տարբերություն հայերեն, ռուսերեն, գերմաներեն տեքստերի, հունարեն թարգմանության մեջ միշտ գրվում է **-ին**-ով: Հին հունարենում չկա այնպիսի կանոն, որ բառավերջում անունը **-ին**-ով գրվի, բայց **-իմ**-ով կարդացվի: Նույն ձևով՝ **Սապրիմ** տեղանունը (ռուս.՝ **Ситтим**, հուն.՝ **ἐν Σαπτιν**) – Թվ. ԻԵ 1 (*ի Սապրիմ*), Հս. Բ 1 (*ի Սապրիմայ*), ըստ ԲՅԱ-ի՝ **Սապրիմ** բացատրվում է հոգնակի՝ *տարածութիւնք, խոտորիչք, փուշք, Ռափիդիմ* (ռուս.՝ **Рефидим**, հուն.՝ **Ραφιδιν**) – Ել. ԺԷ 1, 8, ԺԹ 2 (*յՌափիդիմայ*), ԼԳ 14, 15-ում (*յՌափիդիմայ*) գործածված այս տեղանունը մեկնաբանվում է հոգնակի՝ *անկողինք* կամ *մահիճք*: Ինչի՞ հետևանք են հարյուրավոր ճիշտ

²⁰¹ Տե՛ս՝ Ս. Գյուլբուդաղյան, *Հայերենի ուղղագրության պատմություն*, Եր., 1973, էջ 117:

²⁰² Տե՛ս **Հր. Աճառյան**, *Հայոց գրերը*, Եր., 1984, 231-262 էջեր:

²⁰³ Տվյալ պարագայում մենք այս բանավեճի մեջ չենք խորանում, այլ հայտնում ենք մեր կարծիքը՝ ելնելով հատուկ անունների զուգադրական քննությունից:

գործածությունների կողքին այսպիսի շեղումները հունարեն թարգմանության մեջ. անշուշտ արտագրող գրիչների անփութության, անհետևողականության, որն էլ հանգեցրել է այս տարընթերցումներին, որոնք դժվար ընկալելի են մի բնագրում, բայց անմիջապես նկատվում են երկու լեզուների համեմատական քննության դեպքում:

Ուրեմն, տարբերությունները որոշակիորեն առկա են, և անունների ճիշտ պատկերը վերականգնելու համար թերևս ճիշտ չէ հնագույն եբրայական ձևերի հետ համեմատելը, քանի որ հայ թարգմանիչները ընդհանրապես եբրայական բնագրի հետ գործ չեն ունեցել նույնիսկ *Հին Կտակարանը* թարգմանելիս. նրանք ձեռքի տակ ունեցել են հունարեն և ասորերեն թարգմանությունները²⁰⁴: *Սուրբ Գրքի* որոշ գրքերում մի շարք հատուկ անուններ մեզ ներկայանում են թե՛ հունական, թե՛ ասորական տառադարձությամբ, ինչպես՝ **Սամարիա – Շամրին**: Հայնրիխ Հյուբշմանը միանգամայն ճիշտ նկատում է. «*Սուրբ Գրքի* հայ թարգմանիչները աստվածաշնչյան անունները ճշգրիտ վերարտադրել են՝ մեծ մասամբ ելնելով հունական, հազվադեպ՝ ասորական ձևից, որոշ դեպքերում, սակայն, գործածվել է խառը եղանակը՝ ուղենիշ վերցնելով մասամբ (բաղաձայնական համակարգում)՝ ասորական, մասամբ (ձայնավորական համակարգում)՝ հունական ձևը»²⁰⁵:

Բերենք մի քանի օրինակներ ևս:

Սուր (Մուր) (հուն.՝ Σουρ/Τυρ, ռուս.՝ Сур) անունը հայերեն բոլոր թարգմանություններում մեծ մասամբ տրվում է **Սուր** (ասոր.՝ ܣܘܪ Սուր): Բայց Ա Մկ. Ե 15-ում տրվում են **ի Մուրայ եւ ի Մայդանայ...** (Ա-1, Ա-3, հուն.՝ Τυρ), ինչն էլ դարձյալ փաստում է մեր թարգմանիչների՝ միայն հունական կամ միայն ասորական թարգմանություններից չօգտվելու մասին, մանավանդ, որ այս գործածությունը *Յոթանասնիցում* ևս հակասական է ՀՀԲ-ն տալիս է այս տեղանվան ոչ միայն երկու տարբերակներն էլ, այլև **Տյուրու**, երբեմն՝ **Սարրա**²⁰⁶:

Շավա- ն (Սավա) (հուն.՝ Σαα , ասոր.՝ ܫܘܘܐ Շօր, ռուս.՝ Шва) իգական եբրայական անուն է՝ ասորական տառադարձությամբ՝ **Շավա**, և հունական տառադարձությամբ՝ **Սավա**, որի բառացի նշանակությունն է «*հարթութիւն* կամ

²⁰⁴ Հավանական է նաև *Որոգինյան* օրինակից թարգմանված լինելը:

²⁰⁵ Հ. Հյուբշման, *Հայերենի քերականություն*, Եր. 2003, էջ 299:

²⁰⁶ Տե՛ս *Բառարան յայտուկ անուանց*, էջ 114:

հալասարություն, կամ դնօղ, կամ եղեալ: ՎՍՀԱՄ-ը տալիս է **Շալա** – ճնշում տարբերակը (1237): Օտար աղբյուրները անվան իմաստը բացատրում են որպես երջանկություն, հարսություն (счастъе, богагство, ЭБ, 750):

ԲՅԱ-ն բերում է նաև **Շալե** գլխաբառը ու իմաստը տալիս է նույնը, ինչ **Շալա** անվանը՝ «հարթություն կամ հալասարություն, կամ դնօղ, կամ եղեալ» և հավելում, որ նույն անունը Ա Մնացորդաց գրքում տրվում է հունական տառադարձությամբ՝ **Սալա**: Սակայն մեր կողմից ուսումնասիրվող երեք բնագրերում էլ անունը տրվում է ասորական տառադարձությամբ՝ **Շալա**:

Ըստ Աստվածաշնչի (Ծն. ԼԸ 2, 3, 4, Ա Մնց. Բ 3)՝ **Շալան** Հակոբի որդի Հուդայի կնոջ անունն է, որը ծնեց նրան **Էն, Օնան, Սելոմ** որդիներին, իսկ **Շալեն** Ծն. ԺԴ 5-ում հիշատակվող քաղաքի անունն է:

Ջեբ -ը (**Ջեբե, Ջեբե**) (հուն.՝ **Ζηβ, Ζηβεε**, ասոր.՝ ܝܘܒ, *Ջաու*) արական եբրայական անուն է. ԲՅԱ-ն տարբերակում է **Ջեբ** և **Ջեբե** անունները ըստ նշանակության, առաջինը նշանակում է գայլ (ԲՅԱ, 97), իսկ երկրորդը՝ զոհ կամ պատարագ, կամ գլխատումն:

Ըստ Աստվածաշնչի՝ տարբեր են նաև այս անունները կրող անձերը, որոնք, սակայն, նույն գրքում են հանդես գալիս: *Դատավորների* գրքի Է 25-ում սպանվում են Գեդեոնի ձեռքով **Ջեբն ու Որեբը**, իսկ նույն գրքի Ը 21-ում Գեդեոնը սպանում է **Ջեբեին** և **Սաղմանային**:

Սա Մադիամի իշխանի անունն է, որը հիշվում է **Որեբի** հետ (Դտ. Է 25), և որին սպանեցին Եփրեմի որդիները: «Արա զնոսա որպես զՄադիամ, որպես զՍիսարա, որպես Յաբին ի ծործորսն Կիսովնի: Սատակեցան նոքա յականս Դովրայ, եւ եղեն որպես զաղբ երկրի: Արա՛ զիշխանս նոցա որպես զՈվրեբն, զՋեբն, զՋեբե եւ զՍաղմանայ եւ զամենայն իշխանս նոցա... Ամաչեսցեն եւ խոովեսցին յաւիտեանս յաւիտենից, եւ ամօթալից կորիցեն» (Սղմ. ՁԲ 10-19): Ա-3 բնագրում թարգմանված է. «Նրանց իշխաններին արա՛ այնպես, ինչպես արեցիր Ջեբեին, Սաղմանային ու նրանց բոլոր իշխաններին...», իսկ Ա-2 բնագրում՝ «Անոնց իշխանները Օրեբին ու Ջեբին պես, ու անոնց բոլոր երևելիները Ջեբեին ու Սաղմանային պես ըրէ»: Ինչպես տեսնում ենք, Ա-1 և Ա-2 բնագրերը այդպես էլ առանձնացնում են այդ երկու անձերին, իսկ Ա-3

բնագիրը վրիպել է **Ջեբին**, որը լուրջ բացթողում է: Չարմանալիորեն այդ նույն ձևով է ներկայացվում **Յոթանասնից**-ում՝ *Դատավորների* գրքի է 25-ում. երկու անձն էլ նույն անունով՝ **Հոթ**, իսկ նույն գրքի Ը 21-ում տրվում է նաև երկրորդ անունը՝ **Հոթեթ**, իսկ սա նշանակում է ուղղակի թարգմանական պատճենում հունարեն բնագրից:

Ու քանի որ սուրբգրային անունները մեզ անցել են ոչ թե սկզբնաղբյուր լեզվից, այլ միջնորդաբար՝ հունարենից կամ ասորերենից, ապա այդ անունների տառադարձումը հարազատ է մնում միջնորդ լեզվի հնչմանը: Ահա թե ինչու եբրայական անունները մեզ ավանդվում են մեծ մասամբ հունական, ավելի սակավ՝ ասորական տարբերակներով կամ տառադարձությամբ, ինչպես՝ **Երուշալիմ – Երուսաղեմ, Աբեշաղովմ – Աբիսողոմ, Եղիշե – Եղիսե, Շայդան – Ծայդան – Սայդան, Սուր – Ծուր, Սուսան – Շուշան, Շմավոն – Սիմեոն, Շմուել – Սամուել, Հաբել – Աբել, Շեմ – Սեմ**: Անունների սուկ թվարկումը ցույց է տալիս հունարենի գերակա ազդեցությունը հայերենում գործածվող հատուկ անունների վրա:

Տառադարձությունը (հարմարագրություն) երկու սկզբունքով է կատարվում՝ հնչյունային և գրային²⁰⁷: Ստորև տալիս ենք հունարեն-հայերեն տառադարձության ընդունված դասական սկզբունքը, որ գործեց մինչև 10-11-րդ դարերը՝ «... իբրև ընդհանուր ուղղագրական հիմունք»²⁰⁸:

α - ա	- δ	- ջ
β - բ	κ - կ	- ռ
γ - գ (ղ)	- հ	σ - ս
δ - դ	- ձ	- - վ
ε - ե (է)	λ - լ (լ)	τ - տ
ζ - զ	- ճ	ρ - ը (ռ)
η - է(ե)	μ - մ	- ց
- ը	- յ	υ - լ
θ - թ	ν - ն	φ - փ

²⁰⁷ Ա. Այտընյանը հայերենի տառադարձության պատմությունը երկու շրջանի է բաժանում՝ մինչև 10-րդ դարը և 10-րդ դարից հետո: 5-9-րդ դարերում մեր նախնիները հետևել են հնչյունային տառադարձությանը՝ ամեն կերպ ձգտելով բառը հարազատ պահել փոխատու լեզվի հնչմանը: Սահակ-Մեսրոպյան ուղղագրությունն ու տառադարձությունը գործում են մինչև 10-11-րդ դարերը:

²⁰⁸ Տե՛ս Ա. Գյուլբուղաղյան, *Հայերենի ուղղագրության պատմություն*, Եր., 1973, էջ 55:

- ժ	ξ - քս, կս, շ	χ - ք
ւ - ի	ο - ո	ψ - փս
- լ	- - չ	ω - ով, ո
- խ	π - պ	

Հունարեն-հայերեն տառադարձությունը ներկայացվում է նաև այսպես՝

α - ա		- ծ- ջ
β - բ, վ	κ - կ	ρ - ռ
γ - գ	- հ	σ - ս
δ - դ	- ձ	- վ
ε - ե, է	λ - լ, լ	τ - տ
ζ - զ	- ճ	ρ - ռ, հռ
η - է, ի	μ - մ	- ց
- ղ	- յ	υ - լ
θ - թ	ν - ն	φ - փ
- ժ	ξ - քս, կս, շ	χ - ք, խ
ւ - ի, յ	ο - ո	ψ - փս
λ - լ, ղ	- չ	ω - ով, ո
- խ	π - պ	

Հայերեն տառի դիմաց դրված գիծը նշանակում է, որ հունարենում համապատասխան հնչույթը չկա: Այս տառադարձությամբ առաջնորդվելիս մեր գրիչները օտար ձայնեղի դիմաց դրել են ձայնեղ, խուլի դիմաց՝ խուլ, շնչեղ խուլի դիմաց՝ շնչեղ խուլ:

Հին հայերենի 36 գրանշաններից 24-ը համապատասխանում են հունարեն տառերին, իսկ մնացած 12-ը հայերենին հատուկ այլ հնչյուններ նշելու համար են²⁰⁹:

Բացի սրանցից, պետք է նկատի ունենալ նաև մի քանի այլ հնչյուններ և հնչյունակապակցություններ, որոնք են՝

²⁰⁹ Տառադարձական տախտակը տրվում է՝ ըստ **Ս. Գյուլբուդաղյանի** Հայերենի ուղղագրության պատմություն գրքի, Եր., 1973, էջ 55 և **Մ. Մինասեանի** Աւերարանների եւ Գործքի յարուկ անունների ուղղագրությունը եւ հոլովումը, Ժնև, 1988, էջ 9:

Ս - **իւ, ի,**

օՍ - բառասկզբում՝ **վ, լ,**

օՍ - բառամիջում՝ **ու,**

‘է, ‘ւ, ‘օ, ‘օ - **հե, հի, հո, հիւ:**

Մ. Մինասյանը «Աւերարանների եւ Գործքի յատուկ անունների ուղղագրութիւնը եւ հոլովումը» ուսումնասիրության մեջ գրում է. «Քանի որ մօտաւորապէս մի դար է բաժանում քրիստոնէութեան պաշտօնական ընդունումը եւ Ս. Գրքի հայերէն թարգմանութեան գրաւոր սկզբնաւորումը Հայաստանում, ուստի որպէս դրոյթ կարելի է ընդունել, որ սուրբգրային անունները Հայաստանում կայունացել էին բերանացի կերպով նախքան գրաւոր թարգմանութիւնը, մանաւանդ ասորական ձեւերով, անշուշտ հայերէնի արտասանական հիմքերին յարմարեցուած: Բացառուած չէ նաեւ, որ մեր թարգմանիչները այդպիսի որոշ անունների արտասանութիւնը բարեխղճօրէն եւ գիտականօրէն ճշգրտած լինեն յունարէն բնագրի գիտական տառադարձութեամբ»²¹⁰:

Մ. Մինասյանից դեռ շատ ավելի վաղ նույն միտքը հայտնում է Ե. Դուրյանը. «Մեսրոպեան կամ դասական տառադարձութիւններէն շատ առաջ հայ քրիստոնէաներու գիտցած այդ եբրայական յատուկ անունները եւ քանի մը յոյն բառերը ոչ թէ տառադարձութեան, այլ ականջի օրէնքով միայն մուտ գտած էին արդէն»²¹¹: Հետաքրքիր է նաև Ա. Այտընյանի կարծիքը. «Նախնիք տառադարձութիւն չունէին, այլ ձայները կը թարգմանէին»²¹²:

Օտար անունները երկու ձևով կարող են փոխառվել՝ անմիջապէս փոխատու լեզվից և միջնորդաբար: Եբրայական անունների հայերէն տառադարձումների, թարգմանական ճշգրտումների մասին լրիվ պատկերացում չենք կարող ունենալ, քանի որ գործ ունենք միջնորդ լեզուների՝ հունարենի և ասորերենի հետ, իսկ դա նշանակում է, որ անունների նախնական պատկերը անպայման որոշակիորեն խաթարվել է, փոխվել:

Ավանդական ուղղագրությունից շեղվող երևույթները պայմանավորված են միջին հայերէնին հատուկ հնչյունական և արտասանական գործոններով, ինչպես՝

²¹⁰ Տե՛ս Մ. Մինասեան, նշվ. աշխ., էջ 7:

²¹¹ Ե. Դուրեան, «Ուսումնասիրութիւնք եւ քննադատութիւնք», Ամբողջ երկեր, հ. 2, Երուսաղէմ, Ուղղագրութեան հարցը, 1935, էջ 313:

²¹² Տե՛ս Մ. Մինասեան, նշվ. աշխ., էջ 7:

բառավերջի *-յ* -ն անհետևողական բաց է թողնվում և անհարկի ավելացվում է՝ **Եփրափա-Եփրափայ**, հայերենում հավասարապես գործածվում են **Յեշու-Յեսու**, **Եզեքիա-Եզեկիաս**, հնչյունի ու տառի նույնացման և այդ պատճառով ավանդական ուղղագրության անտեսման արդյունք են **ե** և **է** գրությունների անկանոնությունները, ինչպես՝ **Երուսաղեմ-Երուսաղէմ**, **Ղամեքայ-Ղամէքայ**, **Մովսես-Մովսէս**, **Փենեհէս-Փենէես**:

Ըստ Հր. Աճառյանի՝ բառավերջում **-ե** չի կարող գրվել. «Բառավերջում **-ե** չի կարող գտնուել. այս երեւոյթը ուշ ժամանակ է առաջացել»²¹³: Սուրբգրային անունները միանշանակ հաստատում են այդ տեսակետը, ինչպես՝ **Աքիրէ**, **Բեթսամէ**, **Բերինիկէ**, **Դաբասթէ**, **Եսրէ**, **Յեսսէ**, **Յեփոնէ**, **Մասէ**, **Կինէ**, **Նարէ**, **Շաւէ** և այլն:

Մինչդեռ Մ. Մինասյանի այն կարծիքը, թե օտար հատուկ անունների ուղղական հոլովի վերջում դասական գրաբարը կարող էր ունենալ **-ե**, չի հիմնավորվում, և եթե ձեռագիր մատյաններում հանդիպում են նման դեպքեր, դա չի կարելի կանոնի վերածել, այլ ավելի շուտ դիտել իբրև գրիչների արտագրության վրիպումներ²¹⁴: Ասենք ավելին. հանդիպում են կրկնակ **էէ**-ով վերջավորվող հատուկ անուններ՝ **Բերսաբէէ**, **Ջերբէէ**, **Ովսէէ**, **Սաբէէ**, և այլն:

Ածանցման կամ հոլովման ժամանակ *Ս. Գրքի* հատուկ անունների ուղղականի վերջնավանկի **-է** ձայնավորը դառնում է **-ե**, ինչպես՝ **Աբէլ-Աբելի**, **Բեթղեհէմ-Բեթղեհեմայ**, **Դագուէլ-Դագուելի**, **Գեղէոն-Գեղեոնի**, **Ելիմելէք-Ելիմելեքայ**, **Իսրայէլ-Իսրայելի**, **Մովսէս-Մովսեսի**, **Սէթ-Սեթայ** և այլն: Մ. Մինասյանը կարծում է, որ սա բնավ ճիշտ տեսակետ չէ, քանի որ **-է** ձայնավորը դասական գրաբարում հնչյունափոխվում է **-ի**-ի, ուստի վերը բերված օրինակներում, ըստ նրա, պետք է գրել **-ե**²¹⁵:

Բառի աճման կամ թեքման ժամանակ, **է**-ն կարող է վերածվել **ե**-ի (**Գամաղիէլ-Գամաղիելի**), բայց այս կանոնը հաճախ խախտվում է. **Հին և Նոր կտակարաններում** հանդիպում են թե՛ **է**-ով, թե՛ **ե**-ով գրվող ձևեր՝ **Հրեաստան-Հրէաստան**, **Գաղիղեացի-Գաղիղէացի**. «Եկեալ ի Հրէաստանէ ի Գաղիղէա», «Երթիցուք Հրեաստան ի Գաղիղէէ»:

²¹³ Հր. Աճառյան, *Լիակափար քերականություն հայոց լեզվի*, հ. 2, էջ 672:

²¹⁴ Տե՛ս Մ. Մինասեան, Աւետարանների եւ Գործքի յատուկ անունների ուղղագրութիւնը եւ հոլովումը, Ժնեւ, 1988, էջ 11:

²¹⁵ Տե՛ս Մ. Մինասեան, նշվ. աշխ., էջ 10:

Եբրայական անուններում **Ե**-ն և **Է**-ն կարող են իրար կողքի գրվել, ինչպես՝ **Ասրեէ, Բեթղեէմ, Բեէզրուդա, Բէեղսեպիովն, Գէերա, Նարդեէլ, Նէեման, Նէեմիա, Փեննէս** և այլն: Հունարենում ևս դա հանդիպում է, ինչպես՝ **Βεσελεηλ, Σηρα**, որոնք հայերեն տեքստերում դարձել են մի դեպքում **Բեսելիել** և մյուս դեպքում՝ **Սէէրա**:

Բառասկզբում գրվում է **Ե** հունարեն **Ε** -ի փոխարեն, ինչպես՝ **Եղիադաս** (**Ελιαδασ**, բայց երբեմն բառասկզբում **Ե** կարող է գրվել հունարեն **Η**-ի փոխարեն, ինչպես՝ **Եսալ** – **Ησαδ**, բառասկզբում **Ե** է գրվում նաև հունարեն **Ιε**-ի փոխարեն, ինչպես՝ **Եզարել** – **Ιεζάβελ**: Հայերեն **Ե** է տառադարձվում հունարեն **αι/Αι** երկհնչյունը **Այγոπτος** – **Եգիպտոս**, **Αιθίοπ** – **Եթովպիա**, **Εφραϊμ** – **Եփրեմ**:

Օտար **կրկնակ բաղաձայնների** տառադարձման մասին կա այն ընդհանրացված կարծիքը, որ հայերենը կրկնակ բաղաձայնները տառադարձում է պարզ բաղաձայնների (Հ. Հյուբշման, Ա. Մեյե, Հր. Աճառյան), ինչպես՝ **Δεββωρα** – **Դեբովրա**: Բայց **Սուրբ Գրքի** անունների քննությունը ցույց է տալիս, որ այս կանոնը գործում է մասնակիորեն, ինչպես՝ **Աբեսսա, Աբեդդ, Ադդա, Ադդար, Ադասսա, Ալլոն, Ակկարոն, Աննա, Ամմա, Ամման, Ամմովն, Աննուա, Ասեննա, Ասերմաքքովթ, Բալլա, Բալլայենոն, Բալլան, Բեթէղղուզ, Բեթթափուէ, Դեննա, Դեննաբա, Կարփաաթ, Կարփամաթ, Մադդարովթ, Մակեդդա, Մակեդդով, Մասեկկա, Յեսսէ, Յերփա, Յոպպէ, Ոմմինք, Ռաբբովթ, Ռեկկաթ, Ռեմմոն, Ռեսսա, Սամմա, Սանսաննա, Սարփիմ, Սելլա, Սելլասարայ, Սեղղեմ, Փալլ/ղղ/ուս, Փիլիպպէ, Քաբբա, Քամմադա, Քելլոն** և այլն: Վ. Հացունին փորձում է սա այլ կերպ մեկնաբանել. «Օտար անուանց կրկնակներն ալ Աստուածաշունչ գրոց թարգմանիչք ոմանք խղճահարութեամբ անփոփոխ պահեցին հայերենի մէջ՝ ի յարգանս ս. մատենին...»²¹⁶: Սա չի նշանակում, որ կրկնակ բաղաձայն ունեցող բոլոր հատուկ անունները տառադարձվել են կրկնակ բաղաձայններով. այսպես՝ **Մեսսիա**-ն տառա- դարձվել է մեկ **ս**-ով, **Տիրաննոս**-ը **Տիրանոս**, **Սադդա**-ն մեծ մասամբ **Սադա**, **Ապողոնիոս** (**Απολλωνιος**) և այլն: Ա-Յ բնագիրը գործածում է մեկ **Ազգիթ**, մեկ **Ազիթ** անվան տարբերակները (հուն.՝ **Φεγγιθ**, ռուս.՝ **Аггиф**):

Նույն ձևով կարող են գրվել կրկնակ ձայնավորներ՝ **աա, ոո**, ինչպես՝ **Աքաաբ**,

²¹⁶ Վարդան Հացունի, *Ուղղագրութիւն...*, էջ 25-30:

Բաալ, Բաալիս, Բաաղգադ, Բաասա, Բոոս, Գաղաադ, Եթբաադ, Մաաքա, Ոոդա, Նաասուն, և դրանց միջև *յ* արտասանելն անտեղի ու անիմաստ էր:

Նույնությամբ պահվում էր *-իա, -իե՝ Անանիա, Ազարիա, Երեմիա, Մաղաքիա, Ջաքարիա, Եղիա, Գաբրիել, Եզեկիել, Ուրիել* և այլն:

Բայց ըստ որոշակի կանոնի՝ արտասանության՝ *յ*-ն գրվում է՝ *հսրայել, Միքայել, Ռաֆայել, Անանիայի, Ադոնայի* և այլն:

Հունարեն *ω*-ն տառադարձվել է երբեմն *ո*, երբեմն՝ *ով*, ինչպես՝ *Սողոմոն-Սողովմոն-Սողոմովն, Մովսէս-Մոսէս, Սիդոն-Սիդովն* և այլն: Աշխարհաբարում *ով*-ը դառնում է *ո*, ինչպես՝ *Բէդեսեպիովն-Բէդեսեպիոն, Մագդովդ-Մագդոդ, Հոովմ-Հոոմ, Սողովմոն-Սողոմոն*: Ինչպես տեսնում ենք, աշխարհաբարում *ով*-ի *վ*-ն ընկնում է: *վ*-ի անկումը նույնիսկ գրաբարում արդեն հանդիպում է Թվ. ԻԱ 13-ում՝ «*Առնովնայ յանապարին*», իսկ ԻԲ 36-ում՝ «*...որ է ի սահմանս Առնոնայ յեզեր միում սահմանացն*»:

Յ բառասկզբում գրվում է հունարեն *Ζ*-ի փոխարեն՝ իբրև բառի հնչյունակազմի տարր և արտասանվում է *հ*, ինչպես՝ *Յայել – Իսղ, Յակոբ – Իսκώβ, Յորդանան – Իորδάνոս, Յուդիթ – Իսուծի, Յեսրոկ – Իսբոկ, Յոթոր – Իոթոր, Յերոբովամ – Իերոբոսս* և այլն, որոնք աշխարհաբարում գրվում են *հ*-ով՝ *Հակոբ, Հորդանան, Հուդիթ, Հեսրոկ, Հոթոր, Հերոբովամ* և այլն:

Եբրայերենը ունի *ה* տառը (նաև՝ հնչյունը), իսկ հունարենը չունի տառը, բայց հնչյունը բառասկզբում արտահայտվում է հազագի նշանով՝ *Ϝ*. հայերենը նույնպես ունի *հ*, բայց բնագրերում մեզ հանդիպում են առանց *հ*-ի ձևեր, որն էլ դարձյալ փաստում է թարգմանելիս հունարենը իբրև բնօրինակ ձեռքի տակ ունենալը, ինչպես՝ *Աբել, Ալելուիա, Աբբանա*:

Յ-ն բառասկզբում *ի*-ի դիրքային տարբերակն է, երբ անունն սկսվում է ձայնավորով, ինչպես՝ *յԱրիմաթեայ, յԱսեդովթայ, յԱզեկայ, յԱհարոնէ, յԱնովբայ* և այլն:

Բառավերջում *յ* տառ չեն ունենում օտարազգի անունները ուղիղ ձևերում՝ *Եղիա, Երեմիա, Յուդա, Ջելփա, Մաղաքիա* և այլն (բացառություն է կազմում *Նոյ* անունը): Այդ անունները *յ* ստանում են սեռական-տրական հոլովներում, ինչպես՝ *Երեմիայ, Բալլայ, Գողգոթայ*, բայց *Ասրվածաշնչում* այս կանոնը բացարձակ չի գործում, և կան

դեպքեր, երբ անունը ուղիղ ձևով պահում է *լ*-ն՝ **Հելայ** (աշխ.՝ **Հեղա**) (Ծն. ԼԶ 42):

Հունարենում *Υ*-ն (հայերեն տառադարձվում է **իւ**), որով գրվում է **Υδασπην** անունը, գրաբար և աշխարհաբար թարգմանություններում նախորդվում է **Հ**-ով՝ **Հիդասպ** ձևով: Ըստ երևույթին, հունարենում բառասկզբում այս տառը ունեցել է հազագի նշան, որը **Յոթանասնից**-ում ուղղակի չի նշվում:

5-րդ դարում հայերենում կար երկու **լ**. մեկը ժամանակակից **լ**-ն է՝ **լավ, լի, լույս**, մյուսը մոտ էր մեր այսօրվա **ղ**-ին²¹⁷, արտաբերվում էր լեզվի հետևի մասով և թանձր էր, նման ռուսերեն **лб**-ին, բայց **ղապ** չէր: Այս երկրորդ հնչույթը Մաշտոցն արտահայտեց **ղ** տառով, որը համապատասխանում էր հունարեն **λ** տառին, ինչպես՝ **Մարութաղա**: 5-րդ դարում հայերենում բառասկզբում լավող **լ**-ն գրվում էր **լ** տառով, ինչպես՝ **Լարան, Լիա**: Այդ նույն դարում փոխառությունների ու հնչյունափոխության հետևանքով **ղ**-ով սկսվող մի քանի բառեր մտան հայերենի մեջ:

Օտար **լ**-ն հայերենում ձայնավորների միջև, **ի, է, ե** տառերին նախորդելիս և բառավերջում գրվել է **ղ** տառով, ինչպես՝ **Փղղիպոս, Գղղղիղա, Բարեղոն**: Սակայն հանդիպում են այդ նույն բառերի **լ**-ով գրության ձևեր: Սա նշանակում է, որ, ինչպես նշում է Ա. Բագրատունին²¹⁸, այս տառերի գրությունը խառնակ է եղել: Վ. Հացունու կարծիքով փաստերը հերքում են Մեյեի այն դրույթը, թե բաղաձայնից առաջ **ղ** է գրվել, ձայնավորից առաջ՝ **լ**²¹⁹:

Բառասկզբում գրվում է **Ղ** հունարեն **Λ** հնչյունի փոխարեն, ինչպես՝ **Ղեի** – Λει, **Ղամեր** – Λαμεχ, **Ղովր** – Λωτ:

Բառամիջում հունարեն **λ** հնչյունը հայերենում կարող է դառնալ **լ** կ' **ղ**, ինչպես՝ **Ղալիլա** – Δαλιλα, **Քաղեր** – Χαλεβ, **Սաղարթել** – Σαλαθιήλ, **Եղիսարեթ** – Ελισάβεθ, **Եղկանա** – Ελκανα, **Եղիազար** – Ελιέζερ, **Ողղա** – Οολα, **Ողղրա** – Οολιβα:

Հին հայերենի **լ**-ի՝ հետնալեզվային **ղ**-ին մոտեցող կոշտ արտասանության վերացումը միջին դարերում հայերենի համար պատճառ է դառնում որոշ անունների երկգրության, ինչպես՝ **Աղերսանդր-Ալերսանդր, Ղազար-Լազար, Ղասա-Լասա, Ղուկաս-Լուկաս, Ղափուսիիմ-Լափուսիիմ, Ոզիել-Ոզիել** և այլն:

²¹⁷ Տե՛ս **Ս. Գյուլբուդաղյան**, նշվ. աշխ. էջ 17:

²¹⁸ Տե՛ս նույն տեղում:

²¹⁹ Տե՛ս նշվ. հեղ., նույն տեղում, էջ 20:

5-րդ դարում **վ** և **ւ** տառերը արտահայտում էին տարբեր հնչյուններ. բառասկզբում գրվում էր միայն **վ**, ինչպես՝ **Վայքարովթ, Վէմ**, բառամիջում, բաղադրյալ բառերում՝ իբրև արմատի սկզբնատառ, և բառավերջում **ու** բառամիջում տառից հետո, որպեսզի չկարդացվեր **ու**, ինչպես՝ **Աբեսաղովմ, Բերովթ, Փիսովն, Նաքովր, Եղովմ, Ղովր**, իսկ **ւ**-ն գրվում էր բառամիջում, ձայնավորների միջև (հին հունարենում ձայնավորների միջև գրվում էր **υ**, որն արտասանվում էր **վ**' համապատասխանող հայերեն **ւ**-ին), բառավերջում, ինչպես՝ **Աւիմ, Բաւ, Գաբաւոն, Եսաւ, Եւիլա, Ղեւի, Նաւէ, Շաւա**: **Վ**-ի արտասանությունը բաղաձայնից առաջ պահվում է սակավաթիվ բառերում, որոնց մեջ հնչյունափոխության հետևանքով **ւ**-ից հետո եղած ձայնավորն ընկնում է, ինչպես՝ **Դաւիթ-Դաւթի**:

Եբրայերենը ունի **g** և **z** հնչյունները, որոնք չկան հունարենում, ուստի երկու դեպքում էլ տառադարձվում է **ս**, ինչպես՝ **Սաբաւովթ, Սադդայ, Սամարիա, Կադէս**:

Հունարեն թեք հոլովաձևերով շատ անուններ հայերեն որպես ուղղական են տրվում. դրանք են՝ **Արիսպագոս, Դիոս, Ելլադա, Ենեա, Հոռոն, Մակեդոն, Միլեփոն, Պարողեմայիդա, Պրոքորոն, Սաղամինա, Սարովնա, Տարսոն, Տիմովնա, Տրովադա, Փիլիպպոս**:

Հունարեն անուններում բառավերջում հանդես եկող **v**-ն (**υ**-ն) հայերենում ընկնում է՝ **Ասχαν, Աχսան – Ասքա, Աքսա, Կდაսպոն – Հիդասպ**:

Հրեական անուններում հանդես եկող կրկնակ **pp**-ն տառադարձվում է հայերեն **n**, ինչպես **Χαρραν – Խառան, Σαρρα – Սառա**²²⁰:

²²⁰ Նշենք, որ արևմտահայերեն՝ Ա-2 տեքստը պահում է եբրայական ձևը՝ **Սարրա**:

4.2. Տարընթերցումներ

Որքան էլ դասդասենք աստվածաշնչյան անունների տառադարձական և ուղղագրական դրսևորումները, միևնույնն է, մնում են **բազմաթիվ անմիօրինակություններ**: Միևնույն անունը տարբեր թարգմանություններում ներկայանում է տարբեր կերպ, նույնիսկ միևնույն թարգմանության տարբեր գրքերում են հանդիպում նույն անվան տարբերակներ, որոնք պայմանավորված են պատահական վրիպումներով, ձեռագրերում գրությամբ հստակ չզանազանվող **ա-ու, ա-տ, գ-դ, գ-դ, Է-շ, յ-ց, ս-ո** և այլ տառերի նմանությամբ, հնչյունների դրափոխությամբ, ամփոփմամբ, սխալ բառակցումով և բազմաթիվ այլ պատճառներով²²¹: Ուստի հարց է առաջանում, թե որն է անվան ճիշտ կամ սկզբնական գրությունը: Ա-3 (արևելահայերեն) տեքստի անունները մեծ մասամբ նույնանում են Թ. Աստվածատրյանի համաբարբառի անունների հետ, քանի որ երկուսի աղբյուրն էլ Արսեն Բագրատունու կազմած *Աստվածաշունչն* է: Որոշակիորեն տարբերություններ են նկատվում արևմտահայերեն թարգմանության հետ. վերջինիս ներկայացրած հատուկ անունները զարմանալիորեն նույնանում են ռուսերեն, նաև գերմաներեն թարգմանությունների հատուկ անուններին: Հարկ ենք համարում ներկայացնել բազմաթիվ հակասությունների որոշ մասը՝ հիմք ընդունելով համեմատությունը *Յոթանասնիցի* հետ:

Թովմայի, Թոմայի, Թոլմի, Թողմի (հուն․՝ **Θολμυ**, ասոր․՝ **ܛܘܠܡܝ Թուլմայ**, ռուս․՝ **Фалмая**, գերմ․՝ **Talmai**):

Աստվածաշնչի Ա-1 բնագրի Հս. ԺԵ 14-ում տրվում է **Թովմայի** անունը. «... գերիս որդիսն Ենակայ՝ զՍուսի, **զԹովմայի** եւ զԱքիման», նույն անունը Դտ. Ա 10-ում²²² տրվում է **Թոլմի** տարբերակով. «...եւ հարին զՍեսի, եւ զԱքիման եւ **զԹոլմի**՝ զծնունդսն Ենակայ» (հունարեն տեքստում երկու դեպքում էլ տրվում է՝ ... και τὸν **θολμυ**): Ա-3 (արևելահայերեն) բնագրում **Թովմային** դարձել է **Թոմայի**, որտեղ անշուշտ պետք չէ **ով-ո** հնչյունափոխություն կատարել, ինչպես **Սողովմոն-Սողոմոն, Հռովմ-Հռոմ** և այլն,

²²¹ Մ. Մինասյանը միանգամայն տեղին նկատում է հետևյալը. «...եբրայական որոշ յատուկ անունների արտասանությունը եբրայեցերենում նույնը չէր Յիսուսի ժամանակ եւ Հին Կրակարանում: Ուստի անօգուտ է ամեն անգամ դիմել անունների եբրայական հնագույն ձևերին, քանի որ դրանք աղաատու են յունարեն բնագրում. Բացի այդ, հայ թարգմանիչները գործ չեն ունեցել եբրայեցերեն բնագրի հետ նույնիսկ Հին Կրակարանի թարգմանութեան ժամանակ»: Տե՛ս նշվ. հեղ. *Աեփարանների եւ Գործքի յափուկ անունների ուղղագրությունը եւ հղովումը*, Ժնեւ, 1988, էջ 12:

²²² Դատավորաց գրքի սկզբում փաստորեն կրկնվում են Հեսուի գրքի որոշ էջեր:

իսկ **Թուլմի**-ն մնացել է նույնը: Ա-2-ը տալիս է անվան **Թուլմի** ձևը նույն բնագրում, ՄՍԱ-ն *Հեսուի* գրքում տալիս է **Թովմայի** տարբերակը, *Դափավորաց*-ում՝ **Թողմի**. վերջին ձևը անշուշտ էական փոփոխություն չէ, քանի որ, ինչպես տեսանք վերևում, **Լ-ը** տարբերակային գրությունը սովորական է մեր բնագրերում: Թ. Աստվածատրյանի ՀՄԲ-ն տալիս է գլխաբառ՝ **Թովմայի**²²³ հղելով միայն *Հեսուի* գրքին, *Դափավորաց* գրքի հղումը տալիս է **Թուլմի** գլխաբառին²²³, մինչդեռ Վ. Սահակյանի ՀՄԲ-ն տալիս է միայն **Թուլմի** գլխաբառը՝ դարձյալ հղելով *Հեսուի* գրքին. այստեղ արդեն բացակայում է **Թովմայի**-ն²²⁴: Ռուսերենում երկու դեպքում էլ՝ **Фалмая**, գերմաներենում՝ **Talmay**: ԲՅԱ-ն տալիս է անվան երեք ձևերն էլ. **Թովմայի**-ն և **Թուլմի**-ն հղվում են **Թողմի** տարբերակին: Մենք՝ հայերս, եբրայական **Թեղամի** անունը տառադարձել ենք **Թովմայի**, երբեմն կարող է հանդիպել **Թաղամի**:

Սեսի, Սէսի, Սուսի (հուն.՝ Σουσι, ասոր.՝ ܣܘܫܐ **Սուսի**, ռուս.՝ Шешая/Шеша, գերմ.՝ Scheschai):

Նույն կերպ վերը բերված օրինակներում տարընթերցում ունի նաև **Սուսի** անունը, որը Ա-2-ում դարձել է **Սէսի**, Ա-3-ում՝ պահպանվում են գրաբարյան ձևերը՝ **Սուսի** և **Սէսի**. բառամիջում **ե-է** տարընթերցումը բնորոշ է ոչ միայն այս անվանը: ԹԱՀՄԲ-ն առանձին գլխաբառերով տալիս է **Սեսի** և **Սուսի** անունները²²⁵, ՎՍՀՄԲ-ն՝ **Սէսի**, ՄՍԱ-ն՝ **Սէսի**: Մեզ թվում է, որ հաճախ տարընթերցման պատճառը ուղղակի գրչագրական վրիպակներն են. որպես այդպիսին պետք է համարել անվան **Սուսի** ձևը. բացի այդ, եթե աշխարհաբարում ունենք **Սուսի** ձևը, ապա գրաբարում այդ դեպքում հղյվման մեջ պետք է լիներ ոչ թե **Սուսայ**, այլ՝ **Սուսեայ**, մինչդեռ Թվ. ԺԳ 13- ում՝ *որդի Սուսայ* (հուն.՝ υἱὸς σουσι), Հս. ԺԵ 14՝ *զերիս որդիսն Ենակայ՝ զՍուսի, զԹովմայի եւ զԱքիման* (հուն.՝ τὸν σουσι) , Դտ. Ա 10՝ *եւ հարին զՍեսի, եւ զԱքիման եւ զԹուլմի՝ զճնունդսն Ենակայ* (հուն.՝ τὸν σεσι):

Եղրագա, Երրագա, Ելրագա, Ելրադա, Երրադա (հուն.՝ Ελραγα, ասոր.՝ ܐܠܪܐܘܐ)

²²³ Տե՛ս ԹԱՀՄԲ, էջ 576, 580:

²²⁴ Տե՛ս Վ. Սահակյան, ՀՄԲ, էջ 1172 (ՎՍՀՄԲ):

²²⁵ Մենք արդեն նշել ենք այն հիմնական բացթողումը, որ բնորոշ է ԹԱՀՄԲ-ին՝ անունները չառանձնացնելու, եթե դրանք անվանում են տարբեր անձերի կամ վայրեր: Այս դեպքում հակառակ իրողությունն ենք տեսնում. միևնույն անձը ունի անվան երկու տարբերակ, և դրանք առանձնացված են իբրև առանձին անուններ:

Ալդաա, ռուս.՝ **Елдага**, գերմ.՝ **Eldaga**):

Անշուշտ գրչագրական սխալի հետևանք կարելի է համարել **Եղրագա-Եղրագա-Եղրագա** տարրնթերցումը: Ա-1-ում՝ **Եղրագա** (Աբրահամի թոռ Քետուրայից, Մադիամի որդին)- Ծն. ԻԵ 4, Ա-2-ում՝ **Եղրագա**, Ա-3-ում՝ **Եղրագա** ձևերը ներկայացված են ԹԱՀՄԲ-ում՝ **Եղրագա**. բնական է այս վերջին երկու բնագրերի նույնությունը, որովհետև երկուսի բնօրինակ աղբյուրն էլ Արսեն Բագրատունու *Աստվածաշունչն* է: ԲՅԱ-ն տալիս է **Եղրադա**²²⁶՝ հղելով Ծն. ԼԵ 4-ին և նշելով, որ անվան եբրայական ձևն է **Եղրադա**, իսկ ըստ հույների՝ **Րագա**: Բառարանը հավելում է, որ մեր մեջ գործածվող ձևն է **Եղրամ**²²⁶: Անվան **Եղրագա** տարբերակը համընկնում է արևմտահայերեն, ռուսերեն և գերմաներեն տեքստերում, և սա արդեն օրինաչափություն է բոլոր անունների համար: Ինչպես երևում է տարբերակներից, ունենք մի քանի հնչյունական տարրնթերցումներ՝ **լ-ղ**, **գ-ղ**, **ր-ղ**, փոխազդեցական հնչյունափոխության դրսևորում՝ դրափոխություն՝ **Եղրագա-Եղրագա**: Հունարեն թարգմանության մեջ (**καὶ ελραγα**), ինչպես տեսնում ենք, **ղ** չկա, այն չէր կարող **լ**-ին կամ **ղ**-ին փոխարինել. կնշանակի անվան **ղ**-ով տարբերակը կարող էր ասորական թարգմանությունից անցած լինել:

Թառգաղ, Թարգաղ, Թադգաղ, Թարգալ (հուն.՝ **Θαργαλ** ասոր.՝ **ܛܪܓܐܠ Թառել**, ռուս.՝ **Фидал**, գերմ.՝ **Tidal**):

Ծն. ԺԴ 1-ում գործածված է անվան **Թառգաղ** տարբերակը (Ա-1), Ա-2-ում՝ **Թադգաղ**, Ա-3-ում՝ **Թարգաղ**: ԹԱՀՄԲ-ն այս անվանացանկին ավելացնում է ևս մեկը՝ **Թարգալ**, որտեղ էական փոփոխություն չկա Ա-3-ից, այն է՝ **ղ-լ** հնչյունափոխման: Որ հնարավոր է նաև **ղ-փ** տարբերակի առկայություն, դա էլ է տրամաբանական: Խնդիրն այստեղ **ր**-ի փոխարկումն է **փ//ղ**-ի: ՄՍԱ-ն այս դեպքում նույնանում է Ա-3-ի հետ՝ **Թարգաղ**: Հունարեն թարգմանությանը նույնանում է Ա-3-ի, ԹԱՀՄԲ-ի և ՄՍԱ-ի **Թարգաղ** տարբերակին:

Որոշ անուններում տարրնթերցումը բառավերջում **ն**², թե՛ **մ** գրելն է:

Ակրաբիմ, Ակրաբին (հուն.՝ **Ακραβιν**, ասոր.՝ **ܐܟܪܒܝܢ Ավառ Լսին**, ռուս.՝ **Акравим**, գերմ.՝ **Zin**):

Ակրաբիմ-ը տեղանուն է՝ գործածված Թվ. ԼԴ 4-ում, Հս. ԺԵ 3-ում (հուն.՝ **τῆς**

²²⁶ Տե՛ս ԲՅԱ, էջ 76, մինչդեռ հայերեն թարգմանություններում այս անունը տվյալ գլխակարգության մեջ առկա չէ:

προσαναβάσεως Ακραβιν), Դտ. Ա 36-ում՝ «*գառիվայրին Ակրաբինայ*», իսկ **Ակրաբին**-ը, որը դարձյալ տեղանուն է՝ լեռ, հանդիպում է Թվ. ԼԴ 4-ում՝ «*ընդ սարն Ակրաբինայ*» (հուն.՝ **Ακραβιν**): Ա-2-ում բոլոր գրքերում գործածվում է **Ակրաբիմ** տարբերակը: Նույն տեղանունն են ակնարկում երկու ձևերն էլ՝ **Ակրաբիմ**/**Ակրաբին**, և ԲՅԱ-ում էլ դրանք ներկայացվում են նույն գլխաբառի տակ: Մինչդեռ ԹԱՀՄԲ-ն առանձին գլխաբառերով է տալիս միևնույն անունը: Այս անունների դեպքում զարմանալիորեն տարբերվում է գերմաներեն անվանումը՝ **Zin**: Տարընթերցումների ճիշտ ձևի համար, կարծում ենք, հիմք պետք է համարվի հունարենը, որը երկու դեպքում էլ տալիս է **Ακραβιν**:

Մադիամ, Մադիան (հուն.՝ **Μαδιάμ**, ասոր.՝ ܡܕܝܐ **Մադյամ**, ռուս.՝ **Мадриан**, հոգնակի՝ **мадианитяне**, գերմ.՝ **Midian**, հոգնակի՝ **Midianiter**):

Հայերենում նույն գրքում տրվում են և՛ **Մադիամ** (Ծն. ԼԶ 35 (ասոր.՝ **մըդյանայե**, որ է՝ *մադիանացիներ*), Դտ. Զ 2 (ասոր.՝ **մըդյանայե**), և՛ **Մադիան** (ասոր.՝ **մըդիան**) (Ծն. ԻԵ 2), ռուսերենում միայն՝ **Мадиан, мадианитяне**, գերմաներենում՝ **Midian, Midianiter**: Որքան էլ տարբերակների գերակշիռ մասը **ն** վերջնահնչյունով է, այնուամենայնիվ, ըստ հունարենի՝ ունենք **Մադիամ** – **Μαδιάμ**:

Սաբային, Սեբոյիմ, Սաբայի (հուն.՝ **Σεβωιμ**, ասոր.՝ ܣܒܝܐ **Սավա**, ռուս.՝ **Цевоим**, գերմ.՝ **Zemarit**):

ԹԱՀՄԲ-ն տալիս է **Սաբային անապատը**, նաև **Սեբոյիմ** տեղանունը (քաղաքի անուն, որը միշտ հիշատակվում է **Ադամայի** հետ): Ըստ ԲՅԱ-ի՝ գլխաբառն է **Սաբային**, երբեմն՝ **Սեբային**, նաև **Սեբոյիմ**, իսկ **Դանիելի** ԺԱ 45-ում գործածված համանուն **Սաբային**-ը արդեն ոչ թե անապատը, այլ եբրայերեն գրվող **Սաբի** ձևի համարժեքն է և նշանակում է **Սիոնի լեռ**: Որ **Սաբային**-ը նույն **Սեբոյիմն** է, հաստատվում է արևմտահայերեն թարգմանությանը, ռուսերենում՝ **Цевоим**, գերմաներենում՝ **Zemarit**, և վերջապես հենց հունարենով՝ **Σεβωιμ**:

Սաբային տեղանունը Ա-3-ում տրվում է՝ **Սաբայի**, Ա-2-ում՝ **Սեբոյիմ**. Ա Թգ. ԺԳ 18՝ «*յառեալ ի Գայի Սաբային անապատին*», **Սեբոյիմ**՝ Ծն. Ժ 19-ում. «...*եւ յԱդամա եւ ի Սեբոյիմ մինչեւ ի Լասա*» (արևելյ.՝ **Սեբոյիմ**, հուն.՝ **καὶ σεβωιμ**), Երկ. Օր. ԻԹ 23-ում՝ «*Յամենայն ի հող նորա մի՛ սերմանեցի եւ մի՛ բուսցի, եւ մի՛ ելցէ ի վերայ նորա ամենայն դեղ դալար, որպէս կործանեցան Սոդոմ եւ Գոմոր, Ադամա եւ Սեբոյիմ, զորս*

կործանեաց Տէր սրտմտութեամբ եւ բարկութեամբ»:

Իսահառ, Սահառ, Յեսար (հուն.՝ **Ισσααρ, Σααρ**, ասոր.՝ **ܝܫܥܐ ܙܫܫܗܐܢ**, ռուս.՝ **Ицгар**):

Արական այս անձնանունը *Աստվածաշնչում* (Ել. 2 18, Թվ. 4 19, ԺՁ 1, Ա Մնց. 2 2, 22, 38) հանդես է գալիս **Իսահառ, Սահառ, Սարիսա, Յեսար** տարբերակներով, իսկ նույն անձը *Մնացորդաց* գրքում (22)՝ նաև **Ամինադաբ**: Ա *Մնացորդացում* Ա-1-ը երեք գործածության դեպքում էլ (3, 22, 38) տալիս է **Իսահառ**, Ա-3-ը՝ երկու դեպքում **Սահառ**, իսկ 38-ում՝ **Յեսար**, իսկ Ա-2-ը՝ **Իսահառ**, 22-ում՝ **Ամինադաբ**: Օտար աղբյուրները տալիս են միայն **Ицгар, Аминадав** (НЖБ), իսկ անվան նշանակությունը նույնանում է ըստ ԲՅԱ-ի (107)՝ **պայծառություն** և ըստ ՅԵ (334)-ի՝ **блистающий**, իսկ ԲՅԱ-ի տված մյուս նշանակությունները՝ *ծեթ կամ հարավային*, չեն հիմնավորվում: Ասենք, որ *Յորթանասնից*-ը չի տալիս ոչ մի տարրնթերցում, և բոլոր գործածություններում միայն **Ισσααρ – Իսահառ** տարբերակն է (չմոռանանք, որ հին հունարենը չունի **h** հնչյունը, և ըստ այդմ, ոչ միայն այս, այլև ուրիշ անուններում գրվում է կրկնակ **αα**:

Մնում է այս ամենին ավելացնել նաև այն, որ անվան **Սահառ** (հուն.՝ **Σααρ**) տարբերակը *Աստվածաշնչում* կրում են երեք անձ՝ **Սահառ¹** – Ծն. ԻԳ 8-9, ԻԵ 9՝ *որդույ Սահառայ* (հայտնի է միայն, որ սա եղել է քետացի, որի որդին Եփրոնն էր, որից Աբրահամը շիրմավայր խնդրեց), **Սահառ²** – Ծն. ԽՁ 10-11, Ել. 2 15 (Շմավոնի որդին), **Սահառ³** – Ել. 2 18, Թվ. ԺՁ 1 (Կահաթի որդի, Ղևիի թոռ): Մինչդեռ ըստ ԲՅԱ-ի՝ *Աստվածաշնչում* գործում է միայն Կահաթի որդին՝ Ղևիի թոռը²²⁷: Մեջբերենք *Ծննդոցից*. «**Շմավոնի որդիներն են՝ Յամուէլը, Յամինը, Ահողը, Յաքինը, Սահառը..., Ղևիի որդիներն են՝ Գերսոնը, Կահաթն ու Մերարին**» (ԽՁ 10-11): Հենց միայն այս հատվածում տարբերակվում են երկու **Սահառները**՝ Շմավոնի որդին, և Կահաթի որդի Ղևին, որից էլ սերում է մյուս Սահառը:

Եդրային, Եդրինա (հուն.՝ **Εδραιον**, ասոր.՝ **ܐܕܪܝܢ ܐܘܪܝܢܐ**, ռուս.՝ **Едрея**):

Եդրային տեղանունը (Թվ. ԻԱ 33-ում՝ *յԵդրային*՝ աշխ.՝ **Եդրինա**, հուն.՝ **εις εδραι+ν**, ռուս.՝ **Едреи**, Երկ. Օր. Ա 5²²⁸, Գ 2-ում՝ *յԵդրային* ռուս.՝ **Едреи**²²⁹, 10, Հս. Թ 11,

²²⁷ Նույնիսկ ՅԵ- ն ներկայացնում է միայն Կահաթի որդուն՝ Իսահառին (Ицгар, 334):

²²⁸ НЖБ-ում Ա 5, Գ 2-ը տրված են Ա 4, Գ 1 թվակարգության տակ:

²²⁹ Ռուսերեն ձևը կրկնում ենք, որ երևա նրանց տեքստում անվան տարրնթերցում չունենալը:

ԺԲ 5 (աշխ.՝ **Եդրային**), ինչպես տեսնում ենք, գրաբարում ընդամենը մեկ՝ **Եդրային** տարբերակով, աշխարհաբարում հանդես է եկել երկու տարբերակով՝ **Եդրինա**, **Եդրային**: Հունարենը բոլոր դեպքերում գործածում է **Եդրային** – **Էծրայն**:

Քիրիմ, Քերամ (հուն.՝ **Փիծων**, ասոր.՝ **ܦܪܝܡܐ** **Քառան**, ռուս.՝ **Фиррам**):

Քիրիմ արական անձնանունը աշխարհաբարում տրվում է **Քերամ**, իսկ ռուսերենում՝ **Фиррам** տարբերակներով. գրաբար տեքստում՝ Հեսուի Ժ 3-ում՝ «*եւ առ Քիրիմ արքայ Յերիմութայ*» (Ա-1), «*Յերիմութի թագաւոր Քերամի*» (Ա-3), իսկ Ա-2 բնագիրը՝ **Փիրամ**. «... *Յերիմութի Փիրամ թագաւորին...*»:

Հավանաբար այս անվան դեպքում ընկալելի են Ա-2 և Ա-3 գրքերի ներկայացրած տարրնթերցումները՝ **Փիրամ, Քերամ**, իսկ գրաբար տեքստը միանշանակ շփոթել է **Ք** տառերը, այսինքն՝ այս դեպքում ունենք սուկ արտագրող գրիչների վրիպակ:

Եզղոն, Եզլոն, Էզղոն, Օդղոդմ (հուն.՝ **Օծոլլամ**, ասոր.՝ **ܐܘܘܠܐܢܐ** **Ըզլոն**, ռուս.՝ **Еглон**):

Այս տեղանունը տարբերակվում է գրաբար տեքստում (Հս. Ժ 3). «... *եւ առ Դաբիր արքայ Եզղոնայ*» (Ա-3-ում՝ **Օդղոդմ**), 5, 34, 36. «... *յԵզղոնայ ի Քեբրոն*», Հս. ԺԲ 12. «... *զթագաւորն Եզլոնի*» (Ա-3-ում ևս՝ Եզլոն): Այս հատվածը չի համընկնում *Յոթանասնիցի* համարակալմանը. Հեսուի ԺԲ 15-ում դարձյալ տրվում է **Օծոլլամ** տարբերակը: ԻԴ 33-ում՝ «... *ի ձեռս Եզղոնայ արքայի Մովաբոս*» (Ա-3-ում՝ Եզղոն, Ա-2-ում՝ Էզղոն): Ինչպես տեսնում ենք, գրաբարում առկա **Եզղ/լ/ոնի** դիմաց Ա-3-ը դնում է **Եզլոն, Եզղոմ** և **Օդղոդմ**: Հունարենը բոլոր օրինակներում տալիս է **Օդղոդմ** – **Օծոլլամ**:

Բազմաթիվ հակասություններ ենք նկատում ոչ միայն անունների տարրնթերցումներում, այլև անունների թարգմանության դեպքում²³⁰, հատկապես միջնորդավորված թարգմանություն կատարելիս²³¹:

Ուղղագրության հետ առնչվում է նաև այսպես կոչված **համառոտագրությունը**, երբ

²³⁰ Այդ մասին արդեն խոսել ենք սույն աշխատանքի *Հարուկ անունների թարգմանական ցուցակները Աստվածաշունչ գրքերում* ենթաբաժնում:

²³¹ Ասենք, որ բնագրային անմիօրինակությունները բնորոշ են ոչ միայն հայերեն թարգմանություններին, այլև ռուսերենին: Բերենք մեկ օրինակ. **Մաա**-ն մի դեպքում անձ, մյուս դեպքում՝ տեղանուն ակնարկող նույն հատուկ անունը ներկայացնում է տարբեր կերպ՝ **Մաա**՝ տեղանունը՝ **Մաա** (Ծն. Ժ 30) *ի Մասեաց, Մաա*՝ արական անձնանունը՝ **Macca** (Իսմայելի որդին, Ծն. ԻԵ 15):

գրում էին բառի սկզբի և վերջի տառը՝ վրան նշան դնելով: Այսօրվա համառոտագրված բառերից սա տարբերվում է նրանով, որ վրան նշան ունի, և ընթերցողը գիտե, որ այն պետք է կարդա ամբողջությամբ: Համառոտագրությունը 5-9-րդ դարերում պատվի նշան էր, և միայն տերունական անուններն էին այդպես գրվում, վրան դրվող նշանն էլ կոչվում էր **պատրիվ** /²³²:

Աստվածաշնչի ձեռագիր մատյաններում որոշ բառեր կիրառված են հիմնականում համառոտագրված ձևով: Գործածվում էին հատկապես տերունական յոթ բառեր՝ *Ա՛ծ-Աստուած*, *Յ՛ս-Յիսուս*, *Ք՛ս-Քրիստոս*, *Տ՛ր-Տէր*, *Ե՛մ-Երուսաղեմ*, *Ի՛էլ-Իսրայէլ*²³², *Մ՛Բ*: Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ այս բառերը համառոտագրմամբ հանդես են գալիս նաև թեք հոլովածներով.

- | | |
|--|----------------------------------|
| ԱԾ/ծ/ – <i>Աստուած</i> (ուղղական) | ՔՍ/ս/ – <i>Քրիստոս</i> |
| ԱՅ/յ/ – <i>Աստուծոյ</i> (սեռական) | ՔԻ/ի/ – <i>Քրիստոսի</i> |
| ՅԱՅ/յ/ – <i>յԱստուծոյ</i> (բացառական) | ՔԷ/է/ – <i>ի Քրիստոսէ</i> |
| ԱՎ/վ/ – <i>Աստուծով</i> (գործիական) | |
| ՏՐ/ր/ – <i>Տէր</i> | ՅՍ/ս/ – <i>Յիսուս</i> |
| ՏՆ/ն/ – <i>Տեառն</i> | ՅԻ/ի/ – <i>Յիսուսի</i> |
| ՏԷ/է/ – <i>ի Տեառնէ</i> | ՅԷ/է/ – <i>ի Յիսուսէ</i> |
| ՏԲ/բ/ – <i>Տերամբ</i> | |

Հետագայում այս համառոտագրությունը տարածվում է բազմաթիվ այլ բառերի վրա ևս՝ **ըս՛ հ՛ից** – *ըստ հրէից*, **աշխաստութի՛** – *աշխատութիւն*, **վկայութե՛** – *վկայութեան*, **ն՛ր** – *նորա*, **ո՛ւպ** – *որպէս* և այլն:

²³² Հանդիպում է կամ *ԻէԼ* – *Իսրայէլ* կամ *ԻէՂ* – *Իսրայէլ*:

4.3. Հայրուկ անունների հոլովումը և հոգնակիի դրսևորումները

Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ սեմական որոշ լեզուների թվում նաև հին եբրայերենը չունի հոլովական որոշակի զարգացած համակարգ: Եբրայերենը ունի ընդամենը երեք հոլովական ձև՝ ուղղական, սեռական և հայցական, որոնք համապատասխանում են հնդեվրոպական լեզուների, այդ թվում և հայերենի նույն հոլովներին: Հոլովական վերջավորությունները ժամանակի ընթացքում գրեթե ընկել են կամ պահպանվել են մասնակիորեն: Այդ պատճառով էլ բաղադրյալ հատուկ անուններում հետին պլան է մղվել քերականական այդ առանձնահատկությունը, և անունը մնացել է հետագայում գրեթե անփոփոխ, այսինքն՝ չի հոլովվել: Ուղղական հոլովի ցուցիչն են **u**-ն, **o**-ն, սեռականինը՝ **i**-ն, որոնք, սակայն, դարձել են ձևական ցուցիչներ, և իրենց հոլովական նշանակությունը չեն պահել կամ պահել են մասնակիորեն²³³: Հայցական հոլովի վերջավորությունն է **a**-ն, և եթե նախորդ հոլովների թեքոյթները հանդիպում են բաղադրյալ հատուկ անուններում, ապա սա պահպանում է իր հոլովական վերջավորությունը հիմնականում տեղանուններում, բայց ոչ թե ուղիղ խնդրի, այլ ուղևորման, շարժման նշանակություններով: Եթե ընդհանրացնենք, ապա ստացվում է, որ հենց հին եբրայերենում հատուկ անունները չեն հոլովվում կամ հոլովվում են մասնակիորեն: Քիչ հետո կտեսնենք, որ *Յոթանասնիցում* հենց այս նշված վերջավորություն ունեցող հատուկ անունները հոլովվում են:

Ընդունված է այն կարծիքը, թե եբրայական հատուկ անունները՝ անձնանուն թե տեղանուն, հունարենում գործածվելիս դրսևորում են այն առանձնահատկությունը, որ չեն հոլովվում և գործածվում են միայն հոդերի հետ²³⁴: Մեր ուսումնասիրմամբ այս կանոնը ընդհանուր չէ, և բազմաթիվ եբրայական անուններ հունարեն տեքստում հանդես են գալիս տարբեր հոլովներով: Ասենք, *Ծննդոցում* հանդես եկող *Ադամ* անունը հունարեն թարգմանության մեջ միշտ հանդես է գալիս ուղիղ ձևով և հոլովված հոդերի հետ, ինչպես՝ **Αδάμ, τὸν Αδαμ, τοῦ Αδαμ, τῷ Αδαμ**՝ նշանակելով *Ադամ, Ադամի,*

²³³ Տե՛ս Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, էջ 317:

²³⁴ Տե՛ս *Учебник греческого языка Нового Завета*, էջ 9: Մինչդեռ մեկ ուրիշ հեղինակ՝ Ե. Սմագինան, նշում է, որ որոշ սեմական ծագման անուններ՝ *ա*-ով վերջավորվող, կարող են հոլովվել: Տե՛ս *Греческо-русский словарь Нового Завета*, перевод краткого греческо-английского словаря Нового Завета Баркли М. Ньюмана, М., 1997 էջ 237:

Աղամին: Եվ այդպես անունների բացարձակ մեծամասնությունը: Բայց այդպիսի չհղովվող բազմաթիվ անունների կողքին որոշ անուններ հանդես են գալիս որոշակի հղովական վերջավորություններով, ինչպես՝ **Տάρα // Σάρρα** – Սառա, **Σαραν - Սառայի/ն/**, **Σαρασ** – **Սառայի**, **Ρεβέκκα**-ն կարող է թարգմանվել և՛ **Ռեբեկա/ն/**, և՛ **Ռեբեկայ/Ռեբեկային**, իսկ **Ρεβέκκα** – **զՌեբեկա/ Ռեբեկային**, **Ρεβέκκας** – **Ռեբեկայի**, **Σοδομ** – **Սոդոմ**, **Σοδομα (ի Սոդոմ)**, **Σοδομων**²³⁵ – **Սոդոմացի** (սեռական վերջավորություն, որ դարձել է ածանց), նույն կերպ՝ **Ρωλλω** – **Βαλλά** – **Βαλλάν/Ρωλλայի**, **Ջելիա** – **Ζελφα** – **Ζελφον/Ջելիայի**, **Մովսես** – **Μωσής** – **Μωση/Մովսեսի** և այլն:

Բազմաթիվ օրինակների քննությունը բերում է այն հետևության, որ ձայնավորներով՝ **-ա**, **-ի**, **-ե**, նաև **-ր**, **-ն**, **-ս**, **-քս**, **-փս** բաղաձայններով վերջացող երբայական շատ հատուկ անուններ հղովվում են, ինչպես՝ **Անանիա** – **Ανανίας** – **օս**(սեռ.-տր.), **Աննա** – **Αννα** – **աս**(սեռ.-տր.), **Քարելին** – **Βαβυλών** – **օնոս**(սեռ.-տր.), **Քարաբբա** – **Βαραββᾶς** – **ա**, **Քարաբա** – **Βαρσαββᾶς** – **ա** (սեռ.-տր.), **Փաղիլիա** – **Γαλιλαία** – **աս** (սեռ.-տր.), **Փողոթա** – **Γολγοθᾶ** – **ան** (սեռ.-տր.), **Փոմոր** – **Γομορρα** – **աս**, **Եվա** – **Εὐα** – **աս**, **Եփրայ** – **Εὐφράτης** – **օս**, **Եսայի** – **Ἡσαΐας** – **օս** (սեռ.-տր.), **Հեսու** – **Ἰησοῦς** – **օծ** (սեռ.-տր.), **օծն** (հյգ.), **Հուդա** – **Ἰούδας** – **ա**, **Ոզիա** – **Οζίας** – **օս** (սեռ.-տր.):

– **v**, – **ς**, – **α** վերջավորությունները հունարենին բնորոշ հղովական մասնիկներ են, որոնք ընդհանրապես ստանում են գոյականները:

Գրաբար թարգմանված *Ասրվածաշնչում* հատուկ անունները առանց բացառության հղովվում են:

²³⁵ Հունարեն **ων** - ը հանդես է գալիս իբրև ածանց:

Ա հոլովում²³⁶

Աստվածաշնչյան հատուկ անունների մեծ մասը հոլովվում է **Ա** արտաքին հոլովմամբ²³⁷: Այս հոլովման են պատկանում.

ա) անձնանուններ՝ **Աբիուդ-Աբիուդայ, Աբիսողոմ-Աբիսողոմայ, Ասեր-Ասերայ, Արադ-Արադայ, Բէլ-Բէլայ, Գադ-Գադայ, Դան-Դանայ, Դաթան-Դաթանայ, Եբեր-Եբերայ, Եմիուդ-Եմիուդայ, Ենան-Ենանայ, Եքրան-Եքրանայ, Իթամար-Իթամարայ, Կորիս-Կորիսայ, Յակոբ-Յակոբայ, Ղովար-Ղովարայ, Մաքիր-Մաքիրայ, Յովսէփ-Յովսէփայ, Նաբադ-Նաբադայ, Ոզիէլ-Ոզիէլայ, Սահառ-Սահառայ, Սովգար-Սովգարայ, Սեդիուր-Սեդիուրայ, Փադասուր-Փադասուրայ, Քուշ-Քուշայ, Քեպ-Քեպայ**: Բերենք մեկ-երկու օրինակ.

«Եւ բանակեալք առ նովաւ ցեղն **Գադայ**. Եւ իշխան որդւոցն **Գադայ**՝ Եղիսափան՝ որդի **Դագուէլի**» (Թվ. Բ 14-15), «Եւ էին կտուրք **Աբիսողոմայ**...» (Բ Թգ. ԺԳ 23):

բ) տեղանուններ՝ **Անտիոք-Անտիոքայ, Ասերովթ-Ասերովթայ, Արադ-Արադայ, Գոմոր-Գոմորայ, Եդովմ-Եդովմայ, Եփրաթ-Եփրաթայ, Կադէս-Կադէսայ, Սոկրովթ-Սոկրովթայ, Ոբովթ-Ոբովթայ, Ովրեկ-Ովրեկայ**:

***Ա**-ով, **-եա**-ով և **իա**-ով վերջավորվող հատուկ անունների վերջին ձայնավորը կատարում է հոլովիչի դեր, և որին ավելանում է միայն **յ** բաղաձայնը, ինչպես՝ **Աննա-Աննայ, Աբիա-Աբիայ, Ասիա-Ասիայ, Արաբիա-Արաբիայ, Բեթանիա-Բեթանիայ, Հելա-Հելայ, Բասրա-Բասրայ, Յուդա-Յուդայ, Սենա-Սենայ, Գալիլիա-Գալիլեայ, Եզեկիա-Եզեկիայ, Եղիա-Եղիայ, Կեսարիա-Կեսարիայ, Սամարիա-Սամարիայ, Սինա-Սինայ** և այլն: Սրանք փաստորեն եզակի սեռական, տրական, բացառական հոլովներում վերջից ստանում են **յ**, ինչպես **Արիմաթիա-Արիմաթեայ, Ջաքարիա-Ջաքարեայ**: Գործիական հոլովում այս հատուկ անունները ունենում են **աւ**

²³⁶ Գրաբարն ունի վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական: Հատուկ անունները հոլովվելիս ստանում են զանազան մասնիկներ: Դրանք լինում են երկու տեսակ՝ հոլովիչներ և հոլովակերտներ կամ հոլովական վերջավորություններ: Հոլովիչները բառի թեքման նշաններն են, որոնք հինգն են՝ **Ա, Ե, Ի, Ո, Ու**: Իսկ հոլովակերտները առանձին հոլովների հատուկ մասնիկներն են, որոնք մասնակցում են տարբեր հոլովների ձևավորմանը: Հոլովիչները որոշում են հոլովումը, իսկ հոլովակերտները՝ հոլովը: Գրաբարի հոլովման համակարգը մանրամասն ներկայացված է գրաբարի տարբեր դասագրքերում, որոնց ցանկը տրված է գրականության ցանկում:

²³⁷ Հր. Աճառյանը *Լիակապար քերականություն հայոց լեզվի ուսումնասիրության* մեջ տալիս է **Ա** պարզ հոլովիչով հոլովվող 1083 հատուկ անուն, որոնց մեծագույն մասը աստվածաշնչյան անուններ են: Տե՛ս նշվ. հեղ. հ. III, էջ 470-486:

վերջավորություն:

Ուղղական	<i>Աննա</i>	<i>Գալիլիա</i>
Սեռական	<i>Աննայ</i>	<i>Գալիլեայ</i>
Տրական	<i>Աննայ</i>	<i>Գալիլեայ</i>
Հայցական	<i>(զ)Աննա</i>	<i>(զ)Գալիլեայ</i>
Բացառական	<i>յԱննայ</i>	<i>ի Գալիլեայ, ի Գալիլէէ</i>
Գործիական	<i>Աննաւ</i>	<i>Գալիլեաւ</i>

* Գրաբար (Ա-1) տեքստում **Աննա**-ն գործածվում է նաև **ի** հոլովմամբ (*Աննայի, Աննային, զԱննա*), ընդ որում **Աննայի** ձևը աշխարհաբար թարգմանվում է ուղղական հոլովի իմաստով. «... Եւ էին **Փենանայի որդիք և Աննայի ոչ գոյր որդի**» (Ա Թգ. Ա 3): Ա-2-ը այս նախադասության ընդգծված անունները թարգմանել է անհող՝ «Ու **Փենանա զաւակներ ուներ, բայց Աննա զաւակ չուներ**», Ա-3-ը՝ որոշյալ՝ «**Փենանան որդիներ ուներ, իսկ Աննան որդի չուներ**»²³⁸:

Գրաբար թարգմանության Հետոի (Ի 7), Գ Թագավորության (Թ 1) գրքերում, Հովհանի Ավետարանում (Դ 3) ի նախդիրը դրված է *Գալիլեա* ձևի վրա՝ *ի Գալիլեա*, որն արտահայտում է տարբեր հոլովների իմաստ, ինչպես՝ «Եւ զապուցին զԿաղէս ի Գալիլեա» (ներգ.), «... եկն մի անգամ ի Գալիլեա» (հյց.), իսկ Մատթեոսի և Ղուկասի ավետարաններում՝ բացառական հոլովը տրվում է *ի Գալիլէէ* տարբերակով, ինչպես՝ «Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլէէ ի Յորդանան» (Մտթ. Գ 13), «Եւ եւ Յովսէփ ի Գալիլէէ» (Ղկ. Բ 4):

* Եթե անունը վերջանում է **-է**-ով, **-էի**-ով, թեք հոլովաձևերում **է**-ն դառնում է **-ե**, ինչպես՝ **Յեսսէ-Յեսսեայ-Յեսսեաւ, Սեմէի-Սեմեայ**:

* **է**-ով և **է/ե/ի**-ով վերջավորվող հատուկ անունները՝ **Եղմոնէ, Չեբեթէ, Յեսսէ, Ադմէ, Սաղմոնէ, Յաննէ, ա** հոլովիչից առաջ **է**-ն կամ **ի**-ն դառնում է **-ե**, սակավ դեպքերում սեռական հոլովում հանդես են գալիս առանց հոլովական վերջավորության, ինչպես՝ **Մանովէ**՝ Դտ. ԺԳ 8, իսկ 21-ում՝ **Մանովէի**, փոխանակ **Մանովեայ**:

* Ե՛վ **-եայ**, և՛ **-այ** է ստանում թեք հոլովաձևում **Աբեններ** անունը՝ **Աբեններեայ**՝

²³⁸ Հր. Աճառյանը հատուկ անունների հոլովման ցանկում բացակայում է *Աննա* անձնանունը, տրվում է միայն *Անայ*-ը *ի* հոլովման պատկանող անձնանունների ցանկում: Տե՛ս նույն աշխ., էջ 470-486:

«զիեպ **Աբեններայ...**» (Բ Թգ. Բ 19), «... տալ պատասխանի **Աբեններայ...**» (Գ 11):

«... որ տրտնջեցին զինէն, Թէ մտանիցեն յերկիրն յոր համբարձի զձեռն իմ
բնակեցուցանել զձեզ ի նմա, բայց Քաղէք որդի **Եփոնեայ** եւ Յեսու Նաւեան» (ԺԴ 31):

* Ինչպես հայտնի է, **ի**-ով վերջացող հատուկ անունները հոլովվելիս փոխվում են
և դառնում **ե**²³⁹, ինչպես՝ **Ադդի-Ադդեայ, Անգի-Անգեայ, Ազենի-Ազենեայ, Արուադի-
Արուադեայ, Դաբրի-Դաբրեայ, Ղեւի-Ղեւեայ, Մերարի-Մերարեայ, Սունի-Սունեայ:**
Բերենք համապատասխան օրինակներ՝ «... զազգն **Ղեւեայ** մի՛ խառնեսցես ընդ նոսա
ի հանդես...» (Թվ. Ա 49), «Անցին ի հանդիսի եւ գունդք որդւոցն **Մերարեայ** ըստ գնդից
իւրեանց» (Թվ. Դ 42), «Եւ որդիք Գադայ. Սունի, եւ գունդ մի **Սունեայ**» (Թվ. ԻԶ 16):

* **-Ու** ձայնավորով վերջացող անուններում **-ու**-ն մնում է անփոփոխ, ինչպես՝
Յեսու-Յեսուայ:

Բերենք հոլովման հարացույցի ևս երկու օրինակ:

Ուղղական	<i>Յակոբ</i>	<i>Քուշ</i>	<i>Աքիա</i>	<i>Անդրէաս</i>
Սեռական	<i>Յակոբայ</i>	<i>Քուշայ</i>	<i>Աքիայ</i>	<i>Անդրեայ</i>
Տրական	<i>Յակոբայ</i>	<i>Քուշայ</i>	<i>Աքիայ</i>	<i>Անդրեայ</i>
Հայցական	<i>(զ)Յակոբ</i>	<i>(զ)Քուշ</i>	<i>(զ)Աքիա</i>	<i>(զ)Անդրէաս</i>
Բացառական	<i>ի Յակոբայ</i>	<i>ի Քուշայ</i>	<i>յԱքիայ</i>	<i>յԱնդրեայ</i>
Գործիական	<i>Յակոբաւ</i>	<i>Քուշաւ</i>	<i>Աքիաւ</i>	<i>Անդրեաւ</i>

զ) մի շարք անեզական հատուկ անուններ՝ **Գամիրք, Մարք, Միջագետք,**

Քուշանք:

Ուղղական	<i>Միջագետք</i>	<i>Քուշանք</i>
Սեռական	<i>Միջագետքաց</i>	<i>Քուշանաց</i>
Տրական	<i>Միջագետքաց</i>	<i>Քուշանաց</i>
Հայցական	<i>(զ) Միջագետքս</i>	<i>(զ) Քուշանս</i>
Բացառական	<i>ի Միջագետքաց</i>	<i>ի Քուշանաց</i>
Գործիական	<i>Միջագետքաւք</i>	<i>Քուշանաւք</i>

²³⁹ Տե՛ս Վ. Առաքելեան, Գրաբարի քերականություն, էջ 32:

Պետք է նկատի ունենալ, որ տեղանունների ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է **-ի** նախդրով և հայցական հոլովով, ինչպես՝ **ի Սուր, ի Հոովմ, ի Միջագեդու:**

Համաբարբառի գլխաբառն է **Միջագեդը**. այս անունը բուն աստվածաշնչյան չէ և գոյություն է ունեցել *Սուրբ Գրքի* թարգմանությունից էլ առաջ: Սա անեգական բառ է, զուտ հայկական, կանոնավոր հոլովմամբ: «*ի Միջագեդու ի քաղաքն Նաքովրայ...*» (Ծն. ԻԴ 10, ԻԵ 20, ԻԷ 43, ԻԸ 2, 5), «... *ի Միջագեդուց Ասորոց*» (ԼԳ 18):

*Հունական (հունարենից փոխառված) **-աս, -էաս, -էոս, -էս, -իոս, -իս, -ոս** հնչյունական կապակցություններով վերջավորվող հատուկ անուններում (աննշան շեղումներով), **-աս, -ոս, -ս** մասերը թեք ձևերում դուրս են ընկնում, հոլովիչն ու հոլովակերտը դրվում են անվան հիմքի վրա, այսինքն՝ **է** և **ի** ձայնավորները **Ա** հոլովիչից առաջ դառնում են **ե**, ինչպես՝ **Անդրէաս-Անդրեայ, Չաքեոս-Չաքէ-Չաքեայ, Պորդոմէոս- Պորդոմեայ:** Այս կարգի անունների մի մասը հոլովվում է **ի** հոլովիչով՝ **Անդրէաս-Անդրեի, Տիմոթէոս-Տիմոթեի** և այլն:

Մի շարք հատուկ անուններ թեք հոլովներում **ոս**-ի անկումից հետո թեև չեն վերջավորվում **է**-ով կամ **ի**-ով, սակայն **Ա** հոլովիչից առաջ ստանում են **ե** (համաբանության օրենքով), ինչպես՝ **Դամասկոս-Դամասկեայ, Կադմոս-Կադմեայ, Կիպրոս-Կիպրեայ, Փիլիպպոս-Փիլիպպեայ**, բայց նաև՝ **Ազովրոս-Ազովրայ:**

Գրաբարագետները նկատում են, որ այս կարգի հատուկ անուններից մի քանիսը իբրև կոչական գործածվելիս երբեմն վերջում ունենում են **է**, ինչպես՝ **Փիլիպպէ, Տիմոթէ**²⁴⁰:

Ուղղական	<i>Չաքէոս</i>	<i>Կղոթիոս</i>
Սեռական	<i>Չաքեայ</i>	<i>Կղոթեայ</i>
Տրական	<i>Չաքեայ</i>	<i>Կղոթեայ</i>
Հայցական	<i>(գ) Չաքեոս</i>	<i>(գ) Կղոթիոս</i>
Բացառական	<i>ի Չաքեայ</i>	<i>ի Կղոթեայ</i>
Գործիական	<i>Չաքեաւ</i>	<i>Կղոթեաւ</i>

Ա հոլովման պատկանող հատուկ անուններից շատերը կարող են հոլովվել նաև

²⁴⁰ Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ, էջ 26, Վ. Առաքելեան, Գրաբարի քերականություն, էջ 30:

ի հոլովիչով, ինչպես՝ **Աննայի, Յուդայի, Բասրայի** և այլն, բերենք մեկ-երկու օրինակ՝ «...մինչեւ ի սահմանս **Գեսուրայ** (Հս. ԺԲ 5), «... ամենայն սահմանք Փղշտացոց, **Գեսուրի...**» (ԺԳ 3), «... եւ որդւոցն **Գերսոնի**» (Հս. ԻԱ 6), «... եւ որդւոցն **Գերսոնայ...**» (27): Կարող են զուգահեռ հոլովվել նաև **-ու** հոլովիչով, ինչպես՝ **Յակովբ-Յակովբայ-Յակովբու, Յովնան-Յովնանայ-Յովնանու, Յովսէփ-Յովսէփայ-Յովսէփու, Մարիամ-Մարեմայ-Մարիամու, նաև Մարեմու**²⁴¹:

Ի հոլովում

Ի պարզ հոլովման են ենթարկվում մի շարք հատուկ անուններ՝

ա) անձնանուններ՝ **Աբիրոն-Աբիրոնի, Ահարոն-Ահարոնի, Ամիսադ-Ամիսադայի, Աքիրէ-Աքիրէի, Բենիամին-Բենիամինի, Գեղէոն-Գեղեոնի, Գերսոն-Գերսոնի, Դաւիթ-Դաւթի, Զաբուղոն-Զաբուղոնի, Զորաբաբել-Զորաբաբելի, Իսրայէլ-Իսրայելի, Մաթուսաղա-Մաթուսաղայի, Մամբրե-Մամբրէի, Միսադա-Միսադայի, Մովսէս-Մովսեսի-Մովսիսի, Յիսուս-Յիսուսի, Եփրեմ-Եփրեմի, Մապրէոս-Մապրէի, Մանասե-Մանասէի, Յեզրայէլ-Յեզրայելի, Հերովդէս-Հերովդէսի//Հերովդէի, Մակաբէ-Մակաբէի, Մանասէ- Մանասէի, Նաասոն-Նաասոնի, Շմաւոն-Շմաւոնի, Ոզիէլ-Ոզիելի, Ռուբեն-Ռուբենի, Սամուէլ-Սամուելի, Սեպփովրա-Սեպփովրայի, Սուրիսադա-Սուրիսադայի, Քեղովն-Քեղովնի:**

բ) տեղանուններ՝ **Եգիպտոս-Եգիպտոսի, Եգլոն-Եգլոնի, Երուսաղեմ-Երուսաղեմի, Եփրոն-Եփրոնի, Իսրայէլ-Իսրայելի, Հերմոն-Հերմոնի, Սինա-Սինայի:**

Հր. Աճառյանը տալիս է՝ **Երուսաղեմի** ձևի 226 գործածություն, իսկ 5 անգամ՝ **զերուսաղեմաւ**²⁴². «շուրջ Հրէաստանիւ եւ **զերուսաղեմաւ**» (Ա Եզր. Բ 16), «**զերուսաղեմաւ**» (Ա Մկ. Է 17): Ինչպես տեսնում ենք, Աճառյանի նշած տարբերակը տվյալ դեպքերում գրվում է **է**-ով, իսկ մեկ այլ դեպքում գրվում է **ե**-ով. «շուրջ **զերուսաղեմաւ**» (Եր. ԼԲ 44):

Մ. Մինասյանը այս դեպքում ևս չի ընդունում **է -ե** հնչյունափոխությունը և

²⁴¹ Տե՛ս Հր. Աճառյան, նույն աշխ., էջ 484-85:

²⁴² Տե՛ս նշվ. հեղ. նույն աշխ., էջ 481:

գտնում, որ ուղղական-սեռականում պետք է լիներ **Երուսաղեմ-Երուսաղեմի**²⁴³, ինչը չի հաստատվում սուրբգրային տեքստի գրաբար տարբերակում. «**յԵրուսաղեմ**» (Մտթ. Ե 35 Ղկ. Բ 25), «...զնորն **Երուսաղեմ**...» (Հյտն. ԻԱ 2), բայց՝ «**դստերք Երուսաղեմի**»(Ղկ. ԻԳ 28), «**Հրեայքն յԵրուսաղեմէ**...» (Հվին. Ա 19):

գ) Մի շարք անեզական անուններ՝ **Աղուան-Աղուանից, Կասաք-Կասապից, Պարսք-Պարսից** և այլն: Ինչպես նկատում ենք, այս անունների սեռական հոլովաձևերը ժամանակակից հայերենում փոխանցմամբ դիտարկվում են իբրև քարացած ձևեր:

Ուղղական	<i>Մովսէս</i>	<i>Դաւիթ</i>	<i>Պարսք</i>
Սեռական	<i>Մովսեսի/Մովսիսի/</i>	<i>Դաւթի</i>	<i>Պարսից</i>
Տրական	<i>Մովսեսի</i>	<i>Դաւթի</i>	<i>Պարսից</i>
Հայցական	<i>(զ) Մովսէս</i>	<i>(զ) Դաւիթ</i>	<i>(զ) Պարսից</i>
Բացառական	<i>ի Մովսեսէ /Մովսիսէ/</i>	<i>ի Դաւթէ , -թայ</i>	<i>ի Պարսից</i>
Գործիական	<i>Մովսեսիւ</i>	<i>Դաւթիւ</i>	<i>Պարսիք</i>

* **-ի** հոլովիչը դրվում է ուղղականի վրա, և այս դեպքում պետք է նկատի ունենալ հետևյալը.

Է-ով վերջացող հատուկ անունները հոլովվելիս պահում են նույն **-է** հնչյունը, ինչպես՝ **Եղիսէ-Եղիսէի, -էլ, -իէլ, -ուէլ**-ով վերջացող հատուկ անուններում **-է**-ն փոխվում է **ե**-ի, ինչպես՝ **Աբէլ-Աբելի, Սամուէլ-Սամուելի, Փանուէլ-Փանուելի, -էս**-ով վերջացող անուններում **է**-ն դառնում է **-ե** կամ **-ի**, ինչպես՝ **Մովսէս-Մովսեսի, Մովսիսի, Փարէս- Փարեսի**:

-Ոյ-ով, **-ոն**-ով, **-ովն**-ով վերջավորվող հատուկ անունների հիմքերը մնում են անփոփոխ, ինչպես՝ **Նոյ-Նոյի, Տարսոն-Տարսոնի, Ջարուղոն-Ջարուղոնի, Սիմովն-Սիմոնի** և այլն²⁴⁴:

Բերենք մի քանի օրինակներ.

²⁴³ Տե՛ս Մ. Մինասեան, *Աւերարանների եւ Գործքի յայտուկ անունների ուղղագրութիւնը եւ հոլովումը*, էջ 88:

²⁴⁴ Հր. Աճառյանը *Լիակապար քերականություն հայոց լեզվի ուսումնասիրության* մեջ տալիս է **ի** պարզ հոլովիչով հոլովվող 183 հատուկ անուն, որոնց մեծ մասը աստվածաշնչյան անուններ են: Տե՛ս նշվ. հեղ. հ. III, էջ 480-482:

«Եւ լռեցոյց զժողովուրդն **ի Մովսիսէ...**» (Թվ. ԺԳ 31), «... Որպէս պատուիրեաց Տէր **Մովսիսի**» (Ղևտ. Թ 21), «*Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի...*» (Է 28), «Եւ մերկացոյց **յԱհարոնէ** զպատմուճան նորա, եւ զգեցուցես Եղիազարու որդւոյ նորա» (Թվ. Ի 26), «Եւ եղիցի Ահարոնի եւ որդւոցն նորա...» (Ղևտ. ԻԴ 9), «...ցանեաց **զԱհարոնի** եւ պատմուճանօք նորա...» (Ղևտ. Ը 30):

Ո հոլովում:

Այս հոլովման են պատկանում՝

ա)-**ցի** վերջածանց ունեցող բառերը՝ **Ամովհրացի, Գոմորացի, Քանանացի, Քաղդեացի, Եգիպտացի:**

Պետք է նկատի ունենալ, որ այսպիսի կազմութեամբ բառերը տարանջատվում են **հատկանուն մականունների**. այս դեպքում նրանք, գրաբար թե աշխարհաբար, գրվում են մեծատառով, ասել է թե համարվում են հատուկ անուններ, ինչպես՝ **Նազովրեցի, Սամարացի**. Ժամանակակից լեզվի անվանաբանական նորմին համապատասխան՝ սրանք ակնարկում են Հիսուսին: Մեկ այլ դեպքում դրանք անվանում են բնակության վայրը և դառնում **բաղադրյալ տեղանունների առաջին բաղադրիչ՝ Ադամաացւոց երկիր, Քանանացւոց երկիր, Եբրայեցւոց երկիր, Եգիպտացւոց երկիր** և այլն. *Աստվածաշնչի* գրաբար տեքստերը միանշանակ այս անվանումները ներկայացնում են մեծատառով, աշխարհաբարում օրինաչափությունը պահպանվում է այսպես՝ **Թեմանացւոց երկիր-Թեմանացիների երկիր**, (Ծն. ԼԶ 35), **Եբրայեցւոց երկիր-Եբրայեցիների երկիր** (Ծն. Խ 15):

Հասարակ մականուններ են նրանք, որոնք մատնանշում են տվյալ բնակավայրի բնակիչ լինելը՝ **Ամաթացի/ք, Գոմորացի/ք, Գերգեսացի/ք, Եղովմայեցի/ք, Սողոմացի/ք, Խեւացի/ք**. սրանք մեծատառով են գրվում միայն գրաբարում: *Աստվածաշնչի* տարբեր գրքերում միևնույն մականունը տարբեր անվանողական արժեք ունի. այսպես՝ **Սամարացի**-ն Հին Կտակարանում հասարակ անվան արժեք ունի (Ծն. Ժ 18), մինչդեռ *Նոր Կտակարանում*՝ հատկանուն մականվան, բազմաթիվ անգամներ **Եգիպտացի**-ն կիրառված է հասարակ անվան արժեքով, իսկ մի շարք դեպքերում որոշակիորեն գործածվել է իբրև հատուկ անուն՝ **Ազար Եգիպտացի, Եղիազար Դամասկացի** և այլն:

Ուղղական	<i>Քանանացի</i>	<i>Քանանացիք</i>	<i>Հոռոմք</i>
Սեռական	<i>Քանանացւոյ</i>	<i>Քանանացւոց</i>	<i>Հոռոմոց</i>
Տրական	<i>Քանանացւոյ</i>	<i>Քանանացւոց</i>	<i>Հոռոմոց</i>
Հայցական	<i>(զ) Քանանացի</i>	<i>(զ) Քանանացիս</i>	<i>(զ) Հոռոմս</i>
Բացառական	<i>ի Քանանացւոյ</i>	<i>ի Քանանացւոց</i>	<i>ի Հոռոմոց</i>
Գործիական	<i>Քանանացւով</i>	<i>Քանանացւովք</i>	<i>Հոռոմովք</i>

Աշխարհաբարում հասարակ անուն ընկալվող այս բառերը դառնում են մականուն որոշիչներ և չեն հոլովվում. իբրև գոյականներ՝ գործածվում են հոգնակի թվով և հոլովվում են **-ի** հոլովիչով՝ «...**լուդիիմացիների, սենիիմացիների, սաղբիիմացիների, հեփթաղիմացիների** և այլն» (Ծն. Ժ 13): «**Բայց Ղեւրացիքն քանակեսցին շուրջ զխորանան...**» (Թվ. Ա 53):

բ) **Ո** հոլովման են պատկանում **Հայք, Հոռոմք** անեզական հատուկ անունները:

Ինչպես նկատում ենք, այս հոլովման պատկանող անունները հայերեն կազմություններ են:

Ու հոլովում

Այս հոլովման են պատկանում՝

ա) անձնանուններ՝ **Աբրահամ-Աբրահամու** (երբեմն ձեռագրերում՝ **Աբրահամէ**), **Բաղաամ-Բաղամու, Եղիաբ-Եղիաբու, Եղիազար-Եղիազարու, Կահաթ-Կահաթու, Ղուկաս-Ղուկասու**, նաև՝ **Ղուկայ, Յոհան-Յոհաննու, Յովնաթան-Յովնաթանու, Յովհաննէս, Յովսեփ-Յովսեփու, Մադիամ-Մադիամու, Մարիամ-Մարիամու** (նաև՝ **Մարեմու**) և այլն:

բ) տեղանուններ՝ **Բասան-Բասանու, Գաղաադ-Գաղաադու, Լիբանան-Լիբանանու, Խառան-Խառանու, Մադիամ-Մադիամու, Մովաբ-Մովաբու, Յորդանան-Յորդանանու, Փառան-Փառանու** և այլն:

Նկատելի է, որ այս հոլովման պատկանում են **-ամ**-ով և **-ան**-ով վերջավորվող հատուկ անունները, ինչպես՝ **Բասան-Բասանու, Յորդանան-Յորդանանու, Մադիամ-Մադիամու** և այլն:

Բերենք բնագրային մի քանի օրինակներ.

«Եւ բնակէր յանապատին **Փառանու** (Ծն. ԻԱ 21): «... եւ բանակեցաւ յանապատին **Փառանու**» (Թվ. ԺԳ 2): «Մի՛ սատակիցէք զգունդն **Կահաթու** ի միջոյ Ղեւրացոցն» (Թվ. Դ 17): «Եւ դիմեցին ի լեռնէն **Գաղաադու**» (Դտ. Է 3): «... որ էր յԵփրա Յովասու...» (Դտ. Զ 11), «Եւ գնացին ծերակոյտն **Մովաբու** եւ ծերակոյտն **Մադիամու**...» (Թվ. ԻԲ 7), «... ելանէր **Մադիամ** եւ Ամադէկ...» (Դտ. Զ 3), «... ի բանակս **Մադիամու**... ի խորանն **Մադիամու**» (Է 13): Ասենք, որ **Մադիամ**-ը գործածվում է մեծ մասամբ ուղղական և սեռական հոլովներով:

Ուղղական	Աբրահամ	Յովհան	Յովհաննէս ²⁴⁵
Սեռական	Աբրահամու	Յովհանու	Յովհաննու
Տրական	Աբրահամու	Յովհանու	Յովհաննու
Հայցական	(զ) Աբրահամ	(զ) Յովհան	(զ) Յովհաննէս
Բացառական	յԱբրահամէ	ի Յովհանէ	ի Յովհաննէ
Գործիական	Աբրահամու	Յովհանու	Յովհաննու

Աստվածաշնչում գործածվում են թե՛ **Աբրամ**, թե՛ **Աբրահամ** անունները տարբեր հոլովներով. «... Եւ էջ **Աբրամ** յԵգիպտոս բնակել անդ պանդխտութեամբ» (Ծն. ԺԲ 10), «Եւ պատուէր ետ արանց վասն **Աբրամու** յուղարկել զնա...» (ԺԲ 20), «Եւ ասէ Սարա **ցԱբրամ**...» (ԺԶ 2), «Եւ ասէ Աստուած **ցԱբրահամ**...» (ԺԷ 15), «...ի վերայ **Աբրահամու**...» (ԺԸ 19), «Եւ կոչեաց Աբիմելէք **զԱբրահամ**...» (Ի 9), «Ո՛վ պատմեսցէ **Աբրահամու**...» (ԻԱ 7)²⁴⁶:

Այսպիսով՝ աստվածաշնչյան հատուկ անունները անկախ ծագումից պատկանում են **Ա, Ի, Ո, Ու** հոլովումներից որևէ մեկին: **Ա** հոլովման պատկանում է հատուկ անունների բացարձակ մեծամասնությունը: Որոշ հատուկ անունների հոլովումը միօրինակ չէ, և նրանք կարող են պատկանել միաժամանակ երկու հոլովման՝ **Ա** և **Ի, Ա** և **Ու**, այսինքն՝ նրանց հոլովումը հստակ չէ, օրինակ՝ զուգաձև հոլովման են պատկանում **Նեփթադիմ**-ը՝ **Նեփթադիմայ** -**Նեփթադեմի**, **Հազար**-ը՝ **Հազարայ**-**Հազարու**, **Աննա**-ն՝ **Աննայ**-**Աննայի** և այլն: Հր. Աճառյանը *Լիակատար քերականություն հայոց լեզվի*

²⁴⁵ Այս անունը տրվում է խառը հոլովման ցանկում՝ ըստ Աճառյանի, սակայն բացարձակ կիրառությունը **Ու** հոլովիչով է՝ **Յովհաննու**՝ 34 անգամ, **Ա**-ով՝ **Յովհաննայ**՝ 1 անգամ:

²⁴⁶ Հիշենք, որ հունարեն տեքստում անունը մշտապես գործածվում է ուղիղ ձևով՝ համապատասխան հոդերի առկայությամբ:

աշխատության երրորդ հատորում առանձնացնում է *խառը հոլովմամբ* հանդես եկող հատուկ անունները, որոնց թվում՝ **Աբիաթար -այ, -ու, Աբիրոն -ի, -ու, Ամոն -ի, -այ, Անգէ -ի, -այ, Ասկաղոն -ի, -յ, -է, Բասան -ու, -այ, Բեթղեհէմ -ի, -այ, Դաւիթ -թի, -այ, Դինա -յ, -ի, Իսաքար -այ, -ու, Ծայդան -այ, - ու, Կեդրոն -ի, -այ, Կայիափա -յ, -այի, Միքիա -յ, -քայի, -քէի, Մովաբ -ի, -ու, Յակոբ -այ, -ու, Յովհաննէս -նայ, -նու, Յովսափապ -ու, -այ, Յովսէփ -ու, -այ** և այլն՝ նշելով յուրաքանչյուր հոլովիչի կիրառության հաճախականությունը²⁴⁷:

«Եւ որդւոցն **Նեփթաղիմայ**՝ ըստ ազգս իրեանց...» (Թվ. Ա 42, է 78), «...Հանդէս նոցա ի ցեղէն **Նեփթաղեմի**...» (Թվ. Ա 43), «Եւ **Աննայի** ետ մասն մի զի ոչ գոյր նորա որդի» (Ա Թգ. Ա 5):

Վերը բերված աստվածաշնչյան հատուկ անունների գրաբարյան տարբերակված հոլովումը աշխարհաբարում միօրինակացվում է, և տարբեր հոլովման պատկանող հատուկ անունները հոլովվում են բացառապես **ի** հոլովմամբ:

Հատուկ անունների բազմաթիվ գործածություններ հոլովական պարզ կաղապարներ են, որոնք տարբեր գրքերում նույնությամբ կրկնվում են, կամ տվյալ անունը տվյալ գլխում միշտ հանդես է գալիս նույն հոլովներով: Ասենք *Թվոց* գրքի ԺԲ փոքրիկ գլխում պատմվում է Մովսեսի նկատմամբ Մարիամի և Ահարոնի անհավատարմության մասին: **Մարիամ** անունը հինգ անգամ գործածված է ուղղական հոլովով՝ «Եւ բամբասեցին **Մարիամ** եւ Ահարոն», «... եւ ահա **Մարիամ** բորոտեալ էր...», «Եւ զափուցաւ **Մարիամ** արտաքոյ բանակին զեւթն օր», «...մինչեւ սրբեցաւ **Մարիամ**», «եւ կոչեցան Ահարոն եւ **Մարիամ**», երկու անգամ՝ հայցական՝ «Եւ ասէ Տէր... ցԱհարոն եւ **ցՄարիամ**», «... եւ հայեցաւ Ահարոն **ընդ Մարիամ**»:

Երկ. *Օրինացի* ԼԳ գլուխը ամբողջովին կաղապարային է. «Եւ **զԴանայ** ասէ..., եւ **զԳաղայ** ասէ, եւ **զՆեփթաղիմայ** ասէ...» և այսպես ուր անգամ, և անպայման պետք է նկատի ունենալ, որ կաղապարը պատճենված է **Յոթանասնից**-ից « Καὶ τῷ γαδ εἶπεν..., Καὶ τῷ λευι εἶπεν..., Καὶ τῷ βενιαμιν εἶπεν..., Καὶ τῷ νεφθαλι εἶπεν... » և այլն:

Կաղապարային կառույցները հատկապես կրկնվում են սերնդաբանությունները նշելիս. «Եւ այս են ծնունդք Փարեսի. Փարէս ծնաւ զԵսրովմ, եւ **Եսրովմ** ծնաւ զԱրամ,

²⁴⁷ Տե՛ս նշվ. հեղ., հ. III, էջ 484-486:

Արամ ծնաւ զԱմինադար, **Ամինադար** ծնաւ զՆաասովն, **Նաասովն** ծնաւ զՍաղմոն, **Սաղմոն** ծնաւ զԲոնու, **Բոնու** ծնաւ զՈվբէթ, **Ովբէթ** ծնաւ զՅեսսէ, **Յեսսէ** ծնաւ զԴաւիթ» (Հոթ Դ 18-22): Ի դեպ, ասե՛նք, որ համեմատությունը հունարենի հետ նույնանում է շարահյուսական կառուցի առումով, բայց անունների տառադարձության մեջ կան տարբերություններ, ուստի ուղղակի մեջբերենք ողջ նախադասությունը. «Καὶ αὐταὶ αἱ γενέσεις **Φαρες, Φαρες** ἐγέννησεν τὸν **Εσρων, Εσρων** δὲ ἐγέννησεν τὸν **Αρραν**, καὶ **Αρραν** ἐγέννησεν τὸν **Αμιναδαβ**, καὶ **Αμιναδαβ** ἐγέννησεν τὸν **Ναασσων**, καὶ **Ναασσων** ἐγέννησεν τὸν **Σαλμαν**, καὶ **Σαλμαν** ἐγέννησεν τὸν **Βοος**, καὶ **Βοος** ἐγέννησεν τὸν **Ωβηδ**, καὶ **Ωβηδ** ἐγέννησεν τὸν **Ιεσσαί**, καὶ **Ιεσσαί** ἐγέννησεν τὸν **Δαυιδ**».

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ հայերենում գլխաբառ է դարձել *Յոթանասնից*-ում տվյալ անվան թեք հոլովածը, ինչպես՝ **Արիսեայ-Արիսէ, Արիքեայ-Արիքէ, Արրուսայ-Արրեսեէ, Ալիեայ-Ալիեոս, Դարրեայ-Դարրի** և այլն²⁴⁸:

Հոգնակիի դրսևորումներ

Ընդհանրապես հատուկ անունները, մասնավորապես աստվածաշնչյան հատուկ անունները, թեև հասարակ անունների պես խմբավորվում են գոյական խոսքի մասի մեջ, սակայն ի տարբերություն դրանց՝ սովորաբար հոգնակի թվով հանդես չեն գալիս²⁴⁹, այսինքն՝ չկա եզակի-հոգնակի հակադրություն:

Աստվածաշնչի անունները հոգնակիակազմության որոշ հետաքրքիր դրսևորումներ ունեն, որը նախ և առաջ պայմանավորված է երկու հանգամանքով.

ա) հատկապես *Հին Կրակարանը* ներկայացնում է հատուկ անունների առաջացման, ստեղծման գործընթացը, որը ի ցույց է դնում հասարակից հատուկի անցումը, ուստի *Հին Կրակարանի* բազմաթիվ հատուկ անուններ ստուգաբանվում են որպես հոգնակի,

բ) եբրայերենից թարգմանելիս թարգմանչի վերաբերմունքը տվյալ ձևերի հանդեպ:

²⁴⁸ Տե՛ս *Բառարան յարուկ անուանց*:

²⁴⁹ Սրանք սովորաբար կոչվում են անհոգնական գոյականներ, բայց չի բացառվում նման ձևերի՝ հոգնակիի առկայություն, ինչպես՝ **Վարդանանք, Աշոտենք, Վեդունք, Կարապետյաններ** իմաստային որոշակի անցումներով: Օտար լեզուներից փոխառված որոշ հատուկ անուններ մշտապես հոգնակի են՝ **Ալպեր, Հիմալայներ, Կարպատներ, Պամպասներ**:

Եբրայերենում հոգնակի թվի ցուցիչներն են **-իմ** (երբեմն՝**-եմ**), **-n(ո)թ**²⁵⁰, իսկ քանի որ հատուկ անունները առաջացել են հասարակ անուններից, ապա բավական թվով անուններում հոգնակին դեռևս ընկալելի է, ինչպես՝ **Էլոհիմ**: Բուն *Աստված* նշանակող բառն է՝ **Ելոհիմ**, որ հոգնակի ձև է, և եբրայերենում անունը ուղղակի չտալու համար գործածում էին անվան **Ելոկիմ** տարբերակը, այսինքն՝ փոխում էին հնչյունական պատկերը:

-իմ (երբեմն՝**-եմ**) վերջնաբաղադրիչով հատուկ անուններ.

Բահադիմ (հուն.՝ Βασιμ): 12 անգամ հանդիպում է **Բահադիմ** (Դտ. Բ 11, Ժ 6, 10, Ա Թգ. է 4, ԺԲ 10...): Եբրայերենում **Բահադ** բառի հոգնակին է **Բահադիմ**, որ նշանակում է *Բահադի արձաններ*: **Աբելմիսրայիմ**-ը տեղանուն է և ստուգաբանվում է *եգիպտացիների սուգ*²⁵¹, **Ափիմ** – *առագաստներ, ծովափեր*, **Ափփեմ** – *երեսներ, դեմքեր*, **Բաուրիմ** – *ընտիրներ, երիտասարդներ*, **Ասերուսիմ** – *ծիերի գավիթ*, **Անասրիմ/Նեգրիմ** – *պարտեզներ, փունկեր*, **Փաարիմ//Սաարիմ**-ը անձնանուն և դարձյալ ստուգաբանվում է հոգնակի՝ *սևեր, պղտորներ*, **Բերսանայիմ** – *ննջողի երերումներ, շարժումներ*, **Կադեսիմ** – *առաջիներ*, **Կառնայիմ** – *եղջիրք*, **Կարիաթարիմ** – *երկու քաղաք կամ անտառների քաղաք* և այլն:

Ռափիդիմ (հուն.՝ Ραφιδιμ, ասոր.՝ 𐤓𐤏𐤍 Ռադայա, ռուս.՝ Рефидим)²⁵²: Ել. ԺԷ 1, 8, ԺԹ 2 (*յՌափիդիմայ*), ԼԳ 14, 15 (*յՌափիդիմայ*)-ում գործածված այս տեղանունը մեկնաբանվում է հոգնակի՝ *անկողիներ* կամ *մահիճներ*:

Ըստ ԲՅԱ-ի՝ **Ասեդիմ**-ը եբրայերեն նշանակում է *որսորդություններ, դարաններ* կամ *կողեր*, նույնիսկ ասորերեն մեկնաբանվում է դարձյալ հոգնակի՝ *ավերություններ* (ԲՅԱ, 26), *Սուրբ Գրքում* ունենք **Սաբայիմ** – *արբածներ, շրջապատողներ, ծերեր*:

Սագարիմ (հուն.՝ Σακαριμ, ասոր.՝ ܣܚܪܝܡ Շարթին, ռուս.՝ Шаарим): Հետուի գրքի ԺԵ 36-ում գործածված այս տեղանունը Ա-1, Ա-2 և Ա-3 գրքերում ներկայացվում է նույն կերպ: ՄՍԱ-ում տրվում է **Սարգարիմ**, իսկ ԲՅԱ-ում՝ **Սարդարիմ**, բառարանում համա-

²⁵⁰ Տե՛ս Ա. Հակոբյան, *Արդի եբրայերեն*, Եր., 2003, էջ 62:

²⁵¹ Անունների իմաստները հիմնականում տրվում են ըստ ԲՅԱ-ի՝ երբեմն համեմատելով այլ բառարանների հետ, և քանի որ այդ իմաստները հաճախ շատ են, մենք տալիս ենք ոչ բոլոր իմաստները, այլ նրանք, որոնք տարբեր բառարաններում նույն կերպ են բացատրվում:

²⁵² Հակված ենք կարծելու, որ հունարեն բնագիրը այս դեպքում վրիպել է՝ անունը տալով *v*-ով, սակայն ամբողջ հարցն այն է, որ բոլոր գործածություններում է այդպես:

պատասխանաբար տրվում են եբրայական՝ **Սակարիմ**, իսկ ըստ քաղղեացիների՝ **Սեգարաիմ**: Հուդայի ցեղին պատկանող այս քաղաքի անունը ևս բացատրվում է հոգնակի՝ *դռներ*: Այս նշանակությունը հաստատվում է Ա Թգ. ԺԷ 52-ում, ուր եբրայերեն բնագրում հանդես եկած «*ի ճանապարհին Սագարիմայ*» հատվածը տրվում է «*զճանապարհայնն մինչեւ ցղրունս...*» ձևով, որն անշուշտ ընդունելի չէ. տեղանունը չպետք է թարգմանվեր: Թարգմանությունը գալիս է հունարեն բնագրից. հայ թարգմանիչները բառացիորեն կրկնել են **Յոթանասնից** բնագիրը, միայն այն դեպքում, որտեղ տրվում է չթարգմանված տարբերակը, հայ թարգմանիչները պետք է պահեին անվան **Սակարիմ** տարբերակը, որը եբրայական և հունական ձևն է, իսկ հունարեն *κ* հնչյունը հին հայերենում տառադարձվում է **կ**: Մնում է հարցական նաև անվան **Սարդարիմ** տարբերակը, որը ոչ մի բնագրով չի հաստատվում:

Լովովմիմ (հուն.՝ Λοωμιμ, ասոր.՝ ܠܘܘܡܝܡ **Ամիմ**, ռուս.՝ Леюмим): Նույն գրքերում հանդես եկող այս անունը դարձյալ ունի հոգնակի նշանակություն՝ *ազգեր* (Ծն. ԻԵ 3):

Սափրիմ (հուն.՝ Σαπτιν, ասոր.՝ ܣܦܬܝܢ **Սատիմ**, ռուս.՝ Ситтим) – Թվ. ԻԵ 1 (*ի Սափրիմ*), Հս. Բ 1 (*ի Սափրիմայ*), ըստ ԲՅԱ-ի՝ **Սափրիմ** – *տարածություններ*, նաև՝ **Սափրիիմ**:

Բայց հենց տեղանուններում բոլորովին պարտադիր պայման չէ, որ **-իմ**-ը միշտ հոգնակիություն արտահայտի, ինչպես՝ **Ակրարիմ** (Акравим) – *կարիճ*, **Ամաթարիմ** – *տեսիլ*, **Դովթայիմ** (աշխ.՝ Դոթայիմ) – *ծես*, **Կափրասիմ** – *ժամ կամ ժամանակ իշխանի* և այլն: **Նեփթաղիմ**-ը նախ անձնանուն է և ապա տեղանուն, սակայն հոգնակիության իմաստ չի պարունակում:

Անձնանունների դեպքում ևս **-իմ**-ը արտահայտում է հոգնակիություն.

Լափրուսիմ (հուն.՝ Λαφρουσιμ, ասոր.՝ ܠܦܪܘܫܝܡ **Լատշիմ**, ռուս.՝ Летушим) անվան բառացի նշանակությունն է *դարբիններ* կամ *խարտողներ*: Ծն. ԻԵ 3, Ա Մնց. Ա 32 գրքերում հանդես եկող արական այս անձնանունը (Դադանի որդին) ԲՅԱ-ում տրվում է **Լափրուսիիմ** տարբերակով, որը հաստատվում է հունարենով, Ա-1, Ա-3 թարգմանություններով, չի հաստատվում Ա-2, ռուսերեն՝ Летушим) բնագրերում տրված ձևերով:

Ծն. ԽՁ 21-ում հանդես եկող **Մամփիմ** (հուն.՝ Μαμφιν, ասոր.՝ ܡܦܝܢ **Մամփիմ**, ռուս.՝ Мупним) արական անձնանունը մեկնաբանվում է *բերանից*, սակայն ասորերե-

նում դարձյալ ունի հոգնակի նշանակություն՝ *ծածկույթներ*:

-*Ուլթ-օթ*, երբեմն՝ -*աթ* վերջնաբաղադրիչով հատուկ անուններ.

Ասեղովթ-ի համար (հուն.՝ **Ἀσηδωθ**, ասոր.՝ **ܐܫܝܘܬ ܥܬܗܐ**, ռուս.՝ **Азот**) (Հս. Ժ 40, ԺԱ 22) ԲՅԱ-ն բերում է բազմաթիվ նշանակություններ, բայց կարևորվում է այն, որ բոլոր իմաստներն էլ տրվում են հոգնակի՝ *դաշտավայրեր, գառիվայրներ* և այլն:

Ասեղովթ-Փասգա-ն ըստ Վ. Սահակյանի ՀՄԲ-ի նշանակում է *Փասգայի աղբյուրներ* կամ *հեղեղափոսներ*²⁵³:

Ասեղովթ կամ *Ասեթթ*-ը **հ** սկզբնատառով թարգմանվում է *ագարակներ* կամ *կարթեր*, կամ *սրահներ*, *Ասիրթթ*-ը նմանապես՝ *հանգրվաններ, գավիթներ, սրահներ, Աստարովթ* – *հուրեր, հարստություններ, լրտեսներ*, նաև *Աստարթթ*, որ նշանակում է բազմաթիվ կուռքեր, *Ատարովթ* – *պսակներ, գրիչներ, Բաալովթ* փերեր, կուռքեր, *Բաալաթ* – փերեր, կուռքեր, ստացողներ, *Բամթթ* – բարձունք, կուռքերի սեղաններ, *Բասեմաթ* – խունկեր, *Բերովթ(օթ)* – ջրհորներ, *Գադերովթ (օթ)* – պարիսպներ, ցանկեր, *Գողաթ* – ջրակույտեր, ջրմուղներ (բայց *Գողիաթ(դ)*-ը չի ստուգաբանվում հոգնակի նշանակությամբ, այլ՝ *շեղջակոյտ*), *Մազարովթ* – *աստղեր*, *Սադեմովթ* – *արտեր*, *Սադերովթ* – *գորքերի շարք*:

Արաբիա-ն ստուգաբանվում է եզակի՝ *անապատ* և բազում այլ եզակի նշանակություններով, մինչդեռ *Արաբովթ*-ը (հուն.՝ **Αραβωθ**, ասոր.՝ **ܐܪܒܝܬ ܐܢܦܐ**) հոգնակի ձևն է և նշանակում է *անապատներ* կամ *դաշտեր*, և, ինչպես նշվում է ԲՅԱ-ում, վերջինս հատուկ անուն չէ. «Սա ոչ է յատուկ անուն միոյ տեղոյ, այլ է հասարակ անուն դաշտային տեղոյ, եւ այսպիսի տեղիք բազումք էին, որք յիշին ի սբ. գիրս»²⁵⁴: *Աստվածաշունչ* գրքերից արևմտահայերենն էլ շատ ճիշտ տալիս է իբրև հասարակ անուն թարգմանությունը, մինչդեռ գրաբարն ու արևելահայերենը պահում են *Արաբովթը*, պահում են, որովհետև այդպես է տրվում նաև հունարենում՝ *Յոթանասնիցում*: Երկ. Օր. ԼԴ 1-ում Ա-1-ը գրում է. «Եւ ել Մովսէս յԱրաբովթ Մովաբայ ի լեառն Նաբաւ...»՝ տողատակում նշելով, որ *Արաբովթ*-ը եբրայերենում նշանակում է **ի դաշտացն**: Նույն ձևով արևելահայերենը՝ Ա-3-ը, պահում է *Արաբովթ* տարբերակը՝ «Մովսեսը Մովաբի երկրի **Արաբոթ** վայրից բարձրացաւ Նաբաւ լեռը...», և միայն Ա-2-ը

²⁵³ Տե՛ս Վ. Սահակյան, ՀԱ, էջ 1124:

²⁵⁴ Տե՛ս ԲՅԱ, էջ 32:

(արևմտահայերեն) տալիս է թարգմանված ձևը, որն ավելի ճիշտ ու հարազատ ձևն է եբրայական բնագրին. «*Եւ Մովսէս Մովարբի դաշտերէն Նաբաւ լեռանը վրայ... ելաւ*»: Նույն ձևով Երեմիայի մարգարեության ԼԹ 5-ում, այսինքն՝ կարելի է ասել, որ սա օրինաչափություն է դառնում բոլոր գործածություններում:

Նույն ձևով քննարկենք **Գալիլիա** տեղանունը, որ ստուգաբանվում է **սահման**²⁵⁵: Այս իմաստը նրա բառացի նշանակությունն է, քանզի *Գալիլեան* Բենիամինի ցեղի սահմանն էր Հուդայի ցեղին (Հս. ԺԸ 17-18). «*Հիսիսից կտրում անցնում են Բեթսամիսի աղբիւրը, գնում են Եդոմիների գառիվերի դիմացը գտնուող Գալիլոթ... Բեթարաբայի թիկունքից անցնում են հիսիս եւ իջնում Արաբա*»: Այս հատվածում ունենք **Գալիլոթ** (հուն.՝ Γαλιλαθ, ասոր.՝ ܘܠܠܐ **Գլիլա**), որ **Գալիլիայի** հոգնակի ձևն է և ստուգաբանվում է **սահմաններ**, ուստի ճիշտ կլիներ տալ թարգմանված տարբերակով, և նույնը՝ **Արաբան**, որ նույնպես պետք է թարգմանվեր որպես *անապատ*: Սա հավաստիորեն կարծել է տալիս, որ մեր հին թարգմանիչները եբրայերեն չգիտեին, ուստի հասարակ անունները ներկայացրել են իբրև տեղանուն: Իսկ միգուցե ոչ միայն հայ, այլև հույն կամ ասորի թարգմանիչները, գուցե դա գալիս է հունարե՞ն կամ ասորերե՞ն բնագրերից: Ինչևէ, մենք ունենք նույն բառը՝ եզակի և հոգնակի գործածություններով՝ **Գալիլիա – սահման** և **Գալիլո(վ)թ – սահմաններ**, որոնք մեր բնագրերը դարձրել են հատուկ անուններ: Եվ դարձյալ համեմատությունը *Յոթանասնիցի* հետ միանգամից լուծում է հանգույցը. հունարեն բնագրում տրվում են չթարգմանված՝ իբրև տեղանուններ:

Նմանապես պետք է թարգմանվեր՝ **Ասեթովթ//Ասեդովթ//Ասիրոթ**-ը (հուն.՝ Ἀσηδοθ) Հս. Ժ 40, Երկ. Օր. Բ 23...(ըստ ԲՅԱ-ի՝ *դաշտավայրք* կամ *հեղմունք*, կամ *գառիվայրք*, էջ 26), որ դարձյալ չի թարգմանվել: **Նազեթ** (հուն.՝ Ναζεθ, ասորերենում տրվում է թարգմանված) նշանակում է *հարավային երկրներ, քաղաքներ* (Հս. Ժ 40), մինչդեռ բնագրում չի թարգմանված, և նախադասությունը ընկալվում է մի տեսակ ոչ ճիշտ: Փորձենք հասկանալ. «*Եւ եհար Յեսու զամենայն երկիրն լեռնական եւ զՆազեթ եւ զդաշտականսն, եւ Ասեթովթ եւ զամենայն թագաւորս...*» (Հս. Ժ 40): Արդյո՞ք նշված (չասենք տեղանուն) բառերը պետք է չթարգմանվեին. չէ՞ որ հենց տողատակում նշվում

²⁵⁵ *Գալիլիան* ըստ ԲՅԱ-ի (60) ունի մի քանի իմաստներ՝ *սահման, փոփոխելի, հողովելի, դյուրաթավալ, անիվ*, բայց այս պահին դրանք էական չեն:

է, որ **Նագեք**-ը եբրայերենում *քաղաքներ կամ երկրներ* է նշանակում, իսկ **Ասեթովթ**-ը՝ *ստորոտներ*: Մինչդեռ Ա-2 բնագրում կարդում ենք. «*Եւ Յեսու բոլոր լեռնային՝ հարավային՝ դաշտային ու լեռներուն տակը եղած երկրները եւ անոնց բոլոր թագաւորները զարկաւ*»:

Ոթ//օթ-ը հոգնակիություն չի արտահայտում՝ **Արիմօթ** – *մեռյալ առյուծ* կամ *մահվան լույս*, **Արիսօթ** – *հողագործություն*, **Ափփուսովթ** – *ծածուկ*, *առանձին*, **Աքիմօթ** – *մահվան եղբայր*, **Թալպիովթ** – *զինարան*, **Ազանովթ** – *մի տեսակ աման*, **Մեքենովթ** – *խարիսխ* և այլն:

Քաներեգէս-ը թարգմանվում է միայն հոգնակի՝ **քանէ** – *որդիք*, **րեգես** – *որոտման*:

Հայերեն թարգմանության մեջ հոգնակի ստուգաբանվող այս անուններում, բնականորեն, հետին պլան են մղվում հոգնակի նշանակությունները, և հայերենը հոգնակին ցույց տալու համար կիրառում է իր հոգնակերտ ցուցիչները, ինչպես՝ **Քահաղիմ** ձևին հավելվել է ևս մեկ հոգնակերտ՝ **-այք՝ Քահաղիմայք** կամ ուղղակի **-ք՝ Քահաղիմք**: *Աստվածաշնչում* հանդիպում է **Քահաղիմք** (հունարենում՝ Βασιμ), որն աշխարհաբար նշանակում է **Քահաղիմներ**՝ Դտ. Ը 33՝ «...*զեպ Քահաղիմայցն...*», Ժ 6՝ **զՔահաղիմսն**, 11, Ա Թգ. է 4՝ «*ի Քահաղիմսն եւ զանտառոսն Աստարովթայ*», ԺԲ 10՝ «*ծառայեցաք ի Քահաղիմացն եւ անտառացն*»:

Բացի այս վերը բերված բազմաթիվ դեպքերից, որ, իհարկե, ընդամենը մի չնչին մասն են հրեական անունների, որոնք ստուգաբանվում են հոգնակի նշանակությամբ, *Աստվածաշնչում* հանդիպում են նաև անունների հայերեն հոգնակիակազմության տարբեր ձևեր: Բերենք մի քանի օրինակ:

Ասորիք-ը ստուգաբանվում է **դարանակալք** կամ **երանեալք**, կամ **նշմարողք**, կամ **ընթացողք**, որն առաջացել է **Ասորիիմ** ձևից՝ նույն հոգնակի նշանակություններով:

Գամիրք-ը (Երկ.Օր. Բ 23²) **Գամիրք**, *ի Գամրաց* (հուն.՝ Καπαδοκιας, ասոր.՝ ܩܡܪܝܗ Կափոթկի) անեզական գոյական է, նույնն է *կապադոկիացիք*: ԲՅԱ-ն այս վերջին՝ **կապադոկացիք** ձևը բխեցնում է եբրայերեն **Կափթորիմ** բառից և այն բացատրում հոգնակի նշանակությամբ՝ *գնտակք* կամ *խնձորք*... (ԲՅԱ 116): Անվան մի քանի

իմաստներ բերվում են եզակի, բայց մեզ թվում է, որ դրանք չեն կարող ճիշտ լինել, քանզի, ինչպես տեսանք վերևում, հարյուրավոր անուններ ունեն հոգնակի նշանակություն, և այս դեպքում ևս բառն անշուշտ իր հիմքում ունի հոգնակիություն: Մենք հայերենում *կապադովկացիք* դարձրել ենք *Գամիրք* (Գրծք Բ 9)՝ առնելով այս անունը Հաբեթի որդի **Գամերի** անունից:

Երկրորդ Օրինաց-ում բազմիցս հանդիպում ենք հատուկ անունների հոգնակի ձևերի՝ գրաբարյան հոգնակերտներով՝ **Ոմմինք** (հուն.՝ **Ομμιν**, ասոր.՝ **ܐܡܝܢ** **Ամնե**) ձևը Ա-3-ը թարգմանել է՝ **Օմմինի որդիներ** (ռուս.՝ **Эμμимы**) – Երկ. Օր. Բ 10. «Նախկինում Օմմինի յեղնորդներն էին ապրում այնտեղ», Ա-2-ը՝ **Էմիմներ**. «Ան տեղը առաջուց Էմիմները կը բնակէին», 11-ում՝ **Ոմմինս** (ռուս.՝ **Эμμимамы**). Ա-3. «... եւ մովաբացիները նրանց անուանում են օմմինյաններ», Ա-2-ը՝ «Ու Մովաբացիք զանոնք Էմիմ կը կոչէին»:

Գրաբար թարգմանության մեջ հանդես եկող հոգնակի հարյուրավոր գործածություններ Ա-2 և Ա-3 գրքերում դրսևորվում են տրված ձևերով՝ **Ադամաացի /ք/ Ադամաացուց** (Ադամա երկրի բնակիչները՝ Ծն. ԺԴ 2, 8), **Հեփթաղիիմացիս** (Ծն. Ժ 14), **Ղեւրացի/ք** (ղևտացիներ) Ղևտ. ԻԵ 32 (*ի քաղաքս Ղեւրացուց*), 33 (*ի Ղեւրացուց*), Երկ. Օր. Ժ 9, Հս. ԺԴ 3 (*Ղեւրացուցն*), Ա Թգ. 2 14, **Մադիանացի/ք** (Ծն. ԼԷ 28, 36, Ել. Բ 15, Թվ. ԻԵ 6՝ **Յեբուսացի/ք**, աշխ.՝ եբուսացիները), Ծն. Ժ16, ԺԵ 21 (*զՅեբուսացիս*), Ել. Գ 8 (*Յեբուսացուց*), Հս. ԺԱ 3 (*Յեբուսացիս*), ԺԵ 63 (*Յեբուսացին*), **Ռափիմացի/ք/** Ծն. ԺԵ 21 (*զՌափիմացիս*), **Սեբոյիմացի/ք** (Ծն. Ժ Դ 2), **Ջոմզոմինք** (աշխ.՝ զոմզոմյաններ, *Замзумимы* (Երկ. Օր. Բ 21), **Ենակիմք**-Ա-2-ը՝ **Ենակիմի որդիներ**, **Ռափայիմք** (*ռափայիմներ*) *Рефаимы* (Երկ. Օր. Բ 11) ընդ *Ռափայիմսն* (աշխ.՝ **Ռափիմի ցեղ**), Հս. ԺԵ 8 (*երկրին Ռափայնց...*), ԺԷ 15 (*զՌափայիմսն*) աշխ.՝ **Ռափայիմների երկիր**):

Գրաբար տեքստում հանդես եկած հատկանուն տեղանունը արտահայտում է հոգնակիություն և աշխարհաբար թարգմանվում է հոգնակի, ինչպես՝ **Քանան**¹ արական անձնանուն է՝ գործածված Ծն. Թ 19, 22, 25, 27², Ժ 7, 15 և այլ տեղերում, **Քանան**² տեղանուն է Ծն. ԺԲ 6, Հս. ԻԲ 10 (*յերկրին Քանանու*) և բազմաթիվ այլ գրքերում, **Քանան**³ մականուն է և ակնարկում է քանանացիներ՝ Դտ. Ժ 12 (*եւ Քանան նեղեցին զձեզ*): Բնական է, որ նույն գրքում հանդիպում են նաև հոգնակիի այլ

դրսևորումներ՝ **Քանանացի/ք(Քանանացուց)** Ծն. Ժ 18, ԺԲ 6, ԺԳ 7, ԺԵ 21 (զՔանանացիս), ԻԴ 3, ԻԸ 2, 8, ԼԴ 30, Ել. Գ 8, Հս. ԺԱ 3 (Քանանացիս/, Հս. ԺԳ 3²) ամենայն սահմանք... Գեսուրի եւ Քանանացին (աշխ.Քանանը), (ընդ աջմէ Քանանացույն համար), Դտ. Ա 1, **Քանանացուց երկիր**՝ Ծն. ԺԱ 31, ԺԲ 5, ԺԳ 12, ԺԵ 2, 3 (յերկրին Քանանացուց), ԺԵ 8, ԻԳ 2, 20, ԼԱ 18:

Թվ. Ի 18-ում կարդում ենք. «Եւ աւէ ցնա եղովմ». աշխարհաբար տեքստը ներկայացնում է *եղովմացիների արքան*:

Աստվածաշնչային տեքստերում հաճախ գործածվում են **-եանք**-ով հոգնակի ձևերը²⁵⁶, որոնք գոյականի իմաստով են կիրառվում, ինչպես՝ **Մադիամեանք**՝ Աստվածաշնչի *Մադիամ* անվան՝ Մադիամի սերունդը, այդ ազգը:

Մադիամ -ը Ծն. ԼԶ 35-ում գործածված է **մադիամացիներ** նշանակությամբ և այս առումով Ա-2-ը ճիշտ թարգմանել է գրաբար նախադասությունը. «... որ կոտորեաց **զՄադիամ** ի դաշտին Մովաբացուց», «... որ Մովաբի դաշտին մէջ **Մադիամացիները** կոտորեց»: Ա-3-ը պահել է **Մադիամը**. «... մովաբացիների դաշտում կոտորեց Մադիամին», մինչդեռ բազմաթիվ անգամներ Ա-3-ը նման դեպքերում տեղանունը թարգմանում է իբրև մականուն՝ հոգնակի իմաստով ակնարկելով այդ ժողովրդին: Հենց նույն անունը՝ **Մադիամ**-ը, **մադիամացիներ** (Мадиянитяне) նշանակությամբ և ձևով գործածված ենք տեսնում Դտ. Զ 2-ում՝ Ա-1-ը տալիս է. «... եւ եր զնոսա Տէր ի ձեռս **Մադիամու** ամս ելթն», «երեսաց **Մադիամու**», Ա-3-ում՝ «... ելաներ **Մադիամ...հասանէին** ի վերայ նոցա», Ա-3-ում՝ «եւ **մադիամացիների** ձեռքը ծանրացաւ Իսրայէլի վրայ», «**մադիամացիների** պատճառով...» և այլն:

Հոգնակերտ **-եանք**-ը կարող է նշանակել նաև տվյալ անվամբ բոլոր հայտնի անձերը, ինչպես՝ **Մարիամյանք (Մարիամեանց)**-ը, որը հոգնակին է *Մարիամների*. նկատի ունի Մարիամ Մագթաղենացուն, Հակոբի մայր Մարիամին և էլի մի երկուսին (ոչ Մարիամ), որոնց կոչում են **Յուդաբեր կանայք**:

Միջնադարյան բանաստեղծության մեջ անգամ ունենք մի կիրառություն. Կարապետ Բաղիշեցին գրում է. «Եւ Տէրն մեր ընդ նոսա խօսէր, **զՄարեամեանսն**

²⁵⁶ Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ, էջ 207:

մխիթարէր...» (ՈՒՄԲ, 32):

Եփրեմ³ (եփրեմյաններ) (հուն.՝ *Εφραίμ*, ասոր.՝ *ܐܦܪܝܡ* **Ափրեմ**, ռուս.՝ *Ефремяне*) – Ա-1 բնագրի Հս. ԺԶ 10-ում բերված «*Եւ ոչ կորոյս **Եփրեմ զՔանանացին** բնակեալ ի Գազեր, եւ բնակէր Քանանացին **ի մէջ Եփրեմայ** մինչեւ ցայսօր*» նախադասութիւնը Ա-3 բնագրում թարգմանված է հետևյալ ձևով. «**Եփրեմեանները** չհալածեցին Գազերում բնակուող քանանացիներին, եւ քանանացիները բնակուեցին **Եփրեմեանների մէջ**»:

Կղեոպյանք/Կղեովպեանք-ը (հուն.՝ *Κλωπα*, ասոր.՝ *ܟܠܘܦܐ* **Կալոփա**, ռուս.՝ *Клеопова*) հոգնակի ձևն է *Կղեովպաս* անվան:

Ըստ *Աստվածաշնչի* (Հվի. ԺԹ 25)՝ *Կղեոպասը* Հակոբ առաքյալի հոր անունն է: Սա կոչվում էր նաև *Ալփեսու*, որի կինն էր Մարիամը, որը մեկն էր խաչված Հիսուսի մոտ կանգնած կանանցից:

Միջնադարյան բանաստեղծներից Գրիգոր Տղան գործածում է. «**Մարիամեանց եւ Կղեովպեանց**», Առաքել Սյունեցու՝ «*Յեպ յարութեան կընքեալ վիմին, Ջգործ անմարմնոյ ցուցեալ նորին, Եւ Կղեովպեանցն ի սեղանին՝ Աներևոյթ եղեալ նոցին*»:

Սարգիս վարդապետը տալիս է **Հակոբեանք**-ի կիրառություն. «Սուրբ **Յակոբեանց** անուն վերայ է կառուցեալ հիմն նորա», *իսկ Գրիգոր Խլաթեցին*՝ «Եւ այս նըման **խրայելեանցն**, Որ ի յաուրս Մակարայեանցն, Ջոր մարգարէն յառաջ ասաց, Աստուածախօսըն գուշակեաց»:

Երեմեանք-ը հոգնակի ձևն է *Երեմիա* անվան, որ նշանակում է Երեմիան և նրա նման ողբասացները:

Գրիգոր Տղան ունի. «**Երեմիանքն** աստ պիտէին, Որ զԲաբելոն մոռանային Յայժմուս և մեզ ողբակցէին Ջերուսաղէմ նստեալ լային, Որ այրեցաւ գերիս գերին Եւ իրթնեցաւ ողորմելին»:

Ամոն: Թվ. ԻԱ 24-ում բերվող «մինչեւ **ցորդիսն Ամոնայ**» նախադասության **Ամոն**-ը աշխարհաբար տեքստում դառնում է **Ամոնացիների երկիր**, Երկ. Օր. Բ 19²-ում «*Եւ մօտ հասանիցէք **յորդիսն Ամոնայ***», «*զի ոչ քաց ձեզ զերկիր **որդուցն Ամոնայ** ի վիճակ*», Հս. ԺԲ 3 «*սահմանք **որդուցն Ամոնայ***», աշխարհաբար տեքստը միշտ թարգմանում է երկիր. «*Դուք կը մօտենաք Ամոնացիների երկրի սահմաններին*». սա շատ բնորոշ է *Աստվածաշնչին*:

Յարիմ¹-ը տեղանուն է (հուն․՝ *πόλις Ιαριμ*, ռուս․՝ Кириаф-Иарим) Հետուի ԺԵ 9-ում և բառացի նշանակում է *անտառ, դարաստան* (ԲՅԱ), մինչդեռ **Յարիմ**²-ը նշանակում է *յարիմացիներ*, Ա Թգ. ԺԵ 3-ում կարդում ենք. «*Եւ արդ երթ եւ հարցես զԱմաղէկ եւ զՅարիմ...*», իսկ Ա-3 բնագրում թարգմանվում է՝ «*արդ գնա եւ կոտորիր ամաղէկացիներին ու յարիմացիներին...*»:

Ինչպես նշեցինք վերևում, հատուկ անունները հանդես են գալիս քերականական առկայացման ինքնատիպ դրսևորմամբ. հատուկ անունը դերանվան պես առկայացած է, սակայն եթե դերանվան առկայացումը որոշակի խոսքային միջավայրով է պայմանավորված, ապա հատուկ անունների զգալի մասը առկայացած է ինքնին, խոսքային բոլոր իրադրություններում: Հատուկ անունը լրացուցիչ առկայացում պահանջում է այն դեպքում միայն, եթե կրկնվում է անունը, կամ կարող է առաջանալ շփոթություն: Ահա այդ առկայացումները արտահայտվում են հողերով:

Ի տարբերություն հին հունարենի, որտեղ հատուկ անունները հանդես են գալիս հողերով, գրաբարում, միջին հայերենում, արևմտահայ գրական լեզվում հատուկ անունները հող չեն ստանում կամ ստանում են հատուկ դեպքերում, ինչպես՝ «*Եւ այս են ծնունդք որդւոցն Նոյի. Աւմ, Քամ, Յարեթ*» (ԾՆ.Ժ 1), «*Եւ եկեաց Նոյ յեւր ջրհեղեղին ամս երեք հարեւր եւ յիսուն*» (Ծն. Թ 28), «*... եւ մի՛ ելցէ ի վերայ նորա ամենայն դեղ դալար, որպէս կործանեցան Սողոմ եւ Գոմոր, Աղմա եւ Սեբոյիմ*» (Երկ. Օր. ԻԹ 23):

«*... Եւ էին Փենանայի որդիք և Աննայի ոչ գոյր որդի*» (Ա Թգ. Ա-3) նախադասության ընդգծված անունները Ա-2-ը թարգմանել է անհող՝ «*Ու Փենանա զաւակներ ուներ, բայց Աննա զաւակ չուներ*», Ա-3-ը՝ որոշյալ՝ «*Փենանան որդիներ ուներ, իսկ Աննան որդի չուներ*»: Հետևաբար արևելահայ գրական լեզվում հատուկ անունները հողառու են:

Հատուկ տեղանունները (և ոչ միայն) հասարակ անունների հետ երբեմն դրվում են սեռական հոլովով և դառնում են նրանց համար որոշիչ, ինչպես՝ «*... եւ բանակեցան փունն Իսրայելի ի Բեթէլ*» (Դտ. Ա 23), «*... ի հեղեղարն Կիսունի* » (Դտ. Դ 7), «*Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի յանապարին Սինայի*» (Թվ. Թ 1), «*Եւ տեսա խոյ մի կախեալ կայր զճառոյն Սաբեկայ զեղջերաց*» (Ծն. ԻԲ 13):

Տարածված է հատուկ անունների հետադաս գործածությունը հասարակ անվան

համար որպես որոշիչ, ինչպես՝ «գտին դաշտ մի **յերկրին Սենաար**» (Ծն. ԺԱ 2), «եւ զերկիր **Ովգայ** թագաւորին **Քասանու**» (Երկ. Օր. Դ 17), «... առ որդիսն Յուդայ ի **յանապատն Յուդայ** (Դտ. Ա 16), «Ել դու ի **լեանն Աբարիմ, ի լեան Նաբաւ, որ է **յերկրին Սովաբու** յանդիման Երիքովի...**» (Թվ. ԼԲ 49), ... **ի լերինն Սինայ**» (Ղևտ. ԻԵ 2):

Անուն բառը հատուկ անվան հետ դառնում է որոշիչ՝ այր, կին, որդի, քաղաք և այլ բառերի համար և դրանով ստեղծվում է մի տեսակ ոճ՝ խիստ բնորոշ *Աստվածաշնչին*. «Արշաւեցին ի քաղաք մի ամուր **Եփրոն անուն**» (Բ Մկ. ԺԲ, 27): Ի դեպ, *անուն*-ը պարտադիր անհոդ բաղադրիչ է անձերին կամ տեղանունները անվանակոչելիս. «... եւ անուն նորա **Դալիլա**» (Դտ. ԺԶ 4), «... եւ անուն նորա **Կիս**» (Ա Թգ. Թ 1), «... եւ անուն **Դաբիրայ** էր յառաջագոյն քաղաք Նամակաց» (Հս. ԺԵ 15):

Աստվածաշնչում շատ տարածված է ու սովորական տեղանվան փոխարեն այդ տեղում ապրող ժողովրդի անունը կապակցությամբ կիրառելը²⁵⁷, օրինակ՝ փոխանակ ասելու **Հոռմ քաղաք**, ասվում է **քաղաք Հոռմայեցոց**, կամ՝ «... ուր պանդխտեցաւ հայր նորա, **յերկրին Քանանացոց**» (Ծն. ԼԷ 1): Հետաքրքիրն այն է, որ Ա-3-ը պահում է **Քանանացիների երկիր** ձևը, մինչդեռ արևմտահայերենը (Ա-2) տալիս է այլ տարբերակով և ոճով. «Եւ Յակոբ իր հորը պանդխտացած երկրին՝ **Քանանու երկրին մէջ բնակեցաւ**»: Հս. ԺԵ 1-ում արդեն գրաբար ի **սահմանացն Եղովմայեցոցն** կապակցությունը Ա-2 և Ա-3 թարգմանությունները պահել են նույն ձևով, «Եւ եկն Յակոբ... ի Մամբրէ՝ ի քաղաք դաշտին, այն է՝ Քեբրոն, **յերկրին Քանանացոց**» (Ծն. ԼԵ 27), Ա-3-ը տալիս է. «Հակոբը եկաւ իր հայր Իսահակի մօտ, Մամբրէի կողմերում դաշտային մի քաղաք, այսինքն՝ Քեբրոն, որ գտնվում է **Քանանացիների երկրում**», որը կարելի է ինչպես որոշիչ-որոշյալ, նույնպես հատկացուցիչ-հատկացյալ ընկալել:

Հատուկ անուններով յուրահատուկ շարադասական կառույց է հանդիպում հատկապես *Հին Կտակարանում*, և այդ կաղապարը կրկնվում է բազմիցս՝ ոճական առումով բնորոշ լինելով հենց գրաբարին: Բերենք մեկ օրինակ. *Թվոց* գրքի՝ «Եւ խօսեցաւ Կորիս՝ որդի Իսահառայ որդւոյ Կահաթու որդւոյ Ղեւեայ, եւ Դաթան եւ Աբիրոն

²⁵⁷ Տե՛ս Հր. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, II մաս, էջ 89:

որդիք Եղիաբայ' (որդւոյ Ռուբենի)²⁵⁸, եւ Աւնան որդի Փաղեթայ որդւոյ Ռուբենի...» նախադասութիւնը իր շարադասական կաղապարով ասես պատճենված լինի հունարենից. «καὶ ἐλάλησεν κορε υἱὸς ισσααρ υἱοῦ κααθ υἱοῦ λευι καὶ δαθαν καὶ αβιρων υἱοῦ ελιαβ καὶ αυν υἱοῦ φαλεθ υἱοῦ ρουβην...»:

Քերականական առանձնահատկութիւնների դիտարկումը երևան է հանում այն իրողութիւնը, որ Հին Կտակարանի **Հնգամայրանից Ծնունդք, Ելից, Ղևտական գրքերը** ավելի պարզ շարադրանք ունեն, ավելի պարզ լեզվական կաղապարներով են գրված, քան **Թվոցն** ու **Երկրորդումն Օրինացը**: Այսպես՝ առաջին երեք գրքերում նախադասութիւնները պարզ և կրկնվող կառուցվածք ունեն, գործածված հատուկ անունները գրեթէ չեն հանդիպում գործիական և բացառական հոլովներով, մինչդեռ վերջին երկուսում դրանք հաճախական են, քերականական կառուցները ավելի բարդ են:

²⁵⁸ Այս կապակցութիւնը գրաբար բնագրում ավելորդ կրկնված գործածութիւն է և չպետք է լիներ:

ԳԼՈՒԽ V

ԱՍՏԾՈՒ, ԱՍՏՎԱԾԱՄՈՐ, ԿՈՒՌՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

5.1. Էլոհիմ – Աստված, Սաբա(վ)ովթ – Չորությունների տեր բառերի ստուգաբանության շուրջ

Հատուկ անուններն ընդհանրապես, մասնավորապես անձնանունները, Աստծու անուններն ու անվանումները, լեզվաբանական միավորներ լինելով, իրենցում ոչ միայն լեզվական, այլև խորքային (ազգային, հոգևոր-մշակութաբանական, սոցիալ-պատմական) մեծ տեղեկություն են պարունակում, ինչպես նաև ապահովում ժողովուրդների միջև այդ ամենի փոխհաղորդում:

Սուրբ Գրքի առանցքը Աստվածն է, որն *Աստվածաշնչի* տարբեր գրքերում տարբեր անուններով ու անվանումներով է հանդես գալիս²⁵⁹:

Աստված կատարյալ ու բարձրագույն էություն է՝ գերագույն էակ, որին աստվածաշնչյան բոլոր գրքերում վերագրվում են ամենատարբեր հատկանիշներ. նա արարիչ է, անմահ, ամենակալ, ամենակարող, անկախ, անփոփոխելի, սուրբ, բարի, ամենատես, արդար, կենարար, հզոր, և պատահական չէ, որ այս հատկանիշների մեծ մասն էլ դառնում են Աստծու անվանումներ:

Աստված են անվանվում նաև հեթանոսական աստվածները, որոնք եղել են բազմաթիվ, և նրանցից յուրաքանչյուրը ունեցել է իր անունը²⁶⁰:

Ծննդոց գրքից (Ծն. Ա 27, Ե 1, 3, Թ 6) մենք տեղեկանում ենք, որ Աստված ունի մարդկային արտաքին, քանզի՝ «Եւ արար Աստուած զմարդն ի պարկեր իւր... ըստ պարկերի Աստուծոյ արար զնա, արու և էգ արար» (Ծն. Ա 27), «... ըստ պարկերի աստուծոյ սրեղծ զնա» (Ե 1)²⁶¹: Կողոսացիներին հղած Պողոսի թղթում կարդում ենք.

²⁵⁹ Տե՛ս Փ. Մեյթիխանյան, *Աստծու անուններն ու անվանումները (Հայր Աստված)*, Պատմաբանասիրական հանդես, հ. 1, 2016:

²⁶⁰ Կուրքերի անունները տրված են սույն գլխի 5.3. ենթագլխում:

²⁶¹ Հետաքրքիր մի փաստ. Հայր Աստծո պատկերը Հայաստանի տարածքում տրված է միայն Նորավանքի գավթի պատին (ճարտարապետ Մոմիկ, 13-րդ դար), որտեղ Արարիչը ձեռքին բռնել է իր ստեղծած առաջին մարդու՝ Ադամի գլուխը, և շունչ է հաղորդում նրան:

«Նա (Հիսուսը) պատկերն է աներեւոյթ Աստուծոյ, անդրանիկը բոլոր արարածների...» (Կղ. Ա 15, 16):

Էությամբ Աստված մեկ է՝ Սուրբ Երրորդություն՝ Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգի Աստված: Սուրբ Երրորդությունը միասնական է՝ նույն աստվածային ունակություններով. Աստված արարում է, թագավորում, դատում, նա սիրում է և ներում, նա գթում է և ողորմում. «Եւ մարտացեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ: Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա **յանուն Հոր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ**» (Մտթ. ԻԸ 18-19, Ա-1):

Աստվածային էութունը ամեն մի ընթերցող հավատացյալի առջև յուրովի է բացվում, և յուրաքանչյուր ոք ցանկանում է այդ գերագույն էակին բացահայտել իր համար, տեսնել ու հասկանալ այն, ինչ ուրիշներին հասու չի եղել²⁶²: Եվ մարդկային այդ ցանկությունը անվերջանալի է ու հարատև:

Հնգամատրյանում մինչև Իսրայելի Աստված ճանաչվելը Աստված նախ և առաջ **անձի Աստված է՝ Սեմի** (Ծն. Թ 26), **Աբրահամի** (Ծն. ԺԷ 1), **Հակոբի**: Նա խոսում է այդ անձանց հետ, նրանց խոստանում աջակցություն. «Եւ ասէ Աստուած ցԱբրամ. Ե՛լ դու յերկրէ քումմէ եւ յազգէ քումմէ եւ ի տանէ հոր քո՝ յերկիր զոր ցուցից քեզ. եւ արարից զքեզ յազգ մեծ, եւ օրհնեսցից զքեզ, եւ մեծացուցից զանուն քո, եւ եղիցես օրհնեալ» (Ծն. ԺԲ 1, 2, Ա-1): Չմոռանանք, որ Աստծուն ուղղված առաջին աղոթքը հղում է հենց Հակոբը. «Եւ ուխտեաց Յակոբ ուխտ եւ ասէ. Եթէ եղիցի Տէր Աստուած ընդ իս, եւ ապրեցուսցէ զիս ի ճանապարհիս յայսմիկ զոր ես երթամ, եւ տացէ ինձ ուտելոյ եւ հանդերձ զգենլոյ, եւ դարձուսցէ զիս ողջութեամբ ի տուն հոր իմոյ, եւ եղիցի ինձ Տէր յԱստուած. եւ վէմս զոր կանգնեցի արձան՝ եղիցի ինձ Տուն Աստուծոյ. եւ յամենայնէ զոր տացես ինձ՝ տաց քեզ տասանորդս» (Ծն. ԻԸ 20-22, Ա-1): Նույն Ծննդոցում Հայր Աստվածը արդեն ճանաչվում է հոր աստված ոչ միայն Իսահակի, այլև Հակոբի կողմից. «Աստուած Աբրահամու հոր

²⁶² **Ստ. Մալխասյանցը** Հայերեն բացատրական բառարանում (ՀԲԲ), **Էդ. Աղայանը** Արդի հայերենի բացատրական բառարանում (ԱՀԲԲ) Աստված բառը բացատրում են մի քանի նշանակություններով. 1. (փիլ.) Մշտնջենական տիեզերական զրոյություն, նախասկիզբ և նախապատճառ ամեն բանի: 2. Հեթանոսական կրոնում բնության որևէ ուժը կամ նրա մարմնացումը, որոնց միջոցով բացատրում էին իրենց համար անհասկանալի երևույթները: 3. Միաստված կրոններում գերագույն էակ, որ ստեղծել է երկինքն ու երկիրը և ամեն ինչ նրա մեջ: 4. (փխբ.) Պաշտամունք դարձած անձ կամ առարկա, որ կարևորագույն է մեկի համար:

քո, եւ Աստուած Իսահակայ...» (Ծն. ԻԸ 13), «Աստուած Իսահակայ, եւ Աստուած Յակոբայ...» (Ել. Գ 6): Այս հոր աստվածն է, որ օրհնում է Հովսեփին, իսկ Սինա լեռան վրա՝ Մովսեսին:

Աստվածային էության պես խորհրդավոր է նաև *Աստված* բառը, որի մեկնաբանմամբ, ստուգաբանությամբ շատերն են զբաղվել և դեռ շարունակում են զբաղվել:

Ըստ ընդունված և տարածված կարծիքի՝ հայերեն *Աստված* բառն ունի հնդեվրոպական ծագում, բնիկ հայերեն բառ է, որի քննությանն անդրադարձել են թե՛ մեր հին մատենագիրները և թե՛ վերջին ժամանակների անվանի շատ հայագետներ՝ Մխիթար Սեբաստացի, Ղևոնդ Ալիշան, Հր. Աճառյան, Գ. Զահուկյան, Վ. Համբարձումյան²⁶³ և այլք:

Ըստ Մխիթար Սեբաստացու՝ «*է անուն ստեղծողին ամենից, որ է ի յաւիտենից և անստեղծ: Բայց անունս այս ոչ նշանակէ զէութիւն աստուածային, զի է անհուն և անսահման... ի մերում լեզուի ստուգաբանի բառս Աստուած՝ աստ էած...»* (ԲՀԼ, հ1): Սա, ըստ էության, կրկնում է Խոսրով Անձևացու մեկնությունը. «*Աստուած անուն արարչական է... և առ մեզ ստուգաբանի թէ աստ էած զմեզ*» (Խոս. Անձ. Մեկն. Ժամակարգ., էջ 99): Նույն հեղինակի մեկ այլ գործում (Մեկն. պտրգ., էջ 16) գրում է. «*Տէրն անուն վասն տիրելոյն է, իսկ աստուածն՝ վասն ստեղծանելոյն և յաստիս ածելոյ զեղեալքս*»: Ըստ Հովհ. Վանականի՝ «*...Աստուած է անուն, որ թարգմանի զմեզ յաստիս ածող*»: Նույնը կրկնում է Ներսես Լամբրոնացին²⁶⁴:

Ստուգաբանական հետաքրքիր լուծում է առաջարկում Հովհաննես Վանականը: Հարց ու պատասխանի ձևով տրվում է. «*Ո՞վ եղ զանունս Աստուած. Պատասխան. Ասեն թէ օձն ասաց Եայի. Զի՞ է զի ասաց ձեզ, որ զքեզ աստ էած: Զայն, ասեն, ածն առին և Աստուած անուանեցին: Բայց դու մի՛ ընդունիր զայս. զԱստուած անունն Աղամ եղ (եւ ոչ օձը)*»:

Բառգիրք հայոց-ը (ԲՀ) տալիս է *Աստված* բառի՝ «*յաստիս ածող, կամ բարերարութեան պատրճառ կամ արարիչ, կամ անտես*» մեկնությունները՝ որևէ մեկը առավել

²⁶³ *Աստված* բառի մանրամասն քննությունը տրվում է նաև Վ. Համբարձումյանի *Հայերեն Աստված բառի ծագումն ու տիպաբանությունը* ստուգաբանական-տիպաբանական հետազոտության մեջ, Եր., 2002: Գրքի գրականության ցանկում նշվում են հայ և օտարագրի այն հեղինակները, որոնք ինչ-որ չափով անդրադարձել են *Աստված* բառի ստուգաբանությանը:

²⁶⁴ Ստուգաբանությունները տրվում են ըստ Հր. Աճառյանի *Հայերեն արմատական բառարանի*:

չկարևորելով²⁶⁵:

«Նոր բառգիրք հայկազեան լեզու»-ին (ՆԲՀԼ), լինելով բազմալեզվյան բացատրական բառարան, տալիս է և՛ անվան հունական ու լատինական տարբերակները՝ **Θεός, Deus**, և՛ անվան տարբեր մեկնություններ՝ ըստ տարբեր աղբյուրների՝ «**Հասարիս կամ ասար՝ և յասարիս ածող, այսինքն գոյացուցիչ, ստեղծիչ. որպէս ստուգաբանի ի բազմաց... և կամ կրաւորաբար, Աստուծոյ, ասարևոր, հասարարուն,, անշարժ, անփոփոխ, հզօր ևն**», ապա մի քանի տող անց հավելում է՝ «**ասար էած զմեզ**», և՛ Աստված անվան համարժեքները այլ լեզուներում՝ «*այլաի, հագգ, միվլա, րէպպ, թանդրը, խիարա, եգզրան, իզիպ, եահ, եօվա, էլօհիմ*»²⁶⁶:

Աստված բառի ստուգաբանությունները, ավելի ճիշտ ստուգաբանությունների պատմությունը, ներկայացրել է Ղևոնդ Ալիշանը՝ դրանք տարբերակելով մի քանի խմբերի²⁶⁷: Նախ այն, որ ըստ ոմանց՝ **Աստված** բառը սխալ են արտասանում, այն պետք է արտասանել **Ազդուած** կամ նույնիսկ առանց **-ած**-ի. «*զի Ազդ և Ազդու աւելի հզօր կամ ներգործող կ՛ իմացուին՝ քան Ազդուածն*» (էջ 16): Ըստ որոշ մասի՝ «**Աստ-ածող կամ Ստեղծող արարածոց**», ապա հավելում է, որ այսպես Ադամն է անվանել (նույնը՝ Հովհ. Վան.), «**յաստ ածող**», «**ստեումն ածող**», «**երանգ լուսոյ**», «**Հաստող, հաստուած**»: Օտար հեղինակները տալիս են **Օծում**, հայերենի և պարսկերենի մերձավորության հիման վրա՝ «*համարեցան, թէ Աստուած բառն է կրկնութիւն եզն աստուածանիշ բառի և զոհից, որ Յազդ փոխուած է առ մեզ, իբրու եզրան-եզպ կամ Աստուաստ*» (18): Ալիշանը հերքում է նաև այս տեսակետը՝ նշելով, որ հնագույն է **Աստուած** անունը և ոչ «*Պարսից և Ջրադէշպի քէշն*»: Տարակուսելի է համարում նաև գերմանացի բանասեր Մորթմանի տեսակետը, որը, հայերենի և փոյուգերենի մերձակցությունը հիմք ընդունելով, փոյուգիական արձանագրություններում հանդիպել է «**Աստուաստ կամ Աստուած՝ մեր հայ անուան նշանակութամբ**», չի մոռանում հիշատակել հոլանդացի հայագետ Լակրոզի տեսակետը՝ **Ածդահակ-Աստուած**, և դրանց շարքում ավելի «*հավանական*» է համարում հնդկական **Աստուարտա**-ն, «*որ և ինքն Բրահմա է*», և այլն ու, ի վերջո, փաստում, որ սրանք բոլորը առասպել են. «*Բայց հերիք համարուի մեր այս*

²⁶⁵ Տե՛ս *Բառգիրք հայոց*, քնն. քն. և ծնթ.՝ Հ. Ամալյանի, Եր., 1975, էջ 34:

²⁶⁶ Տե՛ս *Նոր բառգիրք հայկազեան լեզուին*, Վենետիկ, 1836, հ. I, էջ, 320:

²⁶⁷ Տե՛ս **Ղևոնդ Ալիշան**, *Հին հասարք կամ հեթանոսական կրօնք հայոց*, Վենետիկ, Ս. Ղազար, 1910:

դեգերանքն. իսկ հետեւանքն կամ ընտրութիւնն՝ հաճութեան ընթերցողաց. մեր հաւանութիւնն յայտնելով յայսմ, որ մեր ազգի նման հին է իր գերագոյն ճանչցած էին աստուած անուն, և երկրորդ, որ օտարաց մէջ այլ լսուին մերձաւոր ծայներ, որք թերեւս ատելի այսոր յարինչ են՝ քան **Տէուս** կամ **Չեւս** անուանց»²⁶⁸:

Հր. Աճառյանի *Հայերեն արմատական բառարանում* (ՀարմԲ) տրվում են **Աստված** բառի այս մեկնությունների որոշ մասը և էլի այլ մեկնություններ, որ կատարել են մինչաճառյանական հայագետները²⁶⁹, ու թերևս շատ տեղին է վերը բերված ստուգաբանությունների հավաստիության մասին փաստել հենց իր՝ մեծ հայագետի՝ *Հայերեն արմատական բառարանի* առաջաբանում արտահայտած հետևյալ տեսակետը. «Այս մատենագիրներից յիշելու արժանի են Եզնիկ, Խոսրով Անձևացի, Ներսէս Լամբրոնացի, Գրիգոր Տաթևացի, Վարդան, Գրիգոր Մագիստրոս և հին քերականների մի խումբ: Տարակույս չկա, որ այս ստուգաբանութեանց մեծագոյն մասը սուտ ու սխալ բաներ են, և ամենաչնչին մասը միայն գիտական ճշմարտութիւն ունի»²⁷⁰:

Հր. Աճառյանը իր ստուգաբանական բառարանի **Աստված** գլխաբառի առաջին բաժնում նախ նշում է, որ սա «հին և ընտիր բառ է, որից ունենք մի քանի հարյուր ածանցներ (իմա՛ բաղադրություններ)», տալիս է *աստված* և *չաստված* բառերի հոլովական ձևերը՝ ըստ քերականների, նշում, որ *աստված*-ը երբեք մեր մատենագրության մեջ ամբողջությամբ չի տրված, այլ պատիվով՝ *Ա՛ծ*, *Ա՛յ*, *յԱ՛յ*, *Ա՛վ*, որն էլ կասկածելի է դարձնում այդ բառի արտասանությունը, այսինքն՝ առաջին բաժնում նա, ըստ էության, անդրադառնում է բառի քերականական դրսևորմանն ու հնչմանը, գրությանը՝ առատորեն բերելով մատենագրական տվյալներ:

Ստուգաբանության բաժնում *աստված*-ը համարում է թրակա-փոյուզիական փոխառություն՝ համարժեք **Սաբավդա** աստվածությանը՝ ներկայացնելով տվյալ կարծիքն ընդունողներին (ըստ Մառի): Այնուհետև հավելում է, որ հետագայում այս աստվածության անունը հատկացվեց **Քազոսին**²⁷¹:

Հր. Աճառյանը տալիս է նաև *աստ* արմատը՝ **ուժ** իմաստով, և այն հղում է **ազդ**

²⁶⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 22:

²⁶⁹ Տե՛ս Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. Ա, Եր., 1970, էջ 279 - 282:

²⁷⁰ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 16:

²⁷¹ Տե՛ս նշվ. բառարանը, էջ 280:

արմատին²⁷², որի տակ բերում է Յուսթինի, Մորթմանի, Մյուլլերի ստուգաբանությունները՝ «գոյություն ունենալով», «էություն, գոյություն»²⁷³: Փաստորեն Հր. Աճառյանը բերում է **Աստված** բառի, **աստ** և **ազդ** արմատների մասին ամենատարբեր կարծիքները, բայց դրանց չի հետևում իր մեկնությունը, կամ թե որն է ինքը համարում ճշմարիտն ու հավանականը: Առաջաբանում մեծանուն լեզվաբանը ընթերցողին ուղղորդում է. «Դարձեալ պէտք է շեշտեմ, որ աշխատութեանս սոյն երրորդ բաժինը ընդհանրապէս գիտական արժէքից զուրկ, լեզուաբանների համար անպէտք ու անելորդ է... Առանձին հոգ եմ տարել յիշելու իւրաքանչիւր ուղիղ մեկնութեան հեղինակը: Ուղիղ մեկնութիւն եմ կոչում գիտականօրէն ճիշտ կամ ընդունելի այն ստուգաբանութիւնը, որ յիշուած է լինում երկրորդ բաժնում... Բայց այստեղ «ուղիղ մեկնութիւն» բառերը պէտք է առնել ոչ թէ բացարձակ, այլ յարաբերական մտքով»²⁷⁴: Այս տեսանկյունից էլ քննելով Հր. Աճառյանի ներկայացրած **Աստված** բառի մեկնությունները՝ նկատում ենք, որ հավանականը մնում է «փոխառեալ է փոփոխութեանից. հմմտ. նշանաւոր թրակօ-փոփոխական աստուածութիւնը»²⁷⁵:

Գ. Զահուկյանն անդրադառնում է Հր. Աճառյանի ստուգաբանություններին և նշում, որ **աստ-ազդ** արմատները տարբեր են, չեն կարող իմաստով համընկնել իրանյանի հետ, քանի որ վերջինում այն նշանակում է *հավաստի, իսկապես*: Զահուկյանը հնարավոր է համարում հնդեվրոպական **աստ-հաստ** ձևերի զուգահեռությունը, որոնք ծագում են իմաստով **ամուր** արմատից, ըստ որի էլ՝ **հաստիչ**, այն է՝ *ամրացած, հաստապարկած, սրեղծված* (եբրայերենում՝ *վեմ*), որ է՝ **սրեղծող**²⁷⁶: Զահուկյանը համաձայն չէ նաև այն դիտարկմանը, ըստ որի՝ Աստվածը պէտք է կապել Տαβύζιος փոյուզիական աստծու անվան հետ, որն ընդունում է նաև Աճառյանը²⁷⁷:

Առանձին-առանձին անդրադառնալով բոլոր ստուգաբանություններին, եղած բոլոր տեսակետներին՝ Վ. Համբարձումյանը **աստուած** բառը համարում է հնդեվրոպական ծագման, որն ունի իր զուգահեռները ցեղակից լեզուներում, և տալիս է նոր մեկնություն. «... Կարծում ենք, որ հայ. **աստուած** բաղադրության մեջ բուն կամ

²⁷² Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 277:

²⁷³ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 86:

²⁷⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 19-20:

²⁷⁵ Նույնը, էջ 280:

²⁷⁶ Գ. Զահուկյան, «Հայերենի **աստ** արմատը», Բանբեր Երևանի համալսարանի, 2000, էջ 28-29:

²⁷⁷ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 81:

գերակա բաղադրիչը *տու- ձևն է (ի համապատասխանություն ցեղակից լեզուների ձևերի)»²⁷⁸: Հայագետը **տու**-ը համարում է հայերեն բնիկ բառ՝ հնդեվրոպական ծագում ունեցող գերագույն ուժի՝ *լույսի* (հետագայում *աստու*) անվանումը և հավելում. «Հայ. **աստու** բաղադրությունը, իբրև բառային միավոր, համեմատաբար ուշ շրջանում է դիտվել որպես առանձին բառ, սակայն ոչ ավելի ուշ, քան 5-րդ դ. արդեն որպես որոշակի հասկացության անվանում հանդիսանալը և ըստ այդմ առանձին բառի արժեքով, ավելի կոնկրետ նշանակությամբ գործածվելը»²⁷⁹: Ասենք, որ կա նաև Հովհ. Թումանյանի մեկնությունը *Աստված* բառի վերաբերյալ²⁸⁰

Կարծում ենք, հետաքրքիր դիտարկումներ է պարունակում Արծ. Սահակյանի «*Աստու*»՝ քրիստոնեական կրոնամշակութային համատեքստի նշան» հոդվածը, որում հեղինակը ներկայացնում է մի կողմից *դիք, բագ, դե, դի, տի* և մյուս կողմից *աստված* անունների ժամանակային ընդգրկումը, հիմնավորում *աստվածի* ավելի ուշ կրոնամշակութային միավոր լինելը, բայց մյուս կողմից *աստված* բառը համարում է փոխառություն պահլավերենից՝ «... Իրանի զրադաշտականները, իրենց կրոնական պատկերացումների համաձայն, մարմնավոր ոգուն անվանել են **astvat**»²⁸¹ (էջ 9):

Բնավ չհավակնելով *Աստված* բառի ստուգաբանության մեջ վերջնական խոսք ասելու՝ ցանկանում ենք հայտնել նաև մեր դիտարկումները հետևյալի մասին:

Այս մեկնություններում անընդհատ շեշտվում է Աստված՝ որպես **անուն**: Ինչ խոսք, իսրայելցիների համար *անունը* շատ կարևոր էր, և անվանը տրվում էր մեծ նշանակություն: Եվ մենք *Հին Կտակարանում* բազմիցս առնչվում ենք այն փաստին, որ անունները՝ տեղանուն (անգամ ամենաաննշան թվացող) թե անձնանուն, անպայման

²⁷⁸ Տե՛ս Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 32:

²⁷⁹ Համեմատի՛ր Հր. Աճառյանի ՀարմԲ-ում. «Կ. վրդ. Շահնազարեան, Երկրագունտ Մանչեստրի, 1864, թիւ 1, էջ 7, և թիւ 5, ստուգաբանում է **աս + տու**. **աս**՝ իբրև գնդ. **աս, էս, եգ, էգ, իգ** «Աստու» (ինչպէս **աս –եր=աթր** «Աստու» հրոյ», ասման «երկինք», **եգ-դան** «Արարիչ աստու» ևն), իսկ տու=սանս. devas, լտ. dues, յն. Զէա «շողջողուն էակ»:

²⁸⁰ *Աստված* բառի մեկնություն է փորձել տալ մեծ բանաստեղծ Հ. Թումանյանը, որ իր ուսումնասիրություններից մեկում գրում է. «Իսվարը ասորա-բաբելական գերագույն աստվածներից մինն էր: Եթե հիշեք, որ Ի - հաճախ Ա - է դառնում -իշտար-Աստարտա և այլն. (դրան և համաձայն) էնպես կարդաք - Իսվար-Ասվար, ապա կտեսնեք, որ դա մեր *աստված* բառն է, որ հենց էդ ձևով -ասվար- մինչև էսօր մնում է մեր ժողովրդի մեջ, մանավանդ Սասունի կողմերը ասում են *ասվարածին*, հենց էդպես էլ գրի է առնված էպոսի մեջ՝ *ասվարածին*»: Տե՛ս Հովհ. Թումանյան, «Ուսումնասիրություններ, օրագրեր և այլ նյութեր, Հայ և Հայկ (Հայկյան տոմար)», հ. 8, Եր., 1999, էջ 264:

²⁸¹ Մանրամասն տե՛ս Արծ. Սահակյան, «*Աստու*»՝ քրիստոնեական կրոնամշակութային համատեքստի նշան», Հայ աստվածաբան, գիտ. հոդվ. ժող. Բ, Եր., 2008, էջ 7-12:

մեկնաբանվում են: Իսրայելցիները շատ էին սիրում անուններ դնել ամենքին ու ամեն ինչի: Ուրեմն նախ և առաջ պետք է կարևորել հենց այս հանգամանքը՝ **էությունը** և այդ **էությունից բխող անունը**: Տվյալ պարագայում մենք հարցին մոտենում ենք նախ ոչ լեզվական տեսանկյունից: Իսկ բուն լեզվական առումով մենք տեսնում ենք, որ *Աստված*-ը այդ էության անունը չէ. **Աստված հենց այդ գերագույն էակն է, որ Սուրբ Գրքում ստանում է բազում անուններ, անվանումներ**, ընդ որում Հայր Աստվածը՝ իր անունները, Որդի Աստվածը՝ իր. որոշ անուններ տրամաբանորեն վերագրվում են երկուսին էլ: Աստված ոչ միայն ստանում է տարբեր անուններ, այլև ինքն է նախևառաջ բացում իր անունը (Ել. Գ 14): Սա՛ է ամենակարևորը, այսինքն՝ լեզվական առումով պետք է մեկնել **Աստված** բառը՝ հիմքում նկատի ունենալով աստվածային էությունը:

Ինչպես նկատեցինք, որոշ ստուգաբանություններում շեշտը դրվում է **հաստումն**, **հաստիչ**, **հաստել** բառերի վրա²⁸²: Եթե **հաստիչ**, ապա ինչպե՞ս կարող է աստվածաշնչյան բնագիրը դնել **հաստիչ Աստուած**. «Ո՛վ է հզոր, բաց ի քէն, Տէր և ով է **հաստիչ**, բաց յԱստուծոյ մերմէ» (Բ Թգ. ԻԲ 32): Ինչպես տեսնում ենք, **Աստված** մնում է գործածական, իսկ **հաստիչը** դառնում է ընդամենը մակդիր, և նույն ձևով՝ **արարիչ Աստված**, **Աստված ստեղծող** և այլն:

Արևելահայերեն բնագիրը այս նույն հատվածում **հաստիչի** փոխարեն դնում է **արարիչ**, իսկ արևմտահայերենը՝ «և ո՛վ է **Վէմ**, բացի մեր Աստուածանից»: Նշենք, որ գրաբար տեքստի տողատակում տրվում է եբրայական տարբերակը՝ **վեմ**: *Յոթանասնիցում* չենք տեսնում ո՛չ **հաստիչ**, ո՛չ **վեմ**: Իսկ ԻՋԵ-ն՝ «Кто Бог, кроме Господа, и кто **заступа**, кроме Бога нашего»: Ինչպես տեսնում ենք, կան տրված օրինակներում և՛ Աստվածը, և՛ **վեմն** ու **заступа**-ն: Այս դեպքում համամիտ ենք Վ. Համբարձումյանի դիտարկման ընդգծված մասին. «Գրավոր շրջանի հայերենում հաստել, հաստիչ, հաստուած բառերը, իբրև «ստեղծել», «ստեղծող» և «ստեղծված, կերտված» իմաստների կրողներ, շփոթվել են մեր բուն ուշադրության առարկա **աստուած** «արարիչ՝ լույսի աղբյուր հանդիսացող և լույս տվող՝ լուսատու», ինչպես նաև **հաս-**

²⁸² ՆԲՀԼ-ն տալիս է իբրև «Հաստիչ, կամ աստ՝ և յաստիս ածող, այսինքն՝ գոյացուցիչ, արարիչ, ստեղծիչ և կամ կրտսրաբար, Աստոյ, աստևոր, հաստատուն, անշարժ, անփոփոխ, հզոր, ևն» (հ. Ա, էջ 320), ինչպես նաև՝ Ղ. Ինճիճյան, Մ. Մսերյանց, Մ. Էմին, Ֆ. Մյուլլեր, Հ. Տաշյան:

աստել-հաստել ձևերի հետ»²⁸³: Այնպես որ, մեզ հավաստի չի թվում Աստծու՝ *հաստիչ* ստուգաբանությունը:

Կարծում ենք, որ **Աստված** բառի ստուգաբանությունը ինչ-որ չափով պետք է խարսխվի նաև *Սուրբ Գրքի* փաստերի վրա՝ բնավ չանտեսելով այն, որ թե՛ **Աստված**, թե՛ *Էլոհիմ* ու *Եհովա* և էլի որոշ անուններ ու անվանումներ ավելի հին ծագում ունեն²⁸⁴: Մենք, ինչպես նշեցինք վերևում, կարևորում ենք այն անունները, որոնցով Աստված ինքն իրեն է բացահայտում կամ ներկայացնում: Ահա այդ պատճառով էլ մեզ թվում է, որ այդ ստուգաբանությունը կատարելիս անպայման **Աստված** անունը պետք է զուգադրել *Աստվածաշնչի* որոշ, առաջին հերթին **Էլոհիմ**, **Եհովա**²⁸⁵ և **Սաբավո(վ)թ** անունների հետ: Նկատի ունենանք, որ **Էլոհիմը** Աստծու անունը չէ, այլ հենց **Աստված** նշանակող բառը եբրայական բնագրում²⁸⁶, մինչդեռ *Հին Կտակարանի* եբրայական բնագրում տրվում է աստծու անունը չորս տառով՝ **YHWH**, և մինչև այժմ հայտնի չէ, թե ինչպես պետք է ճիշտ արտասանվեր այդ բառը. «Մինչև այժմ պարզ չէ՝ ինչպես կարելի է ճիշտ արտաբերել այդ բառը: Մ.թ. VII դարում այն արտաբերվում էր **Адонай** – այստեղից էլ ոչ ճիշտ ընթերցումը՝ **Иегова**: Այժմ, ելնելով լեզվական վերլուծությունից, գիտականորեն ընդունված է **Яхве** ընթերցումը»²⁸⁷:

Օտար աղբյուրները նշում են, որ «... как слово языка, четырехбуквенное имя Божия-**Яхве (Иегова)**-не имеет лексического значения. Четыре буквы представляют собой наложение слов: **был, есть, будет**. Иногда это имя переводится на русский язык как **Предвечный, но чаще-Сущий**» (НЖБ, 12), «**Я есмь Сущий**» (ЭБ, 85)²⁸⁸: Իսկ սա նշանակում է, որ *Եհովա* և *Աստված* բառերը համարժեք չեն կարող լինել ստուգաբանական իմաստով. **Աստված**-ը համարժեքն է եբրայական բնագրի **Էլոհիմ**

²⁸³ Տե՛ս նշված հեղ. նույն աշխ., էջ 30:

²⁸⁴ Մենք համամիտ ենք **Արծ. Սահակյանի** այն դիտարկմանը, որ «աստված բառը ակտիվ կրոնալեզվական շրջանառության մեջ է մուծվել քրիստոնյաների կողմից», և ավելի հին չի կարող լինել, քան *դիք, բագ, դև, դի, փի* անունները: Տե՛ս նշվ. հեղինակի նույն հոդվածը, էջ 8:

²⁸⁵ Այս անվան մանրամասն քննությունը մենք ներկայացրել ենք *Աստծու անուններն ու անվանումները (Հայր Աստված)* գլխում, այնպես որ այստեղ դրան կանդրադառնանք ըստ հարկի:

²⁸⁶ Սեմական լեզուներում տրվում է **Էլ, Էլոհիմ, Ալլահ, Ալահա**, հնդեվրոպական որոշ լեզուներում՝ հունարեն, լատիներեն, հնդկերեն, արիական՝ **Թեոս, Թեոս, Ջևս, Թեվա**, պարսկերենում՝ **Խիվրա**, գերմաներենում՝ **Գոթ**, սլավոնական լեզուներում՝ **Բոգ** և այլն:

²⁸⁷ Տե՛ս *Женщины в легендах и мифах*, Ред. Кэролайн Ларрингтон, пер. с английского О. Перфильева, М., 1998, էջ 89-90:

²⁸⁸ *Энциклопедия Библейская* (ЭБ), (2-е издание), М., 2004, с. 694:

անվան, որն ունի նույն նշանակությունն արտահայտող բաղադրիչ՝ **էլ/ալ-ասսր = ուժ**: Անդրադառնանք **էլոհիմ** անվանը քիչ հանգամանորեն:

էլոհիմ/Ալլահ (ասոր.՝ ܐܠܗܐ **Ալահա**, ռուս.՝ Элоаг, Элогим): Հին Կտակարանի եբրայերեն տեքստում Աստված նշանակող անվանումն է **էլոհիմ (Ալլահ)**, որը որպես հոգնակի թիվ **էլ** կամ **էլոախ** բաղադրիչի (արաբ.՝ **Ալլահ**) հայերեն ոչ մի տեքստում գործածված չէ²⁸⁹: ՆԲԸ-ն **էլոհիմը** «... է յոգնական ի նշանակ. Պատրոսյ...»²⁹⁰: Եբրայերեն տեքստի հայերեն համապատասխան թարգմանության մեջ դրվում է **Աստված, Տէր Աստված**, ռուսերեն տեքստում՝ **Бог, Господь бог**²⁹¹:

էլ/ալ-ը եբրայերենում նշանակում է **ուժեղ, զորեղ** (ռուս.՝ **Всесильный**): Թեև այն արտահայտում է հոգնակիություն, բայց ստորոգյալը դրվում է միշտ եզակի: Կարևոր ենք մի փաստ. հայերենում առկա երկու **ասսր** արմատներից մեկը նշանակում է **ուժ, զորություն, կայունություն**²⁹²: Բայց այդ մասին քիչ հետո:

Հայերեն և ոչ մի թարգմանության մեջ **էլոհիմ**-ը գործածված չէ²⁹³. Այն համապատասխան տեղերում տրված է **Աստված**: Բայց **էլոհիմ**-ի **-է(ե)լ**-ը՝ որպես վերջնաբաղադրիչ արմատ, **Աստվածաշնչի** բազմաթիվ անուններում առկա է, ինչպես՝ **Աբիմեէլ** – **հայր Աստծու առաքյալ, Աբդեէլ** – **Աստծու ծառա, Ասիէլ** – **արար աստուած, Բարաբիէլ** –

²⁸⁹ Ա. Տերյանը իր *Եվրոպայի ժողովուրդների հնագույն գրավոր աղբյուրները իրենց նախահայրենիքի՝ Հայաստանի ու հայերի մասին* գրքում անուղղակիորեն կապում է **ար** արմատը **էլ**-ին՝ այստեղ տեսնելով **լ-ր** հնչյունափոխություն: Տե՛ս նշվ. աշխ., էջ 16:

²⁹⁰ Տե՛ս նշվ. աշխ., նույն տեղում:

²⁹¹ *Новая Женевская учебная Библия* (Синодальный перевод), 1998 (НЖБ):

²⁹² Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 277, Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 80:

²⁹³ Մարկոսի *Ավետարանում* ԺԵ 34 հատվածում Հիսուսը խաչի վրա արտասանում է հետևյալ խոսքերը. «**էլի, էլի, լա՛մա սաբաքթանի, որ թարգմանի, Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՛ր թողեր զիս**» (Ա-1): Ընդգծված անվան վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Գրաբար տեքստում տրված էլի անունը նույն ձևով տրվում է արևելահայերեն տեքստում, Զոհրապյան *Աստվածաշնչում՝ եղի/էղի*, արևմտահայերեն (Ա-2) տեքստում՝ **էլոի**, ռուսերեն տեքստում՝ **Элоу** (НЖБ): Վերջինս տողատակում նշում է, որ այս խոսքերը Հիսուսն արտասանում է արամեերեն, իսկ գրաբար *Աստվածաշնչի* տվյալ անվան համար տողատակում նշվում է, որ շատերն էլ տալիս են **էլոի**: Ինչպե՛ս ընկալել անվան այս տարբերակը՝ **էլոհիմ** անվան տարբերակ, թե՞ **եղիա** անունը: ԲՍԳ-ն չի նշում, որ սա **էլոհիմ** անվան տարբերակ է, այլ միայն **էլ** գլխաբառի տակ, տալով **էլ**-ը հատուկ անուններում՝ որպես անվան բաղադրիչ, նշում է նաև, որ «**էլոյի, ինչպէս էլի, կը նշանակէ Աստուած իմ**» (էջ 208): Կարծում ենք՝ հետաքրքիր է նաև ԵԵ-ի տեսակետը. «Это слова <...> у ев. Матфея вместо **Элоу** читается: **Или, Или** (Мф. XXVII, 46). По созвучию, вероятно, **Элоу, Или** и **Елия** (что значит **Илия**) некоторые из стоявших при кресте Господа, когда произнес Он означенные слова, в язвительную насмешку над Божественным Страдальцем, *говорили: Илию зовет Он*. Եվ քանի որ **եղիա** անունը բառացի նշանակում է *Աստված իմ*, կարծում ենք՝ ոչ պատահական ՉԱ-ում տրվում է **եղի** տարբերակը: ԲՍԳ-ն չի նշում, որ սա **էլոհիմ** անվան տարբերակ է, այլ միայն **էլ** գլխաբառի տակ, տալով **էլը** հատուկ անուններում որպես անվան բաղադրիչ, նշում է նաև, որ «**էլոյի, ինչպէս էլի, կը նշանակէ Աստուած իմ**» (էջ 208):

Աստուծոց օրհնված, **Բեսելիէլ** – Աստուծու հովանու փակ, **Եզեկիէլ** – Աստուծոյ զորեղացնում է, **Եզրիէլ** – Աստուծու օգնություն կամ Աստուծու գավիթ, **Ռագուէլ** – Աստուծու հովիվ, բարեկամ կամ Աստուծու բեկում, **Իթիէլ** – Աստուծոյ է, **Նաբդուէլ** – բան կամ մարգարեություն Աստուծու, **Բաթուէլ** – Աստուծու մեջ բնակվող, **Դանիէլ** – Աստուծոյ է իմ դատարարը, **Հովէլ** – Տերն Աստուծոյ է, **Չաբդիէլ** – Աստուծոյ պարգևող է, **Իսմայէլ** – Աստուծոյ կյսի, **Կամուէլ** – հարյավ Աստուծոյ է, **Յաբնէլ** – Աստուծու շինած²⁹⁴, **Մաղաղայէլ** – Աստուծուն գովող կամ լուսավորություն Աստուծու, **Մայիէլ** – Աստուծու պատմող կամ ջնջող Աստուծոյ²⁹⁵: Ուզում ենք կարևորել, որ այս անուններում **էլ-ը Աստուծոյ** է մեկնաբանվում և ոչ **Եհովա**²⁹⁶:

Փաստորեն **Էլոհիմ** և **Եհովա** բառերը որոշակիորեն տարբերվում են: **Էլոհիմը** եբրայական բնագրում **Աստուծոյ** նշանակող բառն է. այսինքն՝ մեր թարգմանիչները **Էլոհիմի** փոխարեն դրել են **Աստուծոյ**: Մինչդեռ **Եհովա**-ն Աստուծու անունն է, այն անունը, որով նա **Ելից** գրքում ներկայանում է Մովսեսին:

Վերևում արդեն հիշատակեցինք, որ հայերենում կա **աստ** արմատը, և այն ստուգաբանվում է **ուծ**, **զորություն**, և այն տրվում է թե՛ Հր. Աճառյանի, թե՛ Գ. Զահուկյանի ստուգաբանական բառարաններում²⁹⁷:

Ասել է թե՛ կասկած չունենք **էլ/ալ- աստ** արմատների նույն նշանակության արտահայտման: Եբրայերենում **-իմ**-ը հոգնակերտ վերջավորություն է, իսկ ինչպե՞ս ընկալել հայերեն **-ած**-ը՝ ածա՞նց, թե՞ արմատ: Կարևորում ենք այս առնչությամբ Ղևոնդ Ալիշանի մոտեցումը. «Մեր լեզուի անյարմար ըսածս այս է, որ բառին վերջաւորութիւնն **ած**, սովորաբար ոչ ներգործող այլ ներգործեալ ինչ նշանակէ. ինչպէս **ըսուած**, **շինուած**, **հաստուած** ևն, թէ և կան բառք՝ որ աւելի իսկական նշանակութիւն ունին քան ածանցեալն, կամ թէ՛ ներգործական, թէ՛ կրաւորական, ինչպէս **կազմած**, **ազդուած** և այլն»²⁹⁸:

Եթե անգամ համաժամանակյա կտրվածքով **-ած**-ը դիտարկենք որպես ածանց,

²⁹⁴ Այս դեպքում **Յաբնէլ**-ը տեղանուն է՝ Նեփթաղիմի ցեղին պատկանող քաղաք:

²⁹⁵ Սակայն դա ևս պարտադիր հանգամանք չէ. բազմաթիվ անուններում **-էլ**-ը բոլորովին էլ **աստուծոյ** չի ստուգաբանվում, այսպես՝ **Աբել** – սուգ, **Աքիփոփէլ** – հիմար եղբայր, **Եզել** – բաժանում, **Թորէլ** – հող:

²⁹⁶ **-իա**-ով և ոչ միայն այդպես վերջացող եբրայական շատ անուններ մեկնվում են **Եհովա** բաղադրիչով, ինչպես՝ **Եղիա** – **Եհովան իմ Աստուծոյ է**: Մանրամասն տե՛ս Հայր **աստուծոյ** ենթազրկում:

²⁹⁷ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. բառ, էջ 277, Գ. Զահուկյան, նշվ. բառ. էջ 80:

²⁹⁸ Տե՛ս Ղևոնդ Ալիշան, նշվ. աշխ., էջ 14-15:

ապա սկզբնապես այն անկասկած եղել է արմատ: Գ. Զահուկյանը իր «Հայերեն սիրու-
գարանական բառարանում» գրում է. «-**ած՝** գթած, երկիւղած, ողորմած, յօգնած, ուսած
(սրանք հետագայում դերբայացել են), ասած, գործած, կազմած, կոտորած, ծուլած:

Ծագում է **ած-ել** բայի արմատից (հմմտ. գթած «գութ ածող») հնարավոր է
համարվում նաև գոյականակազմ **-ած**-ի հնդեվրոպական ծագումը՝ հ.ե. **ǵʷ**՝ հայ. **ծ**
անցմամբ»²⁹⁹: Իսկ **ածել** գլխաբառի տակ արդեն Զահուկյանը տալիս է բայի
իմաստային դաշտը՝ որպես բնիկ հնդեվրոպական արմատ. «ag՝- «քշել, տանել,
շարժել» արմատից. հմմտ. հ.հնդկ. aʹjati «քշում է», հ. հուն. άγω «տանել», լատ. ago
«տանել, քշել»³⁰⁰ հղելով նաև Հր. Աճառյանին:

Վ. Համբարձումյանը ևս կարծում է, որ **-ած** բաղադրիչը հնդեվրոպական է, բայց
ծագում է հ.ե. **-*os** ձևույթից, որը «ինչպես նաև **-*s** ձևույթը... իբրև անվանական
վերջավորություններ, հանդես էին գալիս ձևակազմական և իմաստաբանական
որոշակի արժեքներով... Ըստ այսմ, հայ. ***տուած** ձևը ընդհանուր նշանակմամբ
հանգում է հ.-ե.՝ ***tʰ ieu-os/ *tʰ ieu-s** «աստված» ձևին»³⁰¹:

Մեր վերլուծությունը ցանկանում ենք ընդմիջել եբրայական մի շատ կարևոր
անվամբ ևս՝ **Սաբա(վ)ովթ**:

Աստված/Տեր զորությանց/Սաբա(վ)ովթ (հուն.՝ **Θεός, Σαβαώθ**, ասոր.՝ **Սվաութ**,
լատ.՝ **Sabaoth**, ռուս.՝ **Савоѳ** (Цвасѳ, Цава): *Սուրբ Գրքի* հայերեն տեքստերում
Աստված նշանակող ևս մի անվանում կա՝ **Սաբա(վ)ովթ**, որը եբրայական բառ է՝
հունական տառադարձությամբ: Ըստ *Աստվածաշնչի* (Ա Թգ. Ա 11, Ա Եզր. Թ 46, Ես. Ը
18, ԺԴ 22, ԺԹ 4, ԻԲ 12,15, ԻԵ 6, ԻԸ 29, ԼԷ 16, ԽԷ 4, ԽԸ 2, ԾԱ 15, ԾԴ 5)՝
Սաբա(վ)ովթ Աստծուն տրվող անվանում է եբրայերենում և ընկալվում է որպես հատուկ
անուն: Ըստ *Բառարան Սուրբ Գրքի*՝ «Սաբա(վ)ովթ... կը նշանակէ զօրք կամ զօրութիւն,
ուստի Եհովա-Սաբա(վ)ովթ կը թարգմանի Զօրաց Տէր, կամ, Տէր Զօրութեանց»: Ապա
նույն աղբյուրը հավելում է, որ *զորք* բառը տարբեր նշանակություններ ունի. կարող է
նշանակել *երկնային զորք*, այսինքն՝ *հրեշտակներ*, որոնք Աստծու պաշտոնյաներն են,

²⁹⁹ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. բառ., էջ 794:

³⁰⁰ Տե՛ս նշվ. բառ., էջ 29, ինչպես նաև՝ Հր. Աճառյան, ՀարմԲ, հ. Ա , էջ 101:

³⁰¹ Տե՛ս Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 27:

կարող է նշանակել *երկնքի աստղերն ու մոլորակները*³⁰², որոնք կատարում են Աստծու կամքը և էլի տարբեր իմաստներ³⁰³: ԵՇ-ն կարծես հաստատում է այս դրույթը. «Саваоф, т.е. войска (множественное число от “цава”, слово, которое употребляется для обозначения войск... Этим словом именуются, во первых, небесное воинство - планеты и ангелы...»³⁰⁴:

Սուրբ Գրքում հանդիպող անվան **Սարա(վ)ոյթ** ձևը տեսական գրականության մեջ ներկայանում է տարրնթերցումներով՝ **Սարաօթ, Սարավոյթ, Սարաոյթ, Սարադիոս, Սարազիոս**, որոնք զուգահեռվում են հաճախ հունական **Թեոս** և **Ջևս** անվանումների հետ:

Հայ թարգմանիչները *Սարա(վ)ոյթ*-ի դիմաց դրել են *Տէր Զորութեանց*: Ասում ենք՝ դրել են, որովհետև *Սարա(վ)ոյթ*-ը չի ստուգաբանվում, այլ թարգմանվում է իբրև *Տէր զորութեանց*՝ նկատի ունենալով *զոր/զորք* իմաստը և *-ոյթ* հոգնակիակերտ վերջավորությունը³⁰⁵:

Նիկողայոս Մառն այս անվանման և *աստված* բառերի մեջ ուղղակի կապ է տեսնում և իր՝ «Հայերի Սարադիոս աստվածը (Богъ Сабъазіосъ у Армянъ)» և «Թրակո-հայկական Sabad'ios-Aswat'-ը և սվանների որսի աստվածությունը» հոդվածներում անդրադառնում է այդ կապին³⁰⁶: Մառը գրում է, որ ըստ Տոմաշևսկու՝ փոյուզիական **Տաբազիոս**-ի յոթ ձևեր կան՝ **Տաբաթիոս, Տեբազիոս, Տեբադիոս, Տենադիոս, Տանազիոս, Տասազիոս, Տաիազիոս**³⁰⁷: Փոյուզիական այս աստվածը, որին առաջին անգամ հիշատակում է Արիստոփանը, կայսրերի ժամանակ Թրակիա էլ անցավ³⁰⁸: Կա նաև կարծիք, որ այս նույն աստվածը Եվրոպայից է մուծվել Փոքր Ասիա (Կրեչմեր): Եվ այդ երկու տեսակետները տալով՝ Մառը նկատում է, որ «... դրանք լիովին մի բան են հաստատում –

³⁰² Կարծում ենք չի կարող կապ չլինել *Ջորաց Տեր* և *Ջորաց քար* անվանումների միջև:

³⁰³ Տե՛ս *Բառարան Սուրբ Գրքոց*, Կոստանդնուպոլիս, 1881:

³⁰⁴ Տե՛ս **Эрик Нюстрем**, *Библейский словарь*, Энциклопедический словарь, перевод со шведского под ред. И. С. Свенсона, Санкт-Петербург, 1995, с. 379 (ԵՇ):

³⁰⁵ Տե՛ս **Մխիթար Սեբաստացու** հրատարակած *Աստվածաշունչը*, որն ունի ցանկ՝ *Երրայեցոց, Քաղ-դեացոց և Յունաց անուանց թարգմանութիւն*, որտեղ տրված **Սարաօթ**-ը թարգմանված է՝ **Զորութիւնք**: Ի Վէնէտիկ, 1733, էջ 1217:

³⁰⁶ Տե՛ս *Богъ Сабъазіосъ у Армянъ*, Լրաբեր, 1911, էջ 759-774, իսկ երկրորդը զեկուցումը, կարդացված պատմաբանասիրական բաժանմունքի նիստում 1912թ. սեպտեմբերի 12-ին, տպ. **Н. Я. Маррь**, *Трако-армянский Sabadios-aswat и сванское божество охоты.*, Известия Императорской Академии Наук, С.-Петербург, 1912:

³⁰⁷ Այս նույն տարբերակները տալիս է Հր. Աճառյանը, տե՛ս, նշվ. աշխ., էջ 280:

³⁰⁸ Մառը տալիս է, որ ըստ որոշ բանասերների էլ *Սարադիոսը* Եվրոպայից է անցել Փոքր Ասիա:

դրանք հաւասարապէս ապացուցանում են *Սարազիոս* աստուծու անուան լեզուաբանական մեկնութեան դժուարութիւնը հնդկարոպական տեսակէտով»³⁰⁹: Մառը փաստորեն այս անվան ծագումը համարում է չլուծված, և խոսում է ոչ թե բառի ծագման մասին, այլ որ այս անունը հայերն էլ ունեն, բայց շատ փոփոխված տարբերակով: Մյուս հողվածում արդեն Մառը սրան հավելում է սվաներեն *ափսադ, ափսաւր, ափսասւր* «որսի աստված»: Անվան առկայությունը հայերենում, ըստ Մառի, ապացուցում է այն, որ հայերը եղել են ցեղակից փոյուգիացիներին:

Ըստ Հր. Աճառյանի՝ «Մառը չի մեկնում բառը, այլ հարց է տալիս, թե արդեօք յաբեթական չէ՞, որ յետոյ Փոհիգիա և այնտեղից էլ Թրակիա է անցել. Հայերէնի մեջ **տ** ձայնը համարում է յետոյ աւելացած, հին արմատական ձևը **ասված**»³¹⁰: Ու նա այդ փորձում է տալ հնչյունական անցումներով: Այնուհետև Մառը իր հողվածում բերում է այս բառի բարբառային տարբեր ձևերը՝ **Սարած, Սարաց** և փորձում դրանք նմանեցնել հաբեթականին: Տարբեր բարբառներում առկա հնչյունական փոփոխված ձևերով Մառը ներկայացնում է **սարաց-ասված-ասպած-ասպոծ-աստրած-Աստրված** անցումը:

Անուղղակիորեն Ն. Մառի այս տեսակետին է անդրադառնում Գր. Ղափանցյանը իր «Хеттские боги у армян» աշխատության մեջ և քննելով **Ջևս (Ζεύς) – Սարադիոս (Σαβάζιος)** առնչությունը՝ հետաքրքիր դիտարկում է կատարում. «Бог же Сабадзиос (позже Свадзиос) был главным богом фригийцев и фракийцев и перешел к армянам **в форме astvac** “бог”, как доказывал еще Н. Марр»³¹¹: Փաստորեն Ղափանցյանը ընդունում է Մառի այն տեսակետը, որ **Աստրված – Սարավոլթ** բառերը նույնն են: Ինչպես նկատեցինք վերևում, Գ. Զահուկյանը այս տեսակետը չի ընդունում:

Ինչպիսի՞ն է **Տէր Սարաւոլթ** և **Տէր Զորութեանց**, անվանումների կիրառությունը *Աստրվածաշնչի* հայերեն թարգմանություններում:

Հայերեն գրաբար տեքստում (Ա-1) *Սարաւոլթ*-ը գործածված է ընդամենը մեկ տասնյակի հասնող չափով: Գրաբար բնագիրը *Եսայու* մարգարեության քսաներկու գլխում և ոչ միայն այդտեղ, այլև տարբեր գրքերում տալիս է **Սարա(վ)ոլթ** տարբերակը. «*Եւ կոչեաց Տէր Սարաւոլթ յաւուր յայնմիկ*» (12): Նույն գրքի 14-15 թվակարգության տակ՝ «*Աւէ*

³⁰⁹ Տե՛ս Ն. Մառ, *Սարազիոս Աստուծոյ ան Հայս*, Արարատ, սեպտեմբեր, 1911:

³¹⁰ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. բառ., էջ 281:

³¹¹ Проф. Гр. Капанцяян, *Хеттские боги у армян в связи с хеттским влиянием на армян и генезисом армянского пантеона вообще*, изд. Гос. Университета, Ер., 1940, էջ 32:

Տէր Զորութեանց» և հավելում է. «Այդպէս ասէ **Տէր Տէր Սարաւովթ»**: Տողատակում նշվում է, որ եբրայերենում **Սարաւովթը Տէր Զորութեանց** է: *Եսայու* գրքում կարդում ենք. «Սարաւօթ Տէառն է, որ բնակեալ է ի լերինն Սիօնի» (Ը 18): *Երեմիայի* մարգարեության ԼԲ 18-ում կարդում ենք. «Մեծ և հզօր Աստուած, քո անունը **Զորությունների Տէր է**»: Արևելահայերեն բնագիրը միշտ դնում է **Զորությունների Տեր**, իսկ ռուսերենը՝ *Савоф, Цваот, Адоиаи Цваот, Господь воинства*: Ի դեպ ասենք, որ ռուսերեն տեքստում այս անվան՝ *Господь Савоф* գործածությունը անցնում է երկու հարյուրից, իսկ *Господь Бог Савоф*³¹², ավելի պակաս՝ ընդամենը քսաներկու: Ինչո՞ւ ենք սա շեշտում: Որովհետև հայերեն տեքստում ևս գործում է նույն անվանակարգությունը: Բոլոր այն դեպքերում, որտեղ առկա է *Տէր Զորութեանց*, գրեթե բացակայում է *Աստված* բառը, իսկ եթե կան երկուսն էլ, կարծում ենք՝ ոչ թե բնագրային է, այլ հետո ավելացված: Այսինքն, եթե չկա, բացակայում է **Աստված** բառը, կնշանակի **Զորությունների Տերը (Սարաւովթ)** նույնանիշ է նրան և փոխարինում է **Աստված** բառին:

Ինչպիսի՞ն է հարաբերակցությունը *Յոթանասնիցի* կիրառությունների հետ համեմատելիս: Ա-1-ում առկա *Սարաւովթի* կիրառությունները ճշտորեն համընկնում են հունարենի ձևերին: Իսկ ահա այնտեղ, որտեղ մեր թարգմանիչները դրել են **Զորությունների Տեր**, հունարենում տրվում է հիմնականում **Սարավովթ**, բայց նաև՝ **Զորությունների Տեր**, ընդ որում երկու ձևով՝ *Կենդանի է Տէր Աստուած զորութեանց* - *Ζ ή κύριος ό θεός των δυνάμεων, Տեր զորությանց* - *κύριος ό των δυνάμεων*: Այսինքն՝ դարձյալ կարելի է երկու հետևություն անել. նախ, որ մեր թարգմանության բնօրինակը միայն *Յոթանասնից* բնագիրը չի եղել, և ապա այն, որ մեր թարգմանիչները, քաջ իմանալով *Սարավովթի* բառացի իմաստը, մեծ մասամբ հայերենում տվել են նրա բառացի թարգմանությունը՝ **Զորությունների Տեր**:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ *Հին Կտակարանի* գրքերից բոլորը չէ, որոնցում **Զորությունների Տերը** գործածված է: Այս անվանումը առաջին անգամ կարդում ենք *Հեսուի* գրքում (Զ 17), ավելի հաճախ չորս *Թագավորություններում* (Ա Թգ. Դ 4, Ժ 2, ԺԷ 45, Բ Թգ. Զ 2, 5, Գ ԺԷ 1, ԺԸ 15, Դ Թգ. Գ 14, ԺԹ 20), *Սաղմոսների* գրքում, բայց ամենից շատ գործածված է *Եսայու* և *Երեմիայի* մարգարեություններում: Եվ բոլոր

³¹² Տե՛ս *Симфония к синодальному изданию Библии*, Свет на Востоке, Корнталь, Институт перевода Библии, Стокгольм, 1995, էջ 255-257:

դեպքերում հունարեն տեքստը նախապատվությունը տվել է կա՛մ **κύριω Σαβαωθ – Տեր Սաբաովթ**, կա՛մ **θεού Σαβαωθ – Աստված Սաբաովթ**: Հունարեն տեքստում աչքի է զարնում նաև այն, որ *Աստված* և *Սաբաովթ* անունները միշտ տրվում են փոքրատառ: Մինչդեռ *Նոր Կտակարանում* երկու անգամ հանդիպող **Սաբաովթը** տրվում է արդեն մեծատառ գրությամբ՝ **κύριος Σαβαωθ** (Հռմ. Թ 29, Հակ. Ե 4)³¹³: Հայերեն տեքստերում նույն այս անվանման համար տրված են՝ Ա-1-ում երկու դեպքում էլ՝ **Տեանն զորութեանց**, Ա-2 տեքստում՝ **զորաց Տէր** և **Ջորութեանց Տէրոջը**, Ա-3-ում՝ **զորութեանց Տէրը**, **Ամենակալ Տիրոջ**: Եվ սա այն դեպքում, երբ *Նոր Կտակարանում* պետք է որ հակասություններ կամ տարընթերցումներ չլինեին: Բայց սա չէ կարևոր, այլ այն, որ *Ջորությունների Տերը* ավելի ուշ շրջանում է մտել սուրբգրային տեքստ: Բուն եբրայերենում տրվում է կա՛մ **էլոհիմ**, կա՛մ **Սաբաովթ**: Իսկ դրանց համարժեքը հայերենում եղել է **Աստվածը**:

Մեզ հետաքրքրեց նաև Ա-2 արևմտահայերեն տեքստի համեմատությունը ռուսերենի հետ, քանի որ թե՛ տեղանունների, թե՛ անձնանունների դեպքում արևմտահայերեն և ռուսերեն տեքստերը գրեթե նույն մոտեցումն են դրսևորել: **Սաբաովթ** անվան դեպքում նկատում ենք, որ **Господь Бог Саваоф** տարբերակը արևմտահայերեն համապատասխան հատվածներում տրվում է միշտ թարգմանված՝ Թագավորությունների գրքում՝ **զորաց Տէր Աստուած** (Բ Թգ. Ե 10), **Ջորաց Տէր Աստծոյն** (Բ Թգ. ԺԹ 10, 14), **Եսայու** մարգարեության մեջ՝ **զորաց Եհովայ Տէրոջէն** (ԻԲ 5, ԻԸ 22), **Երեմիայի** մարգարեության մեջ և՛ **զորաց Եհովայ Տէրը** (Բ 19), և՛ **Ջորաց Տէր Աստուածը** (Ե 14, ԼԵ 17, ԼԸ 7), **Ամոսի** գրքում՝ **Եհովայ՝ զորաց Տէրը** (Դ 13), **Ջորաց Տէր Աստուածը** (Ե 14, Թ 5): Մինչդեռ **Господь Саваоф**-ը **Ա Թագավ.** գրքում տրվում է **զորութեանց Տէրոջը** (Ա Թգ. Ա 3) կամ **Ով Տէր զորութեանց** (Ա Թգ. Ա 11, Դ 4): Անշուշտ տարբեր գրքերում այս տարբեր ձևերը վկայում են միայն այն, որ տարբեր թարգմանիչներ են աշխատել, և յուրաքանչյուրը տվել է իր նախընտրած տարբերակը:

Ուրեմն՝ Ա-1՝ գրաբար, Ա-2՝ արևմտահայերեն, Ա-3՝ արևելահայերեն տեքստերում տրված են միևնույն անվան հետևյալ տարբերակները՝ **Սաբաովթ, Սաբաովթ, Ջորությունների Տեր, Տէր զորութեանց, Ջորաց Տէր Աստուած, զորաց Եհովայ Տէր**:

³¹³ Տե՛ս *Новый завет на греческом и русском языках* (НЗ), Ред. А. А. Алексеев, Сост. Д. И. Захарова, Российское библейское общество, М., 2002:

Հզոր (հուն․՝ *δυνατός*, ասոր․՝ ܠܘܠܐ **ԽԱՅՂԹԱՆԱ**, ռուս․՝ **Сильный, мощный**): Բուն արմատը այստեղ ևս **զոր**-ն է, ուստի հենց այս է պատճառը **Հզորը** իբրև **Աստուծու** համարժեք դիտարկելու:

Այս անունը վերաբերում է հիմնականում Հայր Աստծուն, բայց նաև՝ Հիսուսին: Մարկոսի Ավետարանում (Ա 7) Հիսուսին այս ձևով է մեծարում Հովհաննես Մկրտիչը. «Իմ յեղեից կը գայ ինձնից աւելի **հզորը**, որի առաջ արժանի չեմ խոնարհուելու՝ նրա կոշիկների կապերն արձակելու համար»:

Որպես գոյական գործածվելիս գրաբար տեքստում (հատկապես սաղմոսներում) միշտ գրվում է մեծատառ. «Եւ որոտասցէ **Հզօրն** սքանչելի բարբառով իւրով» (Սղ. ԼԷ 5), «Եւ ասացեր, թէ զի՞ ծանեաւ **Հզօրն**³¹⁴...» (Հբ. ԻԲ 13), «Ահա զայս ամենայն գործէ **Հզօրն**» (Հբ. ԻԳ 29):

Ծննդոց գրքի ԽԹ 24-ում կարդում ենք. «... եւ լուծան ջիղք բազկաց նոցա ձեռամբ **Հզօրին** Յակորայ», որը արևելահայերեն բնագրում տրվում է «ու թուլացան ջլերը նրանց բազուկների Յակորի **հզոր Աստուծու** ձեռքով»: Ինչպես տեսնում ենք, **Հզոր**-ը գրաբար տեքստում հատուկ գոյական է, իսկ Ա-3-ում հանդես է եկել որպես ածական ու դարձել մակդիր-որոշիչ. «... թուլացան ջլերը նրանց բազուկների Յակորի **հզոր Աստուծու** ձեռքով»: Ասորերենում արդեն Հզորը՝ Աշինա, գոյական է՝ Աստված նշանակությամբ: Ռուսերեն տեքստը **հզորը** միայն այստեղ թարգմանել է **мощный**. «... от рук **мощного** Бога Иаковлева», իսկ մնացած կիրառություններում, որոնք բավականին շատ են՝ **Сильный**, **Յորթանասնիցում՝** *δυνατός*, որը թարգմանաբար նշանակում է *ուժեղ, կորովի, զորեղ*³¹⁵: Ղուկասի Ավետարանում տրված է. «Ձի արար ինձ մեծամեծս **Հզօրն**...» (Ա-1), ռուսերենում՝ «... что сотворил Мне великое **Сильный**...», հունարենում՝ *ὅτι ἐποίησέν μοι μέγала ὁ δυνατός* (Ա 49): Մարկոսի Ավետարանում Հովհաննես Մկրտիչը արտաբերում է Հզորի բաղդատական աստիճանը՝ **Ջօրազոյն**. «Գայ **զօրազոյնն** քան զիս...» (Ա-1, Ա 7), իսկ արևելահայերեն տարբերակում՝ «Իմ յեղեից կը գայ ինձնից **աւելի հզօրը**» (Ա-3), **НЖБ**-ն տալիս է մեծատառով՝ **Сильнейший**, հունարենում՝ մեծատառով՝ *Ερχεται, Ἐβελθαιում* **ԽԱՅՂԹԱՆԱ**:

³¹⁴ *Ἐβελθαιում* Աստված:

³¹⁵ *Տե՛ս Греческо-русский словарь Нового Завета, М., 1997:*

Ի՞նչ հետևություններ կարող ենք անել **Աստված** և **Էլիհիմ, Սաբաովթ** անունների համեմատական քննությունից:

Որպես ընդհանրություններ կարող ենք նշել նախ այն, որ այս երեք անուններն էլ կազմությամբ բաղադրյալ են՝ **Էլ/Ալ -(nh/o)- իմ, Սաբա -(վ)- ովթ** և **Աստ-(ու)-ած**:

Կարծում ենք, որ **աստուած** բառը պետք է բաղադրել **աստ-ու-ած**, որտեղ **աստ** նշանակում է **զոր, ուժ** (Աճառյան, Ջահուկյան), իսկ **ած**-ը **ածել** բայի արմատն է (համաժամանակյա դիտարկմամբ՝ ածանց), որ նշանակում է **իր հետևից փանել**, այսինքն՝ **զորությամբ փանող**, կամ, թերևս՝ **զորություններ ունեցող** (հմմտ.՝ **ողորմած**՝ **ողորմող, կարեկցող, գթած՝ գութ ունեցող**)³¹⁶: Եվ հենց **Տեր Ջորությանցն** էլ նշանակում է **զորություններ ունեցող**:

Սուրբ Գրքի հայերեն տեքստերը **Սաբա(վ)ովթի** դիմաց դրել են թարգմանական տարբերակ՝ **Տեր Ջորությանց, Ջորությունների Տեր**, որը ուղիղ համեմատական է բաղադրիչների իմաստով **Էլիհիմ-Աստված** զուգահեռին՝ **Էլ/ալ-աստ = զոր, ուժ** և **-ովթ/-իմ = եր** հոգնակերտ վերջավորություն:

Աստված բառի մեջ հետագայում **-ած** արմատը **փանել** իմաստով մթազնել է, և այն այսօր արդեն պարզապես ածանց է ընկալվում, ինչպես՝ **Գթ-ած, Ողորմ-ած** բառերը, որոնք ևս ակնարկում են Աստծուն³¹⁷:

Այնպես որ մենք կարծում ենք՝ **աստուած** բառը պետք է բաղադրել **աստ-ու-ած**, որտեղ **աստ** նշանակում է **ուժ, զորություն**, իսկ **ած**-ը **ածել** բայի արմատն է, որ նշանակում է **իր հետևից փանել**, այսինքն՝ **զորությամբ փանող**: Եվ եթե հայերեն բնագրերում տրվում է **Ջորությունների Տեր, Տեր Ջորութեանց** տարբերակը, ապա գրեթե նրա կողքին չի հիշատակվում **Աստվածը**, որն էլ հստակորեն փաստում է այն, որ **Աստվածը** և **Ջորությունների Տերը** նույն գերագույն ուժի անվանումներն են հայերենում:

³¹⁶ Տե՛ս Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան*, Եր., 2000, հ. Ա, էջ 324, հ.Բ, էջ 334:

³¹⁷ Տե՛ս նշվ. հեղ., էջ 179:

5.2. Աստծուն և Աստվածամորը տրված անուններն ու անվանումները Սուրբ Գրքում

ՀԱՅՐ ԱՍՏՎԱԾ

Քրիստոնեության մուտքով հեթանոսական աստվածները վերանվանվեցին **կուռք, դիք** կամ **չաստված**³¹⁸, իսկ նոր հավատը հայ եկեղեցու դավանաբանության մեջ մտցրեց **Աստված, Սուրբ Երրորդություն, Սուրբ Հոգի** անուններն ու անվանումները, որոնց քննությունը կատարվել ու կատարվում է տարբեր տեսանկյուններից:

Հրեական և քրիստոնեական կրոններում արգելվում է Աստծու անունը գործածել հենց այնպես, որը հիմնավորվում է սուրբգրային պատվիրաններով. «Քո Տէր Աստծու անունը զուր տեղը չպիտի արտասանես, որովհետեւ Տէրը արդար չի համարում նրան, ով իր անունը զուր տեղն է արտասանում» (Ել. 20:7):

Սակայն հենց Հին Կտակարանում Աստված հայտնվում է Մովսեսին և հայտնում. «**Ես եմ Աստուած, որ էն**» (Ել. 3:14):

Սուրբ Գրքում **Աստված** ներկայանում է բազմաթիվ անուններով, ինչպես նաև անվանումներով³¹⁹: Աստված **Արարիչն** է. «Որ արար զերկիրդ եւ ստեղծ զդա...» (Եր. ԼԳ 3): Նա **Տերն** է ամենայնի. «**Ես Տէր Աստուած, այս է անուն իմ**» (Ես. ԽԲ 8): Սա բառացի պատճենում է հունարեն բնագիրը՝ «ἐγὼ κύριος ὁ θεός τοῦτό ἐστιν μοῦ τὸ ὄνομα»: Նա **Թագավորն** է. «Թագաւոր յաղթող եմ ես, ասէ Տէր ամենակալ» (Մղ. Ա 14): Նա է **Հայրը, Դատավորն** ու **Իշխանը**. «Տէր Հայր մեր, Տէր Դատաւոր մեր, Տէր Իշխան մեր» (Ես. ՀԳ 22): Հետաքրքիր փաստ է արձանագրում Ահ. Կայայանը. «19-րդ դարում որոշ մեկնաբաններ կասկածի տակ են առնում **Հնգամարտանի, ուրեմն նաև՝ Ծննդոցի մովսիսական ծագումը: Մարնանշելով նրանում Աստծու տարբեր անունների գործածության իրողությունը՝ եզրակացնում են, որ շարադրողն օգտվել է զանազան աղբյուրներից**»³²⁰: Այսինքն՝ կարծվում է, որ տարբեր հեղինակներ միայն կարող էին Աստծուն տարբեր անուններով ներկայացնել:

Քննենք Աստծուն տրված անունների ու անվանումների մի մասը:

³¹⁸ Կուռքերի և նրանց անունների քննությունը տրված է մեր ուսումնասիրության հաջորդ ենթագլխում:

³¹⁹ Անվանում տերմինի տակ մենք ներառում ենք մականուններն ու ոճանունները:

³²⁰ Տե՛ս Ահ. Կայայան, Հին Կտակարանի ներածություն, Եր., 2000, էջ 70:

Արարիչ / Ստեղծիչ / Ստեղծող / Բրույս (հուն.՝ **Κτιστής, Ποιητής, αμαρ.**՝ **Создатель, Творец, Образователь**):

Աստծու անվանումների մեջ առաջնայինն է *Արարիչը*, որն անպայմանորեն պետք է կիրառվեր *Հնգամարյանում*³²¹ բնորոշելու Աստծու արարչագործման էությունը, արարելու կարողությունը և այդ կարողության գործադրումը, որի արդյունքը տիեզերքն է: *Ծննդոց* գրքի խորհուրդը Աստծու արարչագործությունն է. «*Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր...*» (Ծն. Ա 1): Եվ իզուր չէ, որ որոշ ձեռագիր մատյաններ *Ծնունդք* վերնագրի փոխարեն դրել են Գիրք *Արարածոց*³²¹: Եվ հետո միայն Աստված կդառնա *Արքա, Թագավոր, Դափավոր* և այլն. *Ծննդոցում* Նա *Արարիչ* է, քանի որ Աստծու կատարած առաջին գործողությունն *արարելն* էր, որի հոմանիշ *ստեղծելը* կիրառված է արևմտահայերենում՝ «*Սկզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց*» (Ա-2) և արևելահայերենում (Ա-3)՝ «*Ի սկզբանէ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը...*»: Ոչ միայն այսպես, այլև գրաբար բնագրում (Ա-1) գործածված է *Ստեղծիչ*. «*... եւ դու Ստեղծիչ մեր, եւ գործք ձեռաց քոց ամենեքին մեր*» (Ես. ԿԴ 8): Մխիթար Սեբաստացու հրատարակած *Աստվածաշունչը*³²² (ՄՍԱ) ևս տալիս է *Ստեղծիչ* տարբերակը: Ա-3 արևելահայերեն տեքստը դարձյալ տալիս է *ստեղծիչ*, միայն փոքրատառ գրությամբ: Իսկ ահա Ա-2 տեքստը բոլորից տարբերվում է. տրված հատվածում կարդում ենք. «*... մենք կաւ ենք, ու դուն մեր Բրույսն ես, և ամէնքս քու ձեռացդ գործքն*»: Պարզ է, որ այստեղ *բրույս* բառը փոխաբերական իմաստով է կիրառված. հետաքրքիրն այն է, որ հայերեն մյուս տեքստերը *բրույս* բառը չեն գործածում, այլ՝ *ստեղծիչ*: *Բրույս* բառի այս իմաստային կիրառությանը չի անդրադառնում անգամ ՆՀԲ-ն: Միակ բառարանը, որ բացի ուղիղ իմաստից (*շինիչ խեցեղէն անօթոց*) ուշադրություն է դարձրել այս իմաստին, ԲՍԳ-ն է, որտեղ տրվում է հետևյալ մեկնաբանությունը. «Բրտին իշխանութիւնը կաւին վրայ օրինակ կառնով *Սուրբ Գրոց* մէջ առ ի ցուցանել զիշխանութիւնն Աստուծոյ, որ ըրաւ մեզ կաւէ, ուստի և

³²¹ Տե՛ս **Հ. Յոհաննես Զօհրապեան**, *Աստուածաշունչ մարտան Հին եվ Նոր Կտակարաններու*, Վենետիկ, 1805:

³²² Քանի որ Մխիթար Սեբաստացու հրատարակած *Աստվածաշունչը* (1733թ.) Ոսկան Երևանցու հրատարակած տպագիր առաջին *Աստվածաշնչի* (1666թ.) տարբերակն է՝ որոշ խմբագրական ու սրբագրական շտկումներով, ուստի հարկ եղած դեպքերում անդրադարձել ենք նաև դրան՝ այն տալով **ՄՍԱ** համառոտագրությամբ:

ինչպես որ կուգէ կը շինէ և կը վարէ զմեզ... «Մի՞թէ ստեղծուածը իր Ստեղծողին կրնայ ըսել թէ՛ Զիս ինչո՞ւ աստանկ շինեցիր: Բրուտը իշխանութիւն չունի՞ կալին վրայ՝ նույն շաղուածքէն աման շինելու, մէկը պատուոյ և միւսը անարգանաց համար» (Հոովմ. Թ 20,21)³²³: **НЖБ-ն**³²⁴ այս դեպքում տվել է **образователь** տարբերակը, որը թարգմանվում է դարձյալ **ստեղծիչ**: Հետաքրքիրն այն է, որ **բրուտ**-ը ուղղակիորեն կապվում է **Պեշիթայի** **فادوليا** **Փավոլյա** տարբերակին, որ բառացի նշանակում է **բրուտ**, **հունցիչ**, բայց ոչ **ստեղծիչ**:

Աստված և՛ արարեց, և՛ անվանեց. «... Եւ կոչեաց Աստուած զլոյսն **Տիւ**, եւ զխաւարն կոչեաց **Գիշեր**..., Եւ կոչեաց Աստուած զհաստատութիւնն **Երկին**... Եւ կոչեաց Աստուած զգամաքն **Երկիր**, եւ զժողովս ջուրցն կոչեաց **Ծովս**...» (Ծն. Ա-5):

Երբայերեն **բարա**-ն նշանակում է **արարել** ասոր.՝ **ܒܪܐ-արարել**, **Բառոյա**-Արարիչ, հունարեն՝ **ἐποίησεν**, ռուսերեն տեքստում համապատասխանաբար թարգմանական համարժեքը դրվել է **творить** և ոչ թե **сделать**, **создать** կամ **сотворить**, որոնք բոլորն էլ ինչ-որ չափով հոմանիշ են իրար, ոճական առումով՝ համանիշներ են և ոչ նույնանիշներ, և այդ բոլոր ձևերն էլ **Աստվածաշնչի** տարբեր գրքերում կիրառված են:

Արար-ը գրաբարյան **առնել** անկանոն բայի անցյալ կատարյալի հիմքն է՝ **ար** արմատի կրկնությամբ՝ **արարի**, **արարեր**, **արար**, **արարաք**, **արարէք(իք)**, **արարին**, որի անցյալ դերբայն է՝ **արարեալ**, և ենթակայականը՝ **արարող**: Ըստ Ա. Աբրահամյանի՝ ենթակայականի հնագույն ձևն է **արարիչ**³²⁵: Սա գրաբարի համար արդեն գործածական բառակազմական կաղապար է՝ **արար+իչ** (հմմտ.՝ **հաստիչ**, **յորդորիչ**, **յորինիչ**, **ստեղծիչ**), և որն աստվածաշնչային բոլոր կիրառություններում գոյական է³²⁶: **Արարիչ** ձևից հենց գրաբարյան շրջանում արդեն առկա են **արարչագործել** (հոմանիշ ձևերն են՝ **ստեղծանել**, **առնել**, **հաստել**, **յորինել**, **ճարտարապետել**), **արարչագործություն** բառերը:

Հր. Աճառյանը **ար** արմատին և **արարիչ** կազմությանը անդրադարձել է **առնել** գլխաբառի տակ՝ **առնել**-ի հնախոսական արմատը համարելով **ար**-ը և բայի իմաստը

³²³ *Բառարան Սուրբ Գրոց*, Կոստանդնուպոլիս, 1881թ, էջ 102:

³²⁴ *Новая Женевская учебная Библия* (Синодальный перевод), 1998 (НЖБ):

³²⁵ Տե՛ս Ա. Աբրահամյան, *Գրաբարի ձեռնարկ*, Եր., 1976, էջ 188:

³²⁶ Գրաբարում **-իչ**-ով ձևերը արտահայտում էին ենթակայական դերբայի իմաստ:

համեմատելով հունարենի իմաստներին: Գ. Զահուկյանի *Հայերեն սրուգաբանական բառարանում* (ՀՄԲ) **ար-**ը տրվում է իբրև առանձին գլխաբառ, և դարձյալ հղվում է **առնել** և **յարել** բառերին³²⁷:

Ար արմատի մասին որոշակիորեն տարբեր մեկնաբանություններ են տրվում³²⁸:

Սուրբ Գրքում **Արարիչ** բառը գործածված է քսանչորս անգամ՝ *Բ Օրինաց, Սաղմոսների, Ժողովողի, Եսայու, Ովսեի, Բարուքի* և այլ գրքերում. մեծ մասամբ գործածված է *Հին Կտակարանում*, և կիրառություններից միայն հինգը՝ *Նոր Կտակարանում*: Եվ դա ունի իր տրամաբանությունը. բոլոր կիրառությունները վերաբերում են Հայր Աստծուն, անգամ միաժամանակ հանդես գալով՝ և՛ *Աստված* և՛ *Արարիչ*. բառերը հստակ դառնում են հոմանիշներ, ավելի ճիշտ կլինի ասել նույնանիշներ, ինչպես՝ «... *լքեց Տէր Աստծուն՝ իր Արարչին...*» (Բ Օրին ԼԲ 15), «*Դու մոռացար Աստծուն՝ քո Արարչին...*» (Ես. ԾԱ 13): Ավելին. հոմանիշների ցանկը գնալով ընդարձակվում է. «*Այո՛, դու իմ հոր Աստուածն ես, Իսրայէլի ժառանգութեան Աստուածը, երկնքի ու երկրի Տէրը, ջրերի Արարիչը, դու ես քո բոլոր արարածների Թագավորը*» (ՀԴ. Թ 17): Արդյոք օտար տեքստերը և՛ս համարժեք են հայերենի տարբերակներին: Ռուսերեն տեքստերը հայերեն *Արարչի* դիմաց նույն օրինակներում մե՛կ դնում են **Творец** – *արարիչ, ստեղծող*, մե՛կ՝ **Создатель** – *ստեղծող, արարիչ-աստված* (НЖБ)³²⁹, որոնք հոմանիշներ են: Իսկ *Հայտնության* գրքում արդեն կիրառված է՝ **Сотворившему небо...** Ասորական **Պեշիթան** ավելի հաճախ գործածում է **արարել** բայը – **آرأ** **ըվադ**, բայց տալիս է նաև *Արարչին* համարժեք **آرأ** **Ավդդա** անունը:

³²⁷ Տե՛ս Գ. Զահուկյան, *Հայերեն սրուգաբանական բառարան*, Եր., 2010, էջ 83:

³²⁸ Կա կարծիք, ըստ որի՝ Արարատ (Արարատի երկիր) անունը առնչվում է նաև մարդու արարման առեղծվածի հետ, և որ պատահական չեն մեր լեզվում **Արարիչ, արարել, արարած, արորդի, Արարալ** բառերը: Հայկական լեռնաշխարհի և Միջագետքի, ինչպես նաև հունական, հնդկական, իրանական և այլ դիցարանների հնագույն շատ աստվածների **Ար-**ով սկսվող անուններում՝ **Արուրու** (նախաշումերական), **Արամազդ** (բոլոր աստվածների հայրը հայոց դիցարանում), **Արդի, Արսիմեյա, Արածա** (Արարատ-Ուրարտուի դիցարան), **Արմատի** (իրանական), **Արտեմիս, Արես** (հունական), **Արունա, Արյաման** (վեդայական), **Ռա-Ար** (արևի եգիպտական աստված), **Արա Գեղեցիկ** (հայկական)՝ ականհայտորեն առկա է **Ար** արմատը: Տե՛ս Ա. Տերյան, **Ար աստծո պաշտամունքը Հայաստանում**, Եր., 1995, *Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան*, Եր., 2011, *Եվրոպայի ժողովուրդների հնագույն գրավոր աղբյուրները իրենց նախահայրենիքի՝ Հայաստանի ու հայերի մասին*, Եր., 2014: Ավելին, նույն հեղինակը հայերենի **արքա**, եգիպտական **փարավոն**, հոմեական **կեսար**, ռուսական **ցար**, եվրոպական **կարոլ** բառերում հստակ առանձնացնում է **ար** արմատը, որը, կարծում ենք, այնքան էլ համոզիչ չէ: Տե՛ս նշ. հեղ., նույն աշխ., էջ 15, 17:

³²⁹ Տե՛ս Ար. Ղարիբյան, *Ռուս-հայերեն բառարան*, Եր, 1982, էջ 1143, 1217:

Հայ միջնադարյան բանաստեղծության մեջ Արարիչ է նախ Հայր աստվածը, ապա և Հիսուսը: Հիսուսին *Արարիչ* անվանելու գոնե մեկ դեպք մենք *Նոր Կրակարանում* չունենք, որը հարցականի տակ է դնում միջնադարյան բանաստեղծական հատվածներում իմաստային այս կիրառությունները, ասել է թե՛ վկայում է միջնադարյան դավանաբանական մտքում փոփոխությունների մասին: Այսպես՝ Կոմիտաս Աղցեցու շարականում խոսքը Հռիփսիմյան կույսերի մասին է, որտեղ, ինչպես տեսնում ենք, Արարիչը Հիսուս Քրիստոսն է. «...կուսութեամբ ընդ մահու պատերազմեալք յաղթեցին՝ խաչակից լինելով կուսածին Արարչին» (ԳՀԲ, 55): Կամ՝ Գրիգոր Նարեկացին գրում է. «Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Որդի աստուծոյ կենդանւոյ, Արարիչ երկնի եւ երկրի», «Շաւիղն հեղազոտելի՛ արեամբ արարչին նկարեալ ի փառս լուսոյ» (ԳՆՄՈ, 337, ՏԳ, 81, 214)³³⁰: Կարծում ենք՝ *Արարչի* այս կիրառությունները փոխաբերական իմաստ են արտահայտում: Որ *արքան*, *թագավորը*, *դատավորը*, *կենարարը* կարող են բնութագրել թե՛ Հորը և թե՛ Որդուն, հաստատվում են աստվածաշնչային տեքստերով ու հիմնավոր են, բայց *արարիչն* ու *ստեղծիչը* միայն Հայր Աստծուն են բնութագրում: Թերևս մեկ այլ տեսանկյունից մոտենալով՝ այն է՝ Սուրբ Երրորդությունը՝ իբրև մեկ աստված, կարելի է այդպես ևս ընկալել: Այդ նույն ձևով *Տերը* և՛ Հայրն է, և՛ Որդին:

Տեր / Տեր Տեր / Ադոնա / Ադովնա / Ադոնայի / Ադովնայի (հուն.՝ Ο κύριος κύριος, ասոր.՝ ܐܘܘܪܝܘܐ **Մառյա / Մառ Մառ**, ռուս.՝ Господь):

Հին ժամանակներում արգելվում էր Աստծուն անվամբ դիմել, անունը բառացի արտասանել: Եվ բոլոր այն դեպքերում, երբ կարդում էին սուրբգրային տեքստը, և որտեղ հանդիպում էր Աստծու անունը, գործածում էին **Տեր** կամ **Ադոնայի**. «...եւ մի՛ պղծիցէք զանուն Տեառն Աստուծոյ ձերոյ» (Ղևտ.): Հետաքրքիրն այն է, որ թե՛ Հայր Աստվածը և թե՛ Հիսուսը իրենց **Տեր** են անվանում. «Եւ եթէ մէկը ձեզ ասի. «Այդ աւանակը ինչո՞ւ էք արձակում», կասէք. «Տիրոջը պէտք է» (Մրկ. ԺԱ 3):

Հայերեն *Աստվածաշունչ* բոլոր գրքերում (Ա-1, Ա-2, Ա-3, ՄՍԱ, ԶԱ) **Ադոնայի**-ն թարգմանված է կա՛մ **Տեր**, կա՛մ **Տեր Տեր** ձևերով, և միայն **Եզեկիելի** գիրքն է գործածում **Ադոնայ**, **Ադոնայի** տարբերակը (այդպես՝ թե՛ ՄՍԱ-ում, թե՛ ԶԱ-ում՝ և՛

³³⁰ Օրինակները վերցված են Փ. Մեյթիխանյանի *Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան, ըստ V-XX դարի հայ բանաստեղծության*»-ից, Եր., 2001:

Աղոնայի, և՛ Աղովնայի), ինչպես՝ «Այսպէս ասէ Աղոնայի **Տէր** ...» (Եզկ. Ե 5, 7, 8, 11, 2 3, 11, Ը 1...): Եվ այդպես գրեթէ հարյուր անգամ, և դա այն դեպքում, երբ շատ անգամ, (բայց ավելի պակաս **Աղովնայի Տէր**-ից) կիրառված է նաև զուտ **Տէր Տէր** ձևը: Եթէ *Աստվածաշնչի* ուրիշ որևէ գրքում *Աղովնայի* տարբերակը չի գործածված, ապա ենթադրելի է, որ սա մի թարգմանչի հավելումն է, որն այլ գրքերի հետ կա՛մ չի առնչվել, կա՛մ առնչվելիս գերակա, այսպես ասած, խմբագրի դեր չի կատարել:

Աստվածաշնչի գրաբար տեքստի **Եզեկիելի** գրքում բազմաթիվ անգամներ տրվում է *Աղոնայի Տէր*, իսկ ընդամենը երկու դեպքում՝ *Աղոնայի Տէր Տէր*. «Այսպէս ասէ **Աղոնայի Տէր Տէր**» (Եզկ. Գ 27, հուն.՝ **κύριος**), «...*Կենդանի եմ ես ասէ Աղոնայի Տէր Տէր*» (Եզկ. ԼԴ 8, հուն.՝ **κύριος κύριος**). սա կարծում ենք թարգմանչական կամ գրչագրական սխալի հետևանք է, քանի որ գրաբար տեքստի տողատակում նշվում է, որ եբրայերեն բնագրում երկրորդ *Տէր*-ը պակասում է, նույնը նաև ռուսերեն (**Господь Бог**) և հունարեն (**κύριος κύριος** կամ միայն **κύριος**) տեքստերում բացակայում է երկրորդ *Տէր*-ը: Արևելահայերեն տարբերակը այս գործածությունների դիմաց դնում է *Ամենակալ Տէր Աստված*, սակայն կարծում ենք՝ դա ևս ճիշտ չէ, քանի որ **Ամենակալ-ը Սաղայ** անվան հայերեն տարբերակն է և ոչ **Աղոնայի**:

Հետաքրքիր վիճակագրություն է արձանագրում *Աստվածաշնչի Համաբարբառը*. **Տէր** բառը գրաբար տեքստում գործածվել է 8907 անգամ³³¹, և այդ հաշվարկից դուրս են *տեր* բառի՝ ոչ *Աստված* նշանակող կիրառությունները:

Աղոնա կամ **Աղոնայի**-ն եբրայերեն բառ է, որի նշանակությունն է՝ **Տէր, իշխող, Տէր իմ (Տերը Տերն է)**: Ըստ Հր. Աճառյանի ՀարմԲ-ի՝ **Աղոնա**-ն, եբրայական բառ լինելով, չկա մյուս սեմական լեզուներում, բացի փյունիկերենից: Անունը ստուգաբանվում է *Տէր իմ*³³²: Ըստ ԲՅԱ-ի՝ **Աղոնայի**-ն հոգնակի ձևն է Աստծու անվանումներից մեկի և ստուգաբանվում է որպես **տեսարք իմ** (էջ 8)³³³:

Հետաքրքիր է նաև այն, որ փոխառյալ արմատը՝ **Աղոն**, առկա է սուրբգրային տեքստում նաև որպես անվան բաղադրիչ՝ *Աղոն+իա(ս)*. մեկնաբանվում է որպես՝ *Եհովան իմ Տերն է* կամ *Տերը իմ Տերն է*: Այս անվամբ Հին Կտակարանում գործում են

³³¹ Տե՛ս Համաբարբառ գրաբար *Աստվածաշնչի*, Հայաստանի ատվածաշնչային ընկերություն, Սուրբ Էջմիածին, 2012:

³³² Տե՛ս Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Եր., 1970 , էջ 81:

³³³ Տե՛ս Բաղդիրք *հայկազեան լեզուի*, Կ. երկրորդ, Ի Վենետիկ, 1769:

երեք անձ՝ Դավիթ թագավորի չորրորդ որդին՝ Ադոնիան (Բ Թգ. Գ 4, Գ Թգ. Ա 5, 7, 8...), և ղևտացի ևս երկու անձինք (Ա Մն. Գ 2, Բ Մն. ԺԷ 8...):

Տէր-ը, *Աստուած, Ամենակալ, Արքա, Դատարար, Թագավոր, Իշխան, Հայր, Փրկիչ, Սարաւովթ, Զօրութեանց* բառերի վրա դրված, գործածվել է *Աստվածաշնչի* բոլոր գրքերում՝ թե՛ *Հին* և թե՛ *Նոր կտակարաններում*, ինչպես՝ «*Զի ես եմ Տէր...*» (Ղևտ.), «*Զի ես եմ Տէր Աստուած ձեր*», «**Տէր հայր մեր, Տէր դատարար մեր, Տէր իշխան մեր**» (Ես. ԼԳ), «**Տէր թագաւոր մեր, Տէր փրկիչ մեր՝ եւ նա փրկեսցէ զմեզ**» (Ես. ԼԳ), «*Այսպէս ասէ Տէր զօրութեանց՝ Աստուած Իսրայէլի*» (Եր. ԻԵ), «*Այսպէս ասէ Տէր ամենակալ՝ Աստուած Իսրայէլի*» (Եր. ԻԵ):

Տէր Տէր-ի կիրառություններ. «*Եւ ասէ Աբրամ. Տէր, Տէր...*» (Ծն. ԺԵ 8), «**Տէր Տէր**, դու սկսար ցուցանել ծառայի քում» (Բ Օր. Գ 24), «*...եւ ասեմ. Տէր Տէր, թագաւոր աստուածոց*» (Բ Օր. Թ), «*Եւ ասացես ցնոսա. Այսպէս ասէ Տէր Տէր...*» (Եզկ. Բ): Եվ զարմանալին այն է, որ անունը չտալու պայմանը այնքան սկզբունքային է, որ **Տէր**-ը կրկնում են, բայց Աստծու անունը չեն տալիս, ինչպես. «*Լո՛ւր, Իսրայէլ, Տէր Աստուած մեր՝ Տէր մի է*» (Բ Օր. Զ), «*Ա՛, ա՛, Տէր Տէր, զի տեսի զհրեշտակն Տեանն*» (Դտ. Զ, Թ, Բ Թգ Է, Գ Թգ. Ը, Ա Մն., Սղմ.):

Ամենակալ/Ամենակարող / Սադայ / Շադայ (հուն.՝ Σαδδαι, ասոր.՝ ܫܕܝܐ **Էլ Շադայ**):

Ըստ *Աստվածաշնչի* (Եզկ. Ա 24, Ժ 6)՝ եբրայերենում Աստծուն տրվող մականուն է **Սադա/Սադ(դ)այ**-ը: **Սադայ** եբրայական բառ է՝ հունական տառադարձությամբ, որ նշանակում է **ամենակալ, ամենակարող, ամենազոր**³³⁴: Ըստ *Հայերեն արմատական բառարանի*՝ «Բուն նշանակությունն անյայտ է, բայց հաւանաբար «ամենակարող», ծագում է եբր. «ուժեղ, զօրեղ լինել» արմատից»..., եբր. և յն. ձևերի համեմատությունից երևում է, որ ուղղականն է սադայի»³³⁵: *Հին Կտակարանում* չպետք է շփոթել երկու **Սադայ(ի)** անունները. դրանցից մեկը՝ **Սադայ**-ը տեղանուն է՝ տարածք Փառանի անապատում՝ Հովր լեռան տակ, իսկ մյուսն արդեն՝ **Սադ(դ)այ//Սադ(դ)այի**: Այստեղ

³³⁴ Զարմանալի է այն փաստը, որ, ըստ *Համաբարբառի*, շուրջ երկու հարյուր գործածություն ունեցող *Ամենակալ* բառը բացակայում է Ռ. Ղազարյանի *Գրաբարի հոմանիշների բառարանից*, այն դեպքում, երբ *Համաբարբառը Ամենակարողի* ոչ մի կիրառություն չի տալիս: Տե՛ս Ռ. Ղազարյան, նշվ. աշխ. Եր., 2006:

³³⁵ Տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., հ 4, 153:

արտառոց ոչինչ չկա, քանի որ համանուն հատկանուններ *Աստվածաշնչում* շատ են հանդիպում:

Ա-1 տեքստում՝ Եզկ. Ա 24, կարդում ենք. «...*եւ իբրեւ զձայն Աստուծոյ Սաղայի...*», իսկ տողատակում նշվում է՝ եբր.՝ **Ամենակալ**³³⁶: Ա-2-ը **Սաղայի** փոխարեն (չմոռանանք, որ այստեղ անունները տրվում են չթարգմանված) տալիս է **Ամենակարող**, Ա-3 արևելահայերեն բնագիրը այս բառը տալիս է հունական տառադարձությամբ՝ «*ինչպես Սաղայ Աստուծու ձայնը*», որը տողատակում բացատրվում է՝ «Եբրայերեն՝ **Էլ Շաղա – Ամենագոր Աստուած**»:

Հայտնության Ա 8-ում կարդում ենք. «*Ես եմ Այբ եւ ես եմ Քէ*³³⁷, *ասէ Տէր Աստուած, որ էն եւ որ Է, եւ որ գալոցն է.Ամենակալ*» (Ա-1): Ա-2 և Ա-3 գրքերը այս նույն նախադասությունը տալիս են հետևյալ ձևով. «*Ես եմ Ալֆա և Օմեղա, կըսէ Տէր Աստուած, որ է, և որ էր և որ պիտի գայ՝ Ամենակալը*», «*Ես եմ Ալֆան եւ ես եմ Օմեղան,– ասում է Տէր Աստուածը,– նա, որ է Է, որ էր եւ որ գալու է. Ամենակալը*»: Ինչպես նկատում ենք, արևելահայերեն տեքստը մյուսներից տարբերվում է է-ի մեծատառ գրությամբ:

Աստվածաշնչի տարբեր գրքերում կիրառվում են **Ամենակալ, Աստուած Ամենակալ, Տէր Ամենակալ, Ամենակալ մեծանունդ, Ամենակալ հզոր, Ամենակալ փրկիչ, Տէր Աստուած թագաւոր ամենակալ, Ամենակալ սուրբ** տարբերակները, ինչպես՝ «... *զի՞նչ ածցէ ի վերայ մեր Ամենակալն*» (Հբ. ԻԲ 17), «...*շունչ Ամենակալի է, որ ուսուցանէ զիս*» (Հբ. ԼԳ 4), «*Տէր Աստուած ամենակալ անուն է նորա...*» (Ամս. Դ 13), «*Իսկ սոքա զամենակալ հզորն յօգնականութիւն կոչէին*» (Բ Մկ. ԺԲ 28), «... *զամենակալ փրկիչ զսուրբն Աստուած իրեանց օրհնէին...*» (Գ Մկ. Զ 20):

ՄՍԱ-ում **Սաղայի**-ն տրված է *ամենակարող* կամ *ամենաբավական* (194):

Գրաբարում իր մի քանի նշանակությունների կողքին **Բավական** բառը դառնում է Աստծուն տրվող անվանում՝ **ամենակարող, ամենագոր, ամենակատարյալ** նշանակություններով. «*Մի՛ կոչէք զիս Նոոմին, այլ կոչեցէք զիս Դառնացեալ* (հուն.՝ **πικράν**), *զի դառնացոյց զիս Բաւական յոյժ*» (Հոթ Ա 20), ասոր.՝ **Էլ Շաղայ**,

³³⁶ Կարծում ենք՝ այստեղ մի փոքր թյուրըմբռնում կա. տողատակում պետք է նշվեր եբր.՝ *Սաղայ* կամ *Շաղայ*, հայերեն՝ *Ամենակալ*:

³³⁷ Տողատակում նշվում է, որ ոմանք գործածում են **Սկիզբ** և **Վախճան** տարբերակները:

Աստվածաշնչի Ա-3 և Ա-2 թարգմանությունները գործածում են **Ամենակարող** (հուն․³³⁸ *ίκανός*) տարբերակը՝ Ա-3՝ «**Ամենակարողը** խիստ դառնացրեց ինձ», Ա-2՝ «**Ամենակարողը** դառնութեամբ լեցուց զիս»։ Ասենք, որ հունարեն *ίκανός* բառը նշանակում է և՛ **ամենակարող**, և՛ **բավական**. վերջիններս հայերեն թարգմանություններում դառնում են հատուկ, մինչդեռ *Դառնացեալը* հատուկ է նաև հունարենում։

Եհովա / Յախվե / Յահվե (ասոր․³³⁹ *ܝܗܘܘܐ* **Յահվե**, ռուս․³⁴⁰ **Иегова**):

Հին Կրակարանի եբրայական բնագրում տրվում է աստծու անունը չորս տառով՝ **YHWH**, և մինչև այժմ հայտնի չէ, թե ինչպես պետք է ճիշտ արտասանվեր այդ բառը³³⁸: «До сих пор неясно, как следует правильно произносить это слово. В VII в. н.э. оно произносилось как **Адонай** – отсюда неверное чтение **Иегова**. Сейчас, исходя из лингвистического анализа, в научной традиции принято чтение **Яхве**»³³⁹:

Օտար աղբյուրները նշում են, որ «...как слово языка, четырехбуквенное имя Божие – **Яхве (Иегова)** – не имеет лексического значения. Четыре буквы представляют собой наложение слов: **был, есть, будет**. Иногда это имя переводится на русский язык как **Предвечный**, но чаще – **Сущий** “ (НЖБ, 12), “**Я есмь Сущий**» (ЭБ, 85)³⁴⁰:

Աստվածաշնչի արևմտահայերեն (Ա-2) տեքստում **Եհովա** անվան բաղադրությունը տրվում է այն վայրի անվանումը, ուր Աբրահամը տանում է զրհելու իր Իսահակ որդուն. «Եւ Աբրահամ ան տեղին անունը **Եհովայի** կոչեց, որ մինչեւ այսօր կ’ըսուի, Տէրը լեռանը մեջ պիտի երևնայ» (Ծն. ԻԲ 14):

Ասենք, որ Աստվածաշնչի գրաբար և արևելահայերեն տեքստերը **Եհովա** անունը չեն գործածում։

Սուրբ Գրքի գրաբար տեքստերում (Ա-1, ՁԱ) այս տեղանունը թարգմանված է. «Եւ կոչեաց Աբրահամ զանուն տեղոյն այնորիկ **Տէր եպես**, զի ասիցեն ցայսօր, Ի լերինն յայնմիկ **Տէր երեւեցաւ**»: Ի դեպ, հիշեցնենք, որ գրաբար տարբերակը, **Եհովա** անունը ընդհանրապես չգործածելով, համապատասխան տեղերում տալիս է **Եմ, Տէր**

³³⁸ Մեկ անգամ ևս մեջբերենք նույն միտքը, բայց այս անգամ ոչ թարգմանաբար։

³³⁹ *Տե՛ս Женщины в легендах и мифах*, Ред. Кэролайн Ларрингтон, пер. с английского О. Перфильева, М. 1998, с. 89-90:

³⁴⁰ *Энциклопедия Библейская (ЭБ)*, (2-е издание), М., 2004, с. 694:

տարբերակները: Բերենք ևս մեկ օրինակ. *Դատարարաց* Զ 24-ում (Ա-1) կարդում ենք. «Եւ շինեաց անդ Գեղէն սեղան Տեան եւ կոչեաց զնա **Խաղաղութիւն Տեան** մինչեւ *ցայսօր*»: Արևելահայերեն (Ա-3) տեքստը պահում է այս տարբերակը՝ **Խաղաղություն Տիրոջը**: Մինչդեռ արևմտահայերենում (Ա-2) տրվում է. «Եւ Գեղէն հոն Տէրոջը սեղան մը շինեց, ու անոր անունը **Եհովաշալոմ** դրեց...»: Ի դեպ նշենք, որ **Иегова- Шалом** անվանումը (341):

Ա-1 և Ա-3 տարբերակները *Ելից* գրքի ԺԷ 15-ում ներկայացնում են հետևյալ նախադասությունը. «... եւ անուանեաց զանուն նորա **Տէր ապաւէն իմ**, «Մովսէսը Տիրոջ համար զոհասեղան շինեց եւ դրա անունը դրեց «**Տէրն իմ ապավէնն է**»: Հունարենում տրվում է **κύριός μου καταφυγή**, որը համարժեքն է հայերեն կապակցության: Ասորերենում այս նույն հատվածում տրվում է **Մառնա Նասի**, որ բառացի նշանակում է *Տերը բուժում է ինձ*: Ա-2-ը այդ անվանումը տալիս է չթարգմանված. «Եւ Մովսէս սեղան մը շինեց, ու անոր անունը **Եհովանիսի** դրաւ» (դարձյալ նույնանալով **ИЖБ**-ի հետ), իսկ տողատակում անվան նշանակությունը բացատրում է՝ «*Տէրը իմ դրօշակն է*» (հմմտ. **Иегова-Нуси** – *Господь знамя мое* (263):

Ի դեպ ասենք, որ եբրայական բազմաթիվ անուններում **-իա** վերջնաբաղադրիչը նշանակում է **Եհովա**³⁴¹, ինչպես՝ **Ամասիա** – *Եհովան հզորացնում է*, **Երեմիա** – *Եհովան բարձրացնում է*, **Եղիա** – *Եհովան իմ Աստվածն է*, **Եղիաբ** – *Աստված հայր է*, **Անանիա** – *Տիրոջ փուն կամ փիրոջ գուշակություն*, **Աբիա** – *Եհովան եղբայր է*, **Ջաբարիա** – *Եհովան հիշում է*, **Յեղիդիա** – *Տիրոջ սիրելի*, **Հոսիաս** – *Աստված զորավիգ է* և այլն:

Ա-2 -ում՝ Բ Մն. ԺԷ 15-ում առկա է **Յոհանան** (հուն.՝ *Ιωάναν*, ասոր.՝ *ܝܫܘܢܐܢ* **Յուխանան**) անունը, որը Ա-1 և Ա-3 գրքերում համապատասխան անձի անունը ներկայացնում է **Յովնան** տարբերակով: Արդյոք դրանք նո՞ւյն անուններն են: Օտար աղբյուրները **Յոհանան** անունը ներկայացնում են **Иегоханан** և **Иоханан**³⁴² տարբերակներով և անվան իմաստը տալիս **ձար Иеговы** (ՅԵ, 263): ԲՅԱ-ն տալիս է **Յոհանան** և այն բացատրում *Տիրոջ շնորհ* կամ *պարգև* կամ *ողորմություն* (170): Բայց ամբողջ

³⁴¹ «От слов Иегова и Иа образуется множество имен лиц и названий мест; разница при образовании от этих слов только в том, что Иегова обыкновенно ставится в начале сложного слова, Иа же ставится в конце...». Տե՛ս ԵՏ, էջ 162:

³⁴² Ի դեպ նշենք, որ **Иоханан** տարբերակը հայերեն տառադարձված է *Յոհանան* Օսկար Ուայլդի *Սալոմե* դրամայում՝ Վահան Տերյանի թարգմանությամբ:

հարցն այն է, որ այս դեպքում ԲՅԱ-ն նկատի ունի բոլորովին այլ անձի, որ հանդես է գալիս *Ա և Բ Եզրասի* գրքերում (նկատի ունի Բաբելի որդուն), և անվան այդ ձևը հղում է **Յովհաննես** անվանը: Ի դեպ, նույն իմաստն ունեն ոչ միայն այս, այլև **Յովհաննես**, նաև **Յովնան, Յոնան, Յոհաննա** անունները:

Այսուհանդերձ միշտ չէ, որ **-իա-ն Եհովա** ընկալվի, և որոշ անուններ բնավ այդպես չեն ստուգաբանվում, այսպես՝ **Մաղաքիա** – *հրեշտակ իմ*³⁴³:

Կարելի է առանձնացնել անունների մի ողջ շարք էլ, որտեղ **Ասրված, Տեր, Եհովա** անուններն արտահայտող վերը բերված բաղադրիչները չկան, բայց անվան մեկնաբանության մեջ դարձյալ առկա է *Ասրվածը*, ինչպես՝ **Հեսու** – *Ասրված է մեծանձն*, **Աբիուդ** – *նա է Հայրը* (Աստծու մասին), **Աբեսաղոմ** – *Հայրն է խաղաղությունը* (Տիրոջ մասին), **Ջեբեդեո** – *Եհովայի ցուրք կամ Ասրծու նվեր, պարգև, Հովսեփ* – *աստուածաբնակ*:

Է (ԵՄ): Ելից գիրքը *Ասրվածաշնչի* անվանաբանական ողջ համակարգի համար խիստ էական ու առանձնահատուկ դեր ունի. տարբեր անուններով ու մականուններով հանդես եկող Աստվածն այս գրքի Գ 14 հատվածում հայտնում է իր անունը և բացում է իր անվան նշանակությունը՝ **ՈՐ ԷՆ**, որտեղից էլ առաջ է եկել YHWH տեսրագրաման: «Եւ ասէ Աստուած ցՄովսէս. Ես եմ Աստուած **ՈՐ ԷՆ**: Եւ ասէ. Այսպէ՛ս ասասցես ցորդիսն Իսրայելի, **ՈՐ ԷՆ** առաքեաց զիս առ ձեզ» (Ել. Գ 14):

Ասրվածաշնչում Ես եմ ձևը գործածված է բազմաթիվ անգամներ. *Ծննդոց* գրքի ԺԷ գլխի 1 հատվածում կարդում ենք. «Եւ երևեցաւ Տէր աստուած Աբրամու և ասէ ցնա. Ե՛ս եմ Աստուած քո...», ԻԶ 24-ում՝ «Ես եմ Աստուած հոր քո...» (ԵԼ. Գ 14). «Եւ Աստուած ասեց Մովսէսին. **Ես եմ**, որ **ԵՄ**. Եւ ասեց. Այսպէս ասիր Իսրայելի որդիներին. Ինձ **ԵՄ**ը ուղարկեց ձեզ մօտ... այս է իմ անունը յաւիտեան, եւ այս է իմ յիշատակը ազգից ազգ...»: Այս նշանակությամբ հին ժամանակ զանազան գրություններում՝ ուղերձներ, նամակներ, կոնդակներ, սկզբում գրվում էր գլխատառ **Է**, որ նշանակում էր **Ասրված, Ասրծով, հանուն Ասրծու**:

Ուրեմն՝ Աստծու անվանումն **Է** կամ **ԵՄ**⁴ իբրև միշտ եղողի, այսինքն՝ *ինքնագոյություն, ասրվածային անսահմանություն*: Աստծո ներկայությունը առհասարակ

³⁴³ Անվան մասին մանրամասն տե՛ս աշխատանքի **Մարգարեներ** ենթագլուխը:

միշտ արտահայտվում է գոյության, լինելության հարաբերակցության մեջ: Սուրբ Գրքում Աստծո ներկայությունը միշտ առնչվում է մարդու գոյության հետ, ուստի անվան իմաստն էլ պետք է որ բխի այդ էությունից: Իսկ ընդհանրապես պե՛տք էր Աստծուն անուն ունենալ. չէ՞ որ նա միակն է, եզակին, անկրկնելին: Կարծում ենք՝ հենց անուն բառի ստուգաբանության մեջ ինչ-որ չափով կա դրա պատասխանը: Գաբրիել Ավետիքյանը տալիս է **այն ուն** կամ **էն ուն** ժողովրդական ստուգաբանությունը՝ որպես էություն ունեցող, գոյացած, կենդանի, քանի որ ըստ նրա՝ անուն դրվում է գոյացած բանին և ոչ թե չեղածին: Հ. Գաբրիել Ավետիքյանը, հիմնվելով «Յաճախապարում ճառք»-ի հետևյալ հատվածի վրա՝ «Բնութանցն երկուց՝ երկու անուանք պիտոյանան, որ որոշեն զնոսա ի միմեանց, և անուանցն՝ բնութինքն պիտոյ են՝ որ կային **ունէին** զանուանսն», նշում է, որ մարդիկ հնարեցին անունը երկու պատճառով. «... մէկ մը գոյացած եղած բանը նշանակելու, մէկ մալ բան բանէ որոշելու, զատելու համար»³⁴⁴: Ուրեմն տվյալ պարագայում Աստված իր անունը հայտնում է ոչ իրեն զանազանելու միտումով, այլ բացահայտելու իր բուն էությունը:

Համեմատենք այս հատվածը մի շարք թարգմանություններում:

Սա թերևս համարժեքն է հունարեն բնագրին՝ *Յոթանասնիցին*. «καὶ εἶπεν ὁ θεὸς πρὸς μωυσῆν ἐγὼ εἰμι ὁ ὢν καὶ εἶπεν οὕτως ἐρεῖς τοῖς υἱοῖς ἰσραηλ ὁ ὢν ἀπέσταλκέν με πρὸς ὑμᾶς»:

Ա-1 (գրաբար) – «Ես եմ Աստուած, **ՈՐ ԷՆ**»:

Ա-2 (արևմտի.) – «Եւ Աստուած ըսաւ Մովսեսին՝ **ՈՐ ԷՆ**»:

Ա-3 (արևելի.) – «Ես այն Աստուածն եմ, որ **Է**»:

ՄՍԱ – «Ես եմ Աձ, որ **Էն**»:

ԶԱ – «Ես եմ Աստուած, որ **Է՛ն**»:

Յոթանասնից (Սեպտուագինտա) – ա/³⁴⁵ – **ἐγὼ εἰμι ὁ ὢν.**

Յոթանասնից (Սեպտուագինտա) – բ/³⁴⁶ – ... **ἐγὼ εἰμι ὁ Ὄν.**

Պեշիթա – ܐܘܢܝܐ ܐܘܢܐ **Ահյահ Աշառահյահ:**

Վուլգատա³⁴⁷ – ... *ego sum qui sum.*

³⁴⁴ Գ. Ավետիքեան, *Քերականութիւն հայկական*, Վենետիկ, 1815, էջ 191:

³⁴⁵ Septuaginta, Stuttgart, 1979.

³⁴⁶ Septuagint version of Old Testaments with an English translation, London.

Գերմաներեն – ա)³⁴⁸ – *Ich werde sein, der ich sein werde.*

Գերմաներեն – բ)³⁴⁹ – *Ich bin der Ich-bin-da.*

Անգլերեն³⁵⁰ – *I am that I am.*

НЖБ – *Я есмь Сущий.*

Տրված գրեթե բոլոր նախադասություններում Աստծու հայտնած անունը արտահայտվում է **ԵՄ** բայի միջոցով: Մխիթարյանների *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի բառարանը* նշում է, որ կոնդակների սկզբում դրոշմված **Է**-ն ունի **Աստված** և **Հանուն Աստծո** նշանակությունները, ապա ավելացնում, որ այն գալիս է հինկտակարանյան **ՈՐ ԷՆ**-ից³⁵¹:

Հայերենում առարկային գոյություն, լինելիություն տալու համար անհրաժեշտաբար գործածում ենք օժանդակ բայ, ինչպես՝ **մարդ** և **մարդ է**: Երկրորդ դեպքում մենք վերացական դաշտից անցանք թանձրացական դաշտ, **մարդ** առարկան դարձավ կենդանի, գոյություն ունեցող: Տվյալ պարագայում **Է**-ն այստեղ ոչ միայն լեզվական, այլև խորհրդանշական արժեք է ձեռք բերում. **Է** անունը փաստում է, որ Աստծված Ինքն է Կենդանի Արարիչը:

Յոթանասնիցից երկու բնագիր է տրվում, որոնք նույն բնագրի տարբեր հրատարակություններ են ներկայացնում: Տրված երկու տարբերակները իրարից տարբերվում են որոշ քերականական փոփոխությամբ. Մի տեղ նույն բառը տրվում է փոքրատառ, մյուսում մեծատառ: Հունարեն հատվածը՝ *ἐγώ (Ես) εἰμι (եմ) ὁ ὢν (որ Եմ)*, այսինքն՝ որպես բայ, որի նշանակությունն է **գոյություն, կենդանություն**, ինչպես *εἰμι*-ի դեպքում (բառացի կրկնվում է գրաբարում):

Լատիներեն *Վուլգատայի*՝ **ego sum qui sum** հատվածը հայերեն թարգմանվում է՝ **Ես եմ, որ (ով) եմ**: Հունարեն-գրաբարի համեմատությամբ կտեսնենք, որ տարբերությունը **Է**-ի փոխարեն տրվում է առաջին դեմքով՝ **Եմ**: Կարծում ենք, որ *Վուլգատայի* համար հիմք են դարձել արամեերեն *Թարգումներից* որևէ մեկը և ոչ թե *Յոթանասնիցը*: Սակայն իմաստային առումով որևէ շեղում չկա. **Եմ**-ը այստեղ ևս նշանակում է

³⁴⁷ Biblia Sacra Luxta Vulgatam versionem Stuttgart, 1994.

³⁴⁸ Die Bibel nach der Übersetzung Martin Luthers, Stuttgart, 1985.

³⁴⁹ Die Bibel in heutigen Deutsch, Nordlingen, 1994.

³⁵⁰ The King James II version of the Bible, printed in the USA, 1982.

³⁵¹ Տե՛ս *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, էջ 758:

գոյություն:

Նույն հատվածը տրված գերմաներեն երկու բնագրերով. առաջինը Մարտին Լյութերի թարգմանության տեքստից է, մյուսը ժամանակակից գերմաներենով *Աստվածաշնչից: Ich bin der Ich-bin-da*-ն հայերեն թարգմանվում է՝ **Ես եմ, որ ես եմ. da** բաղադրիչը հատվածում ցույց է տալիս տվյալ անձի այդտեղ այդ պահին լինելը, իսկ **der-ը (որ)** գերմաներենում արական սեռի ցուցիչ է: Նույն ձևով հունարեն տեքստում *ο ων* արտահայտության մեջ *ο* հնչյունը (արտասանվում է **ho**) նույնպես արական սեռի ցուցիչ է: Հետևաբար կարելի է ենթադրել, որ գերմաներեն թարգմանությունը կատարված կարող է լինել հունարեն բնագրից՝ լատիներենի համեմատությամբ: Այլ է պատկերը Լյութերի թարգմանության հիման վրա կազմված տեքստում՝ *Ich werde sein, der ich sein werde*: Բառացի թարգմանելիս կունենանք **Ես կլինեմ, որ լինելու եմ**, այսինքն՝ նույն արտահայտությունն է, միայն ապառնի ժամանակով: Սա նաև փաստում է, որ իսկապես **է**-ն բայական արժեք ունի:

Անգլերեն հատվածը՝ *I am that I am*, թարգմանվում է **Ես եմ, որ եմ**՝ կրկնելով լատիներեն բնագիրը:

Պատկերը քիչ այլ է ռուսերեն թարգմանության մեջ՝ «*Я есмь Сущий*» որտեղ, ինչպես տեսնում ենք, բայն առկա է՝ **есмь**, իսկ շարունակության մեջ՝ այլևս ոչ. «*И сказал: так скажи сынам Израилевым: Сущий (Мегова) послал меня к вам*»: Կարծում ենք՝ թարգմանիչներն այս դեպքում ոչ թե բառային, այլ իմաստային թարգմանություն են կատարել, որն էլ խորհրդանշում է *անսկիզբ գոյություն, լինելիություն, ի վերջո Ամենազոր էություն*:

Հայր (հուն.՝ **Πατήρ**, ասոր.՝ ܐܘܪܘܘܘܐ **Ավա**, ռուս.՝ **Отец**):

Եբրայերենում *հայր* բառի համարժեք արմատն է **աբ** (հմմտ՝ **Աբրամ, Աբրահամ-բազմության հայր**): **Հայր** բառի առաջին գործածությունը³⁵² *Ծննդոցում զավակի համար արական սեռի ծնող* իմաստն ունի. «*Վասն այնորիկ թողքէ այր զհայր իւր և զմայր իւր*» (Բ 24), այնուհետև բառն արտահայտում է *նախնի, նախահայր* իմաստները. գրաբար տեքստում առկա *հայրը* արևելահայերեն տեքստում թարգմանվել է *նախահայր*. «...նա է **հայր** այնոցիկ...», «*Սա խաշնարածների վրաններում բնակուողների նախահայրն է*»

³⁵² Ասենք, որ **հայր** բառը բոլոր իմաստներով հանդերձ *Աստվածաշնչում* կիրառվել է 1732 անգամ:

(Ծն. Դ 20-21)³⁵³: Իսկ սա նշանակում է, որ *հայր* բառի նախնական իմաստներից է նաև *նախահայր, նախնի*, և այս իմաստով գործածությունները շատ են հատկապես *Ծննդոց* գրքում: Իսրայելում մեծ էր հոր նկատմամբ հարգանքն ու պատկառանքը. հայրական օրհնանքը անչափ կարևոր էր և գնահատելի: Հիշենք թեկուզ *Ծննդոցում* Իսահակի օրհնանքի պատմությունը իր որդիներին՝ Հակոբին և Եսավին (Ծն. ԻԷ 23-41):

Աստծու **Հայր** անվանման առաջին գործածությունը տրվում է Բ Օր. ԼԲ 6-ում. «... *ն՛չ նա է Հայրն, որ ստացաւ զքեզ, արար զքեզ, եւ հաստատեաց զքեզ*» (Ա-1), «*Մի՞թէ նա այն հայրը չէ, որ քեզ շահեց, քեզ արարեց, ու հաստատեց քեզ*» (Ա-3): Բացի այս գործածությունից, **Հայր** անունը հանդիպում ենք *Հին Կտակարանի Ա Մնացորդաց, Սաղմոսների գրքերում, Եսայու, Երեմիայի և Մաղաքիայի մարգարեությունների գրքերում*, ինչպես նաև *Տոլբիթի և Սիրաքի գրքերում*³⁵⁴:

Նոր Կտակարանում Աստծու՝ **Հայր** կամ **Երկնային Հայր** անվանման կիրառությունները բազմակի են: Ադամական մեղքը մարդկանց զրկեց որդիական իրավունքից, իսկ այն վերստին հաստատվեց Հիսուս Քրիստոսով, և իզուր չէ, որ մեր աղոթքն առ Աստված սկսվում է «**Հայր մեր**»-ով:

Մատթեոսի *Ավետարանում* Հիսուսն արգելում է ժողովրդին և իր աշակերտներին որևէ մեկին **Հայր** կոչել. «*Եւ երկրի վրայ ոչ մէկին ձեզ հայր մի՛ կոչէք, որովհետեւ մե՛կ է ձեր Հայրը, որ երկնքում է*» (ԻԳ 9): Իսկ Հովհանի *Ավետարանում* Հիսուսը Մարիամ Մագթաղենացուն արգելում է իր հետևից գալ, նա նրան դիմում է՝ *ով կին և Մարիամ և հիմնավորում է իր այս քայլը հետևյալ խոսքերով. «Ինձ մի՛ մօտեցիր, քանի որ դեռ Հօրս մօտ չեմ բարձրացել. ուրեմն գնա՛ դու իմ եղբայրների մօտ ու նրանց ասա՛, որ ես բարձրանում եմ դէպի իմ Հայրը եւ ձեր Հայրը, դէպի իմ Աստուածը եւ ձեր Աստուածը*» (Հվի. Ի 17):

Բարձրյալ (հուն.՝ ὕψιστος, ասոր.՝ ܘܨܝܫܘܝܢ **Մոայմա**, ռուս.՝ **Всевышний**):

Այս անվանումը Աստծու համար հանդես է գալիս թե՛ իբրև անուն, թե՛ մականուն: Առաջին դեպքում նա գոյական է, երկրորդում՝ ածական: Ռ. Ղազարյանի *Գրաբարի բանարանում* ածական իմաստով նշանակում է *բարձր, բարձրում եղող, վերին և որպես*

³⁵³ Նշված տեղում գրաբար տեքստի երկրորդ գործածությունը՝ «... նա է **հայր**, որ եցոյց զերգս և զքնարս», արևելահայերեն թարգմանության մեջ բացակայում է. «Նա է յօրինել երգն ու քնարը»:

³⁵⁴ Վերջին երկուսը բացակայում են ռուսերեն տեքստերում:

գոյական՝ *ամենաբարձրը* (Աստծու մասին)³⁵⁵: Իսկ *Գրաբարի բացատրական բառարանում* սա նախ և առաջ գոյական է՝ ինքը՝ Աստված. «*Ետ զձայն իւր Բարձրեալն*» (Սղմ. ԽԵ 7), և ապա իբրև ածական՝ *ամենաբարձր, վեհ, վերևում գտնվող*. «*Թագաւոր Բարձրեալ...*» (Նար.)³⁵⁶:

Շուրջ հարյուրի են հասնում *Բարձրյալ*-ի կիրառությունները *Աստվածաշնչի* տարբեր գրքերում: Առաջին գործածությունն արդեն *Ծննդոցում* է որպես Աստծու մակդիր-որոշիչ, մականուն. «... *քանզի քահանայ էր Աստուծոյ Բարձրելոյ*» (ԺԴ 18): *Քրիստոս* այն արդեն փոխարինում է *Աստված* անվանը. «*Յորժամ բաժանեաց Բարձրեալն զազգս ամենայն*» (ԼԲ 8): Առավել հաճախ հանդիպում է սաղմոսներում, և դա բնական է. դրանցում փառաբանվում է Աստված: *Նոր Կտակարանում Բարձրյալը* գործածված է *Մարկոսի* և *Ղուկասի* ավետարաններում և *Գործքում*. «*Նա եղիցի մեծ, եւ Որդի Բարձրելոյ կոչեցցի*» (Ղկ. Ա 32):

Պատավոր (հուն.՝ **Κριτής**, ասոր.՝ **ܩܪܝܬܐ** **Պայա՛նա**, ռուս.՝ **Судья**):

Այս անվանմամբ *Հին Կտակարանում* տրվում է մի ամբողջ գիրք՝ *Պատավորներ* (հուն.՝ **Κριται**, ռուս.՝ **Судей**), որտեղ նկարագրվում է տարբեր ցեղերի անկարգ, անիշխանական բարքերը, թշվառությունը, Աստծո ճանապարհից շեղվելը: Միջագետքի, Քանանի, Մովաբի, Մադիամի թագավորներն ու հարստահարիչները ամեն ինչ անում են իրենց ուզած ձևով: Ժողովուրդը ապաշխարում է, ապավինում Աստծուն, և Աստված ուղարկում է իր դատավորներին:

Բայց *դատավոր*-ի առաջին կիրառությունը դեռևս *Ծննդոց* գրքում է տրվում. «*Եւ Աստուած Նաքովրայ եղիցի դատաւոր ի միջի մերում*» (ԼԱ 53): Մարդկային խճճված հարաբերություններում Աստված պետք է որ ստանձներ դատավորի դերը: Աբրահամի Աստվածը, Իսահակի, Նաքովրի... և այլոց Աստվածը դառնում է անպայմանորեն՝ բոլորի **Պատավոր** (Եբր. ԺԲ 23): Ի՞նչ անցումներով: Նախ մարդը ինքն է խնդրում Աստծուն արդար դատավոր լինել. «*Եղիցի Տէր դատաւոր եւ իրաւարար ընդ իս եւ ընդ քեզ*» (Ա Թգ. ԻԴ 16): Ապա արդեն հաստատվում է, որ նա է դատավորը. «... *զի Տէր ինքն դատաւոր է*» (Սր. ԼԵ 15), կամ՝ «... *զի դատաւոր Տէր Աստուած մեր է*» (Ես. Լ 18): Այնուհետև արդեն *դատավոր*-ն ինքը ստանում է մակդիրներ՝ *արդար, բարերար* և այլն.

³⁵⁵ Տե՛ս Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան*, հ. Ա, Եր., 2000, էջ 275:

³⁵⁶ Տե՛ս Լ. Խաչատրյան, *Գրաբարի բացատրական բառարան*, Եր., 2003, էջ 89:

«Աստուած դարձաւոր արդար, հզօր եւ երկայնամիտ» (Սղմ. Է 12): Նշենք, որ ռուսերեն բնագրում ամեն ինչ համարժեք է. *երկայնամիտ* մակդիրի դիմաց ռուսերենում *долготерпеливый* բառն է՝ բառարաններում երկու նշանակությամբ բացատրվող՝ *երկայնամիտ* և *համբերատար*: Գրաբար տեքստը տալիս է *երկայնամիտ* ձևը, մինչդեռ արևելահայերեն տարբերակում (Ա-3)՝ *համբերատար*:

Ոչ միայն **Դարավոր**-ը, այլև **Արքա**, **Թագավոր**, **Հզոր**, **Կենարար**, **Բարերար** անունները անպայմանորեն պետք է դիտարկել իբրև ոճանուններ, քանի որ տեքստից դուրս դրանցից ոչ մեկը ընկալելի չէ իբրև Աստված³⁵⁷:

Աստծուն տրված ոճանուններ են **Արքան** և **Թագավորը**³⁵⁸, որոնք հավասարապես ակնարկում են ինչպես Հայր Աստծուն, այնպես էլ Հիսուս Քրիստոսին. «*Եւ կացի յաղօթս առ Տէր ասեմ. Տէր, Տէր, Թագաւոր*» (Բ Օր. Թ 26), «*Տէր Աստուած Թագաւոր Ամենակալ...*» (Եսթ. ԺԴ 9), «*... կոչեաց զՀիսուս եւ ասէ ցնա. դո՛ւ ես Թագաւոր Հրեից*» (Հվի. ԺԹ 33): *Սուրբ Գրքում արքա* և *թագավոր* բառերի հաճախականությամբ թեև գերազանցում է *արքան* (1806-1397), սակայն ոճանուն կիրառությամբ շատ ավելին է *թագավորը*. *Արքա* ոճանվան ընդամենը տասնմեկ գործածություն ունենք *Թագավորի* ութ տասնյակ կիրառության դիմաց: Բայց այս վիճակագրությունից ավելի հետաքրքիր է մեկ այլ բան, այն, որ թե՛ հունարենում և թե՛ ռուսերենում տրվում է այս ոճանունների միայն մեկ տարբերակ՝ հունարեն՝ βασιλεύς, ռուսերենում՝ царь. «*...Господь Бог ваш – Царь ваш...*»³⁵⁹, մինչդեռ հայերենը՝ թե՛ *արքա*, թե՛ *թագավոր*. «*... եւ Տէր Աստուած մեր՝ Թագաւոր մեր*» (Ա Թգ. ԺԲ 12), բայց նաև՝ «*...եւ փառաւոր առնեմ զԱրքայն երկնից...*» (Դն. Դ 34):

³⁵⁷ Ոճանունների քննությունը տրվում է մենագրության *Աստվածաշնչյան ոճանուններ* գլխում:

³⁵⁸ Ասորերեն տեքստում՝ Պեշիթայում, կա միայն՝ *թագավորը* (*Մալքա*), իսկ *արքա*-ն ընդհանրապես չկա:

³⁵⁹ *Սուրբ Գրքի* ռուսերեն տեքստում ընդհանրապես չի գործածում *король* բառը, չնայած Ա. Ղարիբյանի *Ռուս-հայերեն բառարանը* թե՛ սրա և թե՛ *царь*-ի դեպքում տալիս է նույն՝ *թագավոր*, *արքա* տարբերակները, բայց միայն՝ *царство небесное*, իսկ հայերենում կա և՛ *երկնային արքայություն*, և՛ *երկնային թագավորություն*:

ՈՐԴԻ ԱՍՏՎԱԾ

Ըստ հայ եկեղեցու դավանաբանության՝ **Սուրբ Երրորդության** երկրորդ գերական **Որդի Աստված**-ն է, որն *Աստվածաշնչի* տարբեր գրքերում տարբեր անուններով ու անվանումներով է հանդես գալիս:

Նոր Կտակարանը գրվել է հունարեն, և հայ թարգմանիչները, ի տարբերություն Հին Կտակարանի, կատարել են անմիջական թարգմանություն, ուստի հատուկ անունների և անվանումների անվանաբանությունը խարսխվում է հունարեն բնագրի վրա³⁶⁰: Հայերեն բնագրերում առկա հատուկ անունների և անվանումների համեմատությունը ռուսերեն թարգմանության հետ ի ցույց է դնում հետաքրքիր իրողություններ, մանավանդ երբ համեմատում ենք ռուսերեն երկու բնագրեր՝ НЗ-ն և НЖБ-ն³⁶¹:

Անդրադառնանք Որդի Աստծուն տրվող անունների ու անվանումների մի մասին:

ՀԻՍՈՒՍ (հուն.՝ **Ιησοῦς**, ռուս.՝ **Иисус**, ասոր.՝ ܝܫܘܥ **Իշո**) / **Փրկիչ**, (հուն.՝ **σωτηρ**, ասոր.՝ ܣܘܪܝܐ **Փառոկա**, ռուս.՝ **Спаситель**):

Արական *Հիսուս* անունը հունական տառադարձությունն է եբրայական **Եշու/Եշուս** անվան, որ նշանակում է «*փրկիչ կամ խնայող*» (ԲՅԱ, 161)³⁶², *Աստված է մեծանձն* (ՀԱԲ, հ Գ, 526)³⁶³: Իսկ սա նշանակում է, որ դեռևս *Հին Կտակարանում փրկիչ* նշանակությունն ունեցող **Հեսու** անունը կար. *Հին Կտակարանում*. հանդիպում են **Յեսու/Հեսու** կամ **Յեսուս** անունը կրող մի քանի անձինք (Ել. ԺԷ 9 (**Իησοῦ**), 10 (**Իησοῦς**), Թվ. ԺԱ 28, ԺԳ 17, ԺԴ 6, 38, 65, Բ Օր. Գ 21, Հս. Ա 1, 5, 6...Դ 1,15...), բայց ինչպես նշում է ԲՍԳ-ն «*Ոչ ոք երբեք կրեց այս անունն այնպես յիրաւի և արժանի, և ոչ կատարեց լի և լի այն բառին նշանակութիւնն, ինչպէս Յիսուս Քրիստոս, որ կը փրկէ ի մեղաց և ի դժոխաց, և սրացաւ վասն մեր գերկինս իրով արեամբ*»: Ապա անմիջապես հավելում է, որ ուրեմն այդ անունը տրվեց Հիսուսին աստվածային հրամանով՝ «...*իբրև յարուկ անուն ի վաղուց ցանկալի Փրկչի, և զոր բիրք բիրուց փրկելոց յերկինս*»

³⁶⁰ Համեմատությունը կատարվել է *Новый завет на греческом и русском языках* (НЗ), Ред. А.А. Алексеев, Сост. Д. И Захарова, Российское библейское общество, М., 2002:

³⁶¹ *Новая Женевская учебная Библия* (Синодальный перевод), 1998 (НЖБ):

³⁶² Տե՛ս *Բաղդիք հայկազեան լեզուի*, հ. երկրորդ, ի Վէնտիկ, 1769:

³⁶³ Ըստ ԵՍ-ի՝ **Иисус** նշանակում է **Иегова спасает** (**Եհովան փրկում է**), որն արդեն բոլորովին այլ ընկալում է տալիս անվանը: Տե՛ս *Библейский словарь*, Эрик Нюстрем, пер. со шведского, под ред. И. С. Свенсона, (ԵՍ), Санкт-Петербург, 1995:

յաւիտեան պիտի պաշտեն իբրև իրենց մի միայն և ամենափառաւոր Ազատիչը»³⁶⁴: Փաստորեն անվան բուն իմաստի և այդ անունը կրող անձի միջև ուղղակի կապ կա, և այդ կապը հաստատվում է Աստծու նախախնամությամբ և հավաստվում է Նոր Կտակարանում:

Ըստ ՆԲՀԼ-ի՝ «... Յիսուս, այն, որ փրկէ, ապրեցուցիչ, կեցուցիչ, ազատիչ, կենարար» (հ. Բ, 964): Ահա թե ինչու Մատթեոսի Ավետարանում ուղղակիորեն, ինչպես հինկտակարանյան հերոսների անունների մեկնությունն է տրվում, կարդում ենք. «Նա մի որդի պիտի ծնի, եւ նրա անունը **Յիսուս** պիտի դնես, քանի որ նա պիտի **փրկի** իր ժողովրդին՝ իր մեղքերից» (Ա 21):

Ռուսերենում **Հեսու/Հիսուս** տարբերակումը չկա. թե՛ հինկտակարանյան մի քանի անձինք (նույնիսկ՝ մեկ տեղանուն)՝ թե՛ Հեսու-ն, թե՛ Հիսուսը անվանվում են **Иисус**, սակայն հայերենում դրանք տարբերակված են: Հին Կտակարանի մի ամբողջ գիրք անվանված է **Հեսու** անվամբ՝ **Յեսու Նաւեայ**: Իսկ Նոր Կտակարանում միայն **Հիսուս** անունն է, որը նկատի ունի Քրիստոսին: Մեկ այլ հետաքրքիր տարբերակում ևս կա. ավետարաններում գործածվում է **Հիսուս**, իսկ **Թղթերում...**՝ **Քրիստոս**, քանի որ ավետարանները նրա կյանքն ու գործունեությունն են ներկայացնում, իսկ **Թղթերը...**՝ աստվածային էությունն ու կենարար գործը:

Հին Կտակարանը մեզ ծանուցում է, որ կգա Աստծու ընտրյալը, որը կլինի **Մարգարե**, ինչպես Մովսեսը. «Քո Եհովայ Աստուածը քո միջիցը քո եղբայրներիցը ինձ պէս մի **մարգարէ** վեր կկացնէ քեզ համար, նորան լսեցէք» (Բ Օր. ԺԸ 15): Կլինի **Քահանա** և **Քահանայապետ**, ինչպես Մելքիսեդեկը. «Այսպէս էլ Քրիստոսը ոչ թէ ինքն իր անձը փառաւորեց, որ **Քահանայապետ** լինի, այլ նա, որ ասեց նորան, թէ՛ Իմ **Որդին** ես դու, ես այսօր ծնեցի քեզ... Դու **քահանայ** ես յաւիտեան Մելքիսեդեկի կարգի պես» (Եբր. Ե 5-6): Կլինի **Թագավոր**, ինչպես Դավիթը: Ուրեմն **Աստված** և **Աստծու որդի**, որը, մարգարե, քահանա, թագավոր լինելով հանդերձ, «**Քրիստոսն է ամենը եւ ամենի մէջ**»³⁶⁵ (Թ. առ Կող. Գ 11):

³⁶⁴ Տե՛ս *Քառարան Սուրբ Գրոց*, Կոստանդնուպոլիս, 1881(1992), էջ 376:

³⁶⁵ Թերևս այս խոսքերի ազդեցությամբ է պայմանավորված Գրիգոր Նարեկացու հետևյալ տողը՝ «Ես եմ ամենքը, և ամենքինն է պարփակված իմ մեջ»:

Թեև *Աստվածաշնչի* համաբարբառի (ԹԱԱՀ)³⁶⁶ տվյալներով **Հիսուս Քրիստոս** անվան գործածությունները 672-ն են, բայց իրականում դրանք *Նոր Կտակարանում* ավելի շատ են: Այսպես՝ *Համաբարբառում* ներկայացված 101 անվան փոխարեն իրականում միայն Մատթեոսի *Ավետարանում* **Հիսուս Քրիստոս** անունը գործածված է 170 անգամ, Մարկոսի *Ավետարանում* ներկայացված 32-ի փոխարեն 93 անգամ, Ղուկասի մոտ՝ 38-ի փոխարեն 94 անգամ և այլն:

Ինչպես նշեցինք վերևում, **Յեսու** կամ **Յիսուս** անունը հունարեն ձևն է եբրայերեն **Եշուա** անվան, որ թարգմանվում է **փրկիչ**: Այս անունը տրվեց Քրիստոսին Աստծու հրամանով Գաբրիել հրեշտակապետի կողմից, որը Հովսեփին և Մարիամին հայտնեց Աստծու կամքը՝ Մարիամին Սուրբ Հոգու շնորհով որդի պարգևելու. «Յովսէփ, որդի Դաւթի, մի՛ երկընչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ ի նմայն ծնեալ է՛ ի Հոգւոյն Սրբոյ է: Ծնցի որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս, զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց» (Մտթ. Ա 20- 21): *Մատթեոսի Ավետարանում* նա անվանվում է նաև **Էմմանուել**, *Ղուկասի Ավետարանում՝ Որդի Աստուծոյ*. «Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո. քանզի եւ որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է, եւ **Որդի Աստուծոյ կոչեսցի**» (Ղկ. Ա 35):

Հիսուսը Տիրոջ սովորական անունն է, մարդկային, երկրային անունը, որն անշուշտ չպետք է գործածվի *Աստված բառի* հետ, մինչդեռ Քրիստոսը կարող է և կիրառվում է՝ «...Նրանցից է նաեւ Քրիստոս՝ ըստ մարմնի. եւ նա է բոլորի վրայ յաւիտեանս օրհնեալ Աստուած» (Ա-3, Հռմ. Թ 5):

Ըստ *Աստվածաշնչի՝* Հիսուսը փոքր է Ադամից չորս հազար տարով: Ծնվել է Բեթղեհեմ քաղաքում մ.թ. մոտ չորրորդ տարում (սակայն համարվում է մեր թվականության սկիզբը) և ստացել է իր երկրային անունը՝ **Հիսուս Նազովրեցի**:

30 տարեկանում սկսել է իր քարոզական գործունեությունը, որը տևել է երեքուկես տարի: Հիսուսի վարքը պատմվում է չորս ավետարանների մեջ: Նա ինքն Աստվածն է՝ Սուրբ Երրորդության երկրորդ անձը՝ **Աստծու Միածին Որդին**, որն էլ դարձավ մարդկության **Փրկիչը**: Հիսուսն է միջնորդը Աստծու և մարդու միջև,

³⁶⁶ Տե՛ս *Համաբարբառ Հին եւ Նոր Կտակարանաց*, աշխ.՝ Թադէոս վարդապետի *Աստուածատուրեանի*, Յերուսաղէմ, 1895, էջ Դ:

որովհետև նա և՛ Աստված է, և՛ մարդ (Եբր. Թ 15): Այս գրքում հիշեցվում է, որ «Որդին հրեշտակներից մեծ է... Փրկության Քրիստոսով եւ ոչ թէ հրեշտակներով... Քրիստոս գերազանց՝ քան Մովսէսը»:

Փրկիչը, լինելով Հիսուս անվան բառացի իմաստը, դառնում է նաև անուն և հաճախ կիրառվում է թե՛ առանձին՝ նկատի ունենալով Հիսուսին՝ «Մի՛ վախենաք, որովհետև ասիա մեծ ուրախություն եմ աւելում ձեզ, որ բոլոր ժողովրդին պիտի լինի. Թէ այսաւր ձեզ **Փրկիչ** ծնուեցաւ Դաւիթի քաղաքումը, որ է Քրիստոս Տէրը» (Ղկ. Բ 10-12) և թե՛ հենց Հիսուս անվան հետ՝ դառնալով մականուն. «Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ փառք...» (Հդ. Ա 25): Գրաբար այս հաստվածը արևելահայերեն տեքստում թարգմանված է. «... նրան՝ միակ Աստծուն եւ մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսին՝ մեր Տիրոջը, փա՛ռք...» (Ա-3):

Սակայն ասենք, որ Փրկիչ անվանումը տրվում է նաև Հայր Աստծուն Հին Կտակարանի մի քանի գրքերում՝ Դատավորների. «... յարոյց Տէր **Փրկիչ**...» (կύριος σωτήρα..., ասոր.՝ **Փառոկա**) (Գ 9), Բ Թագավորությունների. «Տէրն իմ վէմն է, ամրութիւնն ու **փրկիչը**» հունարենում՝ πέτρα μου και όχύρωμά μου και έξαιρούμενός με έμοί (ԻԲ 2) և այլն: Չմոռանանք, որ Աստված ինքը իրեն համարում է Իսրայելի փրկիչը. «... քանզի ես եմ քո Տէր Աստուածը՝ Իսրայելի Սուրբը, որ պիտի փրկեմ քեզ» (Ես. ԽԳ 3, 11): Հին Կտակարանում Հերոբոլամ արքան ևս համարվում է փրկիչ (Դ Թգ. ԻԲ 2), Դատավորների գրքում՝ որոշ դատավորներ (Դտ. Գ 9, 15): Բայց հետո միայն գալու էր այն Փրկիչը, որին Աստված համարեց իր միակ ու անփոխարինելի Որդին:

Քրիստոս, Օծյալ, Մեսիա (հուն.՝ Χριστός // Μεσσίας, ասոր.՝ ܡܫܝܚܐՄշիխա ³⁶⁷, ռուս.՝ Христос):

Քրիստոս-ը եբրայական Մեսիա անվան հունարեն համարժեքն է (հուն.՝ xrio – οδել, xristos – οδված), որ նշանակում է Օծյալ: Ըստ ԲՍԳ-ի՝ «Քրիստոս անունը Փրկչին պաշտօնին տիտղոսն է, և չէ պարտ նկատուիլ իբրև լոկ անուն, որոշելու համար մեր Տէրն Յիսուս կոչուած ուրիշ անձերէ» ³⁶⁸:

Հր. Աճառյանը նշում է, որ **Մեսիա**-ն անպատշաճ է տալ սովորական մահկա-

³⁶⁷ Բուն Պեշիթայում Քրիստոս անունը չի տրվում, այլ միայն՝ Մըշիխա, մինչդեռ ծիսական որոշ ժողովածուներում գործածված է նաև Քրիստոս-ը:

³⁶⁸ Տե՛ս Բառարան Սուրբ Գրոց, էջ 581:

նացուներին (ՀԱԲ, հ. Գ, 318), ուստի այս անունը գործածության մեջ մնում է եզակի՝ իբրև Հիսուս Քրիստոսի մականուն. «Գրաք **զՄեսիայն** (որ թարգմանի Քրիստոս)» (Հվհ. Ա 41, Դ 25):

Հին Կրակարանի Մեսիան Նոր Կրակարանում դառնում է Քրիստոս. «Հերովդէս... հարցանէր ի նոցանէ, թէ ուր ծնանիցի **Քրիստոսն**» (Մտթ. Բ 5), «Դու ես **Քրիստոսն**, Որդի Աստուծոյ կենդանւոյ» (ԺՁ 16):

Եսայի մարգարեն գուշակեց Մեսիայի գալուստը և **Էմմանուել/Մանուել** (հուն.՝ **Εμμανουήλ**, ասոր.՝ **ܐܡܡܢܘܥܝܠ**, ռուս.՝ **Еммануил**), անվանեց նրան³⁶⁹: Սա եբրայական անուն է, որը կազմությամբ բարդ բառ է և նշանակում է **Աստված մեզ հետ է** (Ես. Է 14, Ը 8, Մտթ. Ա 23). «Ահա կոյս յղացի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա **Էմմանուէլ** (Ես. Է 14), որ թարգմանի՝ Ընդ մեզ Աստուած» (Մտթ. Ա 23): Ռուսերեն աղբյուրները նույնպես անվան իմաստը մեկնում են *աստված մեզ հետ է*³⁷⁰:

Էմմանուել անվան կրճատված ձևն է **Մանուելը**, ինչպես Եղիազարից՝ Ղազար: Անվան այս տարբերակը գործածված է հայ հին բանաստեղծության մեջ: Հայ բանաստեղծության մեջ անվան իմաստն է ակնարկում Ֆրիկը. «Կոյսն է ծընօղ Մանուէլի, Որ մեզ **աստուած** թարգմանի նա...» (Բ, 123): Բացի ուղղակի իմաստից, դառնում է շրջասության եզր՝ ակնարկելով Մարիամ Աստվածածնին. «Բանն, որ ի հորէ էր լոյս, Ի քէն ծագեցաւ մեզ յոյս, Յարգանդէ կոչեաց Յիսուս, **Մայր Մանուէլի** սուրբ կոյս» (Հովհաննէս Երզնկացի. ԲՁ, 36, 97-102), «Չքնաղ, ահեղ, զարմանալի, **Մա՛յր անարար Մանուէլի...**» (Ներսէս Մոկացի, Բ, 137)³⁷¹:

Ընդհանրապես պետք է նշել, որ հայ բանաստեղծության մեջ անվան **Մանուել** տարբերակը շատ հաճախական է, ինչպես՝ «Յեսայի գոչէ՛ Ահայ կոյս յղացի Նոր զարմանալի ծնցի **Մանուիէլ**» (Խաչատուր Կեչառեցի, Բ, 167), «Երգեաց Գաբրիէլ, **Ջանեղն Մանուէլ**, էացաւ ի քէն տիրամայր, Ընկալաւ մարմին» (Գրիգորիս Աղթամարցի, Բ, 164), «Ձի ի քէն ծնանի **Մանուէլ արքայն**» (Սիմեոն Կաֆացի, ՈՒՄԲ, հ2, 203):

³⁶⁹ Եսայու մարգարեության մեջ Էմմանուել – Քրիստոս և Աստված էությունների մասին տե՛ս **Ֆ. Գրիգորյան, Աստվածաշնչի հանրագիտարան**, հ. 1, Եր., 2013:

³⁷⁰ Տե՛ս *Библейский словарь*, էջ 129:

³⁷¹ Օրինակները տրվում են ըստ **Փ. Մեյթիխանյանի Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարանի**, Եր., 2001:

Աստծու Որդի, Աստվածորդի, Որդի (հուն․՝ υἱὸς τοῦ θεοῦ, ասոր․՝ ܐܘܠܘܐܢ ܐܘܒܐ **Բռա դ Ալահա**, ռուս․՝ **Сын Божий**):

Մրանք Հիսուսին տրված անվանումներ են, որ նշանակում են, թե նա **Հայր Աստծու որդին** է:

Մարկոսի *Ավետարանում* նա **Որդի** է անվանվում. «Երկնքից մի ձայն եկաւ, որն ասում էր. «Դո՛ւ ես իմ սիրելի **Որդին**, որ ունես իմ ամբողջ բարեհաճութիւնը» (Մրկ. Ա 11): Հովհաննի *Ավետարանում* (Ա 49) Հիսուսը և՛ **Ռաբբին** է, և՛ **Աստծու որդին**, և՛ **Իսրայելի թագավորը**. «**Ռաբբի՛**, դու ես **Աստծու Որդին**, դո՛ւ ես **Իսրայելի թագաւորը**»:

Մարդու Որդի/Որդի Մարդոյ (հուն․՝ υἱὸς ἀνθρώπου, ասոր․՝ ܐܘܪܝܢ ܐܘܒܐ **Բռա դ Նաշա, Сын Человеческий**):

Հովհաննի *Ավետարանի* Ե գլխում Հիսուսն ամբողջովին բացահայտում է Հոր և Որդու էությունները, մասնավորապես՝ *Մարդու Որդու*. «... Հայրն ինքն իր մէջ կեանք ունի եւ կեանք է տալիս, նոյնպէս եւ Որդուն տուեց ինքն իր մէջ կեանք ունենալ եւ տալ: Եւ նրան իշխանութիւն տուեց դատաստան անելու, քանի որ **մարդու Որդի** է» (Ե 26-27), նաև *Մատթեոսի Ավետարանում*՝ «Որպէս **Որդի մարդոյ** ոչ եկն պաշտօն առնուլ, այլ՝ պաշտել...» (Ի 28):

Մարդու որդու մարդկային էությունը ավելի է հաստատվում **Դավթի որդի** անվանմամբ (հուն․՝ υἱὸς Δαυίδ, ռուս․՝ **Сын Давидов**). «Ողորմեաց մեզ, Յիսուս, **Որդի՛ Դավթի**» (Մտթ. Ի 30-32): Հետաքրքիրն այն է, որ ռուսերենում տրվում է ոչ թե *Сын Человека*, այլ՝ *Сын Человеческий*:

Միածին (հուն․՝ Μονογενής, ասոր․՝ ܐܘܢܐܢ ܝܚܝܕܝܝܐ, ռուս․՝ **Еди́нородный**):

Հիսուս Քրիստոսին տրված անվանում է, որը *Նոր Կտակարանում* գործածված է ընդամենը հինգ անգամ, հիմնականում՝ *Հովհաննի Ավետարանում* (Ա 14, 18, Գ 16, 18):

Մինչդեռ այս անվանմամբ կիրառությունները բազմակի են հայ հին և միջնադարյան գրականության մեջ. թվարկենք դրանցից մի քանիսը.

1. Հովհաննես Օձնեցի՝ «Կարողք եղեն ամենայն զօրութեամբ Ընդունիլ զբաժակ չարչարանաց **Միածնի** քոյ Որդիքն Որոտման և ընդ աջմէ դասիլ»:

2. Գրիգոր Նարեկացի՝ «Ծնանելով **զՈրդին Միածին...**»:

3. Ներսես Շնորհալի՝ «Ջքեզ այսար **Որդին քո Միածին եկեալ...**»:

4. Առաքել Սյունեցի՝ «Եւ յետ չարին խաբեութեան՝ Ետ **զՄիածինս** փրկիչ մարդկան»։ «Երկիր պագանեմք սիրով քեզ, սուրբ **Միածին**, Եւ ընդ Թումայի գոչմամբն Աստուած դաւանեմք »:

Նազովրեցի/Նազովրացի (հուն.՝ **Ναζωραῖος**, ասոր.՝ **ܢܘܨܘܪܝܐ** **Նասուռյա**, ռուս.՝ **Назореим**):

Այս անվանումը դառնում է Հիսուս Քրիստոսի մականունը՝ Նազարեթ (հուն.՝ **Ναζαρέθ**) քաղաքի անունից՝ «Եւ եկեալ բնակեցաւ ի քաղաքին, որ կոչէր Նազարեթ, զի լցցի բան մարգարէիցն թէ **Նազովրեցի կոչեսցի**» (Մտթ. Բ 23, Մրկ. Ա 24, Ժ 47, ԺԶ 6, Ղկ. Դ 34, Հվհ. ԺԸ 5, Գրծ. Բ 22, Դ 10):

Նազովրեցի մականվան առաջացման մասին հետաքրքիր մեկնաբանություն է տալիս ԱԱՄ-ն. «Կան շատեր, որք **նէզէր** նշանակութեամբ, որ է **բաժնեւ**, կը մեկնեն, թէ Յիսուս Նազովրեցի ըսուեցաւ զատուած, նուիրուած մէկն ըլլալուն համար, կան ուրիշներ, որք **նէզգէր** բառին նշանակութեամբ, որ է **ոստ, շառաւիղ**, կը մեկնեն, թէ Յիսուս Նազովրեցի կոչուեցաւ, որպէս Եսայի գուշակած էր. «Եւ բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեյա եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի» (ԺԱ 1, ԾԴ 2, Երմ. ԻԳ 5, Ջք. Գ, Զ 8, 12): Կայ մէկ ուրիշ մեկնութիւն աւելի եւս յաւանական. Գալիլեա Հրէաստանի ամէնէն անարգ ու նուաստ հոչակուած երկիրն էր, եւ Նազարեթ ա՛լ աւելի վատանուն, մինչ զի Նաթանայէլ անգամ, որպէս Շնորհալի եւս կը յիշատակէ, կը դըժուարէր հաւատալ, թէ Նազարեթէն բարի բան մը կրնայ ելլել (Յվհ. Ա 46). հեթանոսներով խառնուած այդ երկրի Հրեայներուն լեզուն անգամ տարբեր էր Հրէաստանի միւս Հրեայներուն լեզուէն, ապա ուրէմն **Նազովրեցի** էր **պարսաւանուն, նախատանաց անուն**, որպէս այս մտօք գործածեցին Քրիստոսի աշակերտներուն համար ալ (Գրծք. ԻԴ 5): Քրիստոս **Նազովրեցի** կոչուէր, որպէս զի լիով կատարուէր մարգարէութեանց սա խօսք, թէ Մեսեայն պիտի ըլլար անարգ, արհամարհուած ու նուաստացած» (Ես. ԾԳ)³⁷²:

Գառ, Աստծու գառ (հուն.՝ **ὁ ἀμνὸς τοῦ θεοῦ**, ասոր.՝ **ܐܡܢܘܨ ܕܥܘܠܡܐ** **Փեռա դ Ալահա**, ռուս.՝ **Агнец Божий**):

Սրանք այն ոճանուններն են, որ բնութագրում են Որդի Աստծուն՝ Հիսուսին:

³⁷² Տե՛ս Աշխարհաբար Աւետարան եւ մեկնութիւն. ըստ վարդապետութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, **Վահան վարդ. Տէր-Մինասեան**, Կ.Պոլիս, 1894, էջ 13 (ԱԱՄ):

Չմոռանանք, որ հենց ինքը՝ Հիսուսը իրեն նմանեցնում է զատկական զոհաբերվող գառան “... ибо и Пасха наша, Христос” (Ա Կրնթ. Ե 7): Մարդկային մեղքի համար զոհ դարձած Քրիստոսը դառնում է **Գառն Աստուծոյ** (Հվի. Ա 29):

Ռաբբի, Ռաբբունի, Րաբունի, Վարդապետ (հուն.՝ Ραββί, Ραββουνί, ասոր.՝ ܪܒܝ **Ռաբի**, ռուս.՝ Равви, Раввунн):

Մարկոսի Ավետարանում Պետրոսը Հիսուսին կոչում է **Ռաբբի**. «**Ռաբբի՛**, ահաասիկ թզենին, որին անիծեցիր, չորացել է» (ԺԱ 21): **Ռաբ** արմատը հին եբրայերենում նշանակել է **գլուխ** և սուրբգրային տեքստերի բաղադրյալ անվանումներում թարգմանվել է **դահճապետ** (եբր.՝ *Րապ-Թապպախիմ*) (Գ Թգ. ԻԵ 8), **ներքինապետ** նշանակություններով. «*Եւ ասէ թագաւորն ցԱսիանէզ՝ ներքինապետ իւր..*» (Դն. Ա 3, Ե 11): Հետագայում բառը ձեռք է բերում և սկսում է գործածվել հրեաների մեջ իբրև պատվանուն՝ **դեր** կամ **վարդապետ** նշանակությամբ: Եվ հետաքրքիրն այն է, որ այնքան **Ռաբ** տիտղոսը չէր պատվավոր, որքան **Ռաբբի**-ն, որ նշանակում էր **Տեր իմ** կամ **վարդապետ իմ**: ԵՇ-ն այս անվան նշանակությունը **великуиъ гощодин** է տալիս, որը, կարծում ենք, անդրադարձն է ավելի ուշ շրջանի ընկալման³⁷³: Այս անվան տարբերակ է նաև **ռաբբան** կամ **ռաբբոն**, որից էլ գալիս է **ռաբբունի**-ն: Մատթեոսի Ավետարանում ոչ միայն տրվում է այդ անվան բացատրությունը, այլև մեկնաբանվում. «Սիրում են ընթրիքների ժամանակ պատուով տեղերը, ժողովարաններում՝ նախապապի աթոռները եւ հրապարակներում ողջոյններ առնել ու մարդկանցից կոչուել **ռաբբի**, որ նշանակում է **ուսուցիչ**: Բայց դուք որեւէ մէկին ուսուցիչ մի՛ կոչէք, որովհետեւ ձեր ուսուցիչը մէկ է, եւ դուք բոլորդ եղբայրներ էք... Եւ ուսուցիչներ չկոչուէք, որովհետեւ **Քրիստոս է ձեր ուսուցիչը**» (Մտթ. ԻԳ 7, 8, 9): Հովհաննի Ավետարանում պատվանունն ուղղակի տրվում է Հիսուսին. «Ասէ ցնա Յիսուս, Մարիամ: Եւ նա դարձաւ եւ ասէ ցնա Եբրայեցերէն, **Րաբունի**, որ թարգմանի **վարդապետ**» (Ա-3), «Յիսուս նրան ասաց՝ Մարիա՛մ: Եւ նա դարձաւ ու եբրայերէն նրան ասաց՝ **Ռաբբունի՛** (որ թարգմանում է՝ **վարդապետ**)» (Հվի. Ի 16, Ա-1):

Մարկոսի Ավետարանում Հիսուսին մեծահարուստ մեկը անվանում է **Վարդապետ** և ոչ մեկ անգամ. «Բարի՛ **Վարդապետ**, ի՞նչ պէտք է անեմ, որ յաւիտենական

³⁷³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 369:

կեանքը ժառանգեն» (Ժ 17): Հետաքրքիր է Հիսուսի պատասխանը. «Ինչո՞ւ ես ինձ բարի կոչում. բարի չէ ոչ ոք, այլ միայն՝ Աստուած»:

Ոչ մեկ անգամ Նոր Կտակարանում **Ռաբբի** և **Վարդապետ** պատվանուններով ժողովուրդը և առաքյալները դիմում են Հիսուսին. «Պեղրոս Յիսուսին ասաց. «**Ռաբբի՛**, լաւ է, որ մենք այսպէղ լինենք...» (Մրկ. Թ 4), «Կոյրը նրան ասաց. «**Վարդապետ՛**, աչքերս թող բացուեն» (Ժ 51), **Ռաբբի՛** ԺԱ 21, Հվի. Ա 38, 49, Դ 31:

Իշխան, Առաջնորդ (հուն.՝ ἡγεμόνος, ասոր.՝ ܐܘܘܪܝܢܐ **Հրդմոնա**, ռուս.՝ **Вождь**):

Գրաբար և արևմտահայերեն ու արևելահայերեն բնագրերում *Մատթեոսի Ավետարանում* տրվում է **իշխան՛** փոքրատառ գրությամբ. «... ի քէն ելցէ ինձ **իշխան**, որ հովուեսցէ զժողովուրդ...» (Բ 6), որը ռուսերեն համարժեքում ներկայացված է որպէս **Вождь** – *Առաջնորդ*:

Ալֆա և Օմեգա: Հունական այբուբենի առաջին ու վերջին տառերն են, որոնք խորհրդանշում են Հիսուսի սկիզբն ու վախճանը. «Ես եմ **Ալֆան և Օմեգան**» (Հյտն. Ա 8):

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

Սուրբ Հոգի (հուն.՝ πνεῦμα τὸ ἅγιος, ասոր.՝ ܩܘܕܫܐ ܕܩܘܝ *Ռուխա դ Կուդշա*, ռուս.՝ Святой Дух, Дух Божий, Дух Господень):

Աստվածաշնչում **Հոգի** բառի կիրառությունները անցնում են մի քանի հարյուրից (460), և այդ բոլոր գործածություններում պետք է տարբերակել **հոգի, Հոգի, Աստու Հոգի, Հոր Հոգի, Տիրոջ Հոգի, Սուրբ Հոգի, Ճշմարտության Հոգի** անվանումները³⁷⁴:

Հոգի բառի տարբեր իմաստային դրսևորումներ կան. *Սուրբ Գրքում* բառն ունի ամենատարբեր իմաստային կիրառություններ՝ *շունչ, մարդկային հոգի*: Բայց մինչ **Սուրբ Հոգին**, Հին Կտակարանի տարբեր գրքերում, սկսած *Ծննդոցից*, նախ և առաջ **Հայր Աստու Հոգին** է, որ ամենասկզբում տարածվում է ջրերի վրա. «*Երկիրն անձև ու անկազմ էր, խաւար էր տիրում անհունի վրայ, եւ Աստու հոգին շրջում էր ջրերի վրայ*» (Ծն. Ա 2/Ա-3), *Թվոց ԻԳ 7-ում՝ Հոգի աստուծոյ. «Եւ եղև Հոգի Աստուծոյ ի վերայ նորա...»*: Այն մեկ այլ դեպքում կկոչվի **աստվածեղեն Հոգի**. Ելից ԼԱ 3-ում տրվում է **Հոգին**. «*Եւ լցուցի զնա աստուածեղէն Հոգով իմաստութեան եւ հանճարոյ եւ գիտութեան ամենայն գործոյ...* (Բեսելիէլի մասին), Թվ. ԺԱ 25, 26, Թվ. ԻԷ 18-ում. «*Առ դու քեզ զՅեսու որդի Նաւեայ, զայր յորում գոյ Հոգի, եւ դիցես զձեռս քո ի վերայ նորա*», և ապա՝ **Տիրոջ հոգին**. «*Եւ Հոգի Տեառն զօրացոյց զԳեղէրն*» (Դտ. ԺԱ 29): Այդ Հոգին՝ որպես Հայր Աստված հաղորդակցվում է. «**Հոգի Տեառն խօսեցաւ յիս, եւ բան նորա ի լեզուի իմում**» (Բ Թգ. ԻԳ 2): Ապա նաև՝ «*Քանի որ ոչ թէ դուք էք, որ պիտի խօսեք, այլ ձեր Հօր Հոգին, որ պիտի խօսի ձեր միջոցով*» (Մտթ. Ժ 20):

Հայերեն **Հոգի Աստուծոյ** և **Հոգի Տեառն** կապակցություններին համարժեքներ են ռուսերեն տեքստերում **Дух Божий** և **Дух Господень**: Սրանք **Սուրբ Հոգի** անվանմանը նույնարժեք չեն:

Ինչպե՞ս աստվածային Հոգին ներհյուսվեց Սուրբ Երրորդության երրորդ անձին՝ *Սուրբ Հոգուն*:

Այնուհետև այդ **Հոգին** Աստված դրեց այն մարդկանց մեջ, ովքեր պետք է ծառայեին Վկայության խորանում. «*Իսրայէլացի ծերերի միջից ինձ համար հավաքի՛ր եօթանասուն տղամարդ, որոնց ճանաչում ես իբրեւ ժողովրդի մէջ ամենածեր մարդիկ*:

³⁷⁴ Ի դեպ, ՏԵ-ն *Дух* ընդհանուր բառացանկից առանձնացված ներկայացնում է *Дух Божий, Дух Господень, Святой Дух* կապակցությունները, էջ 338:

Նրանց կը բերես վկայութեան խորան, եւ նրանք այնտեղ կը կանգնեն քեզ հետ: Ես (Աստուած) կ'իջնեմ այնտեղ, կը խօսեմ քեզ հետ եւ քեզ փրկածս ոգուց (ի Հոգւոյդ, Ա-1)³⁷⁵ կ'առնեմ ու կը դնեմ նրանց մէջ...» (Ա-3. Թվ. ԺԱ 16, 17, 25): Այդ հոգին չունի միս ու արյուն, այն Աստծու անբաժանելի մասն է, եթե ոչ էութիւնը. «Քայց կը գայ ժամանակը, եւ արդեն իսկ եկել է, երբ ճշմարիտ երկրպագուները կ'երկրպագեն Հօրը հոգով եւ ճշմարտութեամբ, քանի որ հայրն էլ իրեն այդպիսի երկրպագուներ է ուզում: Հոգի է Աստուած, եւ նրա երկրպագուները պէտք է հոգով եւ ճշմարտութեամբ երկրպագեն» (Հվի. Դ 23,24): Հոգին այնուհետև պետք է անցնի Հիսուսին. «Քանի որ նա, ում Աստուած ուղարկեց, Աստծու խօսքերն է խօսում. որովհետեւ Աստուած Հոգին փալիս է առանց չափի: Հայրը սիրում է Որդուն եւ ամէն ինչ փութել է նրա ձեռքը: Ով հաւատում է Որդուն, ընդունում է յաւիտենական կեանքը, իսկ ով չի հնազանդում Որդուն, կեանք չի տեսնի, այլ նրա վրայ կը մնայ Աստծու բարկութիւնը» (Ա-3, Հվի. Գ 34, 35): Հորից և Որդուց Սուրբ Հոգին անցնում է առաքյալներին. «Իսկ **Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին**, որին Հայրը կ'ուղարկի իմ անունով, նա ձեզ ամէն բան կ'ուսուցանի եւ ձեզ կը յիշեցնի այն ամէնը, ինչ ես ասացի ձեզ» (Հվի. ԺԴ 26): Ինչպես տեսնում ենք, բերված օրինակում Սուրբ Հոգին բացահայտվում է իբրև **Մխիթարիչ**, որը դառնում է ոճանում Սուրբ Երրորդութեան երրորդ էութեան համար: Ընդ որում, ոչ միայն այդ օրինակում. «Եւ ես աղաչեցից զՀայր, եւ այլ **Մխիթարիչ** փացէ ձեզ» (Հվի. ԺԴ 16): Անուղղակիորեն Հիսուս իրեն ևս համարում է **Մխիթարիչ**³⁷⁶: Համեմատությունը ռուսերենի **Утешитель**, ասորերենի **Փառակլեպա** և հունարենի՝ **Παράκλητος** համարժեքների հետ ցույց է տալիս, որ թարգմանական որևէ հակասություն չկա:

Աստուածաշնչի տարբեր գրքերում Սուրբ Հոգին գործածվում է նաև առանց Սուրբ բաղադրիչի: Դրա փոխարեն հաճախ **Սուրբ Հոգին** ներկայանում է **Ճշմարտութեան Հոգի** (հուն.՝ πνεῦμα τῆς ἀληθείας, ռուս.՝ **Дух Истины**) տարբերակով. «Երբ որ գայ նա՝ **Ճշմարտութեան Հոգին**, ամենայն ճշմարտութեամբ կ'առաջնորդի ձեզ» (Հվի. ԺԶ 13):

Եսայու մարգարեության մեջ հոգին դառնում է **իմաստության և հանճարի հոգի**՝ ներհյուսվելով Աստծու էութեանը. «Նրա վրայ պիտի իջնի Աստծու հոգին,

³⁷⁵ Համամիտ չենք, որ արևելահայերենում *հոգին ոգի* է թարգմանված, մանավանդ որ հենց Սուրբ Գրքում խոսվում է դրանց տարբերակման մասին (Ա Թես. Ե 23, Եբր. Գ 12):

³⁷⁶ См. в *Греческо-русский словарь Нового Завета*, Перевод **Баркли М. Ньюмана**, М., 1997, էջ 158:

իմաստության և հանճարի հոգին, խորհրդի և զորության հոգին, գիտության և աստվածապաշտության հոգին. Աստծու երկիւղի հոգին պիտի լցնի այն» (Ես. ԺԱ 2):

Եսայու մարգարեության մեջ նաև՝ **Դատաստանի և այրման հոգի**. «Տերը Սիոնի և Երուսաղեմի տղաների ու աղջիկների աղտեղութիւնը պիտի լուանայ, **դատաստանի հոգով և այրման հոգով** արիւնը նրանց միջից պիտի սրբի» (Ես. Դ 4), իսկ Հռովմեացիների Ը 2-ում արդեն՝ **կյանք տվող հոգի**. «Որովհետև Քրիստոս Յիսուսով կեանք տուող հոգու օրէնքը ինձ փրկեց մեղքի եւ մահուան օրէնքից»: Եվ ի վերջո՝ **Հավիտենական Հոգի**. «Եթե ցուլերի ու նոխազների արիւնը և երինջների շաղ տրված մոխիրը մաքրում են պղծուածներին մարմնի մաքրության համար, որչա՛փ առավել արիւնը Քրիստոսի, որ **յաւիտենական Հոգու** միջոցով ինքն իրեն պատարագ մատուցեց Աստծուն...» (Եբր. Թ 14):

ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

Իգական եբրայական այս անունը հայերեն թարգմանություններում տրվում է **Մարիամ**՝ մասամբ հունական, մասամբ՝ եբրայական ձևով (եբր.՝ *Միրիամ*, հուն.՝ **Μαρία**, ռուս.՝ Мария): Ասել է թե՛ հայերեն տարբերակը միահյուսում է անվան երկու ձևերն իր մեջ:

Անվան իմաստները բազմաթիվ են՝ ըստ Մխիթար Սեբաստացու՝ «բարձրացեալ կամ դառնութեան ծով, կամ զմոռս ծովու, կամ ուսուցիչ, կամ տիրուհի ծովու, կամ լուսաւոր, կամ լուսապայծառ»³⁷⁷: Հր. Աճառյանը բերում է այս իմաստների մի մասի աղբյուրները. *Լուսավորյալ* (Տաթևացի, Հայսմ.), ըստ *Գիրք Առաքելոցի՝ ծովի աստղ*, արաբերենում դարձել է հասարակ անուն և նշանակում է *պարկեշտ, համեստ*³⁷⁸: Երբեմն ստուգաբանում են *Աստուց սիրված*³⁷⁹ կամ ուղղակի՝ *սիրելի*, ինչպես նաև՝ *հասարակամոլություն*³⁸⁰:

Մարիամ անունը կրող մի քանի գործեղ անձինք կան *Սուրբ Գրքում*:

Ըստ *Աստվածաշնչի՝ Մարիամ* անունը կրող առաջին անձը Մովսեսի և Ահարոնի քույր Մարիամն է. «*Եւ առ Ամրամ Յովքարէթ դուստր եղբօր հօր իւրոյ իւր կնութեան եւ ծնաւ նմա զԱհարոն, եւ զՄովսէս եւ զՄարիամ (հուն.՝ και Μαριαμ) քոյր նոցա* » (Ել. 2 20): Անունը անցել է եբրայերենին հին եգիպտերենից *Մարիե* ձևով³⁸¹:

Այս անունը կրող մյուս անձերը ավետարանների հերոսներն են՝ **Մարիամ Մագթաղենացին** (Մտթ. ԻԷ 56, 61, ԻԸ 1, Մրկ. ԺԵ 40, 47, Ղկ. Ը 2, ԻԴ 10, Հվհ. ԺԹ 25, Ի 1, 11), Հակոբոսի և Հովսեփի մայր **Մարիամը** (Մտթ. ԻԷ 56, ԻԸ 1, Մրկ. ԺԵ 40, Ղկ. ԻԴ 10), Մարթայի քույր **Մարիամը** (Ղկ. Ժ 39, ԺԱ, Հվհ. ԺԱ 1-2, 28), Մարկոս ավետարանիչի մայր Մարիամը (Հվհ. ԺԱ 45):

Իսկ այդ բոլոր անունների մեջ առավել քան կարևորվում է **Աստվածամայր Մարիամը**՝ ծագումով Դավիթ թագավորի ցեղից՝ Հովակիմի և Աննայի դուստրը: Ահա թե ինչու հայ բանաստեղծները նրան ուղղակի համարում են **Դավիթ թագավորի դուստր**: Բնակվել է Նազարեթում, որտեղ էլ Գաբրիել հրեշտակապետը նրան բերում է

³⁷⁷ Տե՛ս ԲՅԱ, էջ 143:

³⁷⁸ Տե՛ս Հր. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Գ, էջ 249:

³⁷⁹ Տե՛ս Ռոբերտ Բեքիաուս, *Աստվածաշնչի անձինք*, էջ 20:

³⁸⁰ Տե՛ս *Ավետարանների գործող անձինք*, Ռ. ար. Զարգարյան, Շ. ար. Անանյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Ս. Էջմիածին, 2010, էջ 105-115:

³⁸¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 107:

մեծ ավետիսը՝ Աստծու որդուն աշխարհ բերելու³⁸²:

Հիսուսն իր առաջին հրաշքը՝ ջուրը գինու վերածելու, կատարում է մոր՝ Մարիամի հորդորով (Հվհ. Բ 2-11), և Հիսուսի երեքամյա գործունեության ընթացքում նա հաճախ է հիշվում: Հիսուսին խաչելիս նա որդու կողքին լուռ տանում է նրա բոլոր չարչարանքները առանց ցասման ու նզովքի: Որդու խաչելությունից հետո նա ապրում է Հովհաննես առաքյալի մոտ. վերջինիս էր վստահել Հիսուսը իր մորը ամենավերջին պահին: Հիսուսից հետո Մարիամը ապրում է ևս տասնհինգ տարի:

Մարիամը ամենամեծ բարեխոսն է աշխարհիս վրա, հավերժական մայրը ողջ քրիստոնյա աշխարհի: Սուրբ կույս, որի մականունները՝ *Դշխուհի, Երանուհի, Թագուհի, Իսկուհի, Մաքրուհի, Սրբուհի, Տալիթա, Տիրուհի*, հետագայում դարձան անձնանուններ, որը ընդմիշտ դարձավ ու մնաց Աստվածածին և Տիրամայր, Սուրբ կույս, որին են նվիրված մեր հայ եկեղեցու յոթ տոներ՝ **Հղության, Ծնունդի, Ընծայումի, Ավետումի, Ննջումի, Վերափոխման:**

Առաքել Սյունեցին *Ադամգիրք* պոեմում, նկատի ունենալով աստվածաշնչյան մեկնությունը՝ ըստ որի Եվան, ճաշակելով արգելված պտուղը, դարձել է «մայր ամենայն մահկանացուաց», իսկ Մարիամը՝ որպես Հիսուս Քրիստոսի մայր, որպես ծնող Փրկչի, հակառակ Եվայի, կոչվել է «*Մայր ամենայն կենդանեաց*», վերարտադրել է նույն միտքը բանաստեղծորեն. «*Եւա մեզ մահ ծընաւ կըրկին, Իսկ Մարիամ զկեանքըն անքընին*»: «*Եւա կըրեաց մահ ցաւալի, Իսկ Մարիամ՝ զկեանք բարելի*»:

Բուն աստվածաշնչյան բնագրում՝ նորկտակարանյան շարադրանքում, Մարիամը ներկայացվում է **մայր Հիսուսի** (հուն.՝ *τῆ μητρὶ τοῦ Ἰησοῦ*, ասոր.՝ *ܡܝܪܝܡ ܡܝܬܪܐ ܕܡܫܝܚܐ* **Ըմեհ Դմշիխա**, ռուս.՝ *Мать Иисуса*) (Գրծ. Ա 14) **մայր Աստծո, Թագուհի երկնից:** Մինչդեռ սկզբնապես նա **Կույսն** է (հուն.՝ *παρθένος*, ասոր.՝ *ܦܪܝܘܬܐ* **Բթուլթա**, ռուս.՝ *Дева*), այն **կույսը**, որի մասին հիշատակվում է դեռ Հին Կտակարանում. «*Ահա կույսը պիտի յղիանայ ու որդի ծնի, եւ նրա անունը պիտի լինի Էմմանուէլ*» (Ես. Է, 14), և նույնը կրկնվում է *Մատթեոսի Ավետարանում* (Ա 23):

Մարիամին տրված մականունները շատ են բոլոր քրիստոնյա ժողովուրդների

³⁸² Մարիամի՝ Աստծուն փառաբանող երգը՝ «*Մեծացուցեն*», որը երգեց նա իր ազգականուհի Եղիսաբեթին այցի գնալիս, ցույց է տալիս նրա անսահման սերն ու նվիրվածությունը Աստծուն: Մարիամի անուսինը՝ Հովսեփը, որը նույնպես սերում էր Դավթի ցեղից, խոնարհությամբ է ընդունում այդ լուրը:

թե՛ կրոնաեկեղեցական, թե՛ պատմական և թե՛ գեղարվեստական գրականության մեջ: Եվ դա միանգամայն բնական է. նա **Աստվածածին** (Θεότοκος) է ու **Աստվածամայր**, և այդ մականունները անբաժանելի են *Մարիամ* անունից: *Նոր Կտակարանում* այս անվանումները չկան, այսինքն՝ դրանք ստեղծվել են *Սուրբ Գրքի* ազդեցությամբ, բայց ավելի ուշ աստվածաբանական գրականության մեջ: Բացատրական բառարանները այս բառերը բացատրում են իհարկե մի քանի նշանակությամբ՝ *Աստուծո՛ւ ծնող*, *աստվածամայր*, իբրև մակդիր, մականուն Քրիստոսի մոր՝ *Մարիամի*: Անունը հաճախ գործածվում է հենց *Աստվածածնի վերափոխման տոնի* փոխարեն, և վերջապես բազում եկեղեցիներ կոչվում են հենց *Աստվածածնի անունով*³⁸³: ՆԲՀԼ-ն տալիս է այս բառերի առաջին կիրառությունները՝ Նարեկացի, Սկևռացի, իսկ միջնադարյան շարականաերգության մեջ ունենք.

«Մարգարեների հանդիսարան եւ մարդկանց կյանքի գրավական, Մարիա՛մ Աստվածամայր, Ընդունող յոթնարփյան շնորհների, հույսի հաստատության խարխիս...» (Շար., 22):

Մովսես Խորենացի՝ *«Զքեզ, Աստուածածի՛ն, Աղբիր անսպառ լուսոյն...»* :

Գրիգոր Նարեկացի՝ *«Աղաչեմ զքեզ, սու՛րբ Աստուածածին, Հրեշտակ ի մարդկանէ, մարմնաբեւսիլ քերորէ, երկնաւոր արքայուհի, Անխառն իբրեւ զաւղ, մաքուր որպէս լոյս. Անշաղախ՛ ըստ նմանութեան պարկերի արուսեկին բարձրութեան...»*:

Քիչ չեն նաև ժամանակակից գրականության մեջ Աստվածամորը նվիրված խոսքերը ոճական ամենատարբեր դրսևորումներով՝ համեմատություն, փոխաբերություն.

Կ. Զարյան՝ *«... և քարերի վրա փռված, կարմիր ու վառ շրթներով, փսփսում է Աստվածամոր ականջին մի աղոթք»*:

Ռ. Դավոյան՝ *«Կյանքը մեզ համար Անկապ-անկապանք ստինքն էր մեր մոր՝ Մեր Աստվածամոր (Մենք աստված էինք)...»*:

Գ. Ադդարյան՝ *«Կարծես ըլլաս Աստվածամայր բարեգութ, Ես՛ ջերմեռանդ աղոթող»*:

Վ. Մուղնեցյան՝ *«Կապույտի մեջ հայտնվում է ձեռքն իմ եղբոր՝ Կրծքին սեղմած լոյս-թիկնոցը Աստվածամոր, Որից ծորում, թափվում են ցած շիթեր բուրյան...»*:

Ներսես Վանական՝ *«Մի վանք լիներ՛ հեռանայի Եվ առանձին աղոթեի,*

³⁸³ Տե՛ս Ստ. Մալխասյանց, ՀԲԲ, հ. 4, էջ 277:

Աշխարհն ամեն մոռանայի, Ներքին աշխարհ որոնեի: Վանքի կտրին, մի փառ անկյուն
Թող քաշվեի ու քնեի, Երագիս մեջ **Աստվածամոր** Լուսե դեմքը վայելեի»:

Աստվածածին-ի համաբանությամբ Մարիամին տրված մականուններից է **Տիրածին**-ը, որը խոսքիմասային պատկանելությամբ ածական է՝ *Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին ծնող, աստվածածին նշանակությամբ*:

Հիսուս անվանվում է նաև *Հիսուս Քրիստոս Աստված կամ Որդի Աստված*: Ուստի միանգամայն բնական է Մարիամին **Աստվածամայր** մականվամբ մեծարելը: Եփեսոսի Տիեզերական երրորդ ժողովը (431թ.) Մարիամին պաշտոնապես ճանաչեց *Աստվածամայր*, որի երկրպագությունը գնալով հասավ անհամեմատելի չափերի:

Մարիամին տրված մականուններից է դառնում այս անգամ *Աստվածամայր* բառի համաբանությամբ **Տիրամայր**-ը:

Հայ եկեղեցին, մեր քրիստոնյա շարականագիրները Մարիամին մեծարեցին բազմաթիվ անուններով՝ **Երանուհի, Սրբուհի, Դշխուհի (Դշխո), Թագուհի, Իսկուհի, Մաքրուհի, Տիրուհի**³⁸⁴: Այդ անուններում իր գործառույթներով առանձնանում է **Սրբուհի**-ն, որն ըստ բառարանների՝ բացատրվում է իբրև *սուրբ անձ իգական սեռի, սուրբ կին, վկայուհի, կին-նահապակ* և որպես այդպիսին կարող է մականուն կամ մակդիր դառնալ նաև այլ կանանց՝ *Սրբուհի Հռիփսիմե*: Հատկապես մակդիր է դառնում Մարիամ Աստվածածնի համար:

Հայ բանաստեղծության բնագրերը հավաստում են, որ **Սրբուհի**-ն նախ և առաջ անվանում է Մարիամին, մակդիր է Մարիամի համար, ինչպես Խաչատուր Կեչառեցու բանաստեղծության մեջ՝ *«Սրբուհի՛ Մարիամ՝ կո՛յս աստուածածին...»*:

Երանուհի-ն Մարիամ Աստուածածնին տրված մականուն է, որից էլ հետագայում սկսում է տարածվել *Երանուհի* իգական անձանունը՝ հատկապես միջնադարյան բանաստեղծների գործածությունների շնորհիվ:

Բարսեղ վարդապետը գրում է. *«Երանուհի մայր, պարծանք կուսութեան, Մարիամ, փաճար Տեառն Յիսուսական»*:

Ասապովի բանաստեղծության մեջ կարդում ենք. *«Կո՛յր Ասապով, աղքա՛յր հոգի, Չքեզ աղաչե, Երանուհի՛, Տիրամայր, Տիրամայր»* (ՈՒՄԲ, հ. 2, 305):

³⁸⁴ Անունների մասին մանրամասն տե՛ս **Հր. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, և Փ. Մելքի-խանյան, *Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան*:

Մերօրյա անվանարանում սովորական կիրառություն ունեցող **Թագուհի**-ն Մարիամ Աստվածածինն տրված անուններից մեկն է, որի գործածություններից բերենք մի քանիսը.

«*Երեսիդ փափագ, Ջօրքն վերնական, Էրանեալ, Ընտիր Թագուհի աննման, Ժառանգող դրախտին և արքայութեան, Մեղա՛յ քեզ, մեղա՛յ, կո՛յս անապական*» (Վանեցի, ՈՒՄԲ, հ. 1, 56):

«*Դու Թագուհի, Որդիդ յերկնից թագաւոր, Քան զքերովբէսն գտար բարձր և փառաւոր*» (Խաչատուր Խասպեկ, ՈՒՄԲ, հ2, 145):

«*Ուարի մաղթեմ աղերսալի, Կո՛յս Մարիամ սուրբ Թագուհի*» (Ե. Ղափանցի, ՈՒՄԲ, հ. 2, 549):

Մարիամ Աստվածածինն տրված անվանումներից է **Տիրուհին**, որը հայ միջնադարյան բանաստեղծության մեջ հանդիպում է և՛ որպես հասարակ, և՛ որպես հատուկ անուն, ինչպես՝ Շարականում՝ «*Կենաց ծառ ծաղկած Տիրուհի՛, Որ ժամանակին մարդկանց պտուղ տվիր՝ Երկնքից իջած կենաց ծառը*»: Գրիգոր Նարեկացին գրում է. «*Բարեխաւսութեամբ ամէնաաւրինեալ տիրուհւոյ...*»: «*Գովենք զքեզ, տիրուհի՛ անարար, մա՛յր Տեառն եւ Կո՛յս Մարիամ*», Ներսես Շնորհալին՝ «*Տիրուհի՛ սուրբ Կոյս, մա՛յր մարմնացելոյ Բանին, Մաքուր կուսութեամբ ծընար տրղայ ըզՏէրն*», Խաչատուր Կեչառեցին՝ «*Աստուածածի՛ն, սուրբ կո՛յս Տիրուհի, Բարեխօսեա՛ որդւոյդ միածնի*», Առաքել Սյունեցին՝ «*Բուրմունք խընկալի, հոյք քո նարդոսի, Անթառամ ծաղիկ Մարիամ, չըքնա՛ղ Տիրուհի*»:

Իգական արամեական³⁸⁵ անուն է **SULHԹԱ**-ն (հուն.՝ *Ταλιθα*) հունական տառադարձությամբ, որ նշանակում է *աղջիկ*³⁸⁶, և *Աստվածաշնչում* գործածվում է միայն մեկ անգամ՝ ակնարկելով կոյս Աստվածածինն և դրանով դառնում Մարիամ Աստվածածինն տրված մականուններից մեկը. «*Ասէ ցնա. Տալիթա՛ կումի, որ թարգմանվում է. Ո՛վ աղջիկ, վեր կաց*» (Մրկ. Ե 41): Հետագայում այս անունը դառնում է իգական անձնանուն և ունենում է սովորական գործածություն:

³⁸⁵ Արամ անունը *Աստվածաշնչում* նկատի է առնում Ասորիքը: Սա նաև տարածվում է Միջագետքի և Ասորեստանի վրա: Նոյի Սեմ որդու յոթերորդ զավակի անունն է, որից և այդ երկրների ժողովուրդները անվանվել են *արամեացիներ*, իսկ *արամերենը* կամ *արամեերենն* էլ դառնում է Առաջավոր Ասիայի ակտիվ գործածվող լեզուներից մեկը:

³⁸⁶ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, էջ 135:

5.3. Կուռք, դիք, չաստված և դրանց անունները

Հին Կրակարանը ընթերցողին առատ նյութ է մատուցում կռակաշտության մասին, և դրա զանազան դրսևորումները իրենց արտացոլումն են գտել հենց կուռքերի անուններում, որոնք բազմաթիվ են ու բազմաբովանդակ³⁸⁷:

Յոթանասնից բնագիրը հեթանոսական **կուռքի** դիմաց դնում է **եւծօլ** (երբեմն՝ **Յեօ՛ճ**), ասորերենը՝ **ܐܕܠܐ** **սալմա**, ռուսերեն տեքստը մեծ մասամբ փոխառում է հունական տարբերակը՝ **идол**, երբեմն նաև՝ **кумир**, երբեմն՝ **бес**, երբեմն՝ **бог** (НЖБ), իսկ **դիք**, **չաստված** (**աստված**), **բագ**, **դև**, **դի**, **տի** անունների դիմաց՝ հունարենում հիմնականում՝ **թեոս**, ռուսերենում՝ **бог/и**: Հայ հեթանոսական դիցարանում Արամազդը, Արան, Միհրը, Հայկը, Անահիտը, Աստղիկը և այլք նախ և առաջ **դիցեր** և **դիցուհիներ** են անվանվում, բայց նաև աստվածներ և աստվածուհիներ³⁸⁸:

Մեզ համար առաջնայինը **կուռք**, **դիք**, **չաստված**, նաև **դև** անունների քննությունն է սուրբգրային տեքստերում, դրանց իմաստային դրսևորումները, միմյանց հետ զուգորդելիությունը: Ի՞նչ անուններով են դրանք տրվում *Աստվածաշնչի* տարբեր գրքերում, ի՞նչ տարընթերցումներ ունեն, ինչպիսի՞ն է հայ թարգմանիչների վերաբերմունքը այդ անունների հանդեպ և, վերջապես համապատասխանո՞ւմ են դրանք հայերեն տարբեր թարգմանություններում՝ Ա-1 (գրաբար), Ա-2 (արևմտահայերեն), Ա-3 (արևելահայերեն), ինչպես նաև հունարեն և ռուսերեն բնագրերում:

Իսրայելի նախնիները պաշտել են տարբեր աստվածների: Հնագիտական պեղումներով հայտնաբերվել է մի տախտակ, որի երկու կողմում նշված է ավելի քան 150 աստվածության անուն³⁸⁹: Մեկին վերագրել են արևի շարժումը, մյուսին՝ լուսնային փուլերի փոփոխությունը, երրորդին՝ ամպրոպի և փոթորկի առաջացումը: Եվ հետաքրքիրն այն է, որ եբրայեցիները չեն ունեցել ազգային կուռք և հետևել են այլ ազգերի

³⁸⁷ Տե՛ս 1. **Ղևոնդ Ալիշան**, *Հին հաւաքք կամ հեթանոսական կրօնք հայոց*, Վենետիկ, Ս. Ղազար, 1910: 2. Проф. **Гр. Капанцяан**, Хеттские боги у армян в связи с хеттским влиянием на армян и генезисом армянского пантеона вообще, изд. Гос. Университета, Ер., 1940.

³⁸⁸ Տե՛ս **Արծ. Սահակյան**, «Աստվածը»՝ քրիստոնեական կրոնամշակութային համալսելքային նշան» հոդվածը, «Հայ աստվածաբան», գիտ. հոդվ. ժող. Բ, Եր., 2008, էջ 7-12:

³⁸⁹ Տե՛ս **Ա. Կայայան**, *Հին Կրակարանի ներածություն* (ՀԿՆ), էջ 44:

կռապաշտությանը: Եգիպտոսում եղած ժամանակ պաշտել են եգիպտացիների աստվածներին (Եզկ. Ի 8), անապատում եղած տարիներին՝ քանանացիների և եգիպտացիների, ամոնացիների և մովաբացիների կուռքերին, Հրեաստանի մեջ՝ փյունիկիացիների կուռքերին, այնպես որ *Աստվածաշնչում* մեկտեղված են բաբելոնացի, եգիպտական, փյունիկյան և այլ կուռքերի պաշտամունքներ: Եվ պաշտել են ամեն տեսակ կուռքերի՝ մարդու, կենդանու, ոգիների, գետերի, ծառերի, դաշտերի՝ նկարված կամ քանդակված, դրոշմված կամ ձուլված, ամեն տեսակ նյութից պատրաստված՝ քարից, փայտից, խեցուց, ոսկուց, պղնձից ու արծաթից: *Բառարան Սուրբ Գրոցը*-ը տալիս է հետևյալ մեկնությունը. «Կուռք բառը կը նշանակե պատկեր կամ նմանութիւն կռածոյ: Ի *Սուրբ Գիրս* կը գործածուի միշտ նշանակելու որևիցէ դից, այսինքն՝ չաստուածոյ մը պատկեր»³⁹⁰:

Ելից գրքում (բուն *Աստվածաշնչում* այս գիրքը ընդգծված կարևորություն ունի) Աստված Մովսեսին ոչ միայն բացում է իր անունը, այլև տասը պատվիրանների հենց սկզբում հստակ առանձնացնում է իրեն այլ աստվածներից, բայց նրանց կուռք չի անվանում. հաջորդ իսկ նախադասության մեջ արդեն կուռքը տրվում է, բայց այլ, ավելի նյութական իմաստով. «*Ինձնից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար: Վերելում՝ երկնքում, ներքելում՝ երկրի վրայ, եւ երկրի խորքի ջրերի մէջ եղած որևէ բանի նմանութեամբ քեզ կուռքեր չպիտի կերպես*» (Ել. Ի 3, 4 Ա-3): Ինչպես տեսնում ենք, հենց այս հատվածում արդեն **աստվածն** ու **կուռքը** թե՛ լեզվական, թե՛ իմաստային առումով տարբերակված են: *Յոթանասնիցի* այս նույն հատվածում համապատասխանաբար դրված են **աստվածներ** - θεοί և **կուռքեր** - εἰδωλον տարբերակները, *Պեշիթայում* 𐤀𐤌𐤃𐤀 **ալահե** 𐤀𐤎𐤊𐤍, **սալմե**: Ռուսերեն տեքստում դրված են **бог** և **кумир** տարբերակները: Վերջինս բացատրվում է որպես **կուռք** ուղիղ և փոխաբերական իմաստներով³⁹¹: Ընդ որում, ռուսերեն *Աստվածաշնչի* տարբեր գրքերում **կուռք** բառի դիմաց շատ քիչ դեպքերում է դրված **кумир**-ը (Բ Օր. ԻԹ 17): Հիմնականում կիրառվում է հունարենից փոխառյալ **идол**-ը, որը բառարանային իմաստով նույնանիշ է **кумир**-ին և կուռք է նշանակում: Այլ ձևակերպմամբ **կուռքը** մեծ մասամբ թանձրացական է, աստծու պաշտամունքի նյութական դրսևորումը երկրի

³⁹⁰ Տե՛ս *Բառարան Սուրբ Գրոց* (ԲՍԳ), Կոստանդնուպոլիս, 1881, էջ 286:

³⁹¹ Տե՛ս **Ար. Ղարիբյան**, *Ռուս-հայերեն բառարան*, Եր., 1982, էջ 423:

վրա, և դրա առաջին վկայությունը *Ծննդոց* գրքում (ԼԱ 19) է. «*Ռաբէլը գողացաւ իր հօր կուռքերը*» (հուն․՝ εἰδωλον, ռուս․՝ **идол**, գերմ․՝ **Götterfiguren**(ԼԱ 19)³⁹²):

Իսկ ինչպե՞ս են բացատրում **կուռք**-ը բառարանները: Ըստ ՀարմԲ-ի՝ սա խալդայան կամ կովկասյան փոխառություն է, կա գրեթե բոլոր կովկասյան լեզուներում³⁹³: Սա հոգնակի ձևն է **կուռ**-ի, որը բացատրվում է որպես՝ «կռած կամ կռածո քարե արձան՝ մարդկային կամ կենդանական կերպարանքով, որ հին ժամանակներում **իբրև աստվածների** (ընդգծումը մերն է- **ՓՄ**) պաշտում էին»³⁹⁴:

Բացատրության երկրորդ մասը բառը ուղղակիորեն կապում է **դիք, աստված** և **չաստված** ձևերի իմաստին: *Աստվածաշնչում* հարյուրից ավելի անգամներ (118՝ ըստ ՀԱ-ի³⁹⁵) գործածված է **կուռքը**, ընդ որում, բացարձակ մեծամասնությամբ *Հին Կտակարանում* (11 անգամ *Նոր Կտակարանում*): Բերենք մի քանի օրինակներ, որոնք հստակ փաստում են, որ բազմաթիվ անգամներ **կուռք, դիք, դև** անունները նույնարժեք են. «*Մի՛ երթայցէք զհետ կոռց*» (Ղևտ.), «*Վասն զի ամենայն աստուածք ազգաց կուռք են*» (Ա. Մն.), «*Ձոռեցին դիւաց և ոչ Աստուծոյ, դից՝ զորս ոչ գիտէին*» (Բ Օր.):

Աստվածաշնչում հանդիպում են և՛ **դիք**, և՛ **դև** անունները: Արդյոք դրանք համարժեք են: Ղևտնդ Ալիշանը ներկայացնում է այս անունները համեմատության մեջ. «Ձարմանալին այս է՝ որ նոյն և մի անուն՝ բոլորովին հակառակ նշանակէ շատ ազգաց մէջ, իբրեւ երկու դիմադէմ խումբ բաժնուած՝ զիրար ատող, մեր և Պարսկաց մէջ **Դեւ** կոչուածն՝ Հնդկաց, Յունաց, Լատինաց գերագոյն աստուածն է, Տեվաս, Ջեւ, Թէոս, Deus կոչմամբ»³⁹⁶: Եթե հետևենք *Սուրբ Գրքում* այդ բառերի գործածություններին, ապա կտեսնենք, որ որոշակի դեպքերում կուռքը համարժեք է դևին: Դա հաստատվում է *Սաղմոսների* գրքում. «...ամենայն **կուռք** հեթանոսաց **դեւք** են» (ՂԵ 5): Հունարեն բնագրում այդ նույն հատվածում **կուռքը** տրված է **θεοί**, իսկ **դեւքը՝ δαιμόνια** տարբերակներով, ասորերենում՝ **ܐܘܪܝܘܬܝܢܐ**:

Ողջ *Աստվածաշնչում* **չաստված**-ը (ռուս․՝ **ложбог, не бог**) կիրառված է ընդամենը երեք անգամ:

³⁹² Տե՛ս Gute Nachricht Bibel des Alten und Neuen Testaments, Deutsche Bibelgesellschaft, 1992:

³⁹³ Տե՛ս Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Եր., 1973, հ. Բ, էջ 662:

³⁹⁴ Մալխասեանց Ստ., *Հայերէն բացատրական բառարան*, հ. 2, 1943, էջ 484:

³⁹⁵ Տե՛ս Համարարբառ *Աստվածաշնչի*, Ս. Էջմիածին, 2012:

³⁹⁶ Ղևտնդ Ալիշան, նշվ. աշխ., էջ 230:

Դատավորների գրքի մի հատվածում հստակ տարբերակված են կուռքերն ու չաստվածները. կուռքերը դարձյալ երկրային են, չաստվածները՝ երկնային. «Դուք այս երկրի բնակիչների հետ դաշինք մի՛ կնքեք, ոչ էլ նրանց **չաստվածների** հետ, մի՛ երկրպագեք նրանց, այլ խորրակեցե՛ք նրանց **կուռքերը**, նրանց գոհասեղանները» (Բ 2)³⁹⁷: Նույն գրքի Բ 3-ում գրաբար բնագիրը տալիս է **դիք**՝ «Դիք նոցա եղիցին ձեզ ի գայթակղութիւն», արևմտահայերեն բնագրում՝ *անոնց աստուածները*, արևելահայերեն թարգմանության մեջ՝ *նրանց չաստուածները*: Հունարենում՝ *Յոթանասնիցում Թեօί* է տրված, ասորերենում՝ ܐܘܠܐܗܝܘܬܐ **ալահե**, ռուսերենում ևս տրվում է **богам**: Բնական է, որ այս պարագայում այս երեքը դառնում են հոմանիշ: Կարո՞ղ էին այս դեպքում հայ թարգմանիչները դնել **կուռք**, իհարկե ո՛չ: *Սուրբ Գրքում* հիշատակվում է նաև **Թերափք** կամ **Թերափիմք** (ասոր.՝ ܩܝܒܘܩܘܬܐ **փթափոտե**) եբրայական բառը, որը պահապան չաստվածներ են նշանակում³⁹⁸: *Դ Թագավորությունների* գրքում կարդում ենք. «*Եւ զվիուլս եւ զգէտս եւ զթերափիմս* (ռուս.՝ *терафим*) *եւ զկուռն...*» (ԻԳ 24):

Սուրբ գրքի բազմաթիվ օրինակներից հետևում է, որ **կուռք**, **դիք**, **չաստված** կամ աստված (հեթանոսական) անունները ունեն ինչպես իմաստային ընդհանրություններ, այնպես էլ հստակ ուրվագծված տարբերություններ³⁹⁹, որն ինչ-որ չափով արտահայտված է **դիք** բառի բացատրության մեջ: *Դիք* բառի համար բացատրական բառարանները տալիս են առաջին իմաստը՝ **հեթանոսական աստվածներ**, իսկ երկրորդ նշանակությամբ՝ **հեթանոսական աստվածների պատկերներ՝ արձաններ, կուռք**⁴⁰⁰: *Հին Կտակարանում դիքի՝* այս երկրորդ նշանակությամբ կիրառություններ չեն հանդիպում:

Դև բառի հոմանիշներն են **չարք**, **դևերի իշխան**, հրեաները նրան կոչում են **Բեեղզբուդ**, փղշտացիները՝ **չաստված**, նաև **Դեմոն**, հունարեն բնագրում **δαιμόνια**, ասորերենում՝ ܕܝܡܘܢܝܐ **դեվա**, ռուսերենում՝ **бес, злой дух**:

³⁹⁷ Այս հատվածը ասորերենի հետ բավական տարբերություններ ունի. չկա ո՛չ աստվածը, ո՛չ կուռքը:

³⁹⁸ Տե՛ս *Բառարան Սուրբ Գրոց*, էջ 219:

³⁹⁹ Միևնույն նշանակությունն արտահայտող այս տարբեր բառերի առկայությունը մտածել է տալիս, որ մարդիկ ձգտել են այն կատարելատիպին, որը սկզբում կերպավորվել է որոշ առարկաների տեսքով՝ ծառ, քար, ջուր, ապա ավելի ծավալվել՝ կրակ, երկնային լուսատուներ, արև, հետո արդեն՝ բազմաստվածություն: Միասնական երկնքի վերաբերյալ պատկերացումներն էլ հանգեցրել են միաստվածության գաղափարին:

⁴⁰⁰ Տե՛ս **Ղազարեան Ռ.**, Գրաբարի բառարան, հ. Ա, էջ 379, **Մալխասեանց Ստ.**, նշվ. բառ., հ. 1, Ա-Ե, էջ 531:

Ավետարաններում **դև** բառը բազմաթիվ անգամներ է հանդիպում, բայց որպես **սատանա** ընկալվում է **դևերի գլուխը**՝ սատանան և իր հրեշտակները⁴⁰¹:

Ըստ *Աստվածաշնչի*՝ Դ Թգ. ԺԷ 30-31-ում նկարագրվում են բազմաթիվ կուռքեր, որոնց պաշտում էին տեղի բնակիչները՝ բաբելացիները կառուցել էին **Սոքքոթն** ու **Բանոթը**, քուբացիները՝ **Անգեղը**, եմաթացիները՝ **Ասիմաթը**, այիացիները՝ **Աբլագերը**, **Ներասը**, **Թարթակն** ու **Սեփարուիմը**. սեփարուիմացիների պաշտած կուռքերն էին Ադրամելեքն ու Ամամելե(հ)քը, որոնց մարդիկ զոհում էին իրենց որդիներին՝ կրակի մեջ այրելով: Արևելահայերեն տեքստի այս թվարկումը չի համապատասխանում արևմտահայերեն տեքստին. կան որոշակի տարբերություններ: Բերենք ամբողջական հատվածը. «Եւ Բաբելացիք Սաքքովթ Բանոթը շինեցին, ու Քուբացիք Ներգաղը շինեցին, ու Եմաթացիք Ասիմաթը շինեցին, եւ աւացիք Ներասը ու Թարթակը շինեցին, ու Սեփարուիմացիք իրենց տղաքը Սեփարուիմացոց աստուածներուն՝ Ադրամելեքին ու Ամամելեքին համար կրակով կայրեին»:

Այս քաղաքում **Ասիմաթը** Սամարիա գաղթած եմաթացիների պաշտած կուռքն է՝ Դ Թգ. ԺԷ 30. «Եւ Եմաթի մարդիկը շինեցին Ասիմաթը»: **Ասիմաթ** (հուն.՝ **Ασιμαθ**, ասոր.՝ Աշիմա, ռուս.՝ Ашима) անունը ստուգաբանվում է երկու տարբերակով. **Ա** սկզբնատառով նշանակում է *արարող ջերմություն*, իսկ **Տ** սկզբնատառով՝ *հանցանք* կամ *դիրք*, կամ *ծովի հուր* (ԲՅԱ, 28): Կուռքը նմանություն է ունեցել նոխազի կամ կապիկի, կամ գառի, ուստի, ըստ ոմանց, բնութագրվում էր որպես այծամարդ կամ ձիացույ, այսինքն՝ ունեցել է խառնատեսակ կենդանատեսք:

Աստվածաշնչում բավական հաճախադեպ հանդիպում է **Աստարտ (Աստարտե, Աստարովթ)** (հուն.՝ **Ασταρωθ**, ասոր.՝ **ܐܨܬܪܬܐ Ըփռոթ**) կոչվող կուռքը: Ըստ *Աստվածաշնչի*՝ Թվ. ԼԲ 34-ում՝ հայերեն թարգմանությունների երեք տարբերակի դիմաց՝ **Աստարովթ** (Ա-1՝ գրաբար), **Ատարովթ** (Ա-2՝ արևմտահայերեն), **Ատարոթ** (Ա-3՝ արևելահայերեն), հունարենը և ռուսերենը տալիս են մեկ ձև (հուն.՝ **καὶ τὴν ἀσταρωθ**, ռուս.՝ **Атароф**), որը նույնանում է Ա-2 տարբերակի հետ: Բ Օր. Ա 4-ում՝ **Աստարովթ** (Ա-1 և Ա-2), **Աստարոթ** (Ա-3), (հուն.՝ **ἐν ἀσταρωθ**, ասոր.՝ **Ըփռոթ**, ռուս.՝ **Аштероф**), Հս.

⁴⁰¹ Պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլոր հրեշտակներն են բարի: Դևերը չար հրեշտակներ են, որոնք անվանվում են *սատանաներ* և *չարքեր*: Ավելի մանրամասն տե՛ս **Ղեւոնդ վրդ. Յովհաննիսեան, Հարցեր հոգևորականին**, Եր. 2013, էջ 29:

ԻԴ 33-ում՝ **զԱստարտն** և **զԱստարովթ**⁴⁰² (հուն.՝ **Αστάρτην και Ασταρωθ**), Դտ. Բ 13 (ասոր.՝ **Ըսթռաթա**, որ է՝ **աստարտինեթին**), Ա Թգ. ԼԱ 10...: Ինչպես նկատում ենք, այստեղ արդեն տարրնթերցում են տալիս նաև հունարեն բնագիրը՝ **Ασταρωθ** և **Αταρωθ**, ռուսերենը՝ **Астароф** և **Аштероф**:

Սա փյունիկյան աստվածուհու անունն է, որ բառացի նշանակում է, «*հողք կամ հարստությունք, կամ լրտեսք...*» (ԲՅԱ, 30)⁴⁰³, այսինքն՝ բոլոր դեպքերում անունը ստուգաբանվում է հոգնակի նշանակությամբ՝ ի տարբերություն ԲՍԳ-ի, որը տալիս է *աստղ* բացատրությունը (ԲՍԳ, 54): **Աստարովթ** ձևը հոգնակի է և մատնանշում է իգական կերպարանքով բազմաթիվ կուռքեր (ԲՅԱ, 30): Մեզ թվում է, որ ԲՅԱ-ի տրված բացատրությունները այս անվան հարցում ճիշտ չեն, մինչդեռ նույն բառարանը գլխաբառի վերջում անդրադառնում է նաև անվան *անտրառ* նշանակությանը. «...և զայս անուն էառ կամ վասն եղջերացն, զորս ունէր ի վերայ գլխոյն, կամ վասն համարեալ լինելոյն աստուած անտառաց, և կամ զի ի պատիւ նորա տնկէին զանտառախիտ ծառս, և պաշտէին զնա անդ» (նույն էջում):

Ծն. ԺԴ 5-ում հանդես է գալիս **Աստարովթ Կառնայիմ (երկեղջյուր Աստարտ)** քաղաքը (հուն.՝ **ἐν ἀσταρωθ καρναίμ**, ռուս.՝ **Аштероф-Карнаим**, ՅԵ, էջ 70⁴⁰⁴), որի անունը ԻՋԵ-ն բացատրում է նույն կերպ. «*Название холма в Галилее. Это название можно перевести как двурогоая Астарта. Символами Астарты (Аштерот) являлись полумесяц или луна с двумя лучами*»⁴⁰⁵: Փաստորեն անունը կապվում է **Աստարտ** անվան հետ. քաղաքում պաշտում էին Աստարտին երկեղջյուր կնոջ կերպարանքով:

Ռուսերեն աղբյուրները գտնում են, որ այս անունը (**Астартա**, **Астарте**, **Аштарот**) հունական է և համապատասխանում է բաբելական **Իշտարին**: Եբրայական տարբերակն է **Աշերա**, այսինքն՝ **երջանիկ**, **բախտավոր**: Նույն աղբյուրները ևս նշում են այս կուռքի՝ **երկնքի թագուհի**, **լուսնի աստվածուհի** համարվելը, այնպես, ինչպես Բահալն էր համարվում **արևի աստված** (ՅԵ, 59):

Մասնագետները այս երեք անունների վերաբերյալ տալիս են ընդարձակ

⁴⁰² Այս գործածությունը բացակայում է Ա-2՝ արևմտահայերեն բնագրում:

⁴⁰³ Տե՛ս *Բաղգիրք հայկազեան լեզուի*, **Մխիթար Աբբա**, 2, Վենետիկ, 1769: Հուր, մեծություն կամ փարթամություն է ստուգաբանում **Աստարովթ**-ը *Բաղգիրք Հայոցը*, էջ 34:

⁴⁰⁴ Տե՛ս *Энциклопедия Библейская* (2-е издание), Москва, 2004, *Симфония к синодальному изданию Библии*, Свет на Востоке, Корнсталь, Институт перевода Библии, Стокгольм, 1995.

⁴⁰⁵ Տե՛ս *Новая Женевская учебная Библия*, էջ 33:

բացատրություն, ըստ որի՝ սրանք *Աստվածաշնչում* հիշված կուռքեր են, որոնց պաշտամունքը հարևան ժողովուրդներից վերցրին իսրայելցիները Սինայի ճանապարհով անցնելիս: Աստարտը և Աստարովթը (առաջինը՝ հունական, երկրորդը՝ եբրայական) հաճախ նույնացվում են, թեև, թվում է, պետք է տարբերակվեին՝ նկատի ունենալով *Աստվածաշնչի* վկայությունը՝ «... և պաշտեցին որդիքն *Իսրայելի զԱստարտն և զԱստարովթ, և զաստրուածս ազգացն, որ շուրջ զնորք...*» (Հս. ԻԴ 33): Աստարտը միշտ հիշվում է Բահաղ անվան հետ՝ «... *պաշտեցին զԲահաղ և զԱստարտն...*» (Դտ. Բ 13), ուր **Աստարտ** հոգնակի ձևը նշանակում է Աստարտի արձաններ, պատկերներ: *Աստարտ* կամ *Աստարովթ* անունները հայերեն հաճախ թարգմանում են *անտառ, անտառներ*. «*Ի բաց արարէք զաստրուածս օտարոտիս ի միջոյ ձերմէ և զանտառսն, և պատրաստեցէք զսիրտս ձեր առ տէր...*» (Ա Թգ., Է 3): Համապատասխան հատվածը ռուսերեն թարգմանված է՝ «... *Удалите из среды себя богов иноземных и Астарм и расположите сердца ваше...*» (Ա Թգ. 7, 3): Հայերենը ոչ թե սխալ է թարգմանված, այլ բխում է Աստարտի պաշտամունքի ուղղակի, նախնական ընկալումից: Ղևոնդ Ալիշանը փորձում է հիմնավորել այդ նախնական ընկալումը. «... *Վսեմական բնական առարկայք՝ են Ծառերն, երբեմն և ահարկու՝ ուր թանձր Անտառ ձեւացընեն: Կարծէին հեթանոսք, կըսէ մեր մեկնիչ վարդապետաց մէկն, թէ ի ներքոյ անտառախիտ ծառոց են աստրուածք, կամ ի Խորածորս...*»⁴⁰⁶: Դեռևս Ծննդոց գրքում անտառը գործածվում է կրոնական պաշտամունքի համար. Ա-3՝ «*Աբրահամը Երդման ջրհորի մոտ ծառ (Ա-2-ում՝ ծառեր) տնկեց, այնտեղ պաշտեց Տիրոջը, նրան կոչեց Աստրուած յաւիտենական»* (ԻԱ 33): Հին Կտակարանում թերևս ոչ պատահական հայտնի են *Մամբրեի կաղնի*⁴⁰⁷, *Սաբեկի ծառը*, *Բևեկնը*, *Տանձենին*, *Թթենին*, առավել ևս *Մորենին*: Ովսեի գրքում կարդում ենք. «*Լեռներուն գլուխները զոհ կը մատուցանեն, ու բլուրներուն վրայ կաղնիի, կաղամախի ու բևեկնիի տակ... խունկ կը ծխեն*» (Ա-2, Դ 13): Փյունիկցիների մոտ այն նախապես պետք է կապված լիներ արմավենու պաշտամունքի հետ, պտղաբերության պաշտամունքի հետ: Ահա թե ինչու այդ աստվածությունը ծառի կամ ծառերի ձևով խորհրդանշում է տիեզերքը կամ բնությունը

⁴⁰⁶ Ղևոնդ Ալիշան, նշվ. աշխ., էջ 75:

⁴⁰⁷ Միայն *կաղնի* բառով բազմաթիվ բաղադրյալ անվանումներ կան Հին Կտակարանում *Կաղնի դեբորայ/թաբորայ*, *Կաղնի կոռց*, *Կաղնի հանգուցելոց*, *կաղնի Մամբրեի*, *Կաղնի սգոյ*, *Կաղնի Բասանու* և այլն:

աշխարհի տիրակալի՝ Բահալի հետ, և նրա պատկերը դրվում էր Բահալի զոհասեղանի վրա կամ կողքին:

Երեմիա մարգարեն նրան կոչում է *երկնքի տիկին* (Ա-2-ում՝ *երկնից թագուհի*, Եր. ԽԴ 17), ուստի մեկնիչներից շատերը **Աստարտ** անունը ստուգաբանում են *աստղ* բառից, նույնացնում Աստղիկ աստվածուհու կամ Արուսյակի պաշտամունքի հետ:

Աստարտ անվան անտառ կամ անտառներ նշանակությունը⁴⁰⁸, մեզ թվում է, ուղղակի գալիս է նրանից, որ այս կուռքը պաշտվել է հողի մեջ տնկված ծառերի բազմաթիվ բների տեսքով, որոնք էլ անտառ են հիշեցրել. բերենք համապատասխան օրինակը (Դտ. Զ 26) Ա-1, Ա-2 և Ա-3 գրքերից. «... եւ քակեսցես զսեղանն Բահաղու, որ է հոր քո, եւ կոտորեսցես զանտառն, որ զնովայ» (Ա-1), «և քու հորդ ունեցած Բահաղի սեղանը փլցուր ու քովի Աստարտվթը կտրէ» (Ա-2), «... քանդիր քո հորը պատկանող Բահաղի զոհասեղանը, կտրտի՛ր նրա մօտ եղած անտառը» (Ա-3): Գրաբար տարբերակը անունը բառացի թարգմանված է ներկայացրել, որը խոսում է միայն այդ թարգմանական տեքստի խիստ հին լինելու մասին: Կարծում ենք՝ յուրաքանչյուր գործածված տարբերակ ունի իր տրամաբանությունը, բայց բնագրային հարազատությունը թերևս պահանջում էր պահպանել *Աստարտվթ* ձևը, որը որ արված է արևմտահայերեն տեքստում:

Աստարտվթ-ի մասին *Բառարան Սուրբ Գրոցը* ևս հետաքրքիր մեկնաբանություն է ներկայացնում. «Այս անունը Սուրբ Գրոց մէջ հասարակօրէն կը թարգմանուի անտառ, բայց երևելի մեկնիչք այս նշանակութիւնը յարմար չեն գտներ ոչ բառին ստուգաբանութեանը եւ ոչ խօսքին իմաստին... Ինչպէս որ Բահաղ կամ Բէլ արևելեան դիցաբանական աստեղագիտութեան մէջ կը նշանակէ բախտին արու աստղը, Արամազդ կամ Լուսնթագ կոչուած մոլորակը, նոյնպէս **Աստարտվթ** կը նշանակէ բախտին էգ աստղը, Աստղիկ կամ Արուսեակ կոչուած մոլորակը» (ԲՍԳ, 54):

Բայց մի կարևոր հանգամանք ևս ուզում ենք շեշտել. այն, որ **Աստարտ** անվան *անտառ* ստուգաբանությունը շփոթվում է **Աշերա** անվան իմաստի հետ: Այս առումով խիստ հավանական ենք համարում ԵՏ-ի⁴⁰⁹ մեկնությունը. «*Астарты смешивают*

⁴⁰⁸ *Անտառ* հասարակ անունը *Աստվածաշնչում* դարձել է բաղադրյալ հատուկ անվանումների բաղադրիչ՝ *Անտառք, Անտառ ազգաց, Անտառ Եփրեմի, Անտառ լալոնից /Լալոնք:*

⁴⁰⁹ Տե՛ս **Эрик Нюстрем**, *Библейский словарь*, с. 31:

часто с хананейской Ашерой, но последняя была богиней деревьев, Астарта же была богиней звезд»: Դտ. Զ 25-ում «եւ կոփորեսցես զանփառսն» եբրայերեն տեքստում տրվում է **Աշերա** ձևով, որը հանդիպում է նաև Ելից ԼԴ 13-ում, իսկ տողատակում տրվում է անվան բառացի թարգմանությունը՝ *կոթող ասփուծոյ* (Ա-1):

Աստարտի արձանները մի շարք ժողովուրդների՝ քանանացիների, սիդոնացիների, ամոնացիների և այլոց, կերտվում էին մերկ մարմնով, և նրա պաշտամունքը ուղեկցվում էր այնպիսի արարողություններով, որոնք հիմք են տվել նրան կապելու անառակության հետ: Իրականում Աստարտը խորհրդանշել է պտղաբերության, զգայական սիրո վերածնող սկիզբը: Ամենալայն իմաստով սա եղել է բնության աստվածուհին: Բահալը խորհրդանշել է արական սկիզբը, Աստարտը՝ իգական, որոնց հիմքում էլ ընկած է եղել Արևի և Լուսնի՝ բնության հետ ունեցած նրանց շարժման ու ներգործման հզոր ուժերի աստվածացումը:

Դեռևս Սամուելի ժամանակներում իսրայելցիները պաշտել են այս կուռքին (Ա Թգ. Է 3), Սողոմոնը ևս իր այլազգի կանանց սիրաշահելու համար կառուցել է տվել զոհարաններ (Գ. Թգ. ԺԱ 5- 33): Իսկ Դ Թագավորության գրքում նկարագրվում է Հոսիաս թագավորի ուխտը Աստծու հետ և դաժան հաշվեհարդարը կուռքերի, այդ թվում Աստարտի հանդեպ (4-16): Արևելահայերեն տեքստում այդ հատվածներում տրվում է թե՛ **Աստարոթ**, թե՛ **Աստարտ**: Նույն հատվածում հիշատակվում են նաև այլ կուռքեր՝ **Բահաղը**, **Քամոսը**, **Մեղքոմը**:

Բահաղ (Բաալ, Բահալ) (հուն.՝ Βάαλ, ասոր.՝ ܐܒܝܠ Բաալ, ռուս.՝ Ваал, Бааль) անունը հանդիպում է հաճախակի Դտ. Բ 13 (ասոր.՝ **Բաղլա**), Գ 7, Զ 25, 28, 30, Օր. Դ 3... և այլ գրքերում՝ «... եհան զնա յարձանն **Բահաղու**» (Թվ. ԻԲ 41), Դատ. Բ 13, Գ 7, Զ 25՝ «... քակեսցես զետեղանն **Բահաղու**...»:

Բառացի նշանակությունն է՝ «կուռք կամ տիրոջ, կամ ժառանգող, կամ ստացող, կամ այր» (ԲՅԱ, 41, 44), ռուսերենում՝ **господин** (ԵՏ, 54): Նաև 12 անգամ հանդիպում է **Բահաղիմ** (τοις βασιμ) տարբերակով՝ *Դատավորաց* (Բ 11, Ժ 6, 10), *Ա Թագավորաց* (Է 4, ԺԲ 10...) գրքերում: **Բահաղ** բառի հոգնակին է **Բահաղիմ**, որ նշանակում է Բահաղի արձանները: *Աստվածաշնչում* հանդիպում է **Բահաղիմք**, որն աշխարհաբար գործածվում է **Բահաղիմներ**՝ Դտ. Ը 33՝ «... զետր **Բահաղիմայցն**», Ժ 6՝ «**զԲահաղիմսն**», Ա

Թգ. Է 4՝ «ի **Բահաղիմսն** եւ զանտրաոսն Աստարովթայ», ԺԲ 10՝ «ծառայեցաք ի **Բահաղիմացն**»:

Ընդհանրապես Քանանի երկրում տեղական աստվածությունները Բահաղներն էին: Նույնիսկ գոյություն ունեին քաղաքների և գյուղերի Բահաղներ: Սա է անշուշտ պատճառը, որ իբրև անվան բաղադրիչ՝ **Բահաղ**-ը առկա է բազմաթիվ հատուկ անուններում, ինչպես՝ **Եթբաաղ, Կարիաթբաաղ, Յերոբաաղ** և այլն: **Բահաղը** այլ անունների կցվելով՝ անվանում է ուրիշ աստվածներ, ինչպես՝ **Բահաղ-Բերիթ** (տեք ուխտի//**Βάαλβέριθ**, Ваал-Вериф)՝ սյուքեմացիներ աստվածը. Դտ. Ը 33՝ «... եւ եղին զուխտ իւրեանց ընդ Բահաղուն Բերիթայ», **Բահաղ-ճանճիկ**՝ փղշտացիների աստվածը (ասոր.՝ **Բըլզվով**, որ է՝ **Բեհեղզերուղ**) (Դ Թգ. Ա 2, 3, 6, 16...)՝⁴¹⁰:

Եբրայեցիները մեծ շուքով նշում էին սրա պաշտամունքը Սամարիայում՝ **Աստարովթի** պաշտամունքի հետ (Դտ. Զ 25-32, Դ. Թգ. Ժ 18):

Հին Կտակարանում **Բահաղ** է նաև մովաբացիների, սիդոնացիների կուռքի անունը: Հեթանոսական այս կուռքը Սամվել մարգարեի շնորհիվ մերժվեց, բայց վերստին հաստատվեց Հեզաբելի կողմից, որը սիդոնացիների թագավոր Եթբաաղի դուստրն էր: Հին Կտակարանում գործածված **Բահաղ** կամ **Բաաղ** հատուկ անունը *Նոր Կտակարանում* տառադարձվել է **Բէեղզերուղ** ձևով՝ դևերի իշխան նշանակությամբ:

Բաբելոնացիների մեջ այս կուռքը պաշտվում էր **Բել** անվամբ (Ես. ԽԶ 1, Եր. Ծ 2, ԾԱ 44), որն անշուշտ **Բահաղ** անվան հնչյունափոխված մի տարբերակ է: Բահաղի մեհյաններն ու բազիլիկները ընդհանրապես կառուցվում էին բարձրում: Դրանց զոհում էին նաև մարդկանց:

Բեհեղզերուղ (Բէեղզերուղ, Բեղզերուղա, Բեեղզերուղ) (հուն.՝ Βεελζεβούλ, ասոր.՝ ܒܠܘܘܬ **Բըլզվով**, ռուս.՝ Вельзевул) անունը առաջացել է եբրայերեն **Բահաղ** և **Ջերուբ(ղ)** կապակցությունից և նշանակում է «աստուած ճանճից կամ սրացող, կամ տէր ճանճից»⁴¹¹: Հին Կտակարանում գործածված Բահաղ կամ Բաաղ հատուկ անունը *Նոր Կտակարանում* տառադարձվել է **Բէեղզերուղ** ձևով՝ **դևերի իշխան** նշանակությամբ. «Ոչ իւրք հանէ դա զդևս՝ եթե ոչ Բէեղզերուղաւ իշխանան դիւաց»

⁴¹⁰ Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգության մեջ բազմիցս գործածված է կուռքի **Բահալ** անվանումը՝ *Բահալի քրմապետ*:

⁴¹¹ Տե՛ս ԲՅԱ, էջ 54:

(Մտթ. ԺԲ, 24, Մրկ. Գ 22, Ղկ. ԺԱ 15. 19, Հյտ. ԺԲ 19):

Ըստ *Նոր Կտակարանի*⁴ չար հրեշտակների պետ կամ Սադայել, որն ամենա-սկզբում փյունիկյան աստվածության չար ոգիների գլխավոր աստվածն է եղել: Մինչդեռ հրեաների մոտ չար ոգի է, դև: *Հին Կտակարանում Բահաղ/ը* կամ **Բահաղ-Ճանճիկ** կամ **Ճանճիկ Աստված**:

Բել (Բելոս) (հուն.՝ **Βηλ**, ասոր.՝ ܒܠ **Բել**, ռուս.՝ **Вил**) բառացի նշանակում է «հնացեալ կամ ոչինչ, կամ հոսանույր» (ԲՅԱ, 55), նաև՝ *տեր*: Ըստ *Աստվածաշնչի՝ Բել*. «Անկաւ Բէլ, խորտակեցաւ Դագովն..» (Ես. ԽՁ 1), Եր. ԾԹ, ԾԱ 44, Դն. ԺԴ 2. «*Էին կուռք մի ... անուն Բէլ*», 9. «*Էին քուրմք Բէլայ եօթանասուն...*»:

Սա բաբելոնյան գերագույն աստվածն է՝ Բաբելոն քաղաքի հովանին: Սեմական ցեղերը նախապես **Բել** են անվանել ամեն մի կուռքի, յուրաքանչյուր ցեղ ունեցել է իր Բելը: Բելի ոսկե անդրին տեղադրվել է Բաբելոնի աշտարակի 7-րդ հարկի վրա կառուցված «կապույտ տաճարում», նույնացվել է Սատուռն մոլորակին: *Աստվածաշնչում* Բելը հիշատակված է Քամյան Քուշի որդի **Նեբրովթ** անունով՝ որպես քաջ և հսկա որսորդ, որը, հոչակվելով Բաբելոնի առաջին թագավոր, ընդարձակել է իր տիրակալությունը: Ենթադրվում է, որ Բել-Նեբրովթի պաշտամունքը Բաբելոն է ներմուծվել Եթովպիայից: Խորենացին ևս սրան համարում է բնիկ եթովպացի. «Եվ որովհետև ժամանակագիրներից շատերը գրում են, թե **Նեբրովթը**, այսինքն՝ **Բելը**, Եթովպացի է եղել, մենք համոզվեցինք, որ իսկապես այսպես է եղել, Եգիպտոսի (և Եթովպիայի) սահմանակցության պատճառով» (ՄԽ, 102): «... բայց ես ասում եմ, թե Կոռնոս կոչվածը և **Բելը՝ Նեբրովթն** է, ինչպես եգիպտացիները Մովսեսի նման թվում են՝ Հեփեստոս, Արեգակ, Կոռնոս, որ են Քամ, Քուշ, Նեբրովթ, բաց թողնելով Մեստրայիմին...»⁴¹²:

Ոչ միայն «*Հայկ և Բել*» հայ դիցաբանական առասպելի մեջ, այլև ընդհանրապես հայ բանաստեղծության մեջ Բելը գործածվում է՝ մի դեպքում մատնանշելով աստվածաշնչյան անձին, մեկ այլ դեպքում՝ փոխաբերաբար, որպես թշնամի ընդհանրապես, ինչպես՝ «*Շար Բելեր փլուցին քաջքն Հայկի նման...*» (Ղևոնդ Ալիշան, ՑԱ, 32, 33):

⁴¹² Տե՛ս **Մովսես Խորենացի**, *Հայոց պատմություն*, Եր., 1980, էջ 106:

Բելիար-ը (Բելիար) (հուն.՝ Βελιάρ, նաև Βελιαλ, ասոր.՝ ܒܠܝܐ **Բըլաո**, ռուս.՝ Веллар) Սաղայելի կամ բանսարկու սատանայի անունն է՝ տառադարձված հունարենից: Եբրայերենում անվան իմաստն է **կռվող, ապստամբ, ժանյար, անօրեն**: Հր. Աճառյանը անվան նշանակությունը տալիս է երկու ձևով՝ **անպեղք, անօգույր, անպիտան** և ապա՝ **չար, վատ, ապականոց**, ապա հավելում է, որ անունը հոմանիշ է դառնում սատանային, ու *Ս. Գրքում* Բ Կր. 2 15 հատվածում գործածվում է հենց *սախանա* իմաստով: Ճիշտ է համարում նաև անվան մեկնությունը ըստ հների՝ **ապստամբ**⁴¹³:

Աստվածաշնչում գործածված է երկու անգամ՝ «Եւ ի՞նչ միաբանութիւն ունի Քրիստոսը **Բելիարի** հետ (ասոր.՝ ܒܠܝܐ **սատանա**), կամ ի՞նչ բաժին ունի հաւաքացեալն անհաւարի հետ» (Բ Կր. 2 15), և «Չգաբասացիս զորդիսն **Բելիարայ**» (Դտ. Ի 13): Ասենք, որ *Բելիար* անվան այս վերջին գործածությունը բացակայում է թե՛ ռուսերեն (*развращенных*), թե՛ արևմտահայերեն տեքստերում (*չար մարդիկները*):

Սա Մովսեսի երկրում պաշտվող կուռք է, որին պաշտեցին նաև Իելի որդիները Եգիպտոսից ելնելիս: Համանուն կուռքի անունից *Աստվածաշնչում* կան նաև քաղաք և հովիտ:

Բելփեգովր (Բեղփեգովր, Բեթփագովր) (հուն.՝ Βεελφεγόρ, ասոր.՝ ܒܠܝܦܥܘܐ **բըլ փըրր**, ռուս.՝ Ваал-Фегор) անունը կազմված է **Բել** և **Փեգովր** բաղադրիչներից, որ նշանակում է **տեր Փեգովրի**: Սա մովսեսիցիների կուռքի անունն է, որ գրաբար բնագրում տրվում է՝ **Բեղփեգովր**, Թվ. ԻԵ 3. «Եւ նուիրեցաւ Իսրայել **Բեղփեգովրայ**...» (Բ Օր. Դ 3, Ովս. Թ 10):

Անվան նշանակությունն է «*կուռք բերանաբացութեան կամ բացման*» (ԲՅԱ, 52): Փաստորեն այս անվան մի քանի տարբերակ է տրվում՝ **Բելփեգովր** (Ա-2), **Բեղփեգովր** (Ա-1), **Բեթփագովր, Բեթփեգովր** (Бетф-Фегор). ո՞րն է ճիշտը, կամ արդյոք բոլորն էլ նույն անո՞ւնն են: **Լ-ը** հնչյունները որևէ հիմք չեն տալիս այդ ձևերն առանձնացնելու, **Բեթ** բաղադրիչը առանձին չունենք գործածված. այն հանդես է գալիս միայն բաղադրություններում՝ **Բեթաբարա, Բեթանիա, Բեթափրա, Բեթել, Բեթեր, Բեթեզդա, Բեթորոն, Բեթփագե**: Բերված օրինակներից մի քանիսում **Բեթ**-ը կարելի

⁴¹³ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 436:

է հասկանալ տուն՝ **Բեթփագե** – թզերի տուն, **Բեթսան** – ապահովության տուն, **Բեթեզդա** – ողորմության տուն և այլն, այսինքն՝ **բեթ** և **բել** արմատների միջև ընդհանրություն չկա:

Փագովր կամ **Փեգովր**, **Փոգովր**⁴¹⁴ անվան բառացի նշանակությունն է բացում կամ պատռվածք (ԲՅԱ, 224), իսկ Բեթփոգովր//Բեթփագովր-ը մեկնաբանում է իբրև՝ *տուն բացման*, ըստ որի էլ Վ. Սահակյանի հատուկ անունների համաբարբառում⁴¹⁵ ներկայացվում են թե՛ *Բելփեգովր*, թե՛ *Բեթփեգովր* անունները. առաջինը՝ *բացուածքին տունը*, իսկ երկրորդը՝ *բացվածքին տերը* նշանակությամբ (ՎՍՀԱՄ, 1136):

Ըստ *Աստվածաշնչի* (Թվ. ԻԵ 3, 4, 5)՝ **Փագովրը** կամ **Բելփեգովրը** (Բ Օր. Դ 3, 46, Ովս. Թ 10, **Բեթփեգովրը** (Հս. ԺԳ 20) եղել է մովաբացիների աստվածը, որի անունով էլ կոչվում է նաև սրանց երկիրը, իսկ երբեմն էլ ուղղակի անվանվում է *Փոգովրի տուն*: Սրա արձանը Սողոմոնը կանգնեցրեց մի լեռան վրա՝ Երուսաղեմի հանդեպ: Այդ կուռքը պատճառ է դառնում 24 հազար իսրայելցիների կոտորածի. «*Եւ Իսրայէլը Բելփեգովրին յարեց. Եհովայի բարկութիւնը Իսրայէլի վրա բորբորուեցաւ*» (Թվ. ԻԵ 3-4), որի համար էլ Նարեկացին այն անվանում է **մահամատոյց**՝ «*Ո՞ր է մահամատոյց այլազնեայ արձանըն Փագովրայ*» (ԳՆՄՈ, Հ, 117. ԳՆՄՈ, 433):

Ադրամելեք-ը (հուն.՝ *Αδραμελεχ*, ասոր.՝ *ܐܕܪܐܡܠܝܚ* **Ադրամելեք**, ռուս.՝ *Адрамелех*) *Սուրբ Գրքում* հանդիպում է 3 անգամ (Դ Թգ. ԺԷ 31, ԺԹ 37, Ես. ԼԷ 38): Անվան բառացի նշանակությունն է «*վերարկու թագաւորի կամ կարողութիւն թագաւորի, կամ խորհրդոյ և կամ մեծարար կամ թագաւոր*» (ԲՅԱ, 8), ըստ ԲՍԳ-ի՝ *փառք թագավորի* (14): Այս վերջին իմաստին է հակվում նաև Վ. Սահակյանը, որը անունը բացատրում է որպէս «*թագավորին պատիվը*»: Օտար աղբյուրների մեկնությունները հարում են այս իմաստներին՝ **Адер есть царь** (ՅԵ, 10):

Սա պատկերվել է մարդկային գլխով և թևավոր ցուլի տեսքով: Կարծվում է, որ **Ադրամելեքը** արեգակն է խորհրդանշում, իսկ մեկ ուրիշ կուռք՝ **Ամամելե(ի)քը**՝ լուսինը, որն արդեն պատկերվել է մարդու մարմնով՝ ծածկված ձկան թեփուկներով:

Աստվածաշնչի Եսայու գրքում հանդիպող **Ադրամելեքը** բնավ չի կապվում այս

⁴¹⁴ Կարծում ենք՝ որոշակի նմանություն կա *Բագոս* և *Փագովր* ձևերի մեջ: Հր. Աճառյանը նշում է, որ փոյուզիական *Սաբադիոսի* աստվածությունը հետագայում հատկացվեց *Բագոսին*: Տե՛ս Հարմբ, հ. Ա, Եր., 1971, էջ 280:

⁴¹⁵ Տե՛ս Վ. Սահակյան, *Համաբարբառ Աստվածաշունչ մատենանի*, Պէրյուֆ, 1963 (ՎՍՀԱՄ):

կուռքի հետ. այն դառնում է համանուն հատկանուն՝ Ասորեստանի Սենեքերիմ թագավորի որդու. «*Եւ մինչդեռ երկիր պագանէր ի տան իւրում **Նասրաքայ** կոոց իւրոց, Ադրամելէք եւ Սարասար որդիք նորա սպանին զնա սրով եւ ինքեանք զնացին փախստական ի **Հայս**. եւ թագաւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորա» (Լէ 38): Բառացիորեն այս նախադասությունը նույնությամբ կրկնվում է *Դ Թագավորության ԺԹ* գլխում. «*Եւ եղեւ մինչդեռ երկիր պագանէր ի տան **Նեսրաքայ** աստուածոյ իւրում, Ադրամելէք եւ Սարասար որդիք նորա հարին զնա սրով եւ ինքեանք զերծան յերկիրն **Արարադայ**. եւ թագաւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորա» (37)⁴¹⁶:**

Նեսրաք, Նասրաք:

Նեսրաքը (հուն.՝ *Νεσεραχ*, ասոր.՝ **Նասուաք**, ռուս.՝ *Нусрох*) Ասորեստանի Սենեքերիմ թագավորի պաշտած կուռքերից է. անվան բառացի նշանակությունները բազմաթիվ են՝ *փախուստ, մեղմ փորձություն, փափուկ դրոշակ և կամ ասորերեն՝ տախտակ* (ԲՅԱ, 176): Վ. Սահակյանը տալիս է մեկ այլ՝ վերը թվարկած նշանակությունների հետ ոչ մի կապ չունեցող *արծիվ* իմաստը, որը թերևս բխեցվում է այդ կուռքի արտաքին տեսքից՝ մարդու մարմնով և արծվի գլխով: ԲՅԱ-ն ընդհանրապես չունի **Նասրաք** ձևը, ՀՄԲ-ն բերում է միայն մեկ գործածություն՝ **Նեսրաք** ձևով (Դ Թգ. ԺԹ 37):

Դագոն-ը (հուն.՝ *Δαγον*, ասոր.՝ ܕܘܓܘܢ **Նվո**, ռուս.՝ *Нево*), ըստ *Հին Կտակարանի* (Ես. ԽՁ 1), փղշտացիների, նաև քաղղեացիների կուռքի անունն է, որը որոշ թարգմանություններում դառնում է **Նարու/Նարավ** (այդպես է նաև ռուսերեն ու արևմտահայերեն տեքստերում), որը և պատճառ է դառնում հաճախ նույնացնելու *Բելին*՝ անվանմամբ տարբեր, էությամբ՝ նույն: Ձկան կերպարանքով այս կուռքի պաշտամունքները եղել են Գազայում, Ազովոսում: Ըստ *Աստվածաշնչի*՝ Սամսոնը կործանում է սրա մեծյանը Գազայում (Դտ. ԺՁ 21-30):

Թարթակ (հուն. *Θαρθακ*, ասոր.՝ ܩܘܪܩܐܩ **Թառթակ**, ռուս.՝ *Тартак*) անվան բառացի նշանակությունն է «*աղխաղխեալ կամ թագուցեալ կամ փակեալ* » (ԲՅԱ,102): Այս

⁴¹⁶ Ինչպես տեսնում ենք Ա-1 բնագրի այս միևնույն բովանդակությունը պարունակող նախադասության մեջ կա երկու անվանական փոփոխություն՝ *Նասրաք-Նեսրաք* և *Հայք-Արարադ*: Այս նույն տարբերակները տրվում են Ա-2՝ արևելահայերեն թարգմանության մեջ: Ա-3 բնագիրը (արևմտահայերեն) երկու հատվածում էլ պահում է *Նեսրաք* և *Արարադ* անունները:

անունը տրված է Ա-2 արևմտահայերեն թարգմանության մեջ:

Ըստ *Աստվածաշնչի* (Գ Թգ. ԺԷ 31. «Եւ Աւացիք Ներսար (ռուս.՝ Нивхаза) ու **Թարթակը** (հուն.՝ και την θαρθακ ρուս.՝ Тартака) շինեցին»:

Թարթակը Եմաթի երկրում պաշտվող կուռք էր՝ էջի պատկերով, որին Սամարիա բերեցին այացիները:

Մողոքը (Մուլոք, Մեղքոմ) (հուն.՝ Μολοχ, ասոր.՝ ܡܘܠܟܐ **Քամոչ, Մալքոմ**, ռուս.՝ **Милхом, Молох**) *Աստվածաշնչում* հիշատակված կուռքերից է, որը տարբեր գրքերում, նույնիսկ նույն գրքի՝ Գ Թգ. ԺԱ, տարբեր հատվածներում տարբեր կերպ է տրվում (*Յոթանասնից* բնագրի այս հատվածում այս անունն ընդհանրապես չի տրվում, այլ միայն **Քամոլս/Ճամոս**). այսպես՝ արևմտահայերեն տեքստի 6-ում տրվում է **Մեղքոմ**, իսկ 8-ում՝ **Մողոք**, արևելահայերենում՝ միայն **Մեղքոմ**, իսկ Ամոլսի Ե 26-ում արդեն հայերեն բոլոր թարգմանություններում տրվում է **Մողոք** (հուն.՝ Μολοχ), Գրծ. Է 43 (**Μολοχ**), որին պաշտում էին ամմոնացիները: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ այս անունները նույն կուռքն են անվանում, իսկ անվան բառացի նշանակությունն է «թագաւոր կամ իշխան» (ԲՅԱ, 150):

Մողոք կուռքին մատուցում էին մարդկային զոհեր՝ մանուկ տղաներ: Եգիպտոսից գաղթելիս Սինայի անապատում հրեաները պաշտում են նաև Մողոքին՝ կուռքը շարական վրանի կամ խորանի մեջ տանելով իրենց հետ (Գ Թգ. ԺԱ 5, 7, Գրծ. Է 43): Հայ բանաստեղծներից Գրիգոր Նարեկացին և Ներսես Շնորհալին հիշատակում են այս կուռքին և բանաստեղծական զուգահեռ են անցկացնում իրենց և կռամոլ հրեաների միջև, իբր՝ մերժելով ճշմարիտ Աստծու խորանը՝ սրանք զոհ էին մատուցում Մողոքի հրին: Նարեկացին խոստովանում է, որ այդ զոհարանը՝ իբրև դժոխքի պատկեր, կրում է իր մեջ, իր սիրտն է դարձրել դիվանվեր խորան՝ հոգին մատնելով նրա կրակին (ԳՆՄՈ):

Նեոք (ըստ *Սուրբ Գրքի՝ Նեո) (հուն.՝ αντίχριστος, ասոր.՝ ܐܢܬܝܚܪܝܫܬܘܫ **Մշիխա դագյալա**, որ է՝ *սուր Բրիսպոս*, ռուս.՝ Антихрист) չարության մարմնացում՝ սատանա է, որը պետք է կործանում բերի աշխարհին, բայց ինքն էլ հաղթվելու է. «Որդեակներ, վերջի ժամանակն է, եւ ինչպէս լսեցիք, թէ **Նեոք** գալիս է, եւ այժմ շար **Նեոք** են եղել, որ սորանից իմանում ենք, թէ վերջի ժամանակն է»: «Եւ ամեն հոգի, որ չէ*

խոսարկանում Յիսուս Քրիստոսին մարմնով եկած, Աստուածանից չէ, եւ նա Նեոի հոգին է, որ լսեցիք, թէ գալիս է, եւ հիմա աշխարհքումն է» (Ա Հվի. Բ 18, 22, Դ 3, Հյտն. ԺԱ, ԺԳ, ԺԷ):

Ըստ Սեբաստացու (ԲՀԼ, 751)՝ «Հակաքրիստոս կամ սուտ Քրիստոս, որով նշանակի գլուխն ամենայն ամբարշտաց, և անօրինաց» որը պետք է գա՝ մոլորեցնելու մարդկանց: «Իսկ անուն նորա լինելոց է այնպիսի, որոյ փառքն բաղկացուցանեն զթիւ վեց հարիւր վաթսուն և վեց (Հյտ. ԺԳ, 18): «Եւ զայս վայելչապէս ցուցանէ՝ ի մեզ բառս՝ **մեծ գազան**, ըստ որում և յաճախ անուանեն զնա սովաւ սուրբ գիրք»:

Սա Քրիստոսի դեմ ապստամբ է, որը աշխարհի կործանումից առաջ պիտի գա, մեծամեծ չարիքներ գործի և հաղթվի Քրիստոսից, որից հետո վերջ կլինի աշխարհին: Հայտնության գրքում նշվում է, որ սատանան ի վերջո պարտվում է Միքայել հրեշտակապետի կողմից և վայր նետվում գետին:

Ներգալ-ը (Անգեղ, Ներգաղ) (հուն.՝ Νηργελ, ասոր.՝ ܢܪܓܐܠ **Նըոգալ**, ռուս.՝ Нергал) ըստ *Աստվածաշնչի* (Դ Թգ. ԺԷ 30 (Ա-1՝ **Անգեղ**, Ա-2՝ **Ներգաղ**, Ա-3՝ **Անգեղ**) քութագիների կուռքերից է, որի պաշտամունքը Պաղեստինում հաստատվեց Ասորեստանի թագավոր Սալմանասարի կողմից: Ինչպես նկատում ենք, գրաբար և արևելահայերեն տեքստերը **Ներգալ-ը** տվել են **Անգեղ** ձևով: Այս դեպքում մենք չենք տեսնում անվան բառացի թարգմանություն, քանի որ ըստ ԲՅԱ-ի՝ **Ներգալ-ի** բառացի իմաստն է «լոյս յայտնի, կամ նշոյլ հրոյ, կամ լրտես, կամ հետևակ» (21): Ըստ *Բառարան Սուրբ Գրոցի*՝ այս կուռքը ամենայն հավանականությամբ խորհրդանշում էր Հրատ կամ Արես մոլորակը (413): **Ներգաղ** անունն է առկա մի շարք հատուկ անուններում՝ *Ներգեղսարասար*, *Ներիգղասար* (Եր. ԼԹ 3, 13):

Ռեփան-ը (հուն.՝ Ραιφάν, ասոր.՝ ܐܦܢ **Քեվան**, ռուս.՝ Ремфан) *Աստվածաշնչում* հիշատակվող կուռքի անուն է (Ամվս Ե 26, Գրծ. Է 43), որի բառացի նշանակությունն է *հսկա* կամ *բժիշկ* (ԲՅԱ, 129): Անունը վկայված է *Աստվածաշնչի* գրաբար տեքստում **Հոեմփայ** ձևով. «Եւ առէք զխորանն Մողորայ, եւ զաստղ աստուածոյն ձերոյ **Հոեմփայ**...», արևելահայերենը տալիս է ըստ հունարենի. «... ձեր **ռեմփա** աստծու աստղը»: Արևմտահայերեն տեքստը ընդհանրապես այս հատվածում անունը չի տալիս, այլ բոլորովին ուրիշ անուն. «... ու ձեր **Քիունի** կուռքերը...»: Բացատրությունը գտնում

ենք ԲՅԱ-ում՝ ըստ որի եբրայեցիները ու նաև որոշ այլ ազգեր այս կուռքին անվանել են **Քիուն** կամ **Քիվան**՝ որպես երկնային աստղի անուն (ԲՅԱ, 129): Իսկ սա վկայում է այն մասին, որ այս պարագայում ևս մեր թարգմանիչները անունը վերցրել են հունարենից: Բայց հետաքրքիրն այն է, որ *Գործքում* արդեն կիրառությունը կա **Հոենիա** ձևով: Եվ դա բնական է, քանի որ այս դեպքում կատարվել է անմիջական թարգմանություն հունարենից: Լատիներենում *Ամովսի* գրքում անունը չկա ընդհանրապես, *Գործքում* կա **Rempham** ձևով:

Մեկնիչներից ոմանք այս կուռքի պաշտամունքը նույնացրել են Արուսյակի՝ Լուսաստղի պաշտամունքի հետ: Նրա պատկերը եղել է աստղաձև կամ աստղ է ունեցել վրան: Այդ կուռքի պաշտամունքը հավանաբար բաբելացիներից է անցել հրեաներին:

Քամովս-ը (հուն.՝ Χαμος, ասոր.՝ ܫܡܘܫܡܢܘܫܘܡ, ռուս.՝ Хамос), ըստ *Աստվածաշնչի*՝ Թվ. ԻԱ 29, Դտ. ԺԱ 24, Գ Թգ. ԺԱ 7, 33, Դ Թգ. ԻԳ 13, Երմ. ԽԸ 7, մովաբացիների և ամմոնացիների ազգային կուռքն է, որի անվան իմաստն է «հեռացեալ» (ԲՅԱ, 226):

Այս կուռքը պաշտվել է նաև Երուսաղեմում Սողոմոնի թագավորության ժամանակ: Սրա անունով էլ երբեմն մովաբացիները կոչվում են Քամովսի ժողովուրդ. «Կորեար ժողովուրդք **Քամովսայ**» (Թվ. ԻԱ 29):

5.4. Հրեշտակներ, հրեշտակապետեր և դրանց անունները

Հրեշտակ բառը (եբրայերեն՝ **Մալախ**, հունարեն՝ **Անգելոս** – ἄγγελος, ասոր.՝ ܡܠܚܐ **Մալախա**) թարգմանվում է *պատրաստավոր պահլավերենից*⁴¹⁷ (ՀՍ, 405): Հրեշտակների թիվը, ըստ *Սուրբ Գրքի*, անհաշվելի է. *Դանիելի* մարգարեության մեջ ասվում է՝ «*հազարք հազարաց եւ բյուր բյուրոց*» (Դն. Է 10)⁴¹⁸: Տիրոջը հնազանդ հրեշտակները բաժանված են ինը դասի, որոնցից են **Աթոռներ, Բազմաչաքերովբեներ (Ջորավարներ), Սրբասաց վեցթևանի Սերովբեներ (Գլխավորներ), Տերություններ, Ջորություններ, Իշխանություններ, Պեպություններ, Բարձրյալի հրեշտակապետեր, Հրեշտակներ**: «Աստվածության հրեղեն փառքի հետ անմիջապես հաղորդակցվում են առաջին երկնքում գտնվող **Աթոռները, քերովբեները և Սերովբեները**, միջնորդավորված կերպով երկրորդ երկնքում գտնվող **Տերությունները, Ջորությունները, Իշխանությունները, Պեպությունները, Բարձրյալի հրեշտակապետերը, Հրեշտակները**»⁴¹⁹:

Առանձնապես պետք է հիշել Գրիգոր Նարեկացու «*Մարյան ողբերգության*» պոեմի Բան ԶԱ-ն, որն ամբողջովին նվիրված է հրեշտակներին՝ առանց դրանց անվանելու. «Ընդ Աստուածածնին մաղթանաց՝ ահա եւ զվերնոցն Անմահ հրեշտակացն լուսակերպից զաղերս հայցուածոց, Որ վասն իմ գոչեն առանց լռելոյ Հանապազորդեան արգահատութեամբ մաքուր բերանոց, Ընկա՛լ, բարեգութ: Որք են բարիք, բարեգործեալք ի բարերարէդ... Սուրբք, մաքուրք, անարատք, աւրինեալք, Վայելչականք, յաղթողք եւ անպարտելիք եւ ըստ ընթացից տեսութեան մտաց՝ արագունք» (573):

⁴¹⁷ Տե՛ս Հր. Աճառյան, ՀարմԲ, հ. III, էջ 135:

⁴¹⁸ *Աստվածաշունչը* ակնարկում է, որ սրանք՝ իբրև լուսեղեն էակներ, ստեղծվել են առաջին օրը՝ լույսի հետ միասին: Սրանք մարդկանց նման բանական էակներ են՝ փառքով խիստ գերազանց, առավել զորավոր ու անմարմին հոգիներ: Հրեշտակները, ըստ անհրաժեշտության, հայտնվում են մարդկանց՝ որպես տեսանելի էակներ, և Աստծու պատգամն ու հրամանն են հաղորդում: Այդպես Աբրահամին, Հակոբին, Գեդեոնին, Դանիելին, Դավթին, Մարիամին հայտնապես երևացին հրեշտակները և նրանց հաղորդեցին Աստծու կամքը: Հրեշտակները անսեռ են, չեն բազմանում և չեն էլ պակասում, քանի որ անմահ հոգիներ են:

⁴¹⁹ Հ. Քյոսեյանը վկայակոչում է Տիրանուն վարդապետին, ըստ որի՝ Աստված արարչության առաջին օրը արարեց յոթ հրեշտակ, երկրորդ օրը՝ մեկ և մնացած հինգ օրերի ընթացքում՝ տասնչորս: Եվ դրանց ընդհանուր թիվը դառնում է քսաներկու, որն էլ համապատասխանում է *Հին Կտակարանի* եբրայական կանոնի մեջ մտած գրքերի քանակին: Տե՛ս Հ. Քյոսեյան, *Հայ եկեղեցու դավանաբանություն (Ուղեցույց)*, Տարեգիրք Գ, 2008, էջ 111-112:

Ըստ *Ավետարանի* (Մտթ. ԺԸ 15)՝ բոլոր մանուկները ունեն իրենց պահապան հրեշտակները, ինչպես և մեծերը (Գրծ. ԺԲ 15)⁴²⁰:

Հրեշտակներից անունով հայտնի են երկուսը՝ **Գաբրիելը** և **Միքայելը**: Սրանք մարտնչող հրեշտակներ են, որոնք պատերազմում են Սադայելի դեմ: *Տովբիթի* պատմության մեջ խոսվում է ևս մի հրեշտակի մասին՝ **Ռաֆայել** անունով:

Ժամանակակից հայերենի անվանարանում հատուկ անուն են նաև **Սերովբե**-ն և **Քերովբե**-ն:

Դիոնիսիոս Արիսպագացին, անդրադառնալով **Սերովբե** և **Քերովբե** անունների ստուգաբանությանը, գրում է. «*Զարբոցն սերովբեից անուանակոչութիւն ասեն, որք զեբրայեցւոյն գիտեն. թէ կամ կիզիչս երևեալ, կամ ջեռուցիչ, իսկ զքերովբեիցն կամ բազմութիւն գիտութեան կամ հեղումն իմաստութեան*»⁴²¹:

Սերովբե (Սրովբե) (հուն.՝ Σεραφιν, ասոր.՝ ܣܪܦܝܐ **Սռափա**, ռուս.՝ Серафим) անունը ծագում է *սերովբե* բառից, որի նշանակությունն է *այրվող*: Ըստ Մխիթար Սեբաստացու՝ բառն ունի եբրայական ծագում. «*անուանեալ ըստ նոցա Սերափիմ*»⁴²² և թարգմանվում է «*կիզիչ կամ ջեռուցիչ և կամ հրացայտ*» (նույն տեղում):

Ըստ *Սուրբ Գրքի* (Բ Օր. Դ 24, Եբր. ԺԲ 29, Եզկ. Ա 5-12, Ես. Զ 2-3)՝ քրիստոնեական կրոնի մեջ առաջին դասի, Աստծուն փառաբանող, Աստծու Աթոռի շուրջ խմբված երկնային վեցթևյան էակներ, որոնք և՛ ընդհանուր, և՛ անհատապես այդպես են անվանվում: Որպեսզի չայրվեն աստվածային փառքի հրեղեն լույսից, երկու թևով նրանք ծածկում են իրենց երեսը, երկու թևով՝ ոտքերը, իսկ երկու թևով էլ թռչում են՝ օրհներգելով և փառաբանելով Աստծուն. «*Եւ սերովբէք կային շուրջ զնովաւ. վեց թեւք միոյ եւ վեց թեւք միոյ. երկուքն ծածկէին զերեսս իւրեանց, եւ երկուքն ծածկէին զոտս իւրեանց, եւ երկուքն թռուցեալ: Աղաղակէին մի առ մի եւ ասէին, Սուրբ, սուրբ,*

⁴²⁰ Այդ հրեշտակները պահպանում են մարդկանց զանազան վտանգներից ու փորձանքներից: Այդ պատճառով մեր եկեղեցին ունի հատուկ աղոթք՝ նվիրված հրեշտակների դասին՝ «Աղոթք երկնային զորքին»: «Անեղ, անմահ Արարչի անմարմին սպասավորներ, վերին զորքերի դասապետություններ: Աթոռներ, քերովբեներ և սերովբեներ, տերություններ, զորություններ և իշխանություններ, պետություններ, հրեշտակապետներ, և հրեշտակներ, Միքայել և Գաբրիել, վերին զորքերի դասերի պետներ, որ անլռելի ձայնով փառաբանություն եք մատուցում Ամենասուրբ Երրորդությանը և երեքսրբյան ձայնով երգելով՝ ասում. «Ողորմի՛ր, Դու ստեղծեցիր, կորստյան մի՛ մատնիր, Քո ձեռքի գործը մի՛ անտեսիր»։ Օգնական և պահապան եղե՛ք Աստծո ծառայիս. ամեն»:

⁴²¹ *Հելլենաբանութիւն եւ հելլենաբան թարգմանիչք հայկական լեզուի*, Բազմավեպ, հ. ԼԳ, Վենետիկ, ս. Ղազար, 1875, էջ 121:

⁴²² Տե՛ս ԲՀԼ, հ. 1-ին, էջ 983:

սուրբ՝ *Տէր զօրութեանց, լի է ամենայն երկիր փառօք նորա»* (Ես. Զ 2-3): Այս անունը հասարակ անունից դարձել է հատուկ ինչպես հայերենում, այնպես էլ շատ լեզուներում:

Քերովբե-ն (Քերովբէ) (հուն.՝ *Χερούβ/ίν*, ասոր.՝ *ܟܪܘܒܐ քրուվա*, ռուս.՝ *Х/К/ерувим*) **քերովբե**՝ *հրեշտակ* բառն է (ՀԱԲ, հ.Ե, 219), իսկ **Քերովբե** և **Քերոք** անունները դարձել են հատուկ անուն⁴²³:

Անվան ծագման և ստուգաբանության մասին հետաքրքիր տեղեկություն է տալիս ԵՏ-ն. «Относительно значения слова **херувим** мнения расходятся. Некоторые думают, что оно происходит от слова **рахав**, т.е. **ехать верхом, ездить** (если переставить буквы в корне слова, потому что Иегова восседает на них, как на животных или колеснице. Другие производят это слово от **карав**, т.е. **хватать**, и сравнивают греческое **грипс** с германским **грип, грипа, гриффия** и т.д.» (ԵՏ, 475):

Ըստ *Ասրվածաշնչի* (Ծն. Գ 24 (հուն.՝ *τὰ χερουβιμ*), Ել. ԻԵ 18 (հուն.՝ *Χερούβ*), 19, 20, 22, Եզկ. Ժ 20-22)՝ **Քերովբե**, որն ըստ ԲՀ-ի բացատրվում է մի քանի իմաստներով՝ «յաճախութիւն գիտութեան, կամ հեղումն իմաստութեան, կամ բազմաւոր ակամբ տեսանել» (ԲՀ, էջ 333): Կարծում ենք՝ վերջին բացատրությունն ավելի է համապատասխանում անվան էությանը⁴²⁴:

Հայ բանաստեղծության մեջ **Քերովբե**-ն ներկայացվել է և՛ որպես հատուկ, և՛ որպես հասարակ անուն, բայց գործածվել է *հրեշտակ* նշանակությամբ:

Գաբրիել (Գաբրիէլ) (հուն.՝ *Γαβριήλ*) անվան բուն նշանակությունն է «*այր Ասրծու*

⁴²³ Տե՛ս Հր. Աճառյան, ՀԱԲ, հ.Ե, էջ 219-220:

⁴²⁴ Սրանք Աստծուն փառաբանող **Բազմաչա Քերովբեներն** են, որոնց նկարագրությունը տեսնում ենք Եզեկիելի գրքում. «Եւ նորանց երեսույթը սա էր. նորանց կերպարանքը մարդի նմանութիւն ունէին: Եւ չորս երես ունէր ամեն մէկը, եւ չորս թեւ ունէր նորանց ամեն մէկը: Եւ նորանց ոտները ուղիղ ոտներ էին. եւ նորանց ոտների թաթը զուարակի ոտների թաթի նման, եւ փայլում էին պղնձի կերպարանքի պէս: Եւ մարդի ձեռներ կային նորանց թեւերի տակին նորանց չորս քառակողմերին. եւ չորսն էլ երեսներ եւ թեւեր ունէին: Մեկի թեւերը կպած էին միւսինին. շուռ չէին տալիս, երբոր նորանք գնում էին. ամեն մէկը ուղիղ իր դիմացն էր գնում: Եւ նորանց երեսների նմանութիւնը մարդի երես էր, եւ առիծի երես աջ կողմից այն չորսի համար, եւ եզի երես ձախ կողմից այն չորսի համար, եւ չորսն էլ արծիւի երես ունէին: Եւ նորանց երեսները եւ թեւերը բաժանուած էին վերից, ամեն մէկի երկուսը կպած էին իրար, եւ երկուսովը ծածկում էին իրենց մարմինները... Եւ կենդանիների նմանութիւնը՝ նորանց կերպարանքը կրակի վառուած կայծերի պէս էր, ինչպէս քահերի կերպարանք...» (Եզկ. Ա 5-28): Աստծու կողմից սրանց է հանձնարարվում հսկել Կենաց ծառը. «Եւ տեան զԱդամ, եւ բնակեցոյց յանդիման դրախտիին փափկութեան. եւ հրամայեաց քերոբէից եւ բոցեղէն սրոյ շորջանակաւ պահել ծառոյն կենաց» (Ծն. Գ 24): Սրանք *Ասրվածաշնչում* մե՛կ ներկայացվում են իբրև կենդանի արարածներ (ինչպես վերևի օրինակում), մե՛կ՝ վարագույրների վրա իբրև պատկեր, մե՛կ՝ ոսկուց կամ փայտից պատրաստված, մեկ կամ երկու, կամ չորս դեմքով:

կամ *զօրութիւն Աստու, կամ հօր իմ Աստուած»* (ԲՅԱ, 59): Ըստ Հր. Աճառյանի՝ «այր Աստու» (ՀԱԲ, հ. Ա, 426): Անվան այս մեկնությունները համընկնում են օտար կարծիքներին⁴²⁵:

Ըստ *Աստվածաշնչի* (Դն. Ը 16, Թ 21, Ղկ. Ա 11, 19, 26)՝ յոթ հրեշտակներից մեկն է Գաբրիելը, որը հաճախ գրականության մեջ ընկալվել է չարի՝ մահվան լրաբեր (Ֆրիկ, Հովհաննես Երզնկացի, Գրիգորիս Աղթամարցի): Չմոռանանք, որ նույնիսկ այդ իմաստով դարձվածք ունենք հայերենում՝ **Գաբրիելը քեզ փանի** – *մահ ցանկանալու անեծք*:

Գաբրիելն էր, որ Աստու կողմից ուղարկվեց Դանիելի մոտ՝ մեկնելու նրա տեսիլները, Ջաքարիայի մոտ՝ ավետելու Հովհաննես Մկրտչի ծնունդը և վեց ամիս անց՝ Նազարեթ՝ Մարիամին ավետելու Քրիստոսի ծնունդը: Բերենք մի քանի բնագրային օրինակներ՝ *Շարական*. «Կանոն սրբոց Հրեշտակապետացն Միքայելի և Գաբրիելի՝ եւ ամենայն երկնային զօրացն»:

Գրիգոր Նարեկացի. «*Աւերի՛ս, առաքեցաւ Հրեշտակապետն Գաբրիէլ, Աւերիս փայր սրբուհոյն՝ Դստեր Դաւթի թագաւորին*»: Ներսես Շնորհալի. «*Գոչէր Գաբրիէլ հովուացն այսաւր. – Յընծացէ՛ք, Նոր ծընաւ փրկկիչ աւծեալ ի քաղաք Դաւթի*»: Ֆրիկ. «*Քո լուսափոռ սուրբ խաչն գայ, Եւ Գաբրիէլ փողով ցընծայ...*»: Հովհաննես Երզնկացի. «*Երգէր Գաբրիէլ ձայնիւ Աւերիս փալով հրաշիւ...*»: «*Գաբրիէլն եկաւ հոգոյս, Յահէն կապեցաւ լեզուս, Խաւրաւ աչերս ի լալոյս, Աւաղ իմ կարճ արևուս...*»:

Գաբրիել հրեշտակը ունեցել է փող, որը նա **հնչեցրել է՝** իր գալուստն ազդարարելու համար, որտեղից էլ առաջացել է **Գաբրիելյան փող** դարձվածային արտահայտությունը:

Միքայելը (Միքայել) (հուն.՝ **Μιχαήλ**) եբրայական անուն է հունական տառադարձությամբ, որ նշանակում է «*ով է որպէս Աստուած կամ խոնարհութիւն, կամ աղքատութիւն, կամ հարուած աստուծոյ*» (ԲՅԱ, 150): Անվան՝ *ով է որպէս Աստուած* ձևակերպումը հետևյալ կերպ է մեկնաբանվում. «Այս խոսքը մարտական աղաղակը եղաւ այն բարի հրեշտակներուն, որոնք հաւատարիմ մնացին Աստուծոյ և պատերազմ յայտարարեցին ապստամբող հրեշտակներու դէմ, որոնց պետը՝ Սադայելը, ինքզինքը Աստուծոյ

⁴²⁵ Տե՛ս Զ. Нюстрем, БС, էջ 81:

տեղ դրած էր եւ անոր նման կը յայտարարէր: Ապստամբներուն յաղթելէն եւ զանոնք վտարելէն ետքը երկինքէն մարտական այս աղաղակը իբրեւ յատուկ անուն տրուեցաւ հաւատարիմ հրեշտակներու հրամանատարին, որ նոյն ինքն Միքայելն էր» (ՀՍ, 412): Համեմատենք նաև՝ «*Եւ պատերազմ եղաւ երկնքումը. Միքայելը եւ նորա հրեշտակները պատերազմեցին վիշապի դէմ. եւ պատերազմեց վիշապը եւ իր զորքերը. եւ չկարողացան դէմ կենալ, եւ ոչ էլ տեղ գտնուեցաւ նորանց համար երկնքումը: Եւ վայր գցուեցաւ մեծ վիշապը, այն հառաջի օձը, որ Բանասարկու եւ սատանա է կոչվում, այն բովանդակ աշխարհքը մոլորեցնողը վայր գցուեցաւ երկրի վերայ եւ իր հրեշտակներն էլ իրան հետք վայր գցուեցան» (Հյտ. ԺԲ 7):*

Ի տարբերություն **Գաբրիելի**, որն *Աստվածաշնչում* տրված է միայն իբրև հրեշտակապետի անուն, **Միքայել** անվամբ հայտնի են նաև մասնավոր անձինք (Թվ. ԺԳ 14, Ա Մնց. Ե 13, 14, Զ 40, Բ Եզր. Ը 8, Դն. Ժ 13):

Միջնադարյան բանաստեղծների գործերում այս անվան կիրառությունները զիջում են Գաբրիել անվանը, իսկ հաճախ միևնույն ստեղծագործության մեջ միասին են ներկայացվում և գովերգվում: Բերենք մի քանի բնագրային օրինակներ՝

Ներսես Շնորհալի. «*Այսաւր խոնարհեալ, ո՛վ Միքայել յաղթող, Մեծըդ Գաբրիել, մեզ տաւնակից լերուք...: «Ճշմարիտ մեր բարեկամք՝ Միքայել եւ Գաբրիել, Զարութեանցն Աստուծոյ զաւրեղ զինուորք եւ իշխանք հրեշտակաց...»:*

Գրիգորս Աղթամարցի. «*Սքանչապետիլ դիմօք, Միքայել հրեշտա՞կն ես միթէ...»:* «*Պատրկերով պատուեալ քան զՄիքայել ես, Ի հողեղինացըս հըրեղէն ես»:*

Թաթոս Թոխաթցի. «**Գաբրիել, Միքայել** զփողն գոչէին, Զարդարքն և զմեղաւորքն զարթուցանէին...»:

Ներսես Մոկացի. «*Եւ երրորդում ժամօրէին էջ տէրն յերկնից զօրօք վերին եւ Գաբրիել եւ Միքայել Զօրօք կացին սպասու նորին»:*

Հայ առաքելական եկեղեցին տոնելի սրբերի շարքին է դասում նաև հրեշտակներին, տոն, որը նշվում է Սուրբ Խաչի ութերորդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը և անվանվում է «*Սրբոցն հրեշտակապետացն՝ Գաբրիելի և Միքայելի և ամենայն երկնային զօրացն*» :

ԳԼՈՒԽ VI

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԵՔՐԱՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ (ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ)

Հին Կտակարանը որոշ բացառություններով⁴²⁶ գրվել է եբրայերեն և գրվել է հրեա ժողովրդի մասին, ուստի հատուկ անունների բացարձակ մեծամասնությունը (թե՛ տեղանուն, թե՛ անձնանուն) ունեն հրեական ծագում:

Սեմական ճյուղին պատկանող եբրայեցիները՝ որպես ժողովուրդ, ձևավորվել են Արաբիայում, այնուհետև տեղաշարժվել են դեպի հյուսիս և արևմուտք, հաստատվել Միջագետքում՝ Տիգրիս և Եփրատ գետերի միջև⁴²⁷:

Ծննդոց գրքի ԺԴ 13-ում **եբրայեցի** անունը տրվում է Աբրահամին: Ցավոք, այս կարևոր անվանումը բաց է թողնված Ա-1 (տե՛ս Ա-1 գրքի տողատակ 7) և Ա-3 գրքերում, և միայն Ա-2-ն է գրում. «Եվ փախստական մը եկաւ ու աս բաները **եբրայեցի** Աբրամին պատմեց»: Անշուշտ, անվանումը ծագում է *Աստվածաշնչի եբեր* (հուն.՝ Εβερ, ասոր.՝ ܐܒܪܗܡ **Ավրայա**) նահապետի անունից, որը բավական երկար է ապրել և տեսել իր վեցերորդ սերնդին. եբրայեցիները իրենց անվանել են **իսրայեցի՝ Հակոբ** նահապետի անունից, երբ նա վերանվանվել է **իսրայել**, իսկ **Հուդա** անունից սկսեցին կոչվել **հրեա**⁴²⁸:

Թարգմանվելով հունարեն և ասորերեն՝ եբրայական անունները հաճախ աղավաղվել են՝ ենթարկվելով հունական կամ ասորական տառադարձման: Սա է պատճառը, որ բուն եբրայական անունը հայերեն թարգմանություններում մի դեպքում հունական ձևով է բերվում, մեկ այլ դեպքում՝ ասորական, ինչպես օրինակ՝ **Աբելը** (հուն.՝ Αβελ, ասոր.՝ ܐܒܠ **Հավել**). **Հարել** հնագույն ձևն առաջացել է *Սուրբ Գրքի* ասորերեն թարգմանությունից, իսկ **Աբել**-ը՝ հունականից: *Աստվածաշնչում* (Սահակ-

⁴²⁶ Դանիելի, Եզրասի, Երեմիայի գրքերի որոշ հատվածներ գրվել են արամեերեն, իսկ այդ լեզուն իր անունն ստացել է *Արամ* անունից, որի տակ *Աստվածաշնչում* ընկալվում է *Սիրիան*՝ Պաղեստինին սահմանակից երկիր:

⁴²⁷ Եվ պետք է ասել, որ համաշխարհային պատմության մեջ եբրայեցիների պատմությունը առանձնահատուկ տեղ է գրավում հենց միայն նրանով, որ այս ժողովուրդը դարձավ այն ընտրյալ ժողովուրդը, ում սատարեց Աստված, դարձավ այդ ժողովրդի պաշտպանն ու ուղեկիցը և կապեց իր Ուխտը հենց այս ժողովրդի հետ:

⁴²⁸ Տե՛ս ԲՍԳ, էջ 139-142:

Մեսրոպյան թրգմ.) միակ գործածությունը **Հարել** ձևն է (Ծն. Դ 2, 4, 8, 9, 25, Եբր. ԺԱ 4, ԺԲ 24): Ըստ *Աստվածաշնչի* համաբարբառի՝ միայն երկու գործածություն է բերվում *Արել* ձևով՝ «*Հայեցաւ Աստուած յԱրել*» (Ծն. Դ 4) և «*Յարեաւ Կային ի վերայ Արելի*» (Դ 8): Անվան նշանակության մասին հուշող որևէ տեղեկություն չի տալիս *Աստվածաշունչը*, բացի Արելի գործի բնույթից. «*Եւ յաւել ծնանել զեղբայր նորա զՀարել. եւ եղել Հարել հովի իաշանց...*» (Ծն. Դ 2): Ըստ ԲՅԱ-ի՝ **Ա** սկզբնատառով այս անվան նշանակություններն են՝ *սուգ, կոծ, կամ դաշտ, կամ հովիտ*, իսկ **Հ** սկզբնատառով թարգմանվում է *ունայնություն* կամ *շնչատություն*, ասորերեն՝ *գոլորշի* (ԲՅԱ, էջ 3): Նույն ձևով **Библейский словарь** -ում *Արել* անունը ներկայացվում է երկու ձևով՝ **Авель – друг, Хавель – дуновение**⁴²⁹: Հր. Աճառյանը, հիմնվելով հների տեսակետին, տալիս է *սուգ* իմաստը, նաև բերում է *հովի առաջնորդ* իմաստները (ՀԱԲ, հԱ, 17): Հավանաբար վերջին տեսակետին է հարում Ռ. Բեքիաուսը, որը *Արել* անունը բացատրում է որպես *հովիվ* (ԱԱ, 6):

Հր. Աճառյանը եբրայական հատուկ անունների մասին խոսելիս դրանք բաժանում է երկու խմբի⁴³⁰

ա) անուններ, որոնք թեև աստվածաշնչային են, սակայն հայերի մեջ հետագա տարածում ու գործածություն չեն գտել, ինչպես՝ **Ասեման, Ամուել, Թամնա, Յամին, Յարիր, Բասան, Սաղեմ, Ջարուր** և այլն:

բ) Անուններ, որոնք աստվածաշնչային են և որպես այդպիսիք՝ մեծ տարածում են գտել ինչպես քրիստոնյա մյուս ժողովուրդների, այնպես էլ հայերի մեջ. այդ անունները, ըստ Աճառյանի, 98-ն են՝ **Արդիու, Արել, Արեղնագով, Արիսողոմ, Աբրահամ, Ադամ, Ադրամելեք, Ազարիա, Ահարոն, Ահերմոն, Ամբակում, Անանիա, Աննա, Ասանեթ, Ասքանագ, Բաղդասար, Բանարգես, Բառնաբաս, Բարաղամ, Բարդուղիմեոս, Բեթղեհեմ, Բենիամին, Գաբրիել, Գադ, Գասպար, Գեղեոն, Դանիել, Դավիթ, Եզեկիել, Եզր, Եղիա, Եղիազար, Եղիսե, Եղիսաբեթ, Ենովք, Ենովս, Եսայի,**

⁴²⁹ Անունների ռուսերեն տարբերակների և դրանց իմաստների բացատրման համար հիմք ենք ընդունել մի քանի գրքեր. 1. *Библейский словарь*, 2. *Библейско-биографический словарь*, 3. *Энциклопедия Библейская*, 4. *Симфония к синодальному изданию Библии*.

⁴³⁰ Մեր անվանացանկում բերվում են բազմաթիվ անուններ, որոնք ներկայացված չեն Հրաչյա Աճառյանի բառարանում. դա հիմնականում բացատրվում է այն հանգամանքով, որ այդ անունները չեն կրել հայ անհատները, բայց այս սկզբունքը բառարանում երբեմն խախտվում է. բերվում են անուններ, որոնք կրող անձ չի ներկայացվում, և կամ բացակայում են անուններ, որոնք անպայմանորեն գործածվել են:

Եսթեր, Երեմիա, Եվա, Եփրեմ, Զաքարիա, Զորաբաբել, Էմմանուել, Թամար, Թորգոմ, Իսմայել, Իսրայել, Լիա, Հեղի, Մաթուսաղա, Մաղաքիա, Մամբրե, Մանասե, Մանուել, Մարիամ, Մելքի, Մելքիսեդեկ, Միսայել, Միքայել, Միքիա, Մովսես, Յաբեթ, Յակոբ, Յեսու, Յոբ, Յովաբ, Յովակիմ, Յովասափ, Յովել, Յովհաննես, Յովնաթան, Յովնան, Յովսեփ, Յորդանան, Նազարեթ, Նաթան, Նաթանայել, Նոյ, Շմուել, Ռափայել, Ռեբեկա, Ռուբեն, Սադովկ, Սահակ, Սաղաթիել, Սամուել, Սառա, Սամփսոն, Սեթ, Սիմեոն, Սիոն, Սիրաք, Սողոմե, Սոփոնիա, Փանուել:

Ներկայացնենք եբրայական անձնանունների երկու իմաստային խումբ:

6.1. Նահապետներ և դրանց անունները

Ծննդոցի 12-50-րդ գլուխներում նկարագրվում է հրեա նահապետների կյանքը: Աստվածաշունչը ուղղակի նշում է այն կապը, որ ձգվում է Աբրահամից մինչև Հիսուս. «Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու...» (Մտթ. Ա 1): Եվ քանի որ Ադամն է մարդկության նախահայրը, նահապետների անվանացանկը սկսվում է հենց **Ադամ**-ով:

Ադամ-ը (հուն.՝ *Αδαμ*, ասոր.՝ *ܐܕܡ* **Ադամ**, ռուս.՝ *Адам*) համայն մարդկության ընդհանուր անվանումն է և հատուկ անունը մարդկության նախահոր:

Ըստ *Աստվածաշնչի* (Ծն. Բ 16, 19-23, Գ 8, 12, Դ, Ե, Բ Օր. ԼԲ 8, Ա Մնց. Ը 8, Տվբ. Ը 8, Ղկ. Գ 58 ևն)՝ առաջին մարդը, որին ստեղծեց Աստված. «*Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ. եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղել մարդն հոգի կենդանի*» (Ծն. Բ 7, հուն.՝ *χοῦν ἀπὸ τῆς γῆς*):

Եբրայական այս անունը ունի բազում նշանակություններ՝ **հողեղեն, մարդ, երկրային**, նաև **շիկակարմիր** կամ **արյունային** (ԲՅԱ, 6), ըստ Հր. Աճառյանի՝ **մարդ, մարդ էակը, երկիր, հող** (ՀԱԲ, 148): Վերջին երկու իմաստի կապակցությամբ Հր. Աճառյանը հավելում է, որ «*հները կարծում էին, թե բուն նշանակությունն է հող*. «Ադամն կաւ ասի եւ Եայն օձ» (Յայսմ. մրտ. 14), «Ադամ նշանակէ երկիր» (Տաթև.

Հարց. 299): Ըստ ՅԵ-ի⁴³¹ տրվում է անվան красная земля նշանակությունը. ասենք, որ *Աստվածաշնչում* ևս երկու քաղաք անվանվում են **Ադամա**, որոնք արդեն ունեն **հող** – земля նշանակությունը⁴³²:

Ադամը մարդկային ազգի նախահայրը և առաջին ծնողն է, որը եղավ Աստծու վերջին արարչագործությունը: Բացի Աբելից, Կայենից և Սեթից, Ադամն ու Եվան ունենում են ևս 33 որդի և 27 դուստր, որոնք *Ծննդոցում* անվանված չեն:

Ադամ անունը հետագայում փոխանվանաբար կդրվի Քրիստոսի վրա. Պողոս առաքյալը նրան կանվանի **երկրորդ Ադամ**. «*Առաջին մարդն՝ Ադամը կենդանի շունչ եղաւ, երկրորդ Ադամը՝ կենդանարար հոգի»* (Թուղթ առ Կորնթ. ԺԵ 45): Սա, իհարկե, քաջ հայտնի է մեր բանաստեղծներին, որոնք իրենց տաղերում ու գանձերում փոխաբերաբար *Քրիստոսին* անվանում են *Ադամ*. «*Մայր Աստուծոյ Մարիամ Դուստր Դաւթեան թագազարմ Ծնար մարմնով զնորն Ադամ, Որ նորոգեաց զհինն Ադամ»*, «*Այսաւր երկրորդ Ադամ պահեալ Պարտեաց զյաղթող հնոյն Ադամայ...»* (60), «*Ի յամլորդույս ընկեա՛լ, Եւա, զաւերիս՝ Նոր Ադամ ծընաւ քո դուստրն՝ կոյսըն Մարիամ»* (233), «*Այսաւրն ցընծայ Ադամըն հին՝ նոր Ադամաւ նորոգելով»* (Ներսես Շնորհալի, ՏԳ 55):

Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ հայ հին և միջնադարյան բանաստեղծության մեջ հաճախ ներկայացվում են մի կողմից՝ **Ադամ-Քրիստոս**, մյուս կողմից՝ **Եվա-Մարիամ** զույգ հակադրությունները՝ որպես ներհակ դրսևորումներ. Ադամը և Եվան մարդկության վրա անեծք դրին, Մարիամն ու Քրիստոսն ազատեցին մեղքից: Ադամի գերեզմանը գտնվում է Գողգոթայի վրա, և առաքելական բացատրությամբ երկրորդ Ադամը՝ Քրիստոսը, խաչվեց հենց Ադամի գերեզմանի վրա: Ներսես Շնորհալու «*Մեկնութիւն Մատթէի*» երկում կարդում ենք, որ Գողգոթան «... էր շիրիմ առաջին մարդոյն, յառաջնոցն ասացեալ, որպէսզի զԱդամ կառափնատ առողջացուցէ, զի որպէս ծննդեամբն զանէծս Եւայի եբարձ ի Բեթլեհեմ քաղաքի նոյնպէս և զԱդամայն՝ ի Գողգոթա տեղի...»⁴³³:

Ըստ *Աստվածաշնչի՝* Ադամն առաջին մեղավորն է երկրի վրա, մեղքը աշխարհ մտցնողը և այն իր սերնդի վրա տարածողը. «*Եւ ցԱդամ ասէ, Փոխանակ զի լուար*

⁴³¹ *Энциклопедия Библейская* (2-е издание), М., 2004, с. 21.

⁴³² Անվան մանրամասն նշանակությունը տե՛ս Հին Կրակարանը որպես հապուկ անունների սկզբնաղբյուր գլխում, էջ 67-68:

⁴³³ Ներսես Շնորհալի, «*Մեկնութիւն Մատթէի*», էջ 593:

ծայնի կնոջը քո, եւ կերար ի ծառոյ, անտի յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուրել, եւ կերար ի նմանէ, անիծեալ լիցի երկիր ի գործս քո. տրտմութեամբ կերիցես զնա զամենայն աուրս կենաց քոց... Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչեւ դարձցիս յերկիր ուտրի առար. զի հող էիր եւ ի հող դարձցիս» (Ծն. Գ 17-19)⁴³⁴:

Աբրահամ-ը (Աբրամ, Աբրաամ) (հուն.՝ Αβραμ, Αβρααμ, ասոր.՝ אַבְרָם, אַבְרָם, Ավրամ, Ավրահամ, ռուս.՝ Аврам, Авраам) ըստ Աստվածաշնչի՝ **Աբրամ, Աբրաամ** կամ **Աբրահամ** անուններով է տրվում. անվան բուն նշանակությունն է՝ **ազգերի հայր** կամ **բազմության հայր**⁴³⁵ (ԲՅԱ, 5): Հ. Հյուբշմանը այս անունը համարում է ասորական փոխառություն⁴³⁶: Անվան նախնական ձևը եղել է **Աբրամ** (Ծն. ԺԷ 5)՝ **հայր բարձր** (այդպես է կոչվել ի պատիվ Միջագետքի բազմաթիվ աստվածներից մեկի), որը Աստծու կողմից վերանվանվեց **Աբրահամ**. «Ահա իմ ուխտը քեզ հետ է, եւ ազգերի բազմութեան հայր կլինիս. եւ այսուհետեւ քո անունը Աբրամ չասուի, այլ քո անունն Աբրահամ լինի. որովհետեւ քեզ ազգերի բազմութեան հայր արի» (Ծն. ԺԷ 4, 5): Ահա թե ինչու առանձնացվում է անվան երկու տարբերակ՝ **Աբրահամ** և **Աբրամ**. վերջին անվանման համար տրվում է «հայր բարձրացեալ կամ վերամբարձ» նշանակությունները (ԲՅԱ, 5): Հր. Աճառյանը նշում է, որ հին հայերեն եղել է նաև **Աբրաամ**, որը հունական ձևի ուղիղ տառադարձությունն է և համարվել է գիտական ձև, բայց այժմ չի գործածվում: Անվան **h**-ն մեկնաբանվում է իբրև հոդակապ⁴³⁷, և բերվում են նույն ձևով նաև **Գեհեն, Ահարոն, Բահադ, Իսահակ, Հովհաննես** անունները: Գրության տեսակետից կա համապատասխանություն հայերենի և սեմականի միջև. հունարենում **Աբրահամ** և **Իսահակ** անունները ունեն կրկնակ **աա**, բայց հայ թարգմանիչները դրանց միջև դրել են **h**: Հր. Աճառյանը գրում է. «Օտար բառեր փոխ առնելու ժամանակ հնագույն հայերէնը կամ այդ դէպքում երկու **ա**-ի միջեւ ներմուծել է **h**, եւ կամ աւելի գիտական ձեւ տալու համար բառին, պահել է երկու **ա**, իբրեւ բացառիկ

⁴³⁴ Այդ մեղքի պատճառով նա վտարվեց Եդեմից՝ դառն քրտինքով ապրելու Աստծու պատգամին արժանանալով, տեսավ հարազատ որդու՝ Աբելի կորուստը հարազատ եղբոր՝ Կայենի ձեռքով: Ադամի ժառանգներից հիշվում է միայն մեկի՝ **Սեթի** անունը: Ադամն ապրեց ինը հարյուր երեսուն տարի, տեսավ իր սերնդի բազմանալը երկրի վրա: Ըստ պարականոն ավանդությունների՝ Նոյ նահապետը իր տապանը կառուցելիս հանեց Ադամի ոսկորները և իր հետ վերցրեց: Իսկ ջրհեղեղից հետո իր զավակներին բաժանեց Ադամի սրբազան նշխարները: Ադամի գանգը բաժին հասավ Սեմին:

⁴³⁵ Անվան մեկնաբանության մասին տարակարծություններ չկան:

⁴³⁶ Տե՛ս Հ. Հյուբշման, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 290:

⁴³⁷ Հ. Հյուբշման, Հայերենի քերականություն, Եր., 2003, 290-291:

ծել: Այսպէս՝ **Աբրահամ** անունը գրուած ունենք *Աստուածաշնչում* թէ՛ **Աբրահամ** եւ թէ՛ **Աբրամ**» (ՀԱԲ, հ. Ա):

Աբրահամը Սուրբ Գրքի ամենանշանավոր անձերից մեկն է՝ հրեա ազգի նահապետը՝ **Սեմի** սերնդից՝ **Թարայի որդին**: Ըստ *Ծննդոց*-ի հինգերորդ գլխի՝ Աբրահամին Ադամից բաժանում է 1566 տարի, ջրհեղեղից մինչև Աբրահամ՝ 427 տարի, ըստ այդմ՝ Ադամին Աբրահամից բաժանում է մոտ 2000 տարի (Ծն. Ե, ԺԱ), Քրիստոսից մեծ է 2040 տարով⁴³⁸: *Ծննդոց*-ի 12-25-րդ գլուխներում ներկայացվում են Աբրահամի կյանքը, գործունեությունը: Նա ապրում է **Ուր (Քաղդէա)** քաղաքում, որը այն ժամանակներում թեև զիջում էր Բաբելոնին, բայց կարևոր նշանակության քաղաք էր, և որը հետագայում Եփրատի ջրերով է ողողվում, իսկ ավելի ուշ ծածկվում հաստ ավազի շերտով: Աբրահամի անունը կապվում է նաև **Խառան** քաղաքի հետ, ուր ապրել է նա իր եղբոր՝ **Նաբոկրի** հետ: 75 տարեկան Աբրահամը Աստծու պատգամով հաստատվում է **Քանանում**: 80-ամյա Աբրահամը փրկում է **Ղովորին** և հանդիպում է **Մելքիսեդեկին**: 99 տարեկանում ունենում է Իսահակ որդուն: 160 տարեկանում ունենում է **Հակոբ թոռանը՝ Իսրայելին**:

Ասքանազ (Ասքանաս) (հուն.՝ *Ἀσκαναζ*, ասոր.՝ *ܐܨܟܢܐܙ* **Ըշքնազ**, ռուս.՝ *Аскеназ*) անվան նշանակությունն է «*հոտի իբր ցողագին կամ սրսկեալ*» (ԲՅԱ, 31):

Ըստ Սուրբ Գրքի՝ Գամերի որդին, Թորգոմի եղբայրը և Հաբեթի թոռը. Ծն. Ժ 3-ում՝ «*Եւ Գամերի որդիքը՝ Ասքանաս, Րիփաթ եւ Թորգոմա*», Ա Մնց. Ա 3, ըստ որի էլ հայ ազգը այդպես էլ մեկ անվանվում է՝ **Ասքանազյան**, մեկ՝ **Թորգոմյան**, մեկ՝ **Հաբեթյան**: Մեր թարգմանիչները հայերին այսպես կոչել են՝ նկատի ունենալով *Աստուածաշնչի* հետևյալ տողերը՝ «*Նորա դեմ պատրաստեցէ՛ք ազգերին, հրաւիրեցէ՛ք նորա դեմ Արարարի, Միննիի եւ Ասքանասի թագաւորութիւնները* (այստեղ արդեն *Ասքանասը՝* որպէս երկրի անվանում-ՓՄ)» (Եր. ԾԱ 27)⁴³⁹:

Եբեր (հուն.՝ *Εβερ*, ասոր.՝ *ܐܒܝܪ* **Ըվռայա**, ռուս.՝ *Евер*) անունն արդեն հուշում է, որ այս արմատն է ընկած *եբրայեցի* բառի հիմքում. նշանակում է «*անցաւոր կամ անցք, կամ բարկություն, կամ յղի և կամ ասորերէն՝ ցորեն*» (ԲՅԱ, 75), ըստ ՅԵ-ի՝ նշանակում

⁴³⁸ Ըստ Библейско-биографический словарь-ի տվյալների՝ Աբրահամին Հիսուսից բաժանում է 2180 տարի (35):

⁴³⁹ Տե՛ս *Աստուածաշունչը որպէս հայոց ազգանվանակերպ ձևերի սկզբնաղբյուր* գլուխը, էջ 89-90:

է *пришелец, странник* (186):

Ըստ *Աստվածաշնչի* (Ծն. Ժ 21, 24, 25, ԺԱ 14-15, Ա Մնց. Ա 18, Նմ. Է 63, Ղկ.Գ 35)՝ սա Սաղայի որդու անունն է՝ երրայեցիների նահապետի: «Եւ Սեմայ ծնան որդիք եւ նորա, որոն ամենայն որդւոցն Եբերայ, եղբորն Յարեթի երիցու: Եւ Արբաքսադ ծնաւ զՍաղա, եւ **Սաղա ծնաւ զԵբեր**. եւ Եբերայ ծնան երկու որդիք. անուն միոյն Փաղէկ (բաժանում), զի յաւուրս նորա բաժանեցաւ երկիր. եւ անուն եղբոր նորա Յեկփան...» (Ծն. Ժ 21): Եբերը տեսավ իր սերնդի վեցերորդ ծնունդը, որոնցից մեկն էլ Աբրահամն էր և երկարակյաց լինելով՝ ապրեց Աբրահամից ավելի երկար, 464 տարի (Ղկ. Գ 35): Սրա անունով էլ հրեաների նախնիները կոչվեցին **եբրայեցիներ**: Ըստ ԲՅԱ-ի՝ եբրայեցիների ծագման մասին կան տարբեր կարծիքներ, այն, որ սրանց նախահայրը նաև **հէլն** էր համարվում և հավելում, որ առավել ճիշտ կլիներ անունը վերցնել **Սեմից**: Բայց **եբրայեցի** անունը առաջացավ նրանից, որ **եբեր** նշանակում է *անցավոր*. «... զի **եբեր** թարգմանի *անցաւոր*. և զի Աբրահամ յելեալ յաշխարհէ. և յազգէ իւրմէ էանց յերկիր օտար յայնկոյս գեւորյն Եփրատայ, այն յերկիրն քանանացոց, վասն այսորիկ յայնմ հեպէ որդիք նորա կոչեցան **եբրայեցիք**, այն է՝ **անցաւորք** (ընդգծումները մերն են- ՓՄ)» (75): Բառացիորեն նույնը կրկնում է ՅԵ-ն. *Слово еврейъ происходит или от патр. Евера, сына Салы... или от евр. глагола eber (переходить через), что значит пришелец чужой земли. Народ, известный под именем евреев, пришел в Ханаанскую землю через Евфрат <...>, т.е. пришельцами из другой страны» (187):*

Աստվածաշնչում ևս չորս անձ անվանվում են *Եբեր*:

Ենոք (հուն.՝ *Ενώχ*, *Ενώς*, ասոր.՝ *ܢܘܚ* **խնոխ**, ռուս.՝ **Енох, Энох, Енос, Энос**) անունը ըստ *Աստվածաշնչի* (Ծն. Ե 6, 9, 10, 18, 19, 21, 23, 24) տարբեր տեքստերի՝ տրվում է **Ենոփս**, **Ենոք**, **Ենոփք**, **Ենօք** տարբերակներով: Ըստ որոշ աղբյուրների՝ անունը նշանակում է **խրատյալ** (ԲՅԱ, 87), նաև՝ **ուսուցիչ** (ԱԱ, 6), ըստ Հր. Աճառյանի՝ ծագում է *օրհնել*, *նվիրագործել* բայից և նշանակում է **նվիրյալ** (ՀԱԲ, հ Բ, 121), ըստ ՅԵ-ի՝ **Енос – муж, человек, Енох – посвященный** (212): Հր. Աճառյանը ևս առանձնացնում է **Ենոփս** և **Ենոփք** անունները՝ **Ենոփս**-ին տալով **մարդ** նշանակությունը, իսկ **Ենոփք**-ին՝ **նվիրյալ** (ՀԱԲ, հ 2, 120-121):

Անվան տարբերակները առաջացել են հունարեն թարգմանությունից, որտեղ

անվան ուղիղ ձևն է **Ենոք** – **Ενώχ**, իսկ հունարենում սեռական հոլովում անունը դառնում է **Ενώς** – **Են(վ)ս** :

Աստվածաշնչից հայտնի են այս անունը կրող երեք անձ.

1. **Ենուկ** (հուն.՝ **Ενώχ**, ռուս.՝ **Енох**)՝ Կայենի որդի **Ենուկը** (Ծն. Դ 17-18), որի պատվին *Սուրբ Գրքում* հիշված առաջին քաղաքը կոչվեց **Ենուկ**: «*Եմուտ Կային առ կին իւր, եւ յղացաւ եւ ծնաւ զԵնուկը. եւ շինէր քաղաք, եւ դնէր անուն քաղաքին յանուն որդւոյ իւրոյ Ենուկայ*»⁴⁴⁰:

2. **Ենուս** (հուն.՝ **Ενώς**)՝ Սեթի որդին՝ Ենուսը, որն ապրել է 905 տարի, ունեցել է **Կայնանին**, սա՝ **Մաղաղիելին**, վերջինս **Հարեդին**, Հարեդն էլ այն **Ենուկին**, որը Մաթուսաղայի հայրը եղավ:

3. **Ենուք**՝ Մաթուսաղայի հայրը՝ Ենուք նահապետը, որը Ադամի յոթերորդ սերունդն էր, ծնվել է Ադամից 622 տարի հետո, եղել է նրա ժամանակակիցը 308 տարի, ապրել է 365 տարի և այնքան է հաճելի եղել Աստծուն իր գործերով, որ կենդանի երկինք է բարձրացել Եղիայի նման: *Սուրբ Գրքում* սրա մասին ասվում է. «*Եւ Ենուքն Աստուծոյ հետ վարուեցաւ, եւ չէր գտնվում, որովհետեւ Աստուած առաւ նորան*» (Ծն. Ե 24):

Եփրեմ (հուն.՝ **Εφραίμ**, ասոր.՝ ܐܦܪܝܡ **Ափրեմ**, ռուս.՝ **Ефрем**) անվան նշանակությունն է «*աճեցուած, փարթամ կամ պտղաբեր*» (ԲՅԱ, 93), *պտուղ* (ԱԱ, 8):

Ըստ *Աստվածաշնչի* (Ծն. ԽԱ 52, ԽԶ 20, Թվ. Ա 10..., Հս..., Ա և Բ Թգ..., Սղմ. Է 9)՝ սա Հովսեփի երկրորդ որդին էր և Մանասեի կրտսեր եղբայրը: Եփրեմը Իսրայելի տասներկու ցեղերից մեկի նախահայրն էր, որի անունից էլ՝ **Եփրեմի երկիր** և **Եփրեմի լեռներ** (Ծն. ԽԱ 52, ԽԸ 8-20, Թվ. Բ 18-21): Չնայած Եփրեմը ավագ որդին չէր, բայց պապը՝ Հակոբը, նրան տվեց իր օրհնությունը: Եփրեմի ցեղը միշտ էլ եղել է նշանավոր: Սրանց էր պատկանում Ավետյաց երկրի մեծ մասը, ուստի **Եփրեմի երկիր** էր կոչվում **Իսրայելի թագավորությունը**: Սամարիա (Իսրայելի տասը ցեղերի) մայրաքաղաքը Եփրեմի երկրի մեջ էր, ուստի և **Եփրեմ** անունը հաճախ գործածվում է Իսրայելի թագավորության փոխարեն:

Թորգոմ-ը (հուն.՝ **Θοργαμα**, ասոր.՝ ܛܘܪܓܘܡ **Թոգարմա**, ռուս.՝ **Форгарма**)

⁴⁴⁰ Այդ Ենուկին է նշում, ի դեպ, Վ. Հյուգոն իր բանաստեղծություններից մեկում՝ «*Խիղճը*», որտեղ, սակայն, քաղաքի կառուցման շարժառիթը բոլորովին այլ է:

արական եբրայական անուն է, որ նշանակում է «*ոսկրե կամ կորովի, կամ խորտակումն ոսկերաց, կամ երկչոտ յոյժ, կամ անձկագոյն բարձրութիւն*» (ԲՅԱ, 105):

Ըստ *Աստվածաշնչի*՝ Հաբեթի որդի Գամերի որդու անունը (Ծն. Ժ 3), որի ազգը կոչվեց **տուն Թորգոմայ**՝ «Արդ՝ զսմանէ ասեն բազումք, թէ սա է հայր ազգին հայոց և կապադովկացոց և վասն այսորիկ երբեմն հայք կոչին որդիք Թորգոմայ և տուն Թորգոմայ» (ԲՅԱ): Եզեկիելի մարգարեության մեջ հիշատակվում է վաճառաշահ «Թոգարմա տունը» (*Աստվածաշնչի* հայերեն թարգմանության մեջ՝ *տուն Թորգոմայ*), որը Տյուրոս քաղաքը լցնում էր ձիերով և ջորիներով (Եզկ. ԻԷ 14): *Աստվածաշնչի* հին մեկնիչները, «*տուն Թորգոմայ*» կամ «*Թորգոմական աշխարհ*» ասելով, հասկացել են Հայաստանը: Մովսես Խորենացու մոտ պահպանված ազգացանկում Թորգոմը համարվում է հայոց անվանադիր նախնի Հայկի հայրը:

Իսահակ-ը (Սահակ) (հուն.՝ **Ισαακ**, ասոր.՝ **ܝܫܘܥ ܝܫܘܥ ܝܫܘܥ** **Իսիսակ**, ռուս.՝ **Исаак**), ըստ *Աստվածաշնչի*՝ **Իսահակ** կամ **Սահակ** է. Ծն. ԺԷ 21- ում՝ «*Չուխտր իմ հաստատեցից ընդ Սահակայ*», ԻԱ 3-ում՝ «*Չանուն որդույ իւրոյ...Իսահակ*»: Արական եբրայական այս անունը, ըստ տարբեր աղբյուրների, նշանակում է *ծիծաղ* (ԲՅԱ, 107), ըստ Հր. Աճառյանի՝ ծագում է *ծիծաղել, կատակել* բայի արմատից և նշանակում է *ծաղր* կամ *ուրախություն*: Անվան մեկնության հիմնավորումը տալիս է հենց *Աստվածաշունչը*. «*Եւ ասէ Սառա. Ծաղր արար զիս աստուած, զի որ եւ լսիցէ՛ ուրախ լինիցի ընդ իս*» (Ծն. ԻԱ 6):

Սահակ (հուն.՝ **Σαακ**) անունը, որի նախնական տարբերակը եղել է **Իսահակ**, ապա անշեշտ **ի** ձայնավորի կրճատմամբ մնացել է **Սահակ**, *Աստվածաշնչում* գործածվել է 19 անգամ:

Անվան այս ձևը մեզ՝ հայերիս համար ավելի սովորական և ժողովրդական ձև է, քան *Իսահակը*: *Աստվածաշնչում*, սակայն, անունների գործածության հաճախականությամբ գերազանցում է **Իսահակ** ձևը՝ 109 անգամ, իսկ **Սահակ** ձևը՝ ընդամենը 19 անգամ (Գ Թգ. ԺԳ 23, Ա Մնց. ԺՁ 16, Սղ. ՃԴ 9, Եսթ. ԺԴ 5, Հդ. Ը 22...):

Ըստ *Աստվածաշնչի*՝ սա Աբրահամի որդին է, որ ծնվեց Սառայից և ծնվեց

Աստծու ավետումով, եղավ հոր հավատի և գործի շարունակողը⁴⁴¹: Բազմակնությամբ ողողված դարում սա միակ միակին անձն է՝ երջանիկ և բախտավոր կնոջ՝ Ռեբեկայի հետ: Ապրել է 180 տարի: Ունեցել է երկու որդի՝ **Եսավ** և **Հակոբ**:

Հաբեթ-ը (**Աբեթ**) (հուն․՝ **Ιαφεθ** , ասոր․՝ **ܐܦܬܐ** **Յավթ**, ռուս․՝ **Иафет**) եբրայական անուն է՝ հունական տառադարձությամբ, որ նշանակում է «*ընդարձակեալ կամ գեղեցիկ, կամ համոզող*» (ԲՅԱ, 153): Իմաստը՝ *ընդարձակություն, ըստ Աստվածաշնչի* բխում է *ընդարձակել* բայի արմատից՝ «**Ընդարձակեցէ Աստուած Յաբեթի** ⁴⁴² և բնակեցէ ի տան Սեմայ» (Ծն. Թ 27): Բացի *ընդարձակություն* իմաստից, մեկնաբանվում է նաև՝ *գեղեցկություն*՝ ըստ Գր. Տաթևացու⁴⁴³, ըստ ՅԵ-ի՝ **да распространится** (256), նույն աղբյուրը, ի դեպ, հավելում է, որ **Հաբեթ** անունը պահպանված է հայկական տեղանուններում՝ *Նպատ* կամ *Նիֆատ* լեռ:

Ըստ *Աստվածաշնչի* (Ծն. Ե 32, Զ 10-11, Է 13, Ժ 1, 2, 21...)՝ **Յաբեթ**՝ Նոյի ավագ որդին, որին հայերը և հույները համարում են իրենց նախահայրը⁴⁴⁴:

Հայկական ավանդությունը Հաբեթի ավագ որդի Գամերի կրտսեր որդուն՝ Թորգոմին, համարում է հայոց անվանադիր նախնի Հայկի հայրը: Այդ պատճառով հայ բանաստեղծները հայ մեկնիչների նման Հաբեթի անունով հայերին անվանում են **Հաբեթյան** կամ **Հաբեթական**:

Հակոբ -ը (հուն․՝ **Ιακώβ**, ասոր․՝ **ܝܚܘܒ** **Յակոբ**, ռուս․՝ **Иаков**) ըստ *Աստվածաշնչի*՝ **Հակոբ, Յակոբ, Յակոբոս**, արական եբրայական անուն է *խաբոդ* կամ *գարշապար*, կամ *ներբանք* նշանակություններով (ԲՅԱ, 154), նաև՝ *փոխանակող*՝ ըստ Ռ. Բեքհաուսի (ԱԱ, 7): Այս իմաստները բխում են հենց *Աստվածաշնչից*. «*Եւ ապա ել եղբայր նորա և ձեռն նորա ունէր զգարշապարէ Եսաւայ. և կոչեաց զանուն նորա Յակոբ*» (Ծն. ԻԵ 25): «*Յիրաւի կոչեցեալ անուն նորա Յակոբ, զի այս երկիցս խաբեաց զիս*» (Ծն. ԻԷ 36): Ըստ Հր. Աճառյանի՝ այս իմաստները միմյանց չեն հակասում, քանի որ եբրայերեն *խաբել* բայը նշանակում է «*մեկի հետևից գնալ, կրունկը բռնել*» (ՀԱԲ, հ. Գ, 482), ըստ ԵԵԿ-ի՝ **запунатель** (էջ 227):

⁴⁴¹ Իսահակի բնավորության հիմնական գծերն են՝ պահպանողականություն ամեն լավագույնի, խաղաղասիրություն ամեն մարզում և հավատարմություն ամուսնության մեջ:

⁴⁴² Անվան **Յաբեթ** գրությունը հավանաբար ուղղագրական տարբերակ է:

⁴⁴³ Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. Գ, էջ 479:

⁴⁴⁴ Ըստ ՅԵ -ի՝ ռուսերեն *Սուրբ Գրքում* Սեմն է Նոյի ավագ որդին (էջ 256):

Հին Կրակարանի կարկառուն դեմքերից մեկն է՝ **Հակոբը**՝ Իսահակի որդին՝ Եսավի երկվորյակը, որն իր ծննդյան ժամանակ բռնել էր եղբոր գարշապարից, որն էլ կանխագուշակում էր ուրիշի տեղը հափշտակող լինելու հանգամանքը: Օգտվելով եղբոր բացակայությունից և հոր տկարությունից՝ խլում է ավագությունը և փախչում Միջագետք: Աստծու հրեշտակները հովանավորում են նրան և խոստանում օգնություն: Մի անգամ Հակոբը երազում տեսնում է երկրից մինչև երկինք հասնող մի սանդուղք, որով բարձրանում և իջնում էին Աստծու հրեշտակները: Եվ Աստված, դիմելով նրան, ասում է, որ ինքը Աբրահամի և Իսահակի Աստվածն է, և որ ինքը օրհնում է նրան և տալիս այն երկիրը, որը դառնում է Աստծու ընտրած երկիրն ու ժողովուրդը, որից էլ պիտի ծնվեր Քրիստոսը: Հակոբին տրվում է նոր պատվական անուն՝ **Իսրայել** (**Իսրահօլ**), և սա էլ դառնում է Իսրայելի 12 ցեղերի նախահայրը⁴⁴⁵:

Հակոբը եղել է շատ ճարպիկ, խորագետ, աշխատասեր անձ, որ միշտ հետապնդել է իր շահը: Նա Աստծու հրեշտակի հետ մարտնչում է այնքան, մինչև վերջինս չի օրհնում իրեն, և իր նոր անունն էլ՝ **Իսրայել**, հենց նշանակում է **Աստծու հետ մարտնչող**. «Որովհետեւ մարտնչեցար Աստուծոյ և մարդոց հետ և զօրավոր դուրս եկար» (Ծն. ԼԲ 24-30): Հակոբը իր կյանքում նաև շատ է տառապում. տեսնում է մոր՝ Ռեբեկայի, սիրելի կնոջ՝ Ռաքելի և հոր մահը⁴⁴⁶:

Հոր-ը (հուն.՝ **Ιώβ**, ասոր.՝ **ܐܘܒ Իով**, ռուս.՝ **Иов**) տրվում է **Հովբ**, **Յոր**, **Յովբ** տարբերակներով: Եբրայական անունն է հունական տառադարձությամբ, որ նշանակում է «*ցաւօղ, ցաւագին կամ արեցեալ կամ փորձեալ*» (ԲՅԱ, 169): Հր. Աճառյանը բերում է մյուսների կարծիքը՝ «*ցաւագին կամ փորձեալ*», ըստ ԲՍԳ-ի՝ «*ցաված*», Հ. Տաշյանի՝ «*հայր*» (ՀԱԲ, հ. Գ, 529), ըստ Ռ. Բեքհաուսի՝ «*հալածված*» (ԱԱ, 6), ըստ ՅԵ-ի՝ **угнетённый**, или **враждебно преследуемый** (էջ 301):

Ըստ *Աստվածաշնչի* (Հբ Ա 1, 5, 8, 13, 14..., Բ 3, 7, Գ 1, ԺԵ 17, ԼԲ 2, 3..., Եգլ. ԺԴ 14, 20, Ա Կրնթ. Գ 19)՝ Հին Կրակարանի համանուն գրքի հեղինակը և գլխավոր անձը,

⁴⁴⁵ Ծննդոց-ի գրեթե կեսը ներկայացնում է Հակոբի և իր զավակների արկածալից կյանքը և կրոնական փորձությունները: Սա ամուսնանում է իր մորեղբոր՝ Լաբանի երկու աղջիկների հետ և նրանցից ու նրանց աղախիներից ունենում է 12 որդի, որոնք էլ հետագայում դարձան Իսրայելի ժողովրդի տասներկու ցեղերի նահապետները, և մեկ դուստր՝ Դինային:

⁴⁴⁶ Հակոբ անվամբ *Աստվածաշնչում* հայտնի են նաև Ձեբեդեոսի որդին՝ Հակոբը, նաև Հիսուսի կրտսեր եղբայրը համարվող Հակոբը և այլն:

եղել է *Հուս երկրի* անվանի նահապետ, խիստ բարեպաշտ անձ, որին քրիստոնեական եկեղեցին պատվել է **Երանելի** (благочестивый) մականվամբ⁴⁴⁷:

Հորի գրքի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ, բայց գերիշխողն այն է, որ գիրքը գրված է մաքուր եբրայերենով: Թեև գիրքը ինչ-որ չափով փիլիսոփայական է, բայց և այնպես Հորը պատմական անձ է եղել, քանզի գրքում նշված անձինք կան նաև զուտ պատմական գրքերում. «Այր ոմն էր յԱւսիդ աշխարհի, որում անունն էր Յոր. եւ էր այրն այն ճշմարիտ, անարատ, արդար, աստուածապաշտ, մեկնեալ յամենայն իրաց չարութենէ մեղաց» (Հբ Ա 1-2): Արաբ մատենագիրները ևս նշում են Հորին. մահմեդական շատ ընտանիքներում Հորը գործածական անուն է: Հինգ այլևայլ տեղերում ցույց է տրվում Հորի գերեզմանը⁴⁴⁸:

Հուդա (հուն.՝ *Ιουδας*, ասոր.՝ ܚܝܘܕܐ **Իհուդա**, ռուս.՝ *Иуда*) անունը *Սուրբ Գրքում* գործածվել է 850 անգամ: Անվան նշանակությունն է՝ «գովութիւն կամ խոստովանութիւն» (ԲՅԱ, 168), ըստ Ռ. Բեքհաուսի՝ «գովք» (ԱԱ, 9): Ըստ ԵՇ-ի՝ *хвала, или прославленный* (190): Անվան իմաստը գալիս է աստվածաշնչյան բնագրից. «Եւ յղացաւ դարձեալ, ծնաւ որդի, եւ ասէ. Չայս միւս անգամ **գոհացայց զՏեառնէ, եւ կոչեաց զանուն նորա Յուդա**» (Ծն. ԻԹ, 35):

Ա-2՝ արևմտահայերեն *Աստվածաշունչը* ևս կրկնում է Ա-1-ին. «Այս անգամ պիտի **գոհանամ Տէրոջմէն, անոր համար անոր անունը (գոհութիւն) Յուդա դրաւ ու դադարեցաւ ծնանելէն**»: Ըստ հայերեն թարգմանությունների՝ *Աստվածաշնչի Յուդա* անունը մեկնաբանվում է **գոհություն**, որը, ինչպես տեսնում ենք, տարբերվում է

⁴⁴⁷ Միշտ արդար և ողորմած Հորը ուներ 7 որդի և 3 դուստր, որոնց հետ ապրում էր համերաշխ ու երջանիկ: Սատանան, խիստ նախանձելով Հորին, նրան ենթարկում է դաժան փորձությունների. կորցնում է ողջ ունեցվածքը, բոլոր սիրելիներին, առողջությունը: Սակայն այդ ամենից հետո Հորը դարձյալ փառաբանում է Աստծուն: Եվ Աստված, տեսնելով նրա անսահման խոնարհությունը, անձամբ հայտնվում է նրան և վերադարձնում այն ամենը, ինչ կորցրել էր Հորը: Հորը ապրել է բավական երկար՝ 140 տարի, և մինչև այդ փորձանքները արդեն իսկ ծեր էր:

⁴⁴⁸ *Հորի* գիրքը գրված է արևելյան բանաստեղծության վսեմ ոճով: Գրքի գլխավոր թեման այն է, թե ինչպես է Աստված հանդուրժում ու համբերում, որ արդար մարդիկ վիշտ կրեն, իսկ անարժանները վայելեն կյանքի բարիքները: Այս խնդիրը լուծում է հեղինակը շատ ինքնատիպ. Աստված մարդկանց գործերը վարում է նախախնամությամբ, և ինքը պետք է ընտրի պահն ու ժամանակը՝ պատժելու և շնորհելու, նա պետք է փորձի իր ժողովրդի հավատարմությունը, ինչպես իրեն է հարմար: Աստծու պատիժների դիմաց Հորը միմիայն խոստովանում և ապաշխարում է: Խոստովանելով և խոր հավատով առ Աստված՝ նա նաև միամտորեն գանգատվում է նրանից: Ի վերջո նա վայելում է Աստծու ողորմածության շնորհը: *Հորի* գրքի ազդեցությունը որոշակի է Գյոթեի «*Ճառուպի*», Բայրոնի «*Մանֆրեդի*» նախերգանքներում, ինչպես նաև Նարեկացու «*Մարտիան Ողբերգության*» ստեղծագործությունների վրա:

գովուրթուն իմաստից և տրամաբանորեն առավել ճիշտն է:

Աստվածաշնչում **Հուդա** անունը կրող 13 անձեր կան, որնցից *Հին Կտակարանի* կարկառուն դեմքը Հակոբի և Լիայի 4-րդ որդին՝ **Հուդան** է, որը ստացավ առաջնեկի իրավունքը, որից գրկվել էր Ռուբենը: Երբ Հովսեփի եղբայրները որոշեցին սպանել նրան, Հուդան համոզեց նրանց՝ Հովսեփին վաճառել ստրկության (Ծն. ԻԹ 35, ԼԷ 26-27, ԽԴ 16-34): Սա պատվավոր անձ է Հովսեփի պատմության մեջ, որից սերեցին Դավիթը և նրա թագավորական զարմը: Գերությունից դարձին իր ցեղին միացրեց եբրայական ողջ ազգը, որը ճանաչվեց իբրև հրեա ազգ, կամ **Հուդայան**, իբրև **սերունդ Հուդայի**, որի ազգից սերեց Հիսուս Քրիստոսը:

Հայ հին և միջնադարյան բանաստեղծության մեջ հաճախական են **Հուդայի փուն** և **Հուդայի ցեղ** արտահայտությունները:

Նոր Կտակարանը հիշատակում է *Հուդա* անունը կրող երեք անձերի.

1. **Հուդա՝** Թադևոսի (Ղերեոս) անունը (Ղկ. 2 16, Գրծք Ա 13):
2. **Հուդա՝** Հիսուսի եղբայրը (Մտթ. ԺԳ 55, Մրկ. 2 3):
3. **Հուդա Իսկարիովթացի:**

Մաթուսաղա-ն (հուն.՝ *Μαθουσαλά*, ասոր.՝ *ܡܬܘܨܐܠܐ* **Մաթուշլախ**, ռուս.՝ *Мафусаил*) բառացի նշանակում է՝ «*զմահ իր եթող* կամ *մահուան իրոյ զէն* և կամ եբրայերէն և ասորերէն՝ *զմահ իր կողոպտող* կամ *մահուան կողոպուտ*» (ԲՅԱ, 136): Ըստ Հր. Աճառյանի՝ չի կարելի անունը ներկայացնել *Մաթուսաղա* ձևով, որը թյուր կարծիքի կհանգեցնի, իբր թուրքերեն ծագում ունեցող, և անվան նշանակությունը տալիս է ըստ Gesenius-ի՝ «*առաքումն*» (ՀԱԲ, հ Գ, էջ 162): Ըստ Ռ. Բերհաուսի՝ «*տեգակիր*» (ԱԱ, 6): ՅԵ-ն **Мафусаил** անվան բացատրությունը տալիս է «*муж Божий* или *муж оружия*» (էջ 413):

Ըստ *Աստվածաշնչի* (Ծն. Դ 18, Ե 21, 22, 25..., Ա Մնց. Ա 2, Ղկ. Գ 37)՝ սա Մաթուսաղա նահապետն է՝ Ենովքի որդին և Ղամբի հայրը, որը *Աստվածաշնչի* ամենաերկարակյաց անձն է համարվում. ապրել է 969 տարի: *Աստվածաշնչի* միևնույն գրքում (Ա-1) առկա է այս անվան հետ կապված հակասություն, ինչպես՝ Ծն. Դ 18-ում՝ «... *եւ ծնաւ Մայիէլ Մաթուսաղա, եւ Մաթուսաղա ծնաւ Ղամէք*», մինչդեռ Ծն. Ե 21, 23- ում՝ «*Եւ եկեաց Ենովք ամս հարետր վաթսուն և հինգ, եւ ծնաւ զՄաթուսաղա...Եւ*

եկեաց **Մաթուսաղա** ամս հարեր ութսուն և եւթն, եւ **ծնաւ Ղամէք**»: Ինչպես նկատում ենք, նույն Մաթուսաղան մի դեպքում Մայիելի որդին է, մեկ այլ դեպքում՝ Ենովքի:

Նոյ-ը (հուն.՝ Νῶε, ասոր.՝ ܢܘܗ **Նոխ**, ռուս՝ **Ной**) արական եբրայական անուն է հունական տառադարձությամբ, որ նշանակում է **հանգիստ, դադար** (ԲՅԱ, 178), նաև *մխիթարություն*, հետագայում Nuhija անվան հետ համեմատելով՝ իբրև *նոր, նորոգիչ* (ՀԱԲ, հ. Դ, էջ 82): ՅԵ -ն ևս հաստատում է *покой, успокоение* (էջ 468) նշանակությունը:

Ըստ *Աստվածաշնչի* (Ծն. Ե 29, 30, 32, Զ 8,10..., Ղկ. ԺԷ 26)՝ Ադամի տասներորդ սերունդն է և սկիզբը նոր մարդկության, հռչակավոր նահապետ, որը երկրորդ նախահայրն է մարդկային ազգի: *Աստվածաշնչի* առաջին գրքի՝ *Ծննդոց*-ի հինգ գլուխներ նվիրված են Նոյին և ջրհեղեղի պատմությանը: Նոյը **Ղամէքի** որդին է և թողը **Մաթուսաղայի**: Ունեցել է երեք որդի՝ **Սեմ, Քամ** և **Հաբեթ**: Նոյի ժամանակներում չարիքն ու անարդարությունը անսահման չափեր էին ընդունել. «*Եւ իբրեւ երես Տէր Աստուած, եթէ բազմացան չարիք մարդկան ի վերայ երկրի, եւ ամենայն ոք խորհէր ի սրտի իւրում խնամով ի չարիս զամենայն աուրս, եւ ստրջացաւ Աստուած զի արար զմարդն ի վերայ երկրի, եւ մտախոհ եղել ի սրտի իւրում. եւ ասէ Տէր Աստուած. Զնջեցից զամենայն մարմին զոր արարի յերեսաց երկրէ, ի մարդոց մինչեւ յանասուն, եւ ի սողնոց մինչեւ ի թռչունս երկնից, զի բարկացայ զի արարի զնոսա: Բայց Նոյ եգիտ շնորհս առաջի Տեառն Աստուծոյ» (Ծն. Զ 5-8): Իսկ չարիքը, որը ողողել էր երկիրը, *Սուրբ Գրքում* պարզաբանվում է երկու բառով՝ ապականություն և անիրավություն. «*Ապականուեցաւ երկիր Աստուծոյ առջեւ եւ լեցուցաւ անիրավութեամբ*» (Ծն. Զ 11): Իսկ Նոյը ստացավ արդար և կատարյալ մակդիրները: Նոյի անունն անբաժանելիորեն կապվում է **Արարատ** լեռան հետ: Նա և իր ընտանիքը (թվով ութ անձ) փրկվում են՝ նախօրոք պատրաստված տապանով հանգրվանելով «*Ի լերինս Արարատայ*» (Ծն. Ը 4): Հովսեպոս Փլավիոսի և Եվսեբիոսի մոտ պահպանված, ինչպես նաև հայկական ավանդություն- ներում **Նախիջևան** տեղանունը մեկնաբանվում է իբրև **Նոյի առաջին իջևանադեղի**: Հնագույն այլ ավանդությունների վրա հիմնվելով՝ Վարդան աշխարհագիրը Նոյի գերեզմանատեղին մատնանշում է **Վասպուրականի Նախճավանում**, իսկ նրա տիկնոջ*

գերեզմանատեղին՝ **Մարանդում**: Ավանդաբար Նոյի անվանն են կապվում **Ակոռի** գյուղի, **Առնոյտոն** գավառի, **Երևան** քաղաքի, **Նպաստ** լեռան և այլ անվանումներ:

Սեմ -ը (հուն․՝ **Σήμ**, ասոր․՝ **ܣܡ** **Շեմ**, ռուս․՝ **Сим**) հունական տառադարձությամբ եբրայական այս անվան նշանակությունն է «անուն կամ համբավ, կամ եղեալ, կամ անդ» (ԲՅԱ, 205), ՎՍՀԱՄ-ը՝ *համբավ*, ըստ ՅԵ-ի՝ *имя, название* (էջ 591):

Ըստ *Աստվածաշնչի* (Ծն. 2 9, Ե 32, Է 13, Ժ 21-31, ԺԱ 10, Ղկ. 9 38)՝ Նոյի ավագ որդին է՝ եբրայեցիների նախահայրը, որը ծնվեց իր հոր՝ Նոյի 500 տարեկանում և որի սերնդից սերվեց Մեսիան՝ **Արփաքսադը ծնեց Սաղային, Սաղան՝ Եբերին**: Ունեցավ հինգ որդի՝ **Եղամ, Ասուր, Արփաքսադ, Ղուդ** և **Արամ**, որոնք դարձան սեմական լեզուների կրողները՝ եբրայեցիներ, ասորիներ, արաբներ, եթովպացիներ և այլն:

Տաք, ջերմություն կամ *սև* (ԲՅԱ, 226) իմաստներով է բացատրվում **ՔԱՄ** (հուն․՝ **Χάμ**, ասոր․՝ **ܚܡ** **Խամ**, ռուս․՝ **Хам**) անունը:

Ըստ *Աստվածաշնչի* (Ծն. Ե 32, 2 10, Է 13, Ժ 1, 6, 20...)՝ Քամը Նոյի որդին է, որի անվամբ էլ քանանացիները հաճախ կոչվել են **Քամի որդիներ**: Քամը **Քուշի, Մեսրաեմի, Փուղի, Քանանի** հայրն է, այսինքն՝ քանանացիների, հարավային արաբների, եթովպացիների, եգիպտացիների և աֆրիկացիների նախահայրը (Ծն. Ժ 6-20): Քամի արարքի՝ հորը մերկ վիճակում տեսնելու պատճառով Նոյը անիծում է նրան ու նրա որդուն՝ **Քանանին**. «Անիծեալ լինի Քանանը, ծառաների ծառայ լինի նա իր եղբայրներին» (Ծն. Թ 25-26):

6.2. Մարգարեներ և դրանց անունները⁴⁴⁹

Մարգարե բառը նշանակում է **ապագան գուշակող իմաստրուն**, որից էլ *Ս. Գրքում* ունենք **մարգարեանալ** բայը, որ նշանակում է **գուշակել**: Եվ մեր գրավոր լեզվի դեռ ամենասկզբում Կորյունն ու մեր պատմիչները ստեղծում են *մարգարեանոց* (մարգարեի գերեզմանի վրա շինված մատուռ), *մարգարեական*, *մարգարեակիր*, *մարգարեանարգու*, *նախամարգարե* բառերը: Ըստ Հր. Աճառյանի՝ այս բառի առավել հնագույն ձևը անշուշտ ունի զենդական ծագում և փոխառվել է զրադաշտական կրոնից⁴⁵⁰:

Արդեն ԺԲ դարից **մարգարե**-ն հանդես է գալիս իբրև հատուկ անուն՝ անձնանուն, և դառնում խիստ գործածական, ապա վերջընթեր *ե*-ի անկմամբ, երբեմն *ա*-ի հավելմամբ՝ նաև տեղանուն՝ *Մարգար*, *Մարգարա*:

Հին Կտակարանի բաղկացուցիչ գրքերից են **Մարգարեությունների** գրքերը, որոնք թվով 16-ն են հենց մարգարեների անուններով՝ *Եսայու*, *Երեմիայի*, *Եզեկիելի*, *Դանիելի*, *Ովսեեի*, *Հովելի*, *Ամոլսի*, *Աբդիուի*, *Հովնանի*, *Միքիելի*, *Նավումի*, *Ամբակումի*, *Սոփոնիայի*, *Անգեոսի*, *Ջաքարիայի* և *Մաղաքիայի*, որոնցից թեև 12-ը համարվում են փոքր մարգարեներ (իրենց նյութի ծավալի առումով) և ընդամենը 4-ը՝ ավագ, բայց անկախ այդ տարբերակումից, յուրաքանչյուրի մարգարեությունը խիստ էական է ու այնքան որոշիչ, որ *Մատթեոսի Ավետարանում* Հիսուսը հայտնում է. «Մի՛ համարիք, եթե եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել, այլ՝ լնուլ» (Մտթ. Ե 17-18)⁴⁵¹:

Աստվածաշնչում մարգարեների առաքելությունը արքաներին ու ժողովրդին ճշմարիտ հավատքի ուղու վրա պահելն էր, և ժողովրդի համար նրանք Աստծու առաքյալներ էին: Միապետության 280 տարիների ընթացքում նրանցից ոչ մեկը գրավոր

⁴⁴⁹ Կա փոքր մարգարեների գրքերի՝ *Գիրք երկուրասանց մարգարէից*-ի քննական բնագիրը՝ աշխտմբ Հ. Ամալյանի՝ կազմված 46 ձեռագիր և 4 տպագիր *Աստվածաշունչ* աղբյուրների համեմատությամբ, Եր., 2000:

⁴⁵⁰ Այս բառի ծագման մասին առավել մանրամասն տե՛ս Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. Գ, էջ 276:

⁴⁵¹ Կրեյգ Քիները գրում է. «Մարգարեություն Աստծո պատգամների կանխաձայնումը՝ Աստծո իսկ ներշնչանքով... Թեև «մարգարեն» տեխնիկապես ակնարկում է ամենքին, որոնք մարգարեանում են, սակայն ընդհանուր առմամբ հուդաիզմն այս տիտղոսը վերապահել է հեռավոր անցյալի Աստծո պատգամախոսներին»: Տե՛ս նշված հեղ., «Աստվածաշունչ՝ հենքի մեկնություն. Նոր Կտակարան», Եր., 2004, էջ 970:

փաստաթուղթ չի թողել, բացառությամբ Հովելի և Աբդիուի: Սակայն պետք է նշել, որ թե՛ Հուդայում (Հարավում), թե՛ Իսրայելում (Հյուսիսում) մեծ թվով մարգարեներ թողել են վկայություններ. Հյուսիսում՝ **Հովնանը, Ամովսը, Օսեեն**, Հարավում՝ **Աբդիուն, Հովելը, Եսային, Միքիան**, բաբելոնյան գերությունից հետո՝ **Նաումը, Սոփոնիան, Ամբակումը, Երեմիան**, գերության և ազատագրության շրջանում՝ **Եզեկիելը, Դանիելը, Անգեն, Ջաբարիան, Մադաբիան**⁴⁵²:

Այս բոլոր մարգարեների անունները ունեն եբրայական ծագում, անունների նշանակությունները, ըստ տարբեր աղբյուրների, հիմնականում նույնն են, սակայն երբեմն կան բացատրությունների հակասություններ, տվյալ անվան մի քանի մեկնություններ:

Ներկայացնենք մարգարեների անունները՝ ըստ այբբենական հերթականության:

Աբդիա(ս) (հուն.՝ **Αβδία, Αβδιός**, ասոր.՝ **ܐܒܕܝܐ Ավդիյա**, ռուս.՝ **Авдий**, գերմ.՝ **Obadja**⁴⁵³) անվան տարբերակներն են **Աբդիաս, Աբդիու**, որն *Աստվածաշնչում* գործածված ենք տեսնում 14 անգամ: Արական եբրայական այս անվան բառացի նշանակությունն է *Աստու, Տիրոջ ծառա*: Մխիթար Սեբաստացին այս անվան համար առանձնացնում է երկու գլխաբառ, և յուրաքանչյուրը ներկայացնում առանձին իմաստով. **Աբդիա** (**Αβδία**) կամ **Աբդիաս** (**Αβδιός**) «*ծառայ իմ*, կամ *ծառայություն*, կամ *ամպ առաքացեալ*», և **Աբդիու** (**Αβδιου**)՝ «*ծառայ տեսան* կամ *ծառայ խոստովանեալ*» (ԲՅԱ, 3): Հր. Աճառյանը տալիս է միայն **Աբդիու** ձևը՝ «*տիրոջ ծառա*» նշանակությամբ (ՀԱԲ, հ. Ա, 10), Ահ. Կայայանը՝ *Տիրոջ սպասավոր* (ՀԿՆ, էջ 431), իսկ քննական բնագրում *ծառա խոստովանելի* (ԳԵՄ, էջ 263):

Աբդիան փոքր մարգարեներից չորրորդն է, որը եղել է Երեմիայի և Եզեկիելի ժամանակակիցը, և որի մարգարեությունը ամենակարճն է ու վերաբերում է Եդոմ/վ/մի ժողովրդին: Սրա մարգարեության գիրքը ձեռագրերում հանդիպում է **Մարգարեություն Աբդիու, Աբդիու Մարգարե, Աբդիա, արդեայ, Աբդեայ** վերնագրերով, որոնցից պարզ երևում են անվան տարընթերցումները:

Ըստ *Աստվածաշնչի*՝ վկայված են և՛ **Աբդիու** (Գ Թգ. 3), և՛ **Աբդիա** ձևերը (նկատի ունենք *Աստվածաշնչի* տարբեր հրատարակություններ): *Յոթանասնից* բնագրի Ա Մնացորդաց ԻՁ 2-ում գրվում է **Ζαβαδίας**, Ա-1-ում՝ **Ջերադիաս**: Իհարկե, այս

⁴⁵² Տե՛ս Ահ. Կայայան, *Հին Կտակարանի ներածություն*, էջ 175:

⁴⁵³ Մարգարեների անունները երբեմն տրվում են նաև ըստ գերմաներեն բնագրի:

անուններից յուրաքանչյուրը տարբեր անձեր է անվանում, բայց հանդիպում են նաև շփոթություններ, մի անունը մյուսի փոխարեն գործածվելու դեպքեր:

Ամբակում (հուն․՝ *Αμβακούμ*, ասոր․՝ *ܐܡܒܩܘܡ* **Խավկուկ**, ռուս․՝ **Аввакум**, գերմ․՝ **Habakuk**) անվան բառացի նշանակությունն է *ըմբշամարտիկ* կամ *ընդգրկող* (ԲՅԱ, 16), ըստ ԱԱ-ի՝ *Աստված գորություն է* (15): Ըստ Հր. Աճառյանի՝ եբրայական այս բառը, ասորականի հետ համեմատելով, նշանակում է «պարտեզներում մշակվող մի բույս» (ՀԱԲ, էջ 115), որին էլ համակարծիք է նաև Ահ. Կայայանը: ՅԵ-ն նշում է, որ «y евреев Хаввакум (*обнимающий*)» (5): Մեր համեմատությամբ *Յոթանասնիցը Ամբակում* անվան տարընթերցում չի տալիս:

Ըստ *Աստվածաշնչի* (Դն. ԺԴ 34, Ամբ. Ա 1)՝ փոքր մարգարեներից ութերորդն է, որի մասին կենսագրական տեղեկություններ գրեթե չկան. հայտնի է միայն, որ ժամանակակից է եղել Երեմիային: *Ամբակումի մարգարեությունը* գրվել է Քրիստոսից առաջ՝ 609-597թթ-ի միջև, երբ Երուսաղեմը առաջին անգամ գրավվեց Նաբուգոդոնոսորի կողմից: Մարգարեության գիրքը հիմնականում ձեռագրերում տրված է *Մարգարէութիւն Ամբակումայ* վերնագրով, բայց հանդիպում է նաև *Ամպակում մարգարէ* տարբերակը, իսկ հենց մարգարեության առաջին հատվածում տարբեր ձեռագրեր *Ամբակում* անվան տարբեր ձևեր են ներկայացնում՝ *Անբակում, Ամպակում, Ամբակումբ*:

Գիրքը պատգամ է՝ բաղկացած երեք գլխից, որոնցից վերջին գլուխը վսեմ երգ է, Աստծու հանդեպ վստահության և նվիրվածության արտահայտություն. «... *վերանորոգի՛ր քո գործը փարիների մէջ, փարիների մէջ իմացրու՛, եւ բարկութեան մէջ ողորմութիւն յիշի՛ր ...*» (Ամբ. Գ 2):

Ամովս (Ամօս) (22) (հուն․՝ *Αμώς*, ասոր․՝ *ܐܡܘܨ* **Ամուս**, ռուս․՝ **Амос**, գերմ․՝ **Amos**) անվան բուն նշանակությունն է *հզոր* կամ *կորովի* կամ *բեռնաւորող* կամ *ծանրաբեռնեալ* (ԲՅԱ, 17), ըստ ԲՍԳ-ի՝ *ծանր* (էջ 29) և Հր. Աճառյանի (139)՝ *ծանր*, ըստ Ահ. Կայայանի՝ իմաստի լայնացմամբ՝ «բեռ կամ բեռնակիր» (էջ 422), ըստ ՎՍՀԱՄ-ի՝ *բեռ կրող* (1121): ՅԵ -ն տալիս է անվան բացատրությունը որպես *ծանրություն, բեռ – тяжесть* (էջ 37):


Մարգարէութիւն Ամովսայ գրքի վերնագրի **Ամովսայ** սեռական հոլովածը

ծեռագրերում ունի տարընթերցում՝ **Ամօսայ**:

Սա փոքր մարգարեներից երրորդն է, որն իրեն անվանում է **բոկեր՝ խաշնարած**: Աստված նրան հանում է գյուղական միջավայրից: «*Ես ոչ մարգարե էի եւ ոչ որդի մարգարեի, այլ հովիւ էի եւ թութ քաղող. եւ առաւ զիս Տէրը հօտէն եւ ըսաւ ինծի. գնա՛ եւ մարգարեացի՛ր իմ Իսրայէլ ժողովուրդիս վրայ...*» (Ամվս Է 14 -15):

Եղել է Ովսեի, Հովելի և Եսայու ժամանակակիցը, մարգարեությունը հիմնականում վերաբերում է Իսրայելի տասը ցեղերին: Նա սկսում է իր մարգարեությունը՝ մեղադրելով Սիրիային, Եդովմին, Փյունիկիային, Մովաբին, Հուդային, Իսրայելին: Հանդիմանության կենտրոնը Իսրայելն է: Ամովսի լեզուն պատկերավոր է. նա զգուշացնում է, որ Իսրայելը քնած է հրաբխի վրա և գնում է դեպի կործանում: Այս երկրի ժողովուրդը տրվում է բոլոր վայելքներին՝ առանց նվազեցնելու իր բուռն ձգտումը ոսկե հորթերի հանդեպ՝ մոռանալով, որ շուտով կճայթի ամպրոպը: Այս է Ամովսի մարգարեության խորհուրդը:

Ամովս-ը համանուն հատկանուն է, և չպետք է շփոթել Եսայի մարգարեի հոր անվան հետ (Դ Թգ. ԺԹ 2, Բ Մնց. ԼԲ 20):

Անգե (Անգե, Անգէաս) (հուն.՝ *ἀγγαῖος*, ասոր.՝  **Անգե**, ռուս.՝ **Ангей**, գերմ.՝ **Haggai**): Ըստ *Աստվածաշնչի՝ Անգե, Անգէաս*, որը ստուգաբանվում է իբրև «*տոն կամ հանդէս, կամ պար*» (ԲՅԱ, 21), Ահ. Կայայանը վկայում է *հանդիսավոր* նշանակությունը՝ ըստ Հերոնիմոսի (էջ 512), ըստ ՎՍՀԱՄ-ի՝ *տոնախմբություն* (1122):

Անվան ուղիղ ձևն է **Անգե**, իսկ **Անգէաս** տարբերակը թեք հոլովածնի՝ հայերենում իբրև ուղիղ դրսևորում է: Նշենք նաև, որ ձեռագրերի վերնագրերում անունը տրվում է տարընթերցումներով՝ *Մարգարէութիւն Անգեայ, Մարգարէութիւն Անգէոսի, Մարգարէութիւն Անկէոսի, Մարգարէութիւն Անկեայ, Անկիա, Անգէի, Անգիայ, Անգէա, անգէէ, Անգէ մարգարէ, Անգէաս մարգարէ, Անկեաս մարգարէ* (ԳԵՄ, էջ 185):

Անունը *Աստվածաշնչում* համանուն հատկանուն է, այսինքն՝ գործածված է և՛ **որպես անձնանուն**, և՛ **տեղանուն** (քաղաք). «*Յանդիման ծովուն եւ Անգէի*» (Ծն. ԺԲ 8), «*Մարգարէանային Անգէ եւ Զաքարիա* (Ա Եգր. Է 3), «*Ասէ Անգէաս*» (Անգ. Ա 14): ԲՅԱ-ն այս անվան **Անգե** ձևը ներկայացնում է իբրև քաղաքի անուն, իսկ **Անգէոս** և **Անգէաս**

ծները՝ անձնանուն (Անգ. Ա 3, 13, Բ Եզր. Ե 1(21): Բայց Ա Եզրասի 2 1-ում գրվում է **Անգե** (հուն.՝ *ἀγγαῖος*):

Երիտասարդ տարիքում նրան Բաբելոնից բերել են տալիս Երուսաղեմ, որովհետև կարծում են, թե *Անգե* անունը բովանդակում է մարգարեական իմաստ՝ *իմ տոները*, իսկ այդպիսի անվամբ նրան կոչել են հավանաբար ծնողները՝ աքսորից հետո հրեական տոները վերահաստատելու գործում ունեցած ավանդի համար: Մեկ ուրիշ զրույցի համաձայն՝ Անգեի մեջ տեսել են մարդկային կերպարանքով հրեշտակի, որը Աստծու անունից խոսում է իսրայելցիների հետ⁴⁵⁴:

Ըստ *Ս. Գրքի՝ Անգե* մարգարեի գործունեությունը կապվում է Տաճարի վերաշինության սրբազան գործի հետ, ով դատապարտում է երուսաղեմցիների անհոգությունը՝ Աստծու տունը շինելու հանդեպ անտարբերության մեջ: Սրա գիրքը Մեսիայի գալստյան նկատմամբ վառ հավատի վկայություն է: Անգեսը ընդամենը չորս ամիս է զբաղվել մարգարեությամբ:

Սուրբ Գրքում բազմիցս գործածված եբրայական **Դանիել** (հուն.՝ *Δανιήλ*, ասոր.՝ ܕܢܝܐܝܠ **Դանիել**, ռուս.՝ *Даниил*, գերմ.՝ *Daniel*) անունը բառացի նշանակում է *Աստված է իմ դարավորը* (ԱԱ,18), նաև՝ *Աստծու դարաստան* (ԲՅԱ, 70, ՀԱԲ, հ. Բ 10), կամ *Աստված կրակի* (ԱԿՀԿՆ, էջ 399), ըստ ՅԵ-ի՝ *судия Божий, т.е. открывающий от лица Бога волю Его* (էջ 164):

Ըստ *Աստվածաշնչի* (Դն. Ա 6, 7, Բ 48, Եզկ. ԺԴ 14, ԻԸ 3, Ա Թգ. ԺԶ , Գ Թգ. Բ, Մտ. ԻԴ 15)՝ Դանիելը եղել է Դավթի թագավորական սերնդի մարգարեն՝ չորս մեծ մարգարեներից մեկը, որը դեռ մանուկ հասակում գերի է տարվել Բաբելոն: Շարունակ բանտարկվել է, բայց միշտ դուրս է եկել ավելի փորձված և իմաստնացած: Մեկնել է բազում երազներ, անարատ կյանք է ապրել համատարած հեթանոսության մեջ, մահացել է հայրենիքից հեռու՝ օտարության մեջ: Դանիելը ապրել է Բաբելոնում Նաբուգոդոնոսորի թագավորման տարիներին և նրան հաջորդած ևս հինգ թագավորների ժամանակ՝ մինչև Բաբելոնի կործանումը: Բաբելոնում է եղել հրեաների գերության առաջին իսկ օրից (606) և ևս երկու տարի ապրել է գերությունից վերադարձած: Նա եղել է Նաբուգոդոնոսորի ընկերն ու խորհրդատուն: Ըստ Հովսեփոս

⁴⁵⁴ Տե՛ս **Ահ. Կայայան**, *Հին Կրակարանի ներածություն*, էջ 512:

Փլավիոսի՝ Դանիելը և նրա երեք ընկերները եղել են Սեդեկիա թագավորի ազգականները: Դանիելի ժամանակներից մինչև Հիսուս Քրիստոս համաշխարհային թատերաբեմում 4 պետություններ են եղել՝ Բաբելոնիան, Պարսկաստանը, Հունաստանը և Հռոմը, ինչպես մարգարեացել էր Դանիելը⁴⁵⁵:

Դանիել-ը համանուն հատկանուն է. այս անվամբ հանդես են գալիս նաև *Հին Կտակարանի* այլ անձինք՝ Դավթի որդիներից մեկը և Իթամարի տնից մի ղևտացի (Բ Եզր. Ը 2):

Եզեկիել (Եզեկիել) (հուն.՝ *Εζεκιήλ*, ասոր.՝ *ܝܫܝܐܠ ܝܫܝܐܠ* **Իսազկիել**, ռուս.՝ *Иезекиил*) անվան բուն նշանակությունը ծագում է *հաստատված, ուժեղ, զորավոր Աստված* կամ *Աստված զորեղացնում է* կապակցություններից (ՀԱԲ, հ. Բ, 95), *Աստված ամրապնդում է* (ԱՀ ՀԿԼ, էջ 383), ըստ ՅԵ-ի՝ *которого укрепляет Бог* (էջ 265):

Եբրայեցիների 4 նշանավոր մարգարեներից մեկն է՝ *Հին Կտակարանի* երրորդ մարգարեն, որին հաճախ համեմատել են Հովհաննես ավետարանիչի, իսկ մարգարեությունը՝ *Հայտնության* գրքի հետ: Համառոտագրվել է **Եզեկ** ձևով, որն էլ դարձել է շփոթության հիմք **Եզեկիա** անվան հետ, որը Հուդայի երկրի թագավորի անունն է, և որոնց արմատը ծագմամբ, սակայն, նույնանում է: Թեև ժամանակակից է Երեմիային, և վերջինիս մասին եղած տեղեկությունները ստույգ են, նույնքան անորոշ են տեղեկությունները Եզեկիելի մասին (Ա Մնց. ԻԴ 16, Եզկ. Ա 3, ԻԴ 24):

Եսայի (Եսայիա/ս) (հուն.՝ *Ισαίας*, ասոր.՝ *ܝܫܝܐܠ ܝܫܝܐܠ* **Եշաիա**, ռուս.՝ *Исаия*, գերմ.՝ *Jesaja*): Ըստ *Աստվածաշնչի՝ Եսայի, Եսայիա, Եսայիաս*, ծագում է *ազատել* բայի արմատից, և բուն նշանակությունն է *Տիրոջ փրկություն* (ՀԱԲ, հ. Բ, 124), *Աստված փրկություն է՝* ըստ Ռ. Բերհաուսի (ԱԱ, 14), ըստ ՅԵ-ի՝ *спасение Иеговы* (էջ 324):

Եբրայեցիների չորս մեծ մարգարեներից առաջինը՝ Ամոսի որդին է: Սրա մարգարեության առաջին 12 գլուխները նվիրված են Հուդայի թագավորությանը, մյուսները՝ օտար ազգերին: Այրել է Երուսաղեմում և այնտեղ էլ մարգարե է դարձել: Արժանիորեն կոչվում է **աւետարանիչ մարգարէ**, և եկեղեցու հայրերը նրա գիրքը անվանում են **«Աւետարան ըստ Եսայեայ»**: Սրա մարգարեության մեջ որոշակի տեղ են գրավում

⁴⁵⁵ Դանիելի գրքի խորհուրդն այն է, որ Աստծու գերիշխանությունը հավերժ է: Աստծու հանդեպ թշնամաբար տրամադրված և՛ իշխանությունը, և՛ ժողովուրդը, և՛ մարդը արժանի են դատաստանի: Դատաստանը տարածվում է թե՛ հրեա անհավատների, թե՛ հեթանոսական մեծ տերությունների ժողովուրդների վրա:

կանխատեսումները ապագայի վերաբերյալ՝ Մեսիայի թագավորության մեծանալն ու բարգավաճելը: Եսայու կյանքն ավարտվեց նահատակությամբ: Մանասե թագավորը, չհանդուրժելով մարգարեի հանդիմանությունները, հրամայում է նրան մահապատժի ենթարկել՝ սղոցելով⁴⁵⁶:

Երեմիա/ս-ը (հուն.՝ *Ιερεμίας*, ասոր.՝ *ܝܪܡܝܐ* **Երամիա**, ռուս.՝ **Иеремия**, գերմ.՝ **Jeremia**) աստվածաշնչյան անուն է հունական տառադարձությամբ, որ նշանակում է *բարձրություն կամ մեծություն Աստծո, կամ բարձրյալ է Աստված* (ԲՅԱ, 190): Հր. Աճառյանը անվան նշանակությունը չի տալիս, կասկածելի է համարում Gesenius-ի «*լքված*» իմաստը (ՀԱԲ, հ. Բ, 136): ՅԵ-ն հաստատում է անվան *возвышенный, возвеличенный Богом* իմաստը (էջ 268):

Միայն *Հին Կտակարանում* հինգ անձեր կրում են **Երեմիա** անունը, բայց դրանց մեջ առանձնանում է **Երեմիա մարգարեն**:

Երեմիայի անձի մասին (Եր. Ա 1) առավել տեղեկացված ենք, քանզի նրա քարտուղար *Բարուքը* շարադրել է մի կենսագրական, որը կցվել է ամբողջ գրքին:

Աստվածաշնչի մեծագույն դեմքերից է՝ չորս մեծ մարգարեներից մեկը, որ ծնվել է 650-ական թվականներին ն.Ք.: Թեև սերել է քահանայական տնից (Աբիաթար քահանայից, որին Սողոմոնը աքսորել էր Անաթո/վ/թ, Ա Թգ. Բ 26), բայց ծաղկել է նրանց կենցաղը և միշտ բախումներ է ունեցել նրանց հետ: Ինքը քարոզել և գործել է Երուսաղեմում: Շարունակ թողություն է խնդրել իր ժողովրդի մեղքերի համար: Երեմիային է վերագրվում «*Ողբ Երեմեայ*» կոչված գիրքը: Նմանություններ կան այս հեղինակի և Հոբի միջև⁴⁵⁷:

Ըստ *Աստվածաշնչի՝ Ջարարիա/ս* (հուն.՝ *Ζαχαρίας*, ասոր.՝ *ܙܚܪܝܐ* **Ջիառյա**, ռուս.՝ **Захария**, գերմ.՝ **Sacharja**) անվան նշանակությունն է՝ *Տերը հիշում է* (ԲՅԱ, 95), ըստ

⁴⁵⁶ Եսային գրում է Աստծու զորության, մեղքի դիմաց պատժի ու Աստծու ահեղ դատաստանի մասին: Բայց նա միաժամանակ գեղեցիկ ու խոստումնալից կանխատեսումներ է արել խաղաղ ու երանելի ապագայի վերաբերյալ: Եսայու գիրքը ամբողջովին շնչում է պոեզիայի ոգով՝ «*Մեզ համար մանուկ ծնվեց, մի որդի տրվեց մեզ, որի իշխանությունն իր ուսերի վրա պիտի լինի, Նա պիտի կոչվի Մեծ խորհրդի հրեշտակ, Արանցելի խորհրդակից, Աստված հզոր, Իշխան խաղաղության, Հայր հանդերձյալ աշխարհի: Մեծ է նրա իշխանությունը, և նրա խաղաղությունը սահման չունի: Նա պիտի նստի Դավթի աթոռին, իրավունքով ու արդարությամբ պիտի զորացնի այն այսուհետև և հավիտյանս հավիտենից*» (Ես. Թ 6-7):

⁴⁵⁷ Կոապաշտության մեջ թաղված Երուսաղեմի համար Երեմիան կործանում է կանխատեսում և լաց է լինում դրա համար, ժողովրդի համար, քարկոծվում է ժողովրդի կողմից և մեռնում՝ դառնալով Քրիստոսի նախատիպը:

Հր. Աճառյանի՝ *Տիրոջ հիշատակ* (ՀԱԲ, հ. Բ, 176), իսկ ՅԵ-ն անվան իմաստը տալիս է՝ *воспомынутый Господом* (էջ 236):

Ըստ *Աստվածաշնչի* (Դ Թգ. ԺԵ 8, Ա Մնց. Ե 7⁴⁵⁸)՝ մի քանի նշանավոր անձեր են կրել այս անունը, որոնց մեջ նախ և առաջ **Ջաքարիան՝ Հին Կտակարանի** նշանավոր մարգարեներից, որը և՛ քահանա էր, և՛ մարգարե՝ հին քահանայապետական սերնդից, Բարաքիայի որդին էր, Ադդովի թողը (Ա Եզր. 2 1, 2 14, Նմ. ԺԲ 4, 16): Ծնվել է Բաբելոնում գերության տարիներին, բայց հրեաների առաջին խմբի հետ վերադարձել է Երուսաղեմ, որտեղ և Անգեի հետ մարգարեացել է: Սրա գլխավոր գործը այն է լինում, որ Անգեի հետ միասին հորդորում է սկսել Տիրոջ տան կառուցումը: Ջորաբաբել կառավարիչը և ողջ ժողովուրդը սրտապանդվեցին և վերսկսեցին աշխատանքը տաճարի վրա: Սրա գիրքը բաղկացած է 14 գլուխներից, և ինքը մեծագույնն է փոքր մարգարեների մեջ, որ գուշակեց գալիք Մեսիային, նաև Հիսուսի խաչելությունը և գեղարդով խոցվելը (ԺԲ 10) և 30 արծաթով ծախվելը (ԺԱ 12) և այլն: Մարգարեությունը տևում է երկու տարի, ըստ *Ավետարանի* տվյալների՝ սպանվել է Տաճարի մեջ:

Այստեղ ուզում ենք հիշատակել նաև մյուս **Ջաքարիային՝** ըստ *Նոր Կտակարանի՝* Եղիսաբեթի ամուսնուն՝ Հովհաննես Մկրտչի հորը՝ մի բարեպաշտ քահանայի, որը հրեշտակի կողմից Աստծու լուրը թերահավատութեամբ ընդունելու համար համրանում է մինչև որդու՝ Հովհաննես Մկրտչի ծնունդը. «*Երկուքն ալ արդար էին Աստուծոյ առջեւ և կը պահէին Տիրոջ պատուիրանները եւ օրէնքները անարարութեամբ*» (Ղկ. Ա 6):

Հունական տառադարձությամբ **Հովել (Յովէլ)** (հուն.՝ **Ιωήλ**, ասոր.՝ **ܐܘܠ ܝܘܠ**, ռուս.՝ **Иоил**, գերմ.՝ **Joel**) անվան նշանակությունն է «*կամեցող կամ սկսանող, կամ երդուող*» (ԲՅԱ, 167): Հր. Աճառյանը բերում է հների մի մեկնաբանություն՝ «*սիրելի Աստծո՞ւ*» (ՀԱԲ, հ. Գ, 535), ըստ Ռ. Բեքհաուսի՝ «*Տերն Աստված է* » (ԱԱ 17):

Ձեռագրերում սրա մարգարեության գիրքը վերնագրված է կամ **Մարգարէութիւն Յովելայ** կամ **Յովել Մարգարէ**, իսկ բուն տեքստում Յովելը տրվում է նաև **Յովէլ** և **Յաւել** տարբերակներով:

12 փոքր մարգարեներից մեկն է, որի անձի մասին շատ քիչ բան է հայտնի:

⁴⁵⁸ Ի դեպ, միայն *Մնացորդաց* երկու գրքերում հանդես են գալիս այս անունը կրող տասից ավելի անձեր:

Ապրել է Հուդայի թագավորության ժամանակ. տիրող կարծիքն այն է, որ նա մարգարեացավ Ոգիայի թագավորության ժամանակ՝ 800 թ., մինչև Քրիստոսը: *Ասրվածաշնչում Հին Կրակարանում*, բերվում է Հովելի մարգարեությունը, որտեղ մարգարեն մորեխների այլաբանությամբ կոչ է անում ժողովրդին պասի և ապաշխարության⁴⁵⁹:

Ըստ *Ասրվածաշնչի* (Ա Թգ. Ը 2, Ա Մնց. Գ 22, Դ 35, Է 3, ԺԵ 18, Ե 4, 8..., Բ Մնց. Թ 29, ԻԹ 12, Գրծ. Բ 16)՝ *Հին Կրակարանում* հիշատակվում են այս անունը կրող 14 անձ:

Հովնան, (Յովնան, Յոնան) (հուն.՝ *Ιωναν*, ասոր.՝ *ܝܢܢ Զոնան*, ռուս.՝ *Иона*, գերմ.՝ *Jona*) անվան բուն նշանակությունը նույնանում է *Հովհաննեսի* հետ՝ «Տիրոջ շնորհ կամ պարգև, կամ ողորմութիւն, կամ ողորմած, կամ շնորհաւոր» (ԲՅԱ, 170): Մինչդեռ Ռ. Բերհաուսը տալիս է այլ նշանակություն՝ «աղավնի» (ԱԱ, 17):

Մարգարէութիւն Յովնանու գրքի վերնագիրը ձեռագրերում տրվում է նաև այլ ձևերով՝ **Յովնան մարգարէ, Յունան մարգարէ, Մարգարէութիւն Յունանու:**

Ըստ *Ասրվածաշնչի* (Տվբ. ԺԴ 6⁴⁶⁰, Եսթ. ԺԴ 5⁴⁶¹, Մտթ. ԺԲ 40)՝ փոքր մարգարեներից մեկն է. սա առաջին հրեա մարգարեն էր, որին Աստված ուղարկեց հեթանոսական երկիր⁴⁶²:

Հովնան-ը համանուն հատկանուն է, և այս անվամբ *Սուրբ Գրքում* հանդես եկող անձերը շատ են (Մտթ. ԺԶ 17, Բ Եզր. 8, Ա Եզր. Ը 41, Ա Մնց. Գ 24, Բ Մնց. ԻԳ 1):

Մաղաքիա (հուն.՝ *Μαλαχίας*, ասոր.՝ *ܡܠܚܝܐ Մալախի*, ռուս.՝ *Малахия*, գերմ.՝

⁴⁵⁹ Շատերը մորեխի այլաբանության տակ ընկալում են քաղղեացիներին, պարսիկներին, հույներին և հռոմեացիներին: Սա նկարագրում է ավերածության և երաշտի հետևանքները, տառապյալ ժողովրդին: Հավատի է կոչում, որ բոլոր հարվածները դադարելու են, և պտղաբերություն է լինելու, և սկսում է նկարագրել լիության և հաջողության դարձը: Գուշակում է ավելի հեռավոր ապագա՝ Մեսիայի թագավորության նշանները և հոգևոր բարգավաճումը: Եվ այս ամենը *Ասրվածաշնչում* մատուցվում է վայելուչ և բանաստեղծական ոճով:

⁴⁶⁰ *Յոթանասնիցը* այս գործածությունը չի տալիս:

⁴⁶¹ *Եսթերի գիրքը* հայերեն բնագրում ունի ԺԴ գլուխը, որ չկա *Յոթանասնիցում*, իսկ գրաբար բնագիրը *Եսթերի գիրքը* տալիս է ոչ հաջորդական գլխակարգությամբ:

⁴⁶² Աստված պատվիրեց նրան զգուշացնել անհավատ նինվեացիներին հետ կանգնելու իրենց մեղքերից: Հովնանը փորձեց խուսափել այդ առաջադրանքը կատարելուց, որի համար էլ մի հսկա ձուկ՝ կետ, կուլ տվեց նրան: Աստծու կամքով 3 օրից ձուկը նրան հետ է փսխում դեպի ցամաք: Այս անգամ Հովնանը ենթարկվում է Աստծուն և գնում՝ նրա կամքը կատարելու: Նա վերջիվերջո քարոզեց նինվեացիներին, որոնք զղջացին իրենց արարքների համար և դարձան Աստծուն: Նա ու նրա միջոցով նաև հրեա ժողովուրդը հասկացան, որ Աստված հոգ է տանում բոլոր ժողովուրդների ու կենդանիների մասին: Հովնանի գիրքը կոչվում է հենց իր անունով:

Maleachi) անվան բուն նշանակությունն է «*հրեշտակ իմ կամ ւեփակ իմ*» (ԲՅԱ, 138), բառացի՝ *մարգարեություն*, նաև՝ *պատգամավոր*: Անձի և անվան մասին հետաքրքիր տեղեկություններ է տալիս Ահ. Կայայանը. «Գրքի հեղինակի անձի վերաբերյալ կատարյալ անտեղյակությունը ոմանց ստիպել է ամբողջապես կասկածի տակ դնել **Մաղաքիա** անունը կրող մարգարեի գոյության փաստը: Այդ անունը նույնացրել են **Մալեասի** (իմ պատգամաբեր) բառին, որն օգտագործվում է 3:1 հատվածում»⁴⁶³: Ի դեպ նշենք, որ գերմաներենում է **Մաղաքիա** անունը ներկայացվում *Maleachi*, ռուսերենում՝ *Малахия*: ԵՑ-ն տալիս է *Мої посланник* նշանակությունը, ԻՋԵ-ն՝ *Мої Ангель*: Կարծում ենք՝ անվան մեջ չպետք է անտեսել **իա** բաղադրիչը, որը նշանակում է **Եհովա**, ուստի **մաղ(լ)աք** (*հրեշտակ*) արմատին հավելել է հարկավոր նաև դա և արդյունքում կունենանք **Տիրոջ (Եհովայի) հրեշտակ** նշանակությունը:

Ըստ *Աստվածաշնչի*՝ Անգ. Ա 13, Մղք. Գ 1-ում **Մաղաքիայի** փոխարեն տրվում է անվան նշանակությունը. «*Եւ ասէ Անգէլոս հրեշտակն Տեանն* (τὸν ἄγγελόν μου) *ցժողովորդն...*», որն էլ տարակարծությունների տեղիք է տվել այս անունը հատուկ համարելու⁴⁶⁴:

Սա փոքր մարգարեներից է և վերջինն է *Հին Կտակարանում*, որը գուշակել է Հովհաննես Մկրտչի գալուստը (Մղք. Գ 1, Դ 5, 6), նաև Քրիստոսի կրկին գալուստը: Սրանով էլ վերջանում է *Հին Կտակարանը*, իսկ *Նոր Կտակարանը* բացվում է Քրիստոսի գալուստով:

Միքիա/ս-ը (հուն.՝ *Μιχαίας*, ասոր.՝ *ܡܝܚܝܐ* **Միխա**, ռուս.՝ *Михей*, գերմ.՝ *Micha*) ըստ *Աստվածաշնչի* (Գ Թգ. ԻԲ 8, 9, 13, 14, 19, 26, Ա Մնց. Զ 40, ԻԳ 20, ԻԴ 24, 25, Բ Մնց. ԺԷ 7...)՝ **Միքիա**, **Միքիաս**, **Միքեաս**, արական եբրայական անուն է՝ հունական տառադարձությամբ, որի նշանակությունն է «*աղքատ կամ խոնարհ, կամ հարկանոթ, կամ հարեալ, կամ ով է որպես Աստված* (հմմտ. Միքայել – ՓՄ)» (ԲՅԱ, 149): Վերջին իմաստին է հակված նաև Ահ. Կայայանը. «Միքիայի անունը (եբրայերենում՝ **Միկա**, որ **Միկայա** կամ ավելի լրիվ՝ **Միկայահու** բառի կրճատ ձևն է) թարգմանաբար նշանակում է **Տիրոջ նման**: Այսինքն՝ Իսրայելի միաստվածային հին կրոնը հայտնվել է հատուկ

⁴⁶³ Տե՛ս Ահ. Կայայան, նշվ. աշխ., էջ 523:

⁴⁶⁴ *Հրեշտակ Տեանն* արտահայտությունը նաև մականուն, տիտղոս է Հիսուս Քրիստոսի, որի մասին ակնարկվում է *Հին Կտակարանում* (Ծն. ԺԶ 7-13, ԻԲ 11-13): Տե՛ս ԲՄԳ, էջ 319:

անվան ձևով (Ել. ԺԵ 11, Երկ. Օր. 2 4): Ուստի ունի նույն իմաստը, ինչ **Միքայել** անունը (Դն. Ժ 13): Միքիան գրքի մի հատվածում (Է 18) կարծես թե ինքն էլ է ակնարկում իր անվան այդ նշանակության մասին՝ Եսայու նմանողությամբ» (Ես. Ը 18)⁴⁶⁵:

Միքիայի մարգարեությունների գրքի վերնագիրը տարբեր ձեռագրերում տրվում է տարբեր կերպ՝ **Միքիա Մարգարէ, Միքեաս, Միքեա, Մարգարէութիւն Միքա, Միքիաս**:

Սա 12 փոքր մարգարեներից վեցերորդն է, որը կանխագուշակեց Իսրայելի հյուսիսային (Հովաթամի, Աքազի, Եզեկիայի թագավորության օրոք) այնպես էլ Հուդայի հարավային (Փակեեի և Օսեեի թագավորության օրոք) թագավորությունների դժբախտ ճակատագիրը: Նա նաև գուշակեց, որ Սամարիան կդառնա քարակույտ, իսկ Բեթղեհեմից մի հզոր կառավարող՝ նոր արքա պետք է իշխի Իսրայելում⁴⁶⁶:

Նավում (հուն.՝ *Ναούμ*, ասոր.՝ *ܢܘܡ* **Նաում**, ռուս.՝ **Наум, Haxym**, գերմ.՝ **Nahum**) անունը բառացի նշանակում է «մխիթարիչ կամ ապաշխարող, կամ առաջնորդ նոցա» (ԲՅԱ, 175), *մխիթարող, մխիթարություն* (ՀԱԲ, հ Դ, 28): Ի՞նչ է ցույց տալիս համեմատությունը այլ բառարանների հետ: *Բառգիրք հայոցը մխիթարություն*, կամ *ողորմել*, կամ *ամենեցուն*, ավելի հին բառարանները՝ ԲԵ-ն և ՄԱԵ-ն տալիս են **Նաում**-ը, և այն մեկնում իբրև *մխիթարիչ* կամ *ողորմութիւն ամենեցուն*⁴⁶⁷: **Մխիթարիչ** նշանակության հաստատումը տալիս է ԵՏ -ն՝ *умешатель*, ՅԵ -ն՝ *умешение* (էջ 456):

Ըստ *Աստվածաշնչի* (Ա Եզր. Թ 35՝ **Նաոմա**, Նմ. Է 7՝ **Նաոմ**, Ղկ. Գ 25՝ **Նաոսս**)՝ 12 փոքր մարգարեներից յոթերորդը, ծագումով Ելկեսից է, որտեղ և ծնվել ու ապրել է: *Նոր Կրակարանում* (Ղկ. Գ 25) Հիսուսի հոր՝ Հովսեփի սերնդի մեջ Նավումը հիշատակվում է որպես Էլսիի որդի, Ամո/վ/սի հայր: Սրա մարգարեությունը բաղկացած է երեք գլխից: Նավումը գուշակել է Նինվեի և Թեբեի կործանումը:

Սոփոնիա/ս (հուն.՝ *Σοφονίας*, ասոր.՝ *ܣܘܦܢܝܐ* **Սպանիա**, ռուս.՝ **Софония**, գերմ.՝ **Zefania**) արական եբրայական, հունական տառադարձությամբ այս անունը ծագում է

⁴⁶⁵ Նույնը, էջ 450:

⁴⁶⁶ Նա խոսում է նաև այդ թագավորի մի շարք հատկանիշների՝ ուժի, մեծափառության, իշխանության և խաղաղության մասին. «Եւ դու՛, Բեթղեհեմ, տուն Եփրաթայ, սակաւատր իցես լինել ի հազարատրս Յուդայ, ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայելի, եւ ելք նորա ի սկզբանէ աւուրց աշխարհի » (Միք. Ե 2-3):

⁴⁶⁷ Ինչպես ևս մեկ անգամ համոզվում ենք, *Բառգիրք հայոցը* սխալաշատ է, որտեղ առաջին իսկ հայացքից նկատելի է հեղինակի անփութությունը՝ *ողորմել ամենեցուն* կապակցությունը իբրև առանձին նշանակություն տալը:

թաքցնել, ծածկել, պահել բայերի արմատից (ՀԱԲ, հ. Դ, 596), և նշանակում է «թաքուստ կամ գաղտնիք տեսան» (ԲՅԱ, 214), նաև՝ *Աստված բարձր է գնահատել* (ԱԱ, 15): Ահ. Կայայանը ներկայացնում է երկու իմաստ՝ *Աստված թաքցնում է կամ Աստված պաշտպանում է* (նշվ.աշխ., էջ 506):

Սրա մարգարեության գիրքը ձեռագրերում տրվում է **Սոփոնիա** անվան մի շարք տարրընթերցումներով՝ **Սոփովնիայ, Սոփոնիայ, Սոֆոնիայ, Սոփոնեա, Սոփոնի**:

Ըստ *Աստվածաշնչի* (Դ Թգ. ԻԵ 18) **գՍոփոնիա** (հուն.՝ τὸν σοφονίαν), Զք. Զ 10, 14, Երմ. ԻԱ 1, ԻԹ 29, ԼԷ 3, ԾԲ 24)՝ մարգարե՝ Եզեկիա թագավորի ծոռը, որը Հոսիասի թագավորության ժամանակ գուշակեց, որ Հուդային դատաստան է սպասում: Ըստ նրա՝ սակավաթիվ մարդիկ պետք է վերադառնային Երուսաղեմ:

Համանուն հատկանուն է. այս անվամբ հայտնի են՝ **Սոփոնիա քահանա**, որին երբեմն անվանել են նաև **Սափան** (Ա Մնց. Զ 36), **Սոփոնիա՝** Զաքարիայի մի քանի ժամանակակիցների հայրը (Զք. Զ 10/14) և **Սոփոնիա՝** Երեմիայի ժամանակակիցը (Եր. ԻԱ 1, ԼԷ 3):

Ովսե (Ովսե, Օվսե, Ովսէ) (15) (հուն.՝ Ωσηέ, Ωσή, ասոր.՝ ܐܘܫܘܐ Հոշա, ռուս.՝ Осия, գերմ՝ Hosea) անվան նշանակությունն է *փրկիչ, փրկություն* (ԲՅԱ, 183), իսկ այդ նշանակության շուրջ տարակարծություններ չկան:

Ովսեայ անունը ձեռագրերում ունի տարրընթերցումներ՝ **Յովսեա, Յովսեայ, Ովսիայ, Ովսէա, Ովսէայ, Ովսեա**:

Ըստ *Աստվածաշնչի* (Ովս. Ա 1, 2)՝ 12 փոքր մարգարեներից առաջինն է՝ Ամովսի կրտսեր ժամանակակիցը՝ ավագ ժամանակակիցը Եսայու և Միքիայի: Օվսեի մարգարեությունը վերաբերում է Իսրայելի Հյուսիսային թագավորությանը՝ նրա գոյության վերջին 40 տարիներին, երբեմն Հուդային: Նրա մարգարեական առաքելությունը տևել է 60 տարի (Հերոբոլամ 2-ի, Զաքարիայի, Շաղումի, Մանայեմի, Փեքանիայի, Փակեեի, Օսեեի, իսկ Հուդայի թագավորությունում՝ Ոզիայի, Հովաթամի, Աքազի և Եզեկիայի օրոք): Ովսեի գրքում շատ են այլաբանությունները. հաճախ անհնարին է որոշել՝ Ովսե՞ն է խոսում իր կնոջ հետ, թե՞ Աստված՝ իր ժողովրդի: Անբարոյական վարքի տեր իր կնոջից ունեցած երեխաների անուններն անգամ խորհուրդներ ունեն իրենց մեջ.առաջին որդու անունը՝ **Եզրայել**. այս նույն անվամբ հայտնի է քաղաք, ուր Հեռն

սպանեց թագավորի որդիներին: Երկրորդ երեխայի՝ դստեր անունը՝ **Lo-րուհամա**, որ բառացի նշանակում է *այլևս չեմ ողորմելու*: Երրորդ երեխայի՝ երկրորդ որդու անունը՝ **Lo-ամմի**, որ նշանակում է *իմ ժողովուրդը չէ*: Այնուհետև Ովսեն կրկնում է այդ անունները առանց *Lo (ոչ)* բաղադրիչի՝ ակնարկելով այն ժամանակը, երբ նրանք դարձյալ կդառնան Աստծու ժողովուրդ: *Ովսեի* մարգարեության մասին հիշատակվում են Մտթ. Թ 13, Հովմ. Թ 25, 26, Ա Պետր. Բ 10 գրքերում:

Համանուն հատկանուն է. այս անվամբ հայտնի են բեթսահմցի տղամարդու անուն՝ **Ովսե** (Ա Թգ. Զ 14, 18), որը նույնպես *փրկիչ* է ստուգաբանվում, ինչպես անվան **Ովսեե** տարբերակը: ԲՅԱ-ում հիշատակվում է ևս մեկ անվան տարբերակ՝ **Ովսէր**, որը սակայն հրեաները գրում էին **Ովսեե** (1 Մնց. ԻԷ 20)⁴⁶⁸: Եվս մեկ **Ովսեե** է հիշատակվում Ա Մնց. ԺԶ 38-ում, որը եբրայերենում գրվում է **Ոսա (Ոսոս)** ձևով:

Ահա այս անձինք հայտնի են իրենց մարգարեությունների գրքերով, որոնք ներկայացված են *Հին Կտակարանում*⁴⁶⁹: Բացի այս մարգարեներից *Աստվածաշնչում* հայտնի են դարձյալ մարգարեներ, որոնք, սակայն, ուղղակի իբրև նշանավոր անձեր են հանդես գալիս: Դրանցից երկուսին հարկ ենք համարում հիշատակել, որոնցից առաջինը *Հին Կտակարանում* **Եղիան** է (**Հեղիաս, Եղիաս**, 105) (հուն.՝ **Ἠλίας**, ասոր.՝ **ܐܠܝܐ ܝܗܝܐ**, ռուս.՝ **Илия**): Անվան նշանակությունն է *Եհովան է իմ Աստված (Եղ/Էղ/Էլ-աստված և Իա-Եհովա)*: ԲՅԱ-ում նշվում է, որ **Հեղիաս**-ը ստուգաբանվում է «զորութիւն Տեառն կամ *ցաւ տեառն*, կամ *աստուած տէր*, կամ *հզոր տէր*», իսկ **Եղիա**-ն «*աստուած Տէր կամ հզոր Տէր*» (ԲՅԱ, 81): Ըստ ՅԵ-ի՝ անունը մեկնաբանվում է *мой Бог – моя крепость, или Бог есть Господь* (էջ 289)⁴⁷⁰:

Ըստ *Աստվածաշնչի* (Դ Թգ. Ա 3, 7, 8..., Բ 8, 9..., Ղկ. Դ 25)՝ Եղիան հրեա նշանավոր մարգարե է, որ եղել է առասպելական անձնավորություն և մեծ ժողովրդականություն է վայելել: Աստծու արդար զայրույթի մարմնացումն է Եղիան երկրի վրա: Ծագման մասին ոչինչ չի ասվում *Աստվածաշնչում*: Սա պայքարում է Աքաաբ թագավորի արքունիքում նրա կնոջ՝ Եզաբելի՝ իբրև օժիտ բերված

⁴⁶⁸ Ըստ *Յոթանասնիցի*՝ դարձյալ **Ոսոս**:

⁴⁶⁹ Տե՛ս Ա-1, Ա-2 օրինակները՝ *Եսայի, Երեմիա, Ողբ Երեմեայ, Եզեկիել, Դանիել, Ովսէ, Յովէլ, Ամոս, Աբդիու, Յովնան, Միքիէ, Նաուամ, Ամբակում, Սոփոնիա, Անգէոս, Զաքարիա, Մաղաքիա*, մինչդեռ Ա-3 (արևելահայերեն թարգմանությունը) տալիս է այլ հերթականությամբ:

⁴⁷⁰ Անվան մասին տե՛ս նաև *Առաջաբան*, էջ 15:

ժառանգության՝ կռապաշտության դեմ: Ենովքի պես եղավ երկրորդը, որը մահ չտեսավ և կենդանի համբարձվեց երկինք. «Յանկարծ հրեղեն կառք մը և հրեղեն երիվարներ զափեցին երկուքը իրարմէ (Եղիսեի մասին է – ՓՄ) և Եղիա մրրիկով երկինք վերացաւ» (Դ Թգ. ԺԱ):

Եղիա-ն համանուն հատկանուն է. *Աստվածաշնչում* այս անվամբ հայտնի են ևս երկու անձ (Մղ. Դ 5, Բ Եգր. Ժ 20, 26):

Երկրորդ անձը Եղիայի աշակերտն է՝ **Եղիսե/Եղիսեոս** (հուն.՝ **Ελισσαῖος**, ասոր.՝ **ܐܠܝܨܝܐ Ելիշա**, ռուս.՝ **Елисей**): Անվան բառացի նշանակությունն է *Աստու փրկություն* կամ *Աստված փրկիչ* (ԲՅԱ, 83): Հայերեն տառադարձված է երկու ձևով. հնագույն ձևը, ըստ ասորականի, **Եղիշա**, **Եղիշե** է, ավելի նորը՝ ըստ հունականի՝ **Եղիսե**, որն այժմ անգործածական է:

Ըստ *Աստվածաշնչի* (Գ Թգ. ԺԹ 16-17, Դ Թգ. Բ 1-6, Դ..., Ե..., Զ..., Է..., Ղկ. Դ 27)՝ Եղիսեն Եղիայի աշակերտն է և հաջորդը Իսրայելի մարգարեներից: Սա հողագործ էր, մինչև Եղիան նրան դարձրեց մարգարե, և նա ականատես եղավ Եղիայի համբարձմանը: Սրան ևս շատ հրաշագործություններ են վերագրվում՝ Երիքովի ջրերով բուժումը, այրի կնոջ ամանը ձեթով լցնելը, սինեմացի կնոջը որդի տալը, Նեեմանը բորոտությունից սրբելը և այլն:

6.3. Լեռնանուններ

Աստվածաշնչի հատուկ անունների՝ մեր ուսումնասիրության մեջ իրենց ուրույն տեղն ու դերն ունեն լեռնանունները: Դրանք ոչ պակաս չափով իրենց մեջ կրում են ոչ միայն հրեաների, այլև բազմաթիվ այլ ցեղերի ու ժողովուրդների պատմության ինչ-որ տարրեր, և այդ անունների քննությունը ևս ի ցույց է դնում բազմաթիվ հետաքրքիր իրողություններ:

Մեծ է լեռան խորհուրդը *Սուրբ Գրքում*:

Հնում լեռան մեջ մարդիկ աստվածային ուժ և զորություն են տեսել. Եսայու մարգարեության մեջ կարդում ենք. «*Աստու Կունը լեռների գագաթներին, պիպի բարձրանայ բլուրների վրայ, եւ բոլոր հեթանոսները պիպի շարժուեն դէպի նա*» (Բ 2), Երեմիայի մարգարեության մեջ. «*Օրհնեալ է Տէրն իր արդար ու սուրբ լեռան վրայ*» (ԻԱ 23): Լեռը ապահովություն և ապաստան է եղել, թշնամուն դիմագրավելու ու թշնամուց պատսպարվելու հզոր միջոց. սաղմոսներում դա յուրահատուկ ձևով է արտահայտվում. «*Աչքերս դէպի լեռները բարձրացրի, որտեղից ինձ օգնութիւն պիպի գայ*» (ՃԻ 1): Եվ հետո. եթե ուշադիր լինենք, ապա կնկատենք, որ Աստված իր բոլոր մեծ ու փոքր գործերը լեռների վրա էր կատարում: Հիշենք մի քանիսը. Նոյի տապանն իջավ Արարատ լեռան վրա, Աստված Աբրահամին պատվիրեց բարձրանալ լեռան վրա և այնտեղ զոհաբերել իր Իսահակ որդուն, Սինա լեռան վրա բարձրացավ Մովսեսը և Աստծուց ստացավ քարե Տասնաբանյան, Քրիստոսը խաչվեց Գողգոթայի վրա, և վերջապես Սինա լեռը հոչակված էր իբրև Տիրոջ լեռ:

Հին ժողովուրդներն ու ցեղերը սիրել են իրենց բնակությունը հաստատել անպայմանորեն լեռների փեշերին, և այդպես հիմնադրվել են խոշոր գյուղեր, քաղաքներ, անգամ երկրներ: Ու քաղաքը հիմնադրողի անունով էլ կոչվել են թե՛ քաղաքը, թե՛ լեռը, թե՛ դաշտը, անգամ գետը: Այդպես լեռները անվանվել են՝ Նեփթաղիմի անունից՝ *Նեփթաղիմի լեռներ*, Հուդայի անունից՝ *Հուդայի լեռներ*, Եփրեմի անունից՝ *Եփրեմի լեռներ*, և սա դարձյալ փաստում է մի օրինաչափություն դարձած ճշմարտություն, որ միշտ անձնանունից է առաջանում տեղանունը:

Աբարիմ (հուն.՝ **Αβαριμ/Αβαριον**, ասոր.՝ ܐܒܪܝܡ **Ավռիմ**, ռուս.՝ **Аварим**):

Անվան նշանակությունները մի քանիսն են՝ բոլորն էլ բացատրվում են հոգնակի՝ «անցք, անցաւորք, սրտմտութիւնք և կամ ասորերեն՝ *ցորեանք*»: Այն կարծիքը, որ *Աբարիմը* լեռնային երկիր է, և նրա լեռներն են *Նաբավը, Փեգովը*⁴⁷¹, *Աստվածաշնչում* չի հաստատվում. *Աբարիմը* լեռ է, ու դրանում կհամոզվենք ստորև:

Անունը տարրնթերցում ունի *Յոթանասնից* բնագրում՝ **Աβαօր** և **Աբարիմ**:

Ըստ *Աստվածաշնչի* (Երկ. Օր. ԼԲ 49՝ **տ՛օ Աբարի**, Թվ. ԼԳ 47՝ **տ՛օ Աբարիմ**) Երիքովի դիմաց տարածված Մովաբի երկրի լեռն էր, որը հաճախ *Աստվածաշնչում* սխալմամբ գործածվում է նաև *Նաբավ* անվան փոխարեն. «Ե՛լ դու ի լեռոնն **Աբարիմ**, ի լեռոն **Նաբաւ**, որ է յերկրին Մովաբու յանդիման Երիքովի» (Երկ. Օր. ԼԲ 49): Ա-3-ը նույնիսկ խմբագրել է՝ «*Աբարիմ լեռը՝ Նաբաւ լեռը...*»: Իսկ սա գալիս է հունարեն թարգմանությունից. *Յոթանասնիցում* տրված է՝ «**τὸ ὄρος τὸ Αβαριον τοῦτο ὄρος ναβου**»: Հաջորդ բնագրային օրինակում տեսնում ենք, որ *Աբարիմն* ու *Նաբավը* տարբեր լեռներ են. «...*եւ բանակեցան ի լերինսն Աբարիմ յանդիման Նաբաւայ... Չուեցին ի լերանցն Աբարիմայ*» (Թվ. ԼԳ 47-48), որը ասես պատճենված լինի հունարեն տեքստից՝ **τὰ Αβαριμ ἀπέναντι ναβου**:

Արարատ (Արարադ)⁴⁷² (հուն.՝ **Αραρατ**, ասոր.՝ **ܐܪܪܐܬ** **Առառաթ**, ռուս.՝ **Арарат**):

Ըստ *Աստվածաշնչի*՝ Ծն. Ը 4՝ *Արարապ* կամ *Արարադ*. «Եւ նստաւ փապանն յերթներորդում ամսեանն ի քսանեւեթն ամսոյն ի **լերինս Արարապայ**» – Ա-1, «... փապանը **Արարադ լեռներուն** վրայ նստաւ» – Ա-2, «փապանը նստեց *Արարապ լեռան վրայ*» – Ա-3 (հուն.՝ **τοῦ μῆνός ἐπὶ τὰ ὄρη τὰ Αραρατ**, լատ.՝ **montes Armeniae**, ռուս.՝ **горы Араратских**): Ինչպես նկատում ենք, գրաբար և արևմտահայերեն տեքստերում խոսքը ոչ թե լեռան, այլ լեռների մասին, որը արևելահայերենում տրվում է եզակի ձևով:

Գրաբար՝ Ա-1, բնագիրը *Ծննդոց* գրքի *Արարապ* անվան գործածությամբ համընկնում է հունարեն բնագրին, բայց տարբերվում է լատիներենից՝ Վուլգատայից, որտեղ տրված է՝ *die mensis super montes Armeniae*:

Տովբիթի գրքի հունարեն տեքստում առկա *Արարապի* փոխարեն (հուն.՝ **Αραρατ**) Ա-1-ում տրվում է *Հայոց լեռներ* ոչ թե Ա 21-ում, այլ Ա 24-ում. «...*եւ փախեան նոքա ի*

⁴⁷¹ Տե՛ս ԵՇ, էջ 2:

⁴⁷² Հետաքրքիր դիտարկումներ է պարունակում Ս. Վեբերի *Արարապը Սուրբ գրոց մէջ գիրքը*՝ թրգմ.՝ Բառնաբաս, Վ. Պիլեզիճիկեանի, Վիեննա, 1901:

լերինս Հայոց» (նույնը՝ Ա-3): Ասել է թե՛ այս կիրառության հիմքը չի կարող լինել Յոթանասնիցը: Ո՛չ արևմտահայերեն, ո՛չ ռուսերեն կանոնները չունեն *Տովբիթի* գիրքը, այսինքն՝ չունեն այս կիրառությունը, լատիներենը իր կանոնի մեջ ներառում է *Տովբիթի* գիրքը, բայց այս կիրառությունը դարձյալ չի տալիս: Այնպես որ մենք չենք կարող իմանալ, թե որն է հայերենում *Հայոց լեռներ* կիրառության բնագրային հիմքը:

Դ Թագավորությունների ԺԹ 37-ում գրեթե նույն պատմությունն է տրվում, սակայն այստեղ արդեն լեռան փոխարեն տրվում է *լերկիրն Արարադայ, Արարադի երկիր, Արարադի երկիր* կապակցությունը. «... եւ Արարադի երկիրը փախան» (հուն.՝ γῆν Ἀραράτ, լատ.՝ **terram Armeniorum**, ռուս.՝ **в землю Араратскую**):

Արարադ անունը ենթարկվել է զանազան ստուգաբանությունների⁴⁷³. «անէծք սասանման, կամ երբայեցերէն և ասորերէն՝ անէծք կամ լոյս ընթացող»՝ ըստ ՝ ԲՅԱ-ի (33):

Մովսես Խորենացին այս անունը կապում է Արա Գեղեցիկի անվան հետ և ստուգաբանում է *Արայի արապ (Արայի կործանում)*, որից և՛ *Արարապ*: Փավստոս Բուզանդը վկայում է *Սարարադ* (այսինքն՝ սարն *Արարադ*) ձևով: Անունը փորձում են բացատրել սեմական լեզուների օգնությամբ, որոնցում նշանակում է *բարձրություն*, իսկ արմատի կրկնությունը բառին տալիս է սաստկական իմաստ, այսինքն՝ *ավելի բարձր*: Արարատ անվանը տրվել են նաև *լոյս, փայլ, զորություն, մեծություն* իմաստները, *Հուրարապ, Հարա-հարա (Լերինք լեռանց) Արի-վարդա (Արեաց երկիր)* անունները ևն:

Ոմանք Արարատ անունը ծագած են համարում *Ուրարպու* անունից (Հումելաուեր, Շրյոդեր), Ղ. Ինճիճյանն ու Ղևոնդ Ալիշանը գտնում են, որ Արարատը նախապես եղել է երկրի կամ թագավորության անուն և հետո միայն դարձել լեռան անուն:

Օտար մատենագիրները կոչել են *Արարադի լեռներ, Արարադյան աշխարհի լեռներ, Հայոց լեռներ*⁴⁷⁴:

Բերել (Բերելյան) (հուն.՝ Βαιθηλ, ասոր.՝ ܒܝܬ ܒܝܬ ܗܝ, ռուս.՝ **Ветфильская**):

Ըստ Հին Կտակարանի՝ *Լուգա* կոչվող քաղաքը Հակոբի կողմից վերանվանվեց

⁴⁷³ Մանրամասն տե՛ս **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների փեղանունների բառարան**, հ. 1, էջ 395-397:

⁴⁷⁴ Ասենք, որ *Արարապ* անունը *Աստվածաշնչում* հանդիպում է նաև իբրև երկիր *Արարապ, Արարադյան երկիր, Արարադյան ազգ* ձևերով՝ «...հրավիրեցէք նորա դէմ Արարադի, Միննիի եւ Ասքանասի թագաւորութիւնները...» (Եր. ԾԱ, 27). «Եւ մինչդեռ երկիր պագանէր (Սենեքերիմի մասին-ՓՄ) ի փան իւրում՝ Նասրաքայ կողոց իւրոց, Ադրամելէք եւ Սարասար որդիք նորա սպանին գնա սրով եւ ինքեանք գնացին փախստական յերկիրն Արարապ » (Ես. ԼԷ 38): «Ինքեանք գերծան յերկիրն Արարադայ»:

Բերթել, այսինքն՝ տրուին Աստուծու և Բերթել քաղաքի անունից էլ՝ Բերթելի լեռները. «ի լերինն Բերթելայ» (Ա Թգ. ԺԳ 2 հուն.՝ τῷ ὄρει βαιθηλ):

Գարիզին (հուն.՝ Γαριζιν, ասոր.՝ ܡܘܨܝܘܐ **Գարիզին**, ռուս.՝ Гаризим):

Անունը բառացի նշանակում է՝ «պատրաստող կամ բաժանարարը, կամ տրամաբան» (ԲՅԱ, 63): Ըստ Աստվածաշնչի՝ Գարիզին (Բ Օր. ԺԱ 29, ԻԷ 12. հուն.՝ ὄρος Γαριζιν). «Ի լերինն Գարիզին» (Հս. Ը 33), «Մերձ ի լեռնն Գարիզին» (Դտ. Թ 7):

Սամարիայում գտնվող բարձր լեռ է (դիմացը Գեբաղ լեռն է), որի վրա իրենց կրոնական արարողություններն էին կատարում սամարացիները: Այդ լեռան՝ Սյուքար քաղաքի մոտ գտնվող Հակոբ նահապետի անունով ջրհորի մոտ տեղի է ունենում Հիսուսի զրույցը սամարացի կնոջ հետ, որին նա հայտնում է իր՝ Մեսիան լինելու մասին:

Լեռն այժմ անվանվում է Ջերել-Էլ-Թոր և ունի 800 մետր բարձրություն:

Գաղաադ(Գաղաադ) (հուն.՝ Γαλααδ, ասոր.՝ ܘܘܠܐܘܐܘܐ **Գըղաթ**, ռուս.՝ Галаад (БС-евр-Гилад):

Երբայերենում այս լեռն անվանվում է **Գաղեդ, Գիղադ, Գիղեադ** և նշանակում է «կարկառ վկայ, բլուր վկայութեան» (ԲՅԱ, 60): Անվան ծագումը տրվում է Ծննդոցում (ԼԲ 47-48)՝ Հակոբի և Լաբանի կողմից մի քարե հուշարձան դնելիս. Լաբանն այն անվանում է քաղդեերեն (ասորերեն)՝ Եէկար սահապուրթա (վկայության դեզ), Հակոբն այն անվանում է երբայերեն՝ **Գաղաադ** (վկայության դեզ, Ա-2):

Ըստ Հին Կտակարանի՝ նախապես եղել է անձնանուն. «Մաքիթը ծնեց Գաղաադին... Գաղաադի որդիներ Աքիեզերը...» (Թվ. ԻԶ 29): Դատավորաց գրքում հանդիպում է մեկ ուրիշ Գաղաադ՝ Հեփթայեի հոր անունը (ԺԱ 1):

Գաղաադ լեռան առաջին գործածությունը Ծննդոցում է. «եւ եհաս նմա ի լեռնն Գաղաադի» (հուն.՝ τὸ ὄρος Γαλααδ) (ԼԱ 21):

Գաղաադ լեռան գործածությամբ հրաշալի համեմատություն է տրվում Երգ երգոցում. «Ահաւադիկ կաս գեղեցիկ, մերձավոր իմ, ահաւադիկ կաս գեղեցիկ, աչք քո աղանիք բաց ի լոռիքէնէդ քումմէ. վարսք քո իրրեւ զերամակս այծից, որք երեւեցան ի **Գաղաադէ...**» (Երգ. Դ 1):

Գաղաադ սարը հանդիպում է Դտ. Է 3-ում, բայց այն ուրիշ լեռ է անվանում. «...»

եւ դիմեցին ի լեռնէն Գաղաադո»:

Գաղաադ անունով էլ կոչվում է Հորդանանում գտնվող գավառը՝ Գաղաադի երկիր (Թվ. ԼԲ 29), և պետք է ասել, որ *Ասրվածաշնչում* այս անվան բազմաթիվ գործածությունները մեծամասամբ ակնարկում են Գաղաադի երկիրը:

Գերաղ (հուն.՝ Գաիդղ, ասոր. ܓܪܐ, ܓܪܐ, **Օբալ**, **Դաղբըլ**, ռուս.՝ Гебал):

Երբայական այս անունը բառացի նշանակում է «եզր կամ ապար, կամ կարկառ հնույթան» (ԲՅԱ, 63): Հր. Աճառյանը անձնանունների բառարանում տալիս է *Գաբաղ* անունը՝ որպես ծագումն անհայտ և շատ անսովոր անուն (ՀԱԲ, հ. Բ, 426):

Ըստ *Ասրվածաշնչի*՝ նախապես **անձնանուն**՝ *Գերաղ* (ասոր.՝ ܓܪܐ Օբալ) (Ծն. Ժ 28. «Յեկրան ծնաւ ...Գերաղ», ԼՁ 23՝ հուն.՝ Գաիդղ), ապա՝ **տեղանուն**՝ *Գերաղ լեռ* (Երկ. Օր. ԺԱ 29 (հուն.՝ ὄρος Գաիβαλ ܓܪܐ, Դաղբըլ), ԻԷ 4, 13. «Ի լերինն Գերաղ», Հս. Ը 30...) որը գտնվում է Սամարիայում՝ Գարիգին լեռան դիմաց. այստեղ Հետուն Աստծու համար զոհասեղան կառուցեց, նաև՝ երկրի, գավառի անուն՝ Փյունիկիայ ի հին քաղաքներից (*Քիրիս*), որը ներկայումս գտնվում է Լիբանանի ծովեզրին:

Գողգոթա (հուն.՝ Γολγοθα, ասոր.՝ ܓܘܠܓܘܬܐ **Գաղուլթա**, ռուս.՝ **Голгофа** (ԵՇ – ԵՎր. **Гулголет**):

Անունը արամերեն «գուգուրա» բառից, որ բառացի նշանակում է «տեղի կառափոյ կամ կառափելոյ» (ԲՅԱ, 67), «տեղի գանկի» (ԲՄԳ, 122). «Եւ երբ որ Գողգոթա ասուած տեղն եկան, որ **գանկի տեղ** ասել է...», (հուն.՝ Γολγοθᾶ, ὃ ἐστὶν **Κρανίου Τόπος** ὡς λεγόμενος (Մտթ. ԻԷ 33):

Ըստ պարականոն գրականության ավանդությունների՝ Նոյի որդի Սեմին հայրը տալիս է Ադամի սրբազան նշխարներից գանգը. վերջինս այն թաղում է Գողգոթայում: Այդ մասին Գրիգոր Տաթևացին գրում է. «Յեպ ջրհեղեղին անդրանիկ որդին Նոյի՝ Սէմ եւ Արփաքսաթ որդի նորա բերեալ զնշխարն Ադամայ թաղեցին ի Գողգոթայ...»⁴⁷⁵: Սրանով էլ հաստատվում է այն, որ Գողգոթա անվան իմաստը ուղղակիորեն կապված է *Ադամի* հետ:

Գողգոթան այն բլուրն է կամ բարձունքը Երուսաղեմի մոտ, ուր, ըստ *Ասրվածաշնչի*, խաչվել է Քրիստոսը (Հվհ. ԺԹ 17, 20, Մտթ. ԻԷ 33, Մրկ. ԺԵ 22, Եբր. ԺԳ 12): Սա

⁴⁷⁵ Տե՛ս Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզության, էջ 41:

պատահական համընկնում չէ. այնտեղ, ուր նախամարդը կնքեց իր մահկանացուն՝ ստանալով իր մեղքի վերջնական պատիժը, խաչ բարձրացավ Քրիստոսը՝ մարդկանց ազատելով այդ մեղքի ժառանգությունից: *Ադամ-Գողգոթա-Քրիստոս* եռանկյունը ևս, եթե ոչ ամենակարևոր, կապող օղակն է *Հին և Նոր կտակարանների* :

Թաբոր(Թաբոր) (հուն.՝ **Θαβωρ**, ասոր.՝ **ܛܒܘܪ** **Թավոր**, ռուս.՝ **Фавор** (БС – евр. *Табор* – т.е. *nyh*):

Ըստ *Աստվածաշնչի* (Հս. ԺԹ 34, Դտ. Դ 6, 12, 14, Ը 18, Սղմ. ՁԸ 13)՝ *Թաբորը*՝ լեռան անուն, որ նշանակում է «*ընտրություն կամ մաքրություն և կամ ասորերէն՝ խորտակում կամ բեկում*» (ԲՅԱ, 100):

Գալիլեայի գեղեցիկ լեռ՝ կոնաձև և անտառապատ, որը միայնակ բարձրացած լեռ է՝ 320 մետր բարձրությամբ, և որտեղից երևում է Միջերկրական ծովը: Լեռը գտնվում էր Նազարեթից ոչ հեռու: Հնում Թաբոր լեռան գլխին եղել է քաղաք, որը կար նաև Քրիստոսի ժամանակ, և լեռան վրա շատ երկար պահպանվել են քաղաքի պարիսպները:

Լեռն այնքան գեղեցիկ և յուրահատուկ տեսք է ունեցել, որ Երեմիայի մարգարեության մեջ դարձել է համեմատության եզր. «... *ինչպես որ Թաբորը լեռներու մէջ է... այնպես էլ անհկա պիտի գայ*» (ԽՁ 18): Իսկ սաղմոսներում Հերմոն և Թաբոր լեռները հավասարաթեք են. «*Թաբորն ու Հերմոնը քո անուամբ պիտի ցնծան*» (ՁԸ 13):

Լիբանան (Լիբանոս, Անդրլիբանան) (հուն.՝ **Λιβανον, Λιβανου, Αντιλίβανον**, ասոր.՝ **ܠܒܢܢ** **Լրվնան**, ռուս.՝ **Ливан** (БС – евр. **Ливанон**):

Անունը բառացի նշանակում է «*պայծառ, կամ սպիտակ, կամ կնդրուկ, կամ խունկ*» (ԲՅԱ, 110):

Աստվածաշնչում՝ Երկ. Օր.. Ա 7՝ *Անդրլիբանան* (հուն.՝ **καὶ ἀντιλίβανον**), Գ 25, ԺԱ 24, Հս. Ա 4՝ *Լեռնալիբանան*, (հուն.՝ **καὶ τὸν ἀντιλίβανον**)⁴⁷⁶, Դտ. Գ 3, Թ 15՝ *Լիբանան*, (հուն.՝ **τὸν Λίβανον**), Սղմ. ՂԱ 13՝ *զմայրսն Լիբանանու*, բազմաթիվ անգամներ հանդիպող այս լեռները կամ լեռների շղթան ձգվում է Պաղեստինի հյուսիսով: Լեռների արևմտյան գոտին ավելի բարձր է, քան արևելյանը: Արևելյան ճյուղի բարձր գագաթը Հերմոնն (2860) է: Մովսեսը ցանկանում էր մտնել սուրբ երկիրը, որպեսզի «*ան բարի*

⁴⁷⁶ ИЖБ-ն բոլոր դեպքերում տալիս է միայն *Լիբանան*, իսկ հունարեն տեքստում՝ միշտ *Անդրլիբանան*:

լեռը ու Լիբանանը» տեսներ (Ովս. ԺԴ 6. «Իբրեւ զԼիբանոս...»):

Լիբանանի լեռնաշխարհը ներկայանում է Սուրբ Գրքում իր ողջ հարստությամբ՝ եղևնափայտով, մայրի անտառներով, հոտավետ բալզամով, գինով և իզուր չէ, որ Երգ երգոցում այն դառնում է համեմատության եզր. «Նրա տեսքն ասես Լիբանանի ընդիր եղեւնափայտ լինի» (Ե 15), «Քո քիթը նման է Լիբանանի աշտարակին» (Է 4):

Կարմեղ (Կարմեղոս, Կարմելոս) (հուն.՝ **Κάρμηλος**, **Καρμήλω**, **Κάρμηλον**, **Καρμήλιον**, ասոր.՝ ܟܪܡܝܠ **Կառմըղ**, ռուս.՝ *Кармил*):

Ըստ *Աստվածաշնչի* (Հս. ԺԹ 26՝ մինչև Կարմեղոս (հուն.՝ τῷ **Καρμήλω**), Ա Թգ. ԺԵ 12՝ ...ելլաւ Կարմեղոս (հուն.՝ εἰς **Κάρμηλον**), Գ Թգ. ԺԸ 19, Դ Թգ. Բ 25՝ Կարմեղոս լեռը (հուն.՝ τὸ **Καρμήλιον**), Երգ. Է 5՝ հուն.՝ ὡς **Κάρμηλος**)՝ Կարմեղ կամ Կարմեղոսը լեռան անունն է, որ բառացի նշանակում է «գիտութիւն թլիպտութեան կամ գառն թլպատացան, կամ փափուկ, կամ ծիրանագոյն, կամ հասկ ափոր» (ԲՅԱ, 118), պողաբեր դաշտ (ԲՍԳ, 269):

Պաղեստինի լեռներից գեղեցկագույնը, որին դեմ հանդիման են Թաբոր և Հերմոն լեռները: Ամբողջովին ծածկված է մայրիներով, եղևնիներով և լանջերին՝ ձիթենիներով: Նշանավոր է որպես Եղիա և Եղիսե մարգարեների այցելության վայր, այս լեռան վրա նահատակվեցին Բահադի քուրմերը (Ես. ԼԵ 2, Երգ. Է 5, Երմ. Ծ 19, Ամվս Ա 2):

Ա-3՝ արևելահայերեն *Աստվածաշունչը* անունը տալիս է հունական տառադարձությամբ. «Գլուխդ քո վրայ նման է **Կարմելոսին**» (Երգ. Է 5):

Թեև ըստ *Աստվածաշնչի*՝ հայտնի է համանուն քաղաք համանուն լեռան վրա (Հս. ԺԵ 55), սակայն հայ բանաստեղծները հիշատակում են լեռը:

Հերմոն (**Ահերմոն**, **Հերմոն**) (հուն.՝ **Αερμων**, **Ερμων**, ասոր.՝ ܟܪܡܝܠ **Հրոմուն**, ռուս.՝ **Ермон** – БС – евр. Хермон – *святотой или недоступный*):

Ըստ *Աստվածաշնչի*՝ **Ահերմոն** (Երկ. Օր. Գ 8, 9, Դ 48, Հս. ԺԱ 3, 17, ԺԲ, 1, 5, ԺԳ 5, 11, ԺԵ 49, Ա Մնց. Ե 23, *τὴν αερμων*), **Հերմոն** (5)՝ (Գ Մկ. Ե 1, Սղմ. ՃԼԲ 3(*αερμων*), Երգ. Դ 8՝ (հուն.՝ *καὶ ερμων*): Բառացի նշանակում է «նզովք կամ կործանում», նաև հունարեն *հերմոն* բառից է, որ ստուգաբանվում է «նեցուկ անկող նուց կամ հաստափուն» (ԲՅԱ, 126): Փյունիկեցիները լեռն անվանել են *Սանհոր*,

ամորհացիները՝ *Սանիր* (ԲՅԱ, 126): Երբեմն նույնացվում է *Սիրոն*-ի հետ, մինչդեռ պետք է տարբերել *Ահերմոնը* նկատի ունեցող *Սիրոն*-ը բուն *Սիրոն*-ից: Միջնադարյան հայ բանաստեղծները հաճախ առանձնացնում են *Ահերմոնն* ու *Սանիրը*, թեև դրանք նույն լեռն են անվանում:

Սա բարձր և շքեղ լեռ է Պաղեստինի հյուսիս-արևելքում, որի վրա, ըստ երևույթին, աշակերտները տեսան Հիսուսին՝ պայծառակերպությամբ փառավորված:

Սանիր(ա) (հուն.՝ Σανιωρ, ասոր.՝ ܣܢܝܪ **Սանառ**, ռուս.՝ Санир):

Ըստ *Աստվածաշնչի* (Երկ. Օր. Գ 9, Ա Մնց. Ե 23, Եզկ. ԻԷ 5, Երգ. Դ 8)՝

Սանիրվր, Սանիր, որի նշանակությունն է *ճրագի փոփոխություն* (ԲՅԱ, 199):

Սա նույն Հերմոն լեռն է. «Եւ առուք ի ժամանակին յայնմիկ զերկիրն ի ձեռաց երկուց թագաւորացն Ամովրհացոց, որ էին յայնկոյս Յորդանանու, յԱռնովնայ մինչեւ ցՀերմոն: Եւ Փիւնիկեցիք **անուանեցին զՀերմոնն Սանիրվր**, եւ Ամովրհացին **անուանեաց զնա Սանիր**» (Երկ. Օր. Գ 8, 9): Հունարենում տրվում է համապատասխանաբար՝ τὸ Ἀερμων Σανιωρ և αὐτὸ Σανιρ:

Սակայն մեր բանաստեղծները առանձնացնում են Սանիրն ու Հերմոնը՝ իբրև առանձին լեռներ: Սա ևս գալիս է Աստվածաշնչից. «Եկ ի Լիբանանէ, հարսն, եկ այսր ի Լիբանանէ, եկեսցես եւ անցցես ի գլխոյ հաւաքոց ի կարարէ Սանիրայ եւ Հերմոնի...» (Երգ. Դ 8):

Սուրբ Գրքում փաստորեն Սանիրը ընթերցողին հանդիպում է այլևայլ անուններով՝ ***Սանիր, Ահերմոն, Հերմոն, Բաադիերմոն***:

Հովր (հուն.՝ Ωρ, ասոր.՝ ܘܪ **Հոռ**, ռուս.՝ Ор):

Ըստ *Աստվածաշնչի* (Թվ. Ի 22, 23 (հուն.՝ ἐν Ωρ) , 25, 27, ԻԱ 4, ԻԷ 13, Բ Օր. ԼԲ 30)՝ կոնաձև լեռ է (1330) Մեոյալ ծովի շրջանի անապատում՝ Եդովմի սահմանի մոտ՝ երեք ապառաժոտ կատարով: Այս լեռան վրա է մահացել Ահարոնը: «Եւ արար Մովսէս որպէս եւ հրամայեաց նմա Տէր, եւ եհան զնա **ի Հովր** լեռոն առաջի ամենայն ժողովրդեանն: Եւ մերկացոյց յԱհարոնէ զհանդերձս նորա, եւ զգեցոյց զնոսա Եղիազարու որդւոյ նորա, եւ մեռաւ Ահարոն ի գլուխ լերինն, եւ իջին Մովսէս եւ Եղիազար ի լեռնէ անտի» (Թվ. Ի 27-29):

Եվս մի կարևոր դրվագ. Հովր լեռան վրա է գտնվում ***Սեղմոնա*** (բառացի նշա-

նակում է *պարկեր*) կոչվող վայրը, ուր Մովսեսը կանգնեցրեց պղնձե օձը, որը խորհրդանիշ էր և օրինակ Քրիստոսի խաչին:

Ձիթենյաց Լեռ (հուն.՝ *Όρος των έλαιών – ὄνος*, ասոր.՝ ܩܘܝܢܐ ܩܝܘܠܐ **Տուռա Դգայթա**, ռուս.՝ **Елеонская гора, Масличная гора**):

Նոր Կտակարանում (Մտ. ԻԴ 3, Մրկ.ԺԳ 3, Հվհ. Ը 1, Ղկ. ԻԱ 37) նշվում է, որ այս լեռը եղել է Հիսուսի սիրած վայրերից, որը նա այցելել է հաճախ իր աշակերտների հետ:

Լեռն այսպես է կոչվել առատ աճած ձիթենիների պատճառով, որոնցով այսօր էլ ծածկված է: Գտնվում է Երուսաղեմի արևելքում և քաղաքից բաժանվում է Կեդրոնի հեղեղատով (Բ Թգ. ԺԵ 30) (հուն.՝ *Ελαιων*, ռուս.՝ *Елеонская гора*): Այս բարձունքից բացվում է Ավետյաց երկրի սքանչելի համայնապատկերը, երևում են ողջ Երուսաղեմը, Հորդանան գետը և Մեռյալ ծովը: Լեռը, որն ունի 818 մ բարձրություն, ունի երեք գագաթ. հարավայինը կոչվում է **Հանցանքների լեռ**⁴⁷⁷, քանի որ այն պղծեց Սողոմոնը կռապաշտությամբ (Գ Թգ. ԺԱ 5-7, Դ Թգ. ԻԳ 13) (ռուս.՝ *Масличная гора*): Հյուսիսային գագաթը անվանվում է **Գալիլիայի տղամարդիկ** (Գրծ. Ա 10), որովհետև այստեղ Հիսուսի աշակերտներին երևացել են երկու սպիտակազգեստ տղամարդիկ: **Միջին** կոչվող **գագաթից** երևում են և՛ Երուսաղեմը, և՛ ողջ երկիրը: Ավանդությունն ասում է, որ Քրիստոսը համբարձվեց այս լեռան կատարից⁴⁷⁸, և Համբարձման եկեղեցին էլ կառուցված է այստեղ: Մարգարեներն ասում են, որ Քրիստոսի երկրորդ գալստյամբ դատաստանը այստեղ պետք է տեղի ունենա:

Հայ բանաստեղծության մեջ բացի *Ձիթենյաց լեռ* արտահայտությունից, Սիամանթոն է գործածում *Ձիթենու ուսր* արտահայտությունը՝ շեշտելով նրա աստվածաբույս լինելը:

Նարավ (հուն.՝ *ὄρος Ναβα*, ասոր.՝ ܢܘܒܐ **Նարավ**, ռուս.՝ **Ново, Нево**):

Անվան բառացի նշանակությունն է «*խօսք կամ մարգարեություն, կամ պարզաբեր, կամ բուստալ*» (ԲՅԱ, 172):

Սա Մովսեի⁴⁷⁹ երկրի լեռներից է, լեռ, որի կատարից Մովսեսը տեսավ Ավետյաց

⁴⁷⁷ Ռուսերեն տրվում է *гора соблазна* (ԵՇ, 126):

⁴⁷⁸ Սակայն Ղուկասի *Ավետարանը* հակասում է սրան՝ ասելով, որ Քրիստոսը համբարձվել է Բեթանիայից. «*Այս նրանց տարավ հանեց մինչև Բեթանիա եւ, բարձրացնելով ձեռքերը, օրհնեց նրանց...*» (ԻԴ 50):

⁴⁷⁹ Ղովտի որդի *Մովսեի* անունով կոչվում է երկիրը, դաշտը ու լեռը (Ծն. ԺԹ 37, Թվ. ԻԱ 11, 15, 20, 26, 28, 29, 30):

երկիրը և այդտեղ էլ մեռավ, իսկ այժմ՝ Ներո (Թվ. ԻԷ 12, ԼԲ 3, 42, ԼԳ 47, Բ Օր. ԼԲ 49, ԼԴ):

Աբարիմը և Նաբավը տարբեր լեռներ են, թեև դրանք հաճախ շփոթում են:

Սինա (Սինեա, Սինէ) (հուն.՝ Σινᾶ, ասոր.՝ ܣܝܢܐ **Սինայ**, ռուս.՝ Синай):

Բառացի նշանակությունն է *մորենի* կամ *վահան* և կամ ասորերեն՝ *թշամություն* (ԲՅԱ, 209): Հավանական կարելի է համարել *մորենի* նշանակությունը, քանի որ, ինչպես գիտենք, Աստված հայտնվեց Մովսեսին մորենու մոտ, որը բոցով էր պատված, բայց չէր այրվում, որի պատճառով էլ *մորենին* ստացավ առանձնահատուկ իմաստ, ինչպես Սաբեկի ծառը, Մամբրեի կաղնին: Ահա թե ինչու մեզ թվում է, որ *մորենի* նշանակությունն է ամենահավանականը, թեև այս լեռը անվանվել է նաև **Քորեբ**, որ նշանակում է *անջրդի*: ԵՏ -ն այլ տեսակետներ է ներկայացնում. «Название Синай объясняется одними как **многouverшинная гора**, другими, как **гора, посвященная богу луны**, т.к. богу луны под названием **Син** поклонялись не только вавилоняне <...>, но также и арабы, и на горе Хорив-Синай было капище бога луны <...>, указывается также, что гора Синай еще до издания Закона называлась горою Божией (Исх.3:1, 4:27, 18:5), а после этого стала называться **горою Господней** (Чис. 10:33) (411):

Ըստ Աստվածաշնչի՝ **Սինա** կամ **Սինե** (Ել. ԺԹ 11 τὸ ὄρος τὸ σινᾶ, 16, Թվ. Ժ 12, ԻԳ 15, Սղմ. ԿԷ 9). «Երկինք ցողեցին յերեսաց Աստուծոյն ի Սինէ», 18. «Տէր ի նուա ի Սինէ». լեռ կամ լեռների շղթա, որ գտնվում է Կարմիր ծովի Սինա թերակղզում, որտեղ իջավ Աստված և տվեց իր տասը պատգամները Մովսեսին, և այդ օրից լեռը դարձավ հոչակավոր ու կոչվեց **Սուրբ լեռ**. «Եւ Տէրն ասեց Մովսէսին. Ահա ես քեզ մօտ կգամ թանձր ամպի մէջ, որ ժողովուրդը լսէ՛ ես քեզ հետ խօսելիս, եւ քեզ էլ հաւարայ...» (Ա-2՝ Ել. ԺԹ 9): «Սինայ սարը բոլորովին ծխում էր, որովհետեւ Տէրը նորա վերայ իջաւ կրակով, եւ նորա ծուխը հնոցի ծուխի պէս էր դուրս գալիս, եւ բոլոր սարը սաստիկ դողում էր» (Ա -2՝ ԺԹ 19):

Հետաքրքիրն այն է, որ *Սինա* և *Քորեբ* լեռները շատերը նույն լեռն են համարում, ոմանք էլ գտնում են, որ դրանք միմյանց մոտ են գտնվում, ուստի երբեմն շփոթմամբ մեկի անունը գործածվում է մյուսի փոխարեն:

Հայ բանաստեղծները ավելի շատ նախընտրում են **Սինա** անունը, թեև Գրիգոր Նարեկացու և Հովհաննես Երզնկացու մոտ հանդիպում են և՛ *Սինա*, և՛ *Քորեք*: Վերջինս գրում է. «Կամ ցողն յԱհերմոն լերին եւ ի Սինայ քաղցրիկ նա ցողել »: «Լեառն Սեպուհոյ հանգոյն Սինայի...» (ԲԶ, 27, 131, 173)⁴⁸⁰:

Քորեք (Քորէք) (հուն.՝ Χωρηβ, ասոր.՝ ܟܘܪܝܒ **Սորիվ**, ռուս.՝ Хорив):

Ըստ *Աստվածաշնչի* (Ել. Գ 1. «եւ եկն ի լեառնն Աստուծոյ ի Քորեք», ԺԷ 6, ԼԳ 6, Բ Օր. Ա 2, 6, 19, Գ Թգ. Ը 9)՝ **Քորեք**, որի բառացի նշանակությունն է՝ «անշէն կամ անապատ, կամ անջրդի» (ԲՅԱ, 230):

Քորեքը այն լեռն է, որը հռչակվեց անկեզ մորենու մոտ Աստծուն Մովսեսի հանդիպելու դրվագով (Ել. Գ, Դ):

Սիոն (Սիովն, Սիոն, Սիովն) (հուն.՝ Σιών, ասոր.՝ ܣܝܘܢ **Սրիյոն**, ռուս.՝ Сион):

Անվան նշանակությունը մեկնաբանվում է «դիպրանոց կամ կարկառ, կամ ըստ ոմանց՝ ցամաքութիւն կամ չորութիւն» (ԲՅԱ, 210), նաև *արևային*՝ ըստ ԵՇ-ի (415):

Ըստ *Աստվածաշնչի*՝ **Սիոն** կամ **Սիովն** (Բ Թգ. Ե 7, Գ 15, Ը 1, Դ Թգ. ԺԹ 21, 31, Ա և Բ Մնց., Սղմ. 39 Բ 6. «Ի վերայ Սիոնի լերին սրբոյ նորա...», Թ 12, 15, ՀԲ 28. ԽԷ 12. «Ուրախ եղիցի լեառն Սիոն»):

Լեռ կամ բլուր Երուսաղեմում (777 մ), որտեղ, ըստ *Աստվածաշնչի*, գտնվում էին Աստծու տաճարը և Դավիթ թագավորի ամրակուռ ապարանքը: Սկզբնապես սա եղել է Երուսաղեմի հնագույն մասը, հետագայում դարձավ նրա երկրորդ անվանումը⁴⁸¹:

Ըստ *Սուրբ Գրքի*՝ Սիոն լեռը գտնվում էր մի քաղաքի մեջ, որը Դավիթ թագավորը խլեց եբուսացիներից և կոչեց այն *Դավթի քաղաք*: Լեռան անունից էլ երբեմն քաղաքը ևս կոչվում է *Սիոն* (Գ Թգ. Ը 1, Ես. Ա 21):

Սոփեր/ա (հուն.՝ Σωφρα, ասոր.՝ ܣܘܦܪܐ **Սփոռ**, ռուս.՝ Софра, Офир):

Անվան նշանակությունն է՝ «դպիր կամ մատեան, կամ պատմիչ, կամ թուօղ» (ԲՅԱ, 215): Ինչպես տեսնում ենք, այս անվան դեպքում տարընթերցումներ է տալիս

⁴⁸⁰ Սեպուհ լեռը գտնվում է Մեծ Հայքի Եկեղյաց գավառում և նշանավոր դարձավ այն բանի շնորհիվ, որ այս լեռան վրա իր կյանքի վերջին տարիներն անցկացրեց Գրիգոր Լուսավորիչը:

⁴⁸¹ Քրիստոնեական աշխարհում հաճախ **Սիոն** անունը գործածվում է **Երուսաղեմ** անվան փոխարեն, նրան հոմանիշ: Հուդայական կրոնում Սիոնը այլաբանորեն նշանակում է *Աստծու հավատարիմ* մարդ: **Սիոնի դուստրեր** կամ **Սիոնի դուստր** արտահայտությունը պոետական անվանումն է Երուսաղեմի և նրա ժողովրդի:

նուերեն տեքստը՝ **Сεφαρα, Οφυρ**:

Ըստ *Աստվածաշնչի* (Ծն. Ժ 30 (հուն.՝ *εις Σωφηρα*), Ա Մնց. ԻԹ 4, Գ Թգ. Թ 28) (ռուս.՝ **Офир**)՝ **Սոփեր, Սովփեր**. «Եւ եղև բնակություն նոցա ի մասեաց մինչեւ գալ ի Սովփերայ (ռուս.՝ **Сεφара**) լեառնն արեւելեաց» (Ծն. Ժ 30), «Երիս հազարս տաղանդս ոսկի ի Սովփերայ (եբր.՝ Ոփիրայ – ՓՄ)... օճանել նորօք զորմս տաճարին» (Ա Մնց. ԻԹ 4): ԲՍԳ-ն սա նույնացնում է **Սապպեր** լեռան հետ (ԲՍԳ, 516): Շատերի կարծիքով՝ սա Հնդկաստանն է, որն առատ է եղել ոսկով և ադամանդով, ուստի հաճախ *ազնիվ ոսկի* և *ակն պատվական* ասելու փոխարեն գործածվել է *ոսկի սօփերայ, ակունք սօփերայ* արտահայտությունը (Ա Մնց. ԻԹ 4, Հբ ԻԸ 16, Ես. ԻԱ 12):

ԳԼՈՒԽ VII

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՈՃԱՆՈՒՆՆԵՐ

Հայ հին և միջնադարյան հոգևոր բանաստեղծությունը խիստ կրում է *Աստվածաշնչի* ազդեցությունը թե՛ բովանդակության, թե՛ պատկերավորման առումով: Գողթան երգերի կողքին, Վիշապաքաղ Վահագնին, Արտաշեսին, Սաթենիկին նվիրված երգերի կողքին բանաստեղծության հերոս են դառնում կամ հիշատակվում են աստվածաշնչյան անձինք: Ստեղծվում են աստվածաշնչյան թեմաներով գրված մի շարք գեղարվեստական գործեր՝ Գրիգոր Մագիստրոսի «*Հազարտողեան*» կամ «*Առ Մանուչէ*», Գրիգոր Նարեկացու «*Մատեան ողբերգութեան*», Ներսես Շնորհալու «*Յիսուս որդի*», Առաքել Սյունեցու «*Աղամգիրք*» և բազում այլ գործեր: Սաղմոսների ազդեցությամբ ծնունդ է առնում շարականներգությունը, իսկ «*Շարակնոցը*» ներկայացնում է հայ հոգևոր բանաստեղծության մի յուրօրինակ ընտրանի, որի մասին «*Յաղագս սրբազան բանաստեղծութեան*» հոդվածում կարդում ենք. «Ապա ուրեմն իրաւացի է պարծել 'ի շարականսն մեր իբրեւ 'ի սրբազան բանաստեղծութիւն, յորում ոչ Յոյնք եւ ոչ Լատինք գերազանցեալք, քան զմերս»⁴⁸²: «*Շարակնոցում*» արդեն փառաբանվում են Հովակիմն ու Աննան, Մարիամն ու Հիսուսը, Թադևոսն ու Սանդուխտը և էլի շատ ու շատ անձեր:

Առաջանում են հոգևոր երգի ամենատարբեր տեսակներ՝ կանոն, կցուրդ, փոխ, գանձ, և շարականից գանձ, գանձից բանաստեղծություն փոխանցվում են աստվածաշնչյան անունները: Իսկ դա միանգամայն բնական է. վանական միջավայրում կրթություն ստացած մեր միջնադարյան տաղերգուների համար ներշնչանքի հիմնական աղբյուրը *Սուրբ Գիրքն* է ու նրա նշանավոր անձերը: Սակայն երբեք չի կարելի մտածել, որ աստվածաշնչյան թեմաներով հագեցած հին և միջնադարյան բանաստեղծության մեջ հանդիպող հատուկ անունները գործածվել են սոսկ ուղղակի իմաստով՝ ակնարկելով աստվածաշնչյան անձերին, և զուրկ են ոճական արժեքից: Դրանք հանդես են գալիս ոճական բազում ձևերով:

Բայց մենք այստեղ կարևորել ենք հատուկ անունների մի այլ յուրահատուկ

⁴⁸² Տե՛ս *Յաղագս սրբազան բանաստեղծութեան*, Բանասեր, Կ. Պոլիս, 1851, էջ 429:

դրսևորում՝ հասարակ անունների՝ իբրև հատուկ կիրառությունները⁴⁸³:

Հայ հին, միջնադարյան և ժամանակակից բանաստեղծների գործերում հաճախ հանդիպում են աստվածաշնչյան հասարակ անուններ մեծատառ գրությամբ⁴⁸⁴:

«Բանաստեղծական արվեստի մեջ «մանրուքներ» չկան, և հաճախ աննշան թվացող լեզվական կամ կառուցվածքային որևէ տարր կարող է էական դեր ստանձնել ստեղծագործության ամբողջության մեջ, դառնալ նրա նվիրական իմաստը

⁴⁸³ Դեռևս 1999 թ. գրած Հափուկ անունները և ոճանունները գեղարվեստական չափաձոյում հոդվածում մենք քննել ենք հասարակ անունների՝ իբրև հատուկ գործածությունները և այդ կարգի բառերը անվանել **ոճանուններ**: Տե՛ս «Նորք» հանդես, Եր. 1999թ., էջ 163-176:

⁴⁸⁴ Մեր գրողներից շատերը իրենց ստեղծագործություններում հասարակ անունները (ընդ որում՝ ոչ միայն գոյական) գործածում են որպես հատուկ: Եվ դա ոչ ինքնանպատակ: Պ. Սևակի «Անլռելի զանգակահարուն» պոեմում **վարդապետ** բառը կիրառվել է 68 անգամ, որոնցից 54-ը ներկայացված են մեծատառով:

*Դե ե՛կ, Վարդապե՛տ,
Մի՛ խելագարվիր... (էջ 204)*

*Ի՞նչ խոսքերով բարեբանենք
Քե՛զ, Վարդապե՛տ... (էջ 243)*

Եվ այսպես 54 անգամ բանաստեղծը **Կոմիդասը** փոխարինում է **Վարդապետով**: Մտածել, թե դա պատահականություն է, ինչ խոսք, չի կարելի, քանի որ նույն ստեղծագործության մեջ ունենք նաև **վարդապետ** բառի՝ իբրև հասարակ անուն գործածություններ: Ոճականորեն խիստ ընդգծվում են այս երկուսի տարբերությունները:

*Դեռ, Վարդապե՛տ, դու կտեսնես
Ալիք-ալիք ծփան Շորոր
Ապա Նազպար,
Եվ հակառակ իր իսկ կամքին,
Մի կաքավող աղջիկ կամ կին,
Ա՛խ, Վարդապե՛տ,
Մինչև անգամ վարդապետին կուսակրոն
Հիշել կտա...*

(Ղողանջ հարսանեկան, էջ 127)

Բոլոր բացատրական բառարաններում **վարդապետ**-ը ունի «վանքում ապրող կուսակրոն քահանա, եկեղեցական գործերի վարիչ» նշանակությունը, և այս իմաստն է անշուշտ կրում իր մեջ վերը բերված օրինակում **վարդապետ** հասարակ անունը:

Էդ. Աղայանի բացատրական բառարանը արձանագրում է այդ բառի ևս մեկ նշանակություն՝ *ուսուցիչ*: Հայկազյան բառարանում այս նշանակությունը առաջինն է (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837թթ.): Եվ անկասկած, Պ. Սևակը Կոմիտասի համար նախընտրել է **վարդապետի** հենց այս՝ *ուսուցիչ*, նշանակությունը: «Բառերի մի մասը քնած է, և ոչ երբեք մեռած, ուստի և հարություն տվող է պետք», գրում է Սևակը (Պ. Սևակ, Երկեր, հ. 5, էջ 400) և, ինչ խոսք, հարություն է տալիս **վարդապետի** այդ իմաստին: Սա հաստատում է հենց ինքը՝ բանաստեղծը, հետևյալ հատվածում.

*Բայց նա Ուսուցիչ,
Ինչ էլ որ լիներ,
Պիտի որ դառնար մեռած խազերի
Առաջին դպիր....*

(Ղողանջ վայրատման, էջ 156)

Եվ այսպես, **վարդապետը** պատահական չի ընդգծվում և դառնում հատուկ անուն: Սա տևական մտորման, ստեղծագործական լարման և բանաստեղծական երևակայության արդյունք է:

հասկանալու բանալի»,- գրում է Էդ. Ջրբաշյանը⁴⁸⁵:

Տվյալ դեպքում Էդ. Ջրբաշյանի քննարկման նյութը Հովհ. Թումանյանի «Դեպի Անհունը» փիլիսոփայական պոեմի վերնագրում մեծատառի գրությունն է, որի կապակցությամբ էլ նա խիստ էական դիտարկումներ է կատարում: «Երբ բանաստեղծը, հակառակ քերականական և ուղղագրական ընդունված կանոնների, որոշ բառերի գրությունն սկսում է մեծատառով, դա նշանակում է, որ նա դրանով ուզում է առաջ քաշել և ընդգծել այդ բառերի հետ կապվող ինչ-որ կարևոր բովանդակային կողմ: Բարձրանալով իր սովորական բառարանային իմաստից՝ հասարակ բառն այդ դեպքում վերածվում է մի յուրօրինակ բառ-պատկերի, դառնում է հավաքական և բազմաշերտ բառ-խորհրդանիշ»⁴⁸⁶:

Ըստ գրականագետի դիտարկումների՝ մեծատառերով գրելու հնարանքը բավական տարածված էր 20-րդ դարի սկզբի պոեզիայում՝ հատկապես սիմվոլիստների գործերում: Իզուր չէ, որ Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներ» գրքում դրանք հանդիպում են բազմիցս, հաճախ նույնիսկ հանդես գալով «փնջերով», ինչպես՝ *Օրհնված եք դուք, Սեր, Յնորք ու Յավ, օրհնված եք դուք, Երկիր, Երգ ու Կյանք*: Սակայն հետագայում Տերյանը գրեթե ամբողջովին հրաժարվում է բառերի գրության այդ ձևից, և հրատարակում է նույն բանաստեղծությունները առանց մեծատառերի: Դրանց գրությունը մնում է եզակի դեպքերում, ինչպես՝ «Դու յոթնապատիկ խոցված **Տիրամայր**»:

Խոսելով Հ. Թումանյանի պոեզիայի այս առանձնահատկության մասին՝ Էդ. Ջրբաշյանը նշում է, որ մեծ բանաստեղծը երբեք շատ չի հրապուրվել բառերի մեծատառ գրությամբ, «բայց բոլոր դեպքերում դրանով արտահայտել է որևէ լայն, համապարփակ իմաստ, որը բավական կայուն է»: Բերելով «Շիտակ, անվեհեր գընում եմ ես վեր- դեպ **Անհայրը** սուրբ, աշխարհքը պայծառ» («Վայրէջք», 1909) և «Վաղուց թեև իմ հայացքը **Անհայրին** է ու հեռվում» («Հայրենիքիս հետ», 1915) բանաստեղծություններում **Անհայր**-ի մեծատառով գրության օրինակները՝ նա գրում է. «Ավելորդ է հատուկ ապացուցել, որ երկու դեպքում էլ մեծատառի շնորհիվ **Անհայտ**

⁴⁸⁵ Ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը *Փաստերի հետքերով* գրքում ունի մի փոքրիկ հոդված՝ «Մեծապատերի և մի վերնագրի մասին», որտեղ խոսում է հենց ոճանունների մասին: Տե՛ս նշվ. աշխ., Եր., 2002թ., էջ 36:

⁴⁸⁶ Տե՛ս Էդ. Ջրբաշյան, նույն էջում:

ածականը ոչ միայն վերածվում է հավաքական գոյականի, այլև **ձեռք է բերում մի նոր բարձրագույն իմաստ՝** խորհրդանշելով գոյության անլուծելի գաղտնիքների մեջ թափանցելու անհագ ձգտումը: Մի պահ մտովի փորձեք վերացնել այդ մեծատառերը և կհամոզվեք, թե ինչքան կաղքատանա նշված բանաստեղծությունների բովանդակությունը»⁴⁸⁷: Էդ. Ջրբաշյանը բերում է մեկ ուրիշ բանաստեղծություն՝ «Ընկերիս», որտեղ գրված է. «Անզուսպ կարոտով ձգտում ես միշտ **Վեր**»: Իր նամակներից մեկում Թումանյանը այս բառի մեծատառով գրության առիթով բերում է հետևյալ հիմնավորումը. «Գաղափարների, երազների աշխարհն է, որ ես մի խոսքով անվանել եմ **Վեր**» (Փ. Վարդազարյանին գրած նամակից, 1902): Երկու տարի անց մեկ այլ նամակում բանաստեղծն ավելացրել է «Այդ անհայտը կամ, ավելի ճիշտ, իմ անհայտը գուցե հենց այն «Վերն» է, որ ես մեծատառով հիշատակել եմ «Ընկերիս» բանաստեղծության մեջ»⁴⁸⁸:

Միանգամայն տեղին էդ. Ջրբաշյանը նկատում է, որ մեծատառերի այստեսակ կիրառությունները շատ են հատկապես քառյակներում: Բանաստեղծը մեծատառով է գրում ոչ միայն **Աստված**, այլև նրան ակնարկող **Մին, Դու, Նա, Ինքը** դերանունները իրենց հոլովական ձևերով, ինչպես նաև մի քանի ուրիշ բառեր՝ **Ըստեղծող, Շոայլ**:

Մեզ համար անչափ կարևոր է այն հանգամանքը, որ Էդ. Ջրբաշյանի կողմից միանգամայն իրավացիորեն այս երևույթը դիտարկվում է թե՛ լեզվական, թե՛ գրական-նագիտական առումներով: Այսինքն՝ հասարակ անունների ներկայացումը մեծատառով՝ իբրև լեզվական որոշակի ձև, դառնում է գաղափարական բարձր արտահայտության յուրատեսակ դրսևորում: Գիտականորեն ճիշտ է այս կարգի հատուկ անուն գործածությունները ձևակերպել որպես **ոճանուն**, այսինքն՝ **ոճական հատուկ անուն**:

Հայ բանաստեղծության մեջ սփռված հարյուրավոր օրինակները հիմք են տալիս հավաստելու, որ յուրաքանչյուր բառ՝ ցանկացած խոսքի մասի պատկանող, բառակապակցություն, շարահյուսական կաղապար, անգամ նախադասություն, կարող է դառնալ ոճանուն, երբ այդ բառը բանաստեղծի համար դառնում է խորհրդանիշ և

⁴⁸⁷ Տե՛ս նույն հեղ. նշվ. աշխ., էջ 37:

⁴⁸⁸ Տե՛ս **Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու**, V հատոր, Եր., 1947, էջ 209, 274:

արտահայտում է որոշակի անձ, գաղափար, հավատամք: Դա բանաստեղծի էությունն է, որ ոճական այդտեսակ ձևավորում է ստանում:

Ոճանունները կարելի է բնութագրել մի քանի էական հատկանիշներով.

1. Հասարակ անունը ոճանուն է դառնում որոշակի խոսքային միջավայրում: Գեղարվեստական պատկերից դուրս ոճանուն չկա:

2. Ոճանունը զուտ ոճական արժեք ունի: Դրանց ստեղծումը գրողից պահանջում է բարձր ճաշակ, երևույթների իմաստների ընդհանրությունը տեսնելու սուր դիտողականություն, մի հանգամանք, որն էլ այլ առանձնահատկությունների հետ պայմանավորում է գրողի անհատականությունը, ինքնատիպությունը:

3. Բառի՝ իբրև ոճանուն հանդես գալը նրան ներքին անսպառ լիցք է տալիս, բառն ասես թարմանում է, եղած իմաստների կողքին ձեռք բերում նոր իմաստ, նոր ըմբռնում և ընկալում⁴⁸⁹:

4. Գրողի անհատական ոճի դրսևորման ձևերից մեկը լինելով՝ ոճանունները հարատև ու մշտական չեն: Յուրաքանչյուր բանաստեղծ ստեղծում է ոճանուններ՝ իր աշխարհայացքին ու գեղարվեստական ընկալմանը հարազատ: Սա նշանակում է, որ տվյալ ոճանունը տարածվելու, ընդհանրանալու շատ քիչ հնարավորություն ունի, թեև չի բացառվում, որ եզակի դեպքերում ոճանունը կարող է դառնալ հատուկ անուն, ինչպես՝ **Վարդապետ-ը**:

Ոճանունների գործածությունների ակունքը, մեր ուսումնասիրմամբ, *Աստվածաշունչն է*:

Ծն. ԽԹ 24-ում կարդում ենք. «... եւ լուծան ջիղք բազկաց նոցա ձեռամբ **Հգորին**

⁴⁸⁹ Միանգամայն ճիշտ, էդ. Ջրբաշյանը նշում է, որ սկսած 30-ական թթ., Հ. Թումանյանի մի շարք հրատարակությունների մեջ հատուկ մտահղացմամբ գրված մեծատառերը վերացվել են լրիվ կամ մասամբ: Անհիմն ձևով այդ մեծատառերի մեխանիկական վերածումը փոքրատառերի խաթարել է բնագրի ըմբռնումը: Այսպես՝ Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակության մեջ (1950թ.) զգալիորեն տուժեցին քառյակները: 1921թ. գրված հետևյալ քառյակը ասվածի հաստատումն է.

Ամեն անգամ Քո տվածից երբ մի բան ես Դու տանում,

Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ինչքան է դեռ մնում,-

Չարմանում եմ, թե՛ ով Շրոայլ, ինչքան՝ շատ ես տվել ինձ,

Ինչքան շատ եմ դեռ Քեզ տալու, որ միանանք մենք նորից:

Ընդգծված մեծատառերով բառերը փոքրատառ գրելիս (ինչպես արվել է) քառյակի «խորախորհուրդ բովանդակությունը» անշուշտ շատ է տուժել:

Յակոբայ», որը արևելահայերեն բնագրում տրվում է «*ու թուլացան ջլերը նրանց բազուկների Յակոբի հզոր Աստուծու ձեռքով*»: Ինչպես տեսնում ենք, **Հզոր**-ը գրաբար բնագրում հանդես է եկել որպես ոճանուն՝ ակնարկելով Աստծուն:

Ել. ԼԱ 3-ում տրվում է **Հոգի** ոճանունը. «*Եւ լցուցի զնա աստուածեղէն Հոգով իմաստութեան եւ հանճարոյ եւ գիտութեան ամենայն գործոյ...*» (Բեսելիէլի մասին), Թվ. ԺԱ 25, 26, Թվ. ԻԷ 18-ում. «*Առ դու քեզ զՅեսու որդի Նաւեայ, զայր յորում գոյ Հոգի, եւ դիցես զձեռս քո ի վերայ նորա*», Թվ. ԻԳ 7-ում՝ **Հոգի աստուծոյ**. «*Եւ եղև Հոգի Աստուծոյ ի վերայ նորա...*»:

Ոճանունների կիրառությունը *Աստվածաշնչում* պատահական բնույթ չի կրում, ուստի դրանց մի մասը քննարկենք առանձին-առանձին:

Սրբություն Սրբոց: Ըստ *Հին Կտակարանի*⁴⁹⁰ Աստված պատվիրեց Մովսեսին մի սրբարան-վրան կառուցել իսրայելցիների ճամբարի կենտրոնում: Վկայության խորանի կենտրոնում Սրբություն Սրբոցն էր, որտեղ, ի տարբերություն մյուս սրբարանների, Աստծու ոչ մի պատկեր չկար, արգելված էր: Այնտեղ մի ոսկեզօծ տուփ կար, որտեղ դրված էին Օրենքի երկու քարե տախտակները, որ Մովսեսն էր բերել Սինա լեռից. «*Եւ քաւութիւնը վկայութեան տապանակի վերայ՝ սրբութեանց սրբութիւնումը դնես*» (Ա՝ Ել. ԻԶ 33-35):

Հայ բանաստեղծության մեջ **Սրբություն սրբոցը** ձեռք է բերել ոճական արժեք.

«*Ի Սրբութիւն Սրբոցն առեալ, Յորում Յիսուս յաջմէ բազմեալ, Նըմին երգէ ընդ սրովբէից Ձերեքսրբեանն յաւիտենից*» (Ներսես Շնորհալի, ՏԳ, 264):

Սաբեկ: Մեկ անգամ *Աստվածաշնչում* գործածված **Սաբեկ**-ը հայ բանաստեղծության մեջ դաձել է ոճանուն⁴⁹⁰:

Աստվածաշնչի (Ծն. ԻԲ 13) հայերեն թարգմանության մեջ բերվում է «*Խոյ մի կախեալ կայր զճառոյն Սաբեկայ*»: Ծառի նկարագրությունը ՆԲՀԼ-ն տալիս է ըստ Վարդան Արևելցու՝ «սաբեկ ոստ մի ծառոյ թարգմանի, կամ **երկճղի ծառ**, իսկ առ 'ի միտս թողութ'ի կոչի» (ՆԲՀԼ, Բ, 683): Աստվածաբանական միտքը *Սաբեկի* երկճյուղ լինելուն տվել է կրոնական-աստվածաբանական իմաստ՝ խորհուրդ. Գրիգոր Տաթևացին գրում է. «*Խոյն Իսահակայ կախեցաւ զճառոյն Սաբեկայ, որ է երկճղի, որ*

⁴⁹⁰ *Սաբեկ*-ի ծագման և նշանակության մասին մանրամասն տե՛ս սույն աշխատանքի *Հին Կտակարանը՝ որպես հայրուկ անունների սկզբնաղբյուր* ենթագլուխը, էջ 68-86:

արինակ էր ճշմարիտ խաչին Քրիստոսի»⁴⁹¹: Այսինքն՝ ծառի երկու ճյուղերը դիտողին հիշեցնում են խաչի թևեր, և ըստ այդմ էլ **Սաբեկն** ընկալվում է իբրև խաչի խորհրդանիշ: Այս բառի աստվածաշնչյան նման ընկալումն է թերևս պատճառը հայ հեղինակների կողմից **Սաբեկը** իբրև հատուկ անուն ընկալելու, որոնք հենց այդպես էլ ներկայացնում են *Սաբեկը*՝ իբրև խորհրդանիշ:

«Օրհնեա՛լ ես , աստուածազարդ փայտ սուրբ կամ ճշմարտապէս տունկ, որ զի քէն կախեցելոյ **Սաբեկայ** գառամբն ոչ միայն Իսահակ ի մահուանէ փրկիւր, այլ միանգամայն համօրէն ծնունդք Ադամայ» (Դավիթ Անհաղթ, ԴԱՓՄ, 19):

«Հանին արտաքս՝ իբր զողջակէզ, Կախեցին՝ իբր զխոյն **Սաբեկայ** ձգեալ զեղջերացն, Տարածեցին ի սեղան խաչին՝ իբր զպատարագ, Բեւեռեցին՝ որպէս չարագործ, Պնդեցին՝ իբր զապստամբ...»: «Արմատացո՛ւ մեզ սովաւ տունկ երանութեան գլուսոյդ ի քեզ մեծ պաշտպանութիւն, ստեղծիչ բոլորից, տէ՛ր արարածոց, զայս **ծառ Սաբեկայ**, որ ունի կախեալ ի դիտակ ոստոցն զաւանդ սուրբ նորոգ այժմու փրկութեանս ծաղկեալ քեւ, Քրիստոս, ի պտուղ կենաց անմահականաց» (Գրիգոր Նարեկացի, ՄՈ(Հ), 194, 248. ԳՆՄՈ, 559):

«**Սաբեկայ ծառոյն** նըման Ոչ խոյ յողջակէզ կախեալ, Այլ գառ Աստուծոյ զենեալ Մեզ հաշտութեան նըւէր»: «Ջքեզ Նոյեան տապանըն գուշակեաց փըրկող՝ **Ջծառոյն Սաբեկայ** գառն Աստուծոյ կախեալ» (Ներսես Շնորհալի, ՏԳ, 179, 187):

«Յորժամ ետես ընդ **Սաբեկին** Կախեալ զխոյն ողջակիզին» (247): «Ջգնեալս պատուական արեամբ գառինդ անարարի Ոչ ընդ **Սաբեկայ** կախեալ, Այլ զոր ի վերայ խաչին խոցեալ առ ի գինս տալով ծառայիս, Ազատեա՛ յինքնակապ կապանաց մեղանացս» (Գրիգոր Տղա, ԲՊ, 340):

Այս պատկերն այնքան գործածական ու էական նշանակություն է ունեցել մեր միջնադարյան հեղինակների համար, որ Ստեփանոս Սյունեցին ստեղծում է այս բառով բաղադրված բարդություն՝ **սաբեկաճյուղ**, այսինքն՝ *Սաբեկի ճյուղերն ունեցող*:

«Նոյինասաստին նորոգ կենաց պատճառ ցուցար, Աբրահամինափործ սաբեկաճիւղ ծառ ծաղկեցար » (Ստեփանոս Սյունեցի, ԲՄ, էջ 236):

Կենաց ծառ: Ըստ *Աստվածաշնչի*՝ «Եհովայ Աստուածը բուսցրեց երկրիցը ամեն

⁴⁹¹ Գրիգոր Տաթևացի, Ոսկեփորիկ, էջ 398:

ծառերը՝ տեսնելու հաճելի եւ ուրելու քաղցր, եւ պարտէզի մէջտեղը՝ **կենաց ծառը, եւ բարին ու չարը գիտենալու ծառը**» (Ա-2՝ Ծն. Բ 9-10): Եղեմի իմաստութեան ծառից՝ բարին և չարը գիտենալու ծառից արգելված էր Ադամին ու Եվային պտուղ ուտել: Եվ քանի որ օձից խաբվելով՝ նրանք ճաշակեցին արգելված պտուղը, ուստի Աստծու կողմից վտարվեցին Եղեմից:

Հայ միջնադարյան բանաստեղծ Ազարիա Զուղայեցին գործածում է **Բան ծառ** արտահայտությունը. «Ապա էառ զԵայ կողէն Ադամայ, Ուրել անմահ պտղոյն, որ ի դրախտին կայ, Բան ծառ մի պարուիրաց թէ չուրել նմա, Եւ յորժամ կերիցէ մահու տիրանայ»: Աստծու մտավախությունն այն էր, որ Ադամն ու Եվան միգուցե **Կենաց ծառի** պտուղն էլ ճաշակեն և դառնան իր նման անմահ. «Ահա Ադամն եղաւ մեզանից մեկը՝ որ բարին եւ չարը գիտենայ, եւ հիմի միգուցէ իր ձեռքը մեկնէ, եւ կենաց ծառիցն էլ առնէ եւ ուրէ եւ յաւիտեան ապրի» (Ծն.Գ 22): Աստծու որոշումը հաստատ է ու վճռական. «Եւ եհան զԱդամ, եւ բնակեցոյց յանդիման դրախտին փափկութեան. եւ հրամայեաց քերորէից եւ բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել ծառոյն կենաց» (Ծն. Գ 24):

Հայ միջնադարյան բանաստեղծության մեջ **Կենաց ծառ** կապակցությունը հաճախակի գործածվում է, բայց չի առանձնանում իբրև հատուկ (հին և միջնադարյան մեր բանաստեղծների համար **Կենաց ծառը** բազմաթիվ անգամներ փոխաբերաբար ակնարկում է Մարիամ Աստվածածինն), մինչդեռ ժամանակակից գրողները հատուկ ընդգծում են այդ կապակցությունը՝ այն դարձնելով ոճանուն:

Շարականներում կարդում ենք. «**Ծառ կենաց** տնկեալ յադին սուրբ կոյս, որ զհայրածին բղխեցեր ըզծաղիկ» (6): «**Կյանքի ծառ**՝ տնկված դրախտում, Սուրբ Կոյս, Որ բխեցրիր Հորից ծնված ծաղիկը Եւ ժամանակին տվիր Որդուն պտուղ մարդկանց, Որի մարմինը ճաշակելով՝ Անմահացանք հույսով» (շար):

«Ընդէ՛ր մերժեցար ի պտղոյն շնորհաց, իբր զԱդամ՝ **ի ծառոյն Կենաց...**» : «Աղաչեմ զքեզ, սուրբ Աստուածածին, Հրեշտակ ի մարդկանէ, մարմնատեսիլ քերորէ, երկնաւոր արքայուհի, Անխառն իբրեւ զաւղ, մաքուր որպէս լոյս. Անշաղախ՝ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան, Գերազանց, քան զբնակութիւն անկոխելին սրբութեանց, Երանաւոր խոստմանն տեղի, եղեմ շնչական, **Ծառ կենացն** անմահից՝ բոցեղէն սրովն պարունակեալ...» (Գրիգոր Նարեկացի, ԳՆՄՈ, 425, 570):

«Ռախճանայ դրախտն Եդեմայ նոր ծառ կենաց փնկեալ ի նմա Ի յաբրահամեան Յեսսեան արմատ դաւթիագարմ»: «Դրախտին Ադենայ ծառ կենաց ի մէջ նըմին, Դիմակ մահառիթ՝ մի ճաշակել պատուեր...» (Ներսես Շնորհալի, ՏԳ, 9):

Նույն ձևով Աստվածաշնչից ծավալվում է **Անկեզ մորենի** ոճանունը:

Աստված Սինա լեռան վրա հայտնվեց Մովսեսին մորենու մոտ, որը բոցով էր պատված, բայց չէր այրվում, որի պատճառով էլ *մորենին* ստացավ առանձնահատուկ իմաստ՝ *անկեզ մորենի*, և հայ բանաստեղծները հաճախ են հիշատակում աստվածաշնչյան այս դրվագը. «Եւ Եհովայի հրեշտակը կրակի բոցով երեւեցաւ նորան մորենու միջից. եւ նա տեսաւ, որ **ահա մորենին կրակով վառվում էր, բայց մորենին չէր սպառվում**» (Ել.Գ 2): Մովսեսը փորձում է հասկանալ պատճառը. «Եւ Աստուած մորենու միջիցը կանչեց նորան եւ ասեց. Մովսէ՛ս, Մովսէ՛ս. եւ նա ասեց. Ահա ես : Եւ ասեց. Այս տեղին մի մօտենար. կօշիկներդ հանիր ոտքերիցդ, որովհետեւ այն տեղը, որի վերայ դու կանգնել ես, սուրբ երկիր է...» (Ա-2՝ Ել. Գ 4-5): Աստված առաջին անգամ այստեղ Մովսեսին հայտնեց իր անունը և տվեց նրան իր պատգամները:

Հայ ժամանակակից պոեզիայում **Անկեզ մորենի** կապակցությունը դարձել է ոճանուն՝ երբեմն հետադաս որոշչային կիրառությամբ՝ *Մորենի անկեզ*: «**Անկեզ մորենի** և սրովբէ հողեղէն սուրբ կոյս, Քանզի պտուղն կենաց ի յէն փուաւ մեզ» (Մովսես Խորենացի, ԳՀԲ, 43): «**Մորենի անկիզելի**, բարձող մեղաց, լուծիչ յանցանաց, սու՛րբ Աստուածածին » (Գրիգոր Նարեկացի, ՏԳ, 132): «**Անկեզ մորենի** Մովսեսի տեսեալ Ըզբեզ ծանուցեալ»: «Զքեզ Մովսէս **Անկեզ ի մորենին** տեսեալ Եւ սափոր ոսկի՛ մանանայիւ լըցեալ» (Ներսես Շնորհալի, ՏԳ, 5, 161): «Եվ այրվում է նա... Եվ բոցը բոսոր, Կապույտ է ու հիր, Այրվում է, այրվում...Եվ բոցը մորմոք, Կարոտ է ու կանչ, **Անկեզ մորենին** այրվում է, այրվում, Եվ չկա մոխիր, Չկա սպառում և չկա վախճան...» (Վ. Դավթյան «**Անկեզ մորենի**», 99, 100): «Ճաճանչում էին, դարձած մէկական **Մորենի անկեզ**, Եւ իջնում էին շիրիմ, ինչպէս Սինայից վար իջնող Մովսէս» (Աբ. Ալիքեան, ՀԻ, 194): «Եվ քո սուրբ լույսի սրբազան փարրին Ներշնչում ենք նոր, չտեսնված վարք, Որից վերջապես կկիզվի անգամ **Անկեզ մորենին**» (Էդ. Միլիտոնյան, ԱԺ, 64): «Բյուր փառք, օրհնություն գթառատ սրտին, Որ վառվում է **Անկեզ մորենի** իբրև, Եվ մեզ փրկում է հոգևոր ցրտից» (Ա. Ղազարյան, ԳԺ, 24):

Ջրհեղեղ: Ըստ *Աստվածաշնչի*՝ համաշխարհային ջրհեղեղ, որ նկարագրվում է *Ծննդոցում*: Աստծու պատգամով մարդկանց գործած չարիքները պետք է անպատիժ չմնան, և պետք է փրկվի միայն Նոյը՝ իր ընտանիքով. «*Որովհետև ետքը օրից յետոյ երկրի վերայ քառասուն օր եւ քառասուն գիշեր անձրեւ պիտի բերեմ, եւ ամեն էակ, որ արի, երկրի երեսիցը պիտի ջնջեմ*» (Ծն. է 4): Ջրհեղեղը, որին զոհ գնացին կենդանի բոլոր էակները, տևեց 150 օր: «*Ջրերը տասնեւիինգ կանգուն վեր բարձրացան, եւ սարերը ծածկվեցան, եւ երկրի վերայ շարժող ամեն մարմին... եւ ամեն մարդ մեռա*» (20-22): Նոյի պատրաստած տապանը հանգրվանեց Արարատ լեռան վրա: «*Եւ ետքնեորդ ամսում՝ ամսի տասնեւեօթներորդ օրը տապանը Արարատ սարի վերայ նստեց: Եւ ջրերը գնալով քիչանում էին...*» (Ը 4-5):

Ա. Հարությունյանի բանաստեղծական խոսքում **ջրհեղեղը** դառնում է ոճանուն և ոչ միայն սա, այլև *տապանը*. «... Նոյ՛, ես հրում եմ քո **Տապանը** ղարաբաղյան ամուրի իմ ուսերով դեպի բաց ջրեր, Դեպի **Ջրհեղեղը** Նոր Սիրո...» (ՆՆ, 42):

Սուրբ: Բառի նախնական իմաստն է *մաքուր, անխառն* կամ *հստակ*: Եվ հենց այդ իմաստով բազմաթիվ գործածություններ ենք գտնում *Աստվածաշնչում* (Ել. ԻԵ 17, Առկ. ԺԴ 4, Մտթ. ԻԷ 59 ևն): Հետագայում բառն ստանում է այլ իմաստներ՝ *անմեղ, աստվածարյալ, նվիրական, թանկ, զատված* և այլն, սկսում է գործածվել թե՛ ուղիղ, թե՛ փոխաբերական իմաստներով, ավելի հաճախ գործածվում է որպես մակդիր՝ *սուրբ լեռ, սուրբ քաղաք, սուրբ երկիր, սուրբ մարդ*: *Աստվածաշնչում* գործածվում են *սուրբ*-ով բաղադրված հատուկ անուններ՝ **Սուրբ Գիրք, Սուրբ Սրբոց, Սուրբ սեղան, Սուրբ երկիր, Սուրբ քաղաք** ևն: Այն ունի տերմինային արժեք, երբ վերաբերում է հայ եկեղեցու կողմից սրբացված մարտիրոսներին և քրիստոնեական վկաներին, ինչպես՝ **Սուրբ Աստվածածին, Սուրբ Հռիփսիմե, Սուրբ Սարգիս** ևն, նաև կազմում է բաղադրյալ հատուկ անուններ՝ **Սուրբ Ծնունդ, Սուրբ Երրորդություն, Սուրբ Հոգի** ևն: Բերենք **Սուրբի** մի քանի ոճանուն գործածություններ գեղարվեստական գրականությունից.

«*Ուրեմն փա՛ռք և օրհնություն՝ն ձեզի, Դուք մեր Կուռքերը մարմարեղեն ու մեր **Սուրբերը** պայծառ...*» (Սիամանթո):

«*Ես ուզում էի բանաստեղծության պատրվ զարդարել վանքի պատի պես՝ իբրև*

հափուցում այն սքանչելի բանաստեղծության, որով պապերը մեր հավատարկեզ հյուսել են վանքի պատերը նրբին.– քարը քարի հետ արյունով կապել, կապն իրենց հոգու ջերմությամբ չափել, քրտինք թափելով, քաղցր փառապել և նվիրել են Փրկիչին, **Սրբին**» (Ռ. Դավոյան):

«Ողջ Արտաշատցիք անչափ զարմացան, Երբ մարդիկ **Սրբին** փնտրելու եկան. «Վաղուց է մեռած...»,– նրանք ասացին, Օտա իշխանին մտքում ծաղրեցին» (Նկատի ունի Խոր վիրապում 13 տարի բանտարկված Գրիգոր Լուսավորչին-ՓՄ)(Ն.Վանական):

Տեր: Իբրև ոճանուն կարելի է դիտել *Աստվածաշնչում* բազմակի անգամ գործածված **Տեր**-ը. «Իմ **տեր** Աբրահամի **Տեր** Աստվածը», «**Տեր**, Աստուած **տեսան** իմոյ Աբրահամո»։ Ընդձված բառերի ոճական արժեքը հստակ առանձնացվում է, որովհետև մենք այս գործածությունը հստակ տարբերում ենք *տեր* բառի՝ իբրև հասարակ կիրառություններից, ինչպես՝ *տեր Սուքիաս, տեր հայր*⁴⁹²:

Արքա: **Արքա**-ն Աստծուն տրված բանաստեղծական ոճանուն է՝ նրա պատվանուններից մեկը, որը հավասարապես ակնարկում է նաև Հիսուս Քրիստոսին:

Հայ բանաստեղծության մեջ բազմակի է Աստծուն տրված **արքա** անվանումը ոչ որպես հատուկ, սակայն այն դառնում է ոճանուն Աստծուն, ինչպես՝ «Անդադար աղօթ առ անմահ **Արքայն...**» (Հ. Արզրումեցի): «Խօսեց **Արքան** տիեզերքի՝ Լուսաւորչին Հայաստանի. «Վայրն այս սուրբ է իմ իսկ իջմամբ եւ հաճութեամբ, կառուցի՛ր տուն Դու պաշտաման՝ վերածնուած փոքրիկ հօտին քո Հայկազեան»: «Իր թախանձանաց որպէս պատասխան, Մի գիշեր երկնից իջաւ նոր **Արքան**, Բախեց իր մուրճով, դժոխքը սարսեց, Լուսեղէն շողով մեր Տունը կերտեց» (Ն. Վանական):

Առաջին հայացքից թվում է, թե շփոթելի են մականվան և ոճանվան սահմանները, մինչդեռ այդպես չէ: Այնքանով, որքանով ոճանունները միայն տեքստում են տարբերակվում, թույլ է տալիս դրանք հստակ բնորոշել: Ասենք **Սպեղծող**, **Բարձրյալ**, **Արարիչ**, **Արքա** բառերը տեքստից դուրս հնարավոր է տարբերակել, թե դրանք նույն դաշտում են: Առաջին իսկ հայացքից պարզ է, որ **Բարձրյալը** և **Արարիչը** Աստծու մականուններ են, և դրանց համար տեքստային կիրառությունը էական չէ: Մինչդեռ **Սպեղծողը** և **Արքան** բնութագրում են Աստծուն միայն տեքստում՝ դառնալով

⁴⁹² Համաբարբառ գրաբար *Աստվածաշնչի*-ն հստակ առանձնացրել է *տեր* բառի գործածությունները. Աստծու պատվանուն *տերը* կիրառված է 8907, իսկ սովորական նշանակությամբ՝ 411 անգամ:

ոճանուն, այսինքն՝ դրանց առանձնացման համար կոնկրետ գործածություն պետք է լինի:

Շարականներում կարդում ենք. «*Երկնքի եւ երկրի **Սպեղծողին** փաճար եղար եւ առագաստ, Որ մեր ննջեցյալներին Նորոգում է հըրով*» (ա), 60: Հ. Ակնեցին գրում է. «*Այլ ճանապարհի, թէ զինչ կրեցին, է՛ գիտելի **Սպեղծողին***» (ՈՒՄԲ, հ2, 284):

Նույն ձևով՝ **Գառը**: Ըստ *Աստվածաշնչի* (Հվի. Ա 29) «*Հեփեւեալ օրը Յովհաննէսը փեսնում է Յիսուսին իրան մօտ գալիս, եւ ասում է. Ահա **Աստուծոյ Գառը**, որ վեր է առնում աշխարհքի մեղքը*»: Քրիստոսն է **Գառն Աստուծու**, քանզի մարդկային մեղքի համար խաչ բարձրացավ Հիսուսը, որ մարդկանց ազատի ադամական մեղքից: Հիշենք, որ Հին ուխտը հաստատված էր Աստծու կամքով Մովսեսի միջոցով՝ ցույցերի և նոխազների արյամբ. «*Սա այն ուխտի արինն է, որ Աստուած նորան պատուիրեց ձեզ. եւ խորանի եւ պաշտամունքի բոլոր անօթների վերայ էլ արինը նոյնպէս սրսկեց: եւ համարեա թէ ամեն բան արինով է սրբվում օրէնքին համեմատ, եւ առանց արին թափելու թողութիւն չի լինում*» (Եբր. Թ 20-22): Բերենք բնագրային բազմաթիվ գործածություններից ընդամենը երկուսը.

«*Բառ մը ուզեց լոկ թոթովել Եսային... Բառ մը ներման... ու թաց աչքերն երկնային Քաւութեան **Գառն** ու արինի նոր Փեսան՝ Իր փառքերուն մէջ՝ Հօր աջ կողմը փեսան*» (Ե. Դուրյան):

«*Դու՛, **Գառն** անարատ եւ զոհ գերագոյն, Վասն քաւութեան թափուած թանկ արին, Հեղուի՛ր վերստին եւ սրբագործի՛ր, Իմ ծանրածանր մեղքերը քաւիր*» (Ն. Վանական, ՏՅ, 22):

Մականունները կոնտեքստից դուրս ճանաչելի են. եթե **Վիշապաքաղ**, ուրեմն՝ Վահագն, եթե **Աղեղնավոր**, ուրեմն՝ Հայկ, եթե **Նազովրեցի**, ուրեմն՝ Հիսուս, **Երանելի**, ուրեմն՝ Հոբ: Աստծուն տրվող մականունները ևս ճանաչելի են՝ **Բարձրյալ**, **Ամենակարող**, **Փրկիչ** և այլն: Մինչդեռ ոճանունները այս ճանաչելիությունը չունեն. նրանք հասարակ անուններ են, որոնք միայն որոշակի գործածություններում են դառնում ոճանուն, գրվում մեծատառով, ինչպես **Արքա**, **Գառ**, **Հայր**, **Տեր** և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աստվածաշնչի հատկանվանաբանությունը գիտական լուրջ հետաքրքրություն ներկայացնող բնագավառ է, որի ուսումնասիրությունը մշտապես ունի խիստ արդիական հնչողություն ու նշանակություն: *Աստվածաշունչը*՝ որպես բոլոր ժամանակների մեծագույն գիրքը ամենատարբեր առումներով, բացառություն չէ նաև հատուկ անունների ներկայացման տեսանկյունից և դառնում է հատկանվանաբանության համար անփոխարինելի աղբյուր ու շտեմարան:

Լինելով *Աստվածաշնչի* հնագույն թարգմանություններից՝ հայերեն *Սուրբ Գիրքը* անցել է ավելի քան հազարյոթհարյուրամյա ճանապարհ և մեզ ներկայանում է գրաբար, արևմտահայերեն ու արևելահայերեն տարբերակներով և բազմաթիվ ձեռագիր մատյաններով:

Սույն աշխատանքում մենք կարևորեցինք հատուկ անունների զուգադրահամեմատական քննությունը և հանգեցինք հետևյալ եզրակացություններին:

1. *Սուրբ Գրքի* հայերեն թարգմանությունը որևէ կոնկրետ թվականի հետ կապելը ճիշտ չէ. *Աստվածաշնչի* թարգմանությունը անպայմանորեն դիտարկում ենք իբրև մի գործընթաց, որը սկսվել է դեռ մինչև գրերի գյուտը: Մենք կարծում ենք, որ հայերեն *Աստվածաշունչը* ունեցել է թարգմանական երեք որակ՝ նախնականը՝ **Սամոսայայան** կամ **Մեսրոպյան**, այնուհետև՝ **Փոլթանակի**, որի աշխատանքներին արդեն մասնակցել են մեծ թվով ավագ և կրտսեր դասի թարգմանիչներ, և վերջնական տեսքի բերված **Սահակ-Մեսրոպյան** կամ **Ոսկեղենիկ**:

Այս երեք բաժանումները լայն առումով արտահայտում են *Սուրբ Գրքի* գրաբար թարգմանության անցած ուղին, իսկ նեղ առումով այս երեքը մեկտեղված դարերի հեռավորությունից մեզ ներկայանում են իբրև հայերեն *Աստվածաշնչի* մեկ ամբողջական՝ **Սահակ-Մեսրոպյան ոսկեղենիկ թարգմանություն**:

2. Հատուկ անունների համակողմանի քննությունը անհնար է կատարել, առանց այդ անունները ներկայացնող բառարանների. բազմաթիվ տարակարծությունները՝ միևնույն անվան շուրջ, հաճախ ճշգրտվում են հենց այդ բառարանների համեմատությամբ:

3. Չնայած հայերեն *Աստվածաշունչը* միջնորդավորված թարգմանություն է, այնուամենայնիվ, հատուկ անունների քննությունից պարզ է դառնում, որ այսուամենայնիվ եբրայերենի ազդեցությունը կա հայերեն թարգմանության վրա (շատ հատուկ անուններ հայերեն թարգմանության մեջ տարբեր են *Յոթանասնից*-ից), և պետք է անշուշտ ընդունենք, որ մեր թարգմանիչները Եփեսոսի ժողովից հետո Հայաստան են բերել *Սուրբ Գրքի* Որոգինյան տարբերակը և այդ օրինակով մեր թարգմանիչները հնարավորություն են ստացել իրենց կատարած «*փութանակի*» թարգմանությունը թե՛ խմբագրելու, թե՛ լրացնելու:

4. *Աստվածաշնչի* հատկանվանաբանության ուսումնասիրման մեջ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում եբրայական հատուկ անունների թարգմանական տարբերակները, որոնք բավական շատ են:

Գրաբար և արևելահայերեն տեքստերում հաճախ թարգմանվել են հատուկ անունները, հատկապես տեղանունները, տրվել են նրանց բառային նշանակությունները: Երբեմն դա տեղին է ստացվել, արդարացված, կամ տեքստից բխող, կամ բառացի նշանակությամբ թարգմանված, երբեմն էլ՝ հատուկ անունն իսպառ վերացվել է՝ խաթարելով տեքստի բովանդակությունը:

Գրաբար (Ա-1) և արևելահայերեն (Ա-3) բնագրերում թարգմանական ձևերը հաճախ տարբերվում են, քանի որ տարբեր են նրանց հիմք աղբյուրները:

Արևմտահայերեն (Ա-2) տեքստը չի թարգմանում (կամ գրեթե չի թարգմանում) հատուկ անունները, իսկ եթե թարգմանում էլ է, ուրեմն այն իրոք հասարակ անուն է, և կամ պետք է, որ թարգմանվի:

Անունները թարգմանելու միտումը խոսում է հենց այն մասին, որ գրաբար *Սուրբ Գիրքը* շատ հին է, այսինքն՝ թարգմանական ավանդույթ չի եղել, եղել է սուկ *Սուրբ Գրքի* անաղարտ պարզ վերարտադրում մեկ այլ լեզվով. որքան բնագրին հարազատ, այնքան ճիշտ:

5. *Աստվածաշնչի* տարբեր թարգմանություններ համեմատելիս բացահայտվում է հստակ մի օրինաչափություն. ուսերեն և արևմտահայերեն (Ա-2) *Աստվածաշունչ* գրքերը հատուկ անունները ներկայացնում են այնքան նման, ավելի ճիշտ կլինի ասել բառացի, որ թվում է՝ դրանք նույն աղբյուրից են օգտվել:

Գրաբար և արևելահայերեն գրքերն էլ, թեև ունեն տարբեր սկզբնաղբյուրներ, բայց անունների ընտրության հարցում ավելի մոտ են իրար:

Հայերեն *Աստվածաշունչ* գրքերը՝ Ա-1 և Ա-3, հատուկ անունները թարգմանելիս մեծ մասամբ կրկնում են *Յոթանասնից*-ը. թարգմանել են հույները տեղանունը, ուրեմն այդպես է ներկայացվել նաև հայերեն տեքստում, չեն թարգմանել հույները, ուրեմն չեն թարգմանել նաև մեր հին թարգմանիչները: Սակայն երբեմն հանդիպել են նաև այնպիսի օրինակներ, երբ հունարենի չթարգմանված հատուկ անվան դիմաց մեր թարգմանիչները դրել են թարգմանված տարբերակ, կամ հակառակը. հայերեն բնագիրը պահել է եբրայական ձևը, հույները թարգմանել են: Այս բոլոր փաստերը ապացուցում են մի բան. մեր հին թարգմանիչները *Աստվածաշունչ* թարգմանելիս ձեռքի տակ ունեցել են ոչ միայն հունարեն՝ *Յոթանասնից*, ասորերեն՝ *Պեշիթա*, այլև ամենատարբեր բնագրեր. ամենայն հավանականությամբ դա եղել է *Որոգհնյան Աստվածաշնչի* մի օրինակ:

6. Մենք վերստին համոզվում ենք, որ հատուկ անուններն ընդհանրապես, մասնավորապես անձնանունները, Աստծու, Աստվածամոր անունները, լեզվաբանական միավորներ լինելով, իրենցում ոչ միայն լեզվական, այլև խորքային (ազգային, հոգևոր-մշակութաբանական, սոցիալ-պատմական) մեծ տեղեկություն են պարունակում, ինչպես նաև ապահովում ժողովուրդների միջև այդ ամենի փոխհաղորդում:

7. Աշխատանքում առանձնակի կարևորել ենք *Աստված* բառը, որի ստուգաբանությունը ինչ-որ չափով խարսխվում է հենց *Սուրբ Գրքի* ընձեռած փաստերի վրա, առաջին հերթին *Էլոհիմ* և *Սաբավովթ* անունների զուգադրահամեմատական քննությամբ:

Աստված-ը համարժեքն է եբրայական բնագրի *Էլոհիմ*-ի. երկուսն էլ ունեն նույն նշանակությունն արտահայտող բաղադրիչ՝ *էլ/ալ- աստ = ուժ, զոր*: Կարծում ենք, որ *աստրուած* բառը պետք է բաղադրել *աստ-ու-ած*, որտեղ *աստ* նշանակում է *զոր, ուժ*, իսկ *ած*-ը *ածել* բայի արմատն է (համաժամանակյա դիտարկմամբ՝ ածանց), որ նշանակում է *իր հետևից տանել*, այսինքն՝ *զորությամբ տանող*, կամ, ինչ-որ տեղ՝ *զորություններ ունեցող* (հմմտ.՝ *ողորմած՝ ողորմող, կարեկցող, գթած՝ գութ ունեցող*): Եվ հենց *Տեր Ջորությանցն* էլ նշանակում է *զորություններ ունեցող*:

Եթե հայերեն բնագրերում տրվում է **Ձորությունների Տեր, Տէր Ձորութեանց** տարբերակը, ապա նրա կողքին գրեթե չի հիշատակվում **Աստվածը**, և սա էլ հստակորեն փաստում է այն, որ **Աստված**-ը և **Տեր Ձորությանց**-ը նույն գերագույն ուժի հավասարաթեք անվանումներն են հայերենում:

8. *Սուրբ Գրքում Հայր Աստված* ներկայանում է բազմաթիվ անուններով, ինչպես նաև անվանումներով, որոնց մի մասի քննությանն էլ անդրադառնում ենք թարգմանական, իմաստային, լեզվաոճական հայեցակետերից:

Ելից գիրքը *Աստվածաշնչի* անվանաբանական ողջ համակարգի համար ունի խիստ էական ու առանձնահատուկ նշանակություն, որովհետև տարբեր անուններով ու անվանումներով հանդես եկող Աստվածն այս գրքի Գ 14 հատվածում հայտնում է իր անունը և բացում իր անվան նշանակությունը՝ **ՈՐ ԷՆ**, որի զուգադրահամեմատական քննությունն էլ տվեցինք թե՛ հայերեն՝ գրաբար, արևելահայերեն, արևմտահայերեն, թե՛ օտարալեզու՝ հունարեն, լատիներեն, ասորերեն, գերմաներեն, ռուսերեն տարբերակների համեմատությամբ:

Հիսուս Քրիստոսը հանդես է գալիս միմիայն իրեն տրված անուններով՝ **Աստվածորդի, Աստու որդի, Դավթի որդի, Մարդու Որդի, Որդի, Միածին, Աստու գառ, Ռաբբի, Վարդապետ, Քահանա, Քահանայապետ, Փրկիչ**, ինչպես նաև թե՛ իրեն, թե՛ Հայր Աստծուն տրվող անուններով՝ **Տեր, Աստված, Թագավոր, Դատավոր, Իշխան** և այլն:

9. *Նոր Կտակարանը* գրվել է հունարեն, և քանի որ այս դեպքում հայ թարգմանիչները միջնորդավորված թարգմանություն չեն կատարել, ուստի հատուկ անունների և անվանումների թարգմանության ժամանակ որոշակի հակասություններ գրեթե չկան: Հայերեն անունները համեմատվել են ինչպես գրաբար, արևմտահայերեն, արևելահայերեն տարբերակներում, այնպես էլ տրվել են հունարեն, ասորերեն և ռուսերեն սկզբնաղբյուրների համեմատությամբ:

10. Հատկապես *Հին Կտակարանը* ընթերցողին առատ նյութ է մատուցում կոապաշտության մասին, և դրա զանազան դրսևորումները իրենց արտացոլումն են գտել հենց կուռքերի անուններում, որոնք բազմաթիվ են ու բազմաբովանդակ:

Սուրբ գրքի բազմաթիվ օրինակներից հետևում է, որ *կուռք, դիք, չաստված* կամ

աստված (հեթանոսական) անունները ունեն ինչպես իմաստային ընդհանրություններ, այնպես էլ որոշակի ուրվագծված տարբերություններ:

Գերակա կուռքերի անունները տրվում են բազմաթիվ տարընթերցումներով, թարգմանական տարբերակներով, որոնց քննությանն էլ անդրադարձել ենք մեր աշխատանքում՝ համեմատելով ինչպես գրաբար-արևմտահայերեն-արևելահայերեն, այնպես էլ հունարեն և ռուսերեն բնագրերի հարուստ նյութը:

11. Հատուկ անունների իմաստային խմբերից եբրայական անձնանունների երկու մեծ խմբի, մասնավորապես՝ նահապետների և մարգարեների, իսկ տեղանուններից՝ լեռնանունների ներկայացումը որոշակի պատկերացում է տալիս հայերեն թարգմանություններում ընդհանրապես թե՛ անձնանունների, թե՛ տեղանունների տառադարձական առանձնահատկությունների, տարընթերցումների, տարբերակային ձևերի մասին, որն անշուշտ շատ կարևոր է սուրբգրային տեքստը ավելի ընկալելի դարձնելու տեսանկյունից:

12. Աշխատանքում՝ վերջին գլխում, որոշակի կարևորվում է հատուկ անունների մի այլ յուրահատուկ գործառական առանձնահատկություն՝ հասարակ անունների՝ իբրև հատուկ անուն կիրառությունները, որոնք երբեք չի կարելի շփոթել մականունների հետ:

Աստվածաշնչյան բազմաթիվ օրինակներ սնուցող երակ են դառնում թե՛ միջնադարյան բանաստեղծների, թե՛ ժամանակակից գրողների համար, ինչպես *Անկեզ մորենի*, *Ավետյաց երկիր*, *Սաբել*, *Կենաց ծառ*, *Սրբություն սրբոց*:

Ա. Սկզբնաղբյուր Աստվածաշունչ մատյաններ

1. *Աստվածաշունչ մատյան Հին եւ Նոր կտակարանաց.* ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց հմմտ. եբրայական եւ յունական բնագրաց, Վիեննա, Ամերիկեան Ընկերութիւն Գրոց Սրբոց, 1929, Հայաստանի աստվածաշնչական ընկերութիւն, 1997 **(Ա-1)**:
2. *Աստվածաշունչ մատյան Հին եւ Նոր կտակարանաց.* ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց՝ ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ, Յաշխատասիրութենէ Տն Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի, միաբանութենէ Մեծին Մխիթարայ Րաբունապետի եւ առաջին Աբբայի, 1805, Ի Վենետիկ **(ՁԱ)**:
3. *Աստվածաշունչ գիրք Հին եւ Նոր կտակարանաց.* Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած, Կոստանդնուպօլիս, 1890 **(Ա-2)**:
4. *Աստվածաշունչ մատյան Հին եւ Նոր կտակարանների.* Արեւելահայերէն նոր թարգմանութիւն, վերահրատարակութիւն, Ս. Էջմիածին, 1999 **(Ա-3)**:
5. *Աստվածաշունչ գիրք Հնոց եւ Նորոց Կտակարանաց,* Վէնետիկ 1733, աշխ. Մխիթարայ Սեբաստացոյ՝ Աբբայ Հայր կոչեցելոյ **(ՄՍԱ)**:
6. *Աստվածաշունչ գիրք Հնոց եւ Նորոց Կտակարանաց,* Ոսկան վրդ. Երևանցի, Ամստերդամ, 1666, 1462 էջ:
7. *Աստվածաշունչ Նոր կտակարան Հիսուս Քրիստոսի.* Աշխարհաբար թարգմանություն, Եր., 2001:
8. *Աշխարհաբար Աւետարան եւ մեկնութիւն.* ըստ վարդապետութեան Հայաստանեայց Ս. եկեղեցոյ, Վահան վարդ. Տէր-Մինասեան, Կ. Պոլիս, 1894 **(ԱԱՄ)**:
9. *Գիրք Երկրորդասանց մարգարէից, քնն. բն. աշխ.*՝ Հ. Ամալյանի, *Գիրք Ելից, քնն. բն. աշխ.*՝ Ա. Զեյթունյանի, Եր., ՀՀ ԳԱ հրտ., 1992:
10. *Գիրք Երկրորդումն օրինաց, քնն. բն. աշխ.*՝ Ա. Զեյթունյանի, Էջմիածին, Մայր Աթոռ, 2002, 248 էջ:

11. *Գիրք թուրք*, քնն. բն. աշխ.՝ Ա. Զեյթունյանի, Անթիլիաս, 1998:
12. *Գիրք Ծննդոց*, քնն. բն. աշխ.՝ Ա. Զեյթունյանի, ՀՀ ԳԱ հրտ., Եր., 1985:
13. «Մազադար» հրտ., Եր., 2000:
14. *Գիրք Մակարայեցուց*, քնն. բն. աշխ.՝ Հ. Ամալյանի, Հայաստանի ԳԱ հրտ., Եր., 1996:
15. *Новая Женевская учебная Библия*, Русское изд. под общей редакцией Цорна В. А., *Священное Писание*, Синодальный перевод, «Свет на Востоке», 1998, 2052 с. **(НЖБ)**.
16. *Новый Завет на греческом и русском языках*, Ред. А. А. Алексеев, Сост. Л. И. Захарова, Российское Библиейское общество, М., 2002, 800 с. (НЗ).
17. ΠΑΛΑΙΑ ΔΙΑΘΗΚΗ ΚΑΤΑ ΤΟΥΣ Ο', Septuaginta, Id est Vetus Testamentum graece iuxta LXX interpretes edidit Alfred Rahlfs, Duo volumina in uno, 1184 էջ, volumen II, 942 էջ, Deutsche Bibelgesellschaft, Stuttgart, 1979 **(Սեպտուագինտա, Յոթանասնից)**:
18. Septuagint version of Old Testsmtent with an English translation, London. Biblia Sacra iuxta versionem Simlicem Quae dicitur PSCHITTA Beryti Typis typographie catholicae, Mosul, 1959 **(Պեշիթա)**:
19. Biblia Sacra iuxta Vulgatam versionem Stuttgart, 1994 **(Վուլգատա)** 1980 էջ:
20. Die Bibel in heutigem Deutsch, Gute Nachricht Bibel des Alten und Neuen Testaments, Deutsche Bibelgesellschaft, 1992, 1024 էջ, 364 էջ:
21. https://www.blueletterbible.org/lxx/jon/1/1/s_890001

Բ. Այլ բնագրեր

22. Ագաթանգեղոս, *Պատմություն հայոց*, աշխ.՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, «Սովետական գրող», Եր., 1977, 191 էջ:
23. Գրիգոր Նարեկացի, *Մարեան Ողբերգութեան*, աշխ.՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Հայկական ՍՍՀ, ԳԱ հրտ., Եր., 1985, 1124 էջ:
24. Գրիգոր Տաթևացի, *Գիրք քարոզութեան...*, Կ.Պոլիս, 1740, էջ:
25. Գրիգոր Տաթևացի, *Ոսկեփորիկ*, աշխ.՝ Հ. Քյոսեանի, «Գթություն», Եր.,

1995, 272 էջ:

26. Կորյուն, *Վարք Մաշտոցի*, աշխ. և ձեռագրական այլ ընթերցվածներով՝ Մ. Աբեղյանի, «Հայպետհրատ», Եր., 1941, 125 էջ:
27. Կորյուն, *Վարք Մաշտոցի*, աշխ.՝ Մ. Աբեղյանի, «Հայպետհրատ», Եր., 1962, 177 էջ:
28. Կորյուն, *Վարք Մաշտոցի*, աշխ.՝ Էմ. Պիվազյանի, Երևանի համալսարանի հրտ., Եր., 1981, 362 էջ:
29. Կորյուն, *Վարք Մեսրոպ Մաշտոցի*, աշխ. Ա. Մաթևոսյանի, «Հայաստան», հրտ. Եր., 1994, 177 էջ:
30. Ղազար Փարպեցի, *Հայոց պատմություն*, աշխ.՝ Բագրատ Ուլուբաբյանի, Եր., 1982, էջ:
31. Ղազար Փարպեցի, *Պատմագիրք հայոց*, աշխ.՝ Գ. Տեր-Մկրտչեանի եւ Ստ. Մալխասեանի, Տփղիս, 1904:
32. Մովսես Խորենացի, *Հայոց պատմություն*, Երևանի համալսարանի հրտ., Եր., 1980, 428 էջ:
33. Պարոյր Սևակ, *Երկեր*, հ. 2, «Սովետական գրող» հրտ., Եր., 1983:
34. Պարոյր Սևակ, *Երկեր*, հ. 5, «Սովետական գրող» հրտ., Եր., 1983:
35. Փավստոս Բուզանդ, *Պատմություն Հայոց*, աշխ.՝ Ստ. Մալխասյանցի, «Հայաստան», Եր., 1968, 352 էջ:

Գ. Տեսական գրականություն

36. Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, *Հայոց լեզվի տեսություն*, Հայկական ՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Եր., 1974, 848 էջ:
37. Աբրահամյան Ա., *Գրաբարի ձեռնարկ*, չորրորդ հրտ., «Լույս», Եր., 1976, 559 էջ:
38. Աղայան Էդ., *Գրաբարի քերականություն*, գիրք Ա, Եր., 1964:
39. Աղայան Էդ., *Հայ լեզվաբանության պատմություն*, հ. 1-ին, Եր., 1958:
40. Աղայան Էդ., Բ., *Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին*, Երևանի համալսարանի հրտ., Եր., 1987, 267 էջ:

41. Աղայան Էդ., *Հայերենի հնչույթային համակարգի պատմությունից*, Պատմա-բանասիրական հանդես, Եր., № 2, 1961, էջ:
42. Աճառյան Հր., *Հայոց գրերը*, Երևանի համալսարանի հրտ., Եր., 1984, 685 էջ:
43. Աճառյան Հր., *Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների*, հ. III, ՀՍՍՌ ԳԱ հրտ., Եր., 1971, 1011 էջ:
44. Աճառյան Հր., *Լիակատար քերականություն հայոց լեզվի... Իմաստաբանություն, Բառաքնություն, Շարահյուսություն*, ԵՊՀ հրտ., Եր., 2005:
45. Աճառյան Հր. *Աղվանից գիրը*, Տեղեկագիր, Եր, 1941, № 3-4 (8-9):
46. Ամալյան Հ., *Միջնադարյան հայաստանի բառարանագրական հուշարձաններ (5 -15-րդ դարեր)* Եր., 1966, «Մատենադարան», 315 էջ:
47. Ամալյան Հ., *Միջնադարյան հայաստանի բառարանագրական հուշարձաններ (16-17-րդ դարեր)*, Եր., 1971, «Մատենադարան», 310 էջ:
48. Այտընեան Ա., *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Վիեննա, 1866, Եր., 1987, 835 էջ:
49. Առաքելյան Վ., *Հինգերորդ դարի թարգմանական գրականության լեզուն և ոճը*, Եր., 1984, 230 էջ:
50. Առաքելեան Վ., *Գրաբարի քերականություն*, խմբ.՝ Ա. Կարապետեան, Ալ. Յակոբեան, «Վիամիր» հրտ., Եր., 2010, 415 էջ:
51. Ալգերեան Մ., *Լիակատար վարք եւ վկայաբանություն սրբոց*, հ. Ա, Բ, Գ... (12 հ.), ի Վենետիկ, ս. Ղազար, 1812- 1815(ԼՎՎՍ):
52. Ալետիքեան Գ., *Նարեկ աղօթից, համառոտ եւ զգուշաւոր լուծմամբք*, Վենետիկ, 1827:
53. Ալետիքեան Գ., *Քերականություն հայկական*, Վենետիկ, ս. Ղազար, 1815, 580 էջ:
54. Ավետիսյան Տ., *Հայկական ազգանուն*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրտ., Եր., 1987, 322 էջ:
55. Բարսեղյան Հ., *Հարուկ անուն*, *տեսական-նկարագրական ակնարկ*, Եր., 1964:

56. Գալուստեան Շ. արք., *Աստուածաշնչական սուրբեր*, Երրորդ հրտ., Գանձասար աստուածաբանական կենտրոն, Եր., 1997, 235 էջ:
57. Գասպարյան Գ., *Հայ բառարանագրության պատմություն*, Եր., 1968, 567 էջ:
58. Գյուլբուդաղյան Ս. *Հայերենի ուղղագրության պատմություն*, Երևանի համալսարանի հրտ., Եր., 1973, 432 էջ:
59. Գուրգեն Սևակ, *Մեսրոպ Մաշտոց*, «Հայպետհրատ» հրտ., Եր., 1962, 91 էջ:
60. Դարբինյան Գ. *Ներածություն Հին Կրակարանի*, Եր., 2000:
61. Դուրեան Ե, *Ուսումնասիրությունք եւ քննադատությունք, Մեր թարգմանիչներուն կարծեցեալ եբրայագիտությունը*, Ամբողջ. երկեր, հ. 2, Երուսաղեմ, 1935, 575 էջ:
62. Եզնիկ արք. Պետրոսյան, *Ընդհանրական եկեղեցու հայրեր, Դ Որոգիներս, Աղոթքի մասին*, Ս. Էջմիածին, 2007, էջ:
63. Զարբահանալեան Գ., *Հայկական թարգմանությունք նախնեաց*, Վենետիկ, 1889:
64. Թոմաս Հեյլ, *Նոր Կրակարանի կիրառական մեկնություն*, Եր., 2000, 1170 էջ:
65. Թոսունյան Գ., *Գրաբարի բառարանագրությունը*, ՀՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Եր., «Զանգակ – 97» հրտ., 2006, 228 էջ:
66. Ինգլիզեան Վ., *Հայաստան Սուրբ գրքի մէջ*, Վիեննա, 1947, 236 էջ:
67. Լէօ, Ս. Մեսրոպ, Թիֆլիս, «Հերմէս» հրտ., 1904, 337 էջ:
68. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., *Գրաբարի դասագիրք*, «Զանգակ-97», Եր., 2004, 384 էջ:
69. Կայայան Ա., *Նոր կրակարանի ընդհանուր ներածություն*, Ավետարանական հեռանկարներ, «Հավատք և կյանք» հրտ., 1996, 591 էջ:
70. Կայայան Ա., *Հին Կրակարանի ներածություն*, «Ոսկան Երևանցի» հրտ., Եր., 2000, 529 էջ (**ՀԿՆ**):
71. Կրեյգ Ս. Քիներ, *Աստվածաշնչի հենքի մեկնություն. Նոր Կրակարան*, Հայ ավետարանչական ընկերություն, Եր., 2004, 982 էջ:
72. Հակոբյան Ա., *Արդի եբրայերեն*, Երևանի պետական համալսարան, Եր.,

«Զանգակ-97» հրտ., 2003, 521 էջ:

73. Համբարձումյան Վ., *Հայերեն Աստված բառի ծագումն ու փիլաֆանությունը*, ՀՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Եր., 2002, 48 էջ:
74. Հայնրիխ Հյուբշման, *Հայագիտական ուսումնասիրություններ*, զերմ. թրգմ.՝ Մ. Հարությունյանի, Երևանի համալսարանի հրտ., Եր., 2004, 520 էջ:
75. Հայնրիխ Հիբշման, *Հին հայոց տեղոյ անունները հայոց աշխարհին պատմական տեղագրութեան մասին ուսումնասիրութիւններով*, թրգմ.՝ Հ. Բ. Պիլեգիճիկյանի, Վիեննա, 1907, 448 էջ:
76. Հայնրիխ Հյուբշման, *Հայերենի քերականություն*, Երևանի համալսարանի հրտ., Եր., 2003, 580 էջ:
77. Հայնրիխ Հյուբշման, *Հայկական հատուկ անվանք, Հայագիտական ուսումնասիրություններ*, կզմ.՝ Է. Մկրտչյան, Եր., 1990:
78. Հայնրիխ Հյուբշման, *Սեմական փոխառյալ բառեր հին հայերենի մեջ, Հայագիտական ուսումնասիրություններ*, կզմ. Է. Մկրտչյան, Եր., 1990:
79. *Հելլենաբանութիւն եւ հելլենաբան թարգմանիչք հայկական լեզուի*, Բազմավէպ, հ. ԼԳ, Վենետիկ, ս. Ղազար, 1875, 384 էջ:
80. Հովհաննիսյան Լ, *Հայ թարգմանական գրականության բառապաշարը* (V դար), Երևանի պետական համալսարանի հրտ., Եր., 2007, 230 էջ:
81. Ղևոնդ վրդ. Հովհաննիսյան, «*Հարցեր հոգևորականին*», «Նոյյան տապան» հրտ, Եր., 2013, 262 էջ:
82. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչի հատկանվանագիտություն* (տառադարձություն, ուղղագրություն...), Երևանի պետական համալսարան, Եր., 2008, 104 էջ:
83. Մեյթիխանյան Փ. Գ., *Հատուկ անունները և ոճանունները գեղարվեստական չափածոյում*, Նորք, Հայաստանի գրողների միության գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական հանդես Եր., 1999, № 1, 163-175:
84. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչյան անունները հայ բանաստեղծության*

մեջ, Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Եր., № 3, 2002:

85. Մեյթիխանյան Փ. Գ., *Հին Կտակարանը իբրև հատուկ անունների առաջացման սկզբնաղբյուր*, Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, № 3 (609) սեպտեմբեր-դեկտեմբեր, Եր., 2003:
86. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչի հատուկ անունների բառարանները*, Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, գիտական աշխատություններ, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան, Դ պրակ № 4, 2004:
87. Մեյթիխանյան Փ.Գ., *Մեսրոպ Մաշտոցը և Սուրբ Գրքի թարգմանությունը*, Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Եր., № 3 (32), 2007:
88. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչի հատկանվանաբանություն. մարգարեներ*, Հայ աստվածաբան, գիտական հոդվածների ժողովածու, № Բ, Երևանի պետական համալսարան, աստվածաբանության ֆակուլտետ, Եր., 2008:
89. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչի հատկանվանագիտության հիմնախնդիրները և եզրաբանությունը*, Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Եր., № 4 (37), 2008:
90. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչի հատկանվանագիտություն. Լեռնանուններ*, Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, № 3 (629) սեպտեմբեր-դեկտեմբեր, Եր., 2010:
91. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչյան ոճանուններ*, Նորք, Հայաստանի գրողների միության գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական հանդես, № 1, Եր., 2011:
92. Մեյթիխանյան Փ. Գ., *Սուրբ Գրքի հայերեն թարգմանության շուրջ*, Օրեր, համաեվրոպական անկախ ամսագիր, Պրագա, № 10-12(66), 2012:

93. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչի հատկանվանագիտություն. եբրայական անունների քննություն*, Տարեգիրք, Ը, Երևանի պետական համալսարան, Եր., 2013:
94. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստծուն տրված անուններն ու անվանումները Սուրբ Գրքում*, Բանբեր հայագիտության, հայագիտական միջազգային հանդես, Եր., 2015, № 3:
95. Մեյթիխանեան Փ. Գ., *Յարուկ անունների թարգմանական տարբերակները Աստուածաշունչ գրքերում*, Հանդես ամսօրեայ, հայագիտական ուսումնաթերթ, № 1, Վիեննա-Երեւան, 2016:
96. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստու անուններն ու անվանումները Սուրբ Գրքում (Հայր Աստված)*, Պատմաբանասիրական հանդես, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրտ., № 1(201), Եր., 2016, 141-158:
97. Մեյթիխանյան Փ. Գ., *Կուռք, դիրք, չաստված և դրանց անունները Աստվածաշնչում*, ՎԷՄ, համահայկական հանդես, Եր., թիվ 1, 2016:
98. Մեյթիխանյան Փ. Գ., *Էլոհիմ-Աստված, Սաբա(վ)ովթ-Ձորությունների Տեր բառերի ստուգաբանության շուրջ*, Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրտ., № 1 (646) հունվար-ապրիլ, Եր., 2016, 232-248:
99. Մինասեան Մ., *Աւետարանների եւ Գործքի յարուկ անունների ուղղագրութիւնը եւ հղովումը*, Ժնեւ, 1988, 86 էջ:
100. Մուրադյան Հ., *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. 1, Հնչյունաբանություն, ՀՀ ԳԱ հրտ., Եր., 1982, 348 էջ:
101. *Յաղագս սրբազան բանաստեղծութեան առ Հայս, Ա. Աստուածաշունչ գիրք*, Բանասեր, Առաջին հատոր, Կ.Պօլիս, 1851, 421-433, 588 էջ:
102. Ներսեսյան ավ. քին. Ն., *Աստվածաշունչը և հայ մշակույթը*, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, 2001, 96 էջ:
103. Շահէ արք. Աճէմեան, *Հայերէն Աստուածաշունչը*, հայագիտական ուսումնասիրութիւններ, Երևանի համալսարանի հրտ., Եր., 2006, 442 էջ:
104. Շահէ արք. Աճէմեան, *Յուցակ Աստուածաշունչ մատեանի հայերէն*

ձեռագիրներուն, Լիզպոն, 1992:

105. Շահե վրդ. Անանյան, «Անձնավորված իմաստության գաղափարի առաջացումն ու զարգացումն ըստ Առակաց գրքի Ա-Թ-ի» Ս. Էջմիածին, 2014, 192 էջ:
106. Զահուկյան Գ., *Բնիկ հայերեն արմատներով կազմված հայկական անձնանունները*, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1984, Դ 4, էջ 32-44:
107. Զահուկյան Գ., *Լեզվական նոր տվյալներ հայոց նախաքրիստոնեական կրոնի և հավատալիքների մասին*, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1992, Դ 1, էջ 15-27:
108. Զահուկյան Գ., *Հայերենի Աստ արմատը*, Բանբեր Երևանի համալսարանի, 2000, էջ 28-29:
109. Զահուկյան Գ., *Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները*, Պատմա-բանասիրական հանդես, Դ 3, Եր., 1981, էջ 48-63:
110. Զահուկյան Գ., *Ստրուգարանական դիտողություններ միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ բառերի մասին*, Լրաբեր հասարակական գիտությունների, № 12, 1976:
111. Զահուկյան Գ., *Ստրուգարանական դիտողություններ միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ բառերի մասին*, Լրաբեր հասարակական գիտությունների, № 3, 1979:
112. Զրբաշյան Էդ., *Փաստերի հետքերով, գրականագետի նոթեր*, Եր., 2001, 304 էջ:
113. Ռոբերտ Բերհաուս, *Աստվածաշնչի անձինք*, Ուղեցույց, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, 1999, 30 էջ:
114. Ռուբեն արղ. Զարգարյան, Շահե արղ. Անանյան, *Ավետարանների գործող անձինք*, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, 2009, 176 էջ:
115. Սահակյան Արծ., «*Աստուածը՝ քրիստոնեական կրոնամշակութային համատեքստի նշան*», Հայ աստվածաբան, գիտ. հոդվ. ժող. № Բ, Եր., 2008, էջ 7-

12:

116. Վարդան Հացունի, *Ուղղագրութիւն եւ առոգանութիւն հայերենի*, Վենետիկ, Ս. Ղազար, 1933, 371 էջ:
117. Վէրէր Ս., *Արարապը Սուրբ գրոց մէջ*, թրգմ.՝ Բառնարաս, Վ. Պիլէգիծիկեանի, Վիեննա, 1901, 81 էջ:
118. Տերյան Ա., *Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության օրրան*, «Ոսկան Երևանցի» հրտ., Եր., 2011, 240 էջ:
119. Տերյան Ա., *Եվրոպայի ժողովուրդների հնագույն գրավոր աղբյուրները իրենց նախահայրենիքի՝ Հայաստանի ու հայերի մասին*, «Լուսակն» հրտ., Եր., 2014, 127 էջ:
120. Տերյան Ա., *Ար աստծո պաշտամունքը Հայաստանում*, «Աղվանք» հրտ., Եր., 1995, 70 էջ:
121. *Յուզակ ձեռագրաց* Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին Օ. Եգանյան, . Զեյթունյան, Փ. Անթարյան, Ե., 1965, 758 էջ:
122. Քյոսեյան Հ., *Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստիճանարանության*, Ս. Էջմիածին, 1995, 300 էջ:
123. Веселовский С. Б., *Ономастикон, Древнерусские имена, прозвища и фамилии*, Академия наук СССР, изд. «Наука», М., 1974, 381 с..
124. Дж. Грешем Мейчен, *Учебник греческого языка Нового Завета*, пер. А. А. Руденко, науч. ред. Е. Б. Смагина, Российское библейское общество, М., 1995, 236 с..
125. Капанцяан Гр., *Хеттские боги у армян в связи с хеттским влиянием на армян и генезисом армянского пантеона вообще*, изд. Гос. Университета, Ер., 1940, 76 с..
126. *Ономастика и норма*, Ред. Л. П. Калакуцкая, Академия наук СССР, изд. «Наука», М., 1976, 255 с..
127. *Ономастика*, Ред. В. А. Никонов, А. В. Суперанская, Академия наук СССР, изд. «Наука», М., 1969, 262 с..
128. *Ономастика и грамматика*, Ред. Л. П. Калакуцкая, Академия наук СССР,

Институт русского языка, изд. «Наука» М., 1981, 272 с..

129. *Ономастика, типология, стратиграфия*, Ред. А. В. Суперанская, Академия наук СССР, Институт языкознания, «Наука», М. 1988, 263 с..
130. Р. Бейер, *Царь Соломон*, перевод с немецкого Черкасовой И. А., Ростов-на-Дону, 1998.
131. Соловьев В. С. *Философия искусства и литературная критика*, М., 1991, 766 с..
132. *Женщины в легендах и мифах*, Ред. Кэролайн Ларрингтон, пер. с английского О. Перфильева, М. 1998, с. 89-90.

Դ. Բառարաններ

133. Աղայան Էդ., *Արդի հայերենի բացատրական բառարան*, Գիրք 1 Ա- Ձ, 929 էջ, Գիրք 2 Ղ-Ֆ, 931-1615 էջ, «Հայաստան», հրտ., Եր., 1976 (**ԱՀԲԲ**):
134. Աճառյան Հր., *Հայոց անձնանունների բառարան*, հ. 1-5, Եր., 1942-1962 (**ՀԱԲ**):
135. Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան*, հ. 1-4, Երևանի համալսարանի հրտ., Եր., 1970-1980 (**ՀարմԲ**):
136. Ավետիսյան Կ., *Աշխարհագրական անունների բացատրական բառարան*, Եր., 1969, 360 էջ (**ԱԱԲԲ**):
137. Ավետիսյան Տ., *Հայոց ազգանունների բառարան*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրտ., Եր., 2004 (**ԱՏՀԱԲ**):
138. *Բառարան Սուրբ Գրոց հանդերձ պատկերոք, աշխարհացուցոք եւ տախտակոք*, տպ. Ա. Յակոբ Պոյաճեան, Կոստանդնուպոլիս, 1881, 632 էջ (**ԲՍԳ**):
139. *Բառգիրք հայկազեան լեզուի*, Մխիթար Աբբա, հ. 1-2, Վենետիկ, 1749-1769 (**ԲՀԼ**):
140. *Բառգիրք Հայոց*, քնն. քն. աշխ.՝ Հ. Ամալյանի, Հայկական ՍՍՀ, ԳԱ հրտ., Եր., 1975, 447 էջ (**ԲՀ**):
141. Գրիգորյան Ֆ. *Աստվածաշնչի հանրագիտարան*, հհ. 1-3, հեղ. հրտ., Եր., 2013-2014:
142. *Համարարառ Աստվածաշունչ գրոց Հին և Նոր կրակարանաց*, Թադէոս

- վրդ. Աստուածատուրեան, Երուսաղէմ, 1895 (**ԹԱՀԱ**):
143. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 1-5, Եր., 1986-2001:
144. *Համաբարբառ Աստուածաշունչ մատենանի*, աշխ. Վ Սահակեանի, «Ատլաս» հրտ., Պէյրուօ, 1963 (**ՎԱՀԱՄ**):
145. *Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի*, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Ս. Էջմիածին, 2012 (**ՀԳԱ**):
146. *Հայկական համաբարբառ – 8*, Գրիգոր Նարեկացի, Եր., 1975, 1978 (**ՀՀ**):
147. *Հայկական համաբարբառ – 19*, Ֆրիկ, *Բանաստեղծություններ*, Եր., 1986, 1987:
148. Ղազարեան Ռ., *Գրաբարի բառարան*, ԵՊՀ աստուածաբանութեան ֆակուլտետ, հ. Ա, հ. Բ, Երեւանի համալսարանի հրտ., Եր., 2000:
149. Ղազարեան Ռ., *Գրաբար հոմանիշների բառարան*, ԵՊՀ աստուածաբանութեան ֆակուլտետ, Երեւանի համալսարանի հրտ., Եր., 2006:
150. Ղարիբյան Ա., *Ռուս-հայերեն բառարան*, *Русско-армянский словарь*, «Հայաստան» հրտ, Եր., 1982, 1437 էջ (**ԱՂՌՀԲ**):
151. Ղևոնդ Ալիշան, *Հին հաւայոք կամ հեթանոսական կրօնք հայոց*, Վենետիկ, Ս. Ղազար, 1910, 557 էջ:
152. Ճիւանեան Ն., *Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական և դիցաբանական յատուկ անուանց հավելյալ հայկական յատուկ անվանք*, Կ. Պոլիս, 1879, 645, 207 էջ:
153. Մալխասեանց Ստ, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 1- 4, Եր., ՀՍՍՀ Պետ. հրտ., 1944-45 (**ՀԲԲ**):
154. Մաղաքիա արք.Օրմանեան, *Ծիսական բառարան*, «Հայաստան» հրտ., Եր., 1991, 184 էջ:
155. *Մանկական քրիստոնեական հանրագիրարան*, խմբ. Տ. Խաչատրյան, Եր., «Արեգ», 1998, 182 էջ:
156. Մելիքիսանյան Փ., *Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան (ըստ V-XX դարերի հայ բանաստեղծության)*, Երևանի համալսարանի հրտ., Եր.,

2001, 532 էջ:

157. *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Ալեոիքեան Գ., Սիրմէլեան Խ., Ալգերեան Մ., հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837, Երևանի համալսարանի հրտ., Եր., 1979-1981 (**ՆԲՀԼ**):
158. Պապոյան Արտ., *Պարոպր Սևակի չափաձոյի բառարան*, հ. 1, Ա-Կ, հ. 2, Հ-Ֆ, Երևանի համալսարանի հրտ., Եր., 1981-1982:
159. Պետրոսյան Հ. Զ., *Հայերենագիրական բառարան*, «Հայաստան» հրտ., Եր., 1987 թ., 687 էջ:
160. *Библейско-биографический словарь*, Сост. Ф. И. Яцкевич, П. Я. Благовещенский, М., ФАИР-ПРЕСС, 2000, 912 с. (ББС).
161. *Библейский словарь*, Эрик Нюстрем, перевод с шведского под редакцией И. С. Свенсона, Христианское общество «Библия для всех», изд. «Логос» Лаге, Санкт-Петербург, 1995, 517 с. (БС).
162. *Греческо-русский словарь*, перевод краткого греческо-английского словаря НОВОГО ЗАВЕТА Баркли М. Ньюмана, Российское библейское общество, М., 1997.
163. *Древнегреческо-русский словарь*, Сост. И. Х. Дврецкий, 1-2 т., М., 1958.
164. *Симфония к синодальному изданию Библии*, Издание первое, пробное, Свет на Востоке, Корнсталь, Институт перевода Библии, Стокгольм, 1995г, 1310 с. (СБ).
165. *Энциклопедия библейская*, 2-е издание, исправленное, Труд и издание архимандрита Никифора. М., 1891, «ЛОКИД-ПРЕСС», М., 2004, 763 с. (ЭБ).
166. Gesenius – Hebraisches und aramaisches Handwörterbuch, Leipzig, 1921.
167. Bibeltheologisches Wörterbuch, Herausgegeben von Johannes B. Bauer, Erster Band, 2 weiter Band, Wien-Köln, 1962.

Ձեռագրեր/գրչագրեր

168. *Բառք Երրայեցվոց*, Եր. Մտդ., № 4149 , № 7039 (**ԲԵ**):
169. *Երրայեցուց, քաղղէացուց և յունաց անուանցն մեկնութիւն*, Եր. Մտդ., № 7035:

170. Մեկնությունն անուանց յերբայեցոց լեզուէ ի հայ բարբառ, Եր. Մտղ., N° 2261,
N° 7035 (ՄԱԵ):

Դ. ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) Աստվածաշնչի գրքերի

Աբդ. – Աբդիայի մարգարեություն

Ամբ. – Ամբակումի մարգարեություն

Ամվս. – Ամովսի մարգարեություն

Անգ. – Անգեի մարգարեություն

Առկ. – Առակների գիրք

Բրք. – Բարուքի գիրք

Գղ. – Թուղթ Պողոսի առ Գաղատացիս

Գրծ. – Գործք Առաքելոց

Դն. – Դանիելի մարգարեություն

Դտ. – Դատավորաց գիրք

Եբր. – Թուղթ առ Եբրայեցիս

Եզկ. – Եզեկիելի մարգարեություն

Եզր. – Եզրասի գիրք

Ել. – Ելից գիրք

Ես. – Եսայու մարգարեություն

Եսթ. – Եսթերի գիրք

Երգ. – Երգ երգոց գիրք

Երմ. – Երեմիայի մարգարեություն

Երկ. Օր. – Երկրորդ Օրինաց գիրք

Զք. – Զաքարիայի մարգարեություն

Թգ. Ա – Թագավորություններ Ա գիրք

Թգ. Բ – Թագավորություններ Բ գիրք

Թգ. Գ – Թագավորություններ Գ գիրք

Թգ. Դ – Թագավորություններ Դ գիրք

Թվ. – Թվոց գիրք
Ժղ. – Ժողովող գիրք
Իմ. Սղ. – Իմաստություն Սողոմոնի
Ծն. – Ծննդոց գիրք
Կղ. – Թուղթ Պողոսի Առ Կողոսացիս
Կրնթ. – Թուղթ Առ Կորնթացիս
Հյտն. – Հայտնություն Հովհաննի
Հս. – Հեսուի գիրք
Հբ. – Հոբի գիրք
Հվլ. – Հովելի մարգարեություն
Հվհ. – Ավետարան ըստ Հովհաննի
Հղ. – Հուդիթի գիրք
Ղևտ. – Ղևտացիների գիրք
Ղկ. – Ղուկասի Ավետարան
Մկ. Ա – Ա Մակաբայեցիներ գիրք
Մկ. Բ – Բ Մակաբայեցիներ գիրք
Մկ. Գ – Գ Մակաբայեցիներ գիրք
Մտթ. – Մատթեոսի Ավետարան
Մղք. – Մաղաքիայի մարգարեություն
Մնց. Ա – Ա Մնացորդաց գիրք
Մնց. Բ – Բ Մնացորդաց գիրք
Մրկ. – Մարկոսի Ավետարան
Մք. – Միքիայի մարգարեություն
Նվ. – Մարգարեություն Նավումի
Նմ. – Գիրք Նեեմիայի
Ովս. – Ովսեի մարգարեություն
Ս. Գիրք – Սուրբ Գիրք
Սղմ. – Սաղմոսների գիրք
Սրք. – Սիրաքի գիրք

Սփ. – Սովորնիայի մարգարեություն
Տբ. – Տովբիթի գիրք
Տմթ. – Թուղթ առ Տիմոթեոս Ա
Տմթ. – Թուղթ առ Տիմոթեոս Բ
Տտ. – Թուղթ առ Տիտոս
Փլմ. – Թուղթ առ Փիլիմոն
Փլպ. – Թուղթ Պողոսի առ Փիլիպպեցիս
Быт. – Бытие

բ) այլ բնագրերի

Ա – Ադամգիրք
ԱԿՀԿՆ – Ահ. Կայայան, Հին Կտակարանի ներածություն
ԱԶ – Ազարիա Ջուղայեցի
ԱՍԱ – Առաքել Սյունեցի, *Ադամգիրք*
Բ – *Բանք*
ԳՆՄՈ – Գրիգոր Նարեկացի, *Մատյան ողբերգության*
ԳՔ – *Գիրք քարոզութեան...*
ԿՎՄ – Կորյուն, *Վարք Մաշտոցի*
Հովհ. Վան. – Հովհաննես Վանական
ՀՄԲՔ – *Հայ միջնադարյան բանաստեղծության քրիստոնավարիա*
Հյսմ. – *Հայսմավորք*
ՄՈ(հ) – *Մատյան ողբերգության (համաբարբառը)*
ՆՆ – *Նամակ Նոյին*
Նար. – Նարեկացի
ՎՄ – *Վարք Մաշտոցի*
ՏԳ – Տաղեր և գանձեր
ՈԻՄԲ – *Ուշ միջնադարյան բանաստեղծություն*
Ք – *Քերթվածներ*

գ) քերականական

անձն. – անձնանուն

աշխ. – աշխատասիրությամբ

ասոր. – ասորերեն

ար. – արական

արմիյ. – արևմտահայերեն

դրձվ. – դարձված

թրգմ. – թարգմանությունը

ծնթ. – ծանոթագրություն

հեղ. – հեղինակային

հմմտ. – համեմատություն, համեմատությամբ

հրտ. – հրատարակչություն

հուն. – հունարեն

մակ. – մականուն

Մտդ. – *Մատենադարան*

ներծ. – ներածական

շար. – շարական

ոճն. – ոճանուն

պիլ. – պահլավական

տեղ. – տեղանուն

տղտ. – տողատակ

ուսումն. – ուսումնասիրությամբ, ուսումնասիրությունը

փխբ. – փոխաբերություն

քնն. բն. աշխ. – քննական բնագիրը աշխատասիրությամբ